

ՆՈՐ ԺՐՈՅՆ

I ՏԱՐԵ

# ՄՈՒՐԻ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա.Մ.Ս.Ա.Գ.Ի.Ր

№ 2

ՓԵՏԸՆԻԱՐ

1901

—♦—♦—♦—♦—

ԹԻ ՖԼԻՌ

Տիպոգրաֆія Груз. Издат. Т—ва. | Տպարան Վրաց Հրատ. Ընկերութեան  
1901

## № 2

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1.	ԳԻՒՂԻ ՄԱՐՊԻԿ. II Հոլից կարուածներ, Լեօփ . . . . .	5
2.	Ա.ՆՉՐԵԽԻ ԿԱԹԵԼ, բանաստեղծութ. Սադիի, թարգմ. . . . .	43
3.	ԶԵՅԹՈՒՆԻ ՆԵՐԿԱՅԻՑ, Հ. . . . .	44
4.	ԴԻԴՈ.Յ.ՑԻ ԳՐՈՂՆԵՐ, Ք. Օ. . . . .	48
5.	ՈՒՍՈՒՄ Ա.Ռ.ԱԾ ՄԱՐԴԱԾ, պատմուածք Պ. Պեյվերին- սալի, թարգմ. շլիդ. Տ. Ա.-Բ.-Օ. . . . .	52
6.	ԳԱ.ՄԻՆ Է ՇԱԶՈՒՄ, բանաստեղծ. Մ. Խորայիկանի .	59
7.	ՖՐՈՄՈՆ ԿՐՏՍԵՐ, վէպ Ալֆօնս Շոլիի, թարգմ. Տ. Յով- հանիսիանի . . . . .	60
8.	ԲՈՒՐԻԾԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՊԱՐՍԿԱՍՍԱՆՈՒՄ, Հ. Առա- մելիսի . . . . .	93
9.	ՎԱՐՈՍԻ ՅԱՃԱԽՈՐԴԻՆԵՐ, պատկեր իրական կւան- քից, Ա. Շահնազարեանի . . . . .	104
10.	ՀԱՅՈՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԽՎԻ ԴԱՐՈՒՄ, Լեօփ .	130
11.	ԷՄԻԼ ԶՈԼԱՆ ԵՒ ՆԵՐ ԵՐԿԵՐԸ, բժպ. Վ. Արծունու .	167
12.	ՀԱՅՈՒԹԻՑՈՒԹԻՒՆԸ Խ ԴԱՐԻ ՄԻԶԲՈՒՄ, Աս. Մար- խասեանի . . . . .	192
13.	ԳՈՊ. բանաստ. Նեկրասովի, թարգմ. Ա. Ծատուրեանի	206
14.	ՈՎ. ԷՐ ԼԱՎՈՒԶԻԴԻՆ, Լ. Ս. . . . .	207
15.	Ա.ՄՈՒՆՆՈՒԹԻՒՆ, առողջապահական էտիւդ, բժպ. Վ. Արծունու . . . . .	212
16.	Վ.ԲԱՍՍԱՆԻ ՄԻԱՅՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՍԱՆԻՆ, հարիւա- ժիակի առիթով, Լեօփ . . . . .	234
17.	ՄԱՏԵՆԱԽՈՍՈՒԹԻՒՆ—7. Ա. Ահարոնեան, «Պատկերներ», Լ. Ս.—8. Հր. Աճառեան, «Յուցակ հայերէն ձեռազբաց», Աս. Մ.՝9. Առլէն Պարթևեան, «Խորազան», Լ. Ս. .	253
18.	ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ. Նաթարդիւնագործների Խ ժողովը, Ի. . . . .	261
19.	ԳԵՂԱՐՈՒԵՍԻ ԱՇԽԱՐՀԻՑ. Զ. Վերդի, Կարա-Մուրզալի	274
20.	ՆԵՐԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նիւթապուշտեան ոգին, —Ներ- ղամիտ վերաբերմունք դէպի ճարափի վերփումները, —Հասա- րակական գոմայներ բափշտակող պարագիւների դէմ միջոյ- ներ, —Հաշուետութեան և հօնարօի սկզբունքը, —Հին և նոր հայեացք պիտութեան նորաստակի մատին, —նախ ծափքը, աղա- եկամուռ, —Հին և նոր հայեացք պիտուական տնտեսութեան վրա, —Հարկատու և հարկերից աղատ զոսակարգեր, —Հար-	

Նոր Հրատան 1 տարի

Հրատ. XIII տարի

# ՄՈՒԲՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՏԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա.Մ.Ս.Ա.Գ.Ի.Ր

№ 2

ՓԵՏՐՈՒԱՐ

1901

—♦♦♦♦—

Թ. Ի Ջ Լ Ի Ս

Տիպոգրաֆія Груз. Издат. Т—ва. | Տպարան Վլադ Հրատ. Ընկերութեան  
1901

Дозволено цензурою Тифлісъ, 14-го февраля 1901 г.

## № 2

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1.	ԳԻՒՂԻ ՄԱՐԻՒԻԿ. II Հողից կտրուածներ, լեօփ . . . . .	5
2.	ԱՆՁՐԵԼԻ ԿԱԹԻԸ, բանաստեղծութ. Սադի, թարգմ.	
3.-և.	Մասնեանի . . . . .	43
3.	ԶԵՅԹՈՒՆԻ ՆԵՐԿԱՅԻՑ, Հ. . . . .	44
4.	ԳԻՒՂԱՅԻ ԳՐՈՂՆԵՐ, Փ. Օ. . . . .	48
5.	ՈՒՍՈՒՄ ԱՌԱԾ ՄԱՐԻԸ, պատմուածք Պ. Պէյվերինսայի, թարգմ. շվեդ. Տ. Ա.-Բ.-Օ. . . . .	52
6.	ՔԱՄԻՆ Է ՇԱԶՈՒՄ, բանաստեղծ. Մ. Խորակեանի .	59
7.	ՖՐՈՍՈՆ ԿՐՏՍԵՐ, վէպ Ալֆօնս Գոդեի, թարգմ. Տ. Յովհաննիսեանի . . . . .	60
8.	ԲԱԲԻԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ, Հ. Առաքելեանի . . . . .	93
9.	ՎԱՐՈՍԻ ՅԱՃԱԽՈՐԴՆԵՐԸ, պատկեր իրական կեանքից, Ա. Շահնազարեանի . . . . .	104
10.	ՀԱՅՈՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ XVIII ԳԱՐՈՒՄ, Լեօփ .	136*
11.	ԷՄԻԼ ԶՈԼԱՆ ԵՒ ՆՐԱ ԵՐԿԵՐԸ, բժպ. Վ. Արծրունու .	167
12.	ՀԱՅԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ XX ԳԱՐԻ ՍԿԶԲՈՒՄ, Աս. Մայիսանեանի . . . . .	192
13.	ԳՈՂ. բանաստ. ՆԵԿՐԱՍՈՎԻ, թարգմ. Ա. Շատուրեանի .	206
14.	Ո՞Վ. ԷՐ ԼԱՎՈՒՅՑԻԿՆ, Լ. Ս. . . . .	207
15.	ԱՄՈՒՄՆՈՒԹԻՒՆ, առողջապահական էտիւդ, բժպ. Վ. Արծրունու . . . . .	212
16.	ՎՐԱՍՏԱՆԻ ՄԻԱՅՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ, Հարիւամեակի առիթով, Լեօփ . . . . .	234
17.	ՄԱՏԵՆԱԽՈՍՈՒԹԻՒՆ—7. Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ. «Պատկերներ», Լ. Ա.—8. Հր. Աճառեան. «Յուցակ հայերէն ձեռազբաց», Աս. Ա.—9. Սուլէն Պարթևեան. «Խարազան», Լ. Ա. .	253
18.	ՏՆՏԵՎԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ. Նաւթարգիւնագործների XV ժողովը, Ի. . . . .	261
19.	ԳԵՂԱՐՈՒԵՍԻ ԱՇԽԱՐՀԻՑ. Զ. Վերդի, Կարա-Մուրզայի .	274
20.	ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կիւթապաշտութեան ողին. —Ներողութիւն վերաբերմունք դէսի ճարալիկ գերփոմները. —Հասարակական զումարներ յափշտակող պարազիսների դէմ միջոցներ. —Հաշուեառութեան և կօնտրոլի սկզբունքը. —Հին և նոր հայեացք պետութեան նպատակի մասին. —Նախ ծախքը, ապա եկամուռը. —Հին և նոր հայեացք պետական անտեսութեան վրայ. —Հարկատու և հարկերից ազատ դասակարգեր. —Հար-	

կերի արդար բաժանում.—Պետական արդինսագործութիւն և առևտուր.—Պետական նախահաշիւր.—Ֆինանսների մինիստրի նախահաշիւր 1901 տարուայ համար.—Ռոկու քանակութեան նուազումը.—Հունձերի նշանակութիւնը արդինսագործութեան և առևտուրի ծաղկման համար.—Միլիոնարիզմի բեռը.—Ստիպո- զական և կուլտուրական ծախսեր, Ա. Ա. . . . .	283
21. Գ.Ա.Խ.Ա.Վ.Կ.Ա.Ն. Կէլչն.Ք. Անօրինակ հրդեհ Բագուի Սպիտակ- քաղաքում. աղէտի գոհերը. ձեռք առած միջոցներ;—Յաղա- քալին ընտրութիւնները մեր զաւաներում. ի՞նչ առեց մեզ քաղաքալին ինքնավարութիւնը. թիւրիմացութիւն նուշու ընտ- րութիւնների ժամանակ, Ա. —Երկաթուղին և Երևանը. քաղա- քալին հողեր, ջրի հարցը, ընկերակցութիւններ. Ա. —Պ.Օ.	291
22. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Առն ԽIII-ի տեհնչանքները.— Կրօնական միաբանութիւնների հարցը ֆրանսիական պատ- զամառքների ժողովում. —Սպանիա. հակակղերական անկար- դութիւններ. —Մինիստրական ճգնաժամ նոտայացում.—Անդ- լիա. Վիկոորիա թագուհու մահը. էղուարդ VII և Նրա վերա- բերմունքը զէպի հրանսվաալի պատերազմը. —Աւատրիական րէլիստրատի նիստը. ազգայնուկան կոիւ. —Գերմանիա. մերձե- ցում Անդիային. հացի մաքս. դպրոցական խնդիր. —Միան թագաւորութիւն . . . . .	301
23. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ . . . . .	313
24. ԿԱՄԲԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԿՈՂՄԻՑ . . . . .	320
25. ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ . . . . .	Պ
26. ՅԱՅՑԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ . . . . .	322
27. ՅԱԼԵԼՈՒԱԾ. «ՅԱՐՈՒԹԻՒՆ», վէպ Լ. Տօլսոյի, թարգմ. Տ. Յովիաննիսեանի:	33—48

# ԳԻՒՂԻՄ ՄԱՐԴԻԿ

II

ՀԱՂԻՑ ԿՏՐՈՒԱԾՆԵՐ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Ա.

Դոնապահ Յակովը այս անգամ էլ հաւատարիմ մնաց իրան։ Ծովափնեայ մեծ քաղաքը դեռ քնած էր, երբ նա դէն դցեց իր հնամաշ վերմակը, Աստուծու անունը տուեց բարձրացաւ, նստեց ու խսկոյն սկսեց դանդաղ կերպով հագնել գուլպաները, շուտշուտ ախ քաշելով։

Նա քնած էր փողոցի գուների կողքին, տախտակէ նեղ ու բարձր բոյնի մէջ, որ շան բոյնից շատ չէր ընդ դարձակ։

Յայտնի չէր, թէ ինչու տան շինութեան ժամանակ այսաեղ, դռների մօտ, մնացել էր մի ճեղք՝ երկու պատերի մէջ։ Հին օրերի գործ էր. այն ժամանակ այս ընդարձակ, միայարկանի շինութիւնը ապրանքների պահեստ էր մաքսատան մօտ։ Յետոյ, երբ մաքսատունը փոխուեց ուրիշ տեղ և այդ տունը, ստանալով ուրիշ նշանակութիւն, ենթարկուեց թեթև վերանորոգութեան, ուրիշ պակասութիւնների հետ սլատերի այս խորշն էլ արժանացաւ ուշադրութեան։ Աչքի առաջ ունենալով քաղաքային նոր օրէնքը, բայց մանաւանդ այն նպա-

տակը, որին պիտի ծառայէր վերանորոգուած տունը, կարդագրեցին, որ այդտեղ տեղաւորուի դռնապահի «սենեակը»։ Մի հատ կացին էր գործել այդ բնակարանի վրայ. տաշել էր հին, անպէտք տախտակները, մի կերպ միացրել էր նրանց։ Առջևի պատը համարեա ամբողջովին մի գոնակից էր բաղկացած, որի վրայ կար մի փոքրիկ քառակուսի ծակ։ Բայց գալոյսը ներս թողնելու համար չէր—աւելորդ էլ կը լինէր մի այդպիսի փորձը, քանի որ ցերեկն էլ այդտեղ տիրում էր նեղ, ամեն կողմից շրջափակուած խոռոչի մթութիւնը։ Քառակուսի ծակը դռնապահութեան աչքն էր՝ գնացողեկողին տեսնելու համար։

Վեց տարի էր արդէն, Յակոբը նայում էր այդ աճքից, նայում էր բարեխզճութեամբ, երբէք չը մոռանալով որ հոգաբարձու Մաթոս աղան դրա համար է ամեն ամսի վերջին ինն ուռելի փող տալիս նրան։

Չը նայած թանձր խաւարին և գիշերային ամայութեան, զգաստ պահապանը մի վայրկեան էլ չը կասկածեց, որ ժամանակ է, պէտք է ոտքի ելնել, ծառայել։ Ոչ մի ժամացոյց չէր կարող այնպիսի վստահութեամբ գնուել որ, այն, ժամանակ է։

Եւ Յակոբը ինչ գործ ունէր ժամացոյցի հետ։

Դեռ գիւղումն էր նա, դեռ կարմրաթուշ երիտասարդ, երբ սովորեց աճք բայց անել ճիշտ այս ժամին։ Մի փոքրիկ, բայց խիստ վառվուոն աստղ լուսաբացի մօտ գալիս, կանգնում էր երդից վերև, սկսում էր պսպղալ մի առանձին աշխոյժով, կ'ասես կայծեր էր ցայտում։ Չայն ու ծպուտ չունէր գիշերային սկրուն ժամադիրը. բայց Յակոբը միշտ իմանում էր, որ նա եկել է. կարծես երդից ներս կաթող շողերը լնինում էին նրա ծոցը, քսւում էին նրա աչքերին, վեր կացնում։ Ու Յակոբը իր գիւղում ստացաւ ժիր տղամարդի անուն։

Նա սովորեց իր առաւտեան աղօթքը, որ մի հատ ձայն էր, մի հատ «Աստուած»։ Այս ձայնը և այն տառ-

զը տանում էին նրան դէպի դաշտ, դէպի անտառ: Եւ չը գիտէ նա՝ շատ են եղել այն օրերը, երբ աստղը անցնում էր երդի միւս կողմը, իսկ ինքը շարունակում էր անկողնում մնալ: Միայն հիւանդութիւնն էր կարող նրան այդպէս կապել տան մէջ: Բայց հիւանդութիւնը — սուտ չէ ասուած — սիրում է ծոյլերին. Յակոբը համարեա միշտ առողջ էր:

## Բ

Վաղուցուայ բան է գա. կամուրջի տակով որքան ջուր կը լինի անցած այդ ժամանակից: Այժմ Յակոբը սպիտակ մազեր ունի և հեռու է իր երդից ու սիրուն աստղից: Բայց չէ մոռանում նրանց:

Ուրախ, դեղեցիկ յիշատակները չեն, որ դրել են նրա սրտի մէջ այդ բարձր, սպիտակ երդը և պսպղուն աստղը: Յակոբը այժմ շատ քիչ ունի իր մէջ այդպիսի յիշատակներ, թէև լաւ օրեր էլ շատ է տեսել և Աստուծուն շատ է փառը տուել: Բայց ուրախութիւնը շատ է վաղանցուկ, շատ է դիւրահալ: Վիշտը, սուր ու անդութ վիշտն է խիստ ուխտապահ, անմեռ. նա կրակ է, որի մէջ շիկանում են տունը, հայրենիքը և այդպէս դրոշմեռմ են սրտի խորքում: Ով վիշտ պատճառել գիտէ, նա չէ կարող մոռացուել:

Իսկ Յակոբի երդի տակ գիւղական արտասունք շատ էր թափուել: Երկու անդամ մահը քանդեց այդ տունը, տանելով երկու տղամարդ եղբայրներին, երկու այրի և մի խումբ որբիկներ թողնելով Յակոբի շլինքին: Պէտք էր դիմանալ — այսպէս էր հրամայում երդը. իսկ նրանից բարձր կանգնած աստղը ժպտում էր և ասում, որ ինքը գիտէ, թէ ինչպէս կարելի է դիմանալ: Աշխատութիւն... Յակոբի մէջքը պողվատ էր և ահագին երդը պահուեց նրա վրայ: Մեծացրեց որբերին, ամուսնացրեց, բաժաննց իրանից:

Առանց այդ էլ գիւղը սակաւահող էր. բաժանելուց

յետոյ շատ քիչ բան մնաց Յակոբին։ Իսկ գիւղական երդը... ինչից ասես, որ նա չը վնասուի։ Զմեռը քիչ ձիւն է գալիս—ցաւ է, անժամանակ ցուրտ, գարնաւնային անչափ անձրեներ—գարձեալ ցաւ Երաշտ, կարկուտ, մուկ, ժանդ, մօրեխ—ոչ ոք այդ պատուհաններից չէ պաշտպանում գիւղի մարդուն։ Եւ ինչ կը լինէր այդ մարդը, եթէ գիշերը աստղեր չը փայլէին նրա երկնքում ու աշխատելու ճանապարհ չը ցոյց տային։

Աշխատողը մարդն է, տուողը—Աստուած։ Յակոբը մանկութիւնից գիտէր, որ այսպէս է։ Բայց այժմ չը գիտէր, թէ ինչու Աստուած իրան քիչ է տալիս Երկրների փորձանքները շատացան։ Մի տարի նրա երդը ծանրացաւ, այլևս չէր պահւում նոյն իսկ պողվատի մէջքի վրայ. փլւում էր, Յակոբը այլևս տուն չը պիտի ունենար։ Հեշտ էր այդ իմանալ և կանգնել։

Յակոբը չը կանդնեց, նրան յայտնի էր պապերի բացած ճանապարհն։ Մի նեղ, բայց բաւական բանուկ կածան էր դա, որ կոչւում է անճարի ճամբայ և գիւղի բոլոր տներից տանում, հասցնում էր Սարուի չէմքին։ Յակոբն էլ գնաց—նա վերջինը և առաջինը չէր։ Եւ Սարուն նրան էլ լաւ կնքեց... Իր պինդ ուսերով, իր պողվատի մէջքով նա մտաւ Սարուի անդուխ տոկոսների տակ։

Առժամանակ լաւ էր, երդը պահուեց։ Բայց շատ կարծ էր այդ ժամանակը։ Դարձեալ երերուն է երդը, պատահարների խաղալիք էլի քայլայուել ոկսեց և ի՞նչ պէս... Այժմ նրան փրկել չէր կարելի—Յակոբը այդ տեսնում էր իր աշքով։ Միակ սրտացաւը էլի աստղն էր, անփոփոխ էր նրա ժամկերը, դարձեալ ասում էր, թէ աշխատել է հարկաւոր։ Բայց ոչ, այժմ աստղն էլ մոլորուած էր։ Աստուած մի հատ մէջք է տուել գիւղացուն և մի հատ երդ է գրել նրա վրայ։ Իսկ Յակոբը երկու երդ էր շալակել. առաջինը և գլխաւորը Սարուինն է—մի ամբողջ սար, և նա տրորում էր երկրուդին, որ Յակոբին էր պատկանում։ Մի կմախը էր մեա-

ցել այս վերջինից. նիհար կողերը բաց, յնցոտիները  
քամուն տուած, լալկան, քաղցած...

Հեղեղները, երկրաշարժը, հրդեհը չէին խեղճ եր-  
շը տապալում, որպէսզի կարելի լինէր յոյս ու հաւատ  
պահել։ Մարդու երդը մարդու ձեռքով էր քանդւում։  
ինչ ճար դրա դէմ...

Եւ ահա ծերունին այդ աւերակների մէջ թողեց  
ուժը տարեկան իր մինուճար արու որդուն, Աստուած  
կանչեց ու արաւ այն, ինչ անում էր նրա օրն ընկած  
ամեն մէկը։

Մի առաւօտ նա վեր կացաւ, բայց տանից մենակ  
ը դուրս գնաց։ Նրան հետեւում էին կինը, տղան, եր-  
կու աղջիկները։ Ամենքը լաց էին լինում։ Աղբիւրի մօտ  
բաժանուեցան, չը համարձակելով միմեանց մի խօսք  
ասել։ Թռչունները գեռ չէին վեր կացել և խուլ հեկե-  
կանկներն էին ջրի ձորի վաղորդեան ձայները։ Յակոբը  
բայլեց դէպի սարը. յետ նայեց, տեսաւ իր երդը, ե-  
րեսին խաչ հանեց. պարզ երկնքից ժպառում էր աստղը։  
Այս անգամ շատ էր հեռու Յակոբի ճանապարհը և  
պսպղուն առաջնորդը ուղեկցեց նրան մինչև մեծ ան-  
տառի սկիզբը. այդտեղ նա կորաւ, արել ծագեց։ Նոյն  
օրը երեկոյեան Յակոբը բաւական հեռու էր, օտար եր-  
կնքի տակ, նայում էր նա երկնքին և չէր կարողանում  
որոշել թէ որ կողմում մնաց իր գիւղը։

## Գ

Նա տանում էր իր երդի արտասունքները, Սարուի  
սատանայական հաշիւները և մի պատուէր, հեկեկանք-  
ների մէջ թափախուած մի բառ—«Հը մոռանաս»։ Այդպէս  
էր ասում նրա կինը։ Մոռանալ... Այս խօսքը վեց տա-  
րի այրում էր նրան։ Վեց տարի կծկուած այս շնաբոյնի  
մէջ, լուռ, կորած, հնազանդ։

Հինդ կամ վեց ամիսը մի անգամ մի կտոր ճխըլ-  
տած թուղթ էր դալիս տանից։ Մի քանի հատ տող,

բայց Յակոբը որոնում էր նրանց մէջ մի ահագին պատմութիւն։ Կարծում էր թէ իւրաքանչիւր գիծը միւմի պատասխան է այն անթիւ հարցերին, որոնք ամեն օր խեղդում էին նրան։ Եւ վազում էր մի կարդացող գըտնելու, երբ գտնում էր, ազազում էր նրան իր հետ մի առանձին անկիւն քաշուել, մի այնպիսի տեղ, ուր ոչ ոք չէր խանդարի, ուր միայն նամակը կը խօսէ։ Ապա մէջը պատին էր տալիս, ամբողջապէս լսողութիւն էր դառնում, պատրաստ երկար, երկար խօսելու իր սիրելիների հետ։ Բայց գիւղից եկածը սովորաբար այն էր, որ ամենքը ողջ են, առողջ, բարեներ են անում։ Յակոբը փառք էր տալիս, ծիծաղում էր։ Բայց յետոյ, իր վանդակի մէջ, մոռանում էր ողջոյնների քաղցրութիւնը և նրա կոկորդը սեղմում էին նոյն կրակոտ հարցերը. ինչպէս են... ուտում են... պակասութիւնը, տիլորութիւնը... Չէին գրում, թէե ինքը ամեն ժամանակ այդ հարցերն էր տուն ուղարկում։

Ամեն բանի կարելի էր գիմանալ, բայց ոչ այդ անյայտութեան։ Եւ Յակոբը մի կտոր սակաւախօս թղթի պակաս թողածը աշխատում էր գտնել, լրացնել իր ձեռքի տակ եղած միջոցներով։ Սպասողութեան, կարօտութեան տարիները զարդացրել էին նրա մէջ այդ ընդունակութիւնը. նա երազներ էր տեսնում, բացատրում էր նրանց ու բաւականութիւն ստանում. միրտը գործում էր և կարծես այս օտար տեղից կարողանում էր ըմբռնել այնքան հեռու թողած կրականութիւնը։

Յակոբը հասկացել էր որ մարդկային վիճակը մի է ամեն տեղ և այն, ինչ տեսնում էր նա իր աչքի առաջ, մի պարզ պատկեր էր թէ ինչ պիտի լինի իր գիւղում։ Խեղճերը ամեն տեղ կան։ Երբ աշխարհը լաւ է, նրանց օրն էլ լաւանում է, երբ վատ է, բոլոր տեղերի խեղճերը պիտի չուրը թափուեն։ Իսկ աշխարհի լաւութիւնն ու վատութիւնը ոչ ոք չէր կարող այնպէս շօշափել, ինչպէս Յակոբը։ Տունը, ուր նա դռնապահութիւն էր անում, մի աղքատանոց էր...

Երբեմն այդ հինաւուրց, մուայլ շինութեան դռներով ներս էր մտնում գթութիւնը և այդ ժամանակնեածանք, սովորաբար վհատեցուցիչ մթնոլորտը թեթեանում էր, նոյն իսկ փոքր ինչ դրաւիչ դառնում: Զգացւում էր որ մերկութիւնը միանգամայն անօդնական չէ: Յակոբը մտնում էր աղքատների մօտ և նրանց համարեա ուրախ ու գոհ դէմքերից ինքն էլ խրախուսւում էր, առանց հառաջանքի թռչում էր մտքով դէպի իր տունը, ամբողջ սրտից արտասանելով. «Հօ աշխարհը չէ քանդուելք...»

Աշխարհը, ճիշտ է, չէ քանդում, բայց լաւութեան օրեր շատ քիչ է տալիս: Գթութեան դեղածիւծաղ օրերին հետեւում էր երկար, յուսահատ մոռացութիւնը: Աղքատանոցը սրտամաշ տեսարաններ էր բայց անում իր կեղտոտ պատերի մէջ, օր օրի վրայ անփոփոխ միւնոյնը—անճարութիւն, հառաջանք, կատաղիցաւ ու կրակ: Այդպիսի ժամանակները Յակոբը աւելի կծկում էր, մանրանում, փակում էր իր բոյնի մէջ, ամբողջ յոյսը դրած իր երազների վրայ, դառնում էր մուայլ ու անմատչելի, նոյն իսկ կոտարար...

Եւ սակայն աղքատանոցն էլ, հազար ու մի թշուառութիւնների այս լուս վկան, գեռ չէր տեսել այն առտիճան զարհուրելի ցաւեր, որ մի քանի օրից ի վեր այստեղ բերին մի հեռու տեղից փախած բազմաթիւ մարդիկ...

Սկ օրեր էին դրանք ամբողջ այդ շինութեան, բայց մանաւանդ Յակոբի համար: Ասում էին թէ քրդերն են փախստականներին այդ օրին հասցրել: Եւ Յակոբը գուղում էր այդ «քուրդ» անունից. նա նոր յիշեց որ Սարուին էլ քուրդ են անուանում այն բոլոր գիւղերում, ուր ճանաչում էին նրան: Ասում էին թէ քուրդը Սատուած չունի, թէ քարը կը կակդէ ազաշանքներից, բայց քուրդը չի կակդի: Ճիշտ է, Սարուն էլ այդպէս է. Յակոբը մտաբերեց իր լալադին աղաշանքները, մտաբերեց թէ քանի քանի անդամ՝ իր սպիտակ մաղերով խոնար-

հուել էր՝ Սարուի ոտները համբուրելու, բայց նա չէր կակդում...

Այսքան էլ նմանութիւն... Ծերունի դռնապահը բոլորովին շշմել էր Տեսնում էր իր առջև սարսափելի բաներ և լաց էր լինում, բայց իբրև ամբոխի մարդ, աւելի իր համար էր լաց լինում։ Ուրիշին տես, քո գլուխը լացիր։ Դեռ ոչ մի ժամանակ նրան այսքան իւմաստուն չէր թուացել պապենական այդ խրատը։ Փախստականների բերած սարսափը հարկադրում էր նրան փախչել, դնալ իր սեփական տունը, իր երեխաներին աղատելու համար։ Խաչակապ դիւզի աջ ծայրում, քարքարուտ զառիվերի գլխին, անտէր մնացած մի երդ կայ. դա Յակոբին է պատկանում։

—Էլ մը օրուայ համար ես, անդադար հարցնում էր նա ինքն իրան։

Նրա համար պարզ էր, որ չը պէտք է այլես այստեղ մնալ։ Այդպէս էր կարծում և մշակ Խաչատուրը, Յակոբի մտերիմ խօսակիցը, որ երկու օրը մի անգամ գալիս էր աղքատանոցի աղքը իր մէջքի վրայ դրած կողովով գուրս տանելու։ Նա էլ ասաց որ ամեն մարդպիտի իր գլուխը պահէ։ Կեանքի դառնութիւնները Խաչատուրին էլ այդպէս էին դաստիարակել։ Միթէ ամեն բան չէր ասում թէ այն, ամեն մէկի վրկութիւնը եսամոլութեան մէջ է։ Աղքատանոցը հաղարաւոր փաստեր ունէր. բայց ամենից խոշոր, ամենից այրող փաստը այդ փախստականներն էին։ Դրանցից մէկը, մի փոքրիկ երեխայ, մեռաւ փողոցում, մի մեծ տան պատի տակ, մեռաւ քաղցածութիւնից և ցրտից։ Բոլոր մնացածներին էլ սպասում էր նոյն մահը։ Քանի օր է, նրանք այստեղ են, բայց նայող, այցելող չը կար...

Բայց այդքան հեշտ էր վեր կենալ գնալը։

Վեց տարի կոպէկ-կոպէկ փող էր հաւաքել, ուղարկել Սարուին, յոյս ունենալով թէ պարտքը, ինչ էլ լինի, կը վերջանայ. չէ որ աշխարհիս վրայ ամեն ինչ վերջ ունի։ Շատ և շատ անգամ էր նա նստում, փա-

փախը դնում կողքին և ժողովում էր իր թուաբանական բոլոր հասկացողութիւնները, որպէսզի վճռէ թէ իր հոգու գերութիւնն էլ վերջ կ'ունենայ և երբ։ Տասը մատները բաւականութիւն չին անում, և նա մի բուռը գարի էր պահում իր բարձի տակ, հանում էր, սկսում հաշուել տուածները։ Թէս ամեն բոլէ խառնում էր, ծայրը կորցնում, թէս պարզ տեսնում էր որ միայն Սարուն կարող է ասել թէ երբ է ուզում աղատել նրան, բայց վերջին ամիսները մի ինչոր մութ, անորոշ հասկացողութիւն թելադրում էր նրան թէ մօտենում է այդ օրը։ Եթէ հաշիւ անել չը գիտէր, գոնէ հաւատում էր որ այդպէս է։ Եւ այժմ գնամ, ոչնչացնել վեց տարուայ հառաչանքները, կարօտը. նորից ընկնել Սարուի ճանկը...

Տարուբերուում էր Յակոբը։ Բայց ոչ երկար։ Փախստականները լացացնում էին նրան, երազները երկու գիշեր խուն ի խուն էին, խեղդող, աղմկալից։ Մշակ Խաչատուրը մի անգամ էլ եկաւ աղբը տանելու և հարցրեց թէ երբ է նա գնում։ Տանջուած, հիւանդու մարդ էր Խաչատուրը. նրա քաշած ցաւերը առանձին հեղինակութիւն էին տալիս նրա ասածներին։ Յակոբը յայտնեց նրան թէ գնում է։ Եւ այդ գիշերը մի երկար երազ փոխադրեց նրան հայրենի գիւղը, մոցրեց կարօտած երդի տակ...

## Դ

Հին միիթարիչ աստղի գալստեան ժամը այժմ հօրուրովին անկարելի էր մոռանալ։ Յակոբը հադաւ շուրերը, նստեց ու իր երազի, իր մոռքերի ետևից ընկաւ, և ահա գործարանական քաղաքը սկսեց իր առաւօտեան համերգը։

Հարիւրաւոր սուլիչներ կանչում էին բանուորներին։ Աններդաշնակ, խառնիճաղանձ համերդ, որ երեմն հեռանում էր, բոլորովին կորչում, երբեմն էլ այնպէս

էր մօտենում, որ կարծես թէ այդ բոլոր որոտացող մեռքենաները իրանց վիթխարի ծխնելոյզները վերցրած՝ վաղել, եկել են Յակոբի գոների մօտ:

Դրամը այդքան վաղ էր սկսում իր վլվուկը. նրա սորուկ շոգին իր սուր սուլոցներով արշալոյսը չէր փառաբանում, այլ հրամայում էր մարդկանց շտապել գործի, շաղախուել փոշու ու ցխի մէջ, մուր ու սեփական քրտինք ուտել, զոհուել:

Այս առաւօտ մանաւանդ շատ անախորժ, տամնող էին Յակոբի համար այդ բարձրագոչ հրաւէրները: Վեց տարուայ մէջ նա չը կարողացաւ մտերմանալ դրանց: Առաջին տարին, այստեղ գալուն պէս, նա էլ դիմեց գործարանները, որ իր համար տեղ գտնէ: Բայց անընդհատ որսոտոցները, զարմանալի ձեի երկաթի կտորների պտոյտները, ծուխը, աշխատող մարդկանց իրարանցումը հենց առաջին րոպէից երկիւղ գցեցին նրա մէջ: Աշխատաւոր գիւղացին, որ մենակ, գլուխը կախ, անթիւ օրեր էր անցկացրել լեռների ծոցում; սարսափեց գործարանական ժխորից: Եւ երբ յետոյ գտաւ աղքատանոցի գոնապահի տեղը, խիստ գոհ մնաց այդ տախտակեայ բոյնից, այդ հանդարտ ու կորած անկիւնից, ուր նա ապրում էր իրան հաւասար մարդկանց հետ, ուր կարելի էր աղքատ լինել և կոպէկ գէն դնել ցաւ բժշկելու համար:

Այն օրուանից նա ինչ որ թշնամական, սպառնացող բան էր լսում սուլոցների մէջ և փառք էր տալիս իր Աստուծուն, որ աղատեց նրան այն աշխարհից, ուր մարդը հրէ պիտի դառնայ:

Նոդին սատանայի շոնչն է — ասում էին բանուորները: Եւ իրաւ, ինչե՞ր չէր անում նա... Ահա մէկը կանչում է սարսափելի թանձը ու խուպոտ ձայնով, կարծես մեքենան այդպէս պատռում է իր երկաթէ կոկորդը որպէսզի քաղցր քնի մէջ թաղուածին էլ վեր կացնէ. միւսը բարակ է, զուարիթ, նոյն իսկ գեղդեղուն, մի ուրիշը միջակ ձայն ունի և կարծես ոռնում է: Շատ են

սուլոցները. մէկ համախմբւում են, ձայն ձայնի են տաւլիս, մէկ բաժանւում են միմեանցից. մէկը կտրւում է, մի ուրիշը նոր բարձրացնում իր ձայնը, բայց միշտ նոյնը — իստապահանջ, անողոք:

Այդպէս է գիւղը: Այնտեղ էլ լուսաբացին վեր է կենում եռուն, աշխատաւոր կեանքը. այնտեղ էլ լուսչէ այս ժամը: Զարթեցնող, տանից դուրս քաշող սուլոցների փոխարէն այնտեղ ծտերն են, որոնք ծաւերի, պատերի վրայից խելացնորի պէս ճղվում են. բայց նըրանց կոկորդի մէջ ոչ հրաման կայ, ոչ սպառնալիք: Ազատ է գիւղացին իր աշխատամնքի մէջ. անում է իր համար, սուրբ է դործը. մի կոոր հաց ծոցն առած, աչքերը երկնքին՝ գնում է նա իր վար ու վաստակի ետևից:

Գեղջկական հպարտութիւնը շատ անգամ էր Յակոբին հարց տուել թէ կարելի՞ է այս տեղը փոխել այն տեղի հետ. ու միշտ պատասխան էր ստացել թէ չէ կարելի: Թող ինչ ուզում է լինի. թող այս բոյնի մէջ նստելը նոյն իսկ այնքան հրաշագործ լինի, որ Սարուի պահանջները մի քանի ամսում կարելի լինէր կատարել վերջացնել նրա հաշիւները առանց սակարկութիւնների, այնպէս, ինչպէս այդ գուրգն էր կամենում: Բայց և այդպէս, այնտեղի մի բուռն սե, պարարտ հողը, մի թուփ ծաղիկը, մի շալակ անուշահոտ կանաչ խոտը, մի փնջակ լեցուն հասկը մեզը ու կրակ կը լինէր փոխել այս բուլոր սուլոցների, աղմուկների հետ...

Այժմ մանաւանդ ուժեղ են, ձգողական են հայրենի հրասոյրները: Մահուան հոտ է վչում այս հին տանից, ուր վեց տարի ապրել էր Յակոբը. առաջ էլ այդտեղ մեռնում էին մարդիկ, բայց այժմ բոլորովին ուրիշ բան է: Մի մեծ խումբ մարդիկ եկել են այստեղ որ իմաց տան թէ որքան հեշտ է մեռնելը. մէկը փողոցում մեռաւ քաղցածութիւնից, միւսը հոգեվարքի մէջ է, երբորդը նրա ետևից է գնում, իսկ ամենքը առում են թէ ոչ ոք չի մնայ այստեղ, ոչ ոք չի աղատուի մա-

Հից: Կենդանի գիտակները ահ էին ազդում ծերունի գոնապահին, մեռնելու ահ: Մեռնել այստեղ, այս ազերի, այս չոր հողերի մէջ, հեռու գիւղի աղբիւրներից, ծառերից ու սարերից... Ո՛չ. չորս օրից յետոյ լրանում էր ամիսը. Յակոբը ստանում է իր ինն ոռոքին ու փախչում է...

Փախչել, այն. դրա մէջ այժմ մի սքանչելի հրապոյր կայ: Եւ այդ չորս օրերը համարելիս, որքան ատելի էին գործարանների ձայները: Նրանք, կարծես ասում են Յակոբին որ նա չի գնայ, որ իրանք չեն թողնի դնալ. Հազարաւոր այգավիսի մարդիկ կան, որոնք օրեր ու ժամեր են համարում որ դնան, փախչեն. բայց ո՞վ է նրանց արձակողը: Շոգին փող է աշխատում, սարսափելի լուծ դնելով այն մարդկանց վզին, որոնք իր ճանկն են ընկնում; կապում է ու կաշկանդում: Նրան հարկաւոր են շատ գերիներ, շատ զոհեր...

Սուլոցները վերջացան: Ահա թանձր ու խռպոտ կոչիւնը կտրուեց, թողնելով ականջում մի ինչ որ առածգական, շշմեցնող «հա»... Նա հաստատում էր իր բոլոր ընկերների ասածը: Բաց չեն թողնի...

Յակոբը հրեց իր գոնակը, նայեց դրսին. ամեն ինչ իր տեղն էր: Բայց առաւօտը ոչինչ վոփոխութիւն չէր խոստանում: Դարձեալ անլոյս ցերեկ՝ կապարեայ ամպերի միապազաղ տարածութեան տակ. դարձեալ տկլոր ու լալկան աշնանավերջը: Ցուրտ էր: Բայց ամենից տնտանելին էլ կար.—դարձեալ նոյն ահեղ քամին, որ փշում էր հիւսիսից:

## Ե

Օրը բացուեց—անէծքների, տրտունչների չորրորդ օրը:

Անիծւում էր հիւսիսը. բայց հիւսիսը այնպիսի պատուհաս չէր ուղարկում: որ խղճահարուել իմանար: Քամին չորացրել էր ամպերը, երկնքին կպցրել, իսկ

ինքը քերում, մաղում էր շրջակայ փխրուն բլուրները, ամբողջ հողակոյտեր բարձրացնելով՝ դէս ու դէն էր շպրտում։ Անձրեսի կամ ձկնի տեղ չէր մնացել. օդի մէջ շառաչում, գալարւում էր փոշու սոսկալի բուքը։ Նա թռչում էր դէպի բարձր, ամպերին էր հասնում, յարձակում էր դէպի ցած—և ահագին քաղաքը յուսահատ ճռնչում էր, հեծեծանքներ արձակում, կարծես երերում էր կատաղի յորձանքների մէջ։

Փողոցները դատարկ էին։ Միայն անհրաժեշտութիւնից ստիպուածներն էին դուրս գալիս տանից։ Ոտով գնացողներին քամին ճիւտում էր, կուչ ածում, քշում էր իր առաջ, ծակոտում էր իր բիւրաւոր ցուրտ ասեղներով, ծեծում էր իր մանրիկ քարերով և խոշոր աւազահատիկներով։ Եւ անհրաժեշտութիւնը միայն հասարակ մահկանացուների վրայ չէր ծանրացած։ Արդիւնագործական հոգին այսպիսի օրերում էլ անքուն էր. և շուտով լոյս ընկան նաև անային կոկիկ ու մաքուր կառքերը, որոնց մէջ նստած էին դրամական առիւծները և վագրերը։

Գործ և գործ... Նա եռում էր օր ու գիշեր, այստեղի միակ հասկանալի, ամենակարող աստուածութիւնը, որ իր մոլեռանդ երկրպագուներին էր միայն ժլպտում, որ երբէք յետ չէր վերցնում իր հրամանները, որի վարձատրութիւնն էլ, պատիմն էլ անողորմ էին։ Գործ... Նա արհամարհում էր ամեն ինչ, որ շահ չէ. Նա ամբողջովին ոսկի էր. կակ ոսկին անհօւն ախործակ է, միցութիւն, պատերազմ ատամներով, ճանկերով, հոգիներով...

Եւ քամին, այս կեղտոտ, պլոկուած ծովեղերքի հին տէրը, կարծես կատաղած էր գեղին աղնիւ մետալի վրայ, որ համարձակուել էր փորփորել նրա անապատները, վիթխարի ապարանքներ էր կանգնեցրել ու ընակեցրել էր դրանց մէջ մէկը միւսից խոշոր առիւծներ, մէկը միւսից կատաղի վագրեր։ Կարծես այդքան հրաշքներ ստեղծած ոսկին ծաղրելու, ոտնակոխ անելու հա-

մար էր քամին իր հողային ամպերը մոլեգնաբար խփում վեհափառ պալատներին, մանր փոշի էր ներս մաղում նրանց պատուհանների ճեղքերով և իր հեծկլտանքներով, իր տխուր մրմունջներով կամ սպառնալից սուլոցներով թունաւորում էր այդ փարթամ յարկերի տակ ծաղկած կեանքը:

Բայց նրան արհամարհում էին: Ամեն ինչ զոհ, նաև հատակութիւն է պահանջում, և ոսկին ամենից շատ ու ամենից մեծ իրաւունքով: Իզուր էր փքւում ծովափնեայ անապատի հին նահապեաը, առիւծներն ու վագրերը չէին կարող չը կատարել իրանց սովորական այցելութիւնները: Առևտրական և բանկային հաստատութիւնները քաղաքի կենտրոնում էին, այդտեղ էլ պտը տում էին նրանց կառքերը: Եւ միանդամայն օտարութիւն տարապայման երևոյթ էր ներկայացնում այն սիրուն փակ կառքը, որ անակնկալ կերպով սլայաւ անցաւ քաղաքամէջից, հեռու թողնելով լայն փողոցները, գեղեցիկ տներն ու մեծ խանութները:

Անհաւատալի էր թւում թէ նա իր կամքով է բռնել այդ ուղղութիւնը: Քամին էր, կարծես, այդպէս տանում: Թւում էր թէ քամուն, վերջապէս, աջողուել էր խլել առիւծներից մէկին և այժմ քշում էր նրան որ ծաղրէ և ցոյց տայ թէ նոյն իսկ մի զոյդ ամեհի ձիաները իրանց խոշոր ու յաղթանդամ կառավարի հետ չեն կարող դիմանալ իր վայրենի ոյժին:

Միթէ այդպէս չէր: Պապղուն, մաքուր կառքը մըտաւ աղքատների թաղը, ուր այլևս աւելորդ բաներ էին արտաքին բարեկեցութեան նշանները: Դա հարուստ բաղաքի մի կեղտոտ ու ցաւագար վիժուածքն էր: Սալայատակած փողոցներ չը կային, կառքը օրօրւում էր խորդ ու փոսերի մէջ և նրան զարմանքով նայում էին երկու կողմից շար ընկած փոքրիկ ու մռայլ աները: Այդ խեղճերից ո՞րն էր արժանի, որ միանման սե, բարձրահասակ ձիաները կանդ առնէին նրա առջեւ— լոտ երևոյթին, ոչ մէկը: Զորս անիւները և ութ-

սմբակները խրւում էին փափուկ, փոշիացած հողի մէջ, գեղին թանձր քուլաներ էին բարձրացնում, որոնց խոկոյն յափշտակում էր քամին և ոլորելով, թափում էր փայլուն կառքի, ժայռի պէս իր տեղը նստած կառավարի և պանչելի ձիաների վրայ, խփում էր հայելանման գոնակներին:

Արդէն երեսում էր դատարկ դաշտը, ուր բնակութեան հետք չէր նկատում... Բայց կառքը քաղաքից դուրս չը դնաց: Մի երկու անգամ էլ ծռուեց, մտաւ կողմնուկի փոքրիկ փողոցների և, վերջապէս, կանդ առաւ Յակոբի գոների առջև:

Կառավարը ձեռքի մի շարժումով բացեց գոնակը, դուրս եկաւ սամոյրի մուշտակի մէջ փաթաթուած մի տիկին: Քամին իսկոյն յարձակուեց նրա թաւշեայ գըլ խարկի փետուրների ու ծաղիկների վրայ. բայց տիկինը երկու ձեռքով արիաբար պաշտպանուեց թշնամուց և արագ քայլերով, վաղէ վաղ, ներս ընկաւ:

Կառքը շուռ եկաւ, երեսը դարձրեց դէպի քաղաքը, և մնաց սպասելու:

## Զ

Գոնապահի արկղաձև պահականոցի առջև տիկինոջը սպասում էր իմաստ անախորժութիւնն: Ոչ ոք չը կար, ոչ ոք այլտեղ չէր սպասում նրան: Նա կանդնած մնաց, նայում էր, չը գիտէր ինչ անել:

Առաջին անգամն էր նա տեսնում այդ ընդարձակ, սեացած, անունով և տեսքով անբախտ շինութիւնը, որ իր հաստ ու ամուր պատերով, նեղիկ պատուհաններով մի հինաւուրց բերդ կամ երեսի վրայ թողած բանտ էր յիշեցնում: Բայց առաջին անգամ տեսնելը չէր նշանակում թէ տիկինը չը գիտէ որ փաթաթ քաղաքը առանց մարդասիրութեան չէ: Այս արդիւնագործական իրարանցումների մէջ, փողի, բախտի շշմեցնող աղմուկների մէջ, վեր բարձրացողների և ցած դլորուողների

տենդային ժխորի մէջ, վաղուց թափառում էր և մի միտք, որին շատ անգամ աջողում էր ներս մտնել ու կէզօծ ապարանքները, խօսք ու զրոյց բարձրացնել այնտեղ:

Դա բարեսիրութեան գաղափարն էր:

Մի ժամանակ, երբ այս քաղաքը գեռ նահապեական հասկացողութիւնների լրջանումն էր, բարեսիրութիւնը կատարում էր հոգի փրկելու, արքայութիւն ժառանգելու համար: Այդ ժամանակ էլ հին մաքսատան մօտ կառուցած շինութիւնը՝ ապրանքներ տեղաւորելու փոխարէն՝ սկսեց խեղճ, անտուն աղքատներ պատըսպարել:

Բայց փոխուեց ժամանակը: Դործարանները զարգացան հսկայական քայլերով, ոտի տակ տալով նահապետական բոլոր կարգերն ու մոքերը: Աշխարհի բոլոր կողմերից արդիւնագործութիւնը կրթուած մասնագէտների մի մեծ քանակութիւն քաշեց գէպի իրան. թռան, եկան այդ կրթուածները, միացան փողի հետ, և գիտութիւնը աւելի ևս անողոք գարձեց մրցութիւնը, ընդարձակ հեռանկարներ բացեց հարուստների և հարստացողների առաջ:

Կերպարանափոխութիւնը կատարեալ էր. նոր կրօն իջաւ հրապարակ, դրամական առիւծներն ու վագրերը մեծանում էին օրերով, նոյն խակ ժամերով: Հնութիւնը իր ժամապատարագների, իր գրօշանոց ողորմութիւնների և երինային տենչերի հետ քաշուեց հեռաւոր, խուլ անկիւններ և այնտեղից գիտում էր ոսկու շեղերի մէջ վայլատակող նորութիւնը—սանձարձակ բարքերի, աւարառութեան, հրէշաւոր ախորժակների իրականութիւնը...

Բարեսիրութիւնը, որ մի ժշուառ աղքատանոց պահելու չափ զարգացած էր այդ քաղաքում, չոչնչացաւ յեղափոխութեան մէջ. նա մնաց, ստանալով ուրիշ, աւելի գիտնական կերպարանք:

Այժմ ամենքին էր հեղնական ժպիտ պատճառում այն հին համոզմունքը՝ թէ մարդը աստուածների զա-

ւակ է, նրանց մարմիսից և արիւնից է առաջ եկել: Ա-  
մենքը գիտէին արդէն թէ ինչ է երկինքը, գիտէին որ  
մարդը աշխարհում ապրող բիւրաւոր կենդանիներից  
մէկն է: Բայց գիտէին և այն, որ այդ կենդանին, այ-  
նուամենայնիւ, իր բոլոր ցեղակիցներից շատ բարձր է,  
քանի որ զգում է իր նմանի ցաւը, գիտէ ինամել ու-  
րիշին, նոյն իսկ զօհել՝ ուրիշին ապրեցնելու համար:  
Կային մարդիկ, որոնք քարոզում էին թէ պէտք է  
պահպանել այդ պատուաւոր գիրքը կենդանական աշ-  
խարհում, պէտք է շարունակ ցոյց տալ, թէ մարդը հա-  
սարակական կենդանի է:

Ահա այդ քարոզը վրկեց ազքատանոցը կործա-  
նումից նոր կարգերի կատարած յեղափոխութեան մէջ:

Բարեսիրութեան քարոզը և նոր կրօնը միասին էին  
շրջում, միասին էլ, միևնոյն շքեղ դռներով, միևնոյն  
մարմարեայ սանդուղքներով մտնում էին ապարանքները:  
Այսուղ նոր կրօնը պատուիրում էր, թէ պէտք է զգոյշ  
ու սպառազինուած լինել, չը մոռանալով սեփական անձը  
ու նրա գրապանը, զօհեր որոնել դրանց համար: Մի-մի  
անդամ, պարապութեան ժամերին, երբ պէտք էր զգաց-  
ւում զանազանակերպութիւնն մտցնել խօսակցութիւննե-  
րի մէջ, յիշում էր բարեսիրութեան քարոզը. և սա  
սկսում էր շնչար, որ առիւծը, որքան էլ հզօր լինի ու  
բարեբախտ, մի կեղեքիչ է միայն, ստոր ու անխիղճ...

Եւ դտան, որ արդարացի է բարեսիրութիւնը, որ  
նրան էլ պէտք է լսել: Բայց ինչպէս: Ծղամարդիկ, ա-  
ռկւճներն ու վագրերը, շատ էին ջղային, շատ էին  
յափշտակուած իրանց արհեստով. ոչ ոք չի էլ մեղադրի,  
որ նրանք այդպէս են: Իսկ կանայք: Հօ նրանք գրա-  
սենեակներ չունեն, բանկ չեն վազում, մուրհակներ չեն  
ստորագրում: Նրանց գործն է, նրանց իսկական կոչումն  
է ցոյց տալ մարդու միւս կողմը, այն, որ բարեսիրու-  
թեան քարոզն է ցոյց տալիս: Եւ կանայք յանձն էին  
առնում այդ գերը: Նրանց շնորհիւ էր, որ դռնապահ

Յակոբը մի-մի արտասանում էր հպարտութեամբ. «Հօ  
աշխարհը չէ քանդուել»...

Նոյն այդ հանգամանկն էր այս սարսափելի առաւ-  
տովին տանից հանել մուշտակաւոր տիկնոջը և տարել,  
կանգնեցրել էր Յակոբի բոյնի առաջ. Դա հասարակա-  
կան կենդանու կատարեալ յաղթանակն էր. Սակայն չէր  
կարելի ասել թէ այն ընտանիքը, որի ներկայացուցիչն  
էր տիկինը, նոր է դարձի եկել, նոր միայն հասկացել է  
թէ ինչ է մարդը. Տոհմային մի պատմութիւն կար, որ  
մանաւանդ վերջին օրերը առանձին արժեք ստացաւ:  
Խօսակցութիւնների մէջ այժմ մի առանձին հպարտու-  
թեամբ էր յիշատակւում, որ աղքատանոցը հիմնարկող-  
ների մէջ դվիսաւորը եղել է տիկնոջ սկեսուրի մեծ եղ-  
բայրը:

Բայց ի՞նչպէս էր, որ տիկինը անձամբ էր այցելում  
աղքատանոցը:

Մի քանի օրերից ի վեր տեղական լրագրութիւնը  
սոսկալի նկարագրութիւններ էր տալիս՝ այնաեղ պատրա-  
պարուած փախատականների կեանքից. Տիկնոջ ընտանի-  
քում հիւրերը սկսեցին յաճախ խօսել այդ մասին: Աղ-  
քատանոց հիմնող Մահտեսեանը բացի այս ընտանիքից  
մի ուրիշ ժառանդ չէր թողել. ուրեմն, մարդասիրու-  
թիւնն այս տան ժառանգական յատկութիւններից մէկն  
է և պէտք է նրան շարունակել: Եւ տիկինը ահա եկել  
էր Բայց ուր են մնացածները:

Քառակուսի, լայն բակը իր ամայութեամբ ասում  
էր, որ ոչ ոք չէ եկել: Քամին կեղասոտ շորի կտորներ,  
թղթի պատառներ և աղք էր դէս ու դէն քշում: կամ  
սրբում էր, տանում, կամ մէկ էլ հանում էր անյայտ  
անկիւններից, խաղում էր նրանց հետ:

Այսպէս են կատարում խոստումը...

Բակի մի խոր ամեկիւնում, ինչ որ սեւացած սիւնի  
ետեւում, մի կեղասոտ, հին դուռն էր երեւում, որի  
առջեւ ման էր գալիս մի մեծ շուն: Նա շուտ-շուտ  
մօտենում էր դռանը, հոտոտում էր տախտակները և,

ոչինչ չը դանելով, շուռ էր գալիս ու յուսահատական, ազերսով հայեացքներ էր գցում չորս կողմը։ Ծերացած, մի աչքով կոյր էր այս կենդանին, աղքատ թաղի փողոցային թափառաշրջիկներից մէկը։ Մի անդամ քաղաքային վարչութիւնը կոտորել էր տալիս անտունանտէր շներին. կոտորածից աղատուեց այս մէկը, պատահաբար մտնելով աղքատանոցի բակը։ Կարծես հասկանալով որ դժբախտութեան օրէրի համար է շինուած այդ տունը, նա մի անկիւն դրաւեց սեւացած սիւնի տակ, չարժանանալով ոչ ոքի ուշադրութեան։ Եւ ինչ իրաւունքով պիտի արժանանար, երբ ոչ միաս տալ դիտէր, ոչ ոդուաւ։ Շունը աղքատանոցի բնակիչներից մէկը դարձաւ։ Այսուեղ մի ընդհանուր օրէնք կար ամենքի համար մերթ կուշտ, մերթ քաղցած, բայց միշտ հնազանդ ճակատադրին, առանց դժգոհութեան, առանց ձայն ու ծպուտ հանելու։

Տեսնելով նորեկին, շունը առաջին վայրկեանում ոչինչ ուշադրութիւն չը դարձրեց։ Ապա, կարծես քիչ մտածելուց յետոյ, դրուխը վճռականապէս շարժեց ու դանդաղ քայլերով առաջ եկաւ։

Այդ էր պակաս՝ տիկնոջ համբերութեան վերջ գնելու համար։ Նա վախեց, սկսեց յետ ու յետ գնալ գէպի կառքը, նոյն խակ կանչեց կառավարին։ Բայց այդ միջոցին Յակոբը դուրս եկաւ այն դռնից, որի առջեւ հոտոտում էր շունը։ Նա ձեռքում բռնած ունէր ջրի ամանը և նկատելով որ մարդ է եկել, իսկոյն վաղեց գէպի իր տեղը։

Տիկինը կանգ առաւ, շունը, կարծես յուսահատուելով, որ այցելուն հեռանում է, նոտել էր պատի տակ ու դրուխը գնելով գետնի վրայ, այլևս ոչ մի տեղի չէր նայում։

## Է

— Մարդ կ՞մի։

Յակոբը ցնցուեց այս ձայնից։ Առաջին անդամն էր, որ նրա հետ խօսում էր այսպիսի մի մարդ։ Զը հաս-

կացաւ հարցի միտքը, թէ շփոթուեց, բայց պատասխան չը կարողացաւ տալ. միայն շտապեց աջ ձեռքը կրծքին դնել և գլուխ տալ այցելուհուն:

—Այստեղ մարդիկ պիտի գային—երկու օրիորդ և երկու պարոն, բացատրեց տիկինը:

Դոնապահը նորից գլուխ տուեց, բայց այս անդամ նոխ ժպատաց, —հասկանում էր:

—Ես այստեղ էի, ասաց նա, նայելով իր դռնակին.

—մի բոսէ հեռացայ, դնացի խոհանոցից ջուր բերելու...

—Չե՞ն եկել, ընդհատեց տիկինը:

—Չը տեսայ... չեմ տեսել... երէկ չէ, անցեալ օրը քահանան եկաւ նոր եկածներից մէկին հաղորդելու. նա մեռնում է: Ես բոլորի անունները դեռ չեմ սովորել և հեշտ չէ սովորել. շատ են, չեն խօսում, միայն լաց են լինում...

Նա նկատեց տիկնոջ նուրբ դէմքի վրայ մի կծու անբաւականութիւն. բարակ յօնքերը մի առանձին դիրք ընդունեցին, որից Յակովը հասկացաւ, թէ սրտաբաց շատախօսութեան տեղը չէ: Տիկինը միայն այն էր ուղում իմանալ՝ եկող եղել է թէ ոչ: Նա մանր, հասարակ մարդու տեսք չունէր, մի ձեռքով բռնեց մուշտակի երկու փեշերը, միւսով դլսարկի ծայրը և ուղեւուրուեց դէպի դուրս: Յակովը հետեւեց նրան. և կարծես զդալով, թէ պէտք է արդարացնել այն մարդկանց, որոնք պիտի գային, բայց չեն եկել, նա ասաց.

—Եղանակը շատ վասէ. այսպիսի օրը թռչունն էլ բոյնից չէ դուրս գալիս...

Նա տեսաւ փողոցում կանգնած կառքը: Այժմ նրա համար կասկած չը մնաց, որ տիկինը շատ բարձրից է. դոնէ ինքը վեց տարուայ մէջ այս մուտքի մէջ այսպիսի բան չըր տեսել:

Կառավարը արդէն խոնարհուել էր դռնակը բաց անելու, բայց տիկինը յանկարծ յետ դարձաւ և դիմեց Յակոբին, որ շտապեց վերցնել իր մեծ փափախը.

—Ո՞ր կողմում են փախստականները:

— Այստեղ, ձախ կողմում, չորս սենեակների մէջ՝  
Նեղուածք է. բայց ճար չը կայ, հին ապրողներին դուրս  
արինք, տարանք միւս ծայրը։ Դժուար էր նրանց հա-  
մար. մարդ կայ, որ տասը տարի ապրել է իր անկիւ-  
նում։ Զէին հեռանում, ընդգիւմանում էին. բայց ինչ-  
պէս կարելի էր նրանց լսել. նորերը շատ են անճար...  
Ասում են, թէ էլ պիտի դան. ինչ պէտք է անենք այն  
ժամանակ...

Տիկինը յետ դարձաւ, քայլեց գէպի բակը, հրա-  
մայելով Յակոբին առաջնորդել իրան։

Ծերուկը բոլորովին շփոթուեց. նախ իր փափակուր  
գցեց իր տնակի մէջ, ապա, երկու քայլ անելուց յետոյ,  
էլի վերադարձաւ, ջրի ամանն էլ, որ ամբողջ ժամանակ  
ձեռքին էր պահում; ներս դրեց ու վաղեց տիկնոջ  
ետեւից։

Նա բաց արեց մի դուռ, և տիկնոջ առաջ երեւան  
եկաւ մի նեղ անցք, ուր ինչ որ մարդիկ էին շարժում։  
Մի վայրկեան այցելուհին կանգ առաւ, բնազդմամբ  
յետ ու յետ քաշուեց։

— Այսպան կեղտոտութիւն, բացականչեց նա սար-  
սափած։ — Այստեղ խոզն էլ կը խեղդուի...

Նա գիտէր, որ աղքատանոցը հիմուած է և պահ-  
պանում է միայն մի նպատակով — ունենալ մի յարկ,  
որի տակ հաւաքուեին խեղճերը։ Մարդասկրութիւնը  
բազմաթիւ ձեւեր ունի, այդ էլ յայտնի էր. — մէկը  
աղքատին փող էր տալիս, միւսը աշխատանք. իսկ այս-  
տեղ միայն բնակարան են տալիս։ Պատսպարուածները  
իրանք պիտի հոգան մնացածը. ձրիակերութեան սո-  
վորեցնելը այս հիմնարկութեան ծրադրում չը կար։ Եւ  
այդ ողատճառով հոգաբարձուները այցելութեան ժա-  
մանակ միայն յանդիմանում էին ապրողներին, յոյց  
տալով կեղտոտութիւնները։ Նրանք բացատրում էլ էին  
թէ ինչ նշանակութիւն ունի մաքուր բնակարանը, ինչ-  
պէս պէտք է լուանալ, սրբել. բայց ինչ անէին հոգա-  
բարձուները, երբ աղքատները անշնորհք են, ծոյլ։ Տի-

կինն առաջինն էր, որ յանդիմանութիւնները ուղղում  
էր ոչ թէ աղքատներին, այլ հոգաբարձութեան. գոնա-  
պահին էր յայտնում նա իր ամբողջ զղուանքը, քանի որ  
դոնապահն է հոգաբարձութեան ներկայացուցիչը:

Բայց Յակոբը չէր էլ հասկանում, թէ ինչու պէտք  
է այդքան վրդովուել այս սեւացած, բորբոսնած պատե-  
րի, ցեխոտ յատակի տեսքից: Նա ոտով հրեց նեղ մի-  
ջացնքի դռներից մէկը, նայեց տիկնոջը, հրաւիրում էր  
նրան:

Եւ տիկինը արիաբար առաջ քայլեց...

## Հ

Պէտք էր ցեխերի ու կեղտերի մասին մտածել, երբ  
այդտեղ ապրողները այնքան յուսահատեցուցիւ զար-  
հուրելի էին...

Անտէր ու անխնամ մնացած մարդկային միսն էր  
փոռուած ամեն տեղ... Այդ ի՞նչ էին արել նրանք: Մար-  
դիկ էին, բաղմութիւն էր. դէմքեր, առանձին-առան-  
ձին շունչեր կան: Բայց հայեացքի առաջ այդ բոլոր  
մարմինները մի ընդհանուր, միապաղաղ զանգուած էին  
կազմում—միս, դեղին-աղլիւսագոյն միս: Սեռ, հասակ,  
անհատականութիւն—ամեն ինչ կորած, տրոյուած էր  
այդ անհնարին զանգուածի մէջ: Ո՛վ գիտէ որքան  
ժամանակ էր կեղեքուել այդ միսը, հալուել, այդպէս  
կարծրացել. որքան տարածութիւններ է անցել իրան  
աղատելու համար... Շորի կտօրներ կային, բայց դրանք  
աւելի գառն, կակծեցնող խստութեամբ էին երեւան  
հանում փառզ, ոչնչացող միսը, որ ունէր մի ինչոր ա-  
ռաւանձին, ծանր, խեղդող հոտ. մի ինչ որ խոնաւ ու  
տաք գոլորշի լցրել էր սենեակները...

Տիկինը շրջում էր,—որքան քաջասրտութիւն: Մինչև  
իսկ գիմեց մի քանի կանանց, հարցեր առաջարկեց,  
բայց համարեա ոչինչ չը հասկացաւ: Լեզու այդ ան-  
բախտների մէջ. միայն խառն հեծեծանք, միայն մըր-

մունջ ու սառցնող հառաչանք էին կարող նրանք արձակել: Եւ արդեօք հարկաւոր էր հարց ու փորձ: Հարկաւոր էր բառերի օգնութիւն: Ի՞նչ կարող էր մարդը հաղորդել, երբ ամեն ինչ անտանելի պարզ ու բաց էր: Համատարած աղէտը ջարդել, տրորել էր ամենքին մի ընդհանուր սանդի մէջ և ապա դուրս էր շպրտել: Բայց ուրիշ խեղճերը մի դիւզից, նոյն իսկ մի դաւառից չէին: Եւ ինչ փոյժ: Փախուստի ընդհանուր ճանապարհը միացրել էր ամենքին, կատարեալ հաւասարութիւն, եղանքայրութիւն էր հաստատել, դարձնելով ամենքին դանդաղ մեռնող մի ամբոխ...

Այդ ամբոխը շատ շուտ ընկճեց հարուստ այցելուհուն: Այլևս չը համարձակուելով ման գալ, առանձինառանձին դիտել թշուառութեան ամեն մի բեկորը, տիկինը կանդնեց մի անկիւնում, ուր մի մարդ էր մեռնում: Նրա դլուխը պտոյտ էր գալիս այս աստիճան անսովոր աշխարհի մէջ: Բայց կաշկանդուած էր, չէր կարողանում հեռանալ, մարդկային սիրտը նրա մէջ իր տուրքըն էր պահանջում: Եւ մեղմ, բարակ ձայնը միանման, կարծ բացականչութիւններ էր արձակում:

— Խեղճեր...

Այս բառը արտասանում էր նա իր իմացած բոլոր լեզուներով: Եւ իրաւ, ոչ մի լեզու չունի այդքան պարզ ու սովորական անունից աւելի արտայայտիչ մի բան՝ խիստ բնորոշելու համար այդ բազմութիւնը, որ դուրս էր շըպրտուած մարդկային շրջանից և այժմ ցած ու ցած էր դնում—դէպի հող, դէպի անասնութիւն:

Բազմութիւնը այժմ փախստական չէր, այժմ ամսուր, ծածկուած յարկի տակ էր. նա թափթափած էր ցեխոստ փսիաթմների վրայ, շարժում էր, ձայն էր հանում, սոզում էր: Այն հեռաւոր, հրդեհուած երկրի ցաւերը, ի հարկէ, դեռ արտասունք են քամում, դեռ կուրծք են դողացնում: Բայց ուշաւու յիշատակները չեն այսքան տանչանքների միակ աղբիւրը: Կայ աւելի ուժեղ, աւելի ահաւոր մի դարկ—այդ մարդիկ ապրել են ուզում: Աս

է ցնցում տկլոր մսերը, սա է բորբոքուել մարած աչքերի մէջ, շարժում է սուր շրթունքները, ցաւադար հառաջանք է հանել տալիս Եւ ամեն ինչ—ձայն, շարժում, համր վիշտ, բուժ անտարերութիւն, մի բառ, մի տենչանք է միայն՝ ուտել...

— Խեղճեր, նորից և նորից ասաց տիկինը:

Տէր Աստուած, հացը, մի կտոր հացը... Այս փարթամքազաքում ով է զգում թէ նա կայ, ով է նրան կերակուր, մարմին ապրեցնող համարում: Բանտարկուած ոճրագործին անդամ խղճում են, երբ իմանում են թէ նրան միայն ցամաք հաց են տալիս: Իսկ այս տեղ այսքան մարդիկ հոգի են տալիս մի փշրանք հացի համար...

Յակոբը կպել էր չէմքին: Նա հօ չէր տեսնում խեղճերին, չէր մտածում թէ երբ պիտի սովորէ այսքան մարդկանց զարմանալի անունները: Ամբողջ ժամանակ նա միայն մի բան էր շատ ուզում. տեսնել երկնքի մի կտորը, մենակ, առանց վկայի, երեսը բարձրացնել գէպի նրան և փառք տալ... Այսքան արթուն է եղել խեղճի Աստուածը, այսքան մօտիկ մարդկանցից...

Խեղճուկ օդը, ծանր հոտը, վերջապէս, հարկադրեցին տիկնոջը գուրս գնալ. Յակոբը հետեւեց նրան:

Այժմ ինչ պէտք էր անել: Տիկինը մտածում էր, բայց վճիռ չէր գտնում: Քամին կեղտոտ սև փոշի էր մաղումնրա դլխարկի, մուշտակի վրայ, ասում էր որ պէտք է գնալ, փախչել: Բայց մի բանի մէջ նա բոլորովին անզօր էր.— չէր կարողանում տիկնոջ աչքերի առջևից սրբել տանել այն տեսարանը, որ ծածկուած էր նրա կողքին, հին բորբունած պատի ետեւում: Դա էր կանգնեցնում: Եւ բարակ ձայնը այստեղ էլ յաճախ արտասանում էր նոյն բառը. «խեղճեր»:

Նրանից հեռու արձանացել էր հին, գղղուած գըռնապահը: Դլխաբաց, ալեխառն մաղերն ու զգեստի ծուէնները քամուն տուած՝ նա անթարթ աչքերով, ամբողջապէս մի սրբաղան հիացմունք դարձած, նայում էր

հարուստ կնոջը, գիտում էր նրա դէմքը ագահութեամբ, կարծես այնտեղ բացուել էր հրաշքների մի գիրք և նա, կարդալու կարողութիւն ստանալով, հասկանում էր ու հրճում: Մի երկու անգամ տիկնոջ հայեացքը հանդիպեց յափշտակուած ծերունուն: Մարդը իր դասակարգերի մէջ տարբերութեան որպիսի մեծ սահմաններ է դրել: Սյս երկու մարդու մէջ, որոնք մի երկու քայլ հեռու էին միմեանցից, սարեր ու ձորեր կային. և այս բարձրութիւնները, խորութիւնները պատկերացած էին տիկնոջ մի զոյդ թուլա աչքերի մէջ: Նկատում էր խեղճ ծերունին թէ որքան անհուն ու սառցապատ են անջրակետները: Երեխ: Նա չէր համարձակում մօտենալ իրան յափշտակողին. նա հիանում էր հեռուից, ձեռքը, ի նշան կատարեալ ոչնչութեան, դրել էր կրծքին և նայում:

Յանկարծ նրա մազոտ, միամիտ դէմքը փայլեց երջանկութիւնից: Տիկինը մօտ եկաւ, խօսում էր նրա հետ: — Եթէ երկու օրիորդներն ու երկու պարոնները գան, կ'ասես նրանց:

Սյս խօսքերը տիկինը կրկնեց երկու անգամ: Նրան թւում էր թէ այդ ծերուկը ապուշի մէկն է և դժուար է հասկանում ուրիշի ասածը: Եւ իրաւունք ունէր. Յակոբը նոյն իսկ զլիսի շարժումնով չէր ցոյց տալիս թէ լսում է, հասկանում է: Կանդնած էր նա և շարունակ սքանչացման ժպիտներ էր արձակում:

Բայց այդ րոպէին նրան զգալ տուին որ նա մոռացել է նոյն իսկ իր պաշտօնը: Զայներ լսուեցին և երկու կառքեր դանդաղ ներս մտան աղքատանոցի բակը: Շունը տեղից վեր կացաւ, թափահարեց իրան և սկսեց աշխոյժ կերպով պոչը շարժել: Ողորմութեան հոտ էր զգում...

## Թ

Եկողները տիկնոջ սպասած մարդիկն էին: Առջեկ կառքից իջան երկու ջահէլ օրիորդներ, որոնք իսկոյն

սկսեցին արդարանալ տիկնոջ մօտ, թողութիւն խընդ-  
րել: Երկրորդ կառքը լիքն էր կապոցներով. կառավարի  
ոսների տակ ընկած էր մի մեծ զամբիւլզ Պարոններից  
մէկը, նախ քան տիկնոջ գիմելը, հրամայեց Յակոբին  
դատարկել կառքը: Եւ Յակոբը գործի կպաւ:

Նա արդէն սկսել էր ազօտ կերպով հասկանալ, թէ  
ինչ է կատարւում, բայց այսքանին չէր սպասում: Կա-  
պոցները պարունակում էին զանազան տեսակ շորեր,  
սպիտակեղէն. կար պանիր, նոյն իսկ միս. իսկ զամբիւլը  
լիքն էր հացով: Մի բողէում նա այդ բոլորը փոխադրեց,  
դարսեց այն պատի տակ, որի ետեւում այնքան կատա-  
ղի էր քաղցածութիւնը: Եւ մի պատուհան չը կար այս  
կողմից, որպէսզի խեղճերը տեսնէին: Յակոբը չը կա-  
րողացաւ տանել պատ շնորի այդ անսրատութիւնը,  
շտապով ներս ընկաւ:

Նրան շատ անդամ էր յուսահատեցրել այն հան-  
դամանքը, որ հեռաւոր երկրից փախած այս խեղճերը  
լաւ չեն հասկանում իր լեզուն, ինչպէս ինքն էլ նրանցը  
չէր հասկանում: Բայց այս անդամ դժուարութիւն չե-  
ղաւ: Հասկանալ, որ եկել է հացը... դրա համար լեզու  
էլ չէր հարկաւոր: Ու ապրող մարդկութեան նշոյներ  
երեւացին. որը օրհնում էր, որը դիմեց իր բախտակ-  
ցին ինչ որ բան իմանալու. Երեխանները շարժուել սկսե-  
ցին, մի քանիսը նոյն իսկ գուրս վագեցին: Հացի ցոյց  
տուած առաջին հրաշագործութիւնը Յակոբի արտա-  
սունքները գրգռեց...

Բայց հաց բերազները ամենից առաջ կարգ ու կա-  
նոն էին սիրում: Նրանց մէջ արդէն տեղի էր ունեցել  
մի կարճ խորհրդակցութիւն և որոշուել էր գործերու  
եղանակը: Պարոններից մէկը կանչեց Յակոբին, յայտնեց  
նրան, որ այս հինգ հոգին մասնաժողով են և դիմա-  
ւորը տիկինն է, որի հրամաններին պէտք է հնազան-  
դուեն ամենքը: Տիկինը այժմից իսկ պահանջում է, որ  
անկարդութիւն չը լինի, որ սովորական աղքատները

իրաւունք չունեն խառնուել վախստականների հետ,  
ուտել նրանց հացը:

Այնուհետև սկսուեց գործունէութիւնը: Յակոբը չը  
դիտէր, թէ ինչպէս էր գնում յայտնելու տիկնոջ կա-  
ռավարին, որ տուն գնայ ու վերադառնայ մի ժամից  
յետոյ: Պարոնները դէս ու դէն ընկան, որոնում էին մի  
յարմար տեղ. իսկ այդ ժամանակ տիկինը պատմում էր  
օրիորդներին իր տպաւորութիւնները: Նա շատ ճար-  
տար էր խօսելու մէջ, և վրդովմունքն ու խղճահարու-  
թիւնը, գանգատն. ու վախը մի գեղեցիկ շարան էին  
հիւսում նրա խօսքերի մէջ:

Միակ ազատ տեղը խոհանոցն էր. վճռեցին այն-  
տեղ պատրաստել ամեն ինչ, կարգադրութիւններ անել:  
Ցեխուու ու հոտած խոհանոցը, որ մի նեղ ու երկար սե-  
նեակ էր մի հատ փոքրիկ պատուհանով, կարգի էր  
բերւում երկու պարոնների զեկավարութեամբ: Յակոբը  
տաքացել էր: Վաղուց էր որ նրա մարմինը չէր թրջել  
հողադործի քրտինքը: Նա ժիր երիտասարդի պէս վաղ-  
վրդում էր, սրբում: քերում: Եւ որքան շատ էր նա աշ-  
խատում: այնքան սաստկանում էր ներկայ եղողների  
դժգոհութիւնը: Դատապարտում էր ակքատանոցի վար-  
չութիւնը, թէեւ ոչ ոքի համար դադանիք չէր, որ վար-  
չութեան դլխաւոր հոդմն է չը սովորեցնել աղքատնե-  
րին ձրիակերութեան: Սկզբունքը համակրելի է, ամենքն  
էին համաձայն. բայց պիտի լինի մի յայտնի չափ, մի  
սահման: Հօ չէ կարելի արդարացնել այսքան ցեխերը,  
կեղտերը մարդասիրութեան անունով:

—Դու չես անում, ես էլ շեմ անի, որ դու չը փը-  
չանաս... ,

Դրութիւնը այս խօսքերով ձեւակերպեց պարոննե-  
րից մէկը, որ ունէր մեծ, զարմանալի թուխ միրուք և  
խօսում էր թանձր ու աղդու ձայնով:

—Ո՞ւր կը տանէ այսպիսի իմաստութիւնը, աւելա-  
ցրեց նա, երբ ամենքը և մանաւանդ տիկինը, իրանց  
անպայման համաձայնութիւնը յայտնեցին: —Մեր բժը-

կական տեսակէտից աւելի լաւ է չը տալ ապաստան, քան պահել այս գարշելի որջերը։ Այսպիսի տեղերում են զարգանում հիւանդութիւնները...

Դարձեալ համաձայն էին նրա հետ. և, կարծես ամենքից շատ Յակոբն էր ասում որ, այն, այդպէս է։ Մի ժամի մէջ ամօթալի, խայտառակ համարուեց այն, ինչ բնական էր տարիների ընթացքում։ Ծերունին էլ իր մեղքն ունէր. խօսողները յաճախ կրկնում էին որ եթէ դռնապահը ամեն օր իր պարտքը համարէր մի քիչ սըր-բել, քերել, այսպէս չէր լինի դրութիւնը։ Հարցըն, իմացան որ նա ինն ոռութի է ստանում և ասացին որ դա մեծ փող է գիւղացու համար, որ մի ամսուայ ըստացածով գիւղում մի ամբողջ ընտանիք կարելի է պահել քառորդ տարի։ Խօսեցին անտարբերութեան մասին, իսկ մեծ միրուքաւոր պարոնը որոտացրեց իր ձայնը այն բանի գէմ, որ մեր մէջ ամեն հասարակական պաշտօն, լինի դա նոյն իսկ դռնապահի պաշտօնը, ողորմութիւն անելու, անկարողներին պահպաննելու միջոց է գառել։

Իսկ նա, որ այսպիսի խօսակցութեան առարկան էր, չէր էլ մտածում թէ զուր չէ ստացել ինն ոռութիւները։ Մեղք գործելը սովորական բան է, բայց հօ կարելի է մեղքը քաւել։ Նա վիրաւորանք զգաց, երբ երկու մշակներ էլ եկան նրան օդնելու։ Ի՞նչ հարկաւոր էր, ինքը մենակ էլ կ'անէր։ Այս միտքը նա բարձր ձայնով յայտնեց, բայց ուշադրութեան չարժանացաւ։ Զէին հաւատում։ Բայց մի տարի հարկաւոր էր խողանոց շինել «քուրդ» Սարուի համար և Յակոբը մենակ ծակեց մի մեծ թուրմ, այնքան հող դուրս տուեց, որ Սարուի ամբողջ երամակը տեղաւորւում էր այնտեղ։

Կը կամենար նա այս եղելութիւնը գոնէ երկու մըշակներին պատմել, բայց ժամանակ չունեցաւ։ Այնպէս էր խրուել աշխատանքի մէջ, որ նոյն իսկ չը նկատեց թէ ինչպէս խոհանոցի շէմքից դուրս, այն անկիւնում, ուր շունը սիրում էր չնթրկել, փռեցին շոր և հաց էին կոտորում; պանրի բաժիններ էին դասաւորում։ Տիկինը

այժմ բազմած էր մի հասարակ, հին աթոռի վրայ, շարունակ պատմում էր իր տպաւորութիւնները, շտաւպեցնում էր Յակոբը իսկոյն ճանաչեց այդ աթոռը. և աղքատանոցում ով չէր ճանաչի նրան։ Մի այրի կին միայն այդ բանը և մի հին կարի մեքենայ էր կարուղացել ազատել իր տանից, երբ ամուսնու մահից յետոյ ամեն ինչ խորտակուեց, ոչնչացաւ, գցելով նրան այս բարեգործական յարկի տակ։ Այրին տեսնելով անսովոր այցելուներին, ինքն էր հանել իր թանկագին կայքը, առաջարկել էր տիկնոջը ու շտապել էր էլի ծածկուել իր անկիւնում։

Դեռ շատ բան կար անելու, բայց յանկարծ հրամայեցին, որ մաքրողները դադար առնեն։ Օջախում կրակ վառուեց, նրա առջեւ երեան եկաւ մի կոլոր մարդ, որ թեւի տակ բերած կառոցը բաց արեց, հանեց դաշնակները, կապեց մոխրագոյն գոգնոցը և սկսեց միսը կոտորել։ Նա էր բերել այն մեծ կաթսան, որ լցրուեց ջրով և դրուեց կրակի վրայ։

— Կերակուր էլ պիտի տան, մտածեց Յակոբը և ամենամեծ պատրաստականութեան նշաններ արաւ, երբ կարգագրիչ պարոնն ասաց նրան, թէ այժմ պէտք է լաւ մաքրել փախստականների սենեակները։

## Ժ

Այդուեղ էլ գործը առաջ գնաց նոյն եռանդով։ Յակոբը իր օդնական մշակներին ուղարկեց բակը մաքրելու, իսկ ինքը աշխատում էր ներսում։ Դեռ նեղ միշանցքումն էր նա, երբ նորից ներս եկաւ տիկինը։ Այս անգամ նրան հետեւում էին օրիորդներն ու պարոնները. ամենքը բռնած ունէին հացի կապոցներ։

Մի քանի անգամ Յակոբի ձեռները թուլացան. ուղում էր տեսնել և գործը թողեց, մօտեցաւ բաց դռներին։ Օրիորդները հաց ու պանիր էին բաժանում, մնացածները խօսեցնում էին խեղճերին և, ինչպէս երեւ-

ւում էր, յոյսեր էին տալիս, թէ այսուհետև նրանք շաւ  
կը լինեն: Սրտաշարժ շնորհակալութիւնների մի մեծ  
տեսարան էր բացուել: Մի պառաւ կին յանկարծ չոքեց,  
ուղում էր տիկնոջ ոտներն ընկնելու ոա կռացաւ, ջուխտ  
ձեռքով բոնեց նրա թեւերը և վեր կացրեց. իսկ պա-  
ռաւը՝ այդ ուշադրութիւնից աւելի ևս դլուխ կորցրած՝  
տարածեց թեւերը ու պինդ գրկեց բարերարուհուն,  
որ չէր էլ փորձում աղատուել այդ կմախքի դրկից ու  
կեղտուտ յնցոտիներեց: Դեռ էլ բաներ կային. բայց  
Յակոբը ամաչեց և երկար չը նայեց: Ինչպէս մի երե-  
խայ, որին թեւեր է տալիս անկեղծ հրճուանքը, նա  
յետ վաղեց ու սկսեց այնպիսի եռանդով քերել տարի-  
ների ցեխի տակ կորած յառակը, որ տախտակները  
տաշւում էին:

Նրան յանկարծ կանչեցին: Մանելով երրորդ սե-  
նեակը, ծերունին կանգ առաւ, իր առջև բացուած տե-  
սարանից շանթահար եղածի նման: Անկիւնում հաւա-  
քուել էին տիկինն ու օրիորդները, նայում էին համա-  
րեա դողալով և բացականչում էին. «ահ, խեղճ»...  
Թուխ միրուքաւոր պարոնը իր ձիւնափայլ թաշկինակը  
փուել էր յատակին, մի ծնկով չոքել էր նրա վրայ ու  
խորին ուշադրութեամբ զննում էր մի կիսամեռ երե-  
խայի վտիս աղդը:

Պարոնը յետ նայեց և հրամայեց խոհանոցից տաք  
ջուր բերել: Յակոբը դուրս թռաւ, և րոպէ շանցած՝  
չոքած էր նրա կողքին, պահում էր ջրի ամանը: Սև,  
չորացած մի վէրք էր երեսում երեխայի աղդը իրայ և  
նրա կողքից կծկուած անբախտ մայրը պատմում էր թէ  
ինչպէս քրդի գնդակը խփեց այդ տեղին: Մի ոտով չո-  
քած պարոնը հարց ու փորձ էր անում: հառաչեց, դը-  
լուխը շարժեց և մատները դցելով տաք ջրի մէջ, սկսեց  
զգուշութեամբ շփել վէրքը: Կեղտուտ-կարմիր մի հե-  
ղուկ գոյացաւ նրա մատների տակ, որ մի երկար նեղ  
հետք գծեց երեխայի դեղնած մսի վրայ ու թափուեց  
աղդը աջ կողքով: Իսկ մայրը ասում էր որ երեխան

դեռ լեզու չէ առել, գեռ միայն «մամ» բառը գիտէ։  
Ո՞ւմ էր այդ անլեզու գառնուկը մի վատութիւն արել.  
և սակայն Պիքօդին ծակել էր նրա միուր։ Փախչելիս  
աղք էին գրել վէրքի վրայ, արիւնը կանգնեցրել և հի-  
մա չը գիտէին թէ ինչ է լինելու։

Մայրը յարմար առիթ էր գտել, կարծում էր թէ  
այդ առողջ, մաքուր հագնուած ջօջ պարոնը եկել է  
նրա դատին վերահասու լինելու և թափում էր իր սըր-  
տի մէջ պահածը, արտասունքներ կուլ տալով պատմում  
էր թէ իր տանից քանի հոգի մորթուեցան և քանիսը  
կորան։ Խոկ անծանօթ պարոնը շարունակում էր զար-  
մանալի մեղմութեամբ քսել մատները վիրաւոր աղդրին  
և լուռ էր։ Երեխան կարծես, ցաւ չէր զգում, երկու  
ձեռքով մի կտոր հաց էր խցկել իր բերանը և ծծում  
էր ագահութեամբ։ միայն երբեմն կանդ էր առնում,  
դէմքի վրայ պատկերացնում էր սոսկալի տանջանք, որից  
նրա ահագին բերանի անկիւնները ծռւում էին։ բայց  
նա լաց լինելու ժամանակ չունէր և վայրկեան չանցած՝  
խոր էր տանում մատների մէջ սեղմած հացի կտորը։

Վերջապէս պարոնը կանգնեց, թափ տուեց ծուն-  
կը. ապա վերցրեց փռած թաշկինսակը, մի քանի ան-  
դամ ծալեց, կապեց երեխայի ոտը ու գուրս դնաց։  
Տիկինն ու օրիորդները նրա հետ էին, ուզում էին իմա-  
նալ նրա կարծիքը, բայց նա մռայլ էր, չէր խօսում։  
Յակորին հրամայեց ջուր բերել, լուացաւ իր ձեռքերը։  
Տիկինն ու օրիորդները հանեցին իրանց թաշկինսակները  
և ինդրեցին դրանով սրբել ձեռքերը։ Նա բոլորին շը-  
կորհակալութիւն յայտնեց, վերցրեց տիկնոջ թաշկինսա-  
կը։ Միայն այդ ժամանակ նա ասաց։

— Դնդակը մնացել է... գուցէ կարելի լինի ազա-  
տել խեղճին... երեկոյեան ևս վիրաբոյժ կ'ուղարկեմ... .

Ապա պատասխանելով տիկնոջ և օրիորդների միա-  
բան, սրտառուչ ցաւակցութիւններին, նա հառաչեց։

— Այն, այսպիսի գժբախտութիւն երևակայել ան-

գամ սարսափելի է, ուր մնաց տեսնելլ, ասաց նա չառ  
զգացուած կերպով:

Այժմ օրիորդներն էին պատմում իրանց տպաւու-  
րութիւնները, իսկ մնացածները հաստատում էին նը-  
րանց խօսքերը գլխի տիսուր շարժումներով, հառա-  
չանքներով:

Ճաշը գեռ ուշ կը լինէր. «Մասնաժողովը» պատ-  
րաստում էր հեռանալ: Բժիշկը աղդու և պարզ կեր-  
պով հասկացրեց Յակոբին որ ամեն բանի պատասխա-  
նատուն նա է, մի առ մի ցոյց տուեց թէ ինչ պէտք է  
անել և աւելացրեց որ միւս առաւօտ բոլոր կարգա-  
դրութիւնները կատարուած պիտի լինեն:

Ոչ մի բանի դէմ Յակոբը մտքում անգամ առարա-  
կութիւն չարաւ. ոչ մի գործ գժուար չէր թւում նրան:

### ԺԱ

Եւ ամբողջ օրը աղքատութեան մռայլ պատսպա-  
րանը զարմանալի բաներ էր տեսնում: Թէև չը կային  
կարգագրողները, բայց գործը գնում էր անդադար. մի  
աներեւոյթ, դիւթական ոյժ շարունակ բարեկարգու-  
թիւնների ետևից էր: Նոր փսիաթներ բերին, փռեցին  
սենեակներում: Հրամայուած էր այրել հները: Փակա-  
նագործը խոհանոցի գուան վրայ կողպէք շինեց, բանա-  
լին վերցրեց խոհարարը: Եռանգուն երթևեկութիւն կար:  
ինչ որ մեծ կապօցներ բերին, գրին խոհանոցում; գա-  
լիս էին վարպետներ, նայում էին պատերին, ինչ որ  
հաշիւներ էին անում ու դնում:

Խոհարարը ուշ վերջացրեց իր գործը: Մի մի ա-  
ման մնածաշ էր բաժանել փախստականներին, լուացել  
էր կաթսան ու ամանները, այժմ հադաւ չուսան և  
յայտնեց Յակոբին որ միւս օրը առաւօտեան մի սայլ  
փայտ կը բերէ իր հետ: Միրում էր նա գործից յետոյ  
մի զրոյց սկսել: Նստեցրեց Յակոբին, եփած միս ու  
պանիր գրեց նրա առջև, իսկ ինքը բաց արաւ խօսքի

տուալը։ Թէև մի անդամ արդէն ասել էր թէ ովքեր էին այսօրուայ այցելուները, բայց այժմ աւելի մանրամասն կերպով սկսեց կրկնել այդ պատմութիւնը։ Ծառաները, խոհարարները շատ են սիրում խօսել մեծաւորների մասին. իսկ խոհարար Դրիգորը այդ դասակարգի մէջ ամենից լաւատեղեակ և չնորհալի պատմողն էր։

Ո՞րպիսի զարդարուն ոճով նա նկարագրեց Նուրեանի տունը։ Պարոն Նուրեանը քաղաքի առաջնակարգ հարուստն է, և տիկինը, որ այսօր այնքան երկար, մեաց աղքատանոցում, նրա ամուսինն է։ Դիտէր խոհարարը թէ ինչպէս է այդքան բարձրացել Նուրեանը, ում որդին է, ում աղջիկն է ուզել։ Բայց այդ անունը այնքան որոտալից էր, որ նոյն իսկ աղքատանոցի դռնապահի բոյնն էր մուել։ Օրինակ, Յակոբը առանց խոհարար Դրիգորի ասելուն էլ գիտէր որ Նուրեանին է պատկանում քառակուսի, ծառագարդ հրապարակի մէջ տեղը բարձրացած հսկայ պալատը։ Սակայն խոհարարը հասկացրեց նրան որ այդքանն իմանալը բաւական չէ. նմուշի համար նա նկարագրեց մի երկու խնճոյքների պատրաստութիւնները, թուեց թէ ինչքան տեսակ կերակուրներ, ինչ խմիչքներ են գործ ածուել ամեն անդամ։ Արդ բոլորը Դրիգորը գիտէր ամենահաստատ աղբիւրից, որովհետեւ Նուրեանների գլխաւոր խոհարարի օգնականը նրա ամենամօտիկ բարեկամն էր և նոյն իսկ կնքել էր իր երեխաներից մէկին։

Երկու օրիորդներն էլ մեծ մեծ տներից են, ահագին օժիտներ ունեն, թագաւորների վայել հարսնացուներ են, բայց տիկին Նուրեանին, ինչ խօսք, չեն համիւ։ Պարոններից մէկը, նա, որ մեծ ու թուխ միրուք ունի, քաղաքում հռչակուած բժիշկ Յովասափեանն էր։ Հարուստ տները նրան պաշտում են, ձեռքից ձեռք են խլում, այսպէս որ տանը հիւանդներ ընդունելու ժամանակ չունի. միայն ամեն շաբաթ երեկոյ կէս ժամ ունի աղքատների համար, որոնցից փող չէ վերցնում։

Պէտք է այդ ժամանակ տեսնել նրա տունը. ոչ մի սուրբի տակ Վարդավառին անդամ այդքան ուխտաւոր չէ լինում: Եւ արժէ որ այդպէս լինի. բժիշկը համարեա մեռած մարդկանց է լաւացրել, քիչ է մնում որ տնաշնը դիակին էլ շունչ տայ:

— Գուցէ սուրբ մարդ է, ասաց Յակոբը, որ խորին ուշադրութեամբ լսում էր այդ զարմանալի պատմութիւնները:

Խոհարարը հաւանութեան նշան արաւ. իր հասկացողութիւններով նա շատ չէր տարբերում իր խօսակցից: Ինչ էլ լինի, նա գիտեր որ բժիշկ Յովասափեանը մի պաշտելի մարդ է. խելօք, աղա մարդ, որի խօսքը ոչ ոք, ոչ մի մեծ մարդ անդամ չէր համարձակուի անտես անել: Եւ մինչև այժմ էլ Գրիգորը չէր կարողանում հասկանալ թէ ինչպէս եղաւ որ բժիշկը այնքան երկար մնաց այստեղ. նա ժամանակ չունի, նրա կառքը անդադար դէս ու դէն է թուչում, նրան սպասում են ամեն տան մէջ, ուր հիւանդ կայ, ուր խորհուրդ է հարկաւոր:

Միւս պարոնին խոհարարը լաւ չէր ճանաչում, մի քանի անդամ տեսել էր նուրեանի քրոջ տանից դուրս գալիս և կարծում է թէ նա տնային ուսուցիչ պիտի լինի:

Ինքը, այդքան պատմութիւններ իմացողն էլ, պակաս մարդ չէր: Յակոբը այդ էլ հասկացաւ, երբ նա մի առանձին պարձանքով յիշատակեց որ մի ամբողջ տարի ծառայել է Գալուստ աղայի խոհանոցում:

Գրիգորին շատ լաւ էր աջողւում կապել իր միշտ խւզոտ, խունացած զգեստը, իր ամբողջ փոքրութիւնը մի այնպիսի նշանաւոր անձի հետ, որին ամենքը «վառողմարդ» էին անուանում: Մեռնելիս էլ աղան թունդ ու կրակ էր: Մեծ տան մի սենեակում էր նա հողի տալիս, բայց ամբողջ ընտանիքը ահ ու գողի մէջ էր. ասում էին՝ հրեշտակի հետ էլ չէ հաշտում: Կորիւտալով էլ գնաց վառողմարդը: Եւ ահա մի ամբողջ տարի

այդ մարդու ձեռքի տակ, նրա խոհանոցում։ Հեշտ է ասել։ Պողվատից ծառայ ձուլէիր, տայիր նրան, երեք ամսից աւել չէր դիմանայ. իսկ խոհարար Դրիգորը մի տարի դիմացաւ, այն էլ ի՞նչպէս Զատկին աղան կանչեց իր մօտ, խրատեց որ միշտ հաւատարիմ մնայ, գողութիւն չանէ և ապա հարցրեց թէ ի՞նչ պակասութիւն ունի։ Դրիգորը սիրա առաւ և համարձակ պատասխանեց որ իր տենչանքն է մի մեծ կաթսայ ունենալ։ Եւ աղան—տեսնուած էր այդպիսի բան—հաւանութեան նշան արաւ, իսկ հինգ օրից յետոյ Դրիգորը իր ուզած կաթսայի տէրն էր։ Այդ իսկ կաթսան էր, որի մէջ այսօր կերակուր եփուեց խեղճերի համար։

—Հոգիդ լոյս գառնայ, Դալուստաղա, մի անկեղծ պատկառանքով բացականչեց Դրիգորը, բռնելով կաթսայի բերանից և նայելով նրա մաքուր, սպիտակ ներսին։—Լաւ դիմացայ... Ափսոս շուտ մեռաւ, թէ չէ՝ ես հիմա լաւ կը լինէի։

Անկեղծութիւնը յափշտակել էր երախտապարտ արհեստաւորին, որի կեանքի ամբողջ փայլը, ամբողջ պարձանքը այն էր, որ նա դիմացել էր «վառօդ»-մարդուն»։ Եւ իր այդ հերոսութիւնից նա մի քանի դէպքեր էլ պատմեց ծերունի դռնապահին, տանելով նրան մինչև փողոցի դռները։ Լոեց նա միայն այն ժոմանակ, երբ քամին նրան իր կատաղի պտոյտների մէջ առաւ...

## ԺԲ

Խոհարարն էլ գնաց։ Յակոբը կանգնած էր իր դըռնակի առջև։ Յիշում էր թէ դեռ որքան շատ բան ունի անելու, բայց չէր ուզում շարժուել։ Յոզնած չէր, բայց աւելի վատ դրութեան մէջ էր—մենակ էր։ Մենակ այնքան բան տեսնելուց ու լսելուց յետոյ... Եւ նստեց այն քարերի վրայ, որ իր ձեռքով դարսել էր իր տնակի աջ կողքում։ Ամեն անդամ, երբ յայտնի էր գառնում դիւղից եկած նամակի միաքը, այստեղ նստելու և

երկար լուռ ու անշարժ մնալու պահանջն էր ծանրանումն նրա վրայի ինչպէս միշտ, այս անդամ էլ զառամեալ չունը նստեց նրա գիմաց, նոյնպէս անշարժ, կարծես նոյնպէս թաղուած մտածմունքների մէջ:

Ինչու են այս քաղաքում այնքան անիծում այս կատաղի քամին, այս սևացած, լալկան երկինքը՝ Յակոբը հիմա հասկանում էր որ օրը գեղեցիկ է լինում ոչ միայն իր արեգակով, իր ջերմութեամբ: Ո՞վ կարող էր իմանալ թէ այսօր վաղ առաւոտեան, բաց անելով իր խեղճ բոյնի գուռը, նա ուղղակի պիտի մոռնէ այն աշխարհը, որ այնքան հեռու—բարձր. է այս խեղճութեան սարսափելի օթեւանից: Խակն ասած՝ Յակոբը երկնքի նման մի տեղի գոներով էր այսօր ներս մտել: Հարուստաների աշխարհը և երկինքը—միւնոյն չեն այդ երկուսը խեղճերի համար: Պատմում են որ երկնքում հրեշտակներ կան, անմահական ջրեր ու ծառեր. իսկ ինչ էր պատմում Գրիգորը հարուստների խնճոյքների մասին. Երկու պատմութիւնները հաւասար չափով հրաշլի են, ափշեցնող Սյնքան մարդիկ այս բակում. ինչ անուններ, սկսած Նուրեանից մինչև Դալուստ աղայի խոհարարը: Եւ ինքը Յակոբը, նրանց մէջ, նրանց հետ. նրանցից մէկն էր Տէր Աստուած... իր տեղն էր արդեօր...

Նայում է Յակոբը իրան—և չէ ամաչում այդ հարցից: Ամօթ չէր դալիս: Նրա սրտի մէջ մի բան բարձրացաւ, սկսեց մեծանալ, մեծացնել ու մօտեցաւ նրա կոկորդին, հասաւ լեզուին: Այդ զարմանալի բանը խօսք դարձաւ, և Յակոբը արտասանեց.

—Ագամի որդիներ ենք...

Ամենքը, ամենքը: Եւ այս տունը լոկ գժբախտութեան որջ չէր, այլ մէկը քաղաքի շինութիւններից, որոնք լցուած են Ագամի որդիներով: Աղքատանոց է սա, բայց կպած է քառակուսի, ծառազարդ հրապարակում բարձրացած մեծ պալատին: Տեսել էր Յակոբը այդ պալատի շուրջը ոլատող վանդակը՝ սրածայր երկաթներով, և

հասկացել էր որ սուր ծայրերը մարդ ծակոտելու, հեռու փախցնելու համար էին: Ճիշտ որ գիւղացին կարծրամիտ է լինում: Զէր իմացել Յակոբը որ այդ սուրսուր երկաթները լոկ զարդարանկներ են, չէր իմացել որ այդ շրջապարհսպը այնքան հրէշաւոր, ցուրտ ու անգութ չէ: Նուրեանի պալատը աղքատանոց էր եկել. և միթէ աղքատանոցն էլ այնտեղ չէ կարող դնալ: Եւ սուրբի պէս զօրաւոր բժիշկը միայն այն պալատին չէ պատկանում: Հարուստի և աղքատի առաջ կարելի է չոքել, երկուսին էլ կարելի է օգնել: Ասենք մէկը փափուկ բարձերի վրայ է պառկած, միւսը կեղտոտ, հոտած փսիաթի վրայ: Բայց ինչ վնաս: Սուրբի նման բժշկի ծունկը ծալուեց, չոքեց և փսիաթի վրայ... .

—Աղամի որդիներ ենք...

Շունը տեղից գեր կացաւ: Նրա մի հատիկ աչքն էլ, կարծես, տեսաւ թէ ինչ է դառել այս բակի հրամանատար ծերունին: Ու մօտեցաւ, նախ հոտոտեց նրա ոտները, զգեստի փէշերը, ապա իր մարած հայեացքը բարձրացրեց, զցեց նրա դէմքի վրայ, ոլորեց պոչը և դունչը մօտեցրեց նրա ձեռքերին, որոնք դարսուած էին ծնկների վրայ: Իր ցեղին յատուկ բնազդով նա հասկանում էր որ ծերունին այժմ անպատճառ պիտի փաղաքշէ իրան, և կողքը սեղմեց նրա ոտներին, շտապեցնում էր, մինչև իսկ աղաշաւոր ծիչ արձակեց:

Բայց Յակոբը չը փաղաքշեց խեղճ կենդանուն: Նա չէր էլ նկատում նրան: Ուր էր դռնապահի ուշքը: Ահա մեծ դռներով ներս մտան երկու հոգի: մէկը այստեղ մի անկիւն գտած հին աղքատ էր, միւսը մի փոքրիկ մարդ, որի աջ թեր կտրած էր: Երկուսն էլ սկսեցին շատ դանդաղ առաջ գնալ: Թեկից զրկուած մարդը մեծ զգուշութիւններ էր գործ դնում որ իրան չը նկատէ անողոք դռնապահը, որ, ինչպէս երեսում էր, լաւ էր ճանաչում նրան: Աշխատելով թագնուել իր ուղեկից աղքատի կողքում, նա մի քանի անգամ կանգ առաւ, ճարպիկութեամբ յարմար գիրքեր գրաւեց: Բայց շուտ

հասկացաւ որ վտանգ չը կայ և համարձակ առաջ քայլեց, մոտաւ իր ընկերակցի հետ բակը:

Չը տեսաւ նրան Յակոբը: Կոշտ, ալեխառն յօնքերի տակից նրա հայեացքը մեխուած էր մի անորոշ կէտի վրայ, ուր աեսնում էր այն մարդկանց, որոնց վկանն էր մտել այսօր: Եւ ամենքը դեռ այստեղ են, նրա աշքի առջեւ, ամենքը պտոյտ են գալիս տիկնոջ շուրջը: Տիկինը, տիկինը... հրեշտակ էր նա և միշտ այստեղ կը մնայ, իսկ ծերունին կը նայէ նրան, կը լսէ նրա ձայնը օդի միջից: Վաղը միւս օրը... նա գեռ կը գայ, շատ կը գայ...

Շունը նորից կազկանծեց, տեսնելով այն անսահման ժպիտը, որ բոլորովին այլակերպել էր այդ գեղշուկի դէմքը: Միթէ այս անդամ էլ նա չի փաղաքշի...

Բայց Յակոբը երեսը դարձրեց դէպի պատը. նրա աչքերից թափուում էին արտասունքները...

լ, կ 0

(Ար Շարունակուի)

## ԱՆՁՐԵՒԻ ԿԱԹԻԼԸ

(Սաղի)

Անձրեւի մի կարիլ  
Ցած ընկաւ մի ամպից,  
Երբ տեսաւ ծովը լայն,  
Նա շիկնեց իր չափից:

Ասաց. «Այս ծովի մօս  
Ուրեմնն էս ի՞նչ եմ.  
Ուր որ կայ ովկիանը,  
Հեզ շիքըս ոչինչ եմ»:

Երբ նայեց ինքն իրան  
Այսպէս խեղճ ու խոնարհ,  
Մի ուսրէ նրան գրկեց,  
Նա եղաւ մի զնիար \*):

Երէ նա բարձրացաւ,  
Քանզի նախ խոնարհուեց.  
Երէ կետնի ստացաւ,  
Քանզի մահ որդնեց:

ՅՈՎ. - ԽԱՆ ՄԱՍԻՀԵԱՆ

\* ) Սրբելեան մի աւանդութիւն կաէ, թէ մատիսի առաջին կաթիւը  
երբ որ ընկնում է ոստրէկ մէջ՝ մարգարիտ է դառնում: Ծ. Բ.

## ԶԵՅԹՈՒՆԻ ՆԵՐԿԱՑԻՑ

ԶԵՅԹՈՒՆը զնու ևս ապրում է նախավետական-ազնուապետական դրութեամբ:

Այնտեղ զոյութիւն ունեն տակաւին բազմանդամ գերգաստաններ, ինչպիսիք են ԵՀՆԻ-ՏԻՒՆԵԱՆՆԵՐԻ, Սուրէնեանների և այլ գերգաստանները, որոնցից իւրաքանչիւրը բաղկանում է 50—60 ընտանիքից և մօտաւորապէս 120—150 կարիճ և զէնք գործածող տղամարդերից, որոնց առաջնորդ և գլխաւոր են նահապետանները կամ տոհմային իշխանները:

ԶԵՅԹՈՒՆԻ չորս թաղերն ունեն առանձին նահապետներ, որոնց զեյթունցինները անուանում են իշխան: Իւրաքանչիւր թաղի մէջ կայ մի բաղմաճիւղ գերգաստան, որ նկատում է իբրև տոհմային ազնուական և որի գլխաւոր անդամները ժողովրդի կողմից վայելում են յարգանք, իբրև երկրի մեծաւորներ: Սոյն գերգաստանների գլխաւոր անդամներից միայն նրանք, որ ունեն յայտնի արժանաւորութիւն և ձիրքեր, ժառանգաբար ընտրուում են իշխան կամ նահապետ: Իշխանները, բացի վարչական ընդունակութիւններից, անպայման կերպով պէտք է ունենան և՛ պատերազմական ձիրքեր: Իշխանները պարտաւոր են մտածել և հոգս տանել ժողովրդի բարեկեցութեան մասին, իշխանների իրաւասութիւնն է՝ կարգադրել և սնօրինել ժողովրդային բոլոր գործերը—վէճեր, զանազան դատեր, հասարակական, ամուսնական և այլ խնդիրներ: Իւրաքանչիւր թաղի իշխան կարող է միջամտել միայն իր թաղի գործերին, իսկ հանրային խնդիրների կարգադրութեան գործում հաւաքւում են չորս իշխանները իրանց երկրորդականների հետ միասին և ընդհանուրի համաձայնութեամբ սահմանութեամբ են որշումներն ու գործերի ընթացքը:

Աւանդական յայտնի սովորութիւնների համաձայն ինաւութեան կամ ընտանեկան կասկեր հաստատուում են միայն

տոհմային գերդաստանական ճիւղերի մէջ։ Հազուադէպ է ա-  
մուսնական կապ հաստատուած տեսնել տոհմային և հասարակ  
ընտանիքների մէջ։

Սոյն հասարակական կարգերն ու ներքին սովորութիւն-  
ները խորապէս արմատացած են ժողովրդի մէջ, որ և մինչեւ  
մի յայտնի աստիճանի ապացոյց են, թէ զրանք գոյութիւն ու-  
նեն հին ժամանակներից ի վեր։ Այդ ազնուական գերդաստան-  
ների անդամները, առհասարակ, առոյդ և վայելչակաղմ են և  
ունեն մի տեսակ ասպետական ողի։ Վերջին ժամանակներս,  
սակայն, նկատուում է ինչ-որ փոփոխութիւն այդ աւանդական  
բարքերի ու սովորութիւնների մէջ՝ մասսամբ Զէյթունն իր նախ-  
կին սահմանափակ վիճակից ելնելու պատճառով, որով նա  
սկսել է շփուել շրջակայ գաւառների բնակիչների հետ, մասսամբ  
էլ թիւրքական կառավարութեան մասնակի ջանքերի չորհով,  
որի նպատակն է խախտել զէյթունցի հայի այդ մեկուսացած  
ազնուապետական գրութիւնը։ Կան թաղեր, որոնք վերջին տա-  
րիներս կառավարուում են հասարակ և ոչ-ազնուական գերդաս-  
տաններից առաջացած հարուստ աղաների, էֆէնդիների և կամ  
կղերականների ձեռքով։ Այսպէս են Բօչ-Բայիր և Սուրէննեան  
թաղերը։

Երկու կամ երեք դար ասած, երբ Զէյթունը վայելում էր  
համեմատաբար անկախ վիճակ, երկրագործութիւն ու տեղա-  
կան արհեստները մի յայտնի աստիճանի նախանձելի վիճակ ու-  
նէին, քան այժմ։ Թէ պատմութիւնը, թէ աւանդութիւններն ու  
մադաղաթէ յիշատակարանները, որոնք գտնուում են այժմ վան-  
քերի անկիւնները, արձանագրում են, թէ բացի բազմաթիւ-  
խաղողի այգիներից, որ տեղական երկրագործութեան մէջ ա-  
ռաջնակարգ տեղն էր գրաւում, Զէյթունը արտագրում էր նաև  
որոշ քանակութեամբ ցորեն, գարի և այլ հացարոյներ,  
նոյնպէս և պտղատու ծառեր, ինչպէս՝ ձիթենի, թղենի, նոնենի,  
ընկուզենի և այլն։ Ժողովրդի մէջ ընդհանրացած և ծաղկած  
արհեստներն էին։ — Երկաթագործութիւն, վառողագործութիւն,  
շերամաբուծութիւն, ապայագործութիւն, ջորեպանութիւն և  
այլն։ Սակայն այն ժամանակից, երբ սկսել է աւելի սուր կեր-  
պարանք ստանալ գոյութեան և ինքնապաշտամանութեան կոիւը՝  
իր շուրջը ծնունդ առած գերեբեկիների և արտաքին թշնամի-  
ների դէմ, զէյթունցին հետզետէ, երկար տարիների ընթաց-  
քում, կորդնում է իր քաղաքացիական յայտնի ձիրքերն և ըն-  
դունակութիւնները, մի կողմ են թողնուում երկրագործութիւնն  
ու արհեստները, ինչպէս և իր ժամանակի համընթաց՝ տեղա-  
կան կրօնական միաբանութիւնն ու վանքերում աւանդուած

գպրական կրթութիւնը։ Այդ ժամանակներից սկսած՝ զէյթունցիների կեանքը ընդգծուեց աւելի սահմանափակ շրջանում, հետըգհետէ ստանալով լեռնաբնակներին յատուկ մեկուսացած, սակաւակեաց, կիսավայրենի մի բնաւորութիւն։ Այս ամենի որպէս ապացոյց կարող են լինել, բացի երկու-երեք դար առաջ Զէյթունում գանուած նշանաւոր վանքերն ու ծաղկած միաբանութիւնները, այլ նաև Զէյթունից ու գլխաւոր գիւղերից մի քանի ժամ հեռի գետահովիտների մէջ անխնամ թողուած ընդարձակ այդիները, որոնք երկարտես պատերազմների չնորհով զրկուած լինելով ինամող ու մշակող ձեռքերից, աւելի վերջ դարձել են վայրի, անպտուղ որդասունկեր։ Նմանապէս բազմաթիւ վայրի ձիթներներ, թղենիներ, հունիներ, որոնք առաջները լինելով պատասու ծառեր՝ արշաւանք գործող թշնամիների կողմից կարուած, նորից բուսած և թողուած են անխնամ վայրենի։ Իսկ վերջին տարիներում բոլոր ծառերը կարուեցին թուրքական բանակի կողմից՝ զինուարներին իբրև վառելու նիւթ։

Ներկայումս Զէյթունը չունի իր կենսական պէտքերի և ապրուստի համապստասխան բաւականաչափ վարելանող կամ արդինաբերութիւն։ Իսկ վաճառականութիւնն ու արհեստները բոլորովին ընկած են։ Եւ սակայն զէյթունցիները սովորութիւն չունեն պանդխտել և կամ դաշտային նահանդները աշխատելու դնալ, ինչպէս այդ անում են Հածնի բնակիչները՝ տարուայ յայտնի եղանակների մէջ Աղանայի դաշտերը դաշտելով։

Այժմ զէյթունցիների ապրուստի գլխաւոր միջոցներն են՝ վաճառականութիւն շրջակայ գիւղերի հետ, այգեգործութիւն և զանազան տեղական մանր արհեստներ։ Զէյթունցիները, առհասարակ, առաւել կամ նուազ ընդարձակութեամբ ունեն խաղողի այդիներ, որոնցով հայթայիթում են կեանքի անհրաժեշտ պէտքերը։ Միայն Զէյթունում կան մօտ 2500 այգի, իսկ ամբողջ գաւառում մօտաւորապէս 7—8000։ Այդիները գտնուում են Զէյթունի հարաւարենելեան և հարաւարենտեան կողմերը՝ գետակի երկու եղերքների ընդարձակ ձորահովտի մէջ։ Խաղողը, բուլղ կամ չամիչը դրաստներով փոխադրում են Ալբիստանի և Կոկիսոնի թիւրքական գիւղերը՝ փոխանակելու ցուրենի, զարու և այլ հացաբոյսերի հետ, և կամ երբեմն էլ թիւրք գիւղացիները Զէյթուն են բերում իրանց հացաբոյսերը՝ փոխանակելու համար չամիչի հետ։ Այս պարագան կախուած է լինում տարուայ մէջ փոխանակելի բերքերի առաւել կամ նուազ առատութիւնից։ Խաղողից պատրաստում են բուլղ և մի քանի տեսակ անուշներ։ Զէյթունի խաղողը մինչև տասն և հինգ տեսակի է համառ չամիչի համառում և նշանաւոր է շրջակայ դաւառների մէջ։

Զրկուած արուեստական խնամքներից, սակայն չնորհով բարեթեր հողի և յարմար կլիմայի՝ նրանք քաղցր են և իրանց տեսակի մէջ ընտիր: Խաղողի ընդհանրապէս սև տեսակից պատրաստում են մեծ քանակութեամբ չամփչ, իսկ ջրալից տեսակներից զինի և օղի: 8—10 տարի սրանից առաջ, երբ գեռ ևս ֆրանսիայում հաստատուած չէր ժամանակակից մաքսային գըրութիւնը, մամնաւոր վաճառականներ մեծաքանակ չամփչ էին արտահանում Մարսէլ, և այդ պատճառով չամփչի արժէքը անհամեմատ աւելի բարձր էր:

Քաղաքի արևելիան կողմը Յ մղոն հեռի, տարածւում է բաւական ընդարձակ մի դաշտագետին՝ Խիջա-Եազը անունով, որ ձգւում է մինչև Ջիհանի եղերքը և պատկանում է Բօչ-Բայիրի և Վերի-Թաղի մի քանի ազաներին: Ցորենի մշակութեան համար այս փոքրիկ դաշտը միայն ունի Զէյթունը: Դաշտի մէջ-տեղը բղխում են ծծմբային երկու տաք աղբիւրներ, ուր հեռաւոր վայրերից հիւանդներ են այցելում բժշկութեան համար: Եազը-ի հարաւային մասը՝ Ալաբամի սահմանների մօտ՝ անուանում է Շեներլիք, որի մասին զէյթունցիները աւանդաբար պատմում են, իր Զէյթունի կազմութիւնից շատ առաջ այդտեղ հաստատուած էր մի մեծ քաղաք, որ օտար թշնամիներից այրուել և աւերակ է դարձել: Ներկայումս կատարուած պեղումներից երեսն են դալիս պարիսպներ, տաշուած ու յղկուած քարէ մեծ սիւներ, զանազան ձեերով քանդակուած քարեր և այլն: Յայտնի չեղաւ ինձ, թէ ինչ ժամանակի կամ ազգի էին պատկանում: Հաւանական է, որ XII-րդ դարում յիշատակուած Անէն \*) հաստատուած լինի այստեղ և կամ Ֆէնք գիւղի մօտերը:

Երջապատող անտեսական հանգամանկների չնորհով մինչև վերջին տարիներս զէյթունցին ապրում էր նահապետական այնպիսի դրութեամբ, ինչպէս դարեր առաջ, տակաւին դրամի գործունէութիւնը չընդհանրացած՝ ապրում էին հին ժողովուրդները: Մինչև մօտաւորապէս քսան տարի առաջ Զէյթունում աննշան կերպով դոյցութիւն ունէին դրամն ու նրա շըջաբերութիւնը: Երկաթն ու չամփչը կազմում էին երկրի գլխաւոր արդիւնաբերութիւնը: Իսկ վերջին տարիներս երկաթի հանքերը անդորժածելի լինելով, արտադրելի էին միայն խաղողն ու չամփչը, որոնք, ինչպէս վերև բացատրուած է, փոխանակելով հարեան գիւղերի միւս արդիւնաբերութեան հետ, զէյթունցիները հայթայթում էին իրանց կեանքի պէտքերը:

Հ.

\*)—Տե՛ս «Սիսուանի» 64 և 196 երեսները:

## ԳԻՒՂԱՑԻ ԳՐՈՂՆԵՐ

Դեռ մի յիսուն տարի սրանից առաջ ֆիների թէ տնտեսական դրութիւնը, թէ կրթական գործը և թէ առաւել ևս զրականութիւնը սաղմի մէջ էին գտնուում: Մինչև անցեալ դարի կէսը նրանք համարեա ոչ մի զրականութիւն չունէին, ոչ էին և ոչ նոր, եթէ չը հաշուել Սուրբ Դրբի թարգմանութիւնը և մի քանի ազօթագրքեր: Միմիայն վերջին 40—50 տարուայ ընթացքում ֆինական զրականութիւնը զարգացել է և հասել այժմեան ծաղկած և հստաքրքիր դրութեան:

Մենք այս անդամ կը խօսենք միայն մի երեսյթի մասին, որ յատուկ է բացառապէս Ֆինլանդիային. այդ՝ գիւղացի-գրողների գործունէութիւնն է:

Ինչքան մեղ յայտնի է, չը կայ մի քաղաքակրթուած երկիր, ուր մի խումբ ոչ-ինտելիգենտ և հաղիւ-հազ կարդալ-դրել իմացող մարդիկ, կարողանային կաղմակերպել զրականական մի նոր շկոլա, ընդունակ լինէին ժողովրդի ուշադրութիւնը զրաւել իրանց վրայ և իրանց զրուածքներով ազդէին երկրի օրէնսդրութեան վրայ:

Այդ զրական շկոլայի հիմնադիրն է Պիետարի Պիլիերինսա — մի հասարակ կիսազրագէտ զիւղացի: Նա ծնուել է 1827 թուականին և իր կենաքի մեծ մասը անց է կացրել զիւղական շրջանում: Կարդալը սովորել է իր ծնողներից, իսկ գրելը — հասակակից ընկերներից: Տաճներկու տարեկան հասակում նա արդէն աշխատում էր իրեն հասարակ բանուոր և ապրում էր իր ձեռքերի վաստակով: Իր օրում նա ուրախութիւն տեսած չէ: Բայց, ինչպէս ինքն է վկայում — յաճախ ևնթարկուել է քաղցի, զարդից ստիպուած երբեմնակի իրան հարբեցողութեան է տուել: Գրգուած բոպէներում ծեծել է իր կնոջը և երեխաներին և առհասարակ նեղ վիճակ է ունեցել:

Մի անգամ Պէյվէրինատան ոտը կոտրում է և ստիպուած է լինում անկողնում երկար մնալ: Զանձրութիւնը թեթևացնելու համար մտածում է թղթի վրայ անցկացնել իր կենսազրութիւնը: Բնական խելքի և զիսողութեան տէր մարդ, նա լաւ էր հասկանում, որ իր մասին պատմելով, պատկերացնելով իր աղ-

քատիկ վիճակը, այդպիսով նա կը նկարագրէ ամբողջ ֆին ազգի կարիքները, և որ օդտաւէտ կը լինի այդ պատմուածքները տալ կարդալու «երկիր կառավարող պարոններին»։ Միայն այս էր նրա գիտաւորութիւնը, այլ նպատակ չունէր, իսկ ամենից սակաւ՝ գեղարուեստական ձգումները եւ ահա նրա գրչի տակից դուրս եկաւ 1870 թուականին «Elämäni» (իմ կեանքը) դրբոյ-կը, որ, չը նայած գեղարուեստական յատկութիւնների բացակայութեան, մեծ ազդեցութիւն է թողնում ընթերցողների վրայ։ Մանրամասնօրէն նկարագրելով ֆին գիւղացու չարքաշ կեանքը, սրա կարիքներն ու գարդերը, Պէյվէրինտան մի այնպիսի անողոք մերկացնող է, որ ոչ ոք նրանից առաջ չէր կարողացել իրականութիւնն այնպէս ճշարօրէն պատկերացնել։ Ի նկատի առնելով, որ այդ ժամանակամիջոցում Ֆինլանդիայի ամբողջ կաղմը ենթարկում էր բարեկիուսութեան, ուստի ժողովրդի կեանքի այդպիսի մի լուսանկարչական—ճշգրիտ նկարագրութիւնն ի դեպ էր և գնահատելի, առաւել ես, որ այդ խօսքերը դուրս էին գալիս գիւղացու բերանից։ Վերջապէս այդ զիրքը մի լաւ գործիք էր նոր կազմակերպուող ֆինանէր կառավարութիւնները և ծառայութիւն էր մատուցանում հրապարակախօսութեան և ընթերցամիրութիւն էր տարածում հասարակ ժողովրդի խաւերում։

Պէյվէրինտայի դիրքն ահագին յաջողութիւն ունեցաւ և բազմաթիւ հետևողներ առաջացրեց։ Երեան եկան Պէյվէրինտայի նման հազիւ զրադէտ-գրողներ, որոնք երբէք յաւակնութիւն չունեն գեղարուեստական երկեր գրելու, բայց ուրախութիւնները հաղորդում են ընթերցողներին իրանց նկատողութիւնները և դիտողութիւնները աղքատիկ և խեղճ կեանքից, որի մասին նթէ զրում են գեղարուեստական զրականութեան մէջ, այդ էլ լինում է խիստ ծաղկեցրած և խդէալականացրած։ Պէյվէրինտայի հետևողները մոլեուանդ կողմնակից են ճշմարտութեամ և միայն ճշմարտութեան, գրօշի տեղ չը գնելով գեղարուեստական ձևերը և հնարուածքը։ Ասենք՝ նրանք սկի ընդունակ էլ չեն դրան։

Եւ ահա ծնունդ առաւ մի շկօլա ֆին ժողովրդական գրողների, ձիշար՝ ժողովրդական հրապարակախօսների, որոնք, սակայն, իրանց գրուածներին տալիս են պատմուածքի ձև։

Ինքն ըստ ինքեան Պիետարի Պէյվէրինտայի հեղինակութիւնները չունեն գրական արժանաւորութիւններ, չը նայած դրան, անկարելի է ուրանալ, որ նա, ինչպէս և միւս գիւղացիւ զրուները,—որոնք կարողացել են կազմել մի առանձին և ինքնուրոյն շկօլա և որոնց գրուածներն այնքան հետաքրքրական են, որ թարգմանուած են եւրոպական շատ լեզուներով, իսկ իրանց

երկրում ազգեցութիւն ունեն ամբողջ ժողովրդի և օքէնսդրութեան վրայ, —օժտուած չը լինեն մեծ ընդունակութիւններով:

Ժողովրդական գրողի անուն վաստակելուց յետոյ Պէյվերինտան սկսում է ջանասիրութեամբ աշխատակցել Գինական լրագրներում, և այդ ժամանակից սկսած նրա ընտանիքի տընտեսական դրութիւնը լաւանում է: Գիւղացիները սկսում են այնքան նրան սիրել և յարգել, որ ընտրում են պատգամաւոր Սէյմում (Գինալանդական ազգային ժողովում):

Պէյվերինտան դեռ կենդանի է. առաջուայ պէս պարապում է զիւղատնտեսութեամբ և պարձենում է իր զիւղական ծագումով: Այժմ նա այլևս չէ գրում, բայց դարձեալ հետաքըրպքրուում է ֆին զիւղացիների վերաբերեալ գործերով և առանձնապէս հետեւում է ժողովրդական գրողների գործունէութեան: Նրա կարծիքն է, որ միայն ժողովրդի կրթութիւնն է, որ արմատախիլ կ'անէ ամեն մի չարիք և այն էլ տարրական կրթութիւնը համայն հասարակութեան համար և մասնագիտականը անհրաժեշտ գործիչների համար. իսկ բարձր կրթութիւնը նա ատում է, իբրև մի աւելորդ չույզութիւն:

Պէյվերինտան, ինչպէս և նրա հետեւողները, յամառութեամբ արհամարհում են ոչի գեղեցկութիւնը և նրբութիւնը, ընդունում են միայն այն, ինչ որ օդտակար է ժողովրդին, և իրանց գեմօկրատիզմով ծայրայնութեան են համառում: Գիւղացի-գրողների գրուածները բուրում են ճշմարտութեամբ և ոչի սնկեղծութեամբ, որ յատուկ է բոլոր ֆին գրողներին. ինչ որ իրականութիւնից գուրս է, նոյն իսկ գեղարուեստական համառուածքը, նրանք կեղծութիւն են համարում: Չը պէտք է մոռանալ, որ ֆիները այդ ժամանակ գտնուում էին վերածնութեան շրջանում, ուստի նրանց շարժումն անխուսափելի կերպով պէտք էր գեմօկրատական և գործնական դոյն ստանար: Ասպարիզի վրայ դրուած էին այնքան էական խնդիրներ, որ բուն գեղարուեստի համար մարդիկ ոչ ժամանակ ունեին և ոչ ցանկութիւն: Այս է պատճառը որ նոյն իսկ գեղարուեստական գրողները գոյութիւն ունին ոչ իրանց գեղարուեստական ձիքերի շընորհիւ, այլ իրանց կրթական և տենդենցիօղ գործունէութեամբ, իսկ ժողովրդականութեան աեսակէտից զիջանում են գիւղացի-գրողներին: Ոչ միայն գրողները, այլ և գիտնականները Ֆինլանդիայում դրաւուած են ժողովրդասիրական շարժումով, որի հետեւանքն այն է, որ ոչ չէ աշխատում իր անձնական փառքի համար, այլ ուշագրութիւն են դարձնում ժողովրդի բազմակողմանի կրթութեան վրայ, մինչև անգամ աւելի մեծ ծաւալով: Քան եւրոպայի ամենազարդարակիրթ երկրներում:

Բացի վերոյիշեալ գրքոյկից Պէյվէրինտան գրել է բազմաթիւ պատմուածքներ և յօդուածներ և մի հաւաքածու «Կեանքի ղիտողութիւններ» մակագրով:

Պէյվէրինտայի հետևողներից ամենամշանաւորն է Ալկիօ, որ թէպէտ բնութիւնից օժտուած է գնդարուեստական ձիրքերով, բայց աշխատում է չը հետանալ գիւղացի-գրողների ծրագրից, այսինքն նկարազել իրականութիւնը լուսանկարչական ճշգրտութեամբ միմիայն հրապարախօսական նպատակների համար: Նա դեռ երիտասարդ է, ծնուել է Վաղա քաղաքի ըրջակացրում, ուր և պարապում է մանրավաճառութեամբ: Բայց Ալկիօն մի որ և է վաշխառու-չարչի չը, ընդհակառակը, նա հաւատարիմ պաշտպան է տեղական չքաւորներին ամեն տեսակ ճնշումների դէմ և հոգեհան հրեցտակ վաշխառուների, որոնց վնասակար գործունէութիւնն անխնայ մերկացնում է Փինական մամուլի մէջ: Նա մեծ ժողովրդականութիւն է վայելում և աղդեցութիւն ունի գիւղացիների վրայ:

Պատանեկութեան հասակում Ալկիօն չէ ստացել դպրոցական կրթութիւն, բայց յետոյ Փինական յատուկ եռանդով ձեռք է բերել ընդհանուր զարգացողութիւն և այժմ Պէյվէրինտայի հետևողների մէջ ամենից կրթուածն է: Նա գործունեայ անդամ է Ֆինանդիայում ամենուրեկ տարածուած ժուժկալական ընկերութեան, բացի այդ նա հիմնել է մի քանի գիւղական ինքնազարդացողութեան ընկերութիւններ, յաճախ ինքն էլ է դասախոսում, մի և նոյն ժամանակ խմբագրում է մի փոքրիկ թերթերիտասարդութեան և ինքնազարդացողութեան համար:

Ալկիօյի գրուածներից նշանաւորներն են «Դանակի հերոսներ» վիպասանութիւնը և «Հայրը Ամերիկայում» ու «Կողովի պատճառով» պատմուածքները:

Գիւղացի-գրողները բազմաթիւ են, որոնք գլխաւորապէս պարապում են լրագրական գործով, բայց աչքի են ընկնում միայն, բայց Ալկիօյից, Ռէյսնէն \*), Հէյկի, Տէյվո, Պակալա և Տուօմի, առաւել ես այս վերջննը, որ թէպէտ քիչ է գրել բայց ապագայում յոյս է խոստանում, եթէ միայն լրագրական մանր աշխատանքը արգելք չը դառնայ նրա ընդունակութիւնների զարգանալուն:

Այսուեղ բերում ենք Պէյվէրինտայի գրած «Կեանքի ղիտողութիւններ» հեղինակութիւնից մի հատուած թարգմանութեամբ տ. Մ.-Բ.-Օ-ի:

Ք. 0.

\*.) Խւհօ Ռէյսնէնի «Սովոր տարին» պատմուածքի թարգմ. լուս է տեսել «Մշակ» 1900 թ. №№ 172 և 173.

## ՈՒՍՈՒՄ ԱՌԱԾ ՄԱՐԴԸ

(Պիետարի Պէյլերինայի)

Երբ ապրում էի նահանգական քաղաքի մօտերքը, ես շուտով սկսեցի զբաղուել դատաստանական զանազան գործերով, որովհետև մեր գիւղից ինձ ուղարկում էին թղթեր, ինպելով իրանց դատը վարել նահանգական վարչութեան մէջ։ Արդ՝ մեր գիւղացիների համար դարձեալ սկսեցի հաւատարմատարի դեր կատարել։

Ամառ էր։ Մի օր գնացի քաղաք մի այդպիսի յանձնարարութիւնով։ Երբ ես մտայ վարչութեան նախասենեակը, շատ զարմացայ տեսնելով Լապրիլային։

—Այդ դժուք էք, թէ աչքերս ինձ խաբում են, հարցրեցի ես զարմանք արտայայտելով։

—Ես եմ, որ կամ, պատասխանեց Լապրիլան և բարեկց։

—Հ՞ք, ինչպէս էք։

—Այս, միշտ մի և նոյնը. բախտի անիւր ինձանից հեռու է պտտում—գիտեք։

—Դեռ յարմար պաշտօն չէք ձարել։

—Չէ, մինչև այժմ դեռ չեմ գտել. դիտչք, բոլոր մարդիկ ինձ դէմ են։

—Այդ շատ ցաւալի է։

—Այն, ի հարկէ, ինձ չեմ ճանաչում, ինչպէս և իմ ընդունակութիւնները։ Ես անբախտ ժամանակից առաջ եմ ծնուել։

—Երբ էք քաղաք եկել, —հարցրի ես այդ հին և ձանձրալի զանգաներին վերջ գնելու նպատակով։

—Երէկ, իմ ամբողջ ընտանիքի հետ։

—Չեր ամբողջ ընտանիքի հետ։

—Այն։

—Ես չեմ հասկանում։

—Ես տեսնում եմ, որ դուք էլ ինձ չէք հասկանում և իմ ընդունակութիւնները չէք ճանաչում, թէ ամեն բան արեի պէս պարզ է։ Այն խուլ անկիւնում, ուր ես էի ապրում, իմ ժամա-

նակն իգուր էր կորչում, որովհետև այնտեղ ուսում առած մարդի համար գործ չը կար, ուստի մենք տեղափոխուել ենք քաղաք, յուսալով, որ բախտի անիւր... զիտէք:

—Ո՞րտեղ էք բնակարան վարձել:

—Քաղաքի ծայրում մի փոքրիկ տնակ եմ նարել:

—Եւ ի՞նչ էք մտադիր անելու հիմա:

—Գնալ նահանգապետի մօտ և մի տեղ խնդրել:

Ուզում էի ասել, որ իգուր է նահանգապետին զիմնելը, բայց չասացի, լաւ իմանալով, որ նա իմ խօսքերը չէր ընդունի իբրև ընկերական խորհուրդ, այլ կը կարծէր, թէ ուզում եմ դրանով վեսաել նրան: Լուռ կարևոցութեամբ նայում էի Լաւարիլայի հագուստին: Նրա կանաչագոյն գլխարկը խոնացած էր և մաշուած ժապաւէնը մի քանի տեղից կարկտած: Նոյնպէս շորերը, որոնք թէն մահուզից էին կարած, բայց կորցրել էին իրանց սկզբնական գոյնը և ձեր. անթիւ կարկատաներ կտած էին այստեղ և այնտեղ և այդ նրա համար, որ լաւարիլան չէր ուզում ձեռք վերցնել «արտօնեալ դասակարգի» շորերի տարագից: Նոյն ձեր շորեր գնելու համար միջոց չը կար, իսկ «հասարակ» շորեր նա չէր ուզում հագնել, ուստի ստիպուած էր կարկատաների զիմնել:

Վերջապէս նահանգապետը ներս մտաւ և անցաւ իր սենետակը. մենք հետեւցինք նրան: Լաւարիլան մնաց կանգնած զըռուան մօտ, ևս առաջ գնացի և ներկայացրի խնդիրքս:

Մառայողներից մէկը մօտեցաւ լաւարիլային և հարցրեց նրա այցելութեան նպատակը:

—Գիտէք, ևս ցանկանում եմ սլ. նահանգապետի հետ խօսել:

—Ինչի՞ն է վերաբերում ձեր խնդիրքը, —հարցրեց նահանգապետը, նրան մօտենալով:

—Գիտէք, մի պաշտօն:

—Ի՞նչ տեսակի պաշտօն:

—Առաջին պատահածը:

—Ես ձեղ չեմ հասկանում:

—Ես ուսում ստացած մարդ եմ:

—Այս: Ի՞նչ ուսումնարան էք դուք աւարտել:

—Գիւղատնտեսականը:

—Այդ շատ ուրախալի է: Բայց իսկապէս դուք ի՞նչ էք ուզում:

—Ես ցանկանում եմ մի որ և է պաշտօն, թէկուզ կահետքուար, 1901.

մուրջի վրայ տուրք հաւաքողի, կամ ձեր գրասենեակումը  
մի տեղ:

—Բայց դուք խիստ սխալում էք. գիւղատնտեսական  
դպրոցում պաշտօնեաներ չեն պատրաստում:

—Բայց միթէ դպրոցների նպատակը չէ պաշտօնեաներ  
պատրաստել:

—Երևում է, որ դուք պաշտօնեաների դործունէութեան  
մասին ոչ մի գաղափար չունէք... Այլևս ուրիշ բան չունէք ա-  
սելու:

—Այս անգամ՝ ոչ, դիտեք, բայց...

—Ուրեմն կարող էք գնալ, ասաց նահանգապետը խիստ  
ձայնով և յետ գնաց իր սենեակը: Այդ միջոցին գործ վերջացրել  
էք և ուզում էի տուն վերադառնալ: Լաարիլան ինձ ուղեկցեց:  
Ճանապարհին նա դարձեալ սկսեց դանգատուել «բախտի անի-  
ւիցը» և հաստատ համոզուած էր, որ մէկ չկամ մարդ նրան  
սեացրել է նահանգապետի աչքում: Բաժանուելիս նա խընդ-  
րեց ինձանից իր ընտանիքն այցելել: Ես խօսք տուի, որ պա-  
տեհ ժամանակին կնոջս հետ անպատճառ կը գնամ:

Մի շաբաթից յետոյ Լաարիլան մտաւ մօտս: Նա բերել էր  
մի կացին ու մի սղոց և առաջարկում էր ինձ գնել, ասելով թէ  
այդ իրերն այլևս իրան պէտք չեն: Ի հարկէ ևս գնեցի այդ ի-  
րերը, թէ նա մեծ գին էր նշանակել և ես բաւականաչափ ու-  
նէի այդ դործիքներից: Հեռանալիս նա դարձեալ ինձանից խօսք  
վերցրաւ, որ ես նրան անպատճառ այցելեմ:

Մի օր, օգոստոսի կիսին, մենք զնացինք Լաարիլայինց  
տուն: Նրանք մի քանի երեխաներ ունէին, որոնցից մեծերը  
տառ տարեկան հասակից աւել չէին: Ի նկատի առնելով նրանց  
չքաւորութիւնը, մենք ամեն տեսակ ուտելիք էինք վերցրել իր-  
րեն ընծայ:

Երբ ներս մտանք տուն, նրանց չքաւորութիւնը մեղ ապ-  
չեցրեց անսպասելի կերպով: Բնակարանն աւելի աղքատիկ էր,  
քան թէ կարելի էր երեխայել: Փատած պատերը թեքուել էին  
և յատակի ծուռ ու մուռ տափակները շարժուն էին, այնպէս  
որ մարդ պիտի զդոյշ քայլէր: Որ ոտը չը կոտրէր:

Պատերի տակ շարած էին մի առանց սաւանի անկողին,  
մի փոքրիկ սեղան և մի քանի կոտրտած աթոռներ, որոնք կազ-  
մում էին նրանց ամբողջ կահ-կարասիքը: Այլևս ուրիշ բան չը  
կար, եթէ չը հաշուել մի քանի կիսամերկ երեխաներ: Լաարի-  
լան և իր կինը շատ ուրախացան մեղ տեսնելով:

—Դէ մի նայեցէք է, ինչ թանկաղին հիւրեր են եկել  
մեղ մօտ: Ճիշտ այդ մի ամբողջ բախտաւորութիւն է,—բացա-

կանչեցին նրանք, մեր դիմացը գալով,—մենք մեր առօրեայ շորերն ենք հագած, մենք հիւրեր չենք սպասում: Ե՞կ, Լապրիլա, զնանք հագնուենք, դիմեց կին իր ամուսնուն և երկուան էլ դուրս գնացին, թէս մենք շատ դիմադրեցինք այդ բանին: Մի քանի րոպէից յետոյ նրանք ներս մտան իրանց կիրակնօրեայ շորերով: Կինը հագել էր իր մշտական օրէան կտորից կարած սե զգեստը, որի ձեն անթիւ անդամ փոխած էր և շորի վրայ տեղատեղ կարկատաններ էին երեսում. այնուամենայնիւ շէյֆը փառաւոր կերպով քարշ էր գալիս յետեից: Իսկ Լապրիլայի հագուստի մասին արդէն պատմել եմ: Նրանք մի անգամ էլ բարի գալուստ արին մեղ: Յետոյ տանտիկինը սուրճ եփեց և հիւրասիրեց մեղ և իր ամուսնուն, մինոյն ժամանակ հազար ներողաթիւն ինդրելով սուրճի վատ որակութեան մասին, ասելով թէ իրանց ջուրն այնքան վատ է, որ անկարելի է լաւ սուրճ եփել: Զրի վատութիւնը իրքն թէ նրանումն էր, որ սուրճի հետ եփած ժամանակն էլ սուրճը անօսր է դառնում և չեղած հոտից ու համից զրկուում:

Այդ միջոցին կինս իր բերած ուտելեղէնները տուեց երեխաներին, որոնք աղահութեամբ թափուեցան այդ ընծաների վրայ: Հենց որ մայրը այդ նկատեց, իսկոյն իւնց երեխաների ձեռքից ամեն ինչ, չընայելով նրանց դիմադրութեանը: Կինս մի կճուծ իւղ էր բերել, մի քանի մեծ կտոր պանիր, բաւականչափ միս և հաց, այդ բոլորը տանտիկինը տանելով դուրս, յետ եկաւ ասելով.

—Անախորժ է տեսնել, թէ ինչպէս երեխաները հացը ձեռքին ման են գալիս. բացի այդ նրանք սովոր չեն այդ տեսակ ուտելեղէնների... Յետոյ նա սկսեց հիւրերի համար ճաշ պատրաստել: Մի կէս ժամից յետոյ տանտիկինը բերաւ չորս ափսէ, որոնցից երկուուր կոծկած էին, մի քանի ծուռ ու մուռ պատառազբաներ ու գանսակներ, դրեց սեղանի վրայ և մեղ հրաւիրեց նստել ճաշի:

—Մենք իւղ չենք սիրում, թէ շատ ունենք, առանց իւղի պատրաստած ձուկը շատ համով է լինում, մենք միշտ այս տեսակ ենք ուտում,—ասաց սիրավիր կերպով տանտիկինը և առաջարկեց մեղ մի աման եփած հասարակ ձուկ քացախի և սոխի հետ:

—Միս էլ չենք սիրում,—վրայ բերեց Լապրիլան, բերանը լցնելով ձկով ու հացով:

—Այն, ոչ էլ միս, այդ պատճառով միս չեմ եփել ճաշի համար: Այսպէս պատրաստած ձուկն անհամեմատ լաւ է, քան թէ իւղով տապակածը. իսկ մեր հիւրերն իրանց տանն, ի հար-

կէ, սովորական կերակուրներ ևն վայնլում,—ասաց տանտիկինը դարձեալ:

Երբ այդ «հրաշալի» ձկներից բաւականաչափ կերել էինք, տանտիկինը դուրս եկաւ և բերեց մի հողէ աման, լիքը եփած և մանրացրած գետնախնձորով և կորտած ձկան և քացախի հետ խառը: Հանդիսաւոր կերպով դրեց ամանը սեղանի վրայ և յնտոյ ինքը նստեց:

—Այս սալաթ է, ինդրեմ վերցրէք. շատ վերցրէք, մի քաշուէք, երեսկայեցէք որ ձեր տանն էք: Սա շատ լաւ սալաթ է, մենք շատ նոք սիրում. ոչ մի կերակրի հետ չէ կարելի նրան համեմատել և կապրիլան գերազասում է նրան ուրիշ ուտելեղններից, ասաց տանտիկինը:

—Ճիշտ է, ոչ մի կերակուր այնքան համով չէ, ինչքան այս սալաթը, այնպէս որ մին ու իւղը աչքում չեն երևում,—ինդրեմ անուշ արէք:

Սալաթը կերանք վերջացրինք. կապրիլան խրոխտ հարցրեց՝ «Ել բան ունեմ»:

—Զէ, ուրիշ ոչինչ չը կայ և ել Բնչ պէտք է լինէր: Այսպիսի մտերիմ հիւրերիս համար ես միայն պաղ կերակուր պատրաստեցի. տաք ճաշը հօ ամեն օր ենք ունենում: Մենք ոչ գարեջուր ենք սիրում և ոչ կաթը: Այստեղի ջուրն այնքան լաւ է, —թէև սուրճի համար լաւ չէ, բայց իրեն խմելաջուր շատ լաւ է. ինդրեմ խմէք, շատ առողջարարն է, սալաթից յետ ծարաւած կը լինէք: Ես ճոխ ճաշ պատրաստեցի, որովհետև ժամանակ չունէի քաղաք գնալու և մթերք գնելու, մենք սկի այսօր հիւրեր չէինք սպասում: Ճիշտ է, տանը պատրաստի բուլիօն ունեմ, բայց սազ չէր գալ պաղ կերակրի հետ բուլիօն տալ:

Երբ մենք ճաշում էինք, երեխանները կանգնել էին մեր շուրջը և ազահութեամբ նայում էին մեղ, կարծես, համարում էին մեր բալոր թիքանները: Երբ ճաշելու հերթը նրանց հասաւ, մի վայրկեանում թէ ճուկը և թէ գետնախնձորի սալաթը անհետացան անտակ հորի մէջ: Այսուհետև տանտերերը նստեցին մեղ մօտ և զրոյցը սկսուեց:

—Ի՞նչպէս է ձեր ժամանակը անցկացել այն օրուանից, երբ մենք վերջին անգամ տեսնուեցանք:

—Նատ չնորհակալ եմ, շատ լաւ, —պատասխանեց կինս:

—Այն, դուք երբէք նիւթական պակասութիւն չէք ունեցել, բայց մեր հանդամանքներն այլ են:

—Ի՞նչպէս:

—Կապրիլան պաշտօն չէ ճարում:

—Ճիշտ որ այդ շատ վաս է:

— Այն, դուք տեսնում էք, թէ ինչ մեծ անբախտութիւն է:  
Տեսէք, մարդ զնայ ուսանի, գիտութիւն ձեռք բերի և յետոյ  
տանը պարապ մնայ, ամենքից մոռացուած և չը գնահատուած.  
Հ՞ որ տիսրալի իրականութիւն է այդ:

— Այն, շատ ցաւալի է:

— Թէև մեզ ոչնչով չենք զրկում, բայց և այնպէս  
դժուար է ապրել, երբ Լաարիլան պաշտօնի մէջ չէ և մենք ըս-  
տիպուած ենք ապրել միմիայն նրանով, ինչ որ Լաարիլան  
վաստակում է զրագրութեամբ:

— Այն, այդ եկամուար մեծ չէ կարող լինել:

— Զէ, շատ չէ, բայց դրա պատճառն այն է որ մարդիկ  
չեն իմանում, թէ ինչ մեծ ընդունակութիւնների և գիտութեան  
տեր մարդ է Լաարիլան: Նա ամեն բան դիտէ, և ոչ ոք չէ  
ցանկանում նրան հասկանալ և գնահատել:

«Բախտի անիւը դէպի ինձ չէ պատում»—ասաց Լաարի-  
լան հառաչելով:

— Թէև մեզ ոչինչից չենք զրկում, բայց և այնպէս  
մեր կեանքը կարող էր ուրիշ տեսակ լինել, օրինակ, ինչ վե-  
րաբերում է հաղուստեղէնին ու բնակարանին: Ուտելեղէնի կող-  
մից մենք ապահով ենք, բայց այժմ Լաարիլան չէ կարողանում  
մեր դիրքի համապատասխան ապրուստ տալ մեղ,—շարունա-  
կեց կինը:

— Ես մի բան մտածեցի, ասաց կինս:

— Ի՞նչ, ինչ կայ,—ուրախութեամբ և հետաքրքրութեամբ  
հարցրեց տանտիկինը:

— Այժմ միրգ ժողովելու ժամանակ է:

— Հա, յետոյ ինչ:

— Ես կարծում եմ, որ երեխաններն էլ կարող էին մի բան  
վաստակել, անտառում պտուղներ ժողովելով և քաղաքում ծա-  
խելով, այժմ վայրի պտուղնը լաւ դին ունեն:

— Ի՞նչպէս, դուք լուրջ էք այդ ասում: Ես ձեղանից այդ-  
պիսի բան չեի սպասում: Ի՞նչի նման կը լինէր, եթէ մեզ նման  
մարդիկ իրանց երեխաններին քաղաք ուղարկէին միրգ վաճա-  
ռելու: Անկարելի է այդ աստիճան ցածրանալ,—ասաց տանտի-  
կինը դաւնութեամբ:

— Ինչ վերաբերում է մեղ, մենք ամօթ չենք համարիլ  
մրդալաճառութեամբ պարապելու: Ես շատ անգամ իմ երեխա-  
ների հետ միրգ եմ ժողովել և տարել քաղաք ծախել, չը նայած  
որ մենք քաղաքից աւելի հեռու ենք ապրում, քան թէ դուք,  
և այդպիսով կարողացել եմ մի պատկառելի գումար յետ ձգել,  
բայցարեց կինս իրան արդարացնելու նպատակով:

—Այն, այդ բոլորովին այլ հարց է։ Զեղ այդ սազական է, բայց ոչ մեղ, որովհետև գուք միջնակարդ դպրոցի ուսում չէք առել, —ասաց տանտիկինը վիրաւորուած։

Ժամանակն էր տուն գնալու, ուստի հրաժեշտ առանք։ Լապրիլան և իր կինը խնդրում էին մեղ նորից գալ հիւր իրանց մօտ և հաւատացնում էին, թէ մեր բարեկամական կապերը անխղելի կը մնան։ Իրանք էլ խօսք տուին յաճախակի մեղ այցելել։

Մենք ձանապարհ ընկանք դէպի տուն։

Շվեդերէնից թարգմ. ա. Մ.-Բ.-Յ.

## ՔԱՄԻՆ Է ՇԱԶՈՒՄ

Քամին է շաշում, խեղճի հետ լացում,  
Խօլական բամին փողոցի միջին.  
Հարուսի դուռը բամին է ծեծում,  
Տարապահ ժամին արցունիքը աչին:

Քամին է խօսում, ցաւից է խօսում,  
Աշխարհի ցաւը—ձըմրան բույր.  
Թշուառի բախտը ցշում է դրսում,  
Քամու հառաջը—տընանկի սուգը:

Քամին է շաշում, անյոյս շառաշում,  
Օդի մէջ պտրտում հոգու մրմունցներ.  
Երկրի ամեն կողմ կոծելու փախչում,  
Ամեն տեղ լցնում խուլ հեծեծանիներ:

ՄԻՔ. ԻՍՐԱՅԻԼԵԱՆ

# ՖՐՈՄՈՆ ԿՐՏՍԵՐ

ԵԿ

## ՌԻՍԼԵՐ ԱՒԱԳ

III

Փոքրիկ Շեքի պատմութիւնը.—Կեղծ մարզարիսներ:

Ընդհանուր խաղերի և մտերմութեան երկու-երեք տարիներից յետոյ, որոնց ընթացքում Սիդօնին իւրացրեց հարուստ երեխաների շոայլասիրութիւնը և չնորհայի ձևերը, բարեկամութիւնը յանկարծակի ընդհատուեց:

Ժօրժ Ֆրօմոնը, որի խնամական էր հօրեղբայրը, վաղուց արդէն լիցէյ էր մտել: Կէրն էլ այնուհետև զնաց գաստիարակուելու կուսանոցներից մէկում, տանելով հետև փոքրիկ թագուհու բաժինքի չափ մի կապոց, և ուղիղ այդ ժամանակ Շեքերի տանը հարց ծագեց աշակերտութեան ուղարկել Սիդօնիին մի որ և է արհեստանոց: Ընկերուհիները խոստացան միշտ սիրել իրար և աւենուել ամիսը երկու անգամ, այն կիրակիները, երբ արձակուրդ են տալիս կուսանոցի աշակերտուհիներին:

Եւ իրաւ, փոքրիկ Շեքը մի քանի անգամ էլ վայր իջաւ խաղալու իր բարեկամների հետ, բայց որքան մեծանում էր նա, այնքան աւելի լաւ էր հասկանում իրանց բաժանող տարածութիւնը և իր հագուստները սկսում էին թուալ նրան շատ հասարակ՝ տիկին Ֆրօմոնի դահլիճի համար:

Երբ նրանք միայն երեքայլ էին լինում, ոչ մէկը չէր քաշւում միւսից՝ չնորհիւ մանկական բարեկամութեան, որ հաւասար էր դարձնում նրանց, բայց գալիս էին հիւրեր, դասընկերուհիներ և, ի միջի այլոց, մի մեծ, միշտ շքեղ հագնուած աղջիկ, որին իր մօր աղախինը կիրակի օրերը բերում էր խաղալու փոքրիկ Ֆրօմոնների հետ:

Հէնց որ նա երևում էր սանդուխների վրայ զուգուած ու արհամարհու, Սիդօնին ցանկութիւն էր զգում իսկոյն տուն գը-

նալ։ Այդ աղջիկը նրան չվատ դրութեան մէջ էր դնում անշնորհք հարցումներով... թէ որտեղ էր նա ապրում՝ ի՞նչ գործի էին նրա ծնողները։ Կառք ունեին արգեօք...»

Լսելով նրանց խօսակցութիւնները կուսանոցի մասին, իրանց ընկերուհիների մասին, Սիդօնին զգում էր, որ նրանք առանձին աշխարհում են ապրում, հազար մղոն հեռու իր աշխարհից, և մահացու տիրութիւն էր պաշարում նրան, մահաւանդ երբ տուն վերադառնալուց յետոյ՝ մայրը ասում էր, թէ նա պէտք է աշակերտութեան մտնի մի լը Միր աղքանունով օրիորդի մօտ, որ Դըլօբէների ծանօթն էր և կեղծ մարդարիտների մեծ խանութ ունէր Ռուա-Դօրէ փողոցում։

Ռիսլէրը շատ պիմոդ էր կպել այն մտքին, որ փոքրիկը աշակերտութեան մտնի մի արհեստանոյ։ — «Թող նա մի արհեստ սովորի, ասում էր բարեսիրա Ռիսլէրը... ևս յանձն ևմ առնում վերջը մի խանութ գնել նրա համար»...

Հէնց այդ օրիորդ լը Միրն էլ ասում էր, թէ մի քանի տարուց յետոյ քաշուելու է գործից։ Յարմար դէպք էր այդ։

Մի առաւօտ, նոյեմբեր ամսի մի տիսուր առաւօտ, հայրը տարաւ Սիդօնիին Ռուա-Դօրէ փողոցը, ուր նրանք բարձրացան իրանց տանիցն էլ հին, իրանց տանիցն էլ խաւար մի տան չորրորդ յարկը։

Ներքեսում, սրահանցքի անկիւնում, կախ էին տուած բազմաթիւ ոսկետառ տախտակներ՝ Նեսեսերների զործարան, ոսկեպատ ըղբաներ, Երեխայական խաղալիքներ, ապակէ նետացոյց գործիքներ, փունջեր նորահարսերի եւ հարսնաքոյրերի համար, դաշտային ծալիկների արհեստանոց, և ամենավերնում մի փոքրիկ փոշոտած ցուցարան (վիտրին), որի մէջ մարդարտաշար դեղնած վզնոցներ և ապակէ ողկոյզներ ու բալեր շրջապատում էին Անժելինա լը Միր յաւակնոտ անունը։

Սարսափելի տուն։

Այգտեղ չը կար նոյն իսկ Շէքերի ընդարձակ սրահը, այդ՝ հնութիւնից մոայլ սրահը, որին սակայն զուարթ տեսք էին տալիս իր պատուհանը և գործարսնի գեղեցիկ տեսարանը... Նեղ սանդուխներ, նեղ դուռ, փոքրիկ, ցուրտ ու սալարտակ սենեակների մի շարք, և այդ սենեակներից վերջինում մի սպառաւ աղջիկ, ճակատի մաղերը խոպոպ դրած, ոև ցանցածե կիւսաձեւնոցները ձեռքերին, Journal pour tous հանդէսի մի իւղոտած տեսար կարդալիս և, ըստ երևոյթին, սաստիկ սրանեղուած, որ կարդալու ժամանակ խանդարեցին իրան։

Օրիորդ լը Միրը (կարծ ասած) ընդունեց պ. Շէքին ու աղջիան առանց տեղիցը վեր կենալու և երկար ու բարակ խօ-

սեց իր կորցրած դիրքի մասին, իր հօր մասին, որ Ռուէրգի մի հին աղնուական էր եղել,—էլ ասել չի լինի, թէ որքան հին աղնուականներ է արդէն արտազրել այդ Ռուէրգը,—և իրանց անհաւասարիմ կառավարչի մասին, որ թոյրել էր նրանց ամբողջ կարողութիւնը։ Նա խկոյն մեծ համակրութիւն ազգեց պ. Շէքին, որի համար անդիմադրելի հրապոյր ունէին դասագուրկները, և խեղճ մարդը հեռացաւ հիացած, խոստանալով Սիրոնիին գալ նրա յետեից երեկոյեան ժամի եօթին, ինչպէս պայմանաւորուել էին օրիորդի հետ։

Օրիորդ Լը Միրը աշակերտուհուն խկոյն տարաւ արհետանոցը, որ զեռ դատարկ էր, և նստեցրեց մի մեծ արկղի առաջ, որ լի էր մարդարիաններով, ասեղներով հերիւններով, ու նրանց հետ խառն չորս սոււմոց վիպական գրքոյիններով։

Միրօնին պէտք է ջոկջոկէր մարդարիանները ու, թելի վրայ անցկացնելով, հաւասար երկարութեան վզնոցներ պատրաստէր, որ յետոյ պէտք է իրար կապէին՝ մանրավաճառներին ծախսելու համար։ Ասենք, աղջկերը որտեղ որ է գալու էին, նրանք ցոյց կը տային ճիշտ կերպով, թէ ինչ է անելու նա, որովհետեւ օրիորդ Լը Միրը (կարծ ասած) ոչ մի բանի չէր խառնուեմ և հակում էր իր առևտրական գործին շատ հեռուից, իր մութ սենեակի խորքից, ուր նա անց էր կացնուեմ կեանքը Փէլիէտօն—վէպեր կարդալով։

Ժամի իննին բանուորուհիններն եկան, —հինգ մեծ, զունատու թառամած աղջիկներ, ողորմելի հագուստով, բայց մաղերը լաւ սարքած, Պարիզի փողոցներով գլխաբաց ման եկող աղջատ բանուորուհինների յաւակնութեամբ։

Երկու-երեքը յօրանջում էին ու աչքերը արորում, ասելով, որ ոտի վրայ չեն կարողանում կանգնել քունները տանելուց մով զիտէ, ինչպէս էին անցկացրել զրանք այդ գիշերը...

Վերջապէս նստեցին գործի՝ մի երկար սեղանի առաջ, ուր ամեն մէկը ունէր իր արկղը, իր գործիքները։ Մի քիչ առաջ սուզի զուգսեղէնի պատուէր էին ստացել, պէտք էր շտապել։ Ալիդոնին, որին զլխաւոր բանուորուհին անհուն գերազանցութեան արտայայտութեամբ ցոյց էր տուել անելիքը, սկսեց մերլամազօրէն ջոկջոկել ահապին քանակութեամբ սև ուլունքներ, սև մոռի հասիկներ, սեւաոր հասկեր։

Միւսները, առանց փոքրիկի վրայ ուշք դարձնելու, բանում էին ու զրոյց անում իրանց մէջ։ Խօսում էին մի փառաւոր պսակի մասին, որ տեղի էր ունենալու նոյն օրը Սէն-Ժէովէյում։

—Զը դնանք տեսմնելու, ասաց մէջներից մի հաստոիկը,

շիկակարմիր մաղերով և Մալդինա անունով... Կէսօրին է լինելու... Ժամանակ կ'ունենանք գնալու և չուտով վերադառնալու:

Եւ յիրաւի, նախաճաշի ժամին բոլորը միասին թռչկոտաւլով իջան ներքեւ սանդուխներից:

Սիդօնին, որ, գպրոցական աշակերտուհիների նման, նախաճաշը բերել էր հետը մի զամբիւղի մէջ, լցուած պրտով նախաճաշեց սեղանի մի անկիւնում, առաջին անգամը իր կեանքում հաց ուտելով մենամենակ... Տէր Աստուած, որքան ողորմելի ու տիսուր էր թռում նրան կեանքը և ինչ սարսափելի վրէժ էր հանելու նա յետոյ այդ տիսութիւնների համար...

Ժամի մէկին բանուորուհիները վերադարձան աղմկալից ու սաստիկ աշխուժացած:

«Տեսաք այն զգեստը սպիտակ գրօ-գրենից... Իսկ քծով անդիքական ժանեակից... Բախու եմ ասել էլ»:

Ու արհեստանոցում նրանք վերսկսեցին այն նկատողութիւնները, որ ցած ձայնով արել էին եկեղեցում, ամբողջ ծէսի ընթացքում կոները դէմ տուած վանդակին: Այդ փարթամ հարսանիքի ու սիրուն զուզսերի հարցը ամբողջ օրը տեսց, և այդ չէր խանգարում նրանց աշխատանքին, այլ ընդհակառակը նըպատում էր:

Այդ փարխզեան մանր արհեստները, որոնք հագուստեղին ամենամանր պարագաներն են պատրաստում, հմուտ են գարձնում բանուորուհիներին մօդայի հարցերում և նրանց ուշք ու միսքը շարունակ կենարոնացնում են չքեղութեան և գողտրիկութեան վրայ: Օրիորդ Լը Միրի՝ չորրորդ յարկի փոքրիկ բլնակարանում աշխատող այդ աղքատ աղջիկների համար գոյութիւն չունէին սևացած պատերը ու նեղ փողոցը: Նրանց միտքը շարունակ ուրիշ բանով էր զբաղուած, և նրանք անց էին կացնում իրանց կեանքը այսպիսի հարցեր տալով իրար.

—Ասա տեսնենք, Մալդինա, ինչ կ'անէիր, եթէ հարուստ լինէիր... «Ես կ'ապրէի Champs—Élysées-ում...» Եւ այնաեղի կլոր հրապարակի ահազին ծառերը և դանդաղ ու կօքէտարար պտոյտ տուող կառքերը անցնում էին նրանց երևակայութեան առաջիքը մի բուգէական տեսիլք, քաղցր ու սփոփիչ:

Իր անկիւնում նստած, փոքրիկ Շէքը ականչ էր դնում, առանց ձայն հանելու, և զգուշութեամբ շարելով ուլունքները, ու խաղողի ողկոյզներ էր պատրաստում, Դէզիրէի հարևանութեան չորհիւ ձեռք բերած վաղաժամ ճարտարութեամբ ու ճաշակով: Այնպէս որ երբ պէ. Շէքը երեկոյեան եկաւ նրա յետեից, շատ մեծ գովասանքներ լսեց նրա մասին:

Այնուհետեւ, Սիդօնիի բոլոր օրերը նման էին միմնանց:

Միւս օրը սեփ փոխանակ սպիտակ ուլունքներ էր շարում ու կեղծ բուստի կարմիր հատիկներ, որովհետև օրիորդ Լը Միրի մօտ կեղծ ու զիզի պիզի բաների վրայ էին միայն բանում, և հէնց այդտեղ էր վարժուելու փոքրիկ Շէքը կեանքի արհեստի մէջ:

Մի ժամանակ, նոր աշակերտուհին, որ միւսներից ջահէլ էր ու աւելի լաւ կրթուած, կղզիացած դիրք ունէր նրանց շըրշանում: Յետոյ, մնամալով, նա էլ մասնակից գարձաւ նրանց մտերմական շրջանին, նրանց գաղտնիքներին, առանց սակայն երբէք ընկերանալու նրանց՝ զուարծութիւնների մէջ: Նա չսո հպարտ էր, որպէսզի կէսօրին զնար նայելու հարսանիքներին, և միշտ սաստիկ արհամարհանքով էր լուում, երբ պատմում էին մի որ և է զիշերային պարահանդէսի մասին Watux—Hall-ում կամ Délices du Marais-ում, մի որ և է ընտիր ընթրիքի մասին Բօնլալէի մօտ կամ Quatre Sergents de la Rochelle-ում:

—Մեր աչքը աւելի բարձր բանի վրայ էր, այնպէս չէ, փոքրիկ Շէք:

Բացի այդ, հայրը ամեն երևոյ գալիս էր նրան տանելու: Սակայն, նոր տարուայ մօտերքը նա ստիպուած էր լինում մի՞քանի զիշեր լուսացնել միւս բանուորուհիների հետ, վազազ պատուէրներ վերջացնելու համար: Մարդուս խեղճը գալիս էր, տեսնելով թէ ինչպէս այդ գունաթափ պարիզուհիները գազի լոյսով ջոկչուելում էին իրանց պէս գաճային ու հիւանդոտ սպիտակութիւն ունեցով մարդարիմներ: Նոյն կեղծ փայլը, նոյն զիւրաբեկութիւնը, ինչ որ իրանց պատրաստած կեղծ զու զսեղէնի մէջ: Խօսաները միմիայն զիմակահանդէսներից էր ու թատրոններից:

—Տեսել ես Ադէլ Պամին Երեք Հրացանակիրներում... Իսկ Մէլնգին: Մարի Լուսնին... Ախ, Մարի Լուսն...

Դերասանների բաճկոններ ու մերօքրամանների թագուհիների զգեստներ էին տեսնում նրանք իրանց մասների արանքով գարձող զինոցների սպիտակ ցուքը մէջ:

Ամսար գործը այնքան շատ չէր լինում: Մեռած տարեմասն էր այդ նրանց արհեստի համար: Այդ ժամանակ, սաստիկ շոքերին, երբ ծածկած վանդակափեղերի յետեկց լսուում էին փողոցային սալորավաճառների աղաղակները, բանուորուհիները ծանր քնում էին, գլուխները դրած սեղանին: Կամ թէ Մալվինան գնում էր ներսի սեննեակը և խնդրելով օրիորդ Լը Միրից Journal pour tous հանդէսի մի զբոյզկ, բերում ու բարձրանայն կարդում էր միւսների համար:

Բայց փոքրիկ Շէքը վէպեր չէր սիրում: Նա իր զիսումը

մի այնպիսի վէպ ունէր, որի առաջ ոչինչ էին Journal pour tous-ի բոլոր վեպերը:

Գործարանը նրա մաքիցը երբէք գուրս չէր դալիս: Առաւտեան, երբ տանից դուրս էր դալիս հօր կուռն ընկած, նա միշտ մի հայեացք էր զցում այն կողմը: Այդ ժամանակ գործարանը զարթնում էր, ծինուղոյզը ժայթքում էր վերև իր սև ծիսի առաջին յորձանքը: Անցնելիս, Սիդօնին լսում էր բանուորսների աղաղակները, տպագրական գործիքների ուժգին ու խուլ հարուածները, մեքենաների հզօր ու չափածոյ շանչը, և աշխատանքի այդ բոլոր աղմուկները, խառնուելով նրա յիշողութեան մէջ տօնախմբութիւնների ու կապոյտ կառքերի հետ, հանգիստ չեին տալիս նրան ոչ մի վայրկեան:

Նրանց ձայնը աւելի բարձր էր հնչում նրա ականջին, քան հանրակառքերի զզրոցը, փողոցային աղաղակներն ու առուների ջրվէժները, և նոյն խակ արհեստանոցում, կեղծ մարգարիտներ ջոկջոկելիս, կամ երեկոյեան իրանց տանը, երբ ճաշից յետոյ գնում էր մի քիչ օդ ծծելու սրահի պատուհանից կամ գիշերը նայելու մարած ու ամայի գործարանին, այդ եռանդուն աղմուկը շարունակ հնչում էր նրա ականջներում, մի տեսակ մրշտական նուաղակցութիւն կազմելով նրա մոտածմունքներին:

—Փոքրիկի սիրաը նեղանում է, ափելին Շէր... Պէտք է մի քիչ ուրախացնել նրան... Այս կիրակի բոլորիդ տանում ևմ գիւղը:

Այդ կիրակնօրեայ զքօսանքները, որ բարեսիրտ Ռիսլէրը սարգում էր Սիդօնիի սիրաը բայց անելու համար, ընդհակառակը աւելի ևս տիրութիւն էին բերում նրա վրայ:

Այդ օրերը պէտք էր վեր կենալ առաւտեան ժամի չորսին, որովհետև չքաւորները զին են վճարում իրանց բոլոր զուարծութիւնների համար,—միշտ մի լութի կտոր էին ունենում վերջին բռաբէին արդուկելու կամ մի զարդեղէն կարելու, փորձելով նորացնել Սիդօնիի անմաշելի սպիտակաշերա ու կարմրակապոյտ փոքրիկ զգեստը, որ տիկին Շէրը խղճմտօրէն երկարացնում էր իւրաքանչիւր տարի:

Դնում էին զքօսնելու բոլորը միասին, Շէրերը, Ռիսլէրներն, ու հոչակաւոր Դըլօրէլը: Միմիան Դէղիրէն ու իր մայրը չեին ընկերանում նրանց: Խեղճ հաշմանդամը, քաշուելով իր պակասութիւնից, չէր ուզում երբէք շարժուել իր բազկաթոռից, մայրըն էլ մնում էր տանը նրան մննակ չը թողնելու համար: Բացի այդ, ոչ մէկը ոչ միւսը այնքան վայելուչ հադուստ չունէին, որ կարողանացին գուրսը երևալ իրանց մեծ մարդու կողքին, խակ

եթէ իրանց ունեցածովը դուրս գային, կը փշացնէին նրա արտաքինի դործած ամբողջ տպաւորութիւնը:

Ճանապարհ ընկնելիս, Սիդօնին զուարժանում էր մի փոքը, Պարիզը՝ յուլիսեան առաւօտի վարդագոյն մշուշում, երկաթուղու կայարանները՝ լի բացգոյն զգեստներով, վագօնների պատուհանների առաջ հետզհետէ սփոռուղ դաշտերը, այսուհետեւ շարժումը բաց օդում, Սէնայի ջուրը ծծած, անտառից զուարժութիւն ստացած և ծաղկազարդ մարդագետինների ու հասկ քցած ցորենի բուրմունքով լի մաքուր օդում,—այդ բոլորը նրան շմեցնում էր մի բոպէ: Բայց տաղտկութիւնը շուտով տիրում էր նրան չնորհիւ այդ կիրակինների տափակ միանմանութեան:

Մի և նոյնն էր միշտ:

Կանգ էին առնում մի որ և է փոքրիկ պանդոկի առաջ, մի աղմկալից ու բազմամարդ գիւղական տօնահանդէսի կողքին, որովհետեւ անպատճառ հասարակութիւն էր պէտք Դըլօբէլին, որ ման էր դալիս, օրօրուելով իր երազանքներից, մոխրադոյն հագուստով, մոխրագոյն սոնապաններով, փոքրիկ զիսարկը թեք դրած, բացգոյն վերարկուն թեկն զցած, երևակայելով, թէ բեմը ներկայացնում է Պարիզի շրջակացքի մի գիւղ ու ինքը խաղում է ամարանոց գնացած մի պարիզեցու գեր:

Ինչ վերաբերում է պ. Շէբին, որ պարծենում էր, թէ ինքը սիրում է բնութիւնը այնպէս, ինչպէս հանգուցեալ ֆանֆակը Ռուսածն, նա բնութիւն ասելով հասկանում էր միայն ժողովրդական տօն՝ նշանառութեան խաղով, փայտէ ձիերով, ոտներին տոպրակ անցկացրած վազողների մրցութեամբ, փառաւոր փոշիով և անթիւ չուիկներով, որ տիկին Շէբի համար էլ զիւղական կենանքի իդէալն էր ներկայացնում:

Բոլորովին ուրիշ էր Սիդօնիի իդէալը, և գիւղերի փողոցներում աղմկալից քաշ արրուղ այդ պարիզեան կիրակինները անսահման տխրութիւն էին պատճառում նրան: Միակ զուարժութիւնը նրա համար այդ ժխորի մէջ այն էր, որ զգար, թէ նայում են իր վրայ Բաւական էր, որ գունիկի մէկը իր թէկուղ ամենայիմար հիացմունքը արտայայտէր նրա կողքին բարձրածայն և միամտարար, որպէսզի ամբողջ օրը ժամանակ չը գնար նրա երեսից, որովհետեւ նա այն տեսակ կանանցից էր, որոնք չեն արհամարհում ոչ մի գովասանք:

Երբեմն Շէբերին ու Դըլօբէլին տօնահանդէսում թողնելով, Ռիսէրը զնում էր դաշտը իր եղբօր ու «փոքրիկի» հետ ծաղիկներ վիճակներու իր որմաթղթերի նաշխի տիպարի համար ֆրանցը իր երկայն ձեռքերով կուացնում էր սրափչի բարձր

ճիւղքերը կամ սողոսկում էր մի որ և է ծառաստանի պարիսպն ի վեր քաշելու միւս կողմից երևացող մի թեթև սաղարթ։ Բայց ամենալաւ հունձը նրանք անում էին ջրերի ափին։

Այստեղ կային այն երկայն ու կոր ցօղուններով ճկուն բոյսերից, որոնք այնքան սիրուն տպաւորութիւն են գործում պատերի պաստառների վրայ, —երկար ու չիվշիտակ եղէգներ և պատառուկներ, որոց ծաղիկը, յանկարծ բացուելով քմածին նաշխերով, թւում է մի կենդանի էակ, մի մարդ, որ նայում է ձեզ սաղարթի սիրուն տատանմունքի մէջից։ Ծիսէրը համախմբում էր իր փունջերը, դասաւորում էր նրանց գեղարուեաւտական տաղանդով, ներշնչուելով հէնց բոյսերի բնութեամբ և աշխատելով լաւ ըմբռնել նրանց կենդանի յատկութիւնները, որոնք անըմբռնելի են այլև, երբ թէկուղ թառամութեան մի օր է անցել նրանց վրայից։

Յետոյ, երբ ծաղկաքաղը պրծնում էին, կոթերը ժապաւէնի տեղ կապում էին մի որ և է լայն խոտով և ահազին փունջը դնում էին ֆրանցի շալակին ու ճանապարհ ընկնում։ Միշտ ըղբաղուած իր արուեստով, Ծիսէրը յետ զնալիս շարունակ նաշխերի նիւթեր ու խմբակցութիւններ էր փնտում։

—Տես, փոքրիկս... եթէ այս մայիսածաղիկի շիւղը իր ըսպիտակ բոժոժներով դնենք այս մասրենիների երեսին... Հը՞, ինչ ես կարծում... սիրուն չը լինի կանաչաւուն ջրի կամ զորշ բրդի գոյնով տեղի վրայ։

Բայց Սիդօնին ոչ մայիսածաղիկն էր սիրում, ոչ մասրավարդը։ Դաշտային ծաղիկները չքաւորների ծաղիկ էին թւում նրան, նոյն ճաշակի մի բան, ինչպէս իր կարմրակապոյտ ըղփեսուը։

Նա յիշում էր, որ բոլորովին ուրիշ տեսակ ծաղիկներ էր տեսել պ. Գարդինուայի՝ Սավինիսիւր-Օրմի դղեակում, ջերմոյներում, վանդակապատճերի վրայ և ամբողջ աւաղած ու մեծ ծաղկասափորներով շրջապատուած բակի չորս կողմը։

Ահա նրա սիրած ծաղիկները, ահա թէ ինչպէս էր նա հասկանում դիւղական բնութիւնը։

Այդ Սավինիի յիշատակները նրա միտքն էին գալիս ամեն քայլափոխում։ Երբ նրանք անցնում էին մի որ և է մեծ պարտէզի վանդակի առաջով, նա կանգ էր առնում, նայում էր ուղիղ ու հարթ ծառուղին, որ անշուշտ տաճում էր դէպի գաււիթը... Խոշոր ծառերի կանոնաւոր ստուերներով ծածկուած սիզամարդերը և ջրափեայ խաղաղ դարաստափները ուրիշ դարաստափներ և ուրիշ սիզամարդեր էին յիշեցնում նրան։ Ճոխութեան այդ տեսիլքները, յիշողութիւնների հետ միացած, ա-

ւելի ևս մոռայլացնում էին նրա կիրակին: Բայց ամենասրտա-  
մաշը նրա համար վերադարձն էր:

Ի՞նչ սարսափելի նեղուածք ու խեղդուածք է լինում այդ  
երեկոները Փարիզի շրջակացքի փոքրիկ կայարաններում: Ի՞նչ  
շինծու հրճուանքներ, տխմար ծիծագներ, նուազուն երգեր խըռ-  
պոտ ձայնով, որի մէջ միայն ոռնալու ոյժ է մնացել... Հէնց այդ  
ժամանակին էր, որ պ. Շէքը իր տարեկքի մէջ էր զգում իրան:

Նա կարող էր սրան նրան հրհրել տոռսակ առնելիս, զայ-  
րոյթը յայտնել գնացքի ուշանալու պատճառով, յարձակուել  
կայարանապետի, երկաթուղու ընկերութեան, կառավարութեան  
վրայ ու ասել Դըլօբէլին այնպէս բարձրածայն, որ հարեանները  
անպատճառ լսեն.

— Հը... իսկ եթէ այսպիսի մի բան պատահէր Ամերիկայ-  
ում...», որ, չնորին հոչակատոր դերասանի արտայայտիչ մի-  
միկային ու այն գերազանց ձեին, որով նա պատասխանում էր՝  
«Ել ինչ ասել կ'ուզի», կարծել էր տալիս շրջապատողներին, որ  
այդ պարոնները հաստատ դիտեն, թէ ինչ կը պատահէր Ամե-  
րիկայում այդպիսի գէպքում: Ինչ խօսք, որ ոչ մէկը, ոչ միւսը  
ոչինչ չը զիտէին այդ բանի մասին, բայց այդ նրանց բարձ-  
րացնում էր ամբոխի աչքում:

Յրանցի կողքին նստած, վճնջի կէսը ծնկներին, Սիդօնին  
կորած մոլորածի նման էր այդ ազմուելի մէջ, երկար սպասելով  
երեկոյեան գնացքին: Մի հատիկ լամպով լուսաւորուած կայա-  
րանից նա տեսնում էր դրսենում սառւերալից թաւուանները,  
թափանցուած տեղ-տեղ տօնահամնդէսի լուսավառութեան վեր-  
ջին շղթերից, մի խաւար զիւղական փողոց, գէպի կայարանը  
և կող մարդիկ և ամայի ջրափում վառուող մի լապտեր:

Երբեմն-երբեմն ապակեապստ գռների այն կողմում, առանց  
կանգ առնելու անցնում էր մի գնացք, բոցավառ ածխիկներ  
ժայթքելով և գոլորշու հեղեղներ բաց թողնելով: Այն ժամա-  
նակ կայարանում ոսնագովիտների և աղաղակների փոթորիկ  
էր բարձրանում, որի վրայ սաւառնում էր զիլ սոպրանօն պ.  
Շէքի, որ իր թոշնային ձայնով ճչում էր՝ «Զարդեցէր գռներլ»...  
Մի բան, որ այդ փոքրիկ մարզը երբէք ինքը չէր անիլ, որով-  
հետեւ լեզին պատռում էր ժանդարմներից: Մի բոպէ անցած  
փոթորիկը հանդարտում էր: Յոզնած կանայք, բաց օդում զրզ-  
գուած մազերով, ննջում էին նստարանների վրայ: Երկում էին  
ճիւլտուած զգեստներ, պատռուած իրեղիններ և բացօձիք  
սպիտակ հագուստներ, փոշու մէջ կորած:

Շնչածները հէնց զլխաւորապէս փոշի էր:

Նա ներքե էր թափուում բոլոր հաղուստներից, վեր էր

բարձրանում ամեն մի քայլից, մինացնում էր լամպի լոյսը, կուրայնում էր մարդուս աչքերը և ամպի պէս կանգնում ջարդուած մարդկանց զվարկերեսում: Երբ սպասողութեան ձիգ ժամերից յետոյ վերջապէս նստում էին վագոնները, նրանք էլ թաթախուած էին վնում փոշու մէջ... Սիդօնին բանում էր պատուհանը և նայում դրսեր խաւար գաշանըին, ստուերի անվերջ գծին: Յետոյ, քաղաքային ամրութիւնների մօտ, անթիւ աստղերի պէս, երեսն էին զալիս արտաքին բուլվարների առաջին լապտերները:

Այդ բոպէից վերջանում էր այդ բոլոր խեղճ մարդկանց հանգստութեան սպասափելի օրը: Պարիզի տեսքը ամենքի միտքն էր քցում միւս օրուայ անելիք աշխատանքը: Ինչքան էլ տիսուր էր անցել կիրակին, այնուամենայնիւ Սիդօնին սկսում էր ափսոսալ նրան: Նա մտածում էր հարուսանների մասին, որոնց համար կեսանքի ամեն մի օրը հանգստութեան օր է, և անորոշ կերպով, ինչպէս երազի մէջ, պատկերանում էին նրա աչքին այդ օրուայ ընթացքում թուոցիկ կերպով նշմարած պարակների երկար ծառուղիները, լի աշխարհիս այդ բախտաւորներով, որոնք գրօննում են նուրբ աւազի վրայ, մինչդեռ այնտեղ ներքիւում, վանդակապատի այն կողմը, ճանապարհի փոշու մէջ մեծ մեծ քայլերով անցնում է աղքատների կիրակին, հազիւ ժամանակ ունենալով մի բոպէ կանդ առնել նայելու և նախանձելու համար:

Այդպէս անցաւ Սիդօնիի կեանքը տամներերից մինչեւ տամնեօթ տարեկան հասակը:

Տարիները յաջորդում էին միմեանց առանց ամենաչնչին փոփոխութիւն բերելու իրանց հետ: Տիկին Շէբի շալը մի քիչ աւելի էր մաշուել փոքրիկ կարմրակապայոյտ զգեստը էլի մի քանի ամսգամ նորոգութեան էր ենթարկուել, և ուրիշ ոչինչ: Միայն թէ, Սիդօնիի մեծանալովը, ֆրանցը, որ արդէն չահէլ տղամարդ էր գարձել, սկսել էր լուռ ու գորովալից հայեացք ներ քցել նրա վրայ ու սիրային ուշագրութիւններ ցոյց տալ ակնյայտնի ամենքի համար և աննկատ միմիան օրիորդի կողմից:

Ասենք ոչ մի բան չէր հետաքրքրում այդ փոքրիկ Շէբին:

Արհեստանոցում նա կատարում էր իր անելիքը կանոնաւոր կերպով ու լուռ, առանց ամենեին մտածելու ապագայի և ապահով կեանքի մասին: Ինչ որ անում էր, այնպէս էր դուրս գալիս՝ կարծես սպասողական զրութեան մէջ լինէր:

Ֆրանցը, ընդհակապակը, մի ժամանակից ի վեր աշխատում էր առանձին եռանդով, իրանց ջանքերի վերջում մի որոշ նպատակ տեսնող մարդկանց յափշտակութեամբ, այնպէս որ Փետրուար, 1901.

քսանչորս տարեկան հասակում նա աւարտեց Կենտրոնական դպրոցը ինժենէրի աստիճանով, իբր երկրորդ աշակերտ:

Այդ օրը Ռիսլէրը Շէքերի ընտանիքը տարաւ Գյունասեթատրոնը, և ամբողջ երեկոն տիկին Շէքն ու նա զլխով ու աչքով հազար ու մի նշաններ էին անում իրար, նստած ջահէների յետեին: Վերջն էլ, թատրոնից գուրս դալիս, տիկին Շէքը հանդիսաւոր կերպով զրեց Սիդոնիի կուռը ֆրանցի կոսն տակ, կարծես ասելով սիրահարին՝ «Այժմ, սիրաններդ բաց արեք... Զեր գործն է այդ...»

Եւ խեղճ սիրահարը փորձեց սիրաը բանալ:

Ճանապարհը երկար է Գյունասեթից մինչև Մարէ: Մի քանի քայլ արած, բուլվարների պայծառութիւնը նսեմանում է, մայթերը քանի զնում աւելի ու աւելի մթնում են, անցուղարձ անողների թիւը քչանում է: Ֆրանցը սիդրում խօսք բաց արեց իրանց տեսած պիկչսի մասին... Նա շատ սիրում էր այնպիսի պիկչսներ, որոնց մէջ զգացմունք կայ:

—Իսկ դուք, Սիդօնի:

—Ախ, Բա, զուք զիտէք ֆրանց, որ ինձ համար մի և նոյնն է, միայն թէ լաւ զգեստներ լինեն:

Եւ յիրաւի թատրոնում ոչ մի ուրիշ բան չէր զբաղեցնում նրան: Նա այն սամստիմէնտալ կանանցից չէր, Յօվարիի նման, որոնք ներկայացրումից վերադառնում են սերտած ու պատրաստ սիրային գարձուածքներով և պատշաճականութեան իդէալով: Ոչ: Թատրոնը միմիայն զեղիսութեան և զողարիկութեան մոլեգին տենչ էր զարթեցնում նրա մէջ. Նա այնաեղից ոչինչ չէր գուրս բերում բացի մազերի սանրուածքի տիպարներից և զգեստների ձեզերից... Դերասանուհիների նորաձեւ շավաղ զանցեցրած հագուստները, նրանց քայլուածքը, նոյն իսկ նրանց շնծու աշխարհիկ արտասանութիւնը, որ նրա աչքում ամենաբարձր ալշնուականութիւնն նշան էր, ոսկեզօծանքի և ճրազների գուհեկաճաշակ փայլը, փողփողուն յայտարարութիւնը գուան մօտ, շար ընկած կտաքերը և այն ամբողջ, մի փոքր անառողջ, աղմուկը, որ տեղի է ունենում ժողովրդականութիւնն ստացած պիկչս շուրջը,—ահա նրա սիրածը, նրան յափշտակողը:

Սիրահարը շարունակեց.

—Ի՞նչքան լաւ խաղացին սիրոյ տեսարանը:

Ու այդ «սիրոյ» խօսքը արտասանելիս նա խանդաղատօրէն թերուեց գէտի Սիդօնիի փոքրիկ սիրուն զլուխը, որ փաթաթուած էր սպիտակ բրդէ զլխանոցի մէջ, որի կողքերից գուրս էին պրծել մազերի խուճուանները:

Սիդօնին հասաչեց.

—Ախ, այո, սիրոյ տեսարանը... Շատ սիրուն արամանդներ ունէր գերասանուհին:

Մի բոպէ լսութիւն սիրեց: Խեղճ ֆրանցը սաստիկ չարչարանքի մէջ էր. վնասած խօսքերը միտքը չեն գալիս, յետոյ էլ վախն էր բոնում: Սէրը բացատրելու համար սահմաններ էր դնում ինքն իրան:

—Երբ որ Սէն-Դընի քաղաքադուռը անցնենք... Երբ որ բուլվարից գուրս գանք:

Բայց այդ տեղերում Սիդօնին սկսում էր խօսել այն աստիճան անտարբեր բանների մասին, որ սիրոյ բայցարութիւնը սառում մնում էր նրա շրթունքների վրայ, կամ թէ նրանց կանգնեցնում էր մի որ և է կառք և ծնողները այդ ժամանակ հասնում էին նրանց:

Վերջապէս, Մարէում, նա յանկարծ սիրա արեց.

—Լսեցէք, Սիդօնի... Ես սիրում եմ ձեզ...

Այդ զիշեր Դըլօբէնինի տանը շատ ուշ պառկեցին քնիլու:

Այդ ժրաջան կանայք սովորութիւն ունէին, որքան կարելի է, երկարացնել իրանց աշխատաւոր օրը և այնքան երկար էին նսուում, որ նրանց լամպը ամենից ուշ հանգչողներիցն էր Բրաքի խաղաղ վողոցում: Նրանք չեն պառկում քնելու մինչև որ գալիս էր իրանց մեծ մարդը, որի համար վառարանի մոլոխիք մէջ տաք պահում էին մի թեթև, կազդուրիչ ընթրիք:

Այն ժամանակները, երբ նա գեռ խազում էր, միաք ունէր այդ բանը,—զերասանները, որոնք առհասարակ ստիպուած են վաղ ձաշել և շատ թեթև կերպով, սաստիկ քաղցած են լինում թատրոնից գուրս գալիս և ընթրիք են անում տուն վերադառնալուց յետոյ: Դըլօբէլը վաղուց արդէն այլևս չէր խաղում, ըայց իրաւունք չունենալով, ինչպէս ինքն ասում էր, հրաժարուել թատրոնից, նա պահպանում էր իր մանիսն գերասանական հազար ու մի սովորութիւններով, որոնց թուին էին պատկանում զիշերուայ ընթրիքը և այն, որ նա ամեն օր տուն էր վերադառնում միայն այն ժամանակի, երբ հանգցնում էին բուլվարների բոլոր թատրոնների վերջին ճրագները: Քընել առանց ընթրիքի և սովորական ժամին, երբ ամենքը պառկում են քնելու, կը նշանակէր զինաթափ լինել, հրաժարուել մաքասումից, իսկ նա, հասկանում էր, չէր ուզում հրաժարուել...

Այն զիշերը, որի մասին խօսում ենք, գերասանը գեռ չէր վերադարձել, և մայր ու տղջիկ սպասում էին նրան, մի կողմից աշխատելով, մի կողմից էլ սաստիկ տաք-տաք դրոյց անելով, չը նայած, որ շատ ուշ էր: Ամբողջ երեկոն մի գլուխ ֆը-

բանցի մսախն էին խօսել, նրա աջող աւարտման մասին, նրա առաջ բացուող ապագայի մասին:

—Հիմա նրան մնում է միայն մի լուս, սիրուն կնիկ գանել:

Դեղիբէն էլ այդ կարծիքին էր: Ֆրանցի բախտաւորութեանը միայն այդ էր պակասում, —մի լուս, սիրուն կնիկ, արփ, եռանդուն, աշխատանքի սովոր և անձնուէր: Եւ եթէ Դեղիբէն այդքան հաստատ կերպով էր խօսում այդ հարցի մասին, այդ նրանցից էր, որ նա չատ մօտիկից էր ճանաչում այն հարսնացուին, որ այնքան համապատասխան էր Ֆրանց: Ռիվէրին... Այդ հարսնացուն մի տարով էր միայն փոքր Ֆրանցից, ուղիղ այնքանով, որքան պէտք էր, որպէս զի նա ջահել վներ իր ամուսնուց և մի ևնոյն ժամանակ մօր տեղը բանէլ նրա համար: ...Գեղեցիլ էր...

Իսկապէս ոչ, բայց աւելի սիրուն էր, քան գէշ, չը նայելով իր պակասաւորութեանը, որովհետև կաղ էր խեղճ աղջիկը... Եւ յետոյ, խեղճը, ուրախ ու սիրառան: Ոչ ոք բացի Դեղիբէնցը զիտէր, թէ ինչ աստիճան այդ աղջիկը սիրում էր Ֆրանցին և ինչպէս տարիներից ի վեր օր ու գիշեր միայն նրա վրայ էր մտածում: Ֆրանցը ինքը չէր նկատում այդ բանը և կարծես Աստուծուց աշքեր էր ստացել միայն Սիդոնիի պէս լակուտին տեսնելու համար: Բայց ոչինչ: Լուսկեաց սէրը չատ պէրճախօս է, չատ մեծ ոյժ է թագնուած լինում զսպուած զգացմունքների մէջ... Ի՞նչ կարելի է իմանալ: Գուցէ մի օրից մի օր...

Եւ խեղճ կաղիկը, կռացած իր աշխատանքի վրայ, վերացաւ ցնորդների աշխարհը, սկսելով այն մեծ ճանապարհորդութիւններից մէկը, որ նա այնքան յանախ կատարում էր նստած իր հաշմանդամի բաղկաթուում ու ոտները գէմ տղւած անշարժ աթոռակին, —այն չնաշխարհիկ ճանապարհորդութիւններից մէկը, որոնցից նա վերագանում էր միշտ երջանիկ ու ժաման, կոթնած Ֆրանցի թեին սիրելի կնոջ յատուկ վստահութեամբ: Նրա մատները հետեւում էին նրա սրտի իղձերին և այն թըռչնիկը, որ այդ բռպէին ձեռքին բռնած՝ շիտկում էր ճմլուած վեսողւթները, նոյնպէս ճանապարհորդի կերպարանք ունէր, նոյնպէս կարծէր թռչելու էր հեռներ, հեռներ, ուրախ ու թեթև, ինչպէս նա:

Դուռը յանկարծ բացուեց:

—Հօ չեմ խմնդարում ձեղ, ասաց մի ցնծալից ձայն:

Մայրը, որ մի քիչ նղղել էր, զլուխը թափով բարձրցրեց:

—Ախ, պարոն Ֆրանցն է..., Մտէք, մտէք, պարոն Ֆրանց...,

Խնչպէս տեսնում էք, հայրիկին ենք սովասում... Այդ անաւեր գերասանները շատ ուշ են տուն վերադառնում... Նստեցէք... ընթրիք կ'անեք հետը...

—Զէ, չնորհակալ եմ, պատասխանեց Թրանցը, որի շըրթունքները գեր գունատ էին մի քանի բոսէ առաջ կրած յուղմունքից, — չնորհակալ եմ, և չեմ մնալու... Տեսայ, որ լոյս կայ ձեզ մօտ և մտայ միայն ձեղ ասելու... ձեղ յայտնելու մի մեծ նորութիւն, որ ձեղ շատ կ'ուրախացնի, որտինեան պիտեմ, որ ինձ սիրում էք...

— Ի՞նչ նորութիւն, Տէր Առողուած:

— Ամուսնութեան խոստում ոլ, Թրանց Ռիալէրի և օրիորդ Սիրոնի մէջ...

— Տեսար, ևս որ ասում էի, թէ ոլ, Թրանցին միայն մի լու, սիրուն կնիկ է պակաս, բացականչեց տիկին Դըլօքէլը տեղիցը վեր թուշելով ու նրա վզովք փաթաթուելով:

Դէզիրէի բերանը չը զօրեց մի խօսք անդամ ասել: Նա աւելի ևս կոպացաւ իր աշխատանքի վրայ, և ոբովիեան Թրանցը ոչինչ չէր նշմարում բացի իր երջանկութիւնից, խոլ տիկին Դըլօքէլն էլ աչքը անկել էր պատի ժամացոյցին, որպէս զի տեսնէր, թէ արդեօք չուտ է դալու իր մեծ մարդը, ոչ ոք չը նկատեց կաղիկ օրիորդի յուղմունքն ու դունատութիւնը, ոչ էլ այն, թէ ինչպէս ջղամզարար գողդուում էր նրա ձեռքի թոշնիկը անշարժ մի դիրքի մէջ և զլուխը քաշ քցած, մահացու վերք ստացածի պէս:

#### IV

Փոքրիկ Շեքի պատմոքիւնը:— Սավիթիի լուսատենիկները:

«Սավիթի-սիւր-Օրժ»

«Երէկ մենք ճաշի էինք նստած քո տեսած մեծ սեղանաւտանը, գմները լայն բաց արած ծաղկավթիթ պատշպամքների կողմը: Սիրոս մի քիչ ախուր էր: Հայրիկիւ տրամադրութիւնը վաս էր ամբողջ առաւօտ, և մայրիկը չէր համարձակում մի խօսք ասել, վախուորած հայրիկի խոժոռած յօնքերից, որոնք միշտ օրէնք են եղել նրա համար: Մասնաւութիւնը, թէ սիրոս որ մին-մինակ էմ ամառուայ գեղեցիկ եղանակին, այս սիրուն երկրում, և թէ որքան բակոտաւոր կը լինէի այժմ, երբ, կուսանոցից գուրս գալով, պէտք է ասարուայ ամբողջ եղանակներ՝ անց կացնեմ զիւզում, եթէ առաջուայ պէս մօտ ունենայի մէկին, որ վաղլզէր հետս անտառում և մեր ծառուղիներում:

«Ժօրժը գալիս է երբեմն-երբեմն, բայց միշտ շատ ուշ, ճաշի ժամանակ, հետեւել օրն էլ, ևս զեռ չը դարձնած, վերադառնում է հօրս հետաք Բայցի այդ, լուրջ մարդ է դարձել այժմ մեր պարտն Ժօրժը: Աշխատառմ է գործարանում, և գործերի հոգոսը յանախ նրա ճակատին էլ է կնծիռներ բերում:

«... Միաք ամեւլով այլուեղն էի հասել, երբ յանկարծ սիրելի հայրիկը դառնում է իմ կողմը.

—«Ո՞ւր մնաց քո Սիդոնին, ևս շատ ուրախ կը լինէի, եթէ նա դար, մի քիչ մեղ մօտ մնար:

«Կարսղ ևս երեակայել, թէ ինչքան բախտաւոր զգացի ինձ: Ո՞քան ուրախութիւն կը լինի նորից հանդիպել իրար և վերանորսովել մեր բարեկամութիւնը, որի ընդհատուման մէջ աւելի կեանքի հանգամանքներն են մնդաւոր, քան մենք ինքնեւրուս: Ո՞քան բան կայ իրար սպասմելու: Դու էիր միայն մեր մէջ կարողանում ցրուել այս մեր սարսափելի պապի կնծիռները, և անշուշտ դու հետո ուրախութիւն կը բերես այստեղ, ուրախութիւն, որին, հաւատա ինձ, մեծ կարիք ունենք մենք:

«Եթէ իմանայիր, որքան ամայի է այս հրաշալի Սալինին: Սուաւունեւր երբեմն կօքէտութիւնն է գալիս վրաս: Հաղուում եմ, կոկւում եմ, և սիրուն հագուստով ու խուճուճ դրած մազերով սկսում եմ զլօսնել բոլոր ծառուղիներով, մէկ էլ յանկարծ նկատում եմ, որ թափած ջանքս եղել է միմիայն կարսաների, բագերի, իմ շանս՝ Կրիս և մէկ էլ մարդագետնում արածող կուվերի համար, որոնք նոյն խիլ չուռ էլ չեն դաշիս իմ անշնելու ժամանակ: Այդ որ զգում եմ, ջիզրս զալիս է, խիզոյն յետ եմ դառնում, քաթանէ չոր եմ հագնում, սկսում եմ զբաղուել աղարակում, մառանում, մի քիչ այսաեզ, մի քիչ այնուղիւ եւ, խաչը, սկսում եմ կարձել, թէ ձանձրութիւնն չնորհիւ աւելի լաւ մարդ եմ դարձել և որ ինձնից հիմնալի տնարար կին դուրս կըգայ...

«Բարեբախտաբար, շուտով սկսուելու է որսի շրջանը և ես լոյս ունեմ մի քիչ զուարձանալ այդ ժամանակ: Ամենից առաջ, Ժօրժն ու հայրիկը, որոնք երկուան էլ թունդ որսորդներ են, կը սկսեն աւելի յաճախ դալ այստեղ: Յետոյ, դու էլ այստեղ կը լինես... Որովհետեւ դու խիզոյն և եթ կը գաս, այնպէս չի: Պ. Ռիսլէրն ասում էր վնրջերքս, թէ դու հիւանդ էիր: Սալինիի օղը շատ լաւ կ'աղջի վրադ:

«Այստեղ ամենքը սպասում են քեզ: Իսկ ևս հօ քիչ է մը նում մենամեմ անհամբերութիւնից:

«Կլէր»

Դրելուց յետոյ, կէր Թրօմօնը գրեց մեծ յարդէ զլիսարկը, որովհետև այդ օդուստոսի առաջին օրերը տաք էին ու պայծառ, և ինքը տարաւ ներքեւ քցելու փոքրիկ արկղը, որի միջից սուրհանդակը, ամեն առաւօտ անցնելիս, վերցնում էր դղեակի նամակները:

Ծառասանի ծայրումն էր այդ, ճանապարհի մի անկիւնում: Նա կանգ առաւ մի բոպէ նայելու ճանապարհի ծառերին և շրջակայ թմրած ու արեալից մարզագետններին: Ահա այնտեղ հնձուորները կրում էին վերջին խուրձերը: Մի քիչ հեռու վար էին անում: Բայց լուռ աշխատանքի այդ մելամաղձութիւնը գոյութիւն չունէր կէրի համար, որ ցնծում էր իր բարեկամուհուն տեսնելու յոյսից:

Ոչ մի շունչ չը բարձրացաւ հորիգոնի բարձր բլուրներից, ոչ մի ձայն չը հնչեց ծառերի կատարներից, որ չգուշացնէր նրան մի նախարարացումով ու չը թողնէր ուղարկի այդ ճակատագրական նամակը: Եւ նա, իսկոյն աււան վերականալով, զբաղունը պատրաստել տալով Միդօնի համար մի սիրուն սենեակի իր սենեակի կողքին:

Նամակը ծշառութեամբ դնաց իր ճանապարհովը: Դգեակի՝ քազ ու հնանիներով ու այծանրէներով շրջապատուած կանաչ գմնակից նա ճանապարհ ընկաւ գէպի հարիղ և նոյն երեկոյ հասաւ: Բրաք փողոցի առն հինգերորդ չափէր՝ Սամինի դրոշը վրան և տողորուած զիւղական բուրմանչը ունի:

Ի՞նչ նշանաւոր զէպք եղաւ այդ նամակը երկր անդամ կարգայուեց և մինչ Միդօնի ճանապարհ ընկննը, մի ամրող շարաթ մնաց բուխարի վրայ ափիին Շէրի մասունքների, գնդաւոր ժամացոցի և շորու գաւաթնարի կողքին: Միդօնի համար զամի տեսակ չնաշխարհի զէպ էր, լի աքանչէլիքներով ու խոստումներով, որ նա կարգում էր առանց բաց անելու, հինց միայն նայելով սպիտակ ծրաբին, որի վրայ դուրս պրծած երեւամ էին կէր Թրօմօնի անուան ու ազգանուան վասկաղիր սկզբնատառները:

Ել ինչ խօսք կարող էր լինել այժմ պատկուելու մասին: Էական հարցը այն էր, թէ ինչ չոր պէտք է հագնէր նա գղեակը զնալիս: Պէտք էր զբաղուել զբանով, ձեւել յարմարացնել, չափել հագուստը, փորձել մազերի սարքը... ինչդ Թրանց: Որքան տիրեցնում էին նրա սիրառ այդ պատրաստութիւնները: Միդօնի Սամինի վնալը, որին նա ապարդիւն կերպով փորձեց հակառակուել, պէտք է էլլ յետաձգէր նրանց սպակը, որ—խեղճը չը զիտէր ինչու—Միդօնին ամեն օր ձգձգում էր մի քիչ: Ի՞նքը չէր կարողանալու դնալ նրան տեսնելու, իսկ նա Սամինիում

պէտք է շրջապատռւած լինէր տօնախմբութիւններով ու զուարձնութիւններով և ովկ կարող էր ասել, թէ որքան ժամանակ կը մնար այնտեղ...

Միշտ տիկին Դըլօրէնիկի մօտ էր գալիս յուսահաս սիւրահարը բանալու իր սրափ վիշտը, առանց երբէք նկատելու, թէ ինչպէս նրա ներս մտնելուն պէս Դէղիրէն աշխուժով վեր էր կենում, նրան իր կողքին տեղ տալու համար աշխատանքի սեղանի մօտ, և ինչպէս յետոյ նստում էր, կարմրատակած երեսով և փայլուն աչքերով:

Մի քանի օրից ի վեր մայր ու աղջիկ այլիս մօդային նաններ ու բռչնիկներ չեին պատրաստում: Նրանք խուծապում էին վարդապոյն փուշփուշներ Սիդօնիի զգեստի համար, և դեռ երբէք կաղիկ օրիորդը կար չըր արել այդքան սիրով:

Զջ որ Դըլօրէնի աղջիկն էր Դէղիրէն:

Իր հօրից նա ժառանգիլ էր պատրանքնեղին հեշտութեամբ անձնատուր լինելու և մինչև վերջը ու ինչ էլ լինի յուսալու յատկութիւնը:

Մինչ ֆրանցը պատմում էր նրան իր սիրոյ մորմոքները, Դէղիրէն մտածում էր ինքն իրան, թէ երբ Սիդօնին գնայ, նա այդպէս ամին օր կը գայ, թէկուզ հէնց բացակայ սիրելիի մասին խօսելու համար, թէ նա միշտ իր կողքին կը լինի, թէ նրանք միասին կը սպասեն զիշերները «հայրիկին» և թէ, զուցէ, մի երեխոյ, իրան նայելիս, նա կը նկատի, թէ ինչ տարրերութիւն կայ այն կնոջ մէջ, որ մէկին սիրում է, և այն կնոջ մէջ, որ թոյլ է տալիս, որ մէկը իրան սիրի:

Եւ այն միտքը, թէ ամեն մի միգակած կտոր մօտեցնում էր այդ անհամբեր սպասուող ուղևորութիւնը, արտասովոր և ուսանդ էր ապիս նրա ասեղին, և խեղճ ֆրանցը սպասափում էր, տեսնելով, թէ ինչպէս փուշփուշներն ու փոթուփութները նկատելի արագութեամբ կուտակիում էին Դէղիրէի շուրջը, փարբիկ ալիքների նման:

Երբ վարդապոյն զգեստը կարեցին սլրծան, օրիսրդ Շէրը ձանագործ ընկաւ զէսի: Սամինի:

Պ. Գարդիննաւի յշղեակը շնուռած էր Օրժի հալիտում, այդ փոքրիկ գետի ափին, որ այնքան քմահաճօրէն զեղեցիկ է եր ջրաղացներով, իր կղզիներով, իր ջրարգելներով և ծառատամնի ընդարձակ սիզամարգերով, որոնք գալիս ձգւում էն նրա ափերի ամբողջ երկարութեամբ:

Տունը, —մի հին տուն կուի ԽՎ-ի ոճով, չէնքերը ցածիկ ու միայն տանիքները շատ բարձր, —սաստիկ մնջամաղձիկ արպաւորութիւն էր գործում և մի առանձին արխատոկրատական

հնաթեան տեսք ունէր,—լայն սրատշգամիներ, ժանդոտած երկաթի վանդակներ, անձրեից մաշուած հին ծաղկասափորներ, որոնց դորչ քարի վրայ սաստիկ աչքի էին ընկնում զոյնզգոյն ծաղիկները։ Որքան մարդուս աչքը կարում էր, երևում էին թեք ու հնամաշ պարփակներ, որոնք մի թեթև զառիվայրավ իջնում էին մինչև գետալիք։ Դղեակը ցոյց էր տալիս նրանցից բարձր իր հերձափարէ մեծ տաճկիքները, աղարանիր՝ իր կարմիր կղմինարները և հրաշալի ծառասաննը՝ իր լորիները, հացիւները, կաղամախները և շաղանակնիները, որոնք, խառնուելով իրար, կաղմում էին մի սոտուերախիտ շերտ, կարուած տեղ-տեղ ծառուղիների կամարներով։

Յայց այդ հին կալուածքի սքամնչելիքը իսկսալէս ջուրն էր, ջուրը, որ կենդանութիւն էր մոցնում նրա խաղաղութեան մէջ և հանգիսաւորութիւն էր տալիս նրա տեսարաններին։ Սավինիում, բացի գետակից, կային աղբիւրներ, շատրուամններ ու լճակներ, որոնց մէջ արեր մայր էր մանում իր տմբողջ փառաւհեղութեամբ, և այդ բարոք շատ սագում էր այդ՝ ջրափի քարի նման մի քիչ մոշուած, կանաչած ու մամոստած հինաւուրց տանը։

Դժբախտաբար, Սավինիում, ինչորէս առհասարակ այն հրաշալի ամարային ապարանքների մեծամասնութեան մէջ, որոնց տիրացել են Պարփղի առևտորի և սոլէկուլացիայի նորելուկները, դղեակի տէրերը ամեննեին սաղ չէին զալիս դղեակին։

Իր դղեակը առնելու օրից, ծեր Գարգինուան նրանով էր միայն զբաղուած, որ քանդում էր այն բոլորը, ինչ որ պատահամամբ իր ձեռքն էր ընկել այդպէս գեղեցիկ, — ծառերը կոտորում էր «տեսարան բանալու համար», անթիւ այլանդակ պատնէներ էր շինում աւաղակների դէմ, ամբողջ հոգաը քցած մի հիանալի բանջարանոցի վրայ, որ մեծ քանակութեամբ պտուղներ ու կանաչեղէն տալով, նրա աչքում կալուածքի միւս բոլոր մասերից աւելի նմանութիւն ունէր հողային սեղականութեան, իսկական գիւղացու սեփականութեան։

Ինչ վերաբերում է ընդարձակ դահլիճներին, որոնց նկարազարդ պանծները տօքունանում էին աշնանային մշուններից, կամ հարսնամասներով լցուած լճակներին և խճաշէն քարտնածւներին ու կամուրջներին, նա ձեռք չէր տալիս նրանց, որովհետեւ նրանք շարժում էին այցելուների զարմանքը և, բացի դրանից, այդ բոլորիցն էր բաղկանում այն սմբողջութիւնը, որ այնքան շոյում էր այդ նախսկին արջառավաճառի մնավիառութիւնը և որ կոչւում էր — դղեակ։

Արդէն ծեր լինելով ու չը կարողանալով ոչ որսորդու-

թեամբ պարապել, ոչ ձենորսութեամբ, նա անց էր կացնում ժամանակը հսկելով այդ ահաղին կալուածքի ամենաշնչին մանրամասնութիւնների փրայ: Հաւերին տուած կուար, վերջին հարքի ծախուած խստի գինը, հյոյակապ կորածեւ գարուանանոցում պահուող յարդախուրձերի քանակութիւնը,—մի ամբողջ օր սրա նրա վրայ վնմինմալու նվաթ էին տալիս նրան, և առհասարակ այն աստիճան գծուծ, այն աստիճան ազգատ հոգու աէր էր նա, որ երեակայել անզամ չէր կարելի, երբ մարդ դիտում էր հեռուից այդ հրաշալի կալուածքը, դղեակը՝ լեռնալանջի կէսում, գետը հայելու պէս առաջին, բարձր դարատափները՝ պատաստելների ստուերում և քարաշար նեցուկները, ուրոնք պահպանում էին ծառաստանը գետնի վեհածեւ զառիվայրում:

Ստիգուած մինելով անզործ մնալ իր ահաղին հարստութեան չնորհիւ, պ. Գարդինուան ձանձրանում էր Պարիզի կեանքից և ամբողջ տարին ապրում էր այդտեղ: Ֆրուններն էլ ամեն ամառ զալիս էին նրա մօտ:

Տիկին Ֆրոմօնը մի հեզ ու պարզամիտ կին էր, որին իր հօր, պ. Գարդինուայի կոպիտ բնակալութիւնը շատ վաղ հասակից սովորեցրել էր կոյր և յարատե հնացանդութեան: Նա նոյն տեսակ էր վերաբերում և իր ամուսնուն, որի բարութիւնը և մշտական ներողամուռթիւնը անկարազ էին եղել փոխել այդ ստորացրած, լռակեաց, դէպի ամեն ինչ անտարեր և կարծես անպատասխանառու բնաւորութիւնը: Միշտ հեռու ապրելով գրձերից, նա հարստացել էր առանց այդ բանը նկատելու և առանց ամենափոքր ցանկութիւն զգալու օգուտ քաղել հարստութիւնից: Իր գեղեցիկ բնակարանը Պարիզում, հօր հոյակապ զղեակը Սավինիում նեղում էին նրան: Նա աշխատում էր սրբան կարելի է փաքր տեղ բռնել նրանցում, իր ամբողջ կեանքի բովանդակութիւնը դարձնելով մի հատիկ զգացմունք, սէր դէպի կարգ ու սարքը, մի տարօրինակ, մի հրէշային սէր, որ կայանում էր նրանում, որ նա ինքը իր ձեռքով ամբողջ օրը սրբում ու պլազմացնում էր տան հայելիները, ոսկեզօծ դարձերը, գմների ճակատները:

Երբ էլ խստելու բան չէր մնում, այդ տարօրինակ կիւնը ընկնում էր իր մասանիների, ժամացոյցի շղթայիցու զարդարուցների ջանին, պուաւմ էր քարերն ու մարդարիտները, և այն աստիճան եռանգույն էր անում այդ, որ իր և մարդու անունները ամուսնական մասանիի վրայ փայլեցնել աշխատելով վերջ ի վերջոյ ջնջել էր բոլոր տասերը: Սավինի գնալով, նա հետը առնում էր այնտեղ այդ սրբելայցաւը: Հաւաքում էր

չորացած ճիւղերը ծառուղիներում, հովանոցի ծայրով քերում էր մամուռը նատարանների վրայից ու քիչ էր մնում թափ տար տերենների փոշին կամ սրբէր հին ծառերի փչակները, և յաճախ, երկաթուղում, նախանձով էր գիտում ճանապարհի կողքին շար ընկած սպիտակ ու մաքուր փոքրիկ վիլլաներին, իրանց պըւ-պլան պղնձեղարդերով, իրանց անզլիական մետաղէ գունդով և իրանց երկարութեամբը ծգուող ու պահարանի արկղի նմանող փոքրիկ պարտէղներով։ Այդ՝ ամարանոցի իդէալն էր տիկին միոմժնի համար։

Պարոն Ֆրօմօնը, որ միայն կարձ ժամանակով էր գալիս և միշտ ծանրաբեռնուած գործերի հոգսերով, նոյնպէս առանձին հաճոյք չէր ստանում Սալլինից։ Միայն կլէրն էր, որ իրան շատ լաւ էր զգում այդ գեղեցիկ ծառասանուամ։ Նա ճանաչում էր նրա ամենամանր մացանուերը։ Բոլոր միայնակ երեխանների նման ստիպուած լինելով միայն ինքն իրանով բաւականանալ, նա երջանկութիւն էր գարձելու իր համար որոշ զրօսանքները, հրա-կում էր ծաղկինների փթթելուն, ունէր իր ծառուղին, իր ծառը, իր սիրուծ նստարանը ընթերցանութեան համար։ Հայի գանգը միշտ հատնուամ էր նրա ականջին կալուածքի խորքերում։ Նա գալիս էր հաց ուտելու հեալով, ուրախ ուրախ և դուարթացած մաքուր օդից։ Եղարինների ստուերը այնքան առնել էր նրա մատաղ ծակատի վրայով։ Որ ինչ որ մնալաղձիկ քաղցրութիւն էր գրոշմն նրա վրայ, և լճակների կանաչաւուն ջրերը, թա-փանցուած աղօտ ճառագայթներով, իրանց ցողքն էին քցել նրա աչքերի մէջ։

Սալլինի բնութեան դեղեցկութիւնը ուղղակի փրկել էր նրան իր միջավայրի գոեհնկութիւնից ու սատրութիւնից։ Թող պ. Գարդինուան ամբողջ ժամանով գանգասուէր նրա առաջ հայ-թայթիջների ու ծառանների անվիտանութեան վրայ և մանրա-ման հաշուէր, թէ ինչքան են նրանք իրանից գողանում ամեն ամիս, ամենն շարաթ, ամենն ժամ, ամենն րոպէ. թող տիկին Ֆրօմօնը մի առ մի թուէր նրա մօտ իր տրտունջները իր իրե-ղէնները կասաղի կերպով փչացնող և իր պահարանների դէմ զաւացիր միներից, ցեցերից, փոշուց ու խոնաւութիւնից—ոչ մի վանկ այդ ասլուշ խօսակցութիւններից չէր մնում կլէրի մողում։ Բաւական էր մի զրօսանք սէղերի շուրջը, ընթերցա-նութեան մի ժամ լճակի ափին, որպէս զի իսկոյն նորից ան-դորրութիւն տիրէր նրա վեհանձն և առողջ հոգու մէջ։

Պալը տարօրինակ արարած էր համարում նրան, ընտա-նիքի մի անդամ, որ ամեննեին իր տեղումը չէ։ Դևո երեխայ ժամանակ նա անհանդատացնում էր նրան իր միծ ու պայծառ

աչքերով, իր առողջ դատողութեամբ, և նրանով, որ չէր նմանում իր հլու և կամազուրկ մօրը:

—Սա ել իր հօր նման հսկարտ ու օտարոտի է լինելու, առում էր Գարդինուան վաստ տրամադրութեան միջոցին:

Որքան աւելի էր գուրք գալիս նրան փոքրիկ Շէրը, որ ժամանակ առ ժամանակ գալիս էր խաղալու Սաղինիի ծառաւղիներում: Նրա մէջ նա գոնէ զգում էր իր լնաւորութեան նման մի դռեհիկ բնաւորութիւն, փառասիրութեան և նախանձի սաղմով, որ արգէն այն ժամանակն էլ արտայայտում էր ընթանի անկիւնի առանձնատեսակ թեմե ժալիառի: Բայց դրանից, այդ աղջիկը միամիտ զարմանք ու հիացմունք էր յայտնում միշտ նրա հարստութիւնից, որոնք շոյում էին այդ նորելուկի ինքնամիրութիւնը, և երեւմն երբեմն, երբ ծերուկը ընկնում էր հետը, վազրիկը լղատասխանելու համար գտնում էր Պարիզի երեխաներին յատակ ծիծաղաշարժ խօսքեր և տրուարձնաներում գործածուող դարձուածքներ, որոնց առանձին համ էր աւալիս նրա սիրունիկ բարակ ու գունատ գնչիկը, որ, միտամանակ և գուեհկական էր և զողարիկ: Հասկանալի է, որ ծերուկը չէր մասուցել նրան:

Մասնաւանդ այս անգամ, երբ երկար բացակայութիւնից յետոյ, Սլիդոնին եկաւ Սալինի իր փարթամ մազերով, իր սիրուն իրանով, իր կայտառ ու շարժուն դէմքով և այդ բարորը շքեղացրած խանութի գործակաարուեստ փոքր ինչ շննծու շնորհալլութեամբ,—նա մեծ յաջողութիւն ունեցաւ այստեղ: Ծեր Գարդինուան, սաստիկ զարմայած, որ մեծ աղջիկ էր տեսնում իր սպասած երեխայի տեղ, աւելի ևս սիրուն գտաւ նրան և մասնաւանդ շատ աւելի լաւ հագնուած, քան կլէրը:

Ճիշտն ասած, երբ երկաթուղուց յետոյ Գարդինուայի մնձ կառքը նստած՝ օրիորդ Շէրը գալիս էր զգեակ, բաւական լաւ կերպարանք ունէր, միայն թէ նրան պակասում էր այն, որ նրա բարեկամուհու զեղեցկութիւնն ու հրապարն էր կազմում, ընականութիւնը, վեհութիւնը, արհամարհանքը դէպի շինծու զիրքերը և մանաւանդ հոգու անդորրութիւնը: Սիրոնիի սիրունութիւնը մի քիչ նման էր իր շորերին, որոնք էժանագին թեմե կտորներ էին, բայց ձևուած օրուայ ձաշակով, եթէ կուղէք փալասի կտորտանք, բայց այնպիսի փալասի, որին մօգա կոչուող անհնդեմ ու զողորիկ յաւէրժահարմն է առել ձեր, դարդը և չնորհքը: Այդ տեսակ շորերի համար Պարիզն ունի յատուկ սիրունիկ գէմքեր, որոնց շատ հեշտ է սպացնել մի հագուստ, սանրուածքի մի ձեւ, հէնց այն պատճառով, որ նրանք տիպ չունեն, և օրիորդ Շէրը այդ սիրունիկ գէմքերից մէկն էր:

Ի՞նչ հրճուանք զգաց նա, երբ կառքը մտաւ թաւշանման սէղով ծածկուած և դարաւոր կնձնիներով եղերուած շաւիզը, որի ծայրում սպասում էր նրան Ասլինին, վանդակի դուռը լայն բացած: Այդ օրից սկսուեց նրա համար այն դիւթական կեանքը, որ նա երազում էր այնքան ժամանակ: Ճոխութիւնը հանդէս էր դալիս նրա առաջ իր բոլոր ձեւերով, սկսած դահնվաների հոյակապութիւնից, աննեալիների ահադին բարձրութիւնից և ջերմոցի ու ախոռատան փարթամութիւններից, մինչև ամնանաշնչին մանրամասնութիւնները, ինչպէս օրինակ, սըփոցը ծածկող ծաղկազամբիւղները, ծառաների խօսելու սառը եղանակը և աիկին ֆրօմօնի տխուր ու տաղտկաձայն «կառքը լծեցէք»-ը, որոնց մէջ կարծէք խտացած էր ճոխութիւնը, այն անուշահոտութիւնների նման, որոնց մի կաթիլը բաւական է բուրմունք տարածելու ամրող սենեակի մէջ...

Եւ որքան լու էր զգում նա իրան հարուստներին յատուկ այդ նրբութիւնների մէջ: Ի՞նչ ասափճան սազում էր նըրան այդ կեանքը: Նրան թւում էր, թէ ինքը երբէք չէ էլ ապրել ուրիշ պայմաններում:

Յանկարծ, այդ հոգեզմայլ վիճակում, ֆրանցից մի նամակ եկաւ, որ յիշեցրեց նրան իրականութիւնը, իր ապարան՝ ոռմիկով ծառայողի կնոջ զիրքում և այն դժուծ բնակարանները, որոնցից մէկը նա պէտք է անպատճառ վարձէր մի օր ամնաբարձր յարկում մի որ է և խզդուկ տան, որի օդը, թշուառութեամբ տողորուած ծանր օդը, նրան թւում էր, թէ ծծում է արդէն:

*Հրաժարութել ամուսնանալուց:*

Այդ ի հարկէ նա կարող էր անել, որովհետեւ ոչ մի զրաւական չէր տուել բացի խօսքից: Բայց այդ վեսացուն ձեռքիցը որ գնար, ով գիտէ, յետոյ այնպէս չըր լինի, որ ինքը նըրան ախսուէր:

Այդ՝ փառասիրութիւնից դժուած գլխում ամնաստարօրինակ մտքէր էին ժաժ զալիս: Երբեմն, երբ Գարդինուա պապիկը, որ նրա պատուին այլևս չէր հագնում իր որսորդական հին բաճկոնները և բրդէ ժիշտները, կատակ էր անում հետք ու կամաւ հականառում նրան, որպէս զի որ և է անհամեստ պատասխան դուրս քաշի բերնից, նա խոր խոր նայում էր ծերուկի աջքերի մէջ առանց պատասխանելու և սառը կերպով յառած աչքերով: Ախ, եթէ գոնէ տասը տարով ջահել լիներ այդ ծերուկը... Բայց տիկին Գարդինուա դառնալու միավոր երիխար չը զբաղեցրեց նըրան: Մի նոր անձնաւորութիւն հանդէս եկաւ նրա շուրջը, մի նոր յոյս ծաղից նրա սրառում:

Սիդօնիի գալուց յետոյ Փօրժ Ֆրօմօնը, որին առաջ միմիայն կիրակի օրերն էին տեսնում Սալլինիում, սովորութիւն էր արել ձաշելու գալ գրեթէ ամեն օր:

Մի բարձրահասակ երիտասարդ էր նա, քնքշակաղմ, գունատ և չնորհալի: Հօրից ու մօրից որբ և հօրեղբօր ձեռքի տակ մնեցած, նա հօրեղբօր ժառանգն էր լինելու առնարի մէջ և հաւանականօրէն նաև կլէրի ամուսինը: Այդ արդէն պատրաստ ապագային շատ սառն էր վերաբերում նա: Նախ և առաջ, առևտուրը տաղտկացնում էր նրան: Ինչ վերաբերում է կլէրին, նրանց մէջ, գոնէ Փօրժի կազմից, ոչինչ չը կար բացի միասին դաստիարակուելուց առաջ եկած պարզասիրտ մտերմտւթիւնից և սովորական գարձած սրտակցութիւնից:

Իսկ Սիդօնիի ներկայութեամբ նա, ընդհակառակը, հէնց սկզբի բոպէից քաշւում ու ամաչում էր և մի և նոյն ժամանակ ցանկանում էր տապաւորութիւն գործել և առնասարակ բոլորովին փոխուած էր զգում իրան: Այդ աղջիկը ունէր իսկ և իսկ այն կեղծ և փոքր ինչ անվայել կանանց յատուկ սիրունութիւնը, որ պէտք է անպատճառ գուր գար այդ փատին, և շատ չանցած Սիդօնին նկատեց, որ ինքը տապաւորութիւն է գործում նրա վրայ:

Երբ երկու ընկերուհիները զբօնում էին ծառաստանի խորքում, միշտ Սիդօնին էր յիշում Պարիդի գնացքի դալու ժամը: Նրանք երկաւակ զնում էին վանդակապատի մօտ սպասելու և կողներին, և Փօրժը իր առաջին հայեացքը միշտ ուղղում էր Սիդօնին, որ իր ընկերուհուց մի քիչ յետ էր կանգնած լինում, բայց աչքի խսող գիրքով ու կերպարանքով: Այդ խսող նրանց մէջ տեղ բաւական ժամանակ: Սիրոյ մասին խօսք չէր լինում մէջները, բայց իրար ասած բոլոր խօսքերը, իրար ուղղած բոլոր ժամաները լի էին սիրոյ խոստովանութեամբ և ծածկախօսութեամբ:

Մի ամպամած ու տօթ ամարային երեկոյ կլէրն ու Սիդօնին, ձաշից վեր կենալուն պէս, գնացին զբօննելու նշդարիների երկար ծառուղիում: Մի քիչ յետոյ նրանց միացաւ և Փօրժը: Երեքն էլ խօսում էին անտարբեր կերպով, հոձուացնելով խճաքարերը ծոյլաքայլ ոսների տակին, երբ յանկարծ տիկին Ֆրօմօնը կանչեց կլէրին զղեակը: Փօրժը և Սիդօնին մնացին մինակ և շարունակեցին դէալի առաջ իրանց զբօսանքը, առաջնորդուելով աւագի ազօտ սպիտակութեամբ, առանց խօսելու և առանց մօտենալու միմևանց:

Նշդարիների շարքը շարժւում էր դոլ քամուց: Լճակի յուղուած ջուրը ծեծում էր ալիքներովը փոքրիկ կամուրջի կա-

մարները, և ակացիաներն ու լորիները, որսնց պոկուած տերեւները պտոյտ պտոյտ էին դալիս քամու յորձանգում, բուրմունք էին սփռում էլեքտրականացած օղում... Նրանք զգում էին իրանց մրրկի սարսաւլից ու թափանցող մթնոլորտում: Նրանց շաղուած աչքերի խորքում բոցալառում էին երկարածիկ փայլակներ, նման այն փայլակներին, որոնք այդ բոպէին լուսաւորում էին հորիզոնի եզերքը...

—Ա՛խ, ինչ հրանալի լուսատանիկներ են... ասաց Սիդոնին, որին նեղում էր այդ լուսթիւնը՝ թափանցուած զանազան խորհրդաւոր ձայներով:

Սիդամարգի եղերքում կանաչ ու թրթուն կայծեր լուսաւորում էին խոտերի ջիւղերը: Սիդօնին կուացաւ վերջնելու նրանցից մէկը իր ձեռնոցի վրայ: Ժօրժը և կաւ չոքեց նրա կողքին, և նրանք, զլուխները քաշ քցած մինչև խոտը ու քսուելով միմեանց մազ մազի և երես երեսի, մի բոպէ նայեցին իրար լուսատանիկների: տարածած լոյսով: Տիքան տարօրինակ և հրաշալի թուաց Սիդօնին ժօրժին այդ կանաչ ցողքի մէջ, որ, բարձրանալով մինչև նրա կուացած դէմքը, լուսաւոր մշտչ էր կաղմում նրա կուացուր մալերի նրաւթել ցանցում... Ժօրժը, որ կուռը քցել էր նրա մէջքովը, յանկարծ դպաց, որ նա անձնատուր է լինում, և սղմնց նրան իր կրծքին երկար ու մոլիգին:

—Այդ ի՞նչ էք վնասում, հարցրեց Կլէրը, կանգնած ստուերում նրանց յատեին:

Այլայլուած, կոկորդը սեղմուած, Ժօրժը այնպէս սաստիկ գողում էր, որ չը կարողացաւ պատասխան տալ: Սիդօնին, ընդհակառակը, մնի կացած տեղից ամենամեծ հանգստութեամբ և ասաց, ուղղելով շրջաղղեատը.

—Լուսատանիկներ են... Տես, որքան կան այս երեկոյ... Եւ ի՞նչովէս պապզում են:

Նրա աչքերն էլ սրազրում էին օտարոտի փայլով:

—Մրրիկ է լինելու անշուշտ... մրմնջաց Ժօրժը, գեռ դողողալով ստից մինչև գլուխ:

Եւ իրաւ, մրրիկը մօտենում էր: Երբեմն երբեմն տերեների և փոշու ահազին յորձանկներ սլամում էին ծառուղու մի ծայրից միւսը: Նրանք էլի մի քիչ անցան և յետոյ յետ դարձան դահլիճը: Աղջկերքը վերցրեցին իրանց ձեռագործը, իսկ Ժօրժը փորձեց կարգալ մի լրազիր, մինչ տիկին մրօմօնը պլազմացնում էր իր մատանիները ու ալ Գարզինուան փեսայի հետ բիլիարդ էր խաղում կողքի սենեակում:

Ի՞նչ երկար թուաց Սիդօնիին այդ երեկոն, երբ նա մի

ցանկութիւն ուներ միայն,—մենակ մնալ ու աղաս անձնատուր Անել իր մտքերին:

Բայց ի՞նչ ցնծութիւն, ինչ ծրագիրներ, երբ նա, վերջապէս միայնակ իր փոքր սենեակի խաղաղութեան մէջ, հանդցրեց ճրագը, որ խրժնեցնում է երազները, չափազանց պայծառ լուսաւորելով իրականութիւնը: Փօրժը սիրում էր նրան, Փօրժ Թրօմնը, դործարանի ժառանգը... Նրանք կը պատկռեն, նա հարուստ կը լինի... Որովհետեւ այդ փոքրիկ ծախու հոգու մէջ սիրոյ առաջին համբոյըը կարողացել էր դարձնեցնել միմիայն մնախառ ու շռայլասէր մտքեր:

Հաստատ համոզուելու համար, թէ Փօրժը անկեղծ սիրահարուած է, նա աշխատում էր մտաբերել իրանց սիրային տեսարանի ամենավորը մանրամանութիւնները,—Փօրժի աչքերի արտայայտութիւնը, զրկախառնութեան սաստկութիւնը, և լուսատնիկների մշուշածն լոյսի մէջ բերան առ բերան թոթոված երդումները, որ բոպէլ հանգիստաւորութիւնը ընդ միշտ զրոյ մել էր նրա սրտում:

Ա՛խ, Սակինի լուսատանիկներ:

Ամբողջ գիշերը նրանք աստղերի նման կայծին էին տալիս նրա վակ աչքերի առաջ: Ծառաստանը լիքն էր նրանցով, մինչև իր ամենամույլ շաւկների խորքը: Լապտերների նման նըրանք շարք էին ընկել սիրամարգերի շուրջը, ծառերի վրայ, մացաների թաւուաների մէջ... Ծառուղիների նուրբ աւաղը, լճակների ալիքները փողփողում էին կանաչ կայծերով և այդ բոլոր խոշորացուցային շողբերը կարծէր մէ լուսալառութիւն էին կազմում, որով պճնուել էր Սակինին ի պատիւ Սիրօնիկ տօնելով նրա նշանդրէքը Փօրժի հետ...

Միւս առաւօտ, վեր կենալիս, նա արդէն գլխումը պատրաստ ունէր իր ծրագիրը: Փօրժը սիրում էր իրան, այդ անկանակած էր: Սակայն միաք ունէր նա արդիօք պսակուելու իր հետ... Այդ շատ կասկածելի էր թւում այդ խորամանկ ալջիան: Բայց այդ չէր վախեցնում նրան: Նա իր մէջ զգում էր այնքան ոյժ, որ կարողանար յաղթել այդ հոգով երեխային, որ միանգամայն և թոյլ էր բնաւորութեամբ և կրքուու Պէտք էր միայն դիմադրել նրան, և այդպէս էլ արեց Սիրօնին:

Մի քանի օր շարունակ նա առան էր, անուշադիր, դիտմամբ կոյք և զուրկ յիշողութիւնից: Փօրժը ուղում էր խօսել հեաը, կրկնել երանելի բոպէն, բայց Սիրօնին խուսափում էր նրանից, միշտ մէկին ու մէկին զնում իր և նրա արանքը: Այն ժամանակ նա նամակ, զրեց:

Փօրժը ինքն էր տանում նամակները դնելու մի ժայռի

խոռոչի մէջ, «Ուրուական» կոչուող վճիտ աղբիւրի մօտ, որ բզիսում էր ծառասատանի խորքում յարդէ ծածկի հովանու տակ: Սէլօնին հիանալի էր գտնում այդ: Երեկոյեան պէտք էր սուտ ասել, մի որ և է պատրուալի հնարել մնամնակ գնալու աղբիւրը: Ծառուղիները ծածկող ստուերը, դաժան գիշերուայ զարդանդը, արագ քայլուածքը և յուզմունքը քաղցր բարախնեցնում էին նրա սիրութ: Խոռոչում նա զմնում էր նամակը ցօղապատու ցրտահար աղբիւրի սաստիկ սառնութիւնից և լուսնի լուսով այնքան սպիտակ, որ նա չուտով թագցնում էր, վախենալով թէ կարող են տեմնել ու բռնել ձեռքին:

Յետոյ, մենակ մնալով, ինչ հրճուանքով էր նա բանում այդ նամակը, ջոկում նրա գիւթական տառերը և սիրային նախալասութիւնները, որոնց խօսքերը թռչկոտում էին, շրջապատուած կազոյս ու կեղին շացուցիչ չքջանակներով, կարծեաթէ սպայծառ արեւում կարգալիս լինէր նամակը:

«Ես սիրում եմ ձեզ... Սիրեցէք ինձ...» գրում էր Ժօրժը հազար և մի ձեռով:

Սկզբում նա չէր պատասխանում այդ նամակներին, բայց երբ զգաց, որ Ժօրժը, յուսահատուած իր սառնութիւնից, արդէն թունդ սիրահարուել է և ոտով գլխով իրանն է, յայտնեց կտրական կերպով.

—Ես կարող եմ սիրել միայն իմ ամուսնուն:

Օ՛հ, արդէն կտրական կին էր այդ փոքրիկ Շէքը...

## V

Ինչպէս վերջացաւ փոքրիկ Շէքի պատմութիւնը:

Եկաւ սեղատեմքեր ամիսը:

Որսորդութիւնը խմբեց զգեսակում մի բազմամարդ բնիկնութիւն, աղմկալից ու գտեհիկ: Սկսուեցին երկար ու ձիգ ճաշեր ու ընթրիքներ, որոնցից այդ հարուստ բուրժուաները դժուարութեամբ էին վեր կենում, դանդաղ, յոգնած և թմրած, ինչպէս զեղջուկներ: Տնեցիք զնում էին որսորդների առաջը աշնանային մթնչաղերից ցրտացած ճանապարհներով: Մշուշ էր բարձրանում հնձուած արտերից, և մինչզեռ խրանած թռչունները վախուռած ճիշերով զեանահան թռչկոտում էին ակօմների միջով, գիշերը կարծես դուրս էր գալիս չքջանակ անտառներից, որոնց մուայլ զանգուածները մնանում էին, ձգուելով դաշտի երեսով:

Վառում էին կառքի լաստաներներ և, տաք տաք վաթառքետը, 1901.

թուելով վերմակների մէջ, արագ վերադառնում էին տուն, զոլ քամին՝ երեսներին: Շքեղ լուսաւորուած դահլիճը լցւում էր աղմուկով ու ծիծաղով:

Կէր մօրօմօնը, նեղուելով շրջապատողների կոպտութիւնից, չէր խօսում ամեննեին: Սիդօնին հանդէս էր զալիս իր ամբողջ փայլով: Զրօսանքը աշխոյժ էր տալիս նրա գունատ գէմքին և պարիգեամ աշերին: Նա գիտէր լաւ ծիծաղել, հասկանում էր թերես մի քիչ աւելի, քան պէտք է, և այստեղ գտնուող տղամարդկանց համար թւում էր միակ կինը ներկայ եղողների մէջ: Նրա յաջողութիւնը վերջնականապէս գժուացրեց Փօրժին, բայց որքան նա առաջ էր գնում իր սիրահարութեան մէջ, այնքան զուսպ էր ցոյց տալիս իրան Սիդօնին: Այդ տեսնելով, Փօրժը վճռեց, որ նա իր կինը կը լինի, և ինքն իր առաջ երդուեց այդ բանում այն չափազանցրած հաստատակամութեամբ, որ յատուկ է թոյլ բնաւորութիւններին, որոնք կարծես աշխատում են առաջուց տապալել այն խոչընդուաները, որոնց առաջ, լաւ դիտեն, որ յետոյ անդի են տալու մի օր...

Փոքրիկ Շէրի համար այդ ամեննապանչելի բոպէն էր իր կեանքում: Նոյն իսկ մի կողմ թշողած փառասիրական նպատակները, նրա կօքէտ ու ծածկամիտ բնաւորութիւնը մի տարօրինակ հրապար էր գտնում այդ սիրապին գաւի մէջ, որ իրանք խորհրդաւոր կերպով վարում էին տօնախմբութիւնների և խօրախօճանկների մէջ:

Շրջապատողներից ոչ ոք ոչ մի կասկած չէր տանում: Կլէրը ջանէլութիւնն այն անարատ ու սրանչելի շրջանումն էր գտնուում, երբ անփորձ միտքը կոյլ հաւասարվ է վերաբերուում բոլոր ծանօթներին, միանգամայն անդէտ գաւաճանութիւններից և խարէութիւնից: Պ. մօրօմօնի ուշ ու միտքը իր առեստուրի հնատ էր: Նրա կինն էլ քափ ու քրտինք կտրած սրբում էր իր զուգսեղէնը: Վախ կարող էր ազգել միայն ծեր Գարդինուան իր սրատես մանր աչքերով, բայց Սիդօնին զուարձացնում էր նրան և եթէ նոյն իսկ նա մի բան էլ իմանար, անկարենի է, որ արգելք հանդիսանար նրա ասլաղային:

Սիդօնին յնծութեան մէջ էր, երբ մի յանկարծական, անակնկալ աղէտ եկաւ չքայնելու նրա յոյսերը:

Մի կիրակի առաւաօտ որսից վերադառնալիս պ. մօրօմօնին բերեցին մահացու վիրաւորուած: Երէներին կալմէջ արած ժամանակ այծեամբն ուղղուած գնդակը դիմել էր նրա գլխին, քունքի մօտից: Դզեակը տակն ու վրայ եղաւ:

Բոլոր որսորդները, և նրանց թւում նաև անշնորհք անծանօթը, շտապով ճանապարհ ընկան դէպի Պարիզ, կլէրը, որ

քիչ էր մնում ցնդէր վշտիցը, մտաւ այն սենեակը, ուր հոգեւ վարքի մէջ տանջւում էր հայրը, ու փակուեց այնտեղ, և Ռիսլէրը, որին իմաց էին տուել աղէտի մասին, չուտով եկաւ Սիդօնիին տանելու:

Գնալու նախընթաց երեկոն Սիդօնին վերջին անգամ տեսակցութիւն ունեցաւ Ֆրանցի հետ «Ուրուականի» մօտ, հրաժեշտի տեսակցութիւն, ծանր ու զայտագողի և միանգամայն հանդիսաւոր՝ նորհիւ մահուան մերձակայութեան: Սակայն երդուեցին սիրել միմեւանց յաւիտեան և ապայմանաւորուեցին նաև մակաղրութեան տեղի մասին: Ու յետոյ բաժանուեցին:

Տխոն վիրադարձ:

Նա զնում էր վերսկելու իր սովորական կեսմնքը, ուղեկցուած Ռիսլէրի յուսահատութեամբ, Ռիսլէրի, որի համար սիրելի պատրօնի մահը մի անփոխորինելի կորուստ էր: Իսկ տուն հասնելով, նա ստիպուած էր ամենաաշնչին մանրամասնութիւններով պատմել, թէ ինչպէս էր անց կացրել այնտեղ ժամանակը, խօսել գիւակում ապրոյների մասին, նրանց մօտ եկող հիւրերի մասին, տօնախմբութիւնների, ճաշկերոյթների և վերջին աղէտի մասին: Ի՞նչ տանջանք այդ աղջկայ համար, որ անձնատուր միշտ մի և նոյն մաքին, անքան կարեք ունէր լուսթեան և միայնակութեան Բայց դրանից սարսափելին էլ կար:

Հէնց առաջին օրից Ֆրանցը եկաւ նստեց իր հին տեղը, և նրա հայեացքները, որոնք վնտուած էին Սիդօնիին, նրա խօսքերը, որոնք ուզգուած էին միմիայն Սիդօնիին, անտամելի պահանջուած էին թւում նրան:

Զը նայելով իր ծայրայեղ ամակլուսութեան ու անվաստ հութեան, խեղճ երիասարդը կարծում էր, թէ ինքը իրը ընդունուած և անհամբեր սիրահար, իրաւունքներ ունի իր սիրելիի վերաբերմբ և փոքրիկ Շէրը ստիպուած էր գուրս զալ իր երազական աշխարհից սարտասիսան տալու համար այդ պարտասիրոջը ու որքան կարելի է յատաձեկ վճարի օրը:

Սակայն հասսու մի օր, երբ այլնո անհնար էր շարունակել անորոշ դրութիւնը:

Նա խոստացել էր պսակուել Ֆրանցի հետ, երբ նա որոշ դիրք ձեռք բերէր, և ահա այժմ նրան առաջարկում էին ինժէնէրի տեղ հարաւում, Գրամեկոմբի մետաղադործական գործարանում: Այդ բաւական էր համեստ սարտասի համար:

Այլիս ոչ մի հնարք չը կար պսակը յետաձեկու:

Պէտք էր կատարել խոստումը կամ գանել մի որ և է պատրուակ: Բայց ի՞նչ պատրուակ...

Այդ վերահաս վտանգի ժամանակ նա յիշեց Դէղիրէին:

Թէև կաղիկ օրիորդը երեքը չէր յայտնել նրան իր սրտի պաղտանիքը, այսուամենայնիւ նա գիտէր, որ Դէղիրէն սիրահարուածէ Ֆրանցի վրայ։ Վաղուց ի վեր նա գուշակել էր այդ իր՝ կօքէս աղջկայ աչքերով, որոնք, իբր պարզ ու փողփողուն հայելիներ, յորացնում էին ուրիշների բոլոր մտածմունքները առանց ոչինչ թոյլ տալու տեմնել նրա մտածմունքներից։ Թէրես մինչև անգամ այն միաքը, թէ մի ուրիշ կին սիրում է իր նշանաձին, ոլլբաւմ աւելի տանելի նրա համար Ֆրանցի սէրը և ինչպէս արձաններ են դնում շիրիններում նրանց տիսրութիւնը նուազեցնելու համար, այնպէս էլ Դէղիրէի մանրիկ ու գունատ կերպարանքը այդ սև ապագայի չէմքում, նուազեցնում էր այդ ապագայի մուայլութիւնը։

Իսկ այժմ այդ բանը շատ յարմար ու պատուաւոր պատրուակ էր նրա համար՝ տուած խօսքիցը յետ կանդնելու։

—Զէ, գիտես, մայրիկ, ասաց նա մի օր տիկին Շէրին, ես երեք չեմ համաձայնիլ Դէղիրէի նման բարեկամուհու անբախտութեան պատճառ լինել։ Խիղճ յետոյ սաստիկ կը տանջի... Խեղճ Դէղիրէ, միթէ չես նկատել ինչ խղճալի տեսք ունի իմ վերադարձից յետոյ, ինպէս աղաչական հայեացքով է նայում ինձ... Զէ, ես չեմ կարող նրան այդպիսի վիշտ պատճառել, ես չեմ կարող խլել նրա ձեռքից Ֆրանցին։

Տիկին Շէրը հիանում էր իր աղջկայ վեհարառութիւնից, բայց այդ գոհաբերութիւնը չափազանցրած էր գտնում, և առարկութիւններ էր անում։

—Տես, լաւ մտածիր, զաւակս, մինք հարուստ մարդիկ չենք... Ֆրանցի նման վեսացու ամեն օր չես ճարի։

—Աւելի վաստակած ամենեին չեմ պասկաւի... կտրականապէս յայտնեց Սիդօնին և, աջող գտնելով այդ պատրուակը, եռանգում կերպով կազաւ նրանից։ Ոչինչ չը կարողացաւ փոխել տալ նրան իր որոշումը, —ոչ Ֆրանցի արտասուլքները, որին յուսահատեցնում էր այդ մերժումը, որի անորոշ պատճառները նոյն իսկ չեխն ուղղում բացատրել նրան, ոչ էլ Խիսլէրի թախանձանքները, որին արիկին Շէրը, իբր ամենաթունդ գաղտնիք, չնջել էր իր աղջկայ դրդումները և որ, չը նայելով ոչ մի բանի, չէր կարողանում չը հիանալ այդպիսի գոհաբերութիւնից։

—Զէ, մի մեղադրիլ Սիդօնին... Նա աղջիկ չէ, այլ հրեշտակ<sup>\*</sup>... Ասում էր նա իր եղբօրը, աշխատելով հանգստացնել նրան։

\*) C'est un anche — Թիսլէրի՝ գերմանախօս շվեյցարացու արտասահնութեամբ։

—Այո, այո, կատարեալ հրեշտակ, հոդոյ քաշելով հաստատում էր տիկին Շէր, այնպէս որ խեղճ գաւաճանուած սիրահարը նոյն իսկ իրաւունք չունէր տրատունջ յայտնելու։ Յուսահատուած, նա վճռեց հեռանալ Պարփղից, և այնքան սաստիկ էր այժմ նրա փախչելու ցանկութիւնը, որնա, Գրան-Կոմբը շատ մօտ համարելով, ինդրեց և ստացաւ Սուէցի ջրանցքի<sup>\*</sup> աշխատանքների վրայ վերահսկողի պաշտօն իսմայլիլիայում։ Նա դնաց առանց մի բան իմանալու կամ առանց մի բան իմանալ ուզելու Դէղիրէի սիրոյ մասին, և սակայն, երբ դնալուց առաջ նկատ հրաժեշտ տալու, խեղճ կաղֆկը բարձրացրեց գէպի նա իր ամաչիտ սիրուն աչքերը, ուր շատ պարզ գրուած էր.

«Ես սիրում եմ ձեզ, եթէ նա ձեզ չէ սիրում...»

Բայց Ֆրանց Ռիմերը չը գիտէր կարգալ այդ աչքերի գիրը։

Բարեբախտաբար, տանջուելու սովոր հոդիները անսպառ համբերութիւն են ունենում։ Իր սիրելիի ձանապարհ ընկնելուց յետոյ, խեղճ կաղֆկը նորից սկսեց իր միր աշխատանքը, պատիր յոյսերով ապրելու այն ընդունակութեամբ, որ ժառանդել էր հօրից և որ նրա մէջ աւելի նուրբ կերպով էր արտայայտուած չորհիւ նրա կանացի բնաւորութեան։

—Ես կը սպասեմ Ֆրանցին։

Եւ այնուհետեւ նա սկսեց լայն-լայն բանալ իր թունիկների թերը, կարծես թէ նրանք բոլորը մէկ մէկի յետեից թունում էին Եգիպտոսի իսմայլիաքաղաքը... Իսկ այդ շատ հեռու էր։

Մարսէլից, նախ քան նաւը նստելը, Ֆրանց Ռիմերը մի վերջին նամակ էլ գրեց Սիդոնիին, միանդամայն և ծիծաղաշարժ և սրտայոյզ, որի մէջ, խառնելով ամենատեխնիկական մանրամանութիւնները ամենասրտածմլիկ մնաս բարեներին, թշուառ ինժէնէրը յայտնում էր, որ ինքը, խորտակուած սրտով, ճանապարհ է ընկնում «հաղար հինգ հարիւր ձիռ ոյժ ունեցող ապրանքատար և մարդատար Սահիբ նաւով», կարծես թէ յոյս ունէր, թէ շոգենաւի ձիայոյժերի այդ ահագին քանակութիւնը անպատճառ տպաւորութիւն կը գործի ապերախտ օրիորդի վրայ և յաւիտենական խղճահարութիւն կ'ազդի նրան։ Բայց Սիդոնիի զլուխը բոլորովին ուրիշ բաներով էր զբաղուած։

Նրան սկսում էր անհանգստացնել Ժօրժի լուսթիւնը։ Սավինիից հեռանալուց յետոյ նա միայն մի նամակ էր ստացել և այնուհետեւ ոչինչ։ Իր գրած բոլոր նամակները մնում էին ան-

\*.) Սուէցի պարանոցի ջրանցքի բացումը տեղի ունեցաւ 1869 թուին։  
Վ. Թ.

պատասխան։ Ճիշտ է, որ, ինչպէս Ռիսլէրն իրան ասել էր, Փօրժը շատ զբաղուած էր և որ հօրեղբօր մահովը նրան էր մնացել գործարանի ղեկավարութիւնը, որ նրա ոյժերից բարձր պատասխանատութիւն էր դրել նրա վրայ... Բայց ինչպէս կարելի է ոչ մի խօսք չը գրել։

Սրահի պատուհանից, ուր նա նորից սկսել էր իր ուխտազնացութիւնը, որովհետև այնպէս էր սարգել, որ այլ ևս չէր գնում օրիորդ Լը Միքի մօտ, փոքրիկ Շէքը աշխատում էր տեսնել իր սիրականին, գիտում էր նրա երթեւեկութիւնը բակից բակ, չէնքից չէնք, և երեկոյեան, Սալինիկի գնացքի ժամին, նայում էր, թէ ինչպէս նա կառք է նստում երկաթուղու կայարանը երթալու, որպէս զի այնտեղից զնայ իր հօրեղբօր այրիի և աղջկայ մօտ, որոնք սուզի առաջին ամիսները անց էին կացնում գիւղում, պատի գղեակում։

Այդ բոլորը յուզում, սարսափեցում էր նրան, և այն, որ գործարանը այդքան մօտ էր, աւելի ևս զգալի էր գարճնում նրա համար Փօրժի խուսափումը։ Աշխարհիք բաներ են։ Բաւական էր մի քիչ բարձրածայն տալ նրա անունը, որպէս զի նա շուռ գար Սիդօնիի կողմը։ Մի հատիկ պատ էր միայն նրանց բաժանողը։ Եւ սակայն այդ բոլէին նրանք շատ հեռու էին իրարից։

Ցիշում էր, փոքրիկ Շէք, այն ձմերային տխուր երեսկոն, երբ բարի Ռիսլէրը արտասովը կերպարանքով մտաւ ձեր ծնողների մօտ ու ասաց. «Նշանաւոր նոր լուրեր»։

Նշանաւոր նոր լուրեր, արդարեւ

Փօրժ Ֆրօմօնը հէնց նոր յայանել էր նրան, թէ, իր հօրեղբօր՝ մահուան մահուում յայտնած ցանկութեան համաձայն, ինքը ամուսնալու էր Կլէրի հետ \*), և թէ, ոչ մի կերպ չը կարողանալով մենակ ղեկավարել գործարանը, ինքը վճռել է նրան ընկերակից դարձնել իրան, առներական տան անունը գարճնելով «Ֆրօմօն կրտսեր և Ռիսլէր աւագ»։

Ինչպէս արեցիք, փոքրիկ Շէք, որ կարողացաք պահպանել ձեր սառնասրտութիւնը խմանալով, որ գործարանը գուրս է պրծել ձեր ձեռքից և որ մի ուրիշ կին է բռնել ձեր տեղը։ Սկը երեկոյ... Տիկին Շէքը կարկատանով էր զբաղուած սեղանի մօտ, իսկ պ. Շէքը, որ երկար ժամանակ անձեռի տակ էր մնացել, չորացնում էր շորերը կրակի առաջ։ Օ՞հ, ողորմնի միջավայր,

\*) Կաթովիկների մէջ չհաս չէ համարւում ամուսնութիւնը հօրեղբօր աղջկայ հետո։

լի տիսրութեամբ և տաղտկութեամբ։ Լամզը վատ էր լոյս տալիս։ Շտապով պատրաստած ճաշից՝ չքաւորների խոհանոցի հոտ էր կանգնած սննեակում։ Մի կողմից էլ այդ՝ ուրախութիւնից զլուխը կորցրած Ռիսէրն էր տաք տաք խօսում, ծրագիրներ կազմում։

Այդ բոլոր բաները ճմլում էին ձեր սիրտը և դաւաճանութիւնը աւելի ևս սարսափելի էին դարձնում ձեր համար, համեմատութեան դնելով ձեր պարզուած ձեռքից փախչող հարստութիւնը և այդ զգուելի գծծութիւնը, որի մէջ դուք դատապարտուած էիք ապրելու...»

Սիդօնին ծանր ու երկար հիւանդութիւն քաշեց դրա չնորհիւ։

Անկողնում, լսելով վարագոյների յետեում զնցուող ապակիների ձայնը, թշուառ առջիկը կարծում էր միշտ, թէ ներքեսում փողոցով անցնում են ֆօրժի հարսանիքի կառքերը, և ենթարկում էր լուռ և անբացարելի ջղային տագնասիների, կարծես տենդի մէջ լինէր սրտի դայրոյթից, որ հալ ու մաշ էր անում նրան։

Վերջապէս, ժամանակը, ջահէլութիւնը և մօր ու մանաւանդ Դէղերէի, որ այժմ արդէն դիտէր թէ ինչ զոհ էր լերել Սիդօնին իր համար, ինսամզները յաղթեցին հիւանդութեանը։ Բայց զեռ երկար ժամանակ նա սաստիկ թուլութիւն էր զգում և սարսափելի տիսրութիւն ու լալու պահանջ, որ նրան ցնցում էր ջղաձղաբար։

Երբեմն խօսք էր քցում ճանապարհորդելու, Պարիզից հեռանալու մասին։ Երբեմն էլ ասում էր, թէ կուսանոց է ուզում մտնել, նրան շրջապատողները տանջւում էին վշափ, աշխատում էին գտնել պատճառը այդ տարօրինակի վիճակի, որ աւելի երկիւղալի էր քան հիւանդութիւնը, երբ յանկարծ նա խոսաւովննց մօրը իր տիսրութեան գաղտնիքը։

Նա սիրում էր աւագ Ռիսէրին... Նա չէր համարձակուել երբեք յայտնել այդ բանը, բայց նրան էր նա միշտ սիրելիս եղել և ոչ թէ ֆրանցին։

Այդ նորութիւնը ասլշեցրեց բոլորին և ամենից աւելի Ռիսէրին, բայց փոքրիկ Շէրը այնքան սիրուն էր, այնքան քաղցր աչքերով էր նայում նրան, որ խեղճ մարդը իսկոյն, իշացածի պէս, սիրահարուեց նրա վրայ Այն էլ կարելի է, որ նա, առանց գիտակցելու, վաղուց ի վեր կրում էր այդ սէրը իր սրտում։

Ահա թէ ինչն էր պատճառը, որ իր սրակի երեկոն, ջահէլտիկին Ռիսէրը, ոտից զլուխ սպիտակի՝ իր հարսանիքային դղեստում, յաղթական ժպիտով նայում էր դիմացի սրահի սպատու-

հանին, որի նեղ շրջանակում պարփակուած էին տասը տարի իր կեանքից: Այդ գոռող ժպիտը, որի մէջ արտայայտում էր նաև խորին կարեկցութիւն և փոքր ինչ արհամարհանք, որպիսին մի նոր հարստացած մարդ կարող է ունենալ դէպի իր կեանքի ակզբնական շրջանի գծեութիւնը, ուղղուած էր անշուշտ այն խեղճ ու թուլակազմ երեխային, որին, թւում էր նրան, թէ նա տեսնում է, այնտեղ, վերեռում, իր դէմուդէմը, անցեալի և դիշերուայ խորքում, և որին, կարծես, նա ասելիս լինէր, ցոյց տալով գործարանը.

—Ի՞՞նչ կ'ասես հիմա, փոքրիկ Շէք... Տեսնում ես, ես արդէն այստեղ եմ...

Թարգմ. Տ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

(Կը ռարունակուի)

## ԲԱԲԻՍԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՊԱՐՄԿԱՍՏԱՆՈՒՄ \*)

Բարիականութեան ծագումն, — նրա վարդապետութիւնները, — նրա սուբր զրքերը, — նրա կրած բարեշրջումները հիմնադիր Բաբից քետոյ, — նրա աղաղան:

Ինչպէս յայտնի է, ժամանակակից Պարսկաստանը, նախ կին վառաւոր Իրան և Թուրքան (Երան և Տաներան) պետութեան այս ողորմելի բեկորը, դաւանում է մահմեդական — չիս կրօնը: Շիա աղանդը, որ քարոզում է, թէ տասնեւրկու իմամներից յևոյ, զիտութեան և ճշմարտութեան դուռն (բար) փակուել է, ծնունդ է տուել բաղմաթիւ աղանդների և հերձուածների, որոնցից շատերը, ինչպէս օրինակ, Սուֆիների, Դաւուդիների, Դահրիների, Ալալահիների — միտուիկ փիլիսոփայական աղանդները — մինչև այսօր ևս շարունակում են իրանց գոյութիւնը: Մանաւանդ երկարատև կեանք ունեցաւ Սուֆիների աղանդը, որի փայլուն ներկայացուցիչ և արտայայտիչ հանդիսացաւ: XI դարում, Սելջուկների ժամանակ ծաղկող նշանաւոր միստիկ-բանաստեղծ Օմար Խայեամը, իսկ XII դարում՝ Սեփեկեան հարստութեան հիմնադիր Շահ Խսմայիլը:

Սակայն այդ աղանդներից ոչ մէկը չը կարողացաւ այնքան լայն ծաւալ ստանալ, այնքան զարգանալ, այնքան շատ կուսակիցներ և հետեղներ ունենալ, ինչպէս բաբիականութիւնը կամ բեհայականութիւնը, որովհետեւ բարիների թիւն այսօր հաշւում են մօտ 3 միլիոն Պարսկաստանում և 2 միլիոն կովկասում, Միջին-Ասիայում, Անդրկասպեան աշխարհում, Թիւրքեաստանում ու Փոքր-Ասիայում՝ այդ երկիրների մահմետականների մէջ. ընդամենը ուրեմն 5 միլիոն: Ի նկատի ունե-

\*) Ներկայ յօղուածն ամփոփում է այն լիակատար զեկուցման (Le Babisme en Perse), որ հեղինակը կարդացել է անցեալ տարի Պարսկում, Սորբոնի դահլիճում, սեպտեմբերի 1—8-ին գումարուած «Կրօն-ների պատմութիւն միջազգալին կօմդրէսում» (Congrès International d' Histoire des Religions):

նալով, որ Պարսկաստանի ամբողջ ազգաբնակութիւնը և մի-  
լիօնից աւելի չէ, մենք տեսնում ենք, որ այդ ազգաբնակու-  
թեան զլութէ կէսը դաւանում է, թէև ծածուկ, բարիական  
կրօնը, որ այդպիսով, մեծ վտանգ է սպառնում իսլամին, և,  
տարակոյս չը կայ, գէթ նրանց համար, որոնք շփուել են պար-  
սիկ ժողովրդի հետ, թէ բարիութիւնը Պարսկաստանի ապագայ  
կրօնն է և կոչուած է յեղացրծելու նրանի ամբողջ կազմը:

Բարիութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ րեակցիա, բողոք,  
իսլամի ստրկացնող, մահացնող բէժիմի գէմ, այն բարոյական  
ճնշման գէմ, որ իսլամը գործել է և գործում է թշուառ, խեղճ,  
ի բնէ հեղ ու մնալը քաղաքակրթութեան ընդունակ պարսիկ  
արիական տարրի վրայ: Շիա իսլամը իր հակամարդկացին, յե-  
տադէմ գաղափարներով, իր այն վարդապետութեամբ, թէ գի-  
տութեան և ծամարտութեան դուռը փակուել է ընդ միշտ մարդ-  
կանց առաջ 12 իմամներից յետոյ, իր ատելութեամբ և արհա-  
մարհանքով գէպի օտար ապկերը, գէպի օտար գիտութիւնները  
ձգել է Պարսկաստանը և պարսկի ժողովուրդը տնտեսական, բա-  
րոյական և մտաւոր ամենաողորմելի վիճակի մէջ: Իսլամ կրօնի  
լուծն այնքան խորտակով, ձնչող է, որ այլևս անտանելի է  
դարձել, և ահա բարիականութիւնը, վլուխ բարձրացնելով  
այդ ստրկական լծի գէմ, հակադրում է նրան երկու սկզբունք  
ինքինադ և իրքիֆազ (միութիւն և համերաշխութիւն), որով-  
հետեւ այդ երկու սկզբունքի մէջ է կայանում բարիութեան  
էական վարդապետութիւնը. սկզբունքներ, որոնք արամադօրէն  
հակառակ են իսլամի դաւանանքին:

Բարիութիւնը ծնանգ է առել 1844-ին: Նրա հիմնադիրն է  
մի երիտասարդ, Միրզա Ալի-Մուհամմէդ, որ ծնուել է Շիրա-  
զում 1819-ին և զլխատուել 1850-ին, 31 տարեկան հասակում,  
Նասրէդդին-Շահի հրամանով: Նա վերակոչուել է Բաք (գուռն),  
որովհետեւ, մի օր, երբ շիա աստուածաբանները, սէյխները և  
ուլչմները (գիւնականները) հաստատում էին, թէ գիտութեան  
և ծամարտութեան դուռը փակուած է, երիտասարդ Միրզա-  
Ալին գոռաց: «Ո՞չ, գիտութեան և ձշմարտութեան դուռն» (բար)  
բացուած է և ես եմ այդ գուռն»: Այդ նշանաւոր օրը, 1844 թ.  
մայիսի 12-ը յայտնութեան (զուհուր) և բարիութեան ծագման  
օրն է համարւում և ամեն տարի տօնում է բոլոր բարինների  
կողմից:

Այդ օրից սկսած երիտասարդ հիմնադիրը ձանաչուեց իբրև  
Բաք, Դուռն, որով Աստուած յայտնում էր մարդկանց իսկական  
գիտութիւնը և ծամարտութիւնը, որոնք մինչև այդ օր անծանօթ  
էին մնացած: Բարն այդ ժամանակ 25 տարեկան էր: Բոլոր

հարստանաբուածները և շիա անբարոյական կղերից ճնշուածները, գիտութեան և խօսքի բոլոր ծարաւիները վազեցին Պարսկաստանի ամեն անկիւններից դէպի նոր Մահդին, լալու նրա բերանից ճշմարտութիւնը, որ Աստուած կամենում էր, վերջապէս, յայտնագործել մարդկանց։ Շարշումն այնքան մեծ ծաւալ ստացաւ, որ շիա հոգևորականութիւնը զգաց, թէ դրութիւնը խախտում է և կոչում արեց Մահմէդ Շահին՝ վերջ դնելու հերետիկոսութեան, և խստիւ պատժելու հերետիկոսապետին։ Շահը առաջ դիմեց խաղաղասիրական միջոցների. նա Շիրազ ուղարկեց Թէհրանի մեծ մուշթէյիգին, Սէիդ Եահիա Դարաբիին, որ քաջ աստուածաբանի համբաւ ունէր, յայտնի աստուածաբան հոգեորականների մի ամբողջ խմբով, որպէսզի Շիրազում կրօնական վիճականութիւն սարքեն և ամօթահար անեն Բարին։

Դարաբին վստահ էր միանգաւամայն, որ վիճաբանութեան հէնց առաջին օրը իրան կ'աջողութի ցոյց տալ ժողովրդին, թէ Բաբը կեղծ Մահդի է, շարլատան և իսլամի սուրբ օրէնքները պղծող ու, հնտեաբար, արժանի քարիկոծուելու: Բայց որքան մեծ եղաւ Մահմէդ Շահի, նրա վէզիրների ու մօլլաների ապշութիւնը, երբ մի քանի նիստից յետոյ, Դարաբին յայտարարեց, թէ Բաբը հաւատացեալների սպասած ճշմարիտ Մահմին է, ամենակարող Ալլահի գեսպանն ու առաքեալը, որ եկել է ճշմարտութիւնը քարոզելու համար։ Դարաբին ոչ միայն հրաժարուեց իր բարձր հոգեոր պաշտօնից, այլ և, իբրև Բաբի ճշմարիտ առաքեալ, սկսեց շրջել Պարսկաստանում և քարոզել նրա սլատուիրանները։ Ականդալը ահազին էր Խալամի և շիա կղերի համար. կղերը նզումքի շանթեր արձակեց այն ամեն մի շիա մահմետականի դէմ, որ կը համարձակէր յարել նոր հերձուածին. կառավարութիւնը յայտարարեց, որ յարքունիս պէտք է գրաւուեն այն մահմետականների գոյգը, որոնք կը կասկածուեն իբրև կուսակից բարիութիւնն։ Կղերն աւելի առաջ դնաց. նա քարոզեց մզկիթներում, հրաժարականներում, մագրասաներում, թէ սպաննել Բաբին, նշանակում է աստուածահածոյ գործ կատարել, Ալլահի չնորդներին արժանանալ և մարդասպանը կարող է առաջուց ապահով լինել, թէ նրա համար պատրաստուած նն դրախտի մէջ ճշմարիտ մուլիմին սուհմանուած բոլոր զուարձութիւնները և բերկրութիւնները։

Սակայն հալածանքը, ինչպէս և միշտ, բոլորովին հակառակ արդիւնք արտադրեց. նոր աղանդաւորների թիւը աճում էր ամեն օր, ամեն բոլէ։ Դարաբիից յետոյ, Զանջան քաղաքի մուշթէյիգը, մօլլա Մահմադ-Ալին, Պարսկաստանի ականաւոր ու լէմներից մէկը, հրաժարակեց իրան Բաբի աշակերտ. նրան հե-

տեսեցին ուրիշ շատ նշանաւոր մօլաներ Խորասանում, Արդարիլում: Շուտով վրայ հասաւ մի դէպք, որ ամենամեծ ցնցումն գործեց ամբողջ երկրում և մի հզօր մղումն տուեց բարիութեան տարածման ոլարսիկ կանանց մէջ: Դազուինի մուշթէյիկի մատաղահաս և գեղեցիկ աղջիկը յայտարարեց իրան Բարի աշակերտուհի: Դազուինը յայտնի է իբրև մի քաղաք, ուր կենտրոնացած են շիս աստուածաբանական զպրոցները, որոնք շատ յարգի են մահմեղականների մէջ: Երևակայեցէք ասլութիւնը, սոսկալի գալթակղութիւնը, երբ այդպիսի մի քաղաքի կրօնապեսի աղջիկը հաւատուրաց է լինում և ընդգրկում այն կրօնը, օրի անիմայ հալածողն է իր հայրն: Երիտասարդ հերոսուհին, որ կոչւում էր «Ղուրրաթ-Էլ-Էյն» (աչքի լոյս) պարսիկ առաջին կինն եղաւ, որ ըմբսոսացաւ իսլամի Ծի դէմ և պաշտպանեց կոսոջ իրաւունքները. նա դէն չարտեց քօղը կամ աւանդական չարտար և դուրս գալով հասարակութեան առաջ երեսը բաց—մի բան որ անլուր էր մինչև այդ ժամանակ—սկսեց կարդալ ոտանաւորներ, երգել կրօնական երգեր: Այդ ոտանաւորները և երգերը ինքն էր յօրինում և դրանք ոչ միայն զուրկ չեն բանաստեղծական ճաշակից, այլ և գրական տեսակէտից շատ աջողուած են. փառարանուում են ազատութիւնը, կոսոջ և տղամարդու հաւասարութիւնը: Մինչև այսօր էլ այդ երգերը երգւում են Պարսկաստանում: Սյն հոետորական տաղանդը, եռանդը և խորին ոգևորութիւնը, որ երիտասարդ առաքելուհին դործ էր դնում՝ քարոզելու համար Դազուինի փաղոցներում նոր վարդապետութիւնը, մանաւանդ նրա հրաշալի գեղեցկութիւնը, զրաւում էին հետեղների ահազին բազմութիւն: Հայրը, Դազուինի մեծ մուշթէյիդը, մեռաւ վշտից, նրան յաջորդեց եղբայրը, որ նզովեց իր եղբօր աղջկան՝ Ղուրրաթ-Էլ-Էյնին և սա ստիպուեց թողնել քաղաքը և փախչել: Բաբիներից մէկը, սիրահար մատաղահաս օրիորդի գեղեցկութեան և պերճախօսութեան, վրէժինզիր եղաւ, սպանելով այդ հօրեղբօրը, որ դասուեց շիաների կողմից մարտիրոսների շարքում: Ղուրրաթ-Էլ-Էյնը բանտարկուեց Թէհրանում, իբրև խոռվարար և երբ 1852 թուին սկսուեց բամբիների դէմ մեծ հալածանք, նա գլխատուեց Նասրէդգին Շահի հրամանով ու նրա մարմինը ձգուեց հորի մէջ: Երիտասարդ բանաստեղծունու զրական գործերը—կրօնական երգեր, միստիկ-վիխտայիշական բովանդակութեամբ ոտանաւորներ— տպուած են այժմ և պանչացում են պատճառում բարիներին, նոյն իսկ շատ մուսուլմաններին:

Կառավարութիւնը, տեսնելով որ կրօնական նոր չարժումը վտանգաւոր կերպարանք է ստանում, հրաման տուեց կալանա-

ւորել Բարին. Նա ուղարկուեց Թաւրիզ և բանտարկուեց Զեհրիի բերդում. շուտով բերդի կառավարին ու պահապահները, բարիական յայտարարեցին իրանց, այն ժամանակ հրամայուեց ուղարկել Բարիին Մաքու: Այդուղի, բանտում, Բարը չէր գաղարում զրել և ուղարկել իր աշակերտներին ու նորահաւատներին իր պատուիրամները, իր յայտնութիւնները (բեյան), իր մնկնաբանութիւնները աստուածաշչի, աւետարանի և զուրանի մասին: Այդ բանտում նա գրեց բարիութեան սուրբ զբքերը — «Բեյանը», «Անսան-ուլ-Կասապը», «Քիրաբը-Հայսինը» և ուրիշները, որոնք գրուած են արար և պարսիկ լեզուներով:

Բարի բանտարկութիւնը գրվուց և զայրացրեց նրա կողմանակիցներին ու հետևողներին, որոնք սկսեցին խումբ-խումբ գալ Պարսկաստանի զանազան կողմերից, նրան այցելելու համար: Յուղուննքը, խոռոշութիւնը գնալով սաստկացաւ. Խորասանու-Մաղանդարանում, Շիրազում, Զանջանում արիւնահնդ ընդհարումներ տեղի ունեցան: Բարիները սովորուեցան զէնքը ձեռքին պաշտպանուել: Զանջանում զօրքը պաշարեց բարիներին մի թաղի մէջ, որտեղ բարիները մարտկոցներ էին կառուցել և այդտեղ ամբողջ ինն ամիս պաշարուած կուում էին զօրքի դէմ. մեծ մասն կոտորուեց, մանաւանդ որ զօրքը թնդանօթ գործ դրեց: Ի վերջոյ, կառավարութիւնը, կարծելով, որ խոռոշութիւնները և ասպատամբութիւնը կը հանդարտան, եթէ բարիների պետը մէջտեղից վերցուի, հրաման տուեց զլսատել նրան: Բարը զլսատուեց իր աշակերտների մէկի հետ Թաւրիզում, 1850 թ. յունուարի 27-ին, Նասրէդդին Շահի թագաւորութեան ըսկզբում:

Սակայն նոր կրօնի հիմնադրի մահը առաջ չը բերեց ցանկացած խաղաղութիւնը: Գաղափարը հսկայական առաջադիմութիւն էր գործում և երեք հոգի բարիներից իրանց մոլեռանդութիւնը մղեցին մինչև այստեղ, որ սպանութեան փորձ կատարեցին Նասրէդդին Շահի դէմ, կամննալով զրանով հանել իրանց ուսուցչի մահուան վրէժը և դադարեցնել առաջամանքները:

Փորձը չաջողուեց. մի ընդհանուր հալածմանք սկսուեց բամբիների դէմ, որոնցից շատերը մարտիրոսացան ահսելի տանջանքի մէջ: Պէսք է ասենք, որ Նասրէդդին Շահը բարիների ամենաանդութ հալածողներից մէկը եղաւ. և միայն նրա թագաւորութեան վերջին տարիներում, այն ևս ոռոսաց և անդիամ կան դեսպանստան միջամտութեան չնորհիւ, արիւնոուշտ վրէժինգրութիւնը դադարեց: Ներկայ, Մուղղավֆէր-էդդին Շահը չէ հետևում իր հօր աններուղամիտ քաղաքականութեան և բարիութիւնը, թէն պաշտօնապէս արդելուած է համարւում,

բայց լոելեայն թոյլատրուած է և հալածանքները բոլորովին դադարել են:

Բարի մահից յետոյ, նրա վարդապետութիւնը շարունակեց տարածուել, բայց բարիական համայնքի մէջ երկպառակութիւն առաջ եկաւ այս հարցի վերաբերմամբ, թէ ով պէտք է լինի նրա յաջորդը: Բարիները բաժանուեցին երկու կուսակցութեան: Բարի յաջորդ ընտրեցին նրա առաջին աշակերտ, երիտասարդ աղա Սէյիդ Եսահիան, որ չատ սիրելի էր Բարին և որին նա տուել էր «Սուբհ-էղէլ» (յաւիտենականութեան այդ) մականունը: Սակայն այս էղէլի անդրամիկ եղբայրը, Միրզա-Հուսէյն Ալին, որ ասպագայում կրչուեց Բէհան, սկսեց պնդել, թէ Բարին յաջորդելու իրաւունքն իրան է պատկանում, յայտնելով որ ինքը Բարը նշանակել է նրան յատկապէս իր յաջորդ, որովհետու այն նախադասութիւնը, որ Բարն արտասամել է իր ճառերից մէկում, այն է «Մէծ Իուղի-բուհու-լլահ» (մարդ, որին Աստուած պէտք է յայտագործէ) ուղղակի իրան է վերաբերում: Այդ հիման վրայ Բարիները բաժանուեցին երկու մասի—Բէհանականների և էղալիականներ: Էռանձուն բանակալու սկսուեց Բէհայի և էղէլի մէջ, վերջինս մեղաղրում էր Բէհային թէ նա յեղաշրջել, կերպարանափոխուել է Բարի պատուիրանները և վարդապետութիւնը, մինչդեռ ինքը հետամուտ է խսախ պահպանելու և անթերի զսրծագրելու Բարի քարտզած սկզբունքները: Սակայն Բէհային աջողութեան հետզհետև՝ գերակշռութիւն ստանալ, բարեփոխելով, վերանորոգելով, ընդարձակելով Բարի վարդապետութիւնը և այսօր Բէհայականնութիւնն է տիրապետող հանդիսանում, իրքի ձմարիս բարիականութիւն և զաւանում գըրնիթէ բոլոր բարիների կողմից, որովհետև էղալիականների թիւը այնքան նուազել է այսօր, որ մինչեւ անդամ 10,000-ի չէ հասնում:

Պէտք է ասել, որ Բէհան, ապաստանելով առաջ Բաղդադում մեծ հալուծանքների ժամանակ, աքսորուեց օսմաննեան կառավարութեան ձևորով, ուրասից կառավարութեան պահանջմամբ, Աքիա բերդագրադապը, որտեղից նա կառավարեց իր հօտը ամբողջ 42 տարի, իբրև ճշմարիտ հիմնադիր և պետ նոր կրօնի, որովհետև նա ապացուցանում էր նոյն խել, թէ Բարը միայն իր կարապետն էր. նա նոյն խել այն յաւակնութիւնն ունէր հաւատացեալներին ուղած իր թղթերի մէջ, թէ ինքն է այն Հայրը, որի մասին խօսւում է աւետարանում, երբ Յիսուս ասում է. «Հայրը, որ երինքամն է, կըգայ»: «Ես եմ այն ճըշմարառութիւնը—ստում է Բէհան—որին սպասում է մարդկային ցեղը»:

Բէհան մեռաւ 1892-ին, նշանակելով իրան յաջորդ իր անդրանիկ որդուն, Աբբաս էֆէնդիին, որի մականունն է «Ղիւմսը Անգամ» (մեծ ճիւղ) և որ կառավարում է այսօր բարիական հօտը առանց հակառակորդի, որովհետեւ էլելը, որ նոյնպէս աքսորուեց օսմանեան կառավարութեան կողմից կիպրոս կղզին, ուր ապրում է գետ մինչև այսօր, թողել է բոլորովին իր յաւակնութիւնները։ Այն թղթերը, որ Աբբաս էֆէնդին ուղարկում է պարբերաբար բարիսերին և որոնք կոչւում են «բխալի սիասիկ» (թուղթ քաղաքականութեան մասին), ցոյց են տալիս, որ նա հետեւում է խստիւ իր հօր սկզբունքներին։

Ես պատմեցի բարիութեան ծագումը և զարգացումը։

Սյամ մեռաւ է խօսել բարիութեան վարդապետութիւնների մասին։ Սակայն որպէս զի ցոյց առաջ, թէ ինչ էր բարիութիւնը սկզբում, ինչ բարեփոխութիւններ և յեղաշրջումներ նա կրեց և ինչ է այժմեան բարիութիւնը կամ բէհայականութիւնը, սկզաք է առեմ, որ հիմնադիր Բարը չը կարողացաւ թօթափել իրանից խորամի աւանդութիւններից շատերը և մուսուլման կրօնի մէջ նրա կատարած յեղափոխութիւնը արմասական չէ, որովհետեւ նա ինսայել է Մահմէդի կրօնի մի քանի հիմնական սկզբունքները։ Այսպէս օրինակ՝ 1) Բարը նախամեծարութիւն էր տալիս արարական լեզուին, որով զրուտն է զուրբանը և որ սուրբ է համարուում մասուլմանների կողմից, 2) Բարը քարոզում էր, որ պէտք է նուածնել նաև այս աշխարհի թաղաւորութիւնը, որ պէտք է տարածել նոր կրօնը ոյժով, և այսպիսով նա հետեւում էր միայն Մահմէդի օրինակին, 3) նա պատուիրում էր հաջիութիւնը, ուխտազնացութիւնը, 4) նա պաշտպանում էր խստիւ օտար և մահնաւանդ մնուեալ լնուուների ուսումնափրութիւնը։ Բէյանի մէջ, նա պատուիրում է այրել աշխարհիկ զրքերը և չը սովորել աշխարհիկ զիաստութիւնները։ Նա ձգտում էր ոչ թէ իսլամի տեղ մի աց կրօն պատրաստել, այլ միայն բարեփոխել Մուհամմէդի քարոզած կրօնը։

Սակայն նրա յաջորդ Բէհայի գործը մի ամբողջ՝ յեղափոխութիւն էր, որ խախանեց և կործաննեց իսլամի հիմունքը։ Նա տուեց բարիութեանը կօսմօպօլիս բնաւորութիւն, ազասամիտ, մարդասէր զաղափարներավ։ Նա ձգտեց բարեշրջել բարիութիւնը այն ձևով, որ գա լինի բոլոր կրօնների հվոլիւցիան և եթէ նրան չաջողուեց իրազործնել ամբողջովին այդ միաքը, գոնէ նրա քարոզած զաղափարներութիւնը—բէհայականութիւնը ամենամարդասէր և ալտրուիստ վարդապետութիւններից մինն է հանդի-

սանում, ինչպէս կարելի է համոզուել նրա էական դաւանութիւններից:

Բարիութեան էական գաւանանկները, ինչպէս նրանք լուսաբանուած են սուրբ գրքերի կամ «Քիթաբը էպէէ»-ի, նոյնպէս և Բէհացի այլ պատուիրանների, այն է՝ «Իգան», «Քիթաբը Մարգին» (թուղթ, ուղղած թագաւորներին) շաբագրութիւնների և Յարի գրած «Բէյան», «Եհանուուլ-Կասսաս» և «Քիթաբը Հայաքիլ» գրքերի մէջ, — հետեւալներն են.

Ինչպէս յօդուածիս սկզբում ասացի, երկու սկզբունք կազմում են բարիութեան հիմքը — իմրիխաղ և իրրիթազ (միութիւն և համարաշխութիւն մարդկացին ցեղի): Բարիութեան նախուակը՝ սրտերի թագաւորութիւնն է, հետեւաբար, աշխարհակալութիւն, տիրապետութիւն, նուաճումն, քաղաքական գաղտիարնուր — գոյութիւն չունեն նրա համար: Բոլոր մարդիկ հաւասար են և եղբայրներ. չը կայ ոչ մեծ, ոչ փոքր, ոչ ազնուական, ոչ գուհիկ: Բոլոր մարդիկ մի և նոյն հայրենիքի գաւակներն են. չը կայ յատուկ հայրենիք (հետեւաբար հայրենասիրութեան գոյութիւնը գոյութիւն չունի բարիների մէջ): Այդ առիթով Բէհան ասում է, թէ Աւագոնն էր, եթէ Բոլոր աղքերը, ամբողջ մարդկացին ցեղն ունենար մի լեզու և մի ընդհանուր գիր:

Բոլոր աղքերը լաւ են Աստուծու առաջ, չը կայ ընտրեալ աղդ, չը կան ընտրեալներ, ինչպէս հնթագրում են հրէաները և մուսուլմանները. ոչ մի խարսութիւն չը կայ մարդկացին ցեղերի մէջ, սպիտակ, սև, դեղին, սմենքը հաւասար են: Կինը յարգուած է և վայելում է իրաւունքներ. ամուսնութիւնը չէ կարող կայանալ առանց երիտասարդի և աղջկայ յօժարութեան: Միակնութիւնը գերագաւաելի է, միայն կնոջ ամլութեան դէպւամ, տղամարդը կարող է երկրորդ կին տնել, առանց արձակելու առաջինին. սիլա կամ հարճ պահելը արգելուած է: Եթէ ամուսինը կամ մայդայ ճանապարհորդել, կամ բացակայել տանից, նա պէտք է ստանայ կնոջ հաւանութիւնը, այլապէս սա կարող է, 9 ամիս սպասելուց յետոյ, ազատ ճանաչել իրան և ուրիշ մարդու հետ ամուսնանար: Արահարզան կարելի է տալ կնոջ անհաւատարմութեան պատճառով: Կինը կարող է ունենալ անհաւատական սեփականութիւն: Ժառանդութիւնը բաժանում է 2520 մասի և տրւում 7 տեղ. առաջին բաժինը, բաղկացած 540 մասից, տրւում է հանգուցեալի դաւակներին, առանց սեփի խտրութեան. երկրորդ բաժինը, բաղկացած 480 մասից, տրւում է այրիին. երրորդը, բաղկացած 420 մասից, հօրը, չորրորդը, բաղկացած 360 մասից՝ մօրը, հինգերորդը, բաղկացած 300 մասից՝ եղբայրներին, վեցերորդը, 240 մասից՝

քողերին, և եօթներորդը, 180 մասից՝ երեխաների ուսուցիչներին: Եթէ այդ ժառանգներից որ և է մէկը չը լինի, նրա բաժնի մի երրորդը տրւում է զաւակներին, իսկ մնացած  $\frac{1}{3}$ -ականը Արդարութեան ծանր—«Բէյթ Աղլիէ»: Արդարութեան տունը մի հաստատութիւն է, կամ մի յանձնաժողով, բաղկացած 10—20 անդամներից, որոնք ընտրուում են համայնքի ամենաալատկառելի անձնուց միջից և որոնց յանձնուում է համայնքի գործերի ղեկավարութիւնն ու վարչութիւնը. այդ յանձնաժողովն է քըն-նուում վէճերը, նա է հոգս տանուում որբերի և աղքատ երեխաների դաստիարակութեան ու կրթութեան վրայ, որովհետեւ ծնող-ները պարտաւոր են ինամուած կրթութիւնն տալ իրանց զաւակներին, իսկ եթէ չքաւոր են, այդ հոգսը ծանրանուում է բեյթի վրայ:

Բէհայի պատուիրանի համաձայն, որ ասուում է բարիներին, թէ «չը կայ հայրենիք ձեզ համար, ամբողջ տիեզերքը ձեր հայ-րենիքն է, որովհետեւ դուք միենոյն ծառի ճիւղերն ու պտուղներն էք», թոյլատրուում է ամուսնութիւն բարիների և ուրիշ աղքու-թեան պատկանող մարդկանց: Ստրկութիւնը և գերեվաճառու-թիւնը խիստ արգելուած են: Աշխարհիկ գիտութիւնների և օտար լեզուների ուսումնասիրութիւնը անհրաժեշտ է ճանաչուած: Հա-ւատը դէպի ճակատագիրը գոյութիւն չունի այն մաքով, որով ըմբռնուում են մուսուլմանները, ամեն ինչ, որ բնական է և չէ իսրող փոփոխուել, ենթարկուած լինելով ճնութեան օրէնքնե-րին—ահա ճակատագիրը, բայց իր գործողութիւնների, իր գոյութեան մէջ մարդը պէտք է առաջադիմէ, միշտ առաջ խաղայ դէպի լոյսը և ճշմարտութիւնը:

Բարին պարտաւոր է հնազանդել ամեն այն երկրի օրէնք-ներին, որտեղ նա ապրուում է և յարգել այդ օրէնքները. կառա-վարչական ձեւերի մէջ, հանրապետականը, կամ այն ձեր, որի ներքյա ամենքը կարող են քաղաքացիներ լինել, ունենալով միենոյն իրաւունքները և պարտաւորութիւնները, աւելի գովե-լի է: Ամեն մարդ պէտք է աշխատէ, բայց անճարները, աղ-քատները պէտք է ինամուեն Բէյթի ձեռքով և ամեն մի բարի պէտք է վճարէ զրա համար Բէյթին մի որոշ գումար:

Պատերազմը, նոյն իսկ հաւատի համար, ջնջուած է և Բէ-հան յանձնարարուում է կարգադրել վէճերն ու կոհւները ազգերի մէջ հրապարակական դատարանով:

Ահա սրանք են համառօտապէս բարիութեան պատուի-րանները ընկերական կեանքի համար: Գալով բարոյական կեան-քին, Բէհան ոչ միայն արգելուում է ստախօսութիւնը որ և իցէ ձե-քետրուար, 1901.

ւով, ինչ և լինի նրա նպաստակը, բայց նա ընդդեմ է նաև շողոքորթութեան, հողնարականների ու ծերունիների աջը համբուրելու սովորութեան. նա արգելում է նաև ասկետականութիւնը, ամուրիտիւնը, իբրև ոչ աստուածահաճոյ գործեր։ Սակայն մուսուլմանների քաղլիեն, այսինքն այն թոյլտութիւնը, որ արուած է ամին մի մուսուլմանի կեղծել, ուրանալ իր հաւատը վասմնդի դէսկըռում, արուած է և բարիներին։

Մի քանի խօսք ևս այս նոր կրօնի ծիսական պատուիրանների մասին։

Բարիութիւնը չէ ընդունում ոչ խոստավանութիւն, ոչ մկըրտաւթիւն, ոչ սուրբերի բարեխօսութիւն այն նկատումով, թէ մարդը պէտք է զիմի իր Սատուծուն անմիջապէս, զզջայ իր մեղքերը նրա առջև, հայցէ նրա թողութիւնը։ Բայց թլապատութիւնը գործադրում է, նախ՝ առողջապահական և ասպա մուսուլմանների հալածանքից ազտու մնալու նպաստակով։ Ազօթքն անհրաժեշտ է, բայց ոչ պարտադիր ամին օր։ Բարիները գումարում են մի տան մէջ կամ «մաշրիգ-ուլ-ա'զիեր»-ի մէջ (Եկեղեցի), եթէ կայ, նստում են ծալապատիկ և մի կարճ աղօթք են արտասանում բարձրաձայն, ասպա երգում են կրօնական երգեր և կարդում են Բարի կամ Բէհայի պատուիրանները։ Անա զլխաւոր կամ տէրունական աղօթքը։ «Խոստավանում և գաւանում եմ, ով Աստուած, որ դոյայտնեցիր ինձ ճշմարտութեան արեգակը, վկայում եմ, որ չը կայ ուրիշ ճշմարտութիւն (հազդ) բացի նրանից. գաւանում եմ, որ ոչ ոք չէ կարող ոչ քեզ գովել, ոչ քեզ երեսակայել։ Ով՛ իմ Աստուած, մի մերժիր մարդու, որ իր յոյսի մատերով կախ է ընկնում քո ծոյցից»։

Բարիները ընդունում եւ հաւատում են երեք մարգարէններին, յաջորդական կարգով—Մովսէսին, Յիսուսին և Մահմէդին։ Ով հաւատում է Բարին կամ Բէհային, պէտք է առաջ հաւատայ այդ երեք մարգարէններին։ Յիսուս կոչում է Իբն-Ռւլլահ (Որդի Աստուծոյ)։ Ուխտագնացութիւնը կամ «հաջը», աղօթքը միւլիմների համար, կամ հոգեհանգիստը նկատում են իբրև անօգուտ, և Բէհան պատուիրում է տալ Արդարութեան Տանը (Բէյթին) ուխտագնացութեան և հոգեհանգստի համար նշանակուած գումարները։ Պաս չը կայ, բայց տարուայ մէջ 19 օր պարտադիր ծոմ կայ։ Բարիները հաւատում են հանդերձեալ կեանքին և յաւիտենականութեամ, բայց չեն ընդունում ոչ զժոփիքը, ոչ արքայութիւնը, ոչ քաւարանը։ Ամեն մարդ իր հատուցումը կը ստանայ կամ իր պատիժը, իր գործողութիւնների համաձայն, բայց մարդուն արուած արուած չէ իմանալու, թէ ինչ ձևով։ Երբ մէկը մեռնում

է, լուանում են մարմինը, պատանում են եօթը կտոր կտափ կամ մետաքսի մէջ և գնում են նրան դագաղում:

Անշուշտ, շատ լեգենդաներ կան հնարուած չարամտութեամբ, որոնց ազբիւրը պէտք է որոնել մուսուլմանների ֆանատիկութեան և դէպի բարիներն ու թէհան ունեցած ատելութեան մէջ, բայց երբ խոր կերպով ուսումնասիրում ենք սուրբ դրքերը, բոլոր այդ լեգենդաները չքանում են: Բարիութիւնը, հիմնուելով ալտրուիստ, մարդասէր և խաղաղասիրական դազափարների վրալ, ոչ մի ընդհանուր բան չունի իսլամի հետ. թըւում է թէ նա աւելի լաւ է համապատասխանում արիական պարսիկների խաղաղասէր, մեղմ բնաւորութեան և ձգտումներին: Նա կոչուած է լինելու իրանի ապագայ կրօնը, և դա կը լինի մի մեծ բարեբախտութիւն այդ թշուառ երկրի համար:

Հ. ԱՌԱԳԵԼԵԱՆ

# ՎԱՐՈՍԻ ՑԱՃԱԽՈՐԴՆԵՐԸ

(Պատկեր իրական կեանքից)

## I

Մայիսեան առաւօտ էր. օրը շաբաթ։ Բարիլոյսը գեռ նոր էր բացուել։ Գիշերուայ թարմացուցիչ անձրևից յետոյ երկինքը մաքրուել՝ բաց կապոյտ գոյն էր ստացել։ Թէև Կողը գիւղին դեռ արև չէր դիպել, բայց Բարդող լերան գագաթի արևելեան մասը արդէն զարդարուել էր մի փունջ ոսկեփայլ ճառագայթներով։

Բոլոր գիւղը ոտի վրայ էր. երիտասարդ հարսները ու գեռահաս աղջիկները կժերն ուսած՝ ջուր էին կրում. տանտիկինը փէշերը վեր քաշած՝ փխփխալով կովն էր կթում. ուշացարը իր ջուխտակ եղների հետ դաշտ էր շտապում՝ նախորդ օրուայ կիսատ աշխատանքը վերջացնելու։

Այդ ժամանակ էշակչոնց Խէջօն օրուայ պաշարը մէջքին կապած ու սրակուց մուրճը գօտկին խրած՝ մօտեցաւ աղահանքի մուտքին։ Նա էլ ցաւի ու պակասութեան տէր էր։

Ստորերկեայ ճանապարհը մութն էր, խոնաւ ու լցուած թանձր գարշահոտութեամբ. որքան Խէջօն առաջանում էր, այնքան էլ սաստկանում էր տիրող մթութիւնը, այնպէս որ նա, անակնկալ փորձութիւնից ազատ մնալու համար, ստիպուած էր դանդաղացնել բայլուածքը ու լարել իր բոլոր ուշադրութիւնը։

Խէջօն հինգ րոպէի չափ ճանապարհորդելով գետ-

նախոր ծուռ ու մուռ անցքերով, վերջապէս կարողացաւ հասնել աշխատանքի տեղը։ Նա հանեց գրպանից լույշ կին, քսեց, և գտնելով փոքրիկ թիթեղեայ ճրագը, որ դրուած էր պատածակում, վառեց նրանց թիթեղեայ ճրագի ողօրմելի լոյսը իր բոլոր ուժով սկսեց կռուել շրջապատող խաւարի հաստ շերտերի հետ։ Բայց անօդուտ։ Սեւ խաւարի առաջին շերտերը մի քանի քայլ յետույեա գնացին ու այնտեղ, կիտուելով միւս շերտերի վրայ, աւելի թանձրացրին նրանց մժութիւնը։

Խէչօն մուրճը գօտկից հանեց, պաշարի կապոցը գետնին դրեց, «Եա Տէր Աստուած» կանչեց ու գործը սկսեց։

Մուրճի համաշափ հարուածները ուզգւում էին հանկի առաստաղին, որտեղից Խէչօն պիտի կտրէր քառանկիւնի աղի կտորներ և կոտորած աղաքարերի ծանրութեան համեմատ վարձատրութիւն պիտի ստանար աղատիրոջից։ Շատ աղ կտրողը շատ փող կը ստանար, քիչ կտրողը՝ քիչ։ Խէչօի աշխատանքը ծանր էր ու յոդնեցուցիչ։ Բայց ինչ արած. ալիւրի փեթակը մի շաբաթ առաջ էր դատարկուել, ալիւր առնելու փող չը կար. երեխաները ոտարորիկ ու կիսամերկ էին, փարա չը կար՝ նրանց մարմինը ծածկելու. բամբակի արդը պիտի ցանուէր, փող չը կար՝ սերմ առնելու...»

Խէչօն այն անհոգ մարդկանցից չէր, որոնք էգուցուայ մասին չեն մտածում։ Նա վաղուց գիտէր, որ այս կարիքները իր առաջն են գալու, այդ պատճառով մեծ պասի հէնց առաջին շաբթից մուրճը ուսին դրեց ու աղահանք դիմեց։ Երկու ամիս ու կէս նա շարունակ աշխատել էր և մինչև այդ օրը գեռ ոչ մի կոպէկ չէր ստացել իր վարձի հաշուվին. ուզում էր իր աշխատանքի վարձը միանգամից ստանալ, որ կարողանայ իր բազմաթիւ կարիքները հոդալ։

Խէչօի մուրճը անդադար կտցահարում էր աղաժայուի հսկայական կուրճքը, չորս կողմը ցանելով աղի մանրիկ կտորներ ու թեթև փոշի։ Մուրճի հարուածնե-

րի ձայնը, զարնուելով աղահանքի վիթխարի սիւներին, խուլ արձագանքով վրդովում էր ահոելի մժութեան մշջ տիրող լուսութիւնը։ Այդ րոպէին աղահանքը նմանում էր մի հնագարեան մռայլ դամբարանի, որի անհիւրասէր կամարների տակ հանգչող բազմաթիւ գըժքախտներից մէկը հրաշքով ոտի է կանգնել ու յուսահատութեամբ շանգուտելով կարծրաքար պատերը, աշխատում է մի անցք բանալ, որ կարսղանայ ազատուել այդ զարհուրելի բանտից։ Եւ Խէչօն ուրախ էր, որ այդ անցքը բացուելու մօտ է։ Իրիկունը նա կը ստանայ երկու և կէս ամսուայ ընթացքում թափած քրտնքի վարձը, մօտ քառասուն ուուրի, և մի առժամանակ կ'ազատուի աղահանքի խաւարից։ մինչև որ անողոք կարիքը էլի կը ստիպի նրան իր ոտով դիմել այդ գարշելի գերեզմանը։

Խէչօի գործը այսօր սովորականից աջող էր գնում և կտրուած աղաքարերը մէկը միւսի յետևից առաստաղից պոկւում և գետին էին գլորւում։ Վեց քար կըտրելուց յետոյ՝ նա մուրճը գետնին դրեց և աղաքարերից մէկի վրայ նստեց, որ համ մի քիչ հանգատութիւն տայ իր վաստակած անդամներին, համ էլ քաղցած ըստամոքսը մի բանով խարի։ Աղի փոշիով ծածկուած քըրտինքը սրբելուց յետոյ, նա բաց արեց պաշարի կապոցը։ Ճաշի սեղանը չափազանց պարզ էր, երկու հասթուխիկ բռքոն ու մի կապուկ դառը բոխի։ ահա այն բոլորը, ինչով պիտի վերականգնէր Խէչօն այդ գժոխային մժնորտում իր սպառած ոյժերը։ Թէև շտապով, բայց լաւ ախորժակով կերաւ Խէչօն դառը բոխին, վըրայից խմեց մօտը դրուած պուլպուլակի \*) սառը ջուրը, յետոյ ոտի կանգնեց ու կրկնապատիկ եռանդով շարունակեց իր աշխատանքը։

Երբ որ կտրուած աղաքարերի թիւը տասներկուսի հասաւ, Խէչօն իմացաւ, որ կէսօրը անց պիտի լինի.

\*) Պուլպուլակ—նեղ բերանով վոքրիկ կաւէ ջրաման։

վէր դրեց մուրճը ու սկսեց շալակով աղահանքից գուրս կրել կոտորած քարերը ու դարսել հանքի հրապարակում իբան պատկանող կիտուկի վրայց Խէչօն շալակում էր երեք փթանոց աղաքարերը և մթութեան մէջ խարխափելով բարձրանում էր անդունդից դէպի վեր։ Նրա կարծ ու կլոր մարմինը ճօնում էր բեռի ծանրութեան տակ։ Քրտնքի խոշոր կաթիլները բղխում էին արեառնակատից ու բարալիկ առուակներ կազմելով՝ ցած էին դլորում։ Նրա երեսի վրայով։

Վերջին քարը դուրս բերելուց յետոյ Խէչօն կանգնեց հանքի մուտքի առջե, արխալուղի թևով սրբեց ճակատի քրտինքը ու խոր յոդոց հանելով՝ վառք տուեց Աստուծուն։ Այդ բարձր դիրքից նա նայում էր դիմացում բացուած գարնանային հրաշալի տեսարանին ու զմայլում։

Մինչև երեկոյ Խէչօն կարողացաւ բոլոր ազը կշռել, յանձնել աղահանքի կառավարչին և իր երկու ու կես ամսուայ աշխատանքի վարձը լիովին ստանալ։ Երեսուն եօթը ոռուբլի ու քսան կոպէկը շատ խոշոր գումար է տառիկ<sup>\*)</sup> մարդու համար։ Վաղուց էր, որ Խէչօն այդպիսի գումարի երես չէր տեսել։ Ստացած փողերը դրանքը դնելով, Խէչօն մուրճը ուսն առաւ և ուրախ դիմեց դէպի տուն։

Բայց նա դեռ հինգ քայլ չէր արել, որ յետեկց լսեց ընկեր բանուորներից մէկի ձայնը, որ Խէչօն էր կանչում։

Դա մի յաղթանդամ ու հսկայ բանուոր էր. այդ մարդու արտաքինը պարզ ցոյց էր տալիս, որ նա կարող է տաս մարդու չափ աշխատել ու քսանի չափ խմել։ Եւ իսկապէս նա շատ լաւ բանուոր էր, լաւ աշխատող. նա չէր իմանում թէ ինչ է յոգնութիւն առած բանը և չնորհիւ իր երկաթեայ բաղուկների, միշտ ընկերներից

<sup>\*)</sup> Տառիկ անուանում է այն բանուորը, որ հանքում մուրճով աղ է կտրում։

Երկու-երեք անգամ աւելի էր օրավարձ ստանում: Բայց  
ինչ կ'անես, որ նրա ահագին աշխատանքից ոչ մի կո-  
պէկ յետ չէր ընկնում, մի սև փող անգամ նրա ընտա-  
նիքի պիտոքներին չէր գործադրում: Նա մի ամբողջ  
շաբաթուայ աշխատանքը մի գիշերում գինեվաճառին  
էր յանձնում ու հետևեալ առաւօտ էլի աղահանք գնում,  
որ մի շաբաթ տանջուի ու չարչարուի՝ մի քանի ժամ  
զուարճանալու յոյսով:

Նա վաղուց աշքաթող էր արել իր ընտանիքը, որ  
այժմ շատ թշուառ ու անօգնական դրութեան մէջ էր:  
Նրա կինն ու չորս աղջիկները ամառը իրանց աշխա-  
տանքով էին ապրում; իսկ ձմեռը՝ բարի մարդկանց  
տուած ողորմութեամբ: Այդ մարդու իսկական անունը  
Մկօ էր, բայց գիւղացիք նրան Կարաս-Մկօ էին անուա-  
նում; կամ ուղղակի Կարաս: Այս «պատուաբեր» տիտղո-  
սը նա վաստակել էր չորհիւ իր իսմելու ընդունակու-  
թեան, և նա պարծենում էր այդ տիտղոսով:

Կարասը սովորութիւն ունէր ամեն շաբաթ գիշեր  
խմելու: Այդ օրը շաբաթ էր, նա եկել էր մի շաբա-  
թուայ վարձը ստանալու, մինչեւ անգամ ընկերներից  
մէկին էլ քէֆի էր հրաւիրել. բայց յանկարծ նրան յայտ-  
նեցին, որ այդ շաբաթուայ վարձը երեք օր առաջ տուել  
են նրա կնոջը, որ ցորեն առնէ սոված երեխաների հա-  
մար: Այդ անսպասելի գոյժը շատ զարմացրեց, շատ էլ  
զայրացրեց Մկօին: Առաջ նա ուզեց գոռում-գոյիւն  
բարձրացնել, թէ ինչ իրաւունքով են իր վարձը կարում;  
կամ ինչու են իր աշխատած փողը առանց իր համա-  
ձայնութեան ուրիշի ձեռքը տալիս, բայց վախեցաւ  
կառավարչի բարկութիւնից ու սկսեց, միայն մողում  
փնթփնթալ: Առաջ նա հայհոյում էր կառավարչին,  
բայց շուտով հասկացաւ, որ կառավարիչը մեղք չունի,  
որ բոլոր մեղքը իր անզգամ կնկանն է. այնուհետեւ նա  
իր ուշունցները ուղղում էր կնոջ հասցէին. ատամները  
կրծացնում էր, բուռնցըները պինդ սեղմում: այդ ըո-

պէին նա պատրաստ էր պատառոտելու կնոջը, եթէ  
միայն ձեռը ընկնէր նա:

Եռուսով Մկօխ բարկութիւնը անցաւ, տեղի տալով  
խոր մտածմունքների: Այսօր նրա քէֆի օրն էր. նա  
պիտի անպատճառ խմէր. առանց դրան գիմանալ չէր  
կարող: Մկօն մի ամբողջ շաբաթ բերանը կաթիլ չէր  
առել, յոյս ունենալով, թէ այսօր եօթը օրուայ տեղակ  
մի անգամից պիտի խմէ. նրա կոկորդը ցամաքել, չո-  
րացել էր և սիրում այրուում էր ծարաւից: Մկօն մնա-  
ցել էր մտածմունքների մէջ ընկղմուած, պատի տակ  
կանգնած. նա մտքում որոնում էր մէկին, որի հաշուով  
կարողանար իր ցամաքած կոկորդը այս գիշեր թրջել:  
Խէջօին տեսնելուն պէս կարասի ախրութիւնը վայրկե-  
նապէս անհետացաւ. նրա կիտուած յօնքերը յետ գնա-  
ցին և ուրախութիւնը փայլեց նրա կնճռոտած դէմքի  
վրայ:

—Ա՛ղա, Խէջօ, ուր ես ծլկում էտենց սուս ու  
փուս, —գոռաց Մկօն. —Ջէպդ մի քանի կոպէկ մտաւ,  
էլ չ՞ս ուզում մարդի երեսի մտիկ անես:

—Ա՛յ գլխամեռ, բա մենք ոկի էդ փողերիդ համը  
չը պիտի տեսնենք, թէ վախենամ ես, որ քո տուած  
մի թառ գինին մեր վրայ պարտք մնայ, սուտ չի ասած,  
որ բօշան փաշա չի դառնայ. ախր էշակչու թոռն ես,  
բա ինչ պիտի լինես, —վրայ բերեց մի ուրիշ տարիքա-  
ւոր բանուոր, որին Մկօն քէֆի էր հրաւիրել:

Դա Քաչալենց Սաքօն էր, մօտ յիսունուհինդ  
տարեկան մի կարճահասակ ու լզար մարդ, որի մազերը  
ճերմակել էին աղահանքում: Սաքօն խակապէս խմիչքեզն  
չէր սիրում և խմածը մարսել էլ չէր կարողանում,  
բայց և այնպէս շատ էր խմում էր, որովհետեւ  
խմում էին ուրիշները, բոլոր գիւղացիք, որովհետեւ  
խմելը Տղամարդութիւն էր նամարլում: Բայց դրանից  
Սաքօն մի առանձին սէր էր տածում դէմքի թղթախաղն  
ու կռիւը. իսկ առանց խմելու ոչ խաղալն է սազում և  
ոչ կռուելլք: Սաքօն հինգ հատ հասած՝ ամուսնացած

տղերք ունէր, որոնք բոլորն էլ տաստամներկու տաշրեկան հասակում փախել էին իրանց հօր մօտից, չը կարողանալով տանել նրա քացիների ու բռունցքների հարուածները։ Այդ մարդը անքան անտանելի էր իր անվարուեցող ու կռուարար բնաւորութեամբ, որ տղերքանցից ոչ մէկը չէր համաձայնում նրան պահել ու կերակրել ծերութեան օրերում։ Այդ էր պատճառը, որ Սաքօն անտէրանտիրական էր մնացել։

Ընկերների ձայնը լսելով, Խէջօն յետ նայեց ու կանգ առաւ։ Նա գիտէր, որ ընդունուած սովորութեան համաձայն ամեն մի բանուոր, վարձը ստանալիս, պարտաւոր էր «ջրել», այսինքն գինով հիւրասիրել իր ընկերներին, որոնցից ոչ մէկը միւսի պարտքի տակ չէր ուզում մնալ։ Պատուելու կողմից Մկօն ամենից առատ, ամենից ձեռնաբաց էր։ Շաբաթ երեկոները, վարձը ըստանալուն պէս, նա հաւաքում էր ընկերներից մի քանիսին ու տանում գինետուն։ Խէջօն շատ անդամ էր նրանից պատիւ ստացել և վաղուց մտադիր էր մի լսու հիւրասիրել Մկօին, բայց պակասութիւնը թոյլ չէր տալիս։ Այժմ երբ Խէջօի գրպանը լիքն էր և երբ Մկօն իր բերանով էր խնդրում, ինչպէս կարելի էր մերժել։

—Իմ աչքիս, իմ գլխիս վրայ, ախալէր ջան, համեցէր էթանը, —սրտանց վրայ բերեց Խէջօն, մի քանի քայլ առաջ գալով, —Ես աղ ու հաց մոռացող չեմ, ոչ ուտել խմելուց փախչող և ոչ էլ ախալէրութեան շարքից յետ մնացող։

Խէջօն ձեռը գցեց Մկօի գօտին ու սկսեց քաշել։

—Ո՞ւր ես տանում, —հարցըրեց Սաքօն։

—Վերի միկիտանը \*), —պատասխանեց Խէջօն։

—Չէ, ախալէր, ես չեմ գալիս. ես չեմ ուզում էն չների երեսը տեսնել։

—Ադա, էս արև մեռածը չի գալ վերի միկիտանը,

—աւելացըրեց Մկօն, —երէկ գիշեր էլ իրար գլուխ են

\*) Միկիտան—գինետուն։

ջարդել անպիտանները. լաւն էն կը լինի, որ էթանք ներքեւ, Վարոսի միկիտանը:

—Այ, ի՞նչ եմ ասել,—հաւանութիւն տուեց Սարօն Մկօի առաջարկութեանը:

—Ես ուզում եմ տուն դիպչել...—կմլմալով ասաց Խէջօն ու շարունակեց տեղում կանգնած մնալ անորոշ դրութեան մէջ: Նա գիտէր, որ միկիտանում կարող է հազար ու մի տեսակ չար ու բարի պատահել, ուստի ուզում էր փողերի մի մասը գրպանում պահելով, մնացածը տանը թողնել:

—Դէս արի, հէրդ լիս դառնայ, դէս... ես էստեղ ծարաւից վառւում եմ, սա էլ նոր դլխիս նաղլ ասարգում: կ'ասես օխտը տարի Ակօի աղջկայ երեսը չի տեսել... Ուր ա թէ կնիկն էլ կնիկ լինի... Աստուած տուել ա երեսին ինսանի կերպարանք էլ չը կայ, կ'ասես մարդագէլ լինի...

Այս խօսքերի հետ Մկօն մի քանի քայլ առաջ գրնաց, իր գազուկիսանոց կուռը մեկնեց և այնպէս քաշեց Խէջօի թեփց, որ վերջինը մեծ թափով առաջ վազեց ու քիչ մնաց բերանքսիվեր գետին փռուէր: Խէջօն էլ չը կարողացաւ դիմադրել ու նրանք գնացին դէպի ցած:

## II

Գինետունը բաղկացած էր երկու ընդարձակ սենեակներից, որոնցից առաջինում տախտակէ վանդակապատերի վրայ շարուած էին մի քանի փոշոտած շիշեր ու զանազան տեսակի պապիրոսներ: Վանդակապատի տակ՝ գետնից քիչ բարձր մեկնած էր մի տախտակ, որի վրայ պառկոտած էին հաստափոր տկերը: Գինետեղ՝ տկերի մօտ դրուած էին զանազան մեծութեան չափեր ու տասատասներկու հատ կեղտոտ բաժակներ: Գինետան բաց տեղում, դախլի դիմաց կանգնած էր մի երկար ու կաղ նստարան, որի վրայ բազմած էր Վարոսը երկու

այցելուների հետ. նրանք խմում էին ու աշխոյժով զբուցում:

Վարսով տարիքով բաւական ծեր, բայց դեմք ու կազմուածքով գեռ կատարեալ երիտասարդ, հաստափոր, կարմրաթուշ ու սիրունատես մի մարդ էր: Տամնուեօթը տարեկան հասակից նա սկսել էր գինեվաճառութիւնը և մինչև օրս անլնդհատ շարունակում էր իր սիրելի պարապմունքը: Նա միշտ աշխատառ էր հաւատայնել իր այցելուներին, իբր թէ այդ առուտուրից բոլորովին չէ օգտառում, բայց էլի չէ կարողանում վերջ տալ նրան, որպէս մի սիրահար, որ չէ կարողանում բաժանուել իր սիրականից: Որ գինեվաճառութիւնից նա չէր օդտուում, ի հարկէ, սուտ էր ասում: այդ պարապմունքը նրան տալիս էր զուար արդիւնք տարեկան վեց հարիւրից մինչև հազար ոռուբլի, նայած տարուայ պտղաբերութեան ու ժողովրդի գրապանին: Խոկ ինչ վերաբերում է արհեստի վրայ սիրահարուելուն, պէտք է ասած, որ կա զուար ճշմարտութիւն էր: Նա միշտ խնդրում էր Աստուծուց, որ մահը գտնի իրան գինետան մէջ այն ժամանակ, երբ՝ կվարտը մի ձեռում ու տկի պաճախը միւսում գինի մատակարարելիս կը լինի իր մուշտարիներին:

Նորեկ այցելուները, ներս մտնելով, «բարի իրիւկուն» տուին նստողներին ու անցան առաջ՝ գէպի միւս սենեակը, միայն Խէջօն մի քիչ ոտը կախ դցեց ու պատուիրեց գինի բերել:

—Աշտարակի ոսկեգոյն գինուց,—գոռաց Մկօն միւս սենեակի շեմքից ու թուքը կուլ տուեց:

Գինետան միւս սենեակը, որ բաժանուած էր առաջինից մի դռնով, շատ ընդարձակ էր: Այդ սենեակի բոլոր պատերի երկարութեամբ շարուած էին տախտակներ ու երկոտանի նստարաններ, որոնց առջև մի քանի կէտերում կանգնած էին ուրագաշէն մերկ սեղաններ: Սենեակը սաստիկ խոնաւ էր և գինու դարշահոտութեամբ լցուած. նրա երկու անկիւնում կիտուած էին երկու խոշոր աղբակոյտեր: Սեղանի վրայ և նրանց

տակ լճացած գինու մէջ խառնիխուռան թափթփած էին հացի փշանք, մեծ ու փոքր սսկորներ, պատառուտուած խաղաթթիթի կտորներ, ջարդուած շիշեր ու բաժակներ։ Մեղաններից մէկի շուրջը բոլորուած էին չորս հոգի, երևի վաճառական դասակարգից և, շիշերը սեղանի վրայ շարած՝ եռանդով փասօն<sup>\*)</sup> էին խաղում։ Մի ուրիշ սեղանի մօտ նստած էին երկու հոգի, որոնց երեսն ու շորերը պատած էին սպիտակ փոշիով. դրանք էլ տառիկներ էին, աղահանքում աշխատողներ։ Նրանցից մէկը բարձր ձայնով շիքեաստի էր երգում, իսկ միւսը անդադար ծափահարում էր ու խրախուսում ընկերոջը՝ «սաղ օլ», կամ «կեցցէ» բացականչութիւններով։

Մեր տղերքը պատի տակ վեր դրին իրանց մուրճերը և նստեցին աղատ սեղաններից մէկի շուրջը։ Շուտով ներս մտաւ Վարոսը և գրեց սեղանի վրայ երկու շիշ գինի և երեք հատ լայնաբերան խոշոր բաժակներ։

—Վարնս բիծա, էլի՞ էս ծտի աջքերը մարդամէջ բերիր,—ասաց Կարաս-Մկօն, ցոյց տալով առջևի բաժակը,—վեր կալ, դէն շպրտիր, Աստուածդ սիրես, թէ չէ, յանկարծ գինու հետ կուլ կ'էթայ, խայտառակ կը լինենք. լաւ, դու ինձ չես ճանաչում, դու չես իմանում; որ ուղտին գդալով չեն ջրում, որ կարասը մատնոցով չեն լցնում։ գնա, ողորմի ծնողացդ, գնա էն լիստիկ բականերից մինը բեր։

—Այ քո արե՛գ թաղեմ, Կարաս, էլի՞ դու լիս ընկար, —ներքին բաւականութեամբ ասաց Վարոսը ու մի բակալ բերելով գրեց Մկօնի առջև։

—Այ կեցցէս. արժի սրանով խմելը. գոնէ մարդու կատիկը կը թրջուի, —անհամբերութիւնից ձեռները տրորելով ասաց Մկօն։

—Համեցէք, ախազէր Վարոս, համեցէք, —հրաւիրեց Խէջօն, երբ նա ուղում էր հեռանալ, —էս մի բաժակը անուշ արա, յետոյ գնա։

\*.) Մի տեսակ թղթախաղ։

—Զեր կենացը, տղէք, Աստուած աջողութիւն տայ, Աստուած ձեր ախալէրութիւնը անխզելի անի, —մաղթեց Վարոսը ու բաժակը գատարկեց: —Ե՞փ, Ե՞փ, —բացականչեց նա, բերանը սրբելով, —դինի հօ չի, մեռն ամեռն:

Խէջօն, որպէս հիւրատէր, լցրեց բաժակները ու մի փոքր բաժակ ինքը վերցնելով, ասաց.

—Տղէք ջան, վեր կալէք մի մի բաժակ խմենք մեր ու մեր ախալէրութեան կենացը. մի մի բերան խնդրենք Աստուածանից, որ մեզ երկար կեանք տայ ու ախալընութիւնից անպակաս անի:

Մ'կօի աչքերը խմելու ցանկութիւնից վառւում էին ու պոչները դողդողում: «Ամմէն», ասաց նա ու բակալլ միանգամից գատարկեց: «Օխայ» շնչացին նրա թըրջուած շրթունքները:

—Խէջօ ջան, ինչ որ բարեմաղթեցիր, Աստուած թող լսի ու կատարի. Ամենակարողը մեզ իրար մօտ ամօթալի չը թողնի: Տէր, փառքդ շատ լինի, —աչքերը առաստաղին ուղղելով ասաց Սաքօն ու խմեց:

Այնուհետև տղերքը սկսեցին խօսել գինու որպիսութեան մասին: Բոլորն էլ հաւանում էին. մէկին գուրէր դալի համը, միւսին՝ գոյնը, իսկ Մկօն գովում էր գինու թնդութիւնը, ասելով, թէ իսկական Տղամարդի գինի է:

Բաժակները նորից լցուեցին:

—Մկօ ջան, էս մի մի թասը խմենք մեր ախալը Սաքօի կենացը: Ի հարկէ, նա, մեր մեծ ախալըն ա, ու մենք պարտական ենք ամեն ժամանակ նրան պատուել ու յարդել: Սաքօ ջան, քո կենացը, քո աջողութիւնը. երկնային Աստուածը տայ, որ ինչքան ապրես, լաւ ապրես՝ լիքը բօթիլէն առջեդ ու թասը ձեռիդ:

—Ամմէն, —կարճ կարեց Մկօն ու կուլ տուեց:

—Նատ չնորհակալ եմ: Աստուած կեանք տայ, Աստուած ձեզ էլ աջողութիւն տայ:

Բաժակները շրիկարիսկացին ու դատարկուեցին:

Այնուհետև հերթով խմեցին Մկօի ու Խէջօի կենացն էլ։ Ամեն կենաց բաժակի վրայ թէ Խէջօն ու թէ Սաքօն որոշ բարեմազթութիւններ էին անում. իսկ Մկօն բաւականանում էր միայն «ամմէն»-ով ու բակալը քամում։ Տարօրինակ բնաւորութիւն ունէր այդ գինու գերի մարդը։ Գինին տեսնելուն պէս նրա լեզուն կապւում էր, միաքը շփոթում և այդ բանական արարածը մի բոպէում փոխում, դառնում էր կ'ասես անլեզու անառուն։ Նա ամբողջ ժամերով նստում էր գինու առջե սուս ու փուս, բաւականանալով միայն ընկերների խօսակցութեանը ականջ գնելով և ուրբաթախօսի պէս հաղարից մի անգամ հատ ու կտոր բառեր արտասաւնելով։ Այս դրութիւնը շարունակում՝ էր, քանի գեռ գինին չէր ներգործել, իսկ երբ որ նա 15 բակալ դատարկում էր, կամ, ինչպէս ինքն էր ասում՝ «15 դրադուզը անցնում էր», նրա լեզուն փոքր առ փոքր սկսում էր բացուել։ Լուրջ ժամանակ Մկօն երբէք երգած չը կար. իսկ երբ 15 դրադուզը անցնում էր, նրա երդի տուտն էլ ինքն իրան բացւում էր։

Շիշերը դատարկուել էին, Խէջօն մի կվարտ գինի էլ պահանջեց։ Նորից Վարոսի կենացը խմեցին։ Սաքօն ցանկութիւն յայտնեց Վարոսի կենաց բաժակի վրայ երգելու և առանց ընկերների հաւանութիւնն ստանալու՝ իր նուազած ձայնով սկսեց կլկացնել մի պարսկական տխուր բայեաթիւ։

— Ձմեն, ախպէր ջան, — խրախուսում էր նրան Խէջօն, ծափահարելով։

Սաքօի մեղեդին գեռ շարունակում էր։ Նրա ձայնը հետզհետէ բացւում էր ու բարձրանում։ Նրա կարմրատակած երեսը և բոցավառուող աչքերը ցոյց էին տալիս, որ նա զգացւում է իր երգից։ Նա երգում էր մի վշտահար հօր երգ, որի որդիքը նրան տուն ու տեղից արտաքսել, սար ու ձոր էին գցել, իսկ տարաբախտ ծնողը անտիրական շան նման փողոցներում թափառելով՝ օտարի դրան փշրանքն էր ժողովում և աչքերը

կապուտակ երկնքին ուղղած՝ իր ապերախտ որդիների պատիժը խնդրում: Դա Սաքօի միակ սիրելի երգն էր:

Այդ երգը Մկօին բոլորովին չէր դրաւում: Նա սառտիկ ցանկանում էր խմել, անընդհատ խմել: Տեսնելով, որ Սաքօն բանը շատ է երկարացնում, նա լցրեց մի բակալ ու լուռ կոնծեց. քիչ յետոյ մի բակալ էլ խմեց և այսպէս մինչեւ Սաքօի երգի վերջանալը նա մի շիշը բուլորովին դատարկել, իսկ միւսը արդէն կէսին էր հասցրել:

Սաքօն վերջացրեց երգը և սրտի ամենամուժ խորշերից խորին յոգոց արձակեց, յետոյ նա վերցրեց գիշուու շիշը, դողդոջուն ձեռքով լցրեց բաժակները և առաջարկեց խմել էն մարդի կենացը, որ ոչ Աստուծուց որդի է խնդրում, ոչ էլ սուրբերից՝ ցաւ ու կրակ:

—Որդի, —շեշտեց նա՝ բաժակը վերցնելով.—որդի ասած բանը որ կայ, դա մարդուս ջանի որդն է, նրա միսը ուտող ցեցն է. առաջուց պիտի աշխատես, քանի կարող ես, որ էդ անիծուած ցեցը ծնունդ չառնի, իսկ թէ տեսար երևաց, պիտի օր առաջ ջարդես, խեղդես, ոչնչացնես. թէ չէ մէկ էլ կը տեսնես, որ ջանդ ու ջիգարդ բոլորը կրծուել, սիրտ ու թոքդ արիւնուայ են արել... Խմենք էն մարդու կենացը, որ ոչ որդի կ'ուզի, ոչ էլ որդու աշխատանկի վրայ յոյս կը դնի:

—Ամմէն, ասաց Մկօն ու խմեց:

—Ես էլ կը խմեմ, որ Աստուած չար զաւակը վերացնի, իսկ բարի զաւակին երկար կեանք տայ, —նոյն պէս շեշտելով արտասանեց Խէչօն, որ այդ բոպէին մըտաքերեց իր փոքրիկ՝ հոգու չափ սիրելի Սամսոնին:

—Բարի զաւակ, —կրկնեց Սաքօն ատամները կը ճնտացնելով ու բոռնցքը սեղմելով.—աախ, զաւակն էլ սկի բարի կը լինի, նրա հոգին եմ անիծել ես:

Վերջին խօսքերը արտասանելիս Սաքօն այնպիսի ուժով բոռնցքը զարկեց սեղանին, որ բոլոր բաժակները, կ'ասես սարսափելով, տեղներից վեր թռան և ուշաթափուած կողքերի վրայ վէր ընկան:

Խէջօն տեսնելով, որ Սաքօն արդէն «լուել է» և իմանալով, թէ որ աստիճան կոռւասէր է նա հարբած ժամանակ, չուզեց հակառակել:

Թինու շիշերը նորից լցուեցին. նորից Մկօն մի քանի բակալ լուութեամբ դատարկեց: Նրա սառած դէմքի վրայ փոքր առ փոքր կենդանութեան նշաններ էին նըշ կատում: Նրա աչքերը սկսում էին վառուել և լեզուի կապանքները բացուել: Կենացների սովորական կարգը վաղուց խանդարուել էր և ամեն մարդ իր ձեռով բաժակը լցնում ու խմում էր, երբ ուզում էր: Իսկ երբ շիշերը դատարկւում էին, Մկօն առանց Խէջօի կամքը հարցնելու վստահօրէն գինի էր պահանջում: Խէջօի գըշլուխն էլ արդէն տաքացել էր: Թէև նա գինետուն մըտնելիս մտքում վճռել էր չափը չը կորցնել, բայց չը կարողացաւ. քանի որ լուրջ էր, քանի խելքը գլուխն էր, երեսը չը բռնեց, որ ընկերների պահանջը մերժէր, կամ նրանց նստած թողնէր ու ինքը գինետնից դուրս գար. վերջապէս այդ բանը ընկերական կանոնների ընդդէմ՝ նամարդութիւն կը լինէր: Իսկ այժմ, երբ նրա գլուխը կարդին տաքացել էր ու ինքը ուրախ տրամադրութեան մէջ էր ընկեր, այժմ նա էլ խնայողութեան մասին չէր մտածում: Վաղուց նա կորցրել էր պահանջած գինու հաշիւը. իսկ Վարոսը, օդտուելով հիւրերի տրամադրութիւնից, համ գինու հաշիւը մէկին մէկ աւելի էր նշանակում, համ էլ բերած գինուն մէկին երկու չուր էր խառնում: Խմողները ոչինչ չէին հասկանում. նրանք չէին կարողանում նկատել, որ առաջուայ ոսկեգոյն, Տըղամարդի զինու փոխանակ այժմ մի ինչ որ անդոյն ու յրահամ հեղուկ են խմում:

—Ես խմում եմ ախալէր տղի կենացը, ասաց Խէջօն. —Լաւ ընկերի գլխին մատաղ լինեմ. համ էլ իմ մեղաւոր բերանովս կը ինդրեմ Աստուծուց, որ մեզ ընկերամիջի ամօթալի չանի:

—Ճո բեր, մի բեր էդ սիրուն պոօշներդ պաշեմ յէ, —դոչեց Մկօն ու մօտ քաշելով Խէջօի փոշապատ

գլուխը, բարձրաձայն շրջպղոցով համբուրեց նրա աղուտուած շրթունքները:

Սաքօն անատամ բերանը լայն բացած՝ գլուխը տարութերելով բարձր երգում էր: Խէչօն ձայն էր պահում և շուտշուտ՝ «սաղ օր» բացականչութիւնով խրախուսումներան: Մկօն էլ կամաց կամաց սկսում էր դունդունալ:

—Եյ կեցցես, կեցցես,—գոռաց Խէչօն ծափահարելով, երբ Սաքօն երգը վերջացրեց.—Մկօն ջան, ախաղէր Մկօն, տես ինչ եմ ասում, վեր կալ մի մի թաս խմենք ախաղէր Սաքօի կենացը. Աստուած վկայ, ափսոս մարդ է, տեղովը կեանք ու հոգի է, հոգի...

—Պուշտի եմ ուզում, պուշտի,—աղաղակեց Մկօն յարձակուելով Սաքօի վրայ և գրկելով նրա անմաղ գըլուխը:

Նըթունքների շրջպղը գինետունը լցրեց:

—Համբերիր,—ասաց Մկօն, Սաքօի ձեռը պինդ բռնելով,—թասդ չը խմես. ես պիտի երգեմ քո կենացի վրայ, —և իր ուժեղ բասով սկսեց երգել հայկական երգերից իր ամենասիրելին—«Զախորդ օրերս»: Նրա ձայնը այնպէս էր հնչում, որ կ'ասես երգողը մի հոգի չը լինէր, այլ մի ամբողջ խումբ: Մկօնն սկսեցին ձայնակցել նաև Սաքօն ու Խէչօն: Թէև համ երգի բառերը, համ էլ նրա եղանակը սաստիկ աղաւաղուած էին ձախորդութեան այդ հարազատ զաւակների բերանում, բայց և այնպէս երգի ընդհանուր իմաստը նրանց համար հասկանալի էր մնում և նրանք երգում էին զգացուած:

### III

Դինետան մէջ գտնուող միւս խմբերն էլ հետզհետէ կենդանութիւն էին ստանում և աղմուկը աւելացնում. չորս կողմից լսում էին հայերէն ու թուրքերէն երգի ձայներ, բաժակների շրջպղը լսելոց, բարձր ծա-

փահարութիւն, աղմկալի համբոյրներ, ուռաներ, հազար  
ու մի կեղտոտ խօսքեր:

—Օդո ջան, Օդո,—ասաց դէմ ու դէմ նստած երկու  
տառիկներից մինը Բաղօին,—չարդ տանեմ, վեր կալ էս  
մինն էլ խմենք, որ Տէր Աստուածը մեզ մեր տեսած  
օրից յետ չը դցի:

Նրա լեզուն գինու աղդեցութիւնից սաստիկ սօթ  
էր տալիս և բառերը նրա բերանում կիսով չափ կըր-  
ճատում էին:

Սաքօն լսելով Բաղօի առաջարկութիւնը բարձր  
ձայնով քրքջաց.

—Այ անասուն, դիմեց նա Բաղօին, ինչ ես գլխի-  
ցըդ դուս տալիս. քո տեսած օրը ո՞րն է, որ ուզում  
ես տեսած օրիցդ յետ չընկնել: Տնաքանդի տղայ, աչքդ-  
բաց ես արել մուրճն ու աղահանքն ես տեսել ու տա-  
րին տասներկու ամիս իշխ պէս տանջուել ու չարչա-  
ռուել. դրանից էլ վատ ո՞ր օրը պիտի լինի:

Սաքօի դառը քրքիջը նորից լցրեց գինետունը:

—Ի՞նչ ես անատամ ռեխտ բաց անում, քաւթառ  
շուն,—բացականչեց նոյն կիսատպուատ բառերով կո-  
տրուած Բաղօն,—քեզ ո՞վ է հաջացնում:

—Շուն էլ, շան որդի էլ,—վրայ բերեց լրջացած  
Սաքօն և տեղից վեր թռաւ, որ յարձակուի Բաղօի վր-  
րայ, բայց Մկօի երկաթեայ բազուկը նստարանին մեխեց  
նրա ջղոտ մարմինը:

—Դուիդ շան գլխի պէս կը չարդեմ,—սպառնում  
էր Ռապօն, բռունցքը ցոյց տալով,—եթէ տղամարդ ես,  
մի սոն տռաջ արի...

Սաքօի դէմքը բարկութիւնից գեղնեց. նրա շըր-  
թունքները կապտեցին ու ձեռ ու ոտը սկսեցին դող-  
դողալ: Նա անդադար պահանջում էր արձակել իրան,  
բայց անօգուտ:

—Քեզ ասում եմ դիմացիդ մարդը ճանաչիր, թէ  
չէ... շարունակում էր Բաղօն:

—Դէ քո հօրդ... ճշաց Սաքօն և կայծակի արա-

գութեամբ տեղից վեր թռչելով, վերցրեց բակալն ու  
բոլոր ոյժով շպրտեց դէպի հակառակորդը։ Բադօն  
ճարպկութեամբ գլուխը թեքեց և մահաբեր հարուա-  
ծից ազատուեց. իսկ բակալը՝ կաշելով քարաշն պատին՝  
փշրուեց և ապակու կտորները չորս կրղմ ցըսուեցին։

Բադօն չէր կարող կուլ տալ այդ անպատճութիւ-  
նը. նա տեղից կանգնեց, ուզեց յարձակուել թշնամու  
վրայ, բայց զգաց, որ ոսները ճօճւում են ու չեն ու-  
ղում հնազանդուել իր կամքին. բայցի դրանից, Օդօն  
ամուր բոնել էր նրա փէշերից և աշխատում էր հան-  
դարտեցնել։ Ճար չկար. Բադօն փորձեց շպրտել վշը  
ու միանգամայն ջախջախել Սաքօի գլուխը, բայց լիքը  
շիշը՝ նրա թուլացած մատների արանքից դուրս պըրծ-  
նելով, փոխանակ առաջ գնալու, յետ ու յետ թռաւ և  
կաշելով յետսկի պատին, նոյնպէս ջարդուեց։

Բադօի այս անաջողութիւնը ընդհանուր քրքիջ ա-  
ռաջացրեց գինետան մէջ։

Իսկ ուժասպառ Բադօն վեր էր ընկել իր տեղում  
և թուլացած անդամների անդօրութիւնն զգալով, գլու-  
խը սեղանի վրայ էր գրել ու սաստիկ հեկեկում։ Օ-  
դօն, տեսնելով իր ախտօր անպատճութիւնը և չորս  
կողմից նրա հասցէին ուղղուած հեգնութիւնները, չը կա-  
րողացաւ անտարբեր մնալ։ Անպաշտպան ընկերոջ ար-  
տասուրը տակն ու վրայ արեց նրա միրտը, ախտէրու-  
թեան օրէնքը և թասիբը պահանջում էին պաշտպանել  
ընկերոջը և սրբել նրան հասցրած անպատճութիւնը,  
իսկ այդ նպատակին կարելի էր համենել միայն վրիժա-  
ռութեամբ։

—Դէ, ձեր ծնողը... գոռացնա չուխէն հագից հա-  
նելով և Սաքօի վրայ յարձակուելով։

Խէչօն տեղից վեր թռաւ, վազեց նրա առաջ և  
երկու ձեռքով ամուր գրկելով՝ կտրեց նրա ճանապար-  
հը։ Օդօն նախ ուզեց ազատուել Խէչօի ձեռից, բայց  
տեսնելով, որ նա միտք չունի արձակելու, սկսեց կար-  
կուտի պէս բռունցքի հարուածներ իջեցնել նրա գլխին։

Խէջօն սկզբում եռանդով պաշտպանւում էր նրա հարուածներից, բայց տեսնելով, որ ուժեղ հակառակորդը զօրում է իրան, ձեռը տարաւ գրպանը, որ դանակը հանի ու թշնամու փորը թափի: Այդ միջոցին Սաքօն էլ վերցրել էր մուրճերից մէկը և սաստիկ չարչարուելով՝ աշխատում էր ազատուել Մկօի ձեռից, որ Օդօի գլուխը ջարդի:

Դուռը բացուեց և վրայ հասաւ վարոսը:

—Էս ի՞նչ բան է, ի՞նչ խայտառակութիւն, —գոռաց նա դռան շեմքից, —գուք մարդիկ էք, թէ վայրենի գաղաններ:

Վարոսի ձայնից բոլորը սթախուեցին: Օդօն ըռապէապէս յետույետ քաշուեց. Խէջօն հանած դանակը նորից գրպանը դրեց ու պատից կպաւ. մինչև անդամ Սաքօն՝ կռուի այդ թունդ սիրահարը, ձեռքի մուրճը կամացուկ դետին դրեց և սկսեց բարկութիւնից շըրթունքները կրծոտել: Վարոսի երեւալը մի ակնթարթում հանդարտեցրեց կրքերը և վերականգնեց խաղաղութիւնը:

Նա ահագին հեղինակութիւն ունէր իր այցելուների աչքում, նրանից համ ամաչում, պատկառում էին, համ էլ վախենում: Գինետան պատերի մէջ նա և՛ քննիչ էր, և՛ դատաւոր, և՛ տանուտէր. այստեղ ծաղած բոլոր կոիւներն ու վէճերը նա մանրամասն քննութեան էր ենթարկում և ապա յայտարարում իր հեղինակաւոր վճիռը, որին ամեն մէկը պարտաւոր էր անպայման հնազանդուել: Ծանր մեղք գործողները սովորաբար բոլորովին արտաքսում էին խանութից. դա արդէն պատժի ամենախիստն էր: Երբեմն էլ պատիժը սահմանափակում էր նրանով, որ մեղաւորը անաչառ դատաւորի ձեռից մի քանի ապտակ էր ուտում: Իսկ յանցաւորների ահագին մեծամասնութիւնը ենթարկում էր միմիայն տուգանքի: Տուգանքը կայանում էր նրանում, որ մեղաւորը պարտաւորում էր իր հաշուով գնել որոշ

չափով խմիչք և հիւրասիրել արդար հակառակորդներին, որոնց հետ անախորժութիւն էր ունեցել:

Այս անդամ խմանալով բանի էութիւնը և համոզուելով, որ կուուի առիթը տուել է Բագօն, նոյնպէս տեղեկանալով, որ Օդօն ծեծել է միամիտ Խէջօին, երբ սա ընկերաբար ուղեցել է կուուղներին բաժանել, Վարոսը վճռեց, կոտրած ամանների արժէքը՝ յիսուն կոպէկ, պահանջել Բագօից, իսկ Օդօին պարտաւորեցրեց երեք կվարտ գինի առնել և Խէջօին իր ընկերներով հիւրասիրել: Վարոսի վճիռը հիացրեց շատերին:

—Կեցցէ Վարոս բիձէն,—դոչեց Մկօն,—ինձ մի բակալ տուէք, ես նրա կենացը պիտի խմեմ:

Փաստոն խաղացողներից մէկը, հիացած Վարոսի արդար վճռով, բարձր ծափահարեց, իսկ միւսները միաբերան «մաշալլա» արտասանեցին:

—Հ՞ր, ի՞նչ ես ասում, Բագօ, համաձայն ես,—հարցրեց Վարոսը:

—Համաձայն լինելով, համաձայն եմ, բայց... կացուկամ պատասխանեց Բագօն:

—Բայցը ծնցդ գիր, —ընդհատեց նրա խօսքը Վարոսը, —դու ի՞նչ ես ասում, Օդօ, գինին բերեմ, —դիմեց նա միւս մեղադրեալին:

—Բեր էլի՛. որ ասում ես՝ ի՞նչ պիտի անեմ. երեք կվարտ գինին ինձ հօ չի սպանելու:

Վարոսը խկոյն բերեց վեց շիշ գինի, ու մի հատ բակալ և դնելով այն սեղանի վրայ, որի շուրջը նստած էր Մկօի խումբը, հրամայեց յանցաւորներին վերցնել իրանց բաժակները և մօտենալ այդ սեղանին: Հրամանը կատարուեց: Վարոսը իր ձեռովով լցրեց առաջ Մկօի և ապա միւսների բաժակները և մի բաժակ ինքը վերցնելով՝ ասաց.

—Մկօ, ախպէր Մկօ, բակալդ վեր կալ խմենը ծեծող-ծեծուղների կենացը և խնդրենք Աստուծուց, որ նրանց մի քիչ խելք ու հասկացողութիւն տայ, որ կարողանան շնութիւնը մարդկութիւնից դանաղանել և

մարդկութեան ճամբով գնան։ Կոխոք, իրար խեղդելը, իրար միս ուտելը, իրար վրայ հաջալը շան արհեստ է։ իսկ մարդկութիւնը էն ա, որ ախալէր տղաներով նըստես, ուտես, խմես, երգես, ծիծաղես և ընկերներիդ հետ ջան ասես, ջան լսես։ Դէ, —դիմեց նա կռուողներին, —տեղներիցդ վեր կացէք, պոօշտի արէք ու ձերքէֆը շարունակեցէք։

—Այ կեցցե՞ս, կեցցե՞ս դու քո լեզուովը, Վարոս բիձա. Աստուած վկայ, եպիսկոպոսից լաւ ես խօսում։ Խնչ որ բարեմաղթեցիր, Տէրը թռդ լսի ու կատարի. ոզ զորմած Աստուածը մեր ընկերներին էն խելք ու միտքը, էն հասկացողութիւնը տայ, որ շնութիւնից ձեռք վերցնեն ու սրանից յետոյ մարդկութիւն անեն. ուռան, —որոտաց Մկօն ու բակալը դատարկեց։

Կռուողները տեղներից վեր կացան ու ձեռք ձեռքի տալով լուռ համբուրուեցին. այնուհետեւ նրանք լիքը բաժակները վերցրին և միմեանց անուն արտասանելով իրար կենաց խմեցին։ Դրանով էլ հաշտութեան հանդիսաւոր խորհուրդը վերջացաւ ու քէֆը իր սովորական կարգով շարունակուեց։

Կառավարչի պաշտօնը կատարում էր Մկօն։ Նրա լեզուն բլբուլ էր գառել. նա կենացներ էր առաջարկում, անեկդօտներ էր պատմում, սրախօսութիւններ էր անում և ամենից շատ էլ երգում էր. կ'ասես դա առաջուայ լուռ ու մունջ Մկօն չը լինէր. կ'ասես մի դերբնական զօրութիւն նրա վրայ իշած լինէր։ Վերջապէս բանը այնտեղը հասաւ, որ մի ժամանակ արդէն երգում էին մի քանիսը միասին, բայց ոչ մի և նոյն երգը։ Մկօն երգում էր «Զախորդ օրերս» և իր ուժեղ բասով խեղդում էր միւսների ձայները։ Օդօն սկսել էր մի շիքեաստի և կոկորդը պատառում էր, որ կարողանայ իր թոյլ ձայնը այդ դժոխային աղմուկի մէջ լսելի դարձնել։ Խոկ Խէջօն, որի դէմքն ու աչքերը սաստիկ կարմատակել էին, երգում էր մի ինչ որ հայկական ժողովրդական երգ և տակտի համաձայն մատներով

չրթկացնում էր։ Միայն Բաղօն չէր երգում։ Նրա սիրատը խառնում էր։ Նա մօտեցաւ անկիւնի աղբակոյտին և մատը բերանը տարաւ. հանգստացնելով ստամոքսը, նորից վերադարձաւ և շարունակեց խմել առաջուայ կարգով։

## IV

Այդ ընդհանուր աղմուկի ժամանակ վաճառականների սեղանի վրայ լսուեց զբնդպնդոց. նրանք վերջացրել էին փաստօնը և սկսել էին ցլառ խաղալ։ Դըրամների հմայիչ ձայնը լսելուն պէս, Սաքօն տեղից վերթուաւ և վազեց այն կողմը։

—Ի՞նձ էլ թուղթ տուեք, —ասաց նա շնկուած։  
—Փողդ հանիր, յետոյ թուղթ ուզիր, —կոշտութեամբ պատասխանեց թուղթ բաժանողը։

—Առանց փողի հօ չեմ խաղում, —պատասխանեց վիրաւորուած Սաքօն և հանեց վաթսուն կոպէկ ու դրեց առջեւը սեղանի վրայ։

Սկզբում շատ լաւ էր, թուղթը Սաքօին ժպտում էր. նրա հանած վաթսուն կոպէկն աճեց, հասաւ երեք ոութլու և գեռ շարունակում էր աւելանալ։ Այդ աջուղութեան ժամանակ Սաքօի տրամադրութիւնը շատ լաւ էր. նա ուրախուուրախ խօսում, երգում ու ծիծաղում էր և երբեմն էլ մի մի բաժակ կոնծում էր։

Բայց Սաքօի աջուղութիւնը երկար չը տեսեց. շուտով թուղթը նրանից երես թեքեց և նա սկսեց տարուել ու տարուել։ Կարճ միջոցում նրա տարած փողերը որտեղից եկել էին, այնտեղ էլ գնացին. գնաց նաև նրա գրանից հանած վաթսուն կոպէկը։ Սաքօն քթի տակ մի ինչ որ կեղտուա բան մումուաց, յետոյ լցրեց մի բաժակ գինի, կուլ տուեց և գրապանից հանեց էլի ութսուն կոպէկ։ Խազը հետզետէ տաքացաւ, առաջուայ հինգ ու տասը կոպէկի տեղ սկսեցին բռնել քսան, քսանուհինդ, երբեմն նոյն խակ բառասուն կոպէկ։ Սա-

քօի հանած ութսուն կոպէկը խաղաթղթի անաջողութեան դէմ երեք բոպէ էլ չը կարողացաւ դիմանալ:

—Ա՛խ, քո կարտ կտրողիդ հօր հոգին... բաշականչեց նա ատամները կրճացնելով և ձեռքի քսան կոպէկը տանողի առաջ շպրտեց: Յետոյ նա դուրս եկաւ փողոց, մի քար շրջեց ու կրկին ներս եկաւ \*): Նա հանեց գրապանում Ասցած վերջին մի ոռւբլի երեսուն և հինգ կոպէկն ու մօտեցաւ կարտի սեղանին, յուսալով որ գոնէ հիմա թուղթը իրան կը ժպտայ: Բայց իզուր: Զախորդութիւնը կատարեալ էր. Սաքօն տարւում էր ու տարւում: Սաքօի փողերը վերջանալու մօտ էին. մը նում էր միայն տասնուհինգ կոպէկ աւ փող:

—Է՛ս կարտը, խալը հինգ կոպէկ,—ասաց Սաքօն, մի ծածկած թուղթ բռնելով և ստորին պոօշը ամուր կրծոստելով:

—Թո՞ղ գայ, —պատասխանեց թուղթ բաժանողը: Վերջինս մի սեադէմ և միջահասակ վաճառական էր և մի և նոյն ժամանակ շափաղանց անիրաւ վաշխառու. Նրան սովորաբար Սև-Սարօ էին անուանում: իսկ երեսին՝ Սարիբէկ աղա էին կանչում:

—Ո՞ւթ, —բացականչեց ուրախացած Սաքօն, տեղ վեր թուչելով և խաղաթղթերը բանալով:

—Ցիրան, —անվրդով կերպով աւելացրեց Սև-Սարօն, իր թղթերն էլ սեղանի վրայ փուելով:

Երեք անգամ տասներեք շահի՝ երեսունիննը շահի, երկու մանէթից մի շահի պակաս, —վաճառականական արագութեամբ հաշուեց Սարօն. —ուղարկիր:

Սաքօն լուռ էր և կատաղութեամբ մինչև կոկորդը լցուած:

—Ուղարկիր Սաքօ, փողը ուղարկիր, —կրկնեց Սարօն, խալը ընդհատելով:

—Լաւ, կը լինի՝ կը տամ, բաժանիր, —հաղիւ լսելի ձայնով պատասխանեց Սաքօն:

\* ) Քար շրջելը ընդունուած թըլիսմ է, որով խաղացողները ուզում են խաղաթղթի աջողութիւնը իրանց կողմը դարձնել:

— Լաւը էն կը լինի, որ հանես ու համրես։  
 — Բաժանիր, կը տամ, ասացի, — մեղմութեամբ կը բնեց Սաքօն։  
 — Կը տամշմոամ չեմ իմանում, հանիր ու տուր։  
 — Ես բոպէիս չունեմ, հոգիս հօ չես առնելու, յեւ տոյ կը տամ, ասացի։  
 — Չունես... Չունես՝ ուրիշից պարտք վերցրու, կամ չուխէդ հանիր։  
 — Ո՞վ չուխս հանի, — ասաց Սաքօն աչքերը չուելով  
և վրդովմունքից դողդողալով։  
 — Հրամննեքդ. թէ փող չունէիր, գլուխդ քարին  
էիր տալիս, որ խաղում էիր։  
 — Գլուխդ էլ քարին տաս, երեսդ էլ պատին...  
 — Չուխէդ հանիր, քեզ ասում եմ, շան որդի, —  
գոռաց Սև-Սարօն և յարձակուեց Սաքօի վրայ, որ նրա  
չուխէն հագից դուրս քաշի։  
 Յուսահատական էր Սաքօի դրութիւնը։ Այդ չու-  
խէն նրա ծերացած ոսկորները տաքացնող միակ իրն  
էր։ Թէև չուխսայի տակից նա հագած ունէր նաև  
մի կտաւէ շապիկ, բայց այդ կիսամաշ շապիկը շատ  
անզօր էր նրա ալեսոր անդամները ցրտից պաշտպանե-  
լու. այս էր պատճառը, որ Սաքօն չէր ուզում չուխսայ-  
ից բաժանուել և իր բոլոր ուժով պաշտպանում էր  
նրան. նա երկու ձեռով ամուր բռնել էր չուխի օձիքը  
և պինդ սեղմել էր կրծքին։ Սաքօն զգում էր, որ ինքը  
մեղաւոր է, գիտէր, որ Սարօի պահանջը օրինաւոր է,  
հասկանում էր, որ եթէ ինքն էլ լինէր Սև-Սարօի աե-  
զում՝ այս գէպքում էլի նրա պէս կը վարուէր. բայց  
և այնպէս նա չէր ուզում բաժանուել իր չուխսայից, իր  
հալուած ու մաշուած մարմնի միակ պաշտպանից և չէր  
էլ ուզում Սարօի հարուածներն ու հայհոյանքները ան-  
պատասխան թողնել. նա ամենաթունդ ուշոնցներ էր  
թափում Սև-Սարօի դլսին և ատամներով ու սաներով  
աշխատում էր պաշտպանուել նրա հասցրած երբեմնակի  
հարուածներից։

Այդ աղմուկը գրաւեց բոլորի ուշագրութիւնը։ Խէ-  
չօն ու Օդօն կիսատ թողեցին միասին սկսած՝ «Արի, սի-  
րուն, գնա, սիրուն» ժողովրդական երգը և վագեցին  
կռիւը դադարեցնելու։ Այդ միջոցին Մկօն բերանով ա-  
ծում էր մի ինչ որ պարելու եղանակ և իր ահագին  
մատներով թմրկահարում էր սեղանին, իսկ Բադօն տա-  
տանուելով ու կոտրտուելով պարում էր։ Տեմնելով, որ  
աղմուկը սաստկանում է, Բադօն պարելով մօտեցաւ  
վաճառականների սեղանին և սկսեց ստիպողաբար պա-  
հանջել, որ բոլորը ծափահարեն։ Բադօն այդ անտեղի  
պահանջը ընդհանուր քրքիջ առաջացրեց։

Դրսի սենեակի դուռը բացուեց և վրայ հասաւ  
Վարոսը։ Կոռուզները անմիջապէս բաժանուեցին։

—Էլի կռիւ, գոչեց Վարոսը, աչքերը չուելով ու  
դէմքը թթուացնելով։

—Դու դատիր, Վարոս բիձա. սրանից փող եմ  
տարել, բայց չի ուզում տալ, —բողոքեց Սև-Սարօն։

—Ի՞նչքան։

—Երկու մանէթից մի շահի պակաս։

Վարոսը մի բոպէ լոեց և աչքերը ուղիղ Սաքօի ե-  
րեսին դցեց. նա սպասում էր, կ'ասես նա ուզում էր  
մեղադրեալի բերանից պաշտպանութեան խօսք լսել,  
բայց տեսնելով, որ Սաքօն միտք չունի բերանը բանա-  
լու, հրամայական շեշտով ասաց։

—Անզգամութիւն մի անիր, հանիր էն մարդի փողը  
տուր։

—Չունեմ, որտեղից տամ։

—Չունէիր, չը խաղայիր։

—Էլ չեմ խաղայ։

—Տարուածդդ տուր, յետոյ մի խաղա։

—Լաւ ես ասում, Վարոս բիձա, բայց որ չունեմ,  
որտեղից տամ։

—Զհաննամից ու սև խաւարից, անամօթ շուն, —  
գոռաց Վարոսը, —չուխէդ հանիր, շնւտ։ —Այս ասելով՝

Վարոսը յարձակուեց Սաքօի վրայ, որ զօրով հանէ նրա հագի կիսամաշ չուխէն:

Սաքօի սիրտը ճմլուեց: Թէև նա չէր համարձակ-  
ւում ընդդիմանալ Վարոսին, բայց զգում էր, որ կոր-  
ցնում է մի թանկագին, մի շատ սիրելի բան և այդ  
սիրելի առարկայից բաժանուելու րոպէին նրա աչքերը  
ջրակալեցին, արտասուրի մի քանի խոշոր կաթիլներ  
գլորուեցին նրա թորշոմած այտերի վրայով և այդ բիւ-  
րեղանման կաթիլներից երկուոր շողշողացին կիսախա-  
ւար ճրագի թոյլ ճառագայթների տակ:

Խէչօի սիրտը կարեկցութիւնից կտրատուեց, երբ  
նա տեսաւ այդ հպարտ ու ինքնասէր մարդի աչքերում  
արտասուրի կաթիլներ: Նա մեքենայաբար առաջ վա-  
զեց, բոնեց Վարոսի ձեռը և դողդոջուն ձայնով ասաց.

—Համբերիր, Վարոս բիձա, գործ չունես, մի հա-  
նիր սրա չուխէն, Աստուած սիրես մի հանիր. սրա  
պարտքը ես կը տամ:

Վարոսը բաց թողեց Սաքօի թեր, իսկ Խէչօն ա-  
րագութեամի ձեռը տարաւ դրագանը և հանելով քսա-  
կից մի հատ հինգ ոուրիանոց ոսկի, շլրտեց սեղանի  
վրայ.

—Առեք,—աւելացրեց նա յուզուած ձայնով, ստա-  
ցէք Սաքօի տարուածը և աւելին յետ տուէք իրան:  
Խէչօի դլուխը դեռ չի մեռել, որ նա թոյլ տայ ախազօր  
չուխէն հանելու:

Սաքօն ըստ երևոյթին հանգստացաւ. նա կրկին  
նստեց իր առաջուայ տեղում և բռունցքը սեղանին  
զարկելով՝ ասաց.

—Զը մոռանաս, Սև-Սարօ, էս բանը լաւ պահիր  
մտքումի. ես քեզ մի օր կը թուացնեմ: Սու էս ոս-  
կին, երեսունիննը շահիդ վերցրու, մնացածը յետ  
տուր:

Դրանով միջադէպը վերջացաւ և խաղը առաջուայ  
կարդով շարունակուեց: Օդօն ու Բագօն կրկին մօտե-  
ցան Մկօի սեղանին և շարունակեցին իրանց ուրախու-

թիւնը, իսկ Խէջօն նստեց թղթախաղի սեղանի մօտ և սկսեց ուշադրութեամբ հետևել խաղին:

Խէջօն էլ թղթախաղի սիրահար էր: Զահէլ ժամանակ նա շատ գիշերներ էր թղթերը ձեռին՝ բաց աչքով լուսացրել և շատ էլ վնաս էր տեսել: Խէջօի հօր տունը գիւղի շէն օջախներից մէկն էր: Մի ժամանակ նըրանց դոնից երեսուն էշ միասին էին դուրս գալիս. նրանց աշխատանքը ծովեր կը կապէր: Բայց լուսահոգի Գասպարը երբ մեռաւ և քսան տարեկան Խէջօն տունը անտէր ու անտիրական թողնելով զանազան գուարճութիւնների անձնատուր եղաւ, այդ ժամանակից էշակչոնց շէն ու լի տունը կամաց կամաց սկսեց դատարկուել: Խէջօն օր ու գիշեր գինետնից դուրս չէր գալիս. նա խմում էր ու խաղում: Խէջօի բարեկամները տեսնելով, որ տղէն օրէցօր փշանում է, վճռեցին նրան ամուսնացնել, որ «Խելքը զլուխը գայ»: Եւ իսկապէս, ընտանիքի ու զաւակների տէր դառնալով, Խէջօն սկսեց հետզհետէ աշխատանքի կպչել: Հօրից ժառանգած կարողութիւնից այդ ժամանակ մնացել էին միայն մի քանի կտոր ընտիր հողեր, որ Խէջօն մշակում և լաւ էլ արդիւնք էր ստանում: Բայց ափսոս, որ նա խմելն ու խաղալը վերջնականապէս չը թողեց: Ամեն կիրակի էլի նա յաճախում էր գինետուն և ամբողջ գիշերը այնտեղ անցնում: Մի գիշեր նա տարուեց իր արծաթէ գոտին և ինքն իրան խօսք տուեց այնուհետեւ բոլորովին չը խաղալ, բայց չը կարողացաւ իր խոստումը կատարել: Այդ դէպքից երկու շաբաթ յետոյ նա նորից խաղաց և այս անդամ տարուեց տասներկու փութ բամբակ, այսինքն իր ամբողջ տարուայ եկամուտը, որով պիտի ընտանիք պահէր ու երեխաներ կերակրէր: Այդ օրուանից արդէն Խէջօն երդուեց այլեւ ձեռու կարտ չառնել, իսկ հետևեալ առաւօտը մուրճը վերցրեց ու դէպի աղահանք ուղևորուեց...

Այն չարաբախտ օրից անցել էր ութ տարի, բայց մինչև այսօր Խէջօն հալում ու տանջում էր պարտքի

սարսափելի տոկոսների և աղահանկքի մաշեցնող կամարների տակ:

## V

Սպօն տարւում էր ու տարւում: Նրա թղթերը շարունակ ձախ էին գուրս գալիս. տարւեց նրա վերջին կոպէկը և նա սկսեց սարսափելի ուշունցներ թափել բերանից զանազան որոշ և անորոշ հասցէներով: Նա հայհոյում էր և՝ խաղ հնարողին, և՝ բախտ բաժանողին, և՝ ինքն իրան, և՝ սատանային և աւելի մաքուր էակներին... Իսկ Խէչօն լուռ մոտածում էր և ատամները կրճլտացնում: Նրա ներսում սարսափելի կոփւ էր կատարւում:

—Ինձ էլ թուղթ դցիր,—երկար մտածելուց յետոյ խեղդուած ձայնով գիմեց Խէչօն թուղթ բաժանողին և հանեց գրպանից երեք ոռուրիանոց մի թղթագրամ: Այդ րոպէին նրա երգմնաղանց ձեռները սաստիկ գողդում էին: Խէչօն տաքացած էր և խաղում էր րիսկով: Ռիսկով էին խաղում և միւսները, որոնք աչքի պոչով տեսել էին Խէչօի գրպանի սոկիները:

Խէչօի բանը շատ ձախ էր գնում: կ'ասես Սպօնի անաղողութիւնը անցել էր նրա վրայ: Նրա հանած երեք ոռուրիանոցը շուտով մանրացաւ ու հալուեց:

Խէչօն նորից մոտածմունքի մէջ ընկաւ: «Բաւական է, ասում էր նրան մի ներքին ձայն, ձեռք վերցրու, Խէչօ, յիշէր երգումի»:

Այդ անախորժ ձայնը ալեկոծում էր Խէչօի սիրտը և նա ջղաձգաբար ճմլում էր երեսն ու ճակատը:

«Ե՞նչ ես վհատում, ասում էր նրան մի ուրիշ՝ աւելի դուրեկան ձայն, գա տղամարդութիւն չէ. տղամարդը սկսած գործը կիսատ չը պէտք է թողնի. մէկ էլ կը տեսնես թուղթը փոխուեց, աջողութեան դուռը բացուեց... Այն ժամանակ համ տարուածդ յետ կը ըստանաս, համ էլ բաւական տարած փող կ'ունինաս...»:

Խէչօն վճռեց հետեւել այս վերջին խորհուրդին. իսկ առաջին ձայնի խայլոցը անդգալի դարձնելու համար՝ վերցրեց կարմիր գինու լիքը շիշը և մօտեցնելով շըրթունքներին՝ մի հանգով դատարկեց նրա կէսը:

Խաղի ամենասապք ժամանակը, երբ ոռուբլիները կոպէկների պէս էին ձեռքից անցնում, յանկարծ Խէչօի թուղթը փոխուեց և սկսեց աջող բացուել. բայց այդ աջողութիւնը շատ կարճատեւ եղաւ ու նրան յաջորդեց մի յուսահատեցնող ձախորդութիւն, որ տեսեց մինչեւ խաղի վերջը: Խաղը վերջացաւ միայն այն ժամանակ, երբ Խէչօն թափ տուեց քսակի անկիւնները, չը թողնելով նրա մէջ մի կոպէկ անդամ: Սաքօն, որ մինչեւ այդ ժամանակ Խէչօի կողքին նստած՝ նրա տալացուկի և առնելացուկի հաշիւն էր պահում, խաղի վերջում մի քանի բաժակ գինի խմեց ու աննկատելի կերպով ծըլկուեց: Խաղացող վաճառականները ոտի կանգնեցին, տանողտարուողի կենացը խմեցին ու խմբովին դուրս եկան գինետնից:

— Տղէք, լաւ պլոկեցինք, կամաց ասաց Սև-Սարօն, երբ փողոց դուրս եկան:

— Հաղար մանէթ էլ որ ունենար, էս գիշեր բոլորը կը տանէինք, աւելացրեց միւսը:

— Կատարեալ էշ է, իսկի բան չէր հասկանում,— ասաց երրորդը:

— Խելք մնացել էր գլուխն, որ բան հասկանար. գինու մէջը չը մեռնի, — նկատեց չորրորդը:

— Ես նրա բոլոր թղթերը ճրագի լուսի գէմ տեսնում էի, — պարծեցաւ Սև-Սարօն:

— Իւկ ես թղթերը սարքում էի:

Այսպէս մեր վաճառականները պարծենում էին, որ զանազան խարդախութիւններով խաբել են միամիտ մշակին ու նրան կողոպտել:

Խէչօն մնացել էր մենակ, գինետան մի անկիւնում թղթի սեղանի մօտ կծկուած: Նա երկու ձեռով ամուր բոնել էր գլուխը և մոտածում էր: Հաղար ու մի դառն

մոքեր պաշարել էին նրա ուղեղը և սաստիկ ճնշում էին նրա սիրառ։ Թէև կարմիր գինու հրաշալի զօրութիւնը բաւականաչափ մեղմացնում էր այդ մոքերի պատճառած սարսափը, բայց և այնպէս նա անկարող էր բոլորովին մոռացնել տալու յուսահատեցնող իրականութիւնը։ Խէջօն տիսուր էր, սարսափելի տիսուր «Լա էր, լաւ էր, երեք ամսուայ աշխատանքդ մի քանի ժամում ջուրը գցեցիր, լաւ եղաւ», ասում էր նոյն ձայնը ներսից։ Խէջօն ատամները կրծտացնում էր, բռունքքը սեղմում, կ'ասես, նա ուզում էր բռնել այդ աներեւոյթ էակին, ուզում էր ուժեղ մատներով սեղմել նրա կրոկորդը, սուր ատամներով պատառուել նրա մարմինը, որ էլ չը համարձակուի մարդու սիրառ մաշել։ Բայց չէր կարողանում եւ սրտի հերսից միայն մազերն էր ձըգձպատում։

Մկօն նստած էր իր առաջուայ տեղում՝ եւ համարեա քսաներորդ անգամ կրկնում էր «Զախորդ. օքերս» ու մատներով չրթկացնում։ Օդօն էլ ձեռքը ականջին դրած՝ շիքեաստի էր երգում ու ինքը իր ձայնով հըրճում։ Իսկ Բագօն գլուխը սեղանի վրայ դրած խոլմփացնում էր։

Խէջօն յանկարծ տեղից վեր կացաւ, գլուխը թափահարեց, արագութեամբ մօտեցաւ Մկօի սեղանին և ասաց.

—Ես էլ պիտի խմեմ, տղէք, եկէք խմենք, նորից խմենք ու քէֆ անենք։ —Նա վերցրեց մի ձեռով Մկօի առջեսի բակալը, իսկ միւսով գինու շիշը և միմեանց յետեից երեք բակալ դատարկեց։

—Կեցցէ, կեցցէ իմ ախպէրը. Սուրբ Երրորդութեան չնորքը ստացար, —մեծ ուրախութեամբ բացականչեց Մկօն. —ըեր, մի բեր էդ սիրուն ճակատդ պաշեմ։ —Նա երկու ձեռով ամուր գրկեց Խէջօի գլուխը եւ սկսեց պաշալչել նրա երեսի զանազան մասերը։

Խէջօի քաջագործութիւնը Օդօի հիացմունքն էլ շարժեց եւ սա իրան պարտաւոր համարեց խոնարհուել

նրա տղամարդութեան առջեւ. նա պատկառանքով մօտեցաւ իր նախկին թշնամուն, երեք անդամ՝ համբուրեց նրա ճակատը և շարունակեց իր շկեաստին:

Շուտով Խէչօն էլ սկսեց երգել: Թէեւ սկզբում նրա ձայնը դժուարութեամբ էր դուրս դալիս եւ նա երգում էր զօրով, բայց կամաց-կամաց ամեն բան կարգի ընկաւ, հետզհետէ ոգեւորուելով՝ նա սկսեց համ սրտալի երգել, համ ծափ տալ, համ էլ պարել: «Երրորդութեան սուրբ չնորբը» շուտով իր ազդեցութիւնը ցոյց տուեց. Խէչօն երկար երգելուց ու պարելուց յետոյ վերջապէս սաստիկ թուլութիւն զգաց, տեղն ու տեղը վեր ընկաւ: Նրա երեսը կարմրատակել էր, աչքերը սաստիկ ուռել էին եւ ձեռ ու ոտը թուլացել՝ ուժից ընկել: Նա մի անդիմագրելի պահանջ էր զգում պառկելու, բայց որովհետեւ նստարանը նեղ էր ու անյարմար, այդ պատճառով աւելի լաւ համարեց պառկել սեղանի տակ, խոնաւ գետնի վրայ, հաղար ու մի տեսակ կեղտոտութիւնների մէջ: Պառկեց ու իսկոյն մըրափեց:

Կէս գիշերը վաղուց անց էր, արլորները կանչում էին: Ներս մտաւ Վարոսը եւ հրամայեց այցելուներին հաշիւը տալ ու հեռանալ, որ ինքը կարողանայ մի քիչ աչքը կալցնել: Այդ հրամանը ինչքան էլ որ անախորժինէր մուշտարիների համար, այնուամենայնիւ պարտաւորեցուցիչ էր եւ հարկաւոր էր անպատճառ հնապանդուել նրան: Ճարահատեալ Մկօն ծանրութեամբ տեղից վեր կացաւ, բեզի տակ մի բան վնթվնթաց, յետոյ առանց շտապելու վերցրեց իր թաղիքէ դլխարկը, թափ տուեց ու ծածկեց: Օդօն էլ դուրս դալու պատրաստութիւն էր տեսնում: Սկսեցին քնածներին զարթեցնել. Բաղօն շուտ զարթեց. նա աչքերը տրորելով դնաց գէպի անկիւնը եւ ազբակոյտի վրայ կռանալով՝ սկսեց որձկալ. նրա սիրաը էլի խառնում էր...

Մկօն երկար ժամանակ աշխատում էր զարթեցնել Խէչօին, բայց չէր կարսղանում: ոչ նրա ահեղ գուսցը

և ոչ ոտի հարուածները չեին ներգործում քնածի վրայ։  
Ուրիշ հնար չը գտնելով, վերջապէս Մկօն բռնեց նրա  
ականջներից և սկսեց բոլոր ուժով թափահարել ու  
ճմկթել։ Սաստիկ ցաւի ազգեցութիւնից Խէչօն իր կարմ-  
րած աչքերը կիսով չափ բացեց, մի շուարած հայեայք  
դցեց չորս կողմը և կրկին աչքերը փակեց։ Այնուհետեւ  
Մկօն շատ չարչարուեց, բայց ոչ մի կերպ էլ չը կարո-  
ղացաւ Խէչօն ուշքի բերել, վերջապէս նա վճռեց քնա-  
ծին շալակով տուն հասցնել։

Բագօն իր և իր ընկերի հաշիւը տուեց ու նրանք  
դուրս եկան գինետնից։

Մնաց Խէչօն հաշիւը Վարոսը լաւ իմանալով, որ  
Խէչօն քսակը բոլորովին դատարկուել է և որ նա չի  
կարող վերցրած դինու փողը վճարել, առանց տատա-  
նուելու հանեց նրա հագի չուխէն և պահելով իր մօտ  
որպէս գրաւական, քնած այցելուին Մկօն շալակը տուեց  
ու գինետնից դուրս դցեց։

Դրսի օդը շատ հով էր. սառը քամին նեղ փողոցով  
սլլալով անցնում էր. Մկօն կանգ առաւ փողոցում,  
կենդանի բեռը վեր դրեց, հանեց իր կարճիկ արան,  
քնած ընկերին հագցրեց, ապա կրկին շալակելով՝ ճամ-  
բէն հանդարտ շարունակեց։

Խէչօն վիղը ճլորուել էր. նրա գլուխը թեքուել էր  
դէպի ձախ և անդադար օրօրւում էր. եօթնօրեայ կի-  
սալուսինը իր արծաթափայլ ճառագայթներով լուսաւո-  
րում էր Խէչօն դունաստ դէմքը եւ մեռելային տեսք էր  
տալիս նրան։ Խոկ Մկօն իր միանման լայն քայլերով  
հանդարտութեամբ առաջ էր գնում եւ քթի տակ  
երգում։

«Զախորդ օրերս ձմրան նման կուդան ու կ'երթան։

«Վհատուելու չէ, վերջ կ'ունենան, կու դան ու  
կ'երթան...»

ԱՐԾԱԿ ՇԱՀՆԱԳԱՐԵԱՆ

# ՀԱՅՈՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

## ԽՎԻՆ ԴԱՐԱԽՄ

III \*)

Յայտնի է թէ ինչ ահազին դեր է կատարել Մխիթարեան միաբանութիւնը հայ ազգի մէջ։ Վստահ կարելի է ասել որ մի ամբողջ դար, մինչև XIX դարի կէսը, դա միակ հիմնարկութիւնն էր, որ լոյս և գիտութիւն էր մատակարարում հայերին։ Մի անօրինակ բեղմնաւոր զրական գործունէութեամբ ո. Ղազարի վաճքը դարձաւ մի երևոյթ, որի նմանը չէ տեսել մեր պատմութիւնը։ Հայերը շատ տեղեր էին աշխատում ծաղկեցնել մայրենի զրականութիւնը, բայց ոչ մի տեղ չը կարողացան հաւասարուել Վենետիկի հայ կրօնաւորներին, որոնք երկար ժամանակ անյաղթենի և աննկուն տիտանների նման էին երևում ազգի աշքին։

Իբրև այսքան խոշոր մի երևոյթ, Մխիթարեան միաբանութիւնը, բնականաբար, շատ լիքէն տեսանք որ Հոօմի ստրուկ հայ կաթոլիկութիւնը համարում էր մխիթարեաններին ոչ բաւականաշատի ջերմեռանդ հաւատացեալ. այդ վերաբերմունքը շարունակուեց երկար, յարուցեց փոխորիկներ, որոնք մեծ ազգեցութիւն առնեցան Մխիթարեան ուժատի վրայ: Նշանաւոր է, որ մինչդեռ մխիթարեանները Փանատիկոս լատինամոլութեան աշխոռմ դաւաձաններ էին, հայ-լուսաւորչականներն էլ չէին ընդունում նրանց իբրև իբրանց շահերին նուիրուածների։ Երկու կողմի համար էլ ո. Ղազարի կրօնաւորները դաւաձաններ էին։ Ինչու էր այսպէս Թողնելով առ այժմ պրօպագանդայի նեղսիրտ աշակերտներին, տեսնենք թէ ինչ էր Մխիթարը լուսաւորչականների կարծիքով։

XIX դարի կէսում Մխիթարեան միաբանութիւնից հե-

\*) Տե՛ս «Մուլհակ» № 1.

ուացած մի քանի հայ վարդապետներ տարածեցին մեզանում այն կարծիքը, թէ Մխիթար Սեբաստացին բոլորովին նուիրուած չէր կաթոլիկութեան, թէ այդ կաթոլիկութիւնը միայն մի դիմակ էր նրա համար, որովհետեւ գործելով իստալիայում, վայելելով կաթոլիկ աշխարհի նիւթական և բարոյական աջակցութիւր, նա արտապուատ, այդ բարիկաների համար, իրան ձևացնում էր հարազատ կաթոլիկ, մինչդեռ հոգով կողած էր իր մայրենի եկեղեցուն: Մխիթարի յաջորդներն էին—ասում են շատերը մեղանում—որ դաւաճանեցին իրանց առաջին աբբայի սկզբունքներին, չը կարողացան թաղնուել նրա դիմակի տակ, չը կարողացան կնդժել և խարեւ, ինչպէս անում էր Մխիթարը, այլ խրուեցին թունդ կաթոլիկութեան մէջ, դարձան Հոօմի կոյր արբանեալիներ <sup>(\*)</sup>):

Որքան ճիշտ է այս վկայութիւնը: Որքան ճիշտ է թէ Մխիթարը ձարավիկ ձեւնածուի նման խարում ու մոլորեցնում էր պատական աթոռը այնքան ժամանակ:

Մեղ թււում է որ հարցը ճիշտ կերպով չէ լուսարանուած մինչև այժմ Պէտք է, ամենից առաջ, թողնել Մխիթարի դիմակի մասին կաղմուած տուսապելը: Ամենից շատ առողջ գատողութիւնն է այսողէս ուահամծում: Մխիթարի պէս մի անձնաւորութիւն, որի համար այնքան ահազին, առաջնակարգ նըշանակութիւն ունի կրօնական ջերմեսանդութիւնը, չէր կարող կնդժել մօտ կէս դար, երբ նաև վարում էր իր միարանութեան զլիսաւորի պաշտօնը և ստիպուած էր պայքար մղել իր հակառակորդների դէմ: Խարեւ, ուրիշի աջքին թող փչել, երկրիմի ու կնդժաւոր արարքներով մարդկանց բարեսրտութիւնը շահսործել—այսպիսի յատկութիւններ չը պիտի որոնենք մնաք մի ճնշաւորի մէջ, որ հազնում էր կաչեայ շապիկ և այդ շասպիկի վրայ խիտ առ խիտ շարուած էին սուր երկաթէ խայթոյներ <sup>(\*\*)</sup>): Նրա գործերից ոչ մէկը չէ վկայում թէ ճիշտ որ նա խարում էր, իսկ կաթոլիկ կղերը, Հոօմի քթի տակ, այնքան միամիտ էր, որ խարում էր այդ մարդու ձեւագին...

\*) Որքան մեղ լայտնի է, առաջին անդամ Մխիթարի մասին այսպիսի կարծիք լայտնել է մեղանում Դարբիէլ վարդապետ Սբվաղովակին իր ռուրուսագիծ ողոյ և ընթացից Մխիթարեան Մխարանութեան» բրոշիրում (Պարիզ, 1857): Ազնուհետեւ նու իրեն լաւատեղիակ առաջնորդ հանդիսացաւ ուրիշների համար, որոնք կրկնեցին մի և նոյն բանը (օր. Միքայէլ Շալբանդեան—«Հիւափափազը», 1858, Ա. Երիցեան—«Վենետիկի Մխիթարեանց», Թիֆլիս, 1883):

\*\*) Աղոնց, եր. 82:

Ոչ, Մխիթարը կաթոլիկ էր.—ոչինչ յանցոնք չը կայ այս հանդամանքի մէջ։ Իր տպագրած Աստուածաշունչի վերջում Մխիթարը պարզ ասում է. «Թէպէս սիրում եմ իմ աղջը և նրա օդտի համար աշխատելը, բայց դրանով իմ սիրու Հոօմի սուրբ եկեղեցու ուղղափառ հաւատի դաւանութիւնից չէ թուրանում։ Եւ հակառակը. թէս ամեն կողմով ինձ միշտ ենթարկել եմ և ենթարկում եմ Հոօմի գահի հնազանդութեան, որովհետեւ մեր հայր սուրբ Լուսաւորիչն էլ օրինակ է ինձ համար, բայց դրանով իմ սէրը և իմ աղջի օգտի համար աշխատելու ջանքը (թէս աղջը ինձ այսպիսի հնազանդութեան համար արհամարհէ) երբէք չի թուշանայ»։ Իրաւոնք ունինք չը հաւատալու այսքան հաստատ ու որոշ դաւանութեան։—Երբէք։ Եւ սակայն մեղանում եղել են մարդիկ, որոնք հէնց այս իսկ խօսքերի վրայ են հիմնել իրանց կարծիքը թէ Մխիթարը դիմակ ունէր։

Թիւրիմացութիւնը ամբողջապէս առաջ է գալիս այն հանդամանքից, որ Մխիթարը առաջինն էր, որ հայերի մէջ այսպիսի սկզբունք էր քարոզում։ Որոնելով դիմակ Մխիթարի դէմքի վրայ, մենք նկատի չենք առնում թէ աղջ և Հոօմ տարբեր բաներ են, թէ կարելի է լինել հաւատացող կաթոլիկ և միաժամանակ նաև հայ։ Մինչև Մխիթարը մեղանում չը կար այսպիսի հասկացողութիւն։ Կաթոլիկութիւն—նշանակում էր կատաղի, կոյր, անհաշտ թշնամութիւն հայութեան, հայոց լեզուի, հայ աւանդութիւնների դէմ։ Մխիթարը առաջին հայ-կաթոլիկն էր, —հասկանալով այս բառը իր ճշմարիտ, արդար մաքով, —աղդով հայ, կրօնով կաթոլիկ, ինչպէս կայ կաթոլիկ ֆրանսիացի, սպանիացի, գերմանացի։ Ա. Ղազարի վանքը մեղանում վաղուց սկսուած կաթոլիկական հոսանքի առջե կանզնեց իրրե դրանիւեայ անկիւնաքար, որ դարձնում էր այդ հոսանքը անմիտ լատինամոլութիւնից և աղջատեացութիւնից դէսլի հայասիրութիւն։ Դեռ ունիթօրների ժամանակից Հայաստանում մի ողբավի իրողութիւն էր դարձել թէ Հոօմի ետեից գնալը նշանակում է հայութեան դէմ գնալ։ Մխիթարեան միաբանութիւնը եկաւ ջախջախելու այդ հին վիշապի գլուխը։ Նրա հիմնադրի միծութիւնը անմենից շատ այս հանդամանքի մէջ էր երեւում։ Նա հասկացաւ և դործադրեց այն ճշմարտութիւնը թէ կարելի է Հոօմինը Հոօմին տալ, աղջինը—աղջին։

Բաղմաթիւ իրողութիւններ և վկայութիւններ կան, որոնք հաստատում են Մխիթարի ուղղամիտ կաթոլիկութիւնը։ Իրեւ կրօնաւոր, նա կաթոլիկ էր և Հոօմի եկեղեցու շահերին նուիրուած։ Կեղծաւորութիւն և խարեւայութիւն չենք կարող դանել

այն յարաբերութիւնների մէջ, որ նա ունէր Հոօմի հետ. Նրա աշակերտները, քարոզիչի գաւազան վերցրած, Հայաստան էին գնում ոչ թէ դիմակաւորուած միաբանութեան գործերը պատմելու, այլ պարզապէս պապականութիւն տարածելու համար: Բայց եթէ նա միենոյն ժամանակ այնքան լայն ու ազատամիտ հայեացքների տէր էր, որ միւս ֆանատիկունների նման չէր ընդունում թէ ոչ-կաթոլիկի հայութիւնը մի ժանափառ է, որից պէտք է փախչել, այդ, ի հարկէ, չէ նշանակում թէ նա դիմակաւորուած լուսաւորչական էր:

Միիթարը երեան եկաւ մի այնպիսի ժամանակ, երբ կաթոլիկութիւնն ու լուսաւորչականութիւնը միմիայն անողորմ կուր էին ճանաչում իրար դէմ, կոփու ինչպէս հնարաւոր էր—ձիրաններով, ժանիքներով, մահմեդական բանտերով, մատնութիւններով և այլ այսպիսի ստորութիւններով: Սեբաստացի կրօնաւորը ընկաւ հալածանքների մէջ, բայց այդտեղ նա ճիրաններ սրել չը սովորեց, վրիժառու կրքեր չը վառեց իր մէջ: Նա բացեց հաշտութեան, համբերողութեան ճանապարհը. կրօնական վէճերը նա անցկացրեց մտքի, գրաւկանութեան շրջանը: Միիթարը հիանալի կերպով ըմբռնեց այն ժամանակուայ դրութիւնը: Տեսնում էր հայ ազգի տղիտութիւնը և հասկանում էր որ այդ տղիտութեան յաղթովը ոչ կ. Պօլսում կամ էջմիածնի մօտ լոյն գրած եղուփանների ճարպիկութիւնն ու անբարոյական մեքենայութիւնները կարող են լինել, ոչ խանների ու փաշանների կոկորդը խրած կաշառքները, այլ մի բան միայն—զիտութիւնը: Դա միանգամայն անսխալ միջոց էր և անխորտակելի դէնք: Հարիւր տարինների ընթացքում ո. Ղազարի վանքը լոյս էր հանում կաթոլիկութեան չառագոլութիւններ, քարոզում էր պապական գաղափարներ, բայց հայ ազգը, նոյն իսկ նրա ամենամոլեռունդ մասը, չէր այրում այդ գրքերը, այլ նրանցով դարդարում էր իր տները, կարդում էր և շարունակում էր համարել այդպիսի գըրքեր հրատարակողներին յարգանքի ու պատուի արժանի հայեր: Համաձայննել կամ հակառակուել այդ գրքերին կարող էր ամեն մէկը. բայց ինչ էլ լինէր, Միիթարեան միաբանութիւնը յաղթահարեց ամբողջ ազգը, հաղատակեցրեց իր հեղինակութեան, դարձաւ մտքերի տէրն ու հրամանատարը: Նա զիտուն էր, լաւ պատրաստուած, և մեր հայրենի տղիտութեանը մնում էր գետնաքարը ընկնել նրա առաջ, գալարուել անկարողութիւնից:

Բացի գրականութիւնից, Միիթարը իր գործունէութեան համար մի ուրիշ միջոց էլ ընդունեց—քարոզչութիւնը: Սա նրա ամենամեծ սխալն էր, որ շարունակեցին և նրա յաջորդները: Միսիօնարական եռանդ և ընդունակութիւն Միիթարեանները երբէք

չեն ցոյց տուել: Ամբողջովին դրվերի նուիրուած մի վանական միաբանութիւն, որ մի ակաղեմիա էր հայ ազգի համար, չէր կարող իր սահմանափակ միջոցներով մի առանձին արդիւնք աւելացնել կաթօլիկ պրօպաղանդայի վրայ, բայց այդ պաշտօնը, որ թիւրիմացութեամբ թէ հանգամանկների ստիպմամբ նա յանձնն էր առել, միշտ ջլատել է նրա ոյժերը, հեռացրել է նրան խսկական կոչումից—զրական գործունէութիւնից, և բաւական գցել է Մխիթարեանների հեղինակութիւնն ու պատիւը: Անհաւմեմատ արդիւնաւոր կը լինէր ս. Դազարի մտաւոր գործունէութիւնը, եթէ նրան աջողութեր հեռու մնալ այն պայքարներից, որ մզւմ էին հայերի դէմ լատինամոլ կաթօլիկները: Բայց այդպիսի բախտ չունեցաւ նա, և առաջինը Մխիթարն էր, որ իր վանքի մէջ մտցրեց մի այդպիսի սխալ և անօգուտ ուղղութիւն: Այստեղ արդէն մերգալի հակառակ կողմն է երեսում:

Մխիթար Սեբաստացին այն տեսակ գործիչներից չէր, որոնք երևան են դալիս իբրև վերանորոգիչներ և, կոփւ յայտարարներ անհամակրելի սկզբունքների, պակասութիւնների դէմ, յաղթանակ են խլում երկար ու յամառ մաքառումների միջոցով: Դա կօմպլոմիսի, զիջողութիւնների մարդ էր, որի համար մեծ նշանակութիւն ունէր «փոլիթիքան». իսկ յայտնի է որ «փոլիթիքա» ասած բանը աջողութիւն հնձում է միայն այն դէպւում, երբ արհամարհում է նոյն իսկ բարոյական սկզբունքները:

Իր միաբանութեան դիրքը ապահովելու համար, նրա գոյութիւնը կաթօլիկ աշխարհի աջքում անհրաժեշտ դարձնելու համար, նա առաջ քաշեց քարոզչական, միսիօնարական գործը: Մենք չենք ասում թէ հայերին կաթօլիկացնելու միտքը անկեղծ չէր Մխիթարի մէջ: Ոչ. մենք հաւատացած ենք որ նա կարող էր շատ համողուած լինել թէ այդպէս հարկաւոր է, մանաւանդ որ սկզբում, մինչև Վեհնետիկ վիտսադրուելը, միաբանութեան առաջ դիմաւորապէս քարոզչական գործունէութիւնն էր դրած: Բայց ինչու էր այդ հանգամանքը առանձնապէս շեշտուում այն բազմաթիւ վկայագրերի մէջ, որ տուել են Մխիթարին զանազան կաթօլիկ կղերականներ. Մխիթարը, առհստարակ, համեստ մարդ էր, փախչում էր պատիւներից, մինչև կեանքի վերջը վարդապետ մնաց, իսկ «Աբբայ» պատուանշանը, որ տուած էր Հոօմից, այնքան վիրաւորում էր նրա հոգու խոնարհութիւնը, որ նա այդ բառից առաջ միշտ դնում էր «կոչեցեալ»: Եւ սակայն Մխիթարը անպատեհութիւն չէր համարում ընդունել այն պիսի գովասանական թղթեր, որոնց մէջ շեշտուում էր նրա ուղղափառ ու հարազատ կաթօլիկութիւնը և մանաւանդ այն՝ թէ նա իր աղգակիցների մէջ քարոզում է հոօմէական դաւա-

նութիւնը: Կղերականների տուած վկայաթղթերի վրայ աւելանում են Հայաստանի գտառներից եկած հանրագրերը. Եւդօկիայից 1710 թուականին դրում են թէ Մխիթարի աշակերտները այնտեղ փայլում են արեղակի պէս և եթէ միշտ մնային այնանդ, ամբողջ քաղաքը կաթօլիկութիւն կ'ընդունէր: Անկիւրիայից ուղարկուած հանրագիրը վկայում է որ Մխիթարի միաբանութիւնը հնազանդեցնում է հայերին կաթօլիկ եկեղեցուն: Նոյն տեսակ վկայութիւններ գալիս են Կ. Պոլսից, Զմիւնիայից, Սերաստիայից \*): Այդ թղթերը առանց Մխիթարի կամ նրա աշակերտների զիտութեան չէին կազմեում. դրանք հարկաւոր էին ոչ այնքան ընտանեկան ախորժելի ընթերցանութեան համար, որքան Հոոմին ներկայացնելու և նրանից աջակցութիւն գտնելու համար:

Պակասը լրացրին Մխիթարի թշնամինները: Դրանց պատպանձեցնելու համար Մխիթարը պիտի հաւատացնէր Վատիկանի իշխաններին որ ինքը ոչ միայն ջերմեուանդ կաթօլիկ է, այլ և նպատակ է ընտրել առաքելական քարոզութիւնը հերձուածող հայերի մէջ: Եւ Հոոմը այդպէս էլ նայում էր հայ փարդապետների միաբանութեան, այսինքն տեսնում էր նրա մէջ մի գործիք, որի միջոցով աւելի հեշտ պիտի լինէր պրօպագանդան առաջ տանել հայերի մէջ. գոնէ այսպէս է արձանագրել պատմութիւնը \*\*):

1718 թւականին Մխիթարը գնաց Հոոմ՝ անձամբ բայցարութիւններ տալու և իր վրայ բարդած ամբաստանութիւնները հերքելու համար: Կլեմէս XIX պապը նրան շատ սիրով ընդունեց և փայտիաց: Եթէ հաւատանգ Մխիթարի կենսագրութեան, այդ ընդունելութեան մէջ էլ գործում էր նոյն աստուածային մատը, որ բերել հասցրել էր սեբաստացի վաճառականի որդուն այստեղ: Բայց աւելի բնական է ընդունել որ ո. Պետրոսի աթոռակալը բազմաթիւ վկայութիւններ ունէր իր առջև՝ Մխիթարի օգտակարութեան մասին և հէնց այդ պատճառով էլ այնպէս սիրալիք էր նրա հետ, յօժարութեամբ հաւատաց նրա անմեղութեան և ի նշան իր բարեհաճութեան՝ չնորհեց հազար հատ ինդուլցիանցիա, որպէս զի Մխիթարեան քարոզիչները տարածեն Հայաստանի հաւատացեալների մէջ:

Մեզ յայտնի չէ թէ ինչպէս Մխիթարը արդարացրեց իրան պապական հաւատագննութեան առաջ. նրա ներկայացրած թղթերի բովանդակութեան ծանօթ չինք, որովհետեւ կենսագրու-

\*.) Աղոնց, եր. 242—233.

\*\*) Լավուս և Ռամբո—„Վսուածա Իստրոյա“, տ. VI, մ. 1899, եր. 231

թիւնը ամենայն իմասմքով թագցրել է այդ բոլորը, բաւականանալով միայն անորոշ խօսքերով թէ Աստուծու օգնութեամբ Մխիթարը յաղթող գուրս եկաւ, լուցրեց իր թշնամիներին: Եւ Մխիթարի՝ դէպի Հոօմին ունեցած յարաբերութիւնները թաղուած կը մնային մժութեան մէջ, եթէ 1879 թուին Զմիւռնիայում մի կաթոլիկ վարդապետի ձեռքով չը հրատարակուէր մի բրօշիւր<sup>\*)</sup>, որ գոնէ աղօտ լոյս է դցում այդ իմնդրի վրայ: Այդտեղ տպուտծ վաւերաթղթերից մենք նախ և առաջ իմանում ենք հետեւեալը. «Արբազան Պապն և Ս. Ժողովն աէ Բրօբականտա Փիտէ կացուցեալ են զՄխիթար Աքրա հայրն վերակացու և հովիւ ամենայն ազգին Հայոց, զի կառավարեսցէ զնոսա ըստ խոհեմութեան իւրում և ոչ այլ ոք իշխիցէ ի վերայ նոցա»: Սա արդէն մի ապացոյց է որ Մխիթարին այնքան էլ խորթ չէին իշխանապետական տեհնչերը, ինչպէս ճգնում են ցոյց տալ նրա աշակերտաները: Անշուշտ բոլոր հայերի կառավարիչ և հովիւ դառնալը նոյնպէս մի միջոց էր միաբանութեան գիրքը ամրապնդելու և հակառակորդներին լուեցնելու համար: Եւ իրաւ Հոօմը, տալով նրան այդպիսի իշխանութիւն, այնքան հաւատ ունէր նրա վրայ, որ պատրիարքական փոխանորդութիւնից արձակեց մի կաթոլիկ եպիսկոպոսի<sup>\*\*)</sup> այն պատճառով, որ նա Մխիթարի և նրա աշակերտաների դէմ խօսել էր: «Փօլիթիքայի» միջոցով այսպէս հաշիւներ տեսնել հակառակորդների հետ—ահա ինչ սրսխաների մէջ էր ընկնում սեբաստացի նախակին ճգնաւորը: Կաթոլիկ կղերականութեան մէջ գուցէ առանց այսպիսի միջոցների չէր էլ կարելի աջողութիւն գտնել: Բայց իրողութիւնը մը նումէ: Ահա նոյն «փօլիթիքայի» մի այլ աւելի անհրապոյր կողմը:

Սպահանի և Նոր-Զուղայի մէջ սկսուած կրօնական կատաղի խոռվութիւնները<sup>\*\*\*)</sup> հարց արծարծեցին կաթոլիկների մէջ թէ չը պէտք է յաճախել հայ-լուսաւորչականների և կեղեցիները: Հոօմի պատճը վճիռ արձակեց այդ մերովէ Խոկ երբ կրօնական խառնակութիւնները Պարսկաստանից անցան թիւրքաց Հայուստան, այդտեղ գործող քարողիներն ու վարդապետները պահանջում էին որ պապական այդ մէիոք գործադրուի նաև Թիւրքիայում գտնուող հայ եկեղեցիների վերաբերմամբ: Այդ ծայրա-

\*) Անրբայ Մխիթարայ վարդապետի արարեալ պատճառք որք սորերին ընդդէմ նոցին, որք ասեն թէ ոչ երբէք պարտ է զնալ ուղղափառաց ի ժաման հայոց», հրատարակեց Դուկաս վարդապետները պահանջում էին որ պապական այդ մէիոք գործադրուի նաև Թիւրքիայում գտնուող հայ եկեղեցիների վերաբերմամբ: Այդ ծայրա-

\*\*) Եր. 19—20.

\*\*\*) ՀՀայկական Տպագր. 1, Եր. 251—254.

յեղ անհամբերողութիւնը Մխիթարին չափազանցութիւն էր երևում: Լատինացման դաղափարը դրանով կատարեալ յաղթանակ պիտի տանէր. հայ-կաթոլիկները մի կողմից հռոացրուած պիտի լինէին հայ երեղեցուց, իսկ միւս կողմից՝ բոլորովին զրկուած սեփական եկեղեցի ունենալու հնարաւորութիւնից, որովհետև Թիւրքիայում նրանք ենթարկուած էին Կ. Պօլսի հայոց պատրիարքի իրաւասութեան և իրաւունք չունէին առանձին եկեղեցիներ կառուցանելու:

Այդ պատճառով Մխիթարը 1733 թուի ապրիլի 14-ին Հոօմին ներկայացրած մի մանրամասն գրութեան մէջ ապացուցանում էր թէ կաթոլիկները կարող են գնալ լուսաւորչականների եկեղեցիները: Սնկասկած, նա մի շատ արդար դատ էր պաշտպանում: Մխիթարը, հայութեան դաղափարի նախանձահնդիր, շատ լաւ գիտէր որ հայ-կաթոլիկութիւնը այն չը պիտի լինի, ինչ ուզում են դարձնել լատինական կղերականները. դա նոյն ազգի մի մասն էր, բաժանուած կրօնով, և եկեղեցական մերձաւորութիւնը կը լինէր երկու մասերի համար փոխադարձ յարգանքի և համերաշխառութեան կապ: Ճշմարիտ հայ-կաթոլիկութիւնը, որի ներկայացրուցիչը Մխիթարն էր, միայն վրդովուել կարող էր այն խրատից, որ կաղմել էին պապականնութեան կոյր սարուկները և որ ասում էր. «Հայոց ժամուն առջևին անգամ մի անցնիր. իսկ եթէ անցնել պէտք եղաւ ու գդակի գըլիսէդ հոն ձգեցիր, ներս մի մտներ առնելու, ձգէ փախիր» \*): Նոյն խակ բոլոր հայերին կաթոլիկ դարձնելու տեսակէտից էլ շատ վնասակար էր այս աստիճան արհամարհանքը դէպի լուսաւորչական եկեղեցին: Մխիթարը գնաց այդ հոսանքի դէմ: Բայց ինչպէս էր նա պաշտպանում այդ դատը:

Նա ասում էր թէ հայոց եկեղեցին Հոօմի կողմից պաշտօնապէս չէ ճանաչուած հերձուածող, բայց հայերը իրապէս հերձուածող են: Թէ այսպէս, բայց պէտք է թոյլ տալ որ ուղղափառները գնան հերձուածողների եկեղեցին, որովհետև ուրիշ ճար չը կայ. եթէ ճար լինէր, եթէ կաթոլիկութիւնն էլ իր եկեղեցիներն ունենար, այն ժամանակ, ինչ խօսք, չը պէտք էր թոյլ տալ ուղղափառին մտնել չարափառի եկեղեցին: Բայց ճար չը լինելուց, ուղղափառներին չը պէտք է արգելել և այն պատճառով, որ ոչինչ վնաս չի լինի, եթէ նրանք ազատ մտնեն հերձուածող եկեղեցին, որովհետև կաթոլիկները զարգացած են, իսկ հերձուածող հայերը՝ տգէտ. կաթոլիկը հեշտութեամբ կա-

\*.) Այսպազովսկի, «Ռուսագիծ», էր. 41.

բողանում է յաղթել հերձուածող քահանաներին և որսում է հերձուածողներին, մինչդեռ վերջիններս չեն կարողանում նոյն իսկ մի հատ ուղղափառ որսալ:

Բայց այսքանը գեռ ոչինչ: Լատինամոլները և կեղեցիների բաժանումն էին պահանջում մանաւանդ այն նպատակով, որ կաթոլիկները և լուսաւորչականները միմեւանց հետ սիրով չը կապուեն, կամ ուրիշ խօսքերով—թշնամի մնան միմեւանց, որպէս զի կաթոլիկները նորից չը վերադառնան լուսաւորչական եկեղեցին: Այդ կասկածները ցրելու համար Միսիթարը գրում էր հետևեալը.

Տաղագայ այն կասկածելի վնասը թէ ուղղափառները, ժամ գնալով, կը կապումն հերձուածողների հետ սիրով ու այդպիսով կը մոլորուեն, երբէք տեղի ունենալ չէ կարող: Եւ դրա պատճառը հետևեան է, ուղղափառները ալնքան զգուած են հերձուածողներից, որ եթէ արանցից իւրաքանչիւրը հարիւր տարի ապրէ և հարիւր քարտիչները լորորեն ուղղափառներին պակասեցնել իրանց զգուանքի հարիւր աստիճաններից մէկը, չեն կարսղ պակասեցնել: Եւ այս բանի նշանը յալտնի է նրանով, որ հայ անունից էլ, որ ազգի անուն է և ոչ թէ ազանդի, ուղղափառները նոյնաչս զգուած են. և եթէ հնար լինէր, նրանք հայ անունն էլ կը ջնջէին իրանցից: Եւ քանի որ այս այսպէս է, ի՞նչպէս կարելի է որ կապուեն նրանց հետ սիրով: Կայ և այլ պատճառ. հերձուածողները իրանց տգիտութեան և կոպտութիւնների պատճառով այնքան յիմարութեամբ են վարւում միշտ, որ եթէ ուղղափառները նոյն իսկ աշխատէին էլ սիրել նրանց և կամ ախորժելի զանալ նրանց մէջ, զարձեալ չէր լինի սէր և կասկալցութիւն:—Ռւրեմն մնում է այն, որ չը կալ մի պատճառ, որից զրգուած՝ զրկենք ուղղափառներին իրանց եկեղեցիներից նրովին ետև այն եկեղեցիները տեղի շատ ուղղափառների եկեղեցիներ են, քան հերձուածողների: Նրանք հիմնուել են մեր սուրբ և ուղղափառ հայրերի ձեռքով: Եւ հերձուածողները համարեա թիւրքաց բռնութեան օղնութեամբ են զալիս մտնում մեր եկեղեցիները և ոչ թէ մենք ենք գնում նրանց եկեղեցիները: Եւ մեր այնտեղ մտնելով ուղղափառների թիւր օրէցօր բազմանում է և ամենքը շահուամ են: Դրանով էլ մեր եկեղեցիները աղատում են հերձուածողների ձեռքից: մենք գտնում ենք թիւրքերի իշխանութեան տակ և չենք կարող հերձուածողներին արտաքսել մեր եկեղեցուց ու մաքրել մեր եկեղեցին: Ուստի մեզ մնում է միայն այն, որ նրանց զէպի մեղ զարձնելով՝ մաքրենք եկեղեցին: Բայց եթէ մենք դուրս գնանք ու թողնենք եկեղեցին նրանց, այն ժամանակ եկեղեցին յափիտեան կը մնայ անմաքուր, իսկ մենք առանց եկեղեցու թափառական ու անկրօն կը լինենք զուր տեղից: —Դարձեալ այս էլ յայտնի է, որ ամեն տեղ մեծածանները և խորհեմ մարդիկ ուղղափառ են և նրանք են եկեղեցիների մէջ և իշխանաւորների դռներին իշխող ու խօսող: Խակ երբ ալսպիսի իշխողները իրանք իրանց արտաքսեն եկեղեցիներից, այն ժամանակ այս եկեղեցիներում իշխող կը մնան աղքատները և լիմարները: Եւ եթէ պատճառում է երրեմն, որ մի որ և է պատճառով ուղղափառները կամենում են խօսել, խաժամուժ և տգէտ ամբոխը, լուղուած շար քահանաների ձեռքով, սկսում է աղաղակել թէ զուք ու չէք հաւանում և չէք գալիս մեր եկեղեցիները, ի՞նչպէս կարող էք այժմ մեծաբանութեամբ իշխու մեր եկեղեցիների վրայ:

Այս պատճառով եթէ մեծատուն և խոհեմ ուղղափառները միշտ գտնուեն եկեղեցիների մէջ, ոչ ոք չէ կարող ընդդիմանալ նրանց, և ինչ էլ հրամայեն, կարող են կասուրել տալ Տիրոջ օգնութեամբ։ Եւ այսպէս փոքր առ փոքր կարելի կը լինի սրբել և մաքրել մեր եկեղեցիները \*):

Ահա ինչ լեզուով խօսել գիտէր Հոօմի հետ այն մարդը, որին մեղանում համարում են կաթոլիկական դիմակի տակ զործող հայ-լուսաւորչական։ Բայց եթէ մնաք Մխիթարի այս խօսքերը համարենք նրա անկեղծ ու խորին դաւանակք, այն ժամանակ շատ տարբերութիւն չենք դտնի նրա և Պրօպագանդայի մի մոլի աշակերտի մէջ։ մինչդեռ թէ Մխիթարի և թէ նրա միաբանութեան գործերը կրաշխաւոր են, որ նրանց մէջ չը կար այն աստիճանի ֆանատիկոսութիւն, որ հայոց եկեղեցիները պիղծ և անմաքուր համարէին։ Նրանց վերաբերմունքը դէպի հայ «Ներձուածողները» աւելի մեղմ էր, աւելի բարեկամական, քան այս զրութեան մէջ։ Եւ եթէ Մխիթարի անունը կրող մի այս տեսակ անպատիւ թուղթ է մնացել, պատճառը Հոօմին հաճոյանալու քաղաքականութիւնն էր, մի բան, որ մինչեւ մեր օրերը Մխիթարեան միաբանութեան անհամակրելի կողմն է կազմում և շատ փաստերով է երևան եկել։

Մեղ կարող են ասել թէ ուրիշ կերպ չէր էլ կարող վարուել Մխիթարը։ Մի անցյատ հայ վարդապետ չէր կարող Հոօմին դասեր տալ ջնջել այն դարաւոր նախապաշարմունքը, որ ասում էր թէ ով Հոօմի հետ չէ, նա պիղծ և անմաքուր հերետիկոս է։ Այն, միանդամայն ճիշտ է այս առարկութիւնը։ Բայց մնաք արձանագրում ենք փաստը, որպէս զի պատկերացնենք Մխիթարեանների ոպին, այն մժնողորաը, որ ստեղծուեց ս. Ղաղարի վանքում սկզբից ենթ։ Դա շատ կարենոր է՝ միաբանութեան դրական գործունէութիւնը բնորոշելու համար։ Թէս մեզ համար աւելի հաճելի և պատուաբեր կը լինէր որ Մխիթարի պէս խոչոր անձնաւորութիւնը ճշմարտութեան անվեհելը զինուոր հանդիսանար, չը քաշուէր իսկութիւնը յայտնելուց, ուր և երբ էլ հարկաւոր լինէր դա, բայց չեղածը եղած դարձնել մենք չենք կարող։ և պատմութիւնը, որ լոյսերի հետ գծաղրում է նաև ստուերները, չէ կարող անաշառ չը լինել և մեծ մարդկանց վերաբերմամբ։ Կօմպրօմիսների քաղաքականութիւնը միշտ այսպիսի հետևանքներ է առաջացնում։ Եւ մենք կը տեսնենք թէ որպիսի ազգեցութիւն է թողել այդ քաղաքականութիւնը ս. Ղաղարի երկարատեկ, զարմանալի գործունէութեան վրայ...

Մի ուրիշ հարցի մէջ էլ Մխիթարը ցոյց տուեց թէ որքան

\*). «Արքայ Մխիթարայ վարդապետի Պատճառք», եր. 46—47.

մեծ առաքինութիւն է համարում յարմարուելը, կոռուի մէջ չը  
մտնելը։ Մենք շատ անգամ առիթ ունեցանք խօսելու լատինաց-  
րած հայերէնի մասին, տեսանք որ հայոց լեզուի մէջ հրէշաւոր  
աղաւաղութիւններ մտցնողները գլխաւորապէս լատինամոլ կա-  
թօլիկներն էին։ Այդ ֆանատիկոսները հայերէնը լատինացնելու  
մէջ չէին զեկավարում լեզուն հարստացնելու, կենդանացնելու  
մտքով, այլ ունէին նոյն դաւանափխական տենդը, որ նրանց  
ամբողջ էութիւնն էր վարակել։ Նրանք համոզուած էին որ հայ  
աղջը կ'աղաւուի հերձուածողական և հերետիկոսական կարծիք-  
ներից միայն այն ժամանակ, «երբ լատիններէնի ճիշտ թարգմա-  
նութեամբ զրուեն և բացատրուեն հոօմէական դաւանանքի  
խօսքերը» \*): Ունիթօրների սկսած այս բարբարոսութիւնները  
գնալով ողողեցին հայոց լեզուն. լուսաւորչականներն էլ են-  
թարկուեցին լատինացման ոգուն և այնպիսի գրագէտներ, ինչ-  
պէս էին Ստկան վարդապետը, Ղուկաս Վանանդեցին, պաշտում  
էին այն խորթ արհեստականութիւնները, որոնց ծնողը կաթօ-  
լիկութիւնն էր։ Առանց այդ էլ մեր գրաբար լեզուն վաղուց  
կորցրել էր իր կենսունակութիւնը, անհասկանալի, արհեստա-  
կան էր. կաթօլիկական աղաւաղումները տեղի ևս դժուար,  
անմարսելի գարձրին նրան։ Եւ այդ զրութեան հասցրած լեզուն  
տիրապետող էր մեղանում մանաւանդ XVII դարի ընթացքում։

Միսիթարը զգում էր լեզուն այդ բարբարոսութիւններից  
աղաւանու անհրաժեշտութիւնը. նա գիտէր որ պէտք է վերա-  
նորոշել գրաբարի հին ձեռքը, վերադարձնել նրան նախկին  
հարստութիւնը ու այգովէս գործածութեան մէջ մտցնել։ Բայց  
զրա համար պէտք էր հակառակուել լատինամոլների կուսակ-  
ցութեան, որ այդ ժամանակները լատինացրած հայերէնի քերա-  
կանութիւններ էր հրատարակել։ Երկար մտածեց Միսիթարը,  
բայց չը կարողացաւ լատինամոլներին հակառակուելու համար-  
ծակութիւն ստամալ. նրանց զայրացթը չը զրդուելու համար նա  
ստիպուած եղաւ, հակառակ իր համոզվունքի, ընդունել բարբա-  
րոսական աղաւաղումներից շատերը և միայն մի քանի մասեւ-  
րում համարձակութիւն ունեցաւ վերականդինել զրաբարի կա-  
նոններն ու ձեռքը։ Զը կարողանալով յայտնապէս հակառակու-  
թիւն և թշնամութիւն հանել լեզու խանգարողների դէմ, Միսի-  
թարը ընտրեց կօմպրօմիսի ճանապարհը, յոյս ունենալով որ ա-  
ղաւաղումները հետղհետէ կը վերանան. և այդպիսի միջին ճա-  
նապարհ, հակառակորդներին չը դրգուելու, ամենքին շահելու մի-

\*) Աւրուադի Միսիթարեանց, եր. 35.

ջոց ներկայացնում է նրա «Քերականութիւնը», որ տպագրուեց 1730 թուականին \*): Նոյն այդ նպատակով էլ Մխիթարը չը կարողացաւ ազատել իր տպագրած գեղեցիկ, պատկերագրով Աստուածաշունչը այն նորմուծութիւններից, որոնք կային Ռուսականի Աստուածաշունչի մէջ: Յայտնի էր, որ Ռուսանը սրբագրում էր մնար հին զրքերը լատինացրած հայերէնի ձևերի համաձայն: Բայց Մխիթարը շատ քիչ բան ուղղեց Ռուսանի նորութիւններից, աւելին անել չը կարողացաւ \*\*):

Այս բոլորից պարզ է թէ կախովիկական ձգտումները որքան մեծ աղղեցութիւն ունեին Մխիթարի և նրա միաբանութեան վրայ: Միանգամայն անկախ ու ինքնազլուխ դիրք զրաւել ու Դաղարի կղզու վրայ, Հոռոմի աչքի առջե, անկարելի էր. և հայ ազգի գրական անխոնջ մշակները միշտ պէտք է զբանաւէին դամօվլեան սրի տակ, որ չափաւորում է եռանդը, զրկում է ինքնուրոյնութիւնից ու համարձակութիւնից: «Ի՞նչ կ'առէ Հոռոմը»—ահա այն սուրբ, որ միշտ կախուած էր Մխիթարեան վանքի վրայ...

## IV

Դիմենք այժմ այն հարցին թէ ինչ նշանակութիւն ունէր Մխիթարեան միաբանութեան հաստատութիւնը՝ հայ ազգի լուսաւորութեան տեսակէտից:

Մանենք XVIII դարի առաջին կէսում տիրող մներ իրականութեան մէջ և մնենք մի առանձին հրաշալի երեսյթ, մի մնձ խորհուրդ կը տեսնենք այն հանդամնութիւնը, որ մի խումբ հայեր անցնում են Եւրոպա՝ այնտեղ մի երկարատև, հարուստ զրական գործունէութիւն սկսելու համար: Հինգերորդ դարից յետոյ ճակատագիրը գնու այսքան ողորմած ու բարերար չէր եղել գէտի հայերը: Սյն հին նաւը, որ Մէթօնից Խոտախ էր տանում Մըլիթարին և նրա աշակերտներին, Հայաստանի բարի հրեշտակն էր, որ, կարծես, տեսնում էր թէ ինչեր են կատարւում Արեմուն Եւրոպայում և իր փոքրիկ ու համեստ ոյժերը հաւաքել էր, տանում էր աղէտ ու թշուառ հայութիւնը գէտի այն հրաշալի լոյսերը, որոնք վառուել էին արևուտքում:

Որքան և հեռու մնանք նախապաշարմունքներից, բայց և այնպէս, չնոք կարող մի պահնչելի գուղատիպութիւն, ճակատագրական մի տնօրինութիւն չը տեսնել այն հանդամնութիւնը մէջ,

\*) Հ. Զամէեան, «Քերականութիւն հայկակեան լեզուի», Վենետիկ, 1779, առաջաբան:

\*\*) Հ. Զօհրաբեան, «Աստուածաշունչ», Վենետիկ, 1805, առաջարան:

որ մինչդեռ մի կողմում կազմակերպւում էր նորադոյն Եւրօսպան, միւս կողմից ասիական բարբարոսութիւնների մէջ ոսկոր մաշած մի ազգ, ինչպիսին էր հայութիւնը, պատրաստութիւն էր տեսնում հաղորդակից լինելու նրա բարիքներին գրականութեան միջոցով։ Շատ անգամ էր Հայաստանը մարդ ուղարկել Եւրոպա, որ այնտեղից ճրագներ բերեն հայրենի տունը լուսաւորելու համար։ Մենք տեսանք շատ անհատների այդ ճանապարհի վրայ. տեսանք Ռուկանին, Թուլմաս և Ղուկաս Վանանդեցիներին և ողջունեցինք նրանց ուղեսորութիւնները, երախտազիտութեամբ ընդունեցինք նրանց ուղարկածները, օրհնեցինք նրանց բազմաշարչար ոսկորները, որոնք հող մտան օտար երինքի տակ։ Բայց նրանք այնքան բախտաւոր չէին։ Մենակ էին ու անյատ, և այն ժամանակուայ Եւրօպայի մեծ մասն էլ կաթօլիկական բէկացիայի գրկում լուռ ու անդործունեայ էր։ Այժմ, երբ Միհթարն էր զրական գաղթականութիւն հիմնում Եւրօպայի երկրների տակ, փոխուած էին հանգամանքները, ժամանակը բերել էր նոր, հրաշագործ ողի։

Եւրօպան գտնուում էր այն փայլուն շրջանի մէջ, որ յայտնի է Լուսաւորութեան Դար անունով։ Դա նորադոյն ժամանակակաների ողին է. զարթնում է Անգլիայում, անցնում է Ֆրանսիա, ապա Գերմանիա և Իտալիա։ Նա զրականութիւն է, միաք է, զիտութիւն է, գեղարուեստ է. բայց փակուած չէ մնում զրքի մէջ, այլ ազդում է կեանքի վրայ, առաջացնում է հասկացողութիւնների ու գաւանանքների մի ահազին յեղափոխութիւն։ Կազմուում են նոր աշխարհայեցողութիւններ, խորտակւում են շատ հին կուռքեր։ Նոր, թարմ, ուժեղ հոսանքները ցնցում են հասարակական և պետական հիմքերը։ Քաղաքական յեղափոխութիւնները արինուով և բանութեամբ յաղթահարում են հին աշխարհը, բարձրացնում են ազատ մարդուն։ Այդ ազատ մարդը, քանի գետ միայն զրականութեան մէջ էր, կարեց անցաւ ովկիանոսը և Հիւսիսային Ամերիկայում պատրաստեց այն արիւնահեղ ապստամբութիւնը, որի նապատակն էր քաղաքական անհանդաւ ու ամերկայի անցութիւնը, որի հետևանքը գարձաւ ու ամերկայի անցութիւնը, գուրս եկաւ մրանսիա, նրա պատրաստած զինուորները ծառայեցին քրանսիական մեծ յեղափոխութեան, որ պսակեց XVIII դարը, ոչնչացնելով գասակարգային խորութիւնները, եկեղեցականների տարածած նախապաշարմունքները և հրատարակելով ազատութիւն, հաւասարութիւն, եղբայրութիւն։

Մենք գոնէ մի թռուցիկ ակնարկ պիտի զցենք այսպիսի գործեր կատարած կուսաւորութեան Դարի վրայ, որպէս զի հասկանանք թէ որպիսի մտաւոր լոյսերի մէջ ընկաւ Միմիթեարեան միաբանութիւնը, տեղափոխուելով իտալիա:

XVII դարի երկրորդ կէսից Անգլիայում միջնադարեան վերացականութիւնը տեղի է տալիս բնական զիտութիւններին: Ուսումնագիրութմ են աշխարհները կառավարող օրէնքները, իսահակ Նիւտոնը իր անման գիտն է անում, որ մի ամբողջ յայտնութիւն էր մարդկութեան համար: Դատողութիւնների տեղը բռնում է փորձը. մարդը այլ ևս կուրօրէն չէ հետեւում հեղինակութիւններին, այլ ձգտում է փորձի, իրականութեան վերլուծման միջոցալ համեմել ճշմարտութեան: Կոյր հաւատը սկսում է վերանալ, նրա տեղը այժմ կանգնած է բանականութիւնը: Սա բայց է անում մարդու աչքերը, քննադատական կարողութիւն է զնում նրա ձեռքում և սովորեցնում է լինել ազատ՝ մտածմունքների մէջ: Այդ ազատ մտածողները այնքան համարձակութիւն են ստանում, որ սկսում են ոչնչացնել մարդկութեան վրայ տիրող նախապաշտրմունքները:

Նոր հոսանքը ամենից առաջ ընդհարւում է եկեղեցու հետ: Եւ դա շատ բնական էր: Եկեղեցին էր որ պահւում էր հեղինակութիւնների վրայ, պահանջում էր անսպայման հաւատութեանը, հրատարակուելով միակ անսխալ առաջնորդ մարդու համար, քննադատում էր և ընդունում միայն այն, ինչ հակառակ չէր իրան. Նա մերժում էր կրօնական աւելորդապաշտութիւնները, որոնց մոցրել են եկեղեցու պաշտօնեանները իրանց օգտի համար. մերժում էր և հրաշագործութիւնները, որոնք անբնական էին: Ազատ մտածողներից մէկը, Զիլինդվորա, զրում էր. «Ես համոզուած եմ որ Աստուած տուել է մեզ բանականութիւնն, որպէս զի զանազաններ ճշմարտութիւնը անձը մարտութիւնից և նա, ով բանականութիւնը այս կերպով չէ դործ ածում, այլ հաւատում է իրերին չիմանալով թէ ինչու, նա հաւատում է ճշմարտութեանը պատահաբար և առանց ընտրութեան. և ես երկիւղ եմ կրում որ Աստուած չընդունէ այսպիսի յիմար դոհ»: Իսկ Զարլը Բլօնտ զրում էր. «Ո՞չ, ես չեմ ուղում յօյս դնել հրաշքների վրայ, որպէս զի Սիմօն մողը, փառաւոնի մողերը, Ապօլօնիոսը և ուրիշները նոյնալէս չը պահանջն ինձանից հաւատ և հնազանդութիւն. իմ առաջնորդը պիտի լինի միայն բանականութիւնը և նա, ի հարկէ, չի թուլացնի իմ քրիստոնէութիւնը» \*):

\* ) Ի. Գետիեր, „История Всесобщей Литературы XVIII вѣка“, Спб. 1897, т. I, եր. 29 և 35.

Ազատ մտածողները նոյն իսկ փորձում են նոր կրօն ստեղծել, բանականութեան վրայ հիմնած: Մտածող մարդկութեան առջև բացւում են լայն, անեղք հօրիզոններ: Փիլիսոփայութիւնը, որ աստուածաբանութեան ստրուկն էր դարերի ընթացքում, ձեռք է բերում անկախութիւն: Լոկվ հիմնում է փիլիսոփայուական նոր գպրոց, ուր արդէն ամեն ինչ հիմնուած է փորձի, բանականութեան վրայ, այդ փիլիսոփայութիւնը այլ ես ոչ թէ չէ ծառայում եկեղեցուն, այլ զնում է նրա դէմ: Քաղաքական հասկացողութիւնները կերպարանափոխուում են և ազատ մտածողութիւնը նոյն իսկ ոչնչացնում է կղերականների հաստատած այն միտքը, թէ թագաւորները իրանց իշխանութիւնը Աստուծուց են ստանում և միայն Աստուծուն էլ պիտի հաշիւ տան իրանց գործերի համար. գրա փոխարէն հաստատում է այն դրութիւնը, որ իշխանութիւնը ժողովրդից է բղխում և թագաւորը նրա ընտրեալն է: Գրականութիւնը կատարեալ ազատութիւն է ստանում. XVII դարի վերջում գրաքննութիւնը բոլորովին ջնջւում է: Զարգանում են զրականութեան բոլոր ճիւղերը. թատերագրութիւնը, բանաստեղծութիւնը նորից վերակենդաննում են, հիմնում իրական կեանքի երմոյթների վրայ. ծաղկում է մանաւանդ երգիծաբանութիւնը, իսկ պարբերական հրատարակութիւնները ամբողջ յեղափոխութիւն են մտցնում հասարակական հասկացողութիւնների մէջ: Այս ազատ հոսանքները, ի հարկէ, պիտի վերացնէին կրօնական խտրութիւնների սպատառով ծագող բռնութիւններն ու անարդարութիւնները. և Սնգիսան, կրօնական ներքին երկարատես պառակտումներից ու իրարանցումներից յետոյ, մտաւոր այս նոր շարժման ազգեցութեան տակ, դառնում է այն առաջին երջանիկ երկիրը, ուր յանցանք չէր համարւում տարբեր համոզմունքներ ունենալը թէ կրօնի և թէ այլ գործերի վերաբերմամբ: Սերունդների առաջնորդ են հանգիստանում խոչոր տաղանդի տէր հեղինակները, ուրոնք, բնականաբար, բազմաթիւ էին հէնց վերակենդաննութեան այսպիսի եռանգուն, թարմ, ոգևորիչ ժամանակներում: Ֆրանկլինը, Ամերիկայի Միացիալ Նահանգներ ստեղծողներից մէկը և ամենամեծը, իր ազատասիրական գաղափարները քաղում էր Դանիէլ Դէֆօի, «Բօրինողօնի» հոչակաւոր հեղինակի, գրուածքներից. Զօնաթան Սվիֆտ մինչև այժմ էլ կենդանի է իբրև անգուդական երգիծաբան, ժամանակի բարքերը ծաղրող: Ամբողջ XVIII դարը զրական մի հսկայ առաջադիմութիւն է, որի առաջ խոչընդուներ չը կան և որ իր հետ տանում է և հասարակական զարգացած զիտակցութիւնը:

Անցնենք Թրանսիա: Այստեղ էլ XVII դարի վերջերում ևնք տեսնում կուսաւորութեան Դարի պատրաստութիւնները:

Զը նայելով որ կուդակիկոս XIV-ի թագաւորութիւնը ծայրայեղ աստիճաններին էր հասցրել միապետական անսահման իշխանութիւնը և ամեն կենդանի բան ճնշում էր եղութանների մահացնող լուծի տակ,—աղատ միտքը, այնուամենայնիւ, զարթնում էր, համարձակ քայլերով առաջ գնում և լուսաբանում էր ժողովրդի անսախանձելի գրութիւնը, կրօնամոլ բռնապետութեան առաջացրած մտաւոր և բարոյական անկումը: Գրականութիւնը կլասիկական ուղղութեան էր հետեւում, ապրում էր հների կեանքով, կտրուած իրականութիւնից, ժողովրդի կեանքից. դա պալատական գրականութիւն էր, ուր տիրում էին արքունիքի վայելուչ, շոկած ձեւերը: Իրականութիւնը—գաշտերը, գիւղերը, անտառները—այդ ժամանակի գրական մարդկանց համար համանիշ էր կոպտութեան, վայրենութեան. ամեն ինչ այնտեղ ստոր ու բարբարոսական է, վիրաւորում է գեղազիխութեան դպայմունքը: «Այդ անճոռնի, անտաշ գիւղացիները, կեղտուու կենդանիները, զոմանոցների հոտը, անձն ժայռերը, անտառների ամայութիւնը, ծառերի անկանոն լսմբերը, որոնք թողուած են բնութեան կամքին, կազամբի բանձարանոցները—սրանց վրայ կանդ առնէր բարեկիրթ մարդու ուշադրութիւնը» \*): Ամեն ինչ միայն արխատօկրասահյայի և արքունիքի համար էր: Մնացած ժողովուրդը դոյցութիւն ունէր միայն հարկեր տալու համար:

Կլասիկական այդ արուեստականութեան և գարացման հիմքերը փորել է սկսում նոր, ժողովրդական գաղափարը: Դեռ այն ժամանակ, երբ «թագաւոր-արեգակ» անունը ստացած կուդակիկոսը ասում էր՝ «սկետութիւնը—այդ ես ինքս եմ», երեան է գալիս ընդդիմագիր գրականութիւնը, որ մի կողմից թագաւորի իշխանութիւնը ժողովրդի և միմիայն ժողովրդի բարօրութեան համար սահմանուած լինեն է հրատարակում, միւս կողմից կրօնի և մանաւանդ պապականութեան դէմ է գնում: Պահանջում են թե՛մեացնել ժողովրդի հարկերը, կանոնաւորել նըրանց, ջնջել արտօնութիւնները, հաւատարութեան սկզբունքներ մտցնել ազգաբնակութեան զանազան խաւերի մէջ: Թրանսիայից փախած բողոքականները արտասահմանում հրատարակում են բազմաթիւ գրուածքներ, որոնց մէջ անխնայ քննադատութեան են ևնթարկում Թրանսիայի կարգերը, կուդակի-

\*): Հ. Պելսու, „Литературное движение въ XIX столѣтіи“, М.-1895, լ. 13.

կոսի եղուխտական քաղաքականութիւնը։ Դրանց մէջ յայտնի է մանաւանդ Բէյլ. նա ժողովրդական պապահանջ է դարձնում համբամատչելի ամսագիրը, որի միջոցով ահազին աղդեցութիւն է գործում ընթերցող հասարակութեան վըրայ։ Բայց աւելի նշանաւոր էր նրա փիլիսոփայական բառարանը. շատ չեն այն տեսակ գրքերը, որոնք սրա պէս մեծ ներգործութիւն ունեցած լինէին մաքերի վրայ։ Ի՞նչ էր քարոզում Բէյլ։ Դեռ 1682 թուականին հրատարակած իր մի աշխատութեան մէջ նա ասում էր թէ անհաւատութիւնը, նոյն իսկ բացարձակ կերպով աստուածութիւն մերժելը աւելի լաւ է, քան նախսպազարմունքը. ուստի պետութիւնը պարտաւոր է համբերող լինել ոչ միայն բոլոր կրօնների, այլ և անհաւատների վերաբերմամբ։ Բողոքականներին Ֆրանսիայից արտաքսելու առիթով Բէյլ գրում էր. «Եյս բոնութիւնները տեսնելով, ինչ պէտք է մտածել քրիստոնէութեան մասին. չը պէտք է կարծել թէ դա արիւնարբու մի կրօն է, որ խղճի աղատութիւնը կատարելապէս ճնշելու համար չէ վախում նոյն իսկ սոութիւնից և խաբէութիւնից, երգմնազանցութիւնից, բոնութիւններից, դահիճներից և ինքվիպիցիայից» \*):

Մի և նոյն ժամանակ գեղարուեստական գրականութեան մէջ է խուժում ժողովրդի ոգին. կլասիքական չոր ու ցամաք թխուածքները տեղի են տալիս հէքեաթներին, որոնք վերցնուում են ժողովրդի միջից, թարմութիւն են բերում իրանց հետ։ Հէքեաթը փոխուում է վէսի, որի հիմքը նոյն ժողովրդական իրականութիւնն է։ Զարգանում է երգիծաբանական վէտը, գրականութիւնը վերացական, անմարմին երևոյթներից երես է զարձնում և գնում է ժամանակակից կեանքի, նրա երևոյթների, նրա դրական և բացասական կողմերի հետ։

1715 թուականին մեռաւ Լուդովիկոս ԽՎ։ Ծայրայեղ բոնապետութեան ստեղծած կեղծաւորութեան և փարիսեցիութեան քօղը, որի տակ ծածկուած էին հասարակութեան արատներն ու խոցերը, պատուեց։ Եկեղեցին ու հաւատալիքները արդէն հիմքից ցնցուած էին։ Ժողովուրդը, լսելով իր թագաւորի մահը, ուրախութեան ցոյցեր էր անում. նրան միայն ուրախացնել կարող էր այն մահը, որ վերջ էր գնում այնքան երկարատեև և այնքան անխիղճ թագաւորութեան։ Պատերազմներից, ներքին հալածանքներից քանդուած և աղքատութեան դուռը հասած Ֆրանսիան բաց է անում աչքերը, նայում է իր բաղմաթիւ վէրքերին և սկսում է նրանց բժշկութեան մասին

\*) Գետիեր, տ. Ա, եր. 39.

մտածել: Այդ բժշկութիւնը պահում է նրան վերանորոգութեան ճանապարհով, որ վերջը պիտի հասցնէր մեծ յեղափոխութեան: Մի կուդովիկոս աւելի քան բաւական էր, որ բանակալութիւնը ատելի և զգուելի դառնայ ֆրանսիացու աչքում և որոնել տայ աղատութիւն: Կուսաւորութիւնը առաջնորդում է նրան այդ ճանապարհին: Գրականութիւնը մեծամեծ քայլեր է անում, պատրաստում է մի ժողովուրդ, որ հրաբուխային ժամանումներով պիտի ցնցէր Եւրօպան:

Դա ահազին նշանակութիւն ունէր ամբողջ մարդկութեան համար: Ֆրանսիական լեզուն տարածուած էր ամեն տեղ, ուրեմն և մի շատ գեղեցիկ գործիք էր՝ նոր գաղափարները ընդհանրացնելու համար: Գեղեցիկ գործիքը տաղանդաւոր գործադրողներ էլ ունեցաւ. երևան եկան ժողովրդականացնելու, հասարակութեան հետ մի դիւթիչ, կրակոտ լեզուով խօսելու փայլունունակութիւն ունեցող ֆրանսիացի զրողներ, որոնք XVIII դարի փառքն ու հոչակն են կազմում: 1726 թուականին Անգլիա ուղևորուեց և այնտեղ երեք տարի ապրեց հոչակաւոր Վոլտէր. Նրանից յետոյ նոյն տեղը դնաց Մօնտեպիէ, միւս հոչակաւոր ֆրանսիացին: Մինչև այդ ճանապարհորդութիւնը Վոլտէր արդէն մի քանի անգամ բանտ էր նստել իր համարձակ, կծու ոտանաւորների համար, իսկ նրա զրուածքները, որոնց մէջ ժամանակի նոր մարդք մտրակում էր ֆանատիկութիւնը, կրօնական համբերողութիւն և աղատութիւն էր պահանջում, արգելուել էին: Իսկ Մօնտեպիէ հրատարակել էր իր հոչակաւոր «Պարսկական նամակները», մի վէպ, որի մէջ, երկու պարսիկների անոնից դրուած նամակների ձեռփ, անինայ ծաղրի և քննադատութեան էին ենթարկում Ֆրանսիայի հասարակական, պետական կարգերը, կրօնական ուղղափառութիւնը, պապականութիւնը, վանքերը, կուսակրօնութիւնը: Զէր խնայուած նոյն իսկ քրիստոնէական վարդապետութիւնը: Արտօնուած դասակարգերը, Լուգովիկոսի վարչական իդէալները, բարքերի վայրենացումը, նրբացած կրիժութեան և շուլլութեան անհեթեթութիւնները, ժամանակակից գիտնականութիւնը—ոչինչ, ոչինչ չաղատուեց Մօնտեպիէի անողորմ մարակից: Դա մի կատարեալ պատերազմ էր, որ յայտարարում էր նախապաշարմունքների, հնութեան, անբարոյականութեան, բռնակալութեան դէմ, մի պատերազմ, որի մէջ ժողովրդական ոգին մի ապշեցուցիչ ուժով էր հանդէս գալիս: Եւ հասկանալի է թէ ինչ ընդունելութիւն պիտի գտնէր զիրքը: Յարձակումները անօրինակ և անլուր էին իրանց խստութեամբ: Նրանք կարդացւում էին յափշտակութեամբ. «Պարսկական նամակների» շատ նախադասութիւնների ձեւ ստացան:

Անդիմայում երկու մեծ հեղինակները շատ բան սովորեցին. նրանք տեսան թէ ինչ է ազատութիւնը, ինչ է սահմանադրական կառավարութիւնը. ծանօթացան անգլիական գիտութեան և գրականութեան և վերագանակով հայրենիք, մշակեցին, զարգացրին, ժողովրդականացրին այն ամենը, ինչ սովորել էին Անգլիայում։ Մօնտեսքիէ անձնատուր եղաւ գիտնական հետազոտութիւնների, որոնց մէջ, սակայն, մնաց ժամանակի մարդ, առաջաւոր դադարիարների քարոզիչ և առ գրում է «Խորհրդածութիւնների հոօմայեցինների և նրանց պետութեան մեծութեան և անկման մասին» ու դրանով դառնում է նորագոյն պատմագրութեան հայր։ Մինչև այդ պատմագրութիւնը գտնուում էր աստուածաբանների, իրաւաբանների, չոր ու ցամաք գիտնականների ձևորին. Մօնտեսքիէ մտցնում է նրա մէջ հոգի, ապացուցանում է որ ազգերի ճակատագիրը այս ու այն պատմաբարից, այս ու այն հզօր անձնաւորութեան կամայականութիւններից չէ կախուած, այլ կազմուում է հասարակական և պետական կարգերից և բարոյական, բնական պայմաններն են, որոնց պէտք է որոնէ պատմագիրը ու ամբողջացնէ մի ազգի պատմական շրջանները։ Բացի այս գիտնական նոր, քննադատական ձեփ, որ զօլտէրի ձեռքով մայրուեց ու հաստատուեց պատմագրութեան մէջ, Մօնտեսքիէ հոօմայեցինների օրինակով դաս էր տալիս իր հայրենակիցներին, սովորեցնում էր թէ ինչ է ճշմարիտ հայրենասիրութիւնը, թէ ինչպէս մի ազգ բարձրանում է, երբ ազատ է, և ընկնում է, երբ բարբարոս բռնակալութիւնն է տիրում։ «Օրէնքների ոգին» աշխատութեան մէջ Մօնտեսքիէ հանդիսացաւ անգլիական վարչական կարգերի երկրպագու, պարզեց օրինականութեան, ճշմարիտ ազատութեան, մարդկային իրաւունքների վրայ հաստատուած պետութեան իդէալները։ Դրանով էլ նա դարձաւ ազատամոռութեան հայր, իսկ պետական գործիչների համար «Օրէնքների ոգին» մի գարոց դարձաւ, որին դիմում են մինչև այժմ։

Վօլտէրի գրական և գիտնական դործունէութիւնը չէ կարևոր ամիսուի մի թուուցիկ տեսութեան մէջ։ Այդ հսկայ խելքը բեղմնաւոր ու անխոնջ էր մինչև խորին ծերութիւնը։ Հասնելով գրական փառքի գագաթնակէտին, նա տիրապետում էր իր ժամանակակիցների խելքի ու սրաի վրայ. նրա երկրպագուների թւում կային նոյն իսկ թագակիր անձինք (պրուսական թագաւոր Ֆրիդրիխ, ոռւսաց կայսրուհի Եկատերինա Մեծ), որոնք երկար տարիներ նամակագրութիւն ունէին նրա հետ, իրանց հիացմունքն էին յայտնում այդ գրական թագաւորին։ Անկեղծ հիացմունքների, ընդհանուր համակրանքների ու յար-

դանքների հետ լւում էին, ի հարկէ, և անէծքներ, ատամների կրծտոց Ռուր ասէք որ չը գործէր այդ միշա եռանդոտ, կռուող, անխնայ ծազրող մեծ մարդու զրիչը: Բանաստեղծութիւն, փիլսոփայութիւն, վիպագրութիւն, երգիծաբանութիւն, թատերագրութիւն, պատմագրութիւն—ամեն տեղ էր Վօլտէրը և միշտ մի և նոյնը—ազատութեան երգիչ, արդարութիւն և իրաւոնք պահանջող, նախապաշարմունքների, մոլորութիւնների, տղիտութեան անհաշտ թշնամի: Վօլտէրն էր, որ ձեւակերպեց նոր մարդկութեան իդէալը—«ազատութիւն և հաւասարութիւն», բառեր, որոնք գծագրուեցին ֆրանսիական մեծ յեղափոխութեան դրօշակների վրայ և որոնք այժմ էլ լուսաւոր մարդկութեան քաղաքական դաւանանքն են կազմում: Անողոք, տաք ու երկար էր նրա կոփեր մանաւանդ եկեղեցու դէմ. ապշեցող համարձակութեամբ նա մերժում էր քրիստոնէութիւնը և դրա համար էլ անաստուած հոչակուեց եկեղեցականների կողմից: Բայց նա անաստուած չէր. նրա աստուածը անդլիսական վիլխոտիանների աստուածն էր—բանակսնութիւն, խելք, ատող դատողութիւն:

Մինչդեռ հանճարեղ ֆրանսիացին ամեն ինչ քանդում, աւերակ էր գարճում և այդ աւերակների վրայ իր անողորմ, ոչնչացնող ծաղրն էր հնչեցնում, դուրս եկաւ մի ուրիշ մարդ, որ միայն քանդել չը գիտէր, այլ և նոր, գեղեցիկ աշխարհայեցողութիւններ կառուցանել: Ժան Ժակ Ռուսսօն էր դա, այն հանճարեղ միտքը, որ թովում էր իր ժամանակակիցներին սրտի խորքից բղխող խօսքով: Սա ինքնուրոյն, նոր ուղղութիւն էր, որ գալիս էր դիմացրելու ԽՎIII դարի վիլխոտիաններին և նրանց քարոշների տեղ մաքուր ժողովրդասիրութիւն, ուամելավարական-հանրապետական կարգեր հրատարակելու Ռուսսօն մարդկային թշուառութիւնների պատճառը որոնում էր քաղաքակրթութեան, գիտութեան մէջ. քարոզում էր վերագրանալ «բնական դրութեան», այն ժամանակներին, երբ մարդը ազատ էր, երբ չը կային իշխող և ստրուկ դասակարգեր և ամենքը հաւասար էին: Ժողովարդը պիտի լինի իր վիճակի անօրէնը, միայն նա իրաւոնք ունի հրատարակել օրէնքներ: Հողը ոչ ոքին չէ պատկանում, իսկ պատզները պատկանում են ամենքին: Նոր սերունդի կրթութիւնը հիմնուած պիտի լինի բնութեան դասերի վրայ. աղնուացնում, իսկական բարօրութեան է հասցնում այն կըրթութիւնը, որի մէջ զրուած է բնութեան աւետարանը, որ հազորդում է աշակերտին սրտի կրօնը: Քննազատելով ժամանակակից զիտութիւնը, բարոյական հասկացողութիւնները, կրօնը, Ռուսսօն ապացուցանում էր այդ բոլորի մանակութիւնը: Իր զաղափարներին հաւատարիմ մնալով, նա վառփի ևտեից չընկաւ.

մերժեց իրան առաջարկուած պալատական չնորհնմբը, ապրում էր իբրև բնութեան մարդ և մեռաւ աղքատութեան մէջ։ Բայց նրա փիլիսոփայական գրուածքները, վէպերը նոր հօրիզոններ էին մարդկութեան աշքի առաջ, ստեղծեցին պետական և հասարակական իդէալներ, որոնք անմիջապէս մտան կեանքի մէջ։ Յեղափոխութեան գործիչները նրա գրքերն ունէին իրանց ձեռքում. փողոցներում կոռուպների մէջ Բուսասօի անունն էր հնչում։

Թողնենք Գրանսիական ուրիշ գրողներին, թողնենք քաղաքատնտեսական և այլ գրական գիտութիւնների ասպարէզում գործողներին, մի հայեացք ուղղենք դէպի Եւրօպայի միւս կողմերը։

Ֆրանսիական ազատաբար լուսաւորութեան ազգեցութիւնը ահազին էր։ Հետանէր իր «Պատմութիւն ԽVIII դարի ընդհանուր գրականութեան» անունով գեղեցիկ աշխատութեան մէջ այսպէս է բնորոշում այդ ազգեցութիւնը. «Ամենն տեղ զգացւում է գարնան թարմ շունչը։ Նոր նպատակներ և նոր յոյսեր։ Ամենն տեղ անխոնջ մրցութիւն և ձգուում դէպի առաջ, դէպի մաքուր և կատարեալ մարդկայնութեան նպատակը» \*): Ակսում են վերանորոգումներ պիտական կեանքի մէջ և սկսողները թագաւորներն ու մինիստրներն են. Ժողովուրդների պահանջները չեն, որ հարկադրում են նրանց մտածել բարենորոգումների մասին, այլ դարի լուսաւորութիւնը, գրականութիւնը։ Գերմանիան մտաւոր ինքնուրոյն վերածնութեան հանդիսաբան է դառնուում. Կանուղ քննական փիլիսոփայութեան հիմքն է դնում, Լեսպինդ գեղարտւեստական կրիտիկայի հայր է դառնում. ծաղկում է ազգային գրականութիւնը, ծնւում են Գէօթէի և Շիլլերի նման հսկոյ ստեղծագործողներ։ Սպանիան անգամ, չը նայած իր խեղճութեան, վերածնուելու նշաններ է ցոյց տալիս։ Բայց Գրանսիական լուսաւորութիւնը ազդու եւ կենդանարար է մասաւանդ իտալիայում։

Այդունք Վօլաէրը, Մօնտեպքիէն նոր դարագլուխ են բաց անում։ Վերածնութեան հայրենիք Խոտալիան մի ժամանակ ինքն էր լոյս տարածում Եւրօպայի մէջ, օրինակ և ուսուցիչ էր հանդիսանում ազգերի համար. Բայց վերածնութիւնից առաջացաւ Լիւթէրի Բէֆօրմացիան, կաթոլիկութիւնը սկսեց խաւար յետադիմութիւն, ձնչեց ոչնչացրեց Խոտալիայի մտաւոր առաջադիմութիւնը, և Դանաէի ու Պետրարկայի հայրենիքը երկար նստած էր խաւարի մէջ։ Այժմ, երբ Հոօմի բռնապետութիւնը այնպիսի ահեղ հարուածներ էր ընդունում, երբ լայն հոսանքներով բա-

\*). T. II, եր. 498.

նականութիւնն ու քննադատութիւնն էին տիրում մարդկանց մաքերի վրայ, իտալիան աշակերտում է Ֆրանսիային և մտնում է նոր օրերի մէջ: «Ամեն տեղ—ասում է նոյն Հետանէր—ասպարէզ են գալիս ազնիւ և լուսաւորուած մարդիկ, որոնք դէպի մարդիկ ունեցած իրանց խորին սիրուց զրտուած՝ ձգտում են հասցնել ժողովուրդը ազատութեան և բարօրութեան. մարդիկ են դրանք, որոնք ոգենորուած են յարդանքի արժանի եռանդով, աշխատում են նոր գաղափարների մեծամեծ նուածումները դարձնել հիմք և զեկավար՝ կեանքին սաստիկ անհրաժեշտ բարեփոխութիւնների համար»:

Միլան և Նէչապօլ քաղաքները այդ նոր հոսանքների կենտրոններն են դասնում: Զարդանում է քաղաքատնտեսական գիտութիւնը, նշանաւոր զրուածքներ են նույիրուում իրաւաբանական հարցերին և զրանց մէջ արդարութեան, իրաւունքի, ազատութեան պահանջներն են զրուած: Բարեկարգուած կեանքն է այն իդէալը, որով վառուած են այդ ազնիւ գործիչները. նրանց ամբողջ ձգտումն է դասնալ ժողովրդի ուսուցիչ, այս բառի ամենալայն մատքով, դասնալ նրա բախտի պատճառ: Նրանք ուզում են դիտութեան լուսով լուսաւորել մի օրէնտրութիւն և վարչական ձև, որոնք վայել են ազատ և իր արժանաւորութիւնը հասկացող մարդկութեան \*):

Գիտութեան հետ ձեռք ձեռքի տուած՝ առաջ է գնում բանաստեղծութիւնը, որ զիմաւորապէս ֆրանսիական ազգեցութեան տակ է, բայց իտալական վերածնութիւնն է երդում թէ հանրապետական զաղափարներով տոգորուած Ալֆիերին և թէ նրանից պակաս նշանաւոր բանաստեղծները գործ են գնում իրանց տաղանդի ամբողջ ոյժը, որ զարթեցնեն իտալացիներին, հասկացնեն նրանց թէ որքան ցած են ընկել նրանք, որքան ամօթալի է նրանց զրութիւնը: Եւ զուր չէին նըրանց ազնիւ ջանքերը. Իտալիայում ծնւում է ազատութեան զաղափարը, որ իրագործուում է XIX դարում «Երիտասարդ իտալիա» կուսակցութեան ձեռքով: Այս կուսակցութեան նախահայրը Ալֆիերին է, մի բանաստեղծ, որ վարդի ուսուխանների երգերով չէր կերակրում իր հայրենակիցներին, այլ քարոզում էր քաղաքական ազատութեան և վերածնութեան մոքեր...

Ահա այսպէս էր Եւրոպան XVIII դարի ընթացքում: Այսպէս էր ժամանակը, երբ մի հայ ընկերակցութիւն, դիմնելով Եւրոպա, յանձն է առնում միջնորդի գեր կատարել նրա և հայերի

\*.) Գետիեր, տ. II, եր. 499.

մէջ։ Դա մի շատ ծանր, պատասխանատու պաշտօն էր, մանաւանդ եթէ ի նկատի առնենք որ երկար ժամանակ, համարեա մի ամբողջ դար (մինչև XIX-ի կէսը), Մխիթարեան միաբանութիւնն էր հայ ազգի զլիաւոր զաստիարակիցը, միակ հեղինակաւոր մարմինը, որի միջոցով եւրօպական լոյսը անցնում էր դէպի մեզ։

Ի՞նչպէս է միաբանութիւնը կատարել միջնորդի գերը։ Սա մի շատ կարեւոր հարց է, որի լուծումը ցոյց կը տայ մեզ, թէ ինչ էր հայ ազգը վերջին երկու դարերի ընթացքում և ինչ կարող էր լինել։ Դիմնենք երկու կողմերին էլ, որոնց մէջ միջնորդ էր միաբանութիւնը, և հարց տանք՝ ինչ էր այդ միջնորդի նրանց համար։

Վերցնենք նախ մի կողմը—Եւրօպան։ Դա լուսատու կողմն է, զիտութեան և առաջադիմութեան այն շտեմարանը, որից շատ կամ քիչ բան վերցնելու մէջ էր մեր ամբողջ երջանկութիւնը։ Ի՞նչ կ'ասէ Եւրօպան այդ միջնորդի մասին։

Մենք արդէն ճանաչում ենք նրա ոպին, նրա ձգտումները։ Ուստի առանց տատանուելու կարող ենք ասել, որ առաջադէմ, մտքերի և հասկացողութիւնների մէջ այնքան խոր և յայնատարած յեղափոխութիւններ մտցրած եւրօպականութեան համար Մխիթարեան միաբանութիւնը մի կատարեալ յետադիմութիւն էր, մի մեծ խոչընդոտ, որի երևան գալը ոչ միայն չէր կարող բախտ համարուել մի ազգի համար, այլ ուղղակի սլիափ նկատուեր իբրև գժրախտութիւն։

Եւ իրաւ, Հոօմի քմի տակ ապրող և Հոօմի հրամաններին ու բարիքներին աչք անկած մի վանական միաբանութիւն, որի ընտրած մի ճիւղն էլ միսիօնարական գործունէութիւնն էր հայերին պատական դարձնելու համար, չէր կարող համապատասխանել Վոլտէրի դարի պահանջներին, —մի իրողութիւն է աս, որ ապացոյցների կարօտ չէ։ Այսուղից առաջանում է Մխիթարեան միաբանութեան վրայ ծանրացած ճակատագիրը։ —որքան էլ չնորհալի և տաղանդաւոր անդամներ ունենար նա, բայց իբրև զուտ կղերական մի հիմնարկութիւն, պիտի միշտ յետ մնար ժամանակից, միշտ ներկայացնէր յետադէմ, հնագարեան պահպանողականութիւն և այդպիսով առաջադիմութեան խոչընդոտ հանդիսանար։ Միաբանութիւնը, ճիշտ է, եւրօպական գրականութիւն մտցրեց մեր մէջ։ Բայց ինչ տեսակ գրականութիւն։ ՏՎՈՒ դարում մենք աւելի նուանդով ենք սկսում կերակրուել միջնադարեան զրքերով, որովհետեւ ո. Ղաղարի վանքը միայն այնպիսի զրքեր կարող էր թարգմանել, որոնք Հոօմի ինդեքսի

մէջ բազմելու պատիւը չունէին, այսինքն գրքեր, որոնք նոր, աղատ մտածողութեան հոտն անդամ չունէին:

Մի վանքի համար դա շատ բնական էր Բայց մենք վանքի տեսակէտից չը պիտի նայենք Մխիթարեաններին, այլ այն ծանր գերի տեսակէտից, որ նրանք յանձն էին առել կատարելու—մի խաւար, կրօնամոլ և սարուկ ժողովրդի տեսակէտից: Լոկկ, Մօնտեպքիէ, Դիգրօ, Ռուսո և նրանց բազմաթիւ հետեղները այնպէս էին ներդործում ժամանակակից մարդկութեան խելքի վրայ, որ, ինչպէս գեղեցիկ կերպով բնորոշեց Հետանէր, ամեն տեղ գարնան թարմ շունչն էր զգացւում, ամեն տեղ ծաւալում էին նոր նալատակներ և նոր յոյսեր: Մեզ համար այդ գարունը չէր բացուել. մենք, ճիշտ է, Մխիթարեանների առաջնորդութեամբ մտնում էինք մի նոր շրջան, բայց դա աղատ, ինքնանաչ եւրօպականութեան նոր նալատակների և նոր յոյսերի շրջանը չէր: Նոր մարդարէններից ոչ մէկն էլ չը թարգմանուեց հայերէն: Խոր, վերլուծող քննադատութեան և բանականութեան ձայնը չը հասաւ մեր ականջներին: Գրա փոխարէն մենք Վենետիկից առատութեամբ ընդունում էինք միջնադարեան սխոլաստիկ աստուածաբանների փիլիսոփայութիւնները:

Արաբսի մնհրապոյր բախտ: Աղատարար Լուսաւորութեան Դարում Մխիթարը մեզ մասակարարում է XIII դարի հեղինակ Ալբերտ Մեծի աստուածաբանութիւնը, և մատակարարում է իրեւ մոլոր ու կարագ, իրեւ մի հոգեոր կերակուր, որից կշանալ չէ կարելի: Թերթում ենք մինչև XVIII դարի վերջերը Վենետիկում լոյս տեսած լուրջ, թարգմանական գործերը, որոնց վրայ կրթուել են սկսում սերունդներ: Մխիթարանները մեզ փիլիսոփայական զրգեր են տալիս, սովորեցնում են մեղ վերացական մագերին: Բայց դա նոր ժամանակների փիլիսոփայութիւնը չէ, այլ այն, որ IV դարից գարձաւ աստուածաբանութեան սարուկ: Թօմա Ակուբինացին, Ալբերտ Մեծի աշակերտը, որ կաթոլիկ սուրբերի թւումն է դասուած՝ ինկլիզիցիան և պատական միապետութիւնը պաշտպանող իր վարդապետութեան պատճառով, զիսութեան և լուսաւորութեան միակ ազբիւրն է Մխիթարի և նրա յաշորդների համար: Թարգմանուում են Ակուբինացու զրուածքների զանազան չափի և մեծութեան բացատրութիւնները, թարգմանուում են եղուիտ աստուածաբանների և այլ կաթոլիկ կրօնաւորների մասածողութիւնները, խրատները, որոնք և ամենայն եւանդով առաջարկուում են մեզ՝ հոգի փրկելու համար. իսկ այն ձայները, որոնք որոսում էին Եւրօպայի բոլոր կողմերում կրօնական և քաղաքական բռնապետութեան գէմ, որոնք ծաղրում էին քարացած ծիսապաշտութիւնը, սխոլաս-

տիական, զառանցանքները, մեղանից շատ և շատ հեռու մնացին:

Ուրիշ կերպ, ի հարկէ, չէր էլ կարող լինել Մխիթարեան միաբանութիւնը—վանականութեան կատարեալ յաղթանակն էր հայերի մէջ: Մենք ունեինք բազմաթիւ վանքեր, որոնց մէջ ծոցը ու հայկատակ մի գասակարգ էր ապրում: Նա տղէտ էր, թաղուած նախասպաշարմունքների և անշարժութեան մէջ. նա ոչնչով չէր զանազանուում հասարակ ամբոխից: Գտնուում է այդ դասակարգի մէջ անբաւական տարր, որ աշխատում է նախ տեղին ու տեղը, հայրենի հողի վրայ, բարեկարգել վանականութիւնը, դարձնել նրան գիտուն ու պատրաստ. և երբ այդ չէ աջողուում, երբ տենչերը և փորձերը խեղզւում են երկաթի ծանրութեամբ նստած իրականութեան մէջ, այդ անբաւական տարրը պոկ է գալիս հայրենիքից, անցնում է Եւրօպա, այդտեղ գտնում է զարդանալու նպաստաւոր հող և սկսում է մի զարմանալի բնողմնաւոր գրական գործունէութիւն, մնալով, սակայն, այն, ինչ էր —վանականութիւն: Այսպէս էր Մխիթարեան միաբանութիւնը —հայ վանականութեան գերազոյն զարգացումը: Նա կարող էր շատ ծաղկեցնել աստուածաբանութիւնը, կարող էր կրօնական զրքերի մի անսպառ հարստութիւն ստեղծել և եթէ ամբողջ հայ ազգը պատկառանքով գլուխ իջեցրեց նրա առջե, սկսեց աշակերտել նրան, պատճառն այն չէր, որ նա ներկայացնում էր ժամանակակից գիտութիւնը, դարի լուսաւորութիւնը, այլ այն, որ չը կար նրա նման մի ուրիշ զարգացած ու գիտուն կրթական և գրական մարմին: Վանականութիւնը, համնելով մտաւոր առաջադիմութեան մի աստիճանի, որի նմանը մեր մէջ դեռ չէր եղել, երկար ժամանակով իր ձեռքն էր առնում տմբողջ ազգի կրթութեան մենաչնորդը: Իսկ սա յետազիմութիւն և դժբախտութիւն էր աշխարհական այն լուսաւոր գիտութեան տեսակէտից, որ ողողել էր ամբողջ արևմտեան աշխարհը:

Այս գրութիւնը աւելի պարզ կը վնի մնդ համար, եթէ հետևենք Մխիթարի ներքին քաղաքականութեան, եթէ տեսնենք թէ ինչպէս նա կազմակերպեց իր միաբանութիւնը, ինչ հողի դրեց նրա մէջ:

Մխիթարեան միաբանութեան անդամները պատրաստում են հէնց միաբանութեան մէջ. զբսից ոչ ոք չէ ընդունւում: Անդամներ պատրաստողը զպրոյն է, որից էլ սկսեց Մխիթարը: Օտարներից զպրոյը աշակերտ չէր ընդունւում. ամեն ինչ զուտ հայկական էր: Ի՞նչ էր այդ զպրոյը:—Մխիթարը նրան հաղորդեց մի թունդ կրօնական ողի: Առաջին և ամենազլիսաւոր նպատակը եկեղեցու պաշտօնեայ պատրաստելն է, ուստի իւրաքան-

չիւր աշակերտ նախ և առաջ պիտի կրօնական հիմնաւոր կըրթութիւն ստանայ: Հիմնագրաբը, սկիզբը և վերջը աստուածաբանութիւնն է. իսկ մնացած գիտութիւնները: Մեր վանականութիւնը շատ հնուց էր յատկացրել նրանց արտաքին անունը, այսինքն դրսի, հեռուից եկուոր, երկրորդական: Միթթարն էլ —իզուր չէր նա ճգնաւորական գաղափարներով մնուել—այդպէս նայեց այդ գիտութիւններին, տուեց նրանց կողմանկի նշանակութիւն, աստուածաբանութեան ստրուկ դարձրեց: Նա մեղք չէր համարում, որ աշակերտները սովորեն և այդ գիտութիւններից, բայց հարկաւոր էր պատշաճաւոր զգուշութիւն, այսինքն որ գիտութիւնները կղերական հասկացողութեամբ աւանդուեն, այն չափով, ինչ չափով հնարաւոր էր համարում եկեղեցականութիւնը: Միթթարի կենսազրութիւնը պատմում է մի շատ բնորոշ գէպք: Տեսնում է նա որ իր աշակերտներից մի քանիսը չափից դուրս ուշադրութեամբ և աշխուժով են ուսումնասիրում գիտութիւնները: Նա վախենում է թէ մի գուցէ այդպիսով թուլանայ նրանց մէջ աստուածապաշտութեան եռուանդը և հաւաքում է ամենքին, սկսում է ցոյց տալ ուղիղ ճանապարհը: Ասում է որ ամեն մէկը պիտի իր ճախակողմում ունենայ Աստուածաշունչը և Թօմա կեմպացու գիրքը, իսկ աջակողմում—աստուածաբանութիւն և փիլիսոփայութիւն (խօսքը, ի հարկէ, եկեղեցական փիլիսոփայութեան մասին է): Ապա յանդիմանում է աշակերտներին, որ նրանք այդքան սիրով նըւիրուս են զիտութիւնների ուսումնակին և պարզ ցոյց է տալիս թէ այդ «մոլեկան իղձերից» որքան անկարգութիւններ են առաջ գալիս և որքան նուազում է աստուածապաշտութիւնը \*):

Երիտասարդական աշխոյժը սանձահարելու համար Միթթարը խիստ հսկողութիւն էր հաստատել վանքում: Նա գիտէր որ ժամանակը շատ վտանգաւոր է վանականութեան տեսակէտից և չէր քաշւում նոյն իսկ անձամբ լրտեսելու պաշտօնից: Հէնց որ իմանում էր թէ երկու-երեք հոգի հաւաքուել են միասին, յանկարծակի զնում էր նրանց մօտ, որպէս զի իմանայ թէ ինչի մասին են խօսում հաւաքուածները: Պարզ է, որ այդպիսի խիստ հսկողութեան տեղում ամեն մէկից պիտի պահանջուէր անպայման, կոյր հնազանդութիւն: Եւ Միթթարը այդ կողմից էլ միանգամայն անողոք էր, նոյն իսկ անգութ: Մի անգամ նրա աշակերտները սկարաստում են մի շատ գեղեցիկ գործ. դա մի մեքենայ էր, որ ձևացնում էր երկրագունդը, երկնային մարմինները, լուսնի և արեգակի շրջանները. ժամացոյցի

\*.) Ագոնց, եր. 199:

անիւներով այդ զարմանալի գործիքի զանազան մասերը իրանք իրանց շարժում էին, ցոյց տալով այն, ինչ զիտութիւնն էր հաստատել: Աշակերտները ինսդրում են Մխիթարին գալ դպրոցը և տեսնել իրանց ձեռքի գործը: Գալիս է Մխիթարը, գովում է նրանց, բայց վերադառնալով իր սենեակը, ուսուցչի միջոցով յայտնում է աշակերտներին որ եթէ նրանք կամննում են իրանց աբբահօր համար մի համելի բան անել, թող իրանց ձեռքով խորտակեն և կրակի մէջ զցեն այդ մեքենան: Հասկանալի է թէ ինչ պիտի լինէր խեղճ աշակերտների դրութիւնը. այնքան երկար աշխատել էին, այնքան լաւ գործ էին պատրաստել և յանկարծ, մի ակնթարթում, պիտի ոչնչացնեն իրանց ձեռքի և խեղի պտուղը: Բայց և այդպէս, նրանք կատարում են աբբահօր ցանկութիւնը: Մխիթարը, սաստիկ ուրախացած, գնում է նրանց մօտ, օրհնում է, հասկացնում որ այդ հնազանդութեան վրայ Աստուած էլ է ուրախացած: Այս վարմունքով Մխիթարը անպայման, հլու հնազանդութեան դաս էր տալիս իր աշակերտներին: Խնչպէս երեսում է, նա շատ լաւ իւրացրել էր կաթօլիկական վանքերի ներքին պայմանները, և մենք պիտի զարմանանք թէ խնչպէս նա կարողացաւ այդ վանքերի հոգին կազմող հնազանդութիւնը պատուաստել և ամենցնել հայերի մէջ, որոնք այնքան էլ սովոր չեն զիսցիսլինային, հնազանդութեան: Մի հնազանդութիւն էր դա, որ մանաւանդ պիտի չափաւորէր աշակերտների սէրն ու ձգտումը դէպի գիտութիւն: Կենսագրութիւնը պատում է որ զարմանալի մեքենան պատրաստողները այն աշակերտներն էին, որոնք «գեռ ևս փիլիսոփայութեան վարժմունքների մէջ էին»: Շատ բնական էր, որ Մխիթարը, խորտակել տալով այդ ձեռագործը, կամունում էր զրանով ցոյց տալ թէ որքան անախորժ բան է իր համար, որ իր աշակերտները, փոխանակ թօմն Ակուխնացու վարդապետութեան մէջ քաջ և հասկացող հանդիսանալու, աշխարհային գիտութիւնների մէջ են առաջադիմութիւն ցոյց տալիս: Յամննայն դէպս, եթէ աշակերտների ձեռագործը լինէր մի եկեղեցական անօթ, պատկեր կամ զգեստ, Մխիթարը նրան կրակի չէր դատապարտի...

Սննազանդութիւնը միայն խրամներով չէր սանձահարւում, սահմանուած էին և պատիժներ: Ս. Ղազարի կղզու առանձնութիւնը գեղեցիկ միջոց էր՝ վանականներին կեանքից և աշխարհից միանդամայն կտրելու համար: Կենսագրութիւնը պարծանքով յիշատակում է թէ երբէք տեսնուած չէ որ վանքի միաբանութեան անդամները դասարկ տեղից շրջեն Վենետիկի փողոցներում, կամ նայեն այնտեղ եղած «քաղաքական խաղերին»: Այսպիսի առանձնացումը, անշուշտ, ունէր իր կարեռու-

թիւնը վանական հաստատութեան յարատեռութեան տեսակէտից: Բայց նա ունէր և բազմաթիւ բացասական կողմեր: Վանքը դառնում էր մի միջավայր, ուր ոչնչացած էր անհատական կամքը, աղատութիւնը, ուր ամեն ինչ պիտի հպատակուէր սահմանուած կարգերին և աւանդութիւններին: Այդ է պատճառը որ Մխիթարեանների գարաւոր գործունէութեան մէջ աչքի է զարւում նեղ միակողմանիութիւնը, աղատ ու անկախ մտքի բացակայութիւնը:

Հարկաւոր է աւելացնել որ Մխիթարի աբբայութեան ժամանակամիջոցը դեռ լաւագոյնը և օրինակելին է համարւում միաբանութեան պատմութեան մէջ: Այդ ժամանակամիջոցում վանքի կանոնադրութիւնը պարզ էր, այն աստիճան չէր տոգորուած կաթոլիկ վանքերի ոգով: Սա հասկանալի է: Եթէ իրաքանչիւր երկարակեաց մարմին իր կեանքի մէջ ունենում է նահապետական շրջան, Մխիթարեան միաբանութեան համար այդ շրջանը Մխիթարի աբբայութեան ժամանակին էր: Ինքը, Մխիթարը, կրթուել ու մեծացնել էր կաթոլիկ վանքի պատուրից դուրս, հայրենի հողի վրայ, նա ճանապարհորդել էր հայոց աշխարհի շատ կողմերը, մի խօսքով կրում էր իր վրայ հայրենի հողի, օդի, իրականութեան ազդեցութիւնները: Բայց ահա ո. Ղազարի վանքում սերունդների յաջորդութիւն է սկսւում. առաջ է գալիս միջավայրի հետ կապուած գրութիւնը, բաղկացած աւանդութիւններից, նախապաշարմունքներից, կրթութեան պակասութիւններից և, մերջապէս, արտաքին հանգամանքների ազդեցութիւններից: Խտանում է կաթոլիկական աւանդապահութիւնը, լուսավախութիւնը այդ մենաւոր կղզու վրայ, սեղմելով աղատ մատքի ու զործունէութեան առանց այն էլ անձուկ ասպարէզը: Մխիթարի մահից յետոյ Հոօմը այլ ես աւելորդ է համարում նորակազմ միաբանութիւնը արտօնութիւններով և քնքչութիւններով փայտիայելը և ուղղակի հրամայում է նրան ընդունել եղութափական կարգի կանոնադրութիւնը: Մխիթարեանները ընդունում են: Սա արդէն բաւական է ամեն ինչ բացարելու համար: Այնուհետև այլ ես սկզբունք է գառնում կոյք հնազանդութիւնը, միաբանութիւնը կաղմուած է կամադուրկ և զիմազուրկ անդամներից, որոնցից իւրաքանչիւրի առաջին պարտականութիւնն է ծառայել միաբանութեան շահերին: Եւ որովհետև կրօնաւորութեան այդ կարգերը անկարելի է հաշտեցնել մարդկային բնաւորութեան հետ, ուստի բնականաբար զարդանում է փարիսեցիութիւնը, որի տակ պատսպարւում են բացասական շատ յատկութիւններ <sup>\*)</sup>:

\*) Մխիթարիանների այս պակասութիւնները մերկացրել են Գաբ-

Դրեք այս գրութիւնը XVIII և XIX դարերի առաջադիմական պահանջների առաջ—և ձեզ համար անկասկածնելի կը լինի, որ Մխիթարեան միաբանութիւնը, իբրև մի կղղիացած կղերանոց, չէ կարող առաջադիմութեան, կատարելագործման գործիք համարուել:

Յետաղէմ պահպանողականութեան մի մեծ նշան էլ էր կրում Մխիթարեան միաբանութիւնը իր հիմնարկութեան օրից: Իր գրական գործունէութեան համար նա գործիք ընտրեց ոչ թէ ժողովրդի լեզուն, այլ անհասկանալի, մեռած գրաբարը:

XVIII դարի գրական շարժման ամենամեծ գործը այն էր, որ նա ժողովրդականացնում էր գիտութիւնն ու գեղարուեստը, ամենքին հասկանալի խօսքի միջոցով տարածում էր ժողովրդական խաւերի մէջ, զարթեցնում էր, աչք բաց անումն ձակատագիրը մեղ էլ չնորհել էր այդ գարում գրական վերածնութիւն, բայց դա մեռած ծնունդ էր նախ և առաջ այն պատճառով, որ ընդհանրութեան մատչելի լեզու չունէր: Այսպէս խօսելով, մինք չենք ուրանում Մխիթարեանների ահազին ծառայութիւնը. նրանց հետ ծնունդը ուսկեդարի գրաբարը, նրանք մաքրեցին, ճոխացրին մի աղաւաղած, սպանուած, վայրենացրած լեզու: Բայց այդ հսկայական ջանքերը բոլորովին չը փոխեցին գրականութեան դրութիւնը մեղանում: մեր զրականութիւնը դարձեալ մնաց «լըստրեանների» նեղ շրջանի սեփականութիւն և ժողովրդի բազմաթիւնը դարձեալ հեռու էր մնում նրանից: Գրքի ու գլորոցի մէջ այնքան էլ դժուար չէր վերանորոգել հինգերորդ դարը. գրա համար բաւական էր որ ս. Ղաղարի վարդապետները զարմանալի ջանասիրութեամբ թաղուէին հնութեան մէջ, քրքրէին ձեռագիրները, մեղունների պէս պատրաստէին այն նիւթերը, որոնցից պիտի կազմուէր Մխիթարեան հարուստ ու ճոխ գրաբարը: Իսկ ժողովուրդը: Եա մնում էր նոյնը. դարերի ընթացքում նա հեռու էր մնացել զրաբարից, չէր հասկացել նրան: Ժողովուրդը չէր կարող վերադառնալ հնութեան դարերին, եթէ ի հարկէ, ենթագրելու լինենք թէ եղել է մի ժամանակ, երբ գրաբարը հայ ժողովրդի ամբողջութեան համար հսկանալի, գործածական լեզու էր.—մի բան, որ ապացուցուած չէ և շատ վիճելի է: ժողովուրդը ունէր իր պահանջները, իր լեզուն:

Եւ այդ բանը շատ լաւ էր զգում Մխիթարը: Նա կազմեց աշխարհաբարի քերականութիւն, աշխարհաբար լեզուով «Քրիս-

---

րիէլ վարդապետ Ալվազովսկին իր «Ալբուագիծ Մխիթարեանց» բրօշիւրի մէջ և Սարգիս վարդապետ Թէոդորեանը իր «Պատմութիւն Խորադեան վարժարանին» մեծ աշխատութեան մէջ (Երեք հատոր, Փարիզ, 1866).

տոնէական» գրեց։ Սա մի հանդամանք է, որ ապացուցանում է թէ գրաբարը Մխիթարի ժամանակներում կարևորութիւն ներկայացնում էր լոկ զիտնական տեսակէտից, իսկ աշխարհաբարը—օրուայ լեզուն էր, ժողովրդի հետ խօսելու միակ յարմարաւոր և ցանկալի գործիքը։ Դժբախտաբար, ինչպէս ասացինք, Մխիթարը մի համարձակ վերանորոգիչ չէր, այլ կօմպրօմիսների մարդ։ Նա շատ լաւ ըմբռնում էր ժամանակի պահանջները, բայց հնութեան, անշարժութեան, կոյր աւանդապահութեան դէմ հսկայական կորի սկսելու և առաջ տանելու ընդունակութիւնը չունէր. ուստի լեզուի հարցում էլ համակերպուեց տիրող հսկայողութիւններին և սովորութիւններին։ Եւ այդպիսով գրաբարը դարձաւ Մխիթարեանների կուռքը։ Երկար ժամանակ այդ նորոգած, ոսկէզօծած հնութիւնը տիրում էր մեղ վրայ, որովհետև այդպէս էր կամինսում ս. Ղաղարի վանքը. երկար ժամանակ նա չէր թոյլ տալիս որ մեր մէջ էլ, վերջապէս, ծնուրի մի ժողովրդական դրականութիւն, որ լինի կեանքի զաւակ։ Եւ մենք իդուր զոհեր էինք տալիս այդ կուռքին, իդուր անշարժացած սպասում էինք, որ նա աւելի շատ զարդարուի ոսկով ու ակներով...

Մեր այս դրութիւնից, ի հարգէ, չըր բլխում մի այնպիսի միտք թէ գրաբարի ուսումնասիրութիւնը միտնդամայն ապարդիւն ժամանակառութիւն էր։ Ոչ, հին լեզուի մշակումը կարեւոր էր, որպէս զի մենք չը կտրուենք մեր հին մատենագրութիւնից։ Եւ եթէ մեղանում, բացի Մխիթարեան վանքից գոյութիւն ունենար մի այլ եռանդուն և կարող գրական ընկերակցութիւն, որի նապատակը լինէր միայն աշխարհաբարի դարդացումը, այն ժամանակ մենք Մխիթարեաններին կը տայինք զբրաբարը մշակողների, հարստացնողների պատիք։ Յաւը հէնց այն է, որ մենք այդպիսի բախտ չունեցանք. բայցի Մխիթարեան ուխտից չը կար մի այլ ուսուցիչ, զեկավար։ Զգալով ժամանակի և ժողովրդի պահանջները, վենստիլի հայ վարդապետները պիտի գրաբարը սկահէին իրամց զիտնական ուսումնասիրութիւնների համար, իսկ ժողովրդին պիտի տային գրքեր նրա լեզուով, մի և նոյն ժամանակ ջանք պիտի զործ գնէին այդ լեզուն մշակելու, հարստացնելու համար։ Բայց Մխիթարեանները սիօլաստիկ և հին պահպանողական մնացին ոչ միայն մատենագրութեան, այլ և լեզուի մէջ։ Նրանք խրուեցին այն մողորութեան մէջ, թէ գրաբարը պիտի դառնայ գրականութեան լեզու, թէ միայն այդ լեզուն կարող է զարգացնել հայի միտքը, կըթել նրա սիրտը։ Դա մի ահազին յնտաղիմական փորձ էր, որի վրայ այնքան մեծ աշխատանք վատնեցին Մխիթարեանները։

Եթէ նրանք աւելի շատ ունենային հսկայ տաղանդներ, քան որքան ունեցան, եթէ նրանց աջողուէր աւելի երկար ժամանակով արգելք հանդիսանալ ժողովրդական գրականութեան դէմ, այնուամենայնիւ, վերջ ի վերջոյ յաղթուողները նրանք պիտի լինէին, որովհետև ժամանակի դէմ զնալը մարդկային ոյժերից միանգամայն վեր է:

Այդպէս էլ եղաւ. կործանուեց Մխիթարեանների ոսկէզօծ կուռքը, իր բեկորների տակ թողելով նաև նրանց ահազին հեղինակութիւնը, նրանց ղեկավարող դիրքը:

Վերածնութիւնը ազգերի մարմնի և արիւնի մէջ մտնում է գրականութեան և դպրոցների միջոցով: Նայենք Յունաստանին: XVIII դարում այսուեղ էլ վերածնութիւն է սկսուած: Բազմանում են բարեկարգ գորոցները, գրական գործիչները. ժողովրդական հասկանալի լեզուի պահանջը այնքան պարզ է զգացուում, որ սկսում են թարգմանել հին յոյն հեղինակներին. օրուայ հարց է դառնում գրական ժամանակակից, նոր լեզու ստեղծելը: Աշխարհական տարրը անքան գերազող դեր է կատարում գրականութեան մէջ, որ յունարէնի են թարգմանում անգլիական և Գրանսիական նոր փիլիսոփաները. տարածում են ազատ մաքերը, քննադատութիւնը սկսում է վիրտուուսների իրականութեան հիմքերը: Այդ շարժումը այնպիսի կերպարանք է ընդունում, որ յունաց եկեղեցին նոյն իսկ սկսում է վախել և դիմադրողի դեր է ստանձնում\*):

Մեղանում գրական և դպրոցական վերանորոգութիւնը միմիայն Մխիթարեան միաբանութեան էր վերապահուած: Խսկ այդ միաբանութիւնը իր կազմակերպութեամբ, դործելու եղանակով, իր ձեռքում ունեցած միջոցներով չէր կարող բաւարարութիւն տալ ժամանակի պահանջներին: Հայաստանում, գոնէ նրա արևելեան մասում, արգէն դործում էր քաղսաքական ազատութեան դաշտափարը. և սակայն, նա ուժեղ արձագանքներ չէ գտնում Մխիթարեան վանքում, չէ արծարծւում այսուեղ, ժողովրդականացած իդէալի կերպարանք չէ առնում այնտեղ հրատարակուող գրքերի մէջ:

Այս բոլորը XVIII դարի երօպականութեան համար կատարեալ յետազիմութիւն էր, դաւաճանութիւն նոր մաքերի, առաջարիմութեան դէմ:

\*) Կ. Փանֆի, „История Европы XIX века“, т. II, М. 1889,  
եր. 176—177.

Այսպէս է Մխիթարեան միաբանութեան նշանակութիւնը,  
եթէ նայենք Եւրօպայի կողմից։ Այժմ դիմենք միւս կողմին,  
նազենք Մխիթարեաններին հայկական իրականութեան աչքով։  
Տեսնենք ինչ ունեինք մննք և ինչ աւելացրեց մեր ունեցածի  
վրայ Մխիթարի ստեղծած հիմնարկութիւնը։

1, է 0

(Ար Շարունակութիւն)

## ԷՄԻԼ ԶՈԼԱՆ ԵՒ ՆՐԱ ԵՐԿԵՐԸ

(«Բեղմնաւորութիւն» վէտի առիթով համաօստ տեսութիւն նրա գրական դորձունէութեան)

Էմիլ Զօլան, անտարակոյս, մի մեծ գրական անձնաւուրութիւն է։ Գուցէ Վիկարօր Հիւզոյից յետոյ Գրանսիական գրականութիւնը չի տեսել մի աւելի ժողովրդական դրող, քան Ռուդօն-Մակլարների հանճարեղ հեղինակը։

Զօլան մարմնացումն է մի մեծ գրական ուղղութեան—նատուրալիզմի, —ինչպէս Վ. Հիւզոն ներկայացուցիչ էր րօմանտիզմի։

Անցեալ դարի սկզբներում գրականութեան մէջ թագուրում էր ռօմանիսիկ հոսանքը, վերջերում գերիշխող հանդիսացաւ նաև նատուրալիստ, իրական ուղղութիւնը։

Մեր նպատակն է բնորոշել Էմիլ Զօլայի գրականական ուղղութիւնը և ցոյց տալ այն խոշոր դերը, որ նա խաղացել է եւրոպական գրականութեան մէջ։

Զօլայի տարանքը անսպաս է։ Նա անցեալ XIX դարի ամենապատղասու զրոյներից է և ամենաշատ ընթերցուածը։ Նա մինչեւ այսօր գրել է, բայց Ռուդօն-Մակլարների ու «Երեք քաղաքների» սերիաները, նաև 22 ուրիշ հաստիներ—ընդամենը 46 խոշոր գիրք, որոնցից տպագրուած են մի քանի միլիօն օրինակներ և որոնք թարգմանուած են արդէն բոլոր և լրացական լնուններով։ Եթէ իրար վրայ դարսենք այդ բոլոր դրագերը, կը ստանանք մի սիւն, որի բարձրութիւնը կը լինի ոչ պակաս քան 150 վերստ։ Այս գործը այնչափ պատկառելի է, որ գրականութեամբ հետաքրքրուողը չի կարող չը կանգնել այս վիթիարի աշտարակի դիմաց։

Գրականական աշխարհում, ինչպէս և քաղաքական, գեղարուեստական ու գիտական աշխարհներում, միջն ընդունա-

կութեան, հասարակ տաղանդի մարդիկ միշտ ընկճուած, հպատակուած, ուղղակի գերի են դարձած լինում մէկի հանճարին։ Հիւգօն այդ հանճարիցն էր։

Իր անսանձ Փանտազիայով, իր կտրուկ ու գօրեղ ոճով, նա անցեալ դարի առաջին կէսի գրական կուռքն էր դառել, որի առաջ խոնարհուում էին ամբողջ սերունդներ։ Գրական աշխարհը նրա ֆօրմուլներով էր զեկավարւում և նրա ուսմունքը պաշտուած էր ինչպէս մարդարէի յայտնութիւն։ Նրա սալօնը մի տաճար էր, որտեղ մարդիկ շնչելով էին խօսում, սպասելով տաճարով երևալուն և որտեղից երիտասարդ տաղմնդները դուրս էին գալիս շլաշած, հիպնոսուած մեծ վարդապետի փայլով։

1827-ին Հիւգօն, իր կրօմիւլ տրագեդիայի առաջաբանի մէջ գետեղեց իր դաւանանքը (profession de foi) բօմանտիզմի մասին, իսկ 1830-ին դուրս թողեց իր Հերենանին, որ այդ գրական հոսանքի ծայրայեղ արտայայտութիւնն էր։ Գուցէ մեր դարում ոչ մի գրականական գործ մինչև այդ օրը այնպիսի գզրդիւն չէր կցել, այնքան ազմուկ չէր հանել, որքան այդ անբնական, շինծու, զրաման։ Տօմանտիզմի ֆօրմուլան գտած էր.—Նրա արտայայտիչն էին անբնական, բացառիկ տիպեր, շինծու անբնական միջավայր, ծայրայեղ կդէալացումն լաւի ու վատի, բարու ու չարի, հերոսական գործեր, բացառիկ կեանքի մթնոլորտ և վերջապէս խուսափումն այն ամեն բանից, ինչ որ առօրեայ է, բնական է։

Մի տարօրինակ յափշտակումն տիրեց գրականագէտներին. քննադասաները բառեր չէին գտնում այս մեծ գործը գովարանելու համար։ Դա մի թովչութիւնն էր, որ կաշկանդել էր առողջ դատողութիւնը, կրիտիկան։

Այս ընդհանուր հրայ. հիացման մէջ յանկարծ մի ձայն բարձրացաւ, որ ազգու ոճով բոլորեց բօմանտիզմի գէմ, ցոյց տուեց այդ գրական հոսանքի ամբողջ շինծուութիւնը, ցոյց առւեց, որ հարկաւոր է իջնել եթերքի բարձրութիւնից, որտեղ սաւառնում էին բօմանտիկները և իջնել երկիր, ուսումնասիրել իսկական մարդու առօրեայ բէալական կեանքը։ Նա մի շարք պատկերներով ապացուցեց, որ մարդիկ ոչ հրեշտակներ են և ոչ գեեր, այլ ունեն լաւ ու վատ կողմեր էլ, որ այս առօրեայ մաներ մարդկային էակները, այս առօրեայ տաղտկալի կեանքն էլ կարող են առատ ու հետաքրքրական նիւթեր տալ բօմանիւտին և գրամատուրդին։

Այս յանդուզն մարդը, որ սրբապղծում էր, հայոցում էր բօմանտիզմը, Բալզակն էր, այդ խոհեմ, խղճուկ, միշտ հալածած

և միշտ աղքատ, դռնէ գուռռ ընկած Բալզակը, որին «զրչակ» անունն էին տալիս հակառակորդները և որ այնչափ ստորացրել էր իր զրիչը, որ «կեանքի պատկերներ» էր վերցնում և յաւակնութիւն ունէր իր այդ նկարներով յեղափոխել զրականութիւնը:

Զօլան նրան անուանում է «Նատուրալիսմի հայր», և իր ուսուցիչը:

Ոչ մի զրականական ուղղութիւն յանկարծ հասունացած չէ ծնուռում: Գրականական հոսանք ստեղծելը մի մարդու գործ չէ. մի շարք տատանումներից յետոյ են միայն ամրանում ու ճիշանում գրականական դալրոցները: Նոյն տատանումները, նոյն էլվոլիւցիան ունեցել է նատուրալիզմը ևս:

Բալզակից յետոյ մի շարք, ևթէ չասենք հանճարեղ, գոնէ զօրեղ տաղանդի տէր մարդիկ կատարելազործեցին ու ճիշացրին Բալզակի գործը մինչև Զօլայի ժամանակները:

Ցլորէրը, Գօնկուր և զբայցները, Դոդէն, Տուրգենեվը \*) և ուրիշները արդէն պատրաստել էին Զօլայի համար մի փառաւոր ժառանգութիւն: Զօլան ընդունեց այդ ժառանգութիւնը և իր հանճարի ոյժով հասցրեց նրան զարմանալի ճիշութեան:

\*  
\*

Արդի զրականական հոսանքները մեծ առնչութիւն ունեն գիտութեան զարգացման հետ: Գիտակցորդէն թէ անգիտակցօրէն զրողները հետեւում են գիտութեան ժամանակակից պահանջներին, օգտուում են նրա գիտերից: Նատուրալիստ դալրոցը իրան «գիտական» տիտղոս է տալիս: Նա հիմուած է (ինչպէս և գիտական անալիզը) գիտողութեան ու փորձի վրայ—գոնէ այդ յաւակնութիւնն ունի նա:

Զօլան զրականութեան համար ծնուեց այն երջանիկ ժամանակ, երբ ընագիտութիւնը իր զարգացման դագավթնակէտին էր հասած, երբ Մաֆանդին, մեծ կլօդ-Բերնարը և նրանց հետեղները, իբրև հիմք ամեն գիտական հետազօտութեան, գրեցին փորձը: Նրանցից առաջ Բիշան, այդ մեծ անատօմիստը, մանրագննել էր մարդուս կազմուածքը, ուսումնասիրել էր մկանների ամեն մի թելը, նրա ուղեղի գանդակները, նրա ոսկորի ծուծը. նոյնն արել էին բոյսերի ու կենդանիների վերաբերմամբ կիւլիէն, լիննէյը և ուրիշները: Եւ այս գիտերը վերջ-

\*) Ցուրգենեվը իր լաւագոյն աշխատութիւնները գրել է Պարիզում և Գրանստական զրականական դալրոցին է պատկանում իր շատ կողմերով:

նականապէս ցյրեցին այն անդունդը, որ բաժանում էր մարդուն միւս կենդանիներից.—պարզուեց, որ մարդն էլ այնպէս է կազմուած, ինչպէս այդ վերջնները. աւելի ևս՝ որ այդ երկուսն էլ նոյն քիմիական տարրերից են բաղկացած, ինչ որ հասարակ բոյսերը:

Միւս կողմից Լամարկը, Սենթ-Էլերը, վերջապէս Դարվինը քանդեցին մարդու խնդագոյսութեան հասցած թէօրիան և ապացուցեցին, որ նա համեմատալար նորագոյն կենդանի է երկրա երեսին, որ նրանից հազարաւոր գարեր առաջ ապրել են կենդանիներ ու բոյսեր, և որ նա կերպարանափոխութեան արդիւնք է:

Ներսվագիտութիւնը ահագին քայլեր արեց, հոգեբանութիւնը մերածուեց հասարակ Փիլիոլոգիական (բնախօսական) երեսոյթի և գառաւ ուղեղի Փունկցիա, ինչպէս շարժումն մը կանների Փունկցիան է, իսկ մարտոզութիւնը—ստամոքսի, այսպիսով մարդկային կրքերը ենթարկուեցան անալիզի և նրանց շատերը բացատրուեցան լոկ Փիլիոլոգիական օրէնքներով: Այս հայեացքները չեն կարող չը յեղափոխնել զբականութեան փօրմուլը:

Մարդը փոքրացաւ, աշներե եղաւ, որ նա էլ, բոյսերի ու կենդանիների նման, ենթակայ է լիլիմայի, հողի, ջրի, շրջապատող պայմանների աղղեցութեանը, և որ նա ծնւռում է ժառանգական որաշ յատկանիշներով: Եւ այս ներքին թէ արտաքին աղղեցութիւնները կազմում են այն միջավայրը, որին նատուրալիստ գպրոցը այնչափ մեծ գեր է խաղալ տալիս, որ մարդը գտանում է գերի, կամազուրիկ մի փնտուր, որին զրսի քամբն փշում առանում է, որ կողմը կամննում է. կարծ ասած—L'homme est déterminé par le milieu (մարդը միջավայրի որուուղ է):

Երջափայրի այս ընկճող, նաևմաշնող աղղեցութեանը աւելանում է և անողորմ ժառանգակականութիւնը, որով մարդ Փիլիոգրական յատկութիւնների հետ միասին ժառանգում է նոյնուիչս և իր նախնիների բարյական յատկութիւնները:

Միջափայրի աղղեցութիւնը հերոսի վրայ վարպետութեամբ ցոյց էին տուել Ցլօքէրը, Գօնկուր և Ռաբայրները: Զարմանալի բարձրութեան հասցրեց նրա հոգեբանութեան էտիւդը Ատենդալը, որ ԽIX դարի առաջին կէսի ամենամեծ հոգելանն է համարուում: Գիտնական բօմանին պիկասում էր մի բան միայն —ժառանգականութեան մեծ ու բարդ օրէնքների ներմուծումն նրա մէջ:

Այդ ցանկացաւ անել էմիլ Զօլան։ Կը տեսնենք, թէ որչափ յաջողուեց այդ նրան։

★ \*

Այսպէս ուրեմն, Զօլան չը ստեղծեց այն ուղղութիւնը, որի պարագլուխն է այսօր։ Նատարալիստ բօմանը պատրաստ էր արդէն։ Զօլան ճոխացրեց միայն նրան ու մտցրեց նրա մէջ ժառանգականութիւնը։ Քանի վէպերի մէջ (Շուդօն-Մակելարների սերիան) նա ճգնում է ակներն անել իր հերոսների վրայ ժառանգականութեան մնած օրէնքը։ Սրանք բոլորը սերւում են մի պսիխոպաթ կնոջից (Ադէլայիդ Ֆուք), որի հայրը խելազար էր։ Այս կինը ամուսնանում է իր ծառաներից մէկի, Շուդօնի հետ, իսկ սրա մահից յետոյ սիրահարական կապեր է հաստատում Մակելար անունով մի արբեցող գիւղացու հետ, որից երկու որդի է ճնում—Սնատուան և Խւրսուր, Այս արմատից սերւում են երկու ճիւղ—Շուդօններ ու Մակելարներ։ Շուդօնները, առելի առողջ քան Մակելարները, որոնց հայրը արքեցող էր, թէ առաջինները նոյնպէս պէտք է կրէին իրանց վրայ խելազար պապի ու անբնական—պսիխոպատ մօր ներփախութեան կնիքը։ Սրանց սերանունները պիտի ճիւղաւորուեն, և քամն քօմանների հերոսներ գաւնան, և նրանց մէջ ժառանգական ներփախութիւնը զնալով սերնդից սերունդ, հարիւր ձեւեր պիտի ստանայ, տալով հանճարներ կամ ապուներ, քաղաքական և հասարակական մնած գործիչներ կամ ստոր սրբիկաններ ու գողեր, հիստերիա ու խելազարութիւն, ծայրայեղ կրօնամոլներ կամ գուզանմանման եղեռնազործներ, կոյսեր ու անտառակներ,—մի ամբողջ աշխարհ կրքերի ու մոլութիւնների, մի խլըրտումն հիւանդուտ էակների, որոնց մէջ բժիշկը գտնում է համարեա այն բոլոր ներփային ու հոգնեկան հիւանդութիւնները, որոնք ուստինասիրուած են անցեալ զարի վերջի կէսում։ Այս հիւանդուտ մարդիկ լնիխում են որոշ շրջանների մէջ, աշխատանքական կապերով միանում են ուրիշ, առելի առողջ կամ, ընդհակառակը, աւելի հիւանդ տարրերի հետ և տալիս են նոր սերունդներ, որոնց մէջ հօրից ստացած հոգեկան ու մտաւար առանձնայատկութիւնները մնողմանում են, կամ աւելի և սաստիանում մօրից ստացած ժառանգականութիւնն ոյժով, և փոփոխուում ու զանազան գոյններ ստանում շրջանայրի աղդեցութեան ներքոց։ Յետոյ նոր սերունդները խնամանում են իրար հետ և այսպիսի հոգեբանութիւնը զնալով աւելի և աւելի բարդուում է ու կաղըմում մի խճճուած ցանց, որ նոյն իսկ Զօլայի ահագին տաղանդը անկարող է քանզել և սախալուած է յաձալս (համար-

եա միշտ) Ալեքսանդր Մակեղոնացու պէս այս Գորդեանն հանգոյցը սրի մի յանդուզն հարուածով կտրել: Ժառանդականութիւն ու միջնավայր—ահա երկու բռնակալներ, որոնք ստրկացնում են մարդուս հոգին, ձնչում են նրա ուղեղը, կտչկանդում նրա կամքը: Մարդս անզօրացած, կամազուրի դարձած, կորցրծա այն միակ յատկութիւնը, որով պարծենում էր նա մինչև այժմ—կամքի ազատութիւն, ինենուրոյնուրիւն:

Այս էր դեսերմինիզմի, այսինքն այն փիլիսոփայական ուղղութիւնը, որ բացասում էր կամքի անկախութիւնը:

Եթէ մէկը հանճար է կամ սալուշ, բարոյական թէ անբարոյական, միծ գիտնական, միծ նկարիչ, սրիկայ թէ եղեռնադործ,—նա մեղաւոր չէ, մեղաւոր են ժառանդականութիւնն ու միջավայրը. նա ծնուած է որոշ բարոյական սազմերով, և այդ սաղմերը միայն զարգանում են նպաստաւոր միջավայրի մէջ: Եթէ մէկը սալանութիւն է դործել, ուրեմն նա ուրիշ կերպ չէր կարող վարուել, որովհետեւ իր նախնիներից նա ստացած էր մարդասապանի սաղմերը, իսկ շրջապատող պայմանները պարագ հող էին ներկայացրել սրանց աձման համար: Մի քայլ և, և կընկնէնք ճակատազրի ուսմունքի—ֆատալիզմի մէջ և մարդիկ կը զառնան մաննըքէններ, որոնք շարժւում են մղուած ժառանդականութեան անդիմադրելի ոյժից ու շրջապատող հանգամանքների զրդումով:

Ի՞նչ անմիխթար ուսմունք, ինչ յուսահատական թէօրիա: Բարեբախտաբար այդ սիսալ է, և այսուղ ևս, ինչպէս շատ հարցերում, բանաստեղծը զիսնականից առաջ է ընկել:

Զօլայի մտքի թոփչը չէր կարող ազատ շարժուել ժառանդականութեան այն նեղ շրջանակի մէջ, որ հաղիւ վստահանում էր սահմանել ժամանակակից զիտութիւնը: Եւ նա անխուսափելի կերպով պիտի ընկնէր չափաղանցութեան մէջ:

\* \* \*

Թող թոյլ արուի մեզ մի քանի խօսք ասել ժառանդականութեան մասին, ի նկատի ունենալով ինդրի կարևորութիւնը:

Այս, զիտութիւնը գետ անկարող է ժառանդականութեան օրենքներ սահմանել: Կայ մի շարլօն, մի ենթադրութիւն (որ սակայն գուբս է բերուած զիտողութիւններից), այն է՝ ներվային երևոյթները անցնում են ժառանդաբար կսմ նոյնութեամբ, կամ փոխելով իրանց ձեզ: Այսպէս օրինակ. մի հիստերիկ (ներվային) կնոջ զաւակները կարող են նոյնպէս հիստերիա ունենալ, կամ թէ չէ լինել տաղանդաւոր երաժիշտ, նկարիչ, կամ

ապուշ, անբարոյական կամ նոյն իսկ ընկնաւոր: Հաղուագիւտ չեն այն դէպքերը, երբ եղբայրներից մէկը մեծ տաղանդի ու ճարափիկութեան տէր է (գեղարուեստի, առևտորի, արհեստների մէջ), իսկ միւլը զուրկ ամեն տեսակ ընդունակութիւնից, ապուշ, նոյն իսկ խելագար: Այսպիսով արդարանում է այն հայեացքը, թէ հանճարը խելացնորութեան մի ձև է, կամ թէ հանճարից մինչև խելացարը մի քայլ կայ միայն:

Յայտնի է նոյնպէս, որ ներկային հիւանդութիւնները ժառանգաբար անցնում են սերնդից սերունդ, և զնալով սասականում են, բարդում են, զանազան ձեւեր ընդունում ու հասցնում ցեղը կատարեալ վատասեռման կամ սպառման: Սակայն եթէ այս հիւանդու, ներվախտոտ ընտանիքի մէջ մտնում է նոր արիւն, այսինքն երբ այդ գերգաստանից մէկը ամուսնանում է մի առողջ անհատի հետ, կարող է թարմանալ, առողջանալ, ինչ պէս մի վատառողջ ծառ, որին պատուաստ են անում:

Անա այն կանուան, որի վրայ Զօլան հիւսել է իր հոգերանութեան խճճած ցանցը:

Ցիշած ընդհանուր ցուցմունքները բաւական են եղել մի հիւանդու արմատից տամանաւոր հիւանդական ներկայանութիւններ ստեղծելու, մի ամբողջ ներվախտանութիւն (հերբայ պատուայից): Հեղինակի թուուցիկ հանճարը կամեցել էր լրացնել այն պակասը, որ այժմն էլ կայ զիտութեան մէջ: Ի՞նչ յանդըգնութիւն, ձգտել տաղանդի ոյժով վճռել ժառանգականութեան համարեա անլուծելի համարուած խնդիրը, հետեւ ժառանգական առանձնայատկութիւնների փոխանցման մինչի երրորդ, չորրորդ սերունդը, նորանոր պատուաստների (որոնք կատարուել են ամուսնութեան միջոցով օտար տարրերի հետ), նորանոր աղղեցութիւնների (կրթութեան, ուսման, շրջանի) միջոցով:

Ճշմարիտ է, երեխան ծնւում է ժառանգականութեան կնիքը ճակատին, բայց ճշմարիտ է նոյնպէս և այն, որ դաստիարակութիւնը, շրջավայրը, կարող են հիմնովին փոխել և նոյն իսկ գուցէ հէնց բոլորովին ջնջել նրա հետքերը: Զօլայի հերոսները, ժառանգական այս ներվայինները, նոյնպէս ընկնում են տարբեր կրթութեան և շրջավայրի աղղեցութեան տակ. ի՞նչ ձև պիտի ստանայ իւրաքանչյուրի հոգեկան ժառանգութիւնը: Ռըքան հարցեր, որոնք գեռ իրանց պատուախանին են սպասում զիտութիւնից:

Գիտութեան փոխարէն խօսում է րօմանը: Մի ուրիշ մեծ հոգեբան, Դոստունսկին, տալով մեզ իր սոսկալի հիւանդական տիսպերը, խուսափել է ժառանգականութեան բացարութիւնից: Զօլան է միայն, որ այս յանդուզն քայլն արեց, և մինք ապշած

ենք այս «սուրբ վատահութեան» առաջ, որ արգասիք է ներքին ոյժի և աղացոյց տուղանդի զօրեղութեան:

Կրիտիկան կը խոնարհուի մեծ վիպասանի այս անձնալըսահութեան առաջ, որքան էլ չափաղանցրած համարէ նրա արածը:

\* \*

Նոյնչափ յափշտակման ու չափաղանցման հասաւ «Երեք քաղաքների» հեղինակը նուս միջավայրի և բարք ու վարքի աղդեցութեան մէջ:

Իչալիզմը (իրականութիւնը) գառաւ նրա իդեալը:

Նկարագրել ամեն ինչ, առանց խորութեան, առանց ընտրութեան, պատկերացնել Ենթերցողի առաջ այն ամենը, ինչ որ կատարում է վարագոյրի տակ.—սրան ինչ է արել Զօլան:

Այս հեղինակի արած շրջավայրի, վարք ու բարքի նկարագրութիւնը նմանում են անառօժմատի ու բնագչափի ուսումնասիրութիւնների. նրա վրձինը հստասար ոյժով ու հաւասար սիրով նկարում է ամեն ինչ, չը կանգնելով նոյն խոկ ամնակեղուոտ, ամնասապրիտական տեսարանների առաջ: Ինչպէս ամնատօմիսար մանրահատում է մարմնի լուսոր մասերը անխորաբար, նոյնպէս և նասուրավիսաը, իրեն կեանքի մանրահատող, իրաւունք ունի և նոյն խոկ պարտաւոր է քօղաթափ անել այն բոլոր ստորոտիթիւններն ու կեղակերը, որոնք թագնուած են մեր աչքից շինծու սլարկեցաւութեան և բարոյականութեան քողի տակ: Ինչ վոյթ, եթէ գարշահոսութիւնը պիտի զզուեցնի մեղ ու մեր սիրաը խասնել տայ...\*)

Բչ մի հեղինակ այց աստիճան յանդուզն և անսանձ չը դանուեց միջավայրի նկարագրութեան մէջ. մի քանի կրիտիկուններ մինչև անդամ նկատում են, որ Զօլան աւելի սիրով է վերաբերում գէպի կեղուոտ, քան աղնիւ. տեսարաններն ու մարդկային կրթերը: Նրանց ասելով այս հեղինակի զրդումով է, որ երեան են եկեղեց մի շարք վարդոցային զրուցներ, որոնք զարմանալի տաղանդով ու կենդանի ոճով նկարադրում են սարդ կրքեր և անբարոյական տեսարաններ և իրանց այդ ազրով ողողել են արդի եւրոպական հասարակութիւնը...

Անտարակոյս այս մեղադրանքը ծիծաղելի է. մի մարդ չի կարող հոսանք ստեղծել, անչուշա ժամանակի ոգին է, բարոյ-

\*) «Հող» (La terre) վեպի մէջ այնպիսի անպատճառ պատկերներ կան, որ այդ բօմանը լոյս տեսնելոց յետով, Զօլալի ամնասաղանդառուր հետեղներից հինդը երես դարձրին նրանից:

ական հիմունքների վլաստակումն է, որ թելագրում է անբարոյական գրականութիւնը, սակայն չի կարելի հերքել նաև այն, որ Զօլան ոչ միայն չի խուսափում տարիական տեսարաններ նկարագրելուց, այլ նոյն իսկ մի առանձին հակումն է ցոյց տալիս դէպի այդ:

Մենք չենք ուղում զնահատել նրա անխսիր նկարագրութիւնների սկզբունքը, այդ մեղ շատ հեռու կը տանէր: Կ'ասենք միայն, որ Զօլան միանդամայն հետեւղաբար է վարում: Այդքան մեծ նշանակութիւն տալով շրջավայրին, նա անհրաժեշտաբար պիտի մանրակրիստ լինէր. իսկ գիտնական բօման գրելիս, պիտի վարուեր հասարակութեան հետ այնպէս, ինչողէս գիտնականն է վարում անհատի հետ:

Այդ մանրակրիստութիւնը Զօլայի ամենամեռյլ կողմն է համարում, թէս նկարագրութիւնների ճոխութիւնը, գեղարուեսութիւնը հիացնում է ընթերցողին: Ամենակերպառ տեսաբանները նրա վրձնիք տակից գուրս են զալիս իբրև մի մեծ վարպետի գործ, այնուամենայնիւ կրիստիոնը նրենք չէ ներում նրան այդ յանդգնութիւնը, հասարակութեան ստոր կրչերի, տիրող ցեխի երեան հանելը, որ հարուածում է նրանց աճօժիւածութիւնը և մուադնել է տալիս մեծ վիպասանի միւս կողմերը...

Իսկ միւս կողմնը ակներե են անում մեծ նասուրալիստ գրողի մէջ անսուպաս վիպագրական տաղանդ, լաւ ծանօթութիւն հասարակական կենաքի, պիտական նորագոյն հայեացքների, ժուանականութեան թէօրիաների և հոգերամսութեան:

Վստահ կարելի է ասել, որ Գրանսիֆական գրականութեան մէջ ոչ չի շօջափել այնչափ հասարակական բարդ խնդիրներ, ինչպէս Ռուգօն-Մակլարների հեղինակը: Նա ցանկացաւ նկարագրել երկրորդ կայսրութեան (Եազօլիոն III-ի) ժամանակաւայ հասարակական, քաղաքական, Փինանսական, բանուուրական կենաքը: Եւ նա մտաւ հասարակութեան բոլոր խաւերը, սկսուծ մեծ քաղաքական մարմիններից (ինչպէս պարլամենտը), մինչև բանուուրական նուռաւ համայնքները, մինչև Պարիզի ամենազաղելի որջները, սրիկանների ու պոռնիկների աշխարհը: Երկրագործը, ածխահանը, արհեստաւորը, վաճառականը, ֆինանսիստը, գեղարուեսուագէտը, գրականաւէրը, պուռնիկն ու չարագործը,—ամենքը բնոմ են զուրս բերուած իրանց իսկական գոյնով, առանց չողաքորթութեան, բայց նաև առանց ինայելու: Զօլայի սուր մանրահատիչը անիմայ կորատում, քրքրում է հասարակական մարմինները և իր լուսանկարչական պատկերները վերցնում: Մանօթ լինելով

տնտեսաղիտական ժամանակակից ուսմունքներին, նա կամեցաւ իր վէպերի մէջ մտցնել անտեսական խճռուած մեծ խնդիրներ ևս.—կապիտալիզմի բռնակալ ստրկացնող ոյժը, բանուոր ձեռքի անզօրութիւնը կապիտալիզմի դէմ կոիւ մղելու համար:

Այդ քանի վէպերը պարունակում են իրանց մէջ մի ամբողջ աշխարհ, իսկական կեանքի հնոցը, որի մէջ մարդիկ իրանց առաջինի ու անբարոյական ձգտութերով, զաղըելի ու վսեմ կրքերով կոիւ են մզում իրար հետ, և ամեն մէկը կուռում է իր վէնքով—մէկը իր տաղանդի ոյժով, միւսը կապիտալի զօրութեամբ, երրորդը սրիկայութիւնով ու չարագործութիւններով, չորրորդը իր գեղեցկութեան հրապոյրով։ Մի զարմանալի խլատումն մարդկային էակների, որոնք ստրուկ են դարձած իրանց ժառանգականութեան, շրջապատող պայմանների և որոնք նոյնպէս աղջում են միւսների վրայ։ Այսուեղ մենք տեսնում ենք իսկական մարդկանց գիմակները գէմքերից պոկած իրանց իսկական գիշատիչ աշքերով ու ստախօս լիրը բերանով։ Տեմնում ենք մարդու անկումն, անձնասիրութեան, պատուասիրութեան անկումն, երբ խնդիրը գալիս է կրքի բաւարարմանը, և մի նաևահի ոտերի տակ յատակի վրայ սողում են բօրսայի ու արիստոկրատիայի ներկայացուցիչները, չան պէս հաշալով, միայն թէ այդ պոռնիլը թոյլ տար իր ոտը լիզելու։ Տեսնում ենք բարոյական տարրական գաղափարների բացակայութիւնը ողորմելի ածխահամների շրջանում, սև գեւանի տակ, զարհուրելի փոսերի մէջ, որտեղ կինը պատկանում է ամենքին, որտեղ աղջիկը, դեռ երեխայ, ժապիտն երեսին ընծայում է իր կուսութիւնը... ում որ պատահի...»

Թուել մի առ մի մեծ վիպասանի չօշափած հասարակական ու բարոյական խնդիրները, պատմել նրա արած սոսկալի մերկացումները, այդ կը նշանակէր կրել նրա ահազին գործի պատմութիւնը—մի բան, որ մեր նպատակից դուրս է։

\* \*

Վերջացնելով Բուգծու-Մակկարների երկար սերիան, էմիլ Զօլան սկսեց մի նոր շարք վէպեր, «Երեք բաղաֆ» ընդհանուր վերնագրով (Լուրդ, Հռոմ, Պարիզ):

Պիէր Ֆրօմանը այս երեք վէպերի գլխաւոր հերոսն է։ Սա մի քահանայ է, որի սրտի խորքում թերահաւատութիւն է ծագել։ Կաթոլիկութիւնը երջանկութիւն չը տուց մարդուն, տասնութ դար Փրկչի ուսմունքը ընկել է աշխարհ և դեռ ոչ մի մարդ բախտաւոր չի եղել։ Հնացած չեն արդեօք այս ծէսերը,

որոնք կուապաշտութեան կնիք են կրում: Եւ Պիէրը զգում է, որ իր հոգու խորքերում պակասում է հաւատը:

Նա լսել էր, որ Լուրդ քաղաքում հաւատը դեռ ևս հրացք-ներ է դործում: Հաղարներով ու տաս հաղարներով հիւանդներ, տանջուղներ ու տառապեալներ դիմում են այնաեղ Տիրամօր հարայր և իրանց ցաւերին դարձան գտնում: Եւ նա գնում է այնտեղ իր աչքով տեսնելու, ստուգելու իր լսածը, գուցէ ամ-րանայ նրա տառանուող հաւատը. բայց այդ ճամբորդութիւնը աւելի ևս հիասթափեցրեց ու աւելի թերահաւատ դարձրեց Պիէրին: Մի սոսկալի տանջալից ամբոխ, կուրծքը ծեծելով, ար-տասուք թափելով, չոքէչոք սողում էր դէպի այդ անձայն քար-այրը ու մի կտոր ափոփանք աղերսում իր տանջուած մարմ-նին, իր տառապած հոգուն: Բիւրաւոր կրծքեր մաղթանքներ էին մատուցանում, աղեկտուր հառաջանքները լցրել էին օղը, արտասուքը ողողել էր սրբազն ժայռը, տանջանքի մի աշ-խարհ էր այս, որանեղ ցաւագար մարդկութիւնը, յուսալից աչ-քերը դէպի այս սրբավայրը յառած, թերը տարածած, երեսը գեանին տրորելով, սպասում էր Տիրամօր յայսնութեան, փըր-կարար լոյսի ծագմանը, որի ճառագայթները պիտի մեռածնե-րին կեանք ներչնչէին: Եւ Պիէրը սոսկաց, ինչ, այսքան արտա-սուքից չը հալեցան ապառաժները, և մեռելները չը վերկացան գերեզմաններից: Ուր է ուրեմն հաւատի և աղօթքի գօրութիւնը:

Կաթոլիկ կղերը ճամաչում է այս վայրի մնջօրութիւնը, և այնուամենայնիւ շարունակում է շահագործել տգէտ ու յու-սահատ ամբոխի մնալաշտութիւնը:

Եւ Պիէրը վճռում է գնալ Հոռոմ, աչքով տեսնել Պետրոս առաքեալի փոխանորդին, մասուցանել նրան իր «Եռորոգուած Հոռոմ» գիրքը, որ պիտի փրկէր փլատակուող ու մնանկացած կաթոլիկութիւնը: Բայց «յաւիտենական քաղաքը» աւելի ևս յուսահատեցնում է աբբային: Այստեղ, կաթոլիկութեան բուն կենտրոնում, աիրում է շողովորթութիւն, կեղծիք, անհաւատու-թիւն, անաւանական կիրք: Չէ, ոչինչ չի կարելի անել, կաթո-լիկութիւնը փտել է, ահազին ճեղքեր են բացուել նրա պատե-րի մէջ. մէկ օր կը փլատակուի ու տակով կ'անի քրիստոնէու-թիւնը:

Պիէրը վերադառնում է Պարիդ, մի երկու անյաջող փար-ձեր էլ է անում իր հաւատը փրկելու համար, յետոյ դէն է գը-ցում քարաջան և ամուսնանում, որպէս զի վայելէ երկրի բարիքը և ապրի իր համար, քանի որ չը կարողացաւ ապրել ուրիշների համար. այս միուրիւնից ծնւում է Մարիե Ֆրումանը, որ կը դառնայ «Բեղմնաւորիւն» վեպի ներոսը:

Անտարակոյս այս վէպերը գրուած են նորագոյն փիլիսոփայական հոսանքների ազդեցութեան ներքոյ: Պէտք է ասած, որ վերջին տարիներս եւրոպական պեսսիմիզմը ամբագիսդուել է ու սրբագործուել դրականական միստիցիզմով: Տօլսոյի, Նիշչէի, Շօվենհաուէրի, մանաւանդ ոռու մեծ փիլիսոփայի հիւանդատար շունչը և բուգդայական Նիրվանի ուսմունքը վարակել են րօմանը և շատ հաւանական է, որ Զօլան ևս զերծ չի մնացել այս հոսանքի ազդեցութիւնից:

Յամննայն դէսպ «Երեք քաղաքները» բոլորովին առանձին են կանգնած և արգասիք են մեծ վիպասանի մաքի մի նոր ուղղութեան:

Ի՞նչ էր ուղում ասել մեղ Զօլան իր այս սերիայով:  
Ահա մի մարդ (Պիէրը), որ նորիրել էր իրան կրօնի ու ժողովրդի ծառայութեանը, յանկարծ զայթակեզուելով ու անկարող լինելով յեղափոխնել նկեղեցին, փոխում է իր հայեացքները, իր խէչալը և, փոխանակ իր անձը հասարակութեան նորիրելու, իր անձնական կրծանկութեան ետևիցն է ընկնում: Փորձը բերում է նրան այն եզրակացութեան, թէ իզուր են մարդկացին զոհերը, աշխարհը, կեանքը իրանց շաւզով պիտի ընթանան, յիմարութիւնն է ճգնել գետի հոսանքը կանգնեցնելու: Ետ քաշուենք, սպասենք, կանցնին գարեր, զիտութիւնը կը գտնի այն բալզամը, որ անմահական ջրի նման պիտի նորոգի մարդկութեան նեխած օրդանիդմբ և հանգիստ ու կրծանկութիւն սփորի աշխարհիս վրայ:

\* \*

Ահա թէ ինչ է եղել Զօլայի գործը:  
Նա չափազմնց հետու գնաց իր գպրոցի մարդկանցից:  
Այս հանձարի թափչքը այնքան ուժգին էր, որ զցեց նրան աւելի հեռու, քան գուցէ ինքը կը կամենար և ամեն ինչ չափանցրած գուրս եկաւ նրա գրչի տակից: Չափաղանցրած է ամենից առաջ շրջավայրին տուած նշանակութիւնը: Նկարազրութեան այդ անյագ ծարաւը տարաւ նրան դէպի աննպատակ ու անմիտ մանրամասնութիւններ, որոնք ոչ բնորոշում են բարք ու վարքը և ոչ էլ մնկնում են հերոսների հովին, շարժումները:

Ոչ ոք այդ աստիճին չը ստրկացրեց մարդուն շրջավայրի առաջ և ոչ ոք այդչափ չը մանրամասնց այս վերջինի նկարագրութիւնը:

Հոգեբանական բօմանը բողոքեց այդ չափազանցման դէմ՝ Բուրժէի լուրջ գրչի տակ \*):

Չափաղանցրած է նոյնակս ժառանգականութեան թէօրիան, որի շինծուութիւնը աչք է ծակում: Կրիտիկոսները մատնանիշ են անում նոյնակս և այն առերես տարօրինակ երեսյթի վրայ, որ նատուրալիստ դրոշները, չը նայելով իրանց յարձակումներին բօմանտիզմի վրայ, դեռ թափ չին տուել իրանց վըրայից նրա ազգեցութիւնը:

Եւ, ճշմարիտ որ, մի կողմ թողնելով նախորդներին, որնք ապրել ու մնուել էին բօմանտիկ զրականութիւնով, նոյն իսկ Զօրան հոգով հիւգոյական է մնացել: Ավ ուշի ուշով դիտել, ուսումնասիրել է նրա բազմահատոր աշխատութիւնը, չէ կարող չը զբալ, որ բօմանիստը ամեն քայլում ձգտում է գէպի իդեալականը, և մեծ ոյժով զսպում է իրան, որ չը գտաւանի իր ընտրած ուղղութեանը: Մարդ զգում է, որ հեղինակը զըզուել է իրականութիւնից, այն իրականութիւնից, որի ջառակովն է դառել, և, ավ զիտէ, գտացէ իրական աշխարհի այս չափաղանցրած մերկացումն նպաստակ ունի խեղգել հոգու մէջ ծագած կասկածը, թէ իր ընտրած ուղին լաւագոյնն է:

\* \*

«Երեք քաղաքների» հերոս, արբայ Պիէր Ֆրօմանը, ինչպէս ասել ենք, թերահաւատութեան մէջ ընկաւ, թողեց հոգեւորական կոչումն և ամուսնացաւ. այս ամուսնութիւնից ծնուեցին չորս որդի, որնք կրում են չորս աւետարանիչների անունները—Ժան (Յովհաննէս), Մաթիէօ (Մատթէոս), Մարկ (Մարկոս) և Լիւկ (Ղուկաս):

Այս չորս աւետարանիչը դաւնալու են «Զորս աւետարան» (Les quatre évangiles) նոր վիպական սերիալի հերոսները. —Բեղմնաւորութեան (Fécondité) մէջ գործում է Մաթիէօն, Աւշատանիք (Travail) հերոսը Լիւկն է, միւս երկու եղբայրները կը դառնան, երեխ, մնացած երկու բօմանների դլխաւոր գործող անձնները:

«Աշխատանիք» համառօտած թարգմանութիւնը ընթերցողը կը գտնի «Մուրճի» հետեւալ համարում, բայց քանի որ այդ վէպը կապ ունի «Բեղմնաւորութեան հետ, ուստի մենք համառօտ կերպով կը պատմենք այս վերջինի պարունակութիւնը, ըստ կարելոյն, հեղինակի խօսքերով:

\* ) Մենք մտադիր ենք ապագայում մի էտիւդ տալ ֆրանսիական Հոգեբանական բօմանի մասին:

## ԲԵՂՄՆԱԿՈՐՈՒԹԻՒՆ

(F e c o n d i t e)

(Համառօտ բովանդակութիւն)

Մաթիէն ծառայում էր հոչին ոռճիկով Ալեքսանդր Բօշէնի տանը; Նա ամուսնացած էր Բօշէնի աղդական աղքատ Մարիաննի հետ, երբ Ալեքսանդրը, իր խախտուած գործերը վերականգնելու համար, ամուսնացաւ չափազանց հարուստ, բայց և չափազանց տգեղ Կոնստանտինի հետ, և երբ Մարիաննի կացութիւնը այս տան մէջ անտանելի էր դառել:

Մաթիէն ու Մարիաննը, բաւական իրանց նուազ միջոցներով, որոնցով հաղիւ հազ մի կերպ կառավարում էին, երջանիկ էին ընտանեկան կենանքում: Նրանց ամուսնութիւնը լոկ սիրահարական էր, և այս միութիւնից ծնած էին արդէն չորս հրեշտական մանուկներ,—մի հանգամանք, որ ծաղրի առարկայ էր դարձրել Մաթիէօին գործարանի ծառայողների մէջ: Ամենից շատ ծաղրում էր այս բեղմնաւորութիւնը Բօշէնը, որի տգեղ «չորս-սուկոր» Կոնստանտին միայն մի վատառով տղայ ունէր, Մօրիս անունով, մահուան կնիքը ծակատին ծնուած: Ծնողները պատկանում էին այն ամուսիններին, որոնք սահմանափակում են որդենութիւնը և լոկ անտեսական դիտումներով չեն կամենում մէկ կամ երկուսից աւելի զաւակ ունենալ: Որդենութեան այս սահմանափակումն մի ախտ էր դառել ֆրանսիական հասարակութեան մէջ, որ դրուատում էր աղջի կենսական ոյժերը: Բայց Բօշէնը և իր կինը համոզուած են իրանց բռնած գիրքի փրկարարութեանը: Խղուր նրանց անային բժիշկ Բուտանը, որ ջերմ երկրպագու էր բազմաթիւ ընտանիքի, թուերը ձեռին ճղնում էր ասպարուցել, թէ ֆրանսիայի աղդաբնակութիւնը գնալով նուազում է, թէ նա աճման տեսակէտից ետ է մնացել եւրոպական համարեա բոլոր աղդերից:

—Հաշուած է, որ ամեն ֆրանսիայի ընտանիք, պիտի արտադրէ ամենաքիչը չորս զաւակ, որպէս զի աղդաբնակութեան աճումն կարողանայ պահպանել աղջի կենսականութիւնը: Դուք մի որդի միայն ունէք, ուրեմն գուք աղդասէր չէք:

Բայց Բօշէնը բողոքում էր այս մնաղդրանքի դէմ.—Ռէ, նա էլ է սիրում իր աղջը: Բայց նա չէ կամենում բաժանել, մանրացնել իր կարողաւթիւնը մի քանի զաւակների մէջ:

Չէ, նրա Մօրիսը պիտի իր հարստութեան միակ տէրը մնայ, որպէս զի ուժեղ լինի, քանի որ ոյժն ու յարգանքը հարստութեան միջոցով է ձեռք բերուում:

Նոյն գործարանում ծառայում էր Մօրանժը, 38 տարեկան մի մարդ, որ մի գեղեցիկ կին ունէր վալերի անունով ու մի հրաշալի երեխայ, փոքրիկ թագուհին, իր ծնողների հոգին ու շունչը: Ուրիշ զաւակ չէին ուղարկ նրանք և երազում էին հարստանալ, մեծ կարողութիւն զիզել, որպէս զի կարող լինեն օժիտի ոյժով ամուսնացնել թագուհուն բարձր դասակարգի մի երիտասարդի հետ, և այդպիսով մտնել բարձր շրջանները:

Նրանք ձգաւում էին դէպի այդ շրջանը, երեկոյթներ սարքելով, լաւ կացարան վարձելով և ամեն կերպ ճգնելով իրանց սուղ միջոցներով արիստոկրատների հետ ուստի մեկնել: Բայց Մօրանժի ստացած ոսճիկը չէր կարող յագուրդ տալ վալերիի ախորժակներին, և նրանք վճռել էին թողնել գործարանը ու բանկային ծառայութեան մէջ մտնել:

Խօսակցութիւնն ընդհատուեց բարօնուհի Սերաֆին Լօվիցի երևալով:

Սերաֆինը այժմ քսան և իննը տարեկան մի շիկահեր, գեղեցկադէմ, բարձրահասակ և նազելի կին էր. նրա հարուստ կուրծքը յայտնի էր ամբողջ Պարիզին, նրա կարմիր շըրթունքների վրայ դրոշմած էր մի յաղթանակող ժայռ, իսկ մեծմեծ, թուխ աչքերի մէջ վասկուում էր հեշտասիրութեան անշիջանելի կրակը:

—Նեղութիւնն մի կրէք, սիրելիք, խնդրում եմ ձեզ... Ես եկել եմ ձեր սքանչելի թագուհուն տանելու ցիրկ առաւօտեան ներկայացման:

Մաթիէօն շատ տարիներ առաջ, երբ որ նոր էր ծառայութիւն մտել Բօշէնների մօտ, սերտ յարաբերութիւն էր ունեցել Սերաֆինի հետ:

Սա Բօշէնի քոյրն էր: Ամենամատաղ հասակից նա արգէն փշացած էր բարոյապէտ Ասում էին, թէ տասնըհինգ տարեկան գեռ չգառած, մի խնջոյքի մէջ, անձնատուր էր եղել մի անծանոթի: Յետոյ տեղի էր ունեցել այն տարօրինակ կապը բարօն Լօվիցի, այդ զարմանալի գեղեցկութեան տէր սրիկայի հետ, որի հետ փախել էր ու ամուսնացել և որին մէկ օր սպանուած գտել էին ներլինի որջերից մէկի մէջ:

Ամուսնու մահից յետոյ, բարօնուհին անսանձ կերպով անձնատուր էր եղել իր տոփականութեան, միշտ միջոցներ դրու գնելով, որ խուսափի յղութիւնից:

Խօսակցութիւնն անցաւ բժիշկ Գողի վրայ, որի համբաւը դղրդեցրել էր Պարիզը: Սա այն յայտնի խրուրգն էր, որ մի հիմնական միջոց ունէր կանանց արգելու զաւակ ծնել:

Մօրանժը մէջ մտաւ.

Փետրուար, 1901.

—«Բժիշկ Գօղը, ախ, այս, կնոջս ընկերուհին պատմում էր նրա մասին։ Ինչպէս երեսում է, նա իր օպերացիաներով ուղղակի հրաշքներ է գործում։ Ամենամնած ռազմասրտութեամբ նա բանում է կնոջ որովայնը, ինչպէս կը բանար մի պահարանի դռները, ներս է նայում, ու ինչ որ տեսնում է, կտրում հանում է, յետոյ կրկին ծածկում է, և կինը առողջանում է։ Այդ հրաշալի է»։

Եւսոյ նա մի քանի մանրաբամսութիւններ տուեց, այդ անում էր ոչ միայն առանց խղճի խայթի, այլ, ընդհակառակը, մի տեսակ պարձանքով։ —Հի որ նա, համելով կնոջ դաւակարեր գործարանները, պակասեցնում էր անբախանների թիւը։

Տիկին Մօրանժը ներս բերեց զուգած տամներկու տարեկան թագուհուն։ Նա, ճշմարիտ որ, հրաշալի էր վարդագոյն մետաքսէ գէրիայով, զարդարած սպիտակ կրուժեվլերով, վարդագոյն զլբարկն էլ գլխին։

—Օհ, հրեշտակ, բացականչեց Սերաֆինը, ծնողներին փաղաքշելու համար, ևս վախում եմ, որ չթոցնեն նրան շուտով։

Եւ երբ որ Սերաֆինը նստեցրեց երեխային իր սեփական կառքի մէջ ու տարաւ, Մօրանժը սքանչացած դարձաւ Մաթիէօխն։

—Յանցանք չի լինի արդեօք, եթէ մի ուրիշ երեխայ էլ ճնէր, արդէն երեք հոգի ենք, և այնքան զժուար է փող աշխատելը։ Ի՞նչ կայ, հարկաւոր է միայն մի քիչ զգոյշ լինել, երբ զրկում ենք իրար։

Ամստերը, ժուխալիստը, ցոյց տուեց իր նոր րօմանը «Անմահ զեղեցկութիւն» վերնադրով, որի մէջ քարոզում է անզաւակութեան, որպէս զի զեղեցկութիւնը պահպանուի։

—Նոր կտակարանը չէ ասում աճեցէք և բազմացարուք և լցրէք զաշխարհ։ Այդ ասողը հին կտակարանն է։ Յիսուսը ոչ հայրենիք ունէր, ոչ սեփականութիւն, ոչ արհեստ, ոչ ընտանիք, ոչ կին, ոչ զաւակ։ Նա անբերբիութեան մարմնացումն է։ Հչոց այդ է պատճառը, որ առաջին քրիստոնեաները զայրոյթ էին զգում գէպի ամուսնութիւնը։ Սրբերի տեսակէտից, կինը միայն ցեխ է և կորուստ։ Բացարձակ կուսութիւն, ահա ինչ է քարոզում աւետարանը։ Կոյսը կնոջ իոդէալն է, նոյն իսկ մայրութեան իդէալը։ Արդէն ապացուցուած է, որ քանի զարգացած է մարդ, այնքան նա անողութեան է։ Քանի լայնանում է մարդու ուղեղը, այնքան էլ պակասում է նրա բեղմնաւորման ընդունակութիւնը... Նոյնպէս և ազգերը։ Լուսաւորութիւնը, նուազեցնում է նրանց կենսական ոյժը, զանդաղեցնում է աճումն։ Միայն

անզարգացած ու ազէտ ազգերն են, որ դեռ աճում են:

Մաթիէօն լսում էր այս սովեստութիւնները, հոդու խօրշից բողոքում էր այս այլասեռման դէմ, որ անխուսափելի կերպով պիտի տանէր Ֆրանսիային դէպի ջնջումն: Եւ գաւակածնութեան սահմանափակման գաղափարը արծարծուած էր՝ տարածուած նոյն իսկ գաւառները, գիւղական ազգաբնակութեան մէջ: Կեանկի կոուի դժուարանալը միակ շարժառիթը չէր, որ ետ էր կանգնեցնում ամուսիններին բեղմնաւորութիւնից. մի քանիսները չէին ուզում յղանալ, որպէս զի չը կորցնեն իրանդ թարմութիւնն ու գեղեցկութիւնը, միւաները, որպէս զի ետ չընկնեն հասարակական գուարծութիւններից և այն: Եւ տղամարդիկ, անրաւական իրանց կնոջից ստացուծ կիսատրաւականութիւնից, գցում էին իրանց անբարոյականութեան աշխարհը, սպասում իրանց աստուածատու ոյժը անպառը միաւորութիւնների մէջ ու տուն դատնում յողնած, վիթուած ու զգուած:

Մի գիշեր, երբ Մաթիէօն անցնում էր Պարիզի մեծ բուլվարներով, այս զարմանալի իրարանցման մէջ, այն ժամին երբ կաֆէնները լցուած են լինում երկու սերից բաղկացած ամբոխով, որոնք զրօնում են ելեքարական լուսի տակ, երբ արօտուարների վրայ խոնւում են հաղարաւոր սիրոյ ծարաւածներ, որսի ընկած, կատարները տաքացած, որոնելով և բաղձալով անպատախանատու սէր, թէկուզ մի ժամուայ համար. այն ինչ փողոցի սալայատակը դղրդում է անիւնների գոգոսոցից ու ծիերի գոփիւնից, ու կառքերի երկու հոսանքները մղում էին շտապով մարդկային զոյգեր, մեծ մասսմբ դէպի ազօրինի անկոչին,—այդ ժամին մի յիշողութիւն նորոգուեց Մաթիէօն մաքում. նա մտաքերեց այն զօրապետի խօսքերը, որ արտասանել էր մի մեծ կոուից յետոյ, զիակներով ծածկուած դաշտուր դիտելով, թէ «Պարիզի մի գիշերը միայն բաւական կը լինի այս կորուստը լցնելու համար»: Եւ Պարիզը չէ խորհում սրա մասին. ամուսինները զսպում են իրանց, որ սերմը չը բեղմնաւորուի, չորս հարիւր հազար երիտասարդ ոյժեր տարիներով գեգերում են զինուրանոցներում և նոյն չափ աղջիկներ սպասում են սրանց գարձին, մինչդեռ փողոցները, կաֆէնները, կաֆէ-շանտանները լի են հաղարաւոր ծախու կանանցով, որոնք վայզօք մնպտղութեան են մատնուած: Եւ Ֆրանսիան արադ քայլերով մօտենում է ուժասպառման, այն ինչ փողոցներով հոսում է ազգի կենսատու ոյժը:

Ֆրանսիան առնին դիշեր մի մեծ պարտութիւն է կրում, տալով այնքան զոհեր, որքան կը տար մի պատերազմ:

Բայց այս բոլորը չեն:

Պարիզի ետ ընկած փողոցներում, ոստիկանի աչքից ծածկուած, մանկաբարձուհի կամ ծննդաւեղի նշանակի տակ պահուում են որջեր, յանցանքի բներ, ուր զիմում են իրանց արգանդի սաղմը ոչնչացնելու համար և յդի օրիորդը իր ամօթը փրկելու, և անհաւատարիմ կինը իր յանցանքը մարդից ծածկելու, և օրինական ամուսինը զաւակների թիւը սահմանափակելու նպատակով։ Պրօֆեսօր Գօքը տասը հազարներով սաղմեր է փչացրել, տասը հազարաւոր կանանց ներքինի, բեղմնաւորութեան անընդունակ է դարձրել իր սոսկալի օպերացիաներով, և մի դանակի հարուածով կտրել է մի ամբողջ ապագայ ծառի արմատը։ Այսպիսով գիտութիւնը ևս փոփանակ՝ ստեղծելու, սպանում էր։ Ֆրանսիան ինքնասպանութիւն էր գործում։

Եւ Մաթիէօն երջանիկ էր, որ ինքը չէր մասնակցում այս ազգաւեր գործին, նրա սէրը գէպի Մարիաննը անսահման էր, և թոյլ չէր տալիս ոչ մի զգուշութիւն, ոչ մի հաշիւ։ Չորս հըրաշալի մանուկները լցրել էին նրա աղքատիկ կացարանը կենդանութեամբ ու երջանկութեամբ եւ Մարիաննը յդի էր հինգերորդ անգամ։

Այս յզութիւնը մի նոր հրճուանքի, նոր երջանկութեան ու պարձանքի աղքիւր էր երկու ամուսինների համար։ Մարիաննը մինչև յզութեան լերջին օրերը ուրախ ու զուարթ էր և քաջութեամբ ու յուսով սպասում էր ծննդաբերութեան քաղցըր տանջանքին ու նոր մանկիկի աշխարհ գալուն։

Մարիաննի երկունքը սկսուել էր, և ամուսինը, սպասելով բժիշկ Բուտանի զալուն, ծննդկանի կողքից չէր հեռանում, քաջալերելով, համբուրելով, հազար տեսակ գուրգուրանքով մեղմացնելով նրա տանջանքները, երբ ներս մոտաւ Մօրանմը, սարսափից պյանդակուած ու խեղդուած ձայնով աղաչեց ուղեկցել իրան մերձ ի մահ Վալերիի մօտ։ Մաթիէօն յուզուած թողեց իր տանջուող կնոջն ու գուրս եկաւ նրա հետ։ Ծանսապարհն ամեն ինչ պարզուեց, Վալերին յդացել էր, և մարդ ու կին վճռել էին վիժել տալ, ոչնչացնել այն նորեկ անմեղ արարածին, որ աշխարհ գալով պիտի պակսեցնէր Թագուհու լամբանը։ Եւ նրանք գնացել էին տիկին Ռուշի ծննդարանը, որտեղ Վալերիին ենթարկել էին արուեստական վիժուալին, որի հետեւ տեանքը եղել էր սարսափելի արիւնհոսութիւն, գուցէ և մահ։ Կառքը կանգնեց, Մաթիէօն ստիպուեց Մօրանմի ետերց վագեր։ Մօրանմը մոտաւ մի խոնաւ բակ, բարձրացաւ մոայլ ու կեղառտ սանդուխներով, բացեց կեղառտ, իւղուած դռներն ու

մտաւ մի սենեակ. ի՞նչ սենեակ. մի կիսամութ, ցած օճողքով, կեղտոտ ու խոնաւ, գարշահոտ բուն, որի մէջտեղը մի թախտի վրայ պառկած էր արդէն անշնչացած Վալերին, արնաքամ եղած.—պառկած էր մենակ կիսախաւարի մէջ, առանց մի ցաւակից անձի, նոյն խակ առանց մի մեղրամոմի, զոհուած զաւակավախութեան ախտին...

Երբ Մաթիէօն, թողնելով խեղճ Մօրանժին մենակ իր սոսկալի կսկիծի հետ, վերադարձաւ իր տուն, Մարիաննը ծնել էր մի արու զաւակ և գեռ ևս դողդողալով քաշած երկունքի ցաւերից, ժպտում էր իր սիրած ամուսնուն:

Ծնուեց մի տղայ, մի առողջ, թմբվիկ, սիրուն երեխայ: Եւ ծնողների երջանկութիւնը կրկնապատկւում է. ի՞նչ փոյթ, թէ միջոցները փոքր են, կառավարուելը դժուարանում է ամեն մի երեխայի հետ: Կարիքը աշխատանքի նոր դռներ կը բանայ:

Եւ Մաթիէօն խորհում է նոր աղբիւրների մասին: Սկսում է որոնել այդ նոր դռները, նախատեսնելով, որ չուտով անկարելի կը լինի ապրել փոքրիկ ոռնիկով:

Մի օր, երբ Մաթիէօն իր կնոջ ու երեխաների հետ, անհուն քաղաքի շշմեցնող ազմուկից ու ծնչող մթնոլորտից փախչելով, գուրս էր եկել գաւառը, ու, անտառի եզրին նստած, զիտում էր իր առջև տարածուած ընդհարձակ տափարակը, նրա մոքում յանկարծ յղացաւ, բացուեց մի նոր աշխարհ, մի նոր կեանքի գրաւիչ պատկեր:

Եւ նա վճռեց դառնալ գէպի մայր-գետինը, դառնալ հողագործ, և այն քրտինքով, որ թափում է անպտուղ կերպով դորձարանի քարայտառիկ վրայ, պարարտացնել այդ հողը, մշակել նրան և դուրս բերել նրա միջից լնութեան առատ ձեռով սփռած բարիքները:

Այս լայնատարած գետինը, Շանտըրլէ, պատկանում էր Սահնտերին, որ ոչ մի օգուտ չէր կարողանում վերցնել այդ ճահճային գետնից և ուրախութեամբ նրա մի փոքր մասը կը զիջէր Մաթիէօնի որոշ պայմանով:

—Ռւզում ևս, Եկ, առաջի քլունգը դնե խմիր, ասաց Մաթիէօն կնոջը:

Իսկ սա, ցոյց տալով իր ծծկեր երեխային, պատասխանեց.

—Ոչ, ոչ, ես իմ գործն ունեմ... դնե տուր առաջին քլունգը: Դու հայրն ես:

Եւ այս առաջին հարուածը պիտի սկսէր այն ակոսը, որ պիտի բանար փակուած ու ճահճայիած աղբիւրները, որոնց ջրե-

րը պիտի իջնէին աւելի ցած, գնային պարարտաղնէին չորացած աւազու գետինները:

Այս միջոցին ժերվէն, ծծկեր երեխան, քաղցած, սկսել էր իր ճշերը:

— Լաւ, լաւ, գիտեմ, որ այսուեղ ես... դէ, առ, էլ մի խլացրու մնդ:

Նա բացեց իր կուրծքը և ծիծ տունց երեխային:

Այժմ լսուում էր միայն երջանիկ մանկիկի մշմչոցը, որ չնշանառ անդադար ծծում էր կաթը, սեղմնազվ, տրորելով սպիտակ ստինքը, որ աւելի առատ հոսի նա. և կենսատու հեղուկը սկսել էր հոսալ, անսպառ աղբիւրի նման, և լսում էր նրա հոսանքի անվերջ մեղմ կլկոցը ու թւում էր, թէ նա իջնում է, տարածւում հեռու, ողողում երկիրը, այն ինչ Մաթիէօն իր երկու յաղթանդամ բանուորների հետ շարունակում էր քանդել առուակը... Առուակը բացւում էր պարարա հողի միջով: Շուտով ջուրը կը համանի աւագու շերտերը, նրանց բերրիացնելու համար, այն ինչ մօր կաթի փաքրիկ հոսանքը շարունակւում էր լցուել մօր ստինքից մանկիկի բերանը, ինչպէս մի անըսպառ աղբրակ. նա հոսում էր, դառնում էր միտ ու ոսկոր, դառնում էր միտք, աշխատանք, ոյժ: Շուտով այս փաքրիկ աղբրակի կլկոցը կը խառնուի ազատուած ջրի Փշոցին, երբ որ այս ջուրը կը հոսայ ազատ նոր փորած առուակով դէպի այրուած գետինները:

Եւ այս երկու հոսանքներն էլ մի և նոյն են, երկուսն էլ կեանք են տալիս աշխարհին, անցնելով երկրի երակների միջով, իրքն մի մեծ գետ, վերստեղծելով ամեն ինչ կեանքի գալնանը, սիսելով ամեն տեղ նորաբոյս կեանքեր, թարմութիւն ու առողջութիւն:

Անցաւ երկու ամիս. Ժերվէն երկու տարին բոլորել էր արդէն և գեղեցիկ գարնանային օրերը զարթեցրել էին բնութիւնը: Մի առաւոտ Մարիաննը երեխանների հետ զուրս էր եկել դաշտը ու ապշած մնացել, տեսնելով թէ ինչպէս այս մի շարաթուայ արել փոխել էր գետնի տեսքը: Ամբողջ արտը, որտեղ տուած միայն ճահիճ էր, այժմ, մատաղ նորածիլ հասկերից փոխուել դարձել էր անեզը նազուկ թափշ իսկ երբ որ, մի երեք ամսից յետոյ, Բօշէնն ու Սիզէնը Մօրանժի ու նրա գեղեցիկ աղջիկ թագուհու հետ եկան Մաթիէօննց տեսութիւն, նրանք չէին հաւատում իրանց աշքերին: Յիշեցին նրանք իրանց առաջին այցելութիւնը յունուար ամսին, երբ գետինը, սառած—քնած էր, այժմ շփոթուել մնացել էին նրանք այս հրաշալի վերածնութեան տօսած, այս յաղթական պղտարերութեան տօսած, որ ճահճային վայրենի գետինը փոխել էր սոկէ արտի:

Եւ տարէց տարի աճում էր ու բազմանում Մաթիէօի ընտանիքը, աճում էին ու ընդարձակում նոյնպէս և նրա կալուածները. արտերը աւելանում էին արտերի վրայ, ու Սիգէնի ահազին տարածութեան գետինը կամաց կամաց անշնում էր Մաթիէօի ձեռքը, որ չորացնում էր ճահիճները, ջրում էր չոր աւաղու տեղերը, քանդում էր—շուռ տալիս գետի չերտերը, այն ինչ փրկարար հեղուկը—կենսատու ջուրը ամեն տեղ կենացնութիւն էր սփուռմ: Այժմ սերմն ընկնում էր պարարտ հողի վրայ, որ տալիս էր նրան իր անսպառ ոյժը, աճնցնում ու լցնում հասկերը ցարենով: Բնութեան երակների միջով հոսում էր այն յաւիտենական կեանքը, նոյն կեանքը հոսում էր Մաթիէօի երակներում, ու լցում էր նոր սերնդի մէջ: Եւ կեանքը կեանք էր ծնեցնում ու յաղթող հանդիսանում մահուան կռուի մէջ:

Որդիքը մեծացան, ամսւանացան, նոյնպէս բեզմնաւորուեցին, նոյնպէս տուեցին նորանոր սերունդներ, որոնք պիսի շարունակեն կեանքի անդիմադրելի ու միշտ յաղթական ընթացքը սերունդների միջով մինչև յափտեան, ինչպէս այս հողը, որին կպած է մարդը և որից անկարող է պոկուել, կը շարունակի անդադար բեղմնաւորուել ու մայրանալ: Եւ այս մեծ գործը, այս լաւագոյն գործը, բեղմնաւորութեան գործը ընդարձակուում էր թէ հողի վրայ և թէ կոչոջ միջով, արհամարհնելով կորուստները, պատրաստելով անունդ նոր եկող էակի համար: Եւ մարդըն ու հողը անդադար քրտնելով ու տանջուելով, բայց ոգևորուած սիրով, անսահման կամքի ոյժով, զիմում էին գէպի նորանոր կեանքեր, նորանոր յոյսերով լցուած, Մարիաննի բեղմնաւորութիւնը առակ էր դառել Քառառուն երկը առարեկան հասակում նա իր տամներկուերորդ որդին ծնեց, բոլորին էլ աննդում էր իր կաթով, բոլորը աճում էին, մայր բնութեան գործում, ամենքը գործում էին, աշխատում, օգնում Մաթիէօին: Տունը լցուել էր ամեն անսուկ բարիքներով, լայնասարած գետինը մշակուած, անսամները լցուած խաշներով: Այժմ Մաթիէօն և Մարիաննը նահաւդեական ծնօգների պէս յշջապատուած էին մի քանի սերունդներով, յարգուած ամենքից, ճանաշուած զլուխ և անսահման տէր: Իրան որդոց միջացով մրօմանները տիրեցին ամբողջ այս երկրին, իսկ տղաներից մէկը նիկօլան գնաց հեռաւոր երկիրներ, Աֆրիկայի խորքերը և այնտեղ հիմնեց մի մեծ գաղթականութիւն, որ աճեց ու կազմեց մի նոր ընդարձակ հայրենիք: Այսպէս, կեանքը, սրբազն մայրութիւնը, բեղմնաւորութիւնը և զգում էր տարիներն ու յաղթանակով առաջ ընթանում միշտ ստեղծելով, ծանր աշխատան-

քի ոյժով, այն ինչ այնտեղ, Պարիզում, ամեն ինչ վլատակւում էր։  
Բօշէնի, գործարանատիրոջ միակ որդին, Մօրիսը, հօր ու  
մօր միակ յոյսը, որի համար ծնողները ճգնում էին միլիօններ  
զիգել և ուրիշ զաւակներ չէին արտադրում, որպէս զի այս մի-  
լիօնները չը բաժանուին, չը մանրանան,—այս միակ էակը, որ  
գեռ ընդունակ էր կապել միմնանց երկու օտարացած ու իրար  
ատելի ծնողներին, այս Մօրիսը մէկ օր գտնուած էր իր ան-  
կողնում անչնչացած։

Նրա մահից յետոյ ծնողների սիրառ լցուեց սև յուսահա-  
տութեամբ, ու սոսկալի զղջումն սկսեց լափել նրանց հոգին,  
զղջումն, որ իրանց ամբողջ ամուսնական կեանքի ընթացքում,  
Մօրիսի ծնունդից յետոյ, գիտմամբ ժխտել էին բնութեան օ-  
րէնքները, հեռացնելով բեղմնաւորութիւնը։ Այսուհետեւ կօնս-  
տանսի մէջ սկսուեց մի կատաղի տարաժամ ծարաւ յդանալու,  
մի զաւակ ևս ծնելու, և նա, զսպելով իր զգուանքը, որ նա  
զգում էր գէպի Բօշէնը, մօտեցաւ նրան շարունակ երկու եր-  
կար ու տանջալից տարիներ, բայց իզուր, արդանզը մնաց ան-  
պոտղ ու սև քօղը բնդ միշտ ծածկեց կեանքի հորիզոնը...  
Բարօնուհի Սերաֆինը, աւելի և աւելի խրուելով անսպակու-  
թեան մէջ, հետասիրութեան կրակով լափած, վճռեց վերջ գը-  
նել յդանալու սարսափին, որպէս զի աւելի ևս անսամնձ կեր-  
պով անձնատուր լինի իր տոփական կրքին, և որ բեղմնաւո-  
րուելու հսարաւորութիւնը չը թունաւորի այլ և՛ սիրոյ բապէ-  
ները։ Եւ նա էլ դիմեց մեծ խիրուրդ Գօդին, խնդրեց, որ  
հանի նրա արգասուվորութեան զործարանները, դէն զցի այն  
զաւակտունը, որ նրանց անգագար սպառնալիքի ու ահի մէջ էր  
պահում։ Օպերացիալից յետոյ այս գեղեցիկ, զուարթ, յաղթան-  
դամ ու փարթամ կինը արագ սկսեց թառամել, կորցնելով իր  
թարմութիւնը, նիհարեց, կնճիռները ծածկեցին նրա երթեան  
փայլուն գէմրը, ստիճանները չորացան ու կապան կրծքին, և նա  
ինքը ամբողջովին չորացաւ, կմախքացաւ, պառաւեց։

Աւելի ևս ախտուր վախճան ունեցաւ սիրուն Թագուհին։

Տասներկու տարեկան հստակում նա արգէն ուշագրութիւն-  
էր գրաւում իր գեղեցիկ կազմուածքով, նուրբ զիմաղձերավ ու  
փիղիքական վաղաժամ զարգացումով։ Բարօնուհին միանգամացն  
աիրապետել էր այդ երեխային, միշտ իր հետ ման էր ածում թատ-  
րոններ, ցիրկ, զանազան հասարակական տևզեր, ծանօթացնում  
իր շրջանի տղամարդկանց հետ, ու կամաց-կամաց աններունի  
կերպով պատրաստում էր նրան անբարոյական կեանքի համար։  
Տասներկինդ տարեկան հասակում Թագուհին արդէն լաւ կաղմա-  
կերպուած ու հստանացած մի գեղեցկուհի էր և արդէն մտեր-

մացել էր բարօնուհու հետ, ու նրանց մէջ այլ ևս գաղտնիք չը կար: Խեղճ Մօրանժը, որ կնոջ սարսափելի մահից յետոյ, ապրում էր միայն Թագուհու համար ու Թագուհու չնչով, երջանիկ էր Սերաֆինի այս բարեկամական վերաբերմամբ. նա անսահման ազատութիւն էր տուել իր աղջկան: Սերաֆինը քաշ տուեց այդ երեխային հարիւր տեսակ կասկածելի ու կիսապարկեցտ տեղեր և կատարուեց այն, ինչ որ անխուսափելի էր—Թագուհին յղացաւ: Սարսափած իր գրութիւնից, խեղճ աղջիկը լսեց իր հովանաւոր բարօնուհի Սերաֆինի խորհուրդը և արեց այն, ինչ որ արել էր այդպիսի անբախտ վախճանով նրա խեղճ մայրը.—իրան ենթարկեց սարսափելի օպերացիայի, որ ապօրինի սազմը հանելով, պիտի վերադարձնէր նրան իր կուսութիւնը, գոնէ աշխարհի առաջ:

Բայց անողորմ բախտը ուրիշ կերպ էր անօրինել.—օպերացիայի գիշերը մի երակ բացուեց ու խեղճ զոհը իր մօր նման արնաքամ եղաւ:

#### Կանգնած մնաց միայն Մաթիէօն:

Նա մի աղքատ էր և յաղթեց հարուստներին. նա քաղեց այն սերմերի պտուղը, որ յուսալից սրտով առատ սփռել էր ամեն տեղ: Իր որդի Դընիսի միջոցով նա նուածել էր Բօշէնի մեքենաների գործարանը, որի մէջ անդադար գզրդում էին մեքենաները, կոռում էին ու գիզում միլիոններ: Սիդէնների մեծ պալաները այժմ նրա միւս որդի, Ամբրուազի, ձեռքն էին, աւելի ճոխացրած, գարձած կենարոն մի ահազին առևարական տան, որի ճիւղերը տարածուած էին երկրիս չորս կողմք: Գրեղուարը տէր էր դառել լըսպայէօրի ջրաղացին, զարմանավի ճոխութեան հասցրած, հարստացած ու մեծացրած, նորագոյն մեքենայական ոյժով բանով: Այն ինչ Շանտարըէի անսահման դաշտերը շարունակում էին արտադրել ամսապահ հարստութիւններ Ժերլէի խելացի կառավարութեան տակ, Ժերլէի, որ կամնցել էր շարունակել հօր յաղթանակող մեծ գործը:

Եւ Մաթիէօն ու Մարիաննը ձեռ ձեռի տուած իրանց այս ահազին ստեղծագործութեան առաջ, նմանում էին հրաշալի հերոսների, որոնք եղել էին միշտ բարի և ուժեղ, որոնք իրանց առատ պտղաբերութեամբ յաւիտենական կեանքի կրուի և յաւիտենական արտասառարի միջով կարտղացել էին առաջ այնքան կեանքեր, այնքան երջանկութիւն և յոյտ:

Ճօնուում է Մաթիէօն ու Մարիաննի աղամանդեայ պատակը, նրանց ամուսնութեան և օթանասուններուց տարեգարձը:

Անդադար ամեն կողմից գալիս էին նահապեմների զաւակները, նման ծիծեռնակների, որոնք զարնան բացուելուն վերադառնում էին իրանց բունք Շարունակ կառքերը գետին էին իջեցնում նորանոր լնտանիքներ, —և մանկանց զիսիկների ալիքները լայնանում էին անդադար: Զիւնահեր պապերը բերել էին իրանց թոռնիկներին, որոնք հաղիւ ոտի էին կանդնել. սիրուն պառաւ կանանց ծաղկափթիթ աղջիկներն ու թոռները իջեցնում էին կառքերից: Կային գեռ յղի կանայք. աղջիկների ծնողները բերել էին փեսացուներին: Ամենաքը ազգականներ էին, արենակիցներ: Արմենակից չորս սերունդ կազմում էին մի ընտանիք, մի փոքրիկ աղբութիւն, որոնք գումարուել էին այստեղ մի հազուադիւտ, մի չը լսած ինչոյք կատարելու: —տօնելու ամուսնութեան, սիրոյ առենդարձը մի զոյգի, որից սերուել էին այսպան կեանքեր:

Եւ ահազին, անծայր սեղանը բացուած էր բացօթեայ նօճիների տակ, լայնատարած Շատըրէի դաշտում, որ ամենքի ընդհանուր ծննդավայրն էր եղել:

Երբ Մաթիէօն ու Մարիամնը երևացին արևի շոգերի տակ, ծաղկիկներով զարդարած շտառուանի մօտ, ամենքի կըրծ-քից գուրս թուաւ այս բացականչութիւնը.

—կեցցէ հայրը, կեցցէ մայրը, երկար կեանք հօրն ու մօրը:

Թե թեփ տուած, սեղմուած իրար, ինչպէս անբաժան տմուսիններ, նրանք քայլել էին կողք կողքի եօթանասուն ձիգ տարիներ: Այսպէս էլ թեակցած կանգնած էին այժմ արտասուրով աշխները լցրած ու ժամանակ էին այս բարգաւաճ գերգասատանին, որ իրանց սիրոյ ծնունդն էր:

Եւ բացականչութիւնները շարունակում էին: Յանկարձ ձայները լուցին, ճաշկերոյթը դադարեց: Մի տարօրինակ երեւոյթ գրաւեց ամենքի ուշագրութիւնը:

Մի անծանօթ, ժամփան երեսին, արագ մօտենում էր: Ոչ ոք չէր տեսած այդ երիտասարդին:

Նա մօտեցաւ Մաթիէօխն ու Մարիամնին և բարձր ձայնով ասաց.

—Բարի լոյս, մեծ-հայր, բարի լոյս, մեծ-մայր: Ես էլ եմ եկել ձեր ինչոյքին մասնակցելու:

Մաթիէօն դողդողալով ոտի կանգնեց.

—Ո՞վ ես դու, որդի, որ ինձ մեծ-հայր ես անուանում ե որ ինձ այդքան նման ես:

—Ես Դօմինիքն եմ, ձեր որդի Նիկոլայի մեծ աղան, ես ապրում եմ միւս Ֆրանսիայում:

— Ուրեմն, որդեակս, քանի որ գու մեր որդու որդին ես,  
եկ համբուրիր մեղ և մասնակից եղիր մեր խնջոքին:

Եւ ծերունիները յուզուած զրկեցին, համբուրեցին այս զաւակին, որ այդպէս անակնկալ կերպով եկել էր նրանց երջանկութիւնը կրկնապատկելու համար, եկել էր այն հեռաւոր երկրից, որտեղ բազմանում էր ու աճում իրանց սրափ, իրանց մարմնի կուրներից մէկը, կազմելով մի նոր ազգ, մի մեծ զազթականութիւն, հասարակածի կիզիչ արեփ տակ, տէր դառած անսահման կուսական երկրների։ Եւ երբ որ խնջուքը վերջացաւ, Դօմինիքը իր հրաժեշտը տուեց, որպէս զի վերադառնայ իր հայրենիքը. յուզուեց ծերունիների սիրտը, որովհետեւ այս անգամ անջատումը յաւիտենական էր։ Սակայն չուտով կակիծը տեղի տուեց հոգու անդորրութեան—նրանց վիշտը սփոփում էր այն համբազմունքը, որ երկար տարիների ընթացքում կատարել են մի մեծ փառաւոր գործ, տալով երկրին ու մարդկութեան անսպառ ահապին մի ծառ, որ գեռ ևս պիտի ճիւղաւորուի անսահման ժամանակի ընթացքում, տալով անհամար կեանքեր։ Եւ իրանց անկած ծառը տարածում էր իր ճիւղերը հին Ֆրանսիայի մայր հողից մինչև ծովերի այն կողմը, գէսի անսարատ, կուսական Աֆրիկայի անհուն տարածութիւնը, որ պիտի նոյնպէս պուղաւորէր և դարձնէր մի նոր, աւելի ընդարձակ, աւելի հարուստ, աւելի թարմ Ֆրանսիա։

ԲԺՊ. Վ. ԱՐՄԵՐՈՒԽԻՆԻ

## ՀԱՅԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ ԽՍ-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲՈՒՄ

(Շարունակութիւն)

Խորենացու բախտին ենթարկուեցին և ուրիշ հին հեղինակներ հայոց մատենադրութիւնից, որոնք իրանց հնութեամբ և վաւերական, կարելի է ասել՝ պաշտօնական ծագումով գերազանցում էին նոյն իսկ Խորենացուն, բայց հէնց այդ հնութեան և բարձր վաւերականութեան պատճառով էլ կասկածելի դարձան քննադատութեան աջքում և ստուգութեան կարօտ. որովհետեւ մինչև անցիալ դարը մեր վերաբերմունքը դէսլի հին հեղինակները և նրանց հաղորդածները՝ լոկ հաւատք էր, հիմնուած աւանդութիւնների ու չը ստուգուած վկայութիւնների վրայ, և ոչ թէ դիտակցական համոզմունք:

Ինչպէս մեր ազգային պատմութիւնը հիմնուած էր Խորենացու վրայ, այնպէս էլ մեր կրօնական պատմութիւնը՝ Ազաթանգեղոսի վրայ, որ մեր պատմական ձեռադիրների ժողովածուների մէջ առաջին տեղն է զրաւում, իրեն ամենավաւերական ազբիւր և հայ եկեղեցու աւետարան \*): Սյս Ազաթանգեղոսը պատմում է, թէ ինչ կերպով հայոց ազգն ընդունեց քրիստոնէութիւն։ Հայոց Խոսրով թագաւորը—պատմում է նա, —կամենալով իր ազգական Պարթև Արտաւան թագաւորի սպանութեան վրէժն առնել, շատ նեղն է ծգում նրա սպանողին, Արտաշէր Սասանեանին, որ Արտաւանի տեղ թագաւորել էր Պարսկաստանում։ Խոսրավից ազատուելու ուրիշ ննար չը գտնելով՝ Արտաշէրը մեծ խոստումներով զրաւում է նրա հնուաւոր ազգական պարթեիշխան Անակին, որ ընտանիքով զաղթում է Հայաստան, իրեն թէ Արտաշէրից փախստական, և Խոսրովի հաւատարմութիւնը գրաւելով՝ որսի ժամանակներան սպանում է դաւաճանութեամբ։ Ինքը Անակը և լուլոր ընտանիքը տեղն ու տեղը կոտորւում են. ազատում է միայն մի ծծկեր իրեխայ, որին փախցնում

\*) Հէնց Ազաթանգեղոս բառն էլ, որ լունարէն է՝ նշանակում է «աւետարեր» կամ «աւետարան», և համանիշ է եկանգելիս («աւետարան») բառին։

են կապադովկիա, որտեղ նա մեծանում, կրթւում է քրիստոնէական հաւատի մէջ, ամուսնանում և երկու որդի է ունենում: Խոկ Արտաշիրը գալիս տիրում է Հայաստանին, կոտորել է տալիս Խոսրովի թագաւորական զարմը. ազատւում են Խոսրովի մի տղան—Տրդատ, և մի աղջիկը—Խոսրովիդուխտ: Տրդատին փախցնում են Հռոմ. նա մեծանում, զինուորական ծառայութեան մէջ է մասնում և ալկանաւոր քաջութիւններ գործում: Այս ժամանակ նրա մօտ գալիս է սպասաւորելու մի անձանօթ օտարական, Գրիգոր անունով, ու հաւատարմութեամբ ծառայում է Տրդատին, առանց յայտնելու իր ով լինելը: Այնուհետև Տրդատը մի մեծ քաջութիւն է գործում—ողջ-ողջ բռնում է զժաց Հռչէ թագաւորին, որ եկել էր Դիոկղետիանոս կայսեր դէմ սպատերազմի և նրան մենամարտի էր հրաւիրել Դիոկղետիանոսը Տրդատին փարձատրելու համար՝ նրան պասկում է Հայաստանի թագաւոր և յունական զօրքով ուղարկում է Հայաստան՝ հայրենական գահը ժառանգելու: Հայաստան գալով Տրդատը հանդիսաւոր զոհ է մատուցանում Անահիտ առողջածուհուն. նոյնը պատուիրում է անել իր սպասաւոր Գրիգորին: Սա հրաժարւում է, յայտնելով որ ինքը քրիստոնեայ է: Սկսում են այնուհետև յորդորներ, սպանալիքներ, չարչարանքներ թագաւորի կողմից, որոնց Գրիգորը պատասխանում է՝ անարդելով կուռքերն ու նրանց պաշտոններին, տոկունութեամբ կրելով չարչարանքները և աղօթելով: Բնմի ոյժի և բարոյական կամքի այս մրցութիւնը տեսում է երկար օրեր. Գրիգորը 14 անտանելի չարչարանքներ է կրում. վերջը յայտնւում է, որ նա—այդ քրիստոնեայ, յանդուգն Գրիգորը—Անակի որդին է, Խոսրով թագաւորին սպանողի որդին: Խսկյն վճռում է Գրիգորի բախտը: Վղից, ձեռքերից և ոտքերից կապուած՝ նա ուղարկում է Արտաշատ և ձըգւում է խոր վիրապը, որ մուժ, խոնաւ, սողուններով լի ստօրեկրեայ գուք կամ բանտ էր, ուր ձգում էին մահուան դատապարտուածներին:

Այնուհետև Տրդատը կազմակերպում է իր թագաւորաւթիւնը, հալածում է պարսիկներին, ամուսնանում է և զբաղւում է իր գործերով: Մօտ 15 տարի այսպէս անցնելուց յետոյ մի միջադէպ է պատահում, որ վրդովում, տակնուվրայ է անում բոլոր հայոց ժողովուրդը: Մի խումբ քրիստոնեայ կոյսեր, Դիոկղետիանոսի հալածանքից փախչելով, գալիս են Հայաստան: Դուրս է գալիս, որ այդ կոյսերից մէկը, Հոփիսիմէ անունով, աննման գեղեցիկ է եղել, և Դիոկղետիանոս կայսը կամեցել է նրան կին առնել, բայց նա ընկերուհիների հետ միասին փախել է նրա ձեռքից: Տրդատը հրովարտակ է ստանում Դիոկղե-

տիանոսից՝ որոնել փախած կոյսերին և Հռիփսիմէին իրան ուղարկել. իսկ եթէ ինքը Տրդատը նրան հուանի՝ կարող է ինքը նրան կին առնել: Որոնում գտնում են կոյսերին Վաղարշապատի մօտիկ մի հնձանում. Տրդատը լսելով Հռիփսիմէի գեղեցկութեան համբաւը՝ ինքն է կամենում նրան կին առնել. բայց կոյսը դարձեալ մերժում է իշխանների հրաւէրը, որոնք Տրդատից ուղարկուած էին նրան զարդարելու և իրեն թագաւորի հարս՝ շփեղութեամբ պալատը տանելու: Տրդատը հրամացում է ըսնութեամբ բերել, և թաղաւորի ապագայ հարսնացու ին քաշեքաշ բերում են պալատ, և հարսանելան հանդէմն սկսում է. բայց կոյսը դարձեալ գիմազրում է Տրդատին և տասը ժամից աւելի այն հսկայակերպ ուժեղ թաղաւորի հետ կոռուելուց յետոյ վերջապէս յաղթահարում է նրան և թողնում փախչում է դարձեալ հնձանը, ընկերու հիների մօտ թագաւորը միրուց և ամօթից կատաղած՝ հրաման է տալիս, և գահիձները անմիջապէս զնում, սարսափելի տանջանքներով սպանում են Հռիփսիմէին, մայրապետ Գայիանէին և միւս կոյսերին:

Անցնում է մի քանի օր. թագաւորը տիսրութիւնը փարատեկու համար կամենում է որսի զնալ: Կառք նստելու բոսէին մի կատաղութիւն թէ հիւանդութիւն է գալիս վրան: Կառքից վայր է նետում, փրփրում, վայրենանում, խելագարուում, անտառներն է ընկնում. կերպարանքը խողսկերպ է զանում, եղունգները ճանկերի փոխուում, վրան խոյի կոշտ մազ բուանում: Նոյնպիսի պատուհաս իջնում է և պալատականների վըրայ, և ամբողջ երկիրը սուղ է մանում: Այս ժամանակ Տրդատի քոյրը Խոսրովիդուխտը տեսիլք է տեսնում, թէ այդ պատհասը կարող է փարատել միայն Գրիգորը, ուստի պէսք է նրան խոր վիրապից հանել: Իշխանները նախ ծաղրում են Խոսրովիդուխտ օրիորդին, որովհետեւ անկարելի բան էր, որ Գրիգորը մօտ 15 տարի այն վիրապում կենդանի մնացած լիներ. այնտեղ ձգուած մահապարանները հաղիւ մէկ օր կարողանային ապրել: Բայց տեսիլքը կրկնուում է, ուստի որոշում են փոք անել: Դուրս է գալիս, որ Գրիգորը կենդանի է մնացել. (մի կին ամեն օր մի-մի հազ ձգելիս է եղել վիրապը՝ հրեշտակի երամանով): Դուրս են հանում Գրիգորին բորբոսնած, գջլտուած. լուանում, շորեր են հաղցնում և բերում զէպի Վաղարշապատ մայրապարաքը: Ճանապարհին խելագար թագաւորն առաջ է վազում, իինչալով խողի պէս: Գրիգորը աղօթքով նրան փոքր ինչ զգաստացնում է: Ապա նահատակուած կոյսերի բացօթեայ ընկած և անարատ մնացած մարմիններն ամփոփում է, նրանց վրայ վկայարաններ շինում, որի ժամանակ թաղաւորը, թա-

գուհին ու պալատականները հող, քար, փայտ և ուրիշ պիտոյքներ են կրում: Այնուհետև Գրիգորը քարոզում է թագաւորին ու ժողովրդին քրիստոնէութեան հաւատը, բժիշում է պատուհասուածներին, որնք նորոգուում են այնպէս՝ ինչպէս մօրից նոր ծնուածներ: Մրանից յետոյ Տրդաար Գրիգորին մնեն հանդէսով ուղարկում է Կեսարիա՝ եպիսկոպոս ձեռնադրուելու: Հայաստանի վրայ Վերագարձին Գրիգորը մկրտում է Տրդաարին և հայոց ժողովրդը Եփրատ զետում և այնուհետև սկսում է կազմակերպել նորադարձ աշխարհի կրօնական գործը. քանդում է կըռատունները, շինում է եկեղեցիներ—այս ժամանակ հիմնում է ս. Էջմիածնի տաճարը այն տեղում, որտեղ տեսիլքում տեսել էր Միածնին իջնելիս.—հոգևորականներ է պատրաստում և այն Նրան գործակից է լինում Արիստակէս որդին, որ նրա հրամանով գնում է Եթեկիա՝ տիեզերական ժողովին մատնակցելու: իբրև Հայաստանի ներկայացուցիչ:

Այս է ահա Ագաթանգեղոսի համառօտ բովանդակութիւնը. —մի գեղեցիկ, սրտառուչ պատմութիւն, որտեղ ամենայն ինչ կայ—ե՛ հրաշք, ե՛ նահատակութիւն, ե՛ երկնառազ պատռհաս, ե՛ ընդարձակ լարդապետութիւն՝—հայոց զարձր փառաւոր և սքանչելի ամելու համար: Բարեսպաշտաբար չէ մոռացուած նաև գոռող հեթանոս թագուորին ստորացնել մինչև անամութեան աստիճան և ապա, իբրև հաւատացեալի, բարձրացնել, բայց իբրև հլու որդի հոգեոր իշխանուորին. չէ մոռացուած՝ Ա. Գրիգորին Արշակունիաց թագաւորներին հաւասարապատիւ բարձր ծագում տալ—Պարթևական տոհմից, խոնարհութեան աստիճանի և ծայրակոյն չարչարանքների մատնել Քրիստոսի ամուսնու համար և ասկա փառաւորել այնչափ՝ որչափ կարող է մարդ փառաւորուել:

Բայց ոչ է Ագաթանգեղոսն ինքը. որչափ գտահութեան արժանի է նրա այս պատմութիւնը:

Օ, այս մասին կասկածեն մնգամ աւելորդ է: Ինքը Ագաթանգեղոսը իր պատմութեան պատճարանում ու վերջաբանում վկայում է, թէ ինքը հոռմայեցի է, Տրդատ թագաւորի ժամանակ եկել է Հայաստան, նրա արքունիքում ծառայելու և Տրդատի յասուկ հրամանով գրել է այս պատմութիւնը: Ուրեմն տեսնում ենք, որ առաջնակարդ, այժմեւն լեզուով խօսելով՝ պաշտանական աղբիւր է նրա պատմութիւնը, նոյն ինքն թագաւորի հրամանով զրուած նրա քարտուղարի ձեռքով: Ամեն տարակոյս փարատելու համար՝ Ագաթանգեղոսը մի տեղ ասում է, թէ երբ Գրիգորը մի ոտքից կախուած եօթն օր մնացել էր կախաղանի վրայ և ազօթում էր՝ թագաւորի հրամանով նրա

մօտ կանգնած էին արագագիր գրիչներ (ստենօգրաֆներ ?), որոնք գրի առան նրա ասած ազօթքը (որ գրի մէջ 19 երես տեղ է բռնում) և ներկայացրին թագաւորին. այնպէս որ մենք, ընթերցողներս, պէտք է եղարակացնենք, թէ այդ ազօթքն անգամ առնուած է զարձեալ պաշտօնական աղբիւրից—արքունի սղագիրների տուած զեկուցումից:

Իբրև մի նոր ապացոյց էլ, թէ յիրաւի Ագաթանգեղոսի պատմութիւնը գրուած է Տրդատ թագաւորի ժամանակ, չորրորդ դարի սկզբներում՝ ծառայում է այն հանգամանքը, որ Ագաթանգեղոսի պատմութիւնը գոյնութիւն ունի և յունարէն լիզուով: Բնականապէս ուրեմն եղարացնուում է, թէ այս յունարէնը եղել է սկզբնաղիր, բուն Ագաթանգեղոսի գրածը (որովհետեւ չորրորդ դարում գեռ հայերէն գրերը չեին դանուած և հայերէն գրել կարելի չէր, մանաւանդ որ Ագաթանգեղոսն ինքը հոռմայեցի լինելով գտուար թէ հայերէն այնպէս լաւ գիտենար). իսկ մեր ունեցած հայերէնը՝ թարգմանութիւն է այս յունարէնից:

Ամեն ինչ ուրեմն կարգին է.—վկան վստահելի, վկայութիւնը սքանչելի: Բայց քննադատութիւնը մի վատ յատկութիւն ունի:—Նա անհաւատ է Թովմայ առաքեալի նման. մինչև չը քննէ, չը շօշափէ, չը ամողուի: Անա այս սկիասիկ քննադատութիւնը շօշափեց և Ագաթանգեղոսի պատմութիւնը բայց ոչ ըստ էութեան, կրօնական տեսակէտից, այլ նրա ծագումը և մատենադրական արժէքը: Քննութեան հետևանքը այն աստիճան նոր և անսպասելի էր, որ մեղանից 100 տարի առաջ անկարելի էր նոյն իսկ իրեակայել. ներկայումս այդ գրքի մասին տիրող հայեացքը եթէ մէկն արտայատէր այն ժամանակ՝ նրան հայերը խաչը կը բարձրացնէին. իսկ այժմ այդ գիւտը անում են եւրոպացի գիտնականների հետ և հայ գիտնականները, այն էլ երկք հայ հոգեորականներ—Հ. Տաշեան՝ Վեհնայի Մխիթարեաններից, Հ. Բ. Սարգսիւսն՝ Վեհնետիկի Մխիթարեաններից և Գ. Տէր-Մկրտչեան՝ ս. Էջմիածնի մխաբան: Այս աստիճան համբերողութեան ողին արծարծուեց մեր մէջ մի հարիւր տարուայ ընթացքում գիտութեան և քննադատութեան չնորհիւ: Բայց այս խնդրում էլ առաջն փորձն արաւ և առաջին յարձակումը կրեց եւրոպացի գիտնականը, գերմանացի Գուտչմիտը, որ անուսնի պատմագէտ ու քննադատ էր:

Բանասիրութիւնը նախ ուշադրութիւն դարձեց այս հարցի վրայ, թէ յիրաւի այդ պատմութիւնը գրուած է չորրորդ դարի սկզբում, Տրդատ թագաւորի և Գր. Լուսաւորչի կենդանութեան ժամանակի, ժամանակակից հեղինակի ձեռքով: Քննու-

թիւնը գրքից դուրս բերեց բազմաթիւ փաստեր, որոնք բոլորը բայց ասկան պատասխան էին տալիս այս հարցին։ Յիշենք սրանցից մի քանիսը։ Գրքի մէջ շատ անդամ բերուած են հատուածներ Աստուածաշնչից, և այս հատուածները առնուած են հայերէն Աստուածաշնչից, որ թարգմանուեց հինգերորդ դարի առաջին կէսում։—Տրդատի ոյժի մասին այնպիսի առասպելական չափազանցութիւններ կան, որոնք չեն կարող ստեղծուել ժամանակակից, կենդանի մարդու մասին \*), այլ կարող են բացարուել միայն նրանով, որ աւանդութիւնը և ժողովրդի երեւակայութիւնը սերունդէ սերունդ հետզհետէ զարդարել ու մեծացրել են նրա իրական ոյժը։ Յիշուած է մինչև անդամ, թէ Տրդատի ոյժի և քաջութեան մասին առած էր կազմուել և բնրնէ բերան ասւում։—Գրիգոր Լուսաւորչի մահը չէ յիշուած։ հեղինակը այդ լուսաւեամբ կամեցել է ցոյց տալ, իբր թէ իր գրելու ժամանակ Լուսաւորիչը գեռ կենդանի է եղել. բայց մի-երկու տեղ պատահաբար նրա զրցից թուել է «երանելի» բառը Լուսաւորչի մասին. իսկ այս բառը միայն մեռածների համար է գործ ածւում՝ ինչպէս այժմ «լուսահողի» բառը։—Մի անդամ հեղինակը վկայում է, թէ ինքը կարդացել է հայոց դարձի պատմութիւնը։ Այսպիսի բան չէր կարող ասել չորրորդ դարի հեղինակը, որ հէնց ինքը գեռ նոր պէտք է գրէր այդ դարձի պատմութիւնը։

Գրիգոր Լուսաւորչը տեսիլք է տեսնում, որի մէջ աղօտ կերպով երեսում են այն կրօնական հալածանկիններն ու ուրացութիւնները, որոնք Հայաստանում տեղի պէտք է ունենային Վարդանանց պատերազմից քիչ առաջ, այսինքն հինգերորդ դարի կէսերի մօտ։ Հին ժամանակները, և գեռ մեղանից մի դար առաջ, ընթերցողները այս տեսիլքի վրայ նայում էին այնպէս՝ ինչպէս հեղինակն էր կամեցել. այսինքն թէ նախախնամութիւնը տեսիլքի միջոցով Լուսաւորչին գուշակել է ապագայ լինելիքը։ Բայց քննադատութիւնը ներկայումս բոլորովին այլ կերպ է նայում այսպիսի երևոյթների վրայ. նա ասում է. հեղինակը ուրեմն ինքը տեսիլ է այդ հալածանկիններն ու ուրացութիւնները, ուստի և դնում է դրանց Լուսաւորչի տեսիլքի մէջ՝

\*. Օրինակ, պատմում է, թէ նահասակուած կոյսերի վրայ վկայաններ շինելու ժամանակ՝ Տրդատը եօթնօրեայ ճանապարհով գնում է Մասիս սարը և լեռան գագաթից ոսի վրայ բարձած Վաղարշապատ է բերում ութ հատ խոշոր, անսուշ, անկոտի, ծանր, հաստ, երկար արձաններ (քարեր), անշան մեծ, որ բազմաթիւ մարդիկ հաւաքուելով չէին կարողանալ նրանցից մէկը շարժել. իսկ նա Հայկի նման ալր ութ արձանները իր վրայ բարձած՝ բերում է վկայաբանների շինութեան տեղը։

իրեն գուշակութիւն:—Հեղինակն անում է պատմական և ժամանակագրական սխալներ, որոնք կարող են բայց առաջարութել միայն նրանով, որ նա ժամանակակից չէ իր պատմած դէպքերին, այլ գրում է աւանդութիւնից կամ անվաւերական աղբիւրներից:

Վերջապէս դանուեց մի վիայաբանութիւն՝ ասորի Գորիա և Շամինա վկաների մասին, որից անտարակոյս օգտուել է Ազաթանգեղոսի հեղինակը՝ Գրիգոր Լուսաւորչի չարչարանկաները նկարագրելու ժամանակ. իսկ այս վկայաբանութիւնը, ինչպէս վերջերս հաստատուեց՝ գրուած է չորրորդ դարի վերջերին:

Այս և ուրիշ փաստերի հիման վրայ քննադատութիւնը հաստատեց, որ Ազաթանգեղոսի մնունը կրող պատմութիւնը չէ գրուած չորրորդ դարի սկզբներում, Տրդատ թագաւորի հրամանով, նրա քարտուղար Ազաթանգեղոսի ձեռքով, այլ գրուած է հինգերորդ դարի կէսերին մօտ, չորս հարիւր քառամնական թուականներին: Մի կարևոր փաստ կար այս եղբակացութեան դէմ—այն է՝ յունարէն Ազաթանգեղոսի գոյութիւնը, որ, ինչպէս ասացինք՝ պէտք է սկզբնագիրը լինէր, իսկ հայերէնը նրանից թարգմանուած: Բայց այս փաստն էլ կորցրեց իր նշանակութիւնը: Բանն այն է, որ մանրամասն համեմատութիւնը անկասկած կերպով ցոյց տուեց, որ այդ յունարէն Ազաթանգեղոսը թարգմանուած է հայերէն Ազաթանգեղոսից: Մանրամասնութիւնների մէջ մտնել մեր նպատակից դուրս է. բաւականանակը մի խոշոր փաստով. Սստուածանչի հատուածները յունարէն Ազաթանգեղոսի մէջ՝ չեն վերցուած յունարէն Աստուածանչնչից, այլ բառացի թարգմանութիւն են հայերէն Ազաթանգեղոսից: Ուրեմն յունարէն Ազաթանգեղոսը իրեն սկզբնադիր չէ ծառայել հայերէնի համար և չէ խսիստում այն եղբակացութիւնը, թէ հայերէն Ազաթանգեղոսը գրուած է հինգերորդ դարի կէսերին մօտ:

Այս էական գիւտից յետոյ բնականապէս պէտք է ծագէին ուրիշ հարցեր. ով է ուրեմն գրել այդ պատմութիւնը, ինչ աղբիւրներից է օգտուել, որչափ արքանահասաւ են այդ աղբիւրները, ինչու հեղինակը ծածկել է իր իսկական անունը և այլն:

Այս հարցերին բանասիրութիւնը մասամբ պատասխանել է, մասամբ էլ նրանց լուծումը մնում է ներկայ դարիս: Իբրև հաւանական ենթադրուում է, թէ Ազաթանգեղոսի պատմութիւնը խմբագրել է Կորինը, Մեսրոպի անդրանիկ աշակերտներից, որ գրել է նաև իր ուսուցչի կենսագրութիւնը: Այս կենսագրութեան և Ազաթանգեղոսի մէջ պատահում են բաղմաթիւ կարծ ու երկար հատուածներ՝ բառացի միմեանց նման, և գլխաւորապէս այս նման հատուածների վրայ է հիմնուած

այն կարծիքը, թէ Կորիւնն է Ազաթանգեղոսի պատմութեան խմբագիրը։ Նա ձեռքի տակ ունեցել է մի քանի դրաւոր աղբիւրներ, ինչպէս Գրիգոր Լուսաւորչի վարքը, Հոփիսիմեան կոյսերի վարքը, Գրիգոր Լուսաւորչի վկայաբանութիւնը, Գորիայի և Շամոնիայի վկայաբանութիւնը, գուցէ և ուրիշ աղբիւրներ, ուրոնք դեռ յայտնի չեն։ Նա օգտուել է նաև ժողովրդական աւանդութիւնից, որ մօտ 150 տարուայ ընթացքում կազմուել է Լուսաւորչի, Տրդատի և Հոփիսիմեան կոյսերի մասին։ Այս տարբեր աղբիւրները միմեանց հետ կապակցելով, նրանց մէջ ներքին կապ հաստատելով՝ Կորիւնը (կամ ո՛վ և իցէ) խմբագրել, կազմել է այն ամբողջութիւնը, որ մեզ հասել է Ազաթանգեղոսի պատմութիւն անունով։ Բայց խմբազրական գործը այնքան էլ ճարտարութեամբ չէ կատարուած։ այնպէս որ գրքի զանազան մասերում նկատում է արուեստական կապի տեղը, ինչպէս փորձուած աչքը մի երկաթի կամ տախտակի վրայ կարողանում է նկատել յեւման կամ միացման տեղը։

Աղբիւրների մէջ ամենից արժանահաւատոն է համարւում Գրիգոր Լուսաւորչի վարքը, որ գլխաւոր պատմական աղբիւրն է, ուստի և քննադատութիւնը ընդունում է, որ չորրորդ դարի սկզբներում հայերը Տրդատ թագաւորի ժամանակ ընդունել են քրիստոնէութիւն Գրիգոր Լուսաւորչի քարոզութեամբ։ Բայց բազմաթիւ մանրամանութիւնները լուսաւորչի անձնաւորութեան, նրա չարչարանքների, Տրդատի հիւմանդութեան, Հոփիսիմեան կոյսերի նահատակութեան և այլն վերաբերութեամբ՝ բղխում են նուազ արժանահաւատ աղբիւրներից, ուստի չեն կարող անպայման ընդունելի լինել։

Բայց մեզ համար էականը այն չէ, թէ որչափ արժանահաւատ է Ազաթանգեղոսի պատմութեան այս կամ այն մասը՝ Ենթագրելով մինչև անգում, որ պատմութեան ամեն մի հատուածն էլ արժանահաւատ կամ ճշմարիտ է՝ այսու ամենայնիւ մատենագրական տեսակետից մենք գործ կ'ունենայինք մի գրական կեղծիքի հետ։ Գիրքը գրուած է հինգերորդ դարի կէսերին, Կորիւնի (կամ ուրիշ ժամանակակցի) ձեռքով՝ գրաւոր և անպիր աղբիւրների հիմնան վրայ, այն-ինչ նա ընթերցողին ներկայացնեում է իբրև չորրորդ դարի սկզբներում գրուած՝ Տրդատ թագաւորի հրամանով, ականատես Ազաթանգեղոսի ձեռքով։ Այս այսպէս լինելուց յետոյ՝ նախ և առաջ կառկածելի կը դառնայ նաև ամբողջ գրքի բովանդակութիւնը—որովհետեւ մի խոչը կեղծիք կատարողը չի խորչի և ուրիշ մանր-մունը կեղծիքներ կատարելուց—ուստի հարկաւոր կը լինի ամենայն զգուշութեամբ ստուգել նրա ամեն մի տեղեկութիւնը։ Այնուհետև՝

Նրա մէջ արծարծուած ոգին, հայեացքները, ազգագրական և հին-կրօնական տեղեկութիւնները և այն մնաց ներկայանում ևս իբրև հինգերորդ դարի հայեացքներ ու տեղեկութիւններ, այն ինչ որ ունեցել է հինգերորդ դարի կէսերում ապրող հայ հոգեորականը. ուրեմն նրանք հարազատ արտայայտութիւն չեն չորրորդ դարի սկզբներում Հայաստանում ափրող կարգերին ու հայեացքներին: Այս պատճառով մեղ համար մութ է մնում, գուցէ և առ միշտ—հայոց դարձի իրական պատմութիւնը, ամբողջ ժողովրդի վերաբերմունքը դէպի նոր կրօնը, որ անկասկած պաշտօնապէս ընդունուել է թագաւորի պատաստմէ: Մութ են մնում մի շարք պատմական սղելութիւններ, որոնք յաջորդեցին հայոց դարձին և որոնք կարծես յակամայից կամ պատահաբար հարանցի յիշուում են յաջորդող հեղինակներից—այսպէս են Լուսաւորչի լեռները առանձնանալին ու ճգնելը ծերութեան հասակում, նորան յաջորդող կաթողիկոսների (որոնք նրա սերունդիցն էին) կրած հալածանքները հայերի կողմից, նրանցից ոմանց սպանուելը, նոյն-իսկ Տրդատ թագաւորի անսովոր մահը, որը խնամքով թաքցնում է Ազաթանգեղոսի պատմութիւնը, բայց Խորենացին յիշում է զայրոյթով, յայսներով որ նախարարները նրան թունաւորեցին (կամ ինչպէս մի անծանօթ հեղինակ ասում է՝ որսի մէջ գաւաճանութեամբ սպանեցին): Հողով քրիստոնեայ խմբագրողը, որ նպատակ է ունեցել քրիստոնէութիւնը ջատագովել և փառաքանել հայոց դարձը ներկայացրել է իբրև Նախախնամութեան յատուկ միջամտութեամբ կատարուած գործ. բաղմատեսակ հրաշքները, անօրինակ պատուհանները, տեսիքները՝ այդ միջամտութեան արտայայտութիւններն են միայն: Այս կերպով հայ ժողովուրդը պիտի համոզուէր ու հաւատար, որ հայոց դարձը սոսկ մարդկային գործ չէ, այլ Նախախնամութեան յատուկ անօրէնութիւն, նրա ընտրեալ նահատակի ձեռքով. արանով թէ ժողովուրդի հաւատը պինդ կը լինէր և թէ հայոց եկեղեցու նուիրապետութիւնը բարձր ու փառաւոր: Այս ոգով առաջնորդուող հեղինակը, լինի Կորիւն կամ նրա ընկերներից մէկը, ի հարկէ զանց կ'անէր պատմել այնպիսի իրողութիւններ—օրինակ՝ հակառակութիւններ ժողովրդի կողմից, ապստամբութիւններ նախարարների կողմից—որոնք պէտք է համարուէին մարդկային գործ և ստամբակութիւն՝ նախախնամութեան անօրէնութեան դէմ:

Սրանից արդէն պարզւում է, թէ ինչու այս պատմութեան իսկական հեղինակը (լսմբագրողը) ծածկել է իր անունը. և իր աշխատառութիւնը վերագրել է մի ինչ-որ Ազաթանգեղոսի, որ գուցէ ամնանին դոյութիւն էլ չէ ունեցել: Եթէ նազիրքը

հրապարակ համեր իր (ասենք Կորիւսի) անունով՝ բնականաբար ամեն կարդացողի մէջ հարց կը ծագէր, թէ Կորիւնը որտեղից գիտէ իրանից 150 տարի առաջ կատարուած անցքերը. ովէ նորան հազորդել այն խօսակցութիւնները, ընդարձակ վարդապետութիւնը և այն, որոնք զրքի մէջ էսից աւելի տեղ են գրաւում, և վերջապէս որչափ կարելի է հաւատ ընծայել այն հայեացքներին, որ հինգերորդ դարում ապրող մի հայ կրօնաւոր մտցնում է չորրորդ դարի հեթանոս հայերի մէջ։ Ուրիշ բան է, եթէ այդ պատմութիւնը դրուած լինի չորրորդ դարում ապրող, ժամանակակից և ականատես հեղինակի կողմից, մանաւանդ եթէ նա պաշտօնական անձ է և գրում է նոյն ինքն թագաւորի հրամանով։ Այս դէպքում վկան կը լինի միանգամայն վտանելի և նրա պատմութիւնը անկասկածելի։

Այստեղ տեսնում ենք ուրեմն մի գրական երեսյթ, որ շատ հակառակ է ներկայումս գրական աշխարհում տիրող երեսյթներին։ Ներկայումս հեղինակը աշխատում է գրական անուն վաստակել իր գրուածքներով. մինչև անգամ նա իւրացնում է ուրիշի աշխատանքը և իր անունով հրատարակում (գրական գողութեան զանազան տեսակները)։ իսկ հին ժամանակ հեղինակն օսարացնում էր իր աշխատութիւնը և նրան վերագրում ուրիշ, մի նշանաւոր անձին երկու դէպքումն էլ կատարուում է կեղծիք, այս տարբերութեամբ, որ ներկայումս այդ կեղծիքը կատարուում է անձնասիրական դիտումով, իսկ հին ժամանակ՝ գրուածքի յաջողութիւնը ապահովելու դիտումով։

Ուրեմն չնորհակալ պէտք է լինենք բանասիրական քննադասութիւնից, որ մեր առաջ պարզեց կեղծիքի գոյութիւնը հայոց հին մատենագրութեան մէջ։ Շօվինիքմի ողին անցեալ դարի հետ թաղուեց մեզ համար. մենք այժմ այնքան գիտակցութիւն ու լրջութիւն ունենք, որ համարձակ կարող ենք նայել մեր անցեալի իրական պատկերի վրայ, որչափ էլ նա տգեղ լինի և անփառունակ, կեղծիքի վրայ հիմնուած շլացուցիչ պատկերը այժմ չէ կարող շոյել մեր ազգասիրական զգացմունքը, այլ միայն վիրաւորել։ Այս կէտումն էլ ուրեմն անցեալ դարի ընթացքում մենք հասունացանք։

Սակայն պէտք է ասել, որ զրական կեղծիքը հայ հեղինակների գիւտ չէ, հայոց հողի բերք չէ։ Մեր մատենագրութեան սկզբնաւորութիւնից դեռ շատ դարեր առաջ նա գոյութիւն ունէր և շատ տարածուած էր Յունաստանում, Բիւզանդիայում, Ասորիքում։ Գրական կեղծիքներ են կատարուել Հոմերոսի, Արիստոտէլի, Պղատոնի անունով։ կեղծուել է Առկքսանդր Մակեդոնացու պատմութիւնը. հարիւրաւոր անվաւերա-

կան գրութիւններ են լոյս աշխարհ հանուել Քրիստոսի, նրա առաքեալների և նշանաւոր հայրապետների անունով։ Հայ հեղինակները, ինչպէս գրականութիւն և նրա տիտերն ստեղծելու, մտաւոր ու բարոյական մնունդ ստանալու մէջ՝ այնպէս էլ այս կէտում հետեւել են իրանց ուսուցիչներին—բիւզանդացի և ասորի հեղինակներին։ Գրական կեղծիքն այս աղքերի մօտ այն քան սովորական է եղել, որ մեր հին հեղինակներից մէկը, Ղազար Փարագեցին, հինգերորդ դարի վերջերում, բողոքում է այդ տգեղ երեսոյթի դէմ և մանաւանդ պահարակում է ասորիներին, որոնց մէջ առաւելապէս տարածուած է եղել այդ սովորութիւնը։

Այսպիսի մի գրական կեղծիք, ասորական ծագումով, առանձին գեր է խաղացել մեր քաղաքական և եկեղեցական պատմութեան մէջ։ Գոյութիւն ունի մի պատմական գրուածք, որ աւանդում է թէ Եղեսիայի Արգար թագաւորը ցաւագար է եղել, որից չէ կարողացել բժշկուել մարդկացին հնարիներով։ Նրա պատգամաւորները մի քաղաքական գործով Պաղեստին զնալով՝ լսում են Յիսուսի մասին, թէ նա առանց գեղերի ամսն տեսակ բժշկութիւններ է անում, մինչև անգամ մեռածներին կենդանացնում է։ Գնում են պատգամաւորները Երուսաղէմ, անձամբ ստուգում են իրանց լսածները և գալիս պատմում են Արգարին։ Սա իսկոյն նամակ է գրում Յիսուսին, որով նրանից խնդրում է, որ գայ Եղեսիա, իրան բժշկէ և միասին հանգիստ ապրեն իր քաղաքում։ Քրիստոս նամակատար պատգամաւորներին պատասխանում է, թէ ինքը շուտով վերանալու է իր Հօր մօտ. ուստի իր համբառնալուց յետոյ կ'ուղարկէ իր աշակերտներից մէկին, որ Արգարին կը բժշկէ և ճշմարիտ հաւատը կը քարոզէ։ Յիրաւի, Քրիստոսի համբարձումից յետոյ Եղեսիա է գալիս նրա աշակերտներից մէկը, Ադրէ կամ Թագէսս առաքեալը, բժշկում է Արգարին և քաղաքում գտնուած միւս հիւանդներին, միլրտում է նրանց, քարոզում է նոր հաւատը, հիմնում է քրիստոնէական եկեղեցի և Եղեսիայում էլ մեռնում է ու թաղում, ծեռնազրելով նախապէս իր համար յաջորդ՝ նոր հաւատացեալներին հովուելու համար։ Այս պատմութիւնը գրել է Արգարի քարտուղարի որդին Լաբուբնայ և դրել է Եղեսիայի դիւանը։

Այստեղ էլ տեսնում ենք, որ քրիստոնէութեան մուտքը Եղեսիա՝ կապուած է անմիջապէս Քրիստոսի անձի հետ և կատարուած է նրա առաքեալի ձեռքով, որից աւելի պանծալի ծագում դժուար է երևակայել. իսկ պատմութեան հեղինակը բոլորովին վստահելի, պաշտօնական անձնաւորութիւն է, ուրեմն անկասկածելի է նրա բովանդակութիւնը։ Բայց և այնպէս այսօր

տարակոյս չը կայ, որ Լարուբնայի անունը կրող այս պատմութիւնն էլ կեղծիք է, Քրիստոսի ծնունդից գրնէ 250 տարի յետոյ կատարուած: Այս իրազութիւնը հաստատուած է նշանաւոր զիւնականների բազմաթիւ հետազոտութիւններով, որոնք տարակոյսի այլես տեղիք չեն թողնում:

Եղեսիայի եկեղեցու այս փառաւոր ծագումը ըստ երեսյթին հանգիստ չէ տուել մեր նախնիքներին, (գուցէ և զրդիչ է եղել Ազաթանգեղոսի կեղծիքը կատարելուն): Երանք հինգերորդ դարում թարգմանել են այս զրուածքը ասորերէնից հայերէն, փոքրիկ փոփոխութիւններ անելով իրանց կողմից: Օրինակ, հայերէն թարգմանութեան մէջ Թագէսու առաքեալը ոչ թէ վախճանուում ու թագում է Եղեսիայում, ինչպէս ունի ասորերէն բնագիրը, այլ օրհնում է Եղեսիայի ժողովրդին ու զալիս է արևելք քարոզելու, որտեղ և նահատակուում է հեթանոսներից (այսինքն՝ հայերից): Գուցէ այս փոփոխութիւնը կատարուել է մի (անծանօթ հեղինակի) վկայաբանութեան ազդեցութեան տակ, որի մէջ մանրամասն նկարազրուած են Թագէսու առաքեալի և Սանդուխտ կոյսի նահատակութիւնները Հայաստանում, Սանսարուկ թագաւորի հրամանով: Այս երկու զրուածքների նորհիւ, որնցից վերջինի ծագումը յայտնի չէ (թէև կոչուած է թարգմանութիւն), իսկ առաջինի մէջ հայ թարգմանչի մտցրած կեղծիքը ակներև է՝ Թագէսու առաքեալը դարձաւ հայոց եկեղեցու առաջին հիմնադիր ու լուսաւորիչ և հայոց հայրապետական գահը՝ աթոռ ս. Թագէսոսի: Իսկ Սբգարի վերաբերութեամբ հարցը աւելի հեշտ են լուծել մեր նախնիքը. այդ ասորի թագաւորին, որի իշխանութեան սահմանն էլ Սաորիքումն էր՝ առանց այլեալութեան մկրտել են հայոց թագաւոր: Այնպէս որ զրչի մի քանի շարժումներով Եղեսիայի եկեղեցական և ազգային փառքը, որի հիմքը կազմում էր Լաբուբնայի անվաւերականը՝ փոխազրուեց հայ ազգի և եկեղեցու վրայ:

Մեր ընթերցողներից նրանք, որոնք առաջին անգամ են ծանօթանում այսպիսի մերկացումների՝ գուցէ շատ խիստ դատապրտն մեր հինգերորդ դարի անգրանիկ հեղինակներին, հայոց քաղաքական և եկեղեցական պատմութեան առաջին շինողներին՝ նրանց զիւտակցարար կատարած զրական կեղծիքների պատճառով: Գրական կեղծիքը անտարակոյս չէ կարելի արդարացնել, բայց հարկաւոր է նրան լուսաբանել, որպէս զի արդար վինի մեր, յետնորդներիս վերաբերմունքը գէպի մեր նախնիքը: Գրական կեղծիքներ կատարելու գործում մեր հին հեղինակները նոյնչափ դատապարտելի են՝ որչափ առհասարակ բոլոր հին ազգերի անդրանիկ հեղինակները, որոնց առաջ պատմած

է եղել իրանց պատմութեան առաջին գրական հիմքը դնելու հարցը։ Հին յոյները իրանց համարում էին առաջայած այն քարերից, որ աստուածները չպոտում էին իրանց գոգից։ Նրանց նախնի դիւցազուններից մի քանիսի երակներում հոսելիս է եղել ուղղակի Ոլիմպեան Արամազդի արիւնը։ Նախկին Խտալիայի թագաւորական սերունդը առաջ է եկած եղել Տրոյիայի Ենէսա իշխանից, որի մայրն եղել է Վեներա դիցուհին։ Անդլիական հին թագաւորական տունը ծագելիս է եղել Դաւիթ թագաւորից։ Նոյն Դաւիթի սերունդն է եղել Վրաստանում իշխող Բագրատունի թագաւորական տոհմը, այն-ինչ սրանց նախնիքը Հայաստանում՝ միայն հրէական ծագում են ունեցել և չեն ձգտել՝ անշուշտ Դաւիթի որդի լինելու։ Իսկ քրիստոնեայ եկեղեցների պատմութիւնից բաւական է յիշել այն աւանդութիւնը, որ իբրև անկասկածելի իրողութիւն ընդունուած է կաթոլիկ եկեղեցում, այն է թէ Պետրոս առաքեալը նահատակուել է Հռոմում և նա ինքն է եղել հիմնադիր հռոմէական (կաթոլիկ) եկեղեցու, լինելով առաջին պապը, և նրա անունով հայրապետական գահն էլ այս պատճառով կոչւում է աթոռ ս. Պետրոսի և պապերը համարում են իրանց անմիջական յաջորդ Պետրոս առաքեալի, որից և ստացել են երկինքը բանսլու և փակելու իշխանութիւնը։ Բայց այսօր ականաւոր գիտնականների պատմական հետազոտութիւնները ցոյց են տալիս, որ Պետրոս առաքեալը նոյն-իսկ ուսք չէ դրել Հռոմում։ Ուրեմն հին ժամանակ ազգերի մէջ ընդհանուր սովորութիւն էր՝ փառաւոր և բարձր ծագում վերադրել իրանց, որքան վեճ լինէր նրանց պատմական կեանքի նահապետը, որքան նոուիրական լինէր նրանց եկեղեցու հիմնադիրը՝ այնքան մեծ կը լինէր իրանց պարծանքը, այնքան աւելի յարդ ու պատիւ կը վայելէին նրանք օտարների աչքում։ Նոյն բանը չենք տեսնում և մեր օրերում։ Չատ կրթուած և ըստ երևոյթին խելօք մարդիկ առանձին պարծանք են համարում իրանց հին, ազնուական ծագումը։ «տոհմական ազնուական», «իշխան» տիտղոսը, որ պաշտօնապէս կցուած է լինում մէկի ազգանունին՝ նորան հասարակութեան աչքում պատկառելի դիրք է տալիս։ Արտաքին փայլը, որչափ էլ չնչին տարրերից լինի հիւսած՝ այնուամենայնիւ գեռ շայնում է շատերի աչքերը։ Ի՞նչ զարմանք ուրեմն, որ նոյն արտաքին փայլի, նոյն ազգային և եկեղեցական պարծանքի ընդհանուր ցաւով տոգորուած լինէին և մեր գրականութեան նախկին հեղինակները, մանաւանդ այնպիսի տագնապալից ժամանակ, երբ Արշակունեաց թագաւորութիւնը վերջացել էր, քաղաքական անկախութիւնը վերացել, իսկ հայոց երկու հղօր գրացիները, պարսիկներն ու բիւզանդացիք, իրանց

քաղաքական և կուլտուրական գերազանցութեամբ սպառնում էին կուլ տալ թոյլ ու անզօր հայերին։ Այսպիսի հանգամանքներում ազգի «տոհմական-ազնուական» ծագումը, եկեղեցու «առաքելական» լինելը անտարակոյս ազգային հպարտութիւն կը ներշնչէին այդ ազգին պատկանող անհատներին, այդ պահանձավ ծաղման գիտակցութիւնը բարոյական ոյժ կը տար նրանց՝ ազգերի գոյութեան կոռու մէջ արիաբար պաշտպանելու իրանց ինքնուրոյնութիւնը։

Եւ այդ գրական կեղծիքները դարերով կատարեցին իրանց դերերը, մինչև որ անաշառ քննադատութիւնը վերացրեց նրանց վարագուրող քողը և ճշմարառութիւնն սկսեց երեալ իր իսկական դրութեամբ։ Բայց այդ ժամանակ մննք էլ արդէն հասունացել էինք և ազգային ինքնաճանաչութիւնը վառ պահելու համար այլնս պէտք չունէինք գրական կեղծիքների։

## ՄԱԼԻԱՍԵԱՆՑ

(Ար օարունակուի)

# Գ Ո Ղ

(Նեկրոսով)

Խըննոյի կոչուած՝ տօապ անցնելիս աղտուցեխով լի  
շուկան  
Երէկ յանկարծ ինձ ապշեցրեց մի այլանդակ  
տեսարան.  
Հացավաճառը, որի դաւտից բրոցրել էին կըսոր  
հաց,  
Լեղապատան ու գունաքափի, լաց-վայնասուն  
բարձրացրած՝  
Տաւար բողել ու վազում էր. «Բընեկ' գողին» բո-  
ռալով,  
Եւ բընեցին հացի գողին՝ չորեք կողմից վրայ  
տալով:  
Կրծած հացը ձեռին բընած՝ դողդողում էր  
խրդնալին,  
Հազար տեղից սերբուկը ծակ, կօժիկ չուներ ոս-  
թերին.  
Դէմի վրայ հիւանդութեան ու տանջանի բարմ  
հետքեր,  
Ամօք, աղեր, երկիւղ էին արտայայտում բաց  
աչքեր...  
Յայտնուեց իսկոյն Եւ ոսիկան, պահապանին  
ձայն տուեց,  
Մեծ խստութեամբ ։Եւ կէտ առ կէտ նա հարց ու  
փորձ սկսեց.  
Վերջն էլ գողին առան բաղցած ու հանդիսով  
բան տարան.  
Ես գոչեցի կառապանիս. «Քըփ՛ր, զքնա՛ նո  
համբան».  
Եւ փութացի ջերմ գոհութիւն, օրինանի ուղղել առ  
Աստուած,  
Որ ինձ կեանիում ժառանգական կըսոր հաց էր  
պարզեւած...  
Ա. ԾԱՏՈՒՐԵԱՆ

# ՈՎ ԵՐ ԼԱՎՈՒԱԶԻԿՆ

(1743—1794)

Ալեղարդ հնութեան փիլիսոփաներից սկսած մինչև տասն-  
սութերորդ դարի վերջերը, այսինքն մինչև Լավուազիէի հռշա-  
կաւոր քիմիական փորձերը, մարդիկ հաւատացած էին, որ բը-  
նութեան բոլոր մարմինները առաջ են գալիս չորս սարքերից—  
հողից, ջրից, օդից և կրակից։ Այս վերջինն էլ նիւթ էր հաւ-  
մարւում. եւ այնպիսի սովորական երեւոյթներ, ինչպէս ժանդո-  
տումը, այրումը և չնչառութիւնը մնում էին բոլորովին մութ  
ու անբացատրելի; Բայց որովհետև մարդու միտքը չէ հաշտում  
«ը գիտեմ»-ի հետ և անպատճառ ձգուում է գէթ ենթադրու-  
թիւններով բացատրել իրան անհասկանալի պատճառները, ուս-  
տի գիտունները երեակայեցին մի ինչ-որ ֆլողիստոնի գոյու-  
թիւն բնութեան մէջ։ Այդ ատասպելական ֆլողիստոնը մի  
հանելուկ էր. երբեմն նա կշիռ ունեցող նիւթի յատկութիւն  
էր ստանում, երբեմն՝ անկշիռ, և նոյն իսկ մարմինների ծան-  
րութիւնը պակասեցնող դործօն էր դառնում։ Մէկը ասում էր,  
թէ ֆլողիստոնը հէնց ինքը կրակն է որ կայ, միւսը պնդում էր  
թէ ֆլողիստոնը մի ինչ-որ մետաֆիզիկական սկզբունք է։ Այդ  
ֆլողիստոնը կամ ընդունակ էր դառնում թափանցել ամանների  
պատերով կամ նա անդօր էր այդ անելու։ Մի խօսքով, ֆլո-  
ղիստոնը մարդկային աղիսութեան և անկարողութեան մի վըր-  
կարար նոխազ էր. բայց չը նայած դրան, մարդկամց հասկա-  
ցողութիւնը թէ նիւթի կազմութեան և թէ նիւթի այրման  
մասին այնուամենայնիւ մնում էր առանց լոյսի մի հատիկ ճա-  
ռագայթի և, հետեաբար, քիմիայի մէջ տիրում էր խաւար ու  
քառու մինչև Լավուազիէի երեան գալը։

Դեռ հին Եգիպտոսում ծանօթ էր չարչիններին ու վաճա-  
ռականներին անգամ կշեռքը։ Եւ ահա այդ շատ սովորական  
գործիքը հանճարի ձեռում դառնում է մի հրաշալի բանալի,  
բնութեան ամենամեծ գաղտնիքները գտնելու համար։

Լավուազիէն զինուած այդ գործիքով էր համար նպատակ դրեց. «գնալ յայտնից դէպի անյայտը և միմիայն ամենաճիշտ փորձերի և դիտողութիւնների օգնութեամբ եղրակացութիւններ անել»: Եւ, արդարե, այդ մեթօդով քսան տարուայ ընթացքում նրան աջողուեց հիմնովին կերպարանափոխէլ մարդկանց հասկացողութիւնը նիւթի կազմութեան ու փոփոխութիւնների մասին: Այլ խօսքերով՝ Լավուազիէն էր, որ դիտական հաստատ հողի վրայ դրեց ժամանակակից քիմիան:

Անկասկած, ցրուած ֆակտեր և անկապ փորձեր ու դիտութիւններ արդէն բաւականաչափ հաւաքուած էին Լավուազիէից առաջ, իսկ Պրիստէյի, Կէվչնդիշ և այլ քիմիկոսների հետազոտութիւնները հետացրել էին, յայտնի չափով, Լավուազիէի վերանորոգիչ գործունէութիւնը, սակայն դրանով բնաւչէր նսեմանում հանճարի կատարած դերը, որովհետև նրա ինքնուրոյն փորձերը և մաքի աղատ թռիչքը բոլորովին այլ եղրակացութիւններ, այլ հայեացքներ մացրին գիտութեան մէջ:

Մոմը ամեն օր էր այրուած և անհետանուած մարդկանց աչքի առաջ, գիտէին, որ մետաղները կրակի միջից գուրս հն դալիս ծանրացած. չնառութիւնը շատ սովորական մի երևոյթ էր. կրակը յայտնի էր նոյն իսկ վայրենիներին. հողը, ջուրը, օդը—երկրի ամենատարածուած մարմիններն են եղել միշտ,—բայց այդ բոլորի մասին, նոյն իսկ գիտնականների հասկացողութիւնները՝ մութ, հակասական ու սխալ էին, և միայն Լավուազիէի հանճարի լուսաւորութեամբ ամենի համար պարզուեց գաղտնիքը:

Ի հարկէ նիւթը կշռում էին և ուրիշ գիտնականներ, բայց այդ սովորական գլուխները, երբ նկատում էին, որ յայտնի գործողութիւններից յետոյ նիւթի քանակի պակասուած է, մինչդեռ իրանց թէօրիայով սիէտք է աւելանար, այդ դէպքում մեղքը զցում էին չարաբախս ֆլոգիսօնի վրայ, և, ընդհակառակը, երբ նիւթի քանակութիւնը աւելանուած էր, իսկ իրանց ասածների հիման վրայ պէտք էր որ պակասի—դարձեալ մնացաւորը նոյն ֆլոգիսօնն էր:

Լավուազիէն էր, որ համարձակութիւն ունեցաւ մի կողմ նետել անդօր զիտունների հնարած ֆլոգիստօն-մլօգիստօնը և գործին նայել հանճարի պարզութեամբ:

Լավուազիէն ապացուցեց, որ երբէք նիւթի ամենաչնչն մասն անգամ ոչ կորչուած է, ոչ էլ ստեղծւուած, այլ միշտ նիւթի քանակութիւնը բնութեան մէջ անփոփի է մնուած: Եթէ մնատաղները կրակի ազգեցութիւնից ծանրանուած են, դրա պատճառն այն է, որ օդից միանուած է մնատաղի հետ մի նիւթ՝ բրուածին զազը, որ աղատ գտնուած է օդի մէջ: Այդ արդէն

Նրեակայական ֆլոգիստօն-մլոգիստօն չէ, այլ մի գաղաձև նիւթ, որ կարելի է հաւաքել ամանում և մեր բոլոր զգայարաններով համոզուել նրա գոյութեան մասին։ Սովորական տաքութեան և օդի սովորական ճնշման պայմաններում այդ թթուածինը անդոյն, անհամ և անհոտ մի գազ է \*): Նոյն թթուածինն է, որ խոնաւ օդում միանում է մետաղների հետ և ծածկում զրամց ժանգով։ Եթէ ժանգը տաքայններ՝ թթուածինը կը զատենք մետաղից։ Լավուազիէն ցոյց տուեց, որ օդից հէնց այնքան է թթուածին պակասում, որքանով աւելանում է ժանգուած կամ կրակի մէջ փոփոխուած մետաղի կշիռը։

Սյասէս ահա շօշափելի ձեռվկ դարենոր գաղտնիքը գտնուած էր ու պարզուած։ Այնուհետև լավուազիէի համար դժուար բան չէր ապացուցել, որ թէ ժանգուատմը, թէ այրումը և թէ չնչառութիւնը ոչ այլ ինչ են, եթէ ոչ նիւթի միացումը օդի քրուածնի հետ։ Նա ապացուցեց նաև, որ մոմը այրուելով և աներեցիթանալով մեր աչքից ոչ միայն չէ կորցնում իր նիւթի ամենաչնչին մասնիկն անգամ, այլ, միանալով օդի թթուածնի հետ և դառնալով ածխարթու գազ ու ջրի գոլորեի, դեռ ևս աւելի ծանրանում է։

Եւ արդարեւ, կշռելով մոմը այրումից առաջ և, նրա այրումից յետոյ, կշռելով այրման բոլոր արդիսները—զաղերն ու ջուրը—մենք միշտ կարող ենք համոզուել, որ նիւթի ամենաչնչին մասնիկն անգամ ոչ ստեղծում է, ոչ էլ ոչնչանում։ Լավուազիէն ցոյց տուեց, որ չնչառութիւնն էլ՝ օդի թթուածնի միացումն է արեան հետ։ Եթէ օդից հեռացնենք թթուածին գազը, այն ժամանակ ոչ մետաղն է ժանգուառմ, ոչ մոմն է այրուում, ոչ էլ կենդանին է կարողանում շունչ քաշել։ Իսկ տաքութիւնը միայն այդ թթուածնի քիմիական միացման հետեւանք է։ Ինչպէս որ փայտը այրուելով, այսինքն միանալով օդի թթուածնի հետ, ապացնում է վառարանը, այնպէս և մեր արիւնը շընչառութեան միջոցով միանալով օդի թթուածնի հետ և դանդաղ այրուելով՝ տալիս է տաքութիւն մեր մարմնին։ Իսկ անընդառանութեան միջոցով մենք միշտ մույնում ենք մեր մարմնի մէջ նորանոր վառելիքը «Ծնչառութիւնը դանդաղ այրումն է»,—սասում էր լավուազիէն, մինչդեռ կրակը առաջանում է այրուող մարմնի դոլոշիների և գազերի արագ միաւորումից թթուածնի հետ։ Կրակը երեսոյթ է, ինչպէս և լոյսը, ձայնը, բայց ոչ թէ նիւթ։ Իսկ հողը, ջուրը, օդը, բաղադրեալ մարմիններ ևն և ոչ պարզ տարրեր։

\*.) Հեղուկ զարձրին 1877 թ. Կալիետէն և Պիկտէն, -119<sup>0</sup> ցըտի և 50 ճնշմ. պարմաններում։

Հողը, ջուրը և օդը կազմուած են զանազան անլուծելի նիւթերից կամ տարրերից: Տիեղերքի բոլոր մարմինները այդպիսի տարրերի միանալուց կամ զատուելուց են առաջանում: Տիեղերքի նիւթի քանակը մշտնջենական է, մինչդեռ մարմինների ձեերն ու բաղադրութիւնները անթիւ են, երերուն ու մշտափոխուս: Զրի այն կաթիլը, հողի այն մասնիկը, օդի այն հիւլէն, որ այսօր ազատ ապրում են բնութեան ծոցում, վաղը կարող են այս կամ այն բիւրեղի, բոյսի կամ կենդանու մարմնի մի մասը դառնալ, բարձրանալ երկնակամարը, իջնել ծովի անդունդը, մանել գետնի խորքմբը, թափառել բնութեան մէջ և մշտական շրջանառութեան մէջ լինել: Թէ արքաներից արքայի մարմինը և թէ անձրեկի ճիճուն նոյն նիւթից են կազմուած:

Նիւթի մշտնջենակութեան օրէնքը հաստատելուց և քիւմիայի հորիզոնից մետաֆիզիկական ֆլողիստոնը իսպառ վանելուց յետոյ, ինչպէս առատութեան եղջերուից սկսուեցին թափուել նորանոր գիւտեր: Այնուհետև հիմնովին վերանորոգուեց գիւղատնտեսութիւնը, առողջապահութիւնը և բժշկութիւնը, իսկ քիմիական արդիւնագործութիւնը սկսեց վիթխարի առաջադիմութիւն ամել: Այժմ քիմիան ամենաճիշտ և հզօր գիւտեթիւններից մէկն է: Արդի մարդուն չի զարմացնում, որ քիմիկոսը իր աշխատանոցում կարողանում է պատրաստել և վերլուծել ամենաբարդ մարմինները, կարողանում է սաեղծել նոյն իսկ այսպիսի նիւթեր, որոնք բնութեան մէջ, ինքնուրոյն ձևով, գոյութիւն չունեն, այլ քիմիկոսի քմահաճութեան արդիւնք են: Քարածուխը, օրինակ, քիմիկոսի քմահաճութեամբ կերպարանափոխում է և դառնում բենզօլ, նաւթալին, գենօլ, կրեզօլ և գոյնզգոյն ներկեր: Քիմիկոսը մրցում է նոյն իսկ չերամի հետ, պատրաստելով արուեստական մետաքս... Բայց իսկապէս ովկ կարող է նախատեսել այն հրաշքները, որ դեռ կատարուելու են ապագայում: Դիւռար էր միայն ուղիղ և հաստատ ճանապարհի վրայ գնել այդ հզօր գիւտեթեան զարգացումը, որ և կատարեց Լալուաղիէն:

Լալուաղիէն ծնուել է 1743 թուին Պարիզում: Նա մի հարուստ վաճառականի զաւակ էր: Աւարտելով իրաւաբանական բաժինը, նա չը բաւականացաւ այդ մասնագիտութեամբ, այլ սկսեց լուրջ պարապել բնական գիտութիւններով այն ժամանակուայ առաջնակարգ զիտնականների մօտ: Արդէն 25 տարեկան հասակում նա իր մի քանի զիտական հետազօտութիւնների համար ընտրուեց Պարիզի Ակադեմիայի անդամ: Միաժամանակ հարուստ բուրժուայի այդ զաւակը նախայեղափակական թրանսիայի զլսաւոր հարկատառներից մէկն էր և

Պարիղի վառողարանի կառավարիչը։ Լավուազիէն թէ իր ժառանգած և թէ անձամբ վաստակած հարստութիւնը գործադըրում էր իր գիտական փորձերի վրայ։ Նրա աշխատանոցը (լաբորատորիա) այն ժամանակուայ Պարիղի գիտական գլխաւոր կենտրոններից մէկն էր։ Բայց նա չոր գիտականի նման չէր փակուել այդ աշխատանոցի չորս պատերի մէջ, այլ լայն մասնակցութիւն էր ցոյց տալիս պետական և հասարակական բոլոր գործերում, երբէք չը կորցնելով իր շիտակութիւնը։

Ֆրանսիայի մնծ յեղափոխութիւնը տակն ու վրայ անելով հին կարդերը նաև շատ մարդկային անմեղ դոհեր տարաւ։ Այդ զոհերից ամենամեծը Լավուազիէն էր։ Ֆրանսիայի յեղափոխական կառավարութիւնը բանտարկել տուեց նրան և անհիմն կասկածով մեղադրեց, իբրև թէ «նա Ֆրանսիայի թշնամիների հետ դաւադրութիւն է կուպմել՝ նպատակ ունենալով իւլել ժողովրդից ահազին գումարներ, որոնք անհրաժեշտ են բռնականների դէմ պատերազմելու համար»։ Եւ ահարեկիչ սիստեմի սիրահար Ռօբեռ-պիէրները գտան, որ «հանրապետութիւնը կարիք չունի գիտնականների մէջ», ուստի թեթև սրտով վճռեցին գիլեօտինի տակ կտրել այն գլուխը, որի նմանները դարերով են ստեղծւում։ Այդ ոճիրը կատարուեց 1794 թուին, բայց հարիւր տարի անց, նոյն Պարիզում, Ֆրանսիական Հանրապետութիւնը և քաղաքակիրթ մարդկութեան ներկայացուցիչները ձքեղ հանդիսով պատում էին նոյն Լավուազիէի մահուան հարիւրամեակը։ Այդ 1894 թուին որոշուեց համայն մարդկութեան նուիրատութիւններով արձան կանգնեցնել մտքի այդ հսկային։ Եւ ահա այս ամառ, Պարիզում, իրականացաւ այդ իդձը։ Արձանի բացման ժամանակ հոչակաւոր քիմիկոս Բերթլոն իր արտասանած ճառը վերջացրեց Լավուազիէի հետևեալ խօսքերով. «Գիտնականը իր աշխատութիւններով կարող է նուազեցնել չարիքի այն գումարը, որ ծանրանում է մարդկութեան վրայ։ Նա կարող է աւելացնել մարդկութեան ուրախութիւնն ու բարօրութիւնը և այդպիսով հասնել մարդկութեան բարերարի փառաւոր անուան»։ Եւ այդ փառաւոր անուան իրաւամբ արժանացաւ Լավուազիէն։

## Ա.ՄՈՒԽՆՈՒԹԻՒՆ

(Առողջապահական էտիւդ)

### IV

## ԶՀԱՍՏԱԿԱՆ Ա.ՄՈՒԽՆՈՒԹԻՒՆ

Զհաստական գտղափարը հիմ ու նոր ազգերի մէջ.—Մահամմէջն ու Մովսէսը.—Արեւմենան եւ արեւալեան եկեղեցական ժողովների պառաւմները ազգակցական ամուսնութեան վերաբերմամբ.—Հայոց եկեղեցու սահմանած կանոնները.—ի՞նչ հիմունք ուներ արենակցական ամուսնութեան արգելումն.—Հների ու ած բացառութիւնները.—Բարեյական հիմունքը.—Արենակցական ամուսնութեան ազդեցութիւնը թէ ամուսինների եւ թէ սերնդի վրայ.—Մասն վերագրած հիմանդրութիւնները (խուշ-համրութիւն, ներզադին հիմանդրութ., խելազարութ., վատասեռումն և ուրիշ).—Նորազոյն գիտական հայեացքները եւ ժառանգականութեան խաղացած զերը արենակցական ամուսնութեան նուրեան մէջ:

Հետևելով ամուսնութեան ինստիտուտի (հիմնարկութեան) զարգացման, մենք տեսնում ենք, որ արենակցութիւնը հին դարերում արգելք չէր լինում ամուսնութեան և որ չհասութեան դադափարը քաղաքական կրթութեան արդիւնք է, ինչպէս և շատ բարոյական սկզբունկըներ:

Հին ազգերի մէջ ամենամօտիկ ազգականներն անդամ ազատ ամուսնում էին իրար հետ (Եթէ միայն այսպիսի կապերին կարելի է ամուսնութիւն անունը տալ). հայրը դստեր, մայրը որդու, եղբայրը քրոջ՝ Այս ձեփ կապերը տոօրեայ երեսյթներ էին հին պարսիկների, մեդացիների, հնդիկների, եթովպացիների մէջ (Persae, Midi, Indi et Ethiopes cum matribus et magis filiabus et nuptibus copulantur. St. Jerôme):

Պարսիկները մինչև անդամ աւելի մեծ յարդանքով էին վերաբերում դէպի մերձաւորագոյն միութիւնները և համարեա սրբացնում էին նրանց պտուղը՝ Փիւնեկեցիք պսակում էին իրանց քրոջ հետ։ Սկիւթացին կարող էր իր աղջկան կին վերցնել։ Նոյնպէս և հոները չին գերմանացիք, դանիացիք ամուսնանում էին իրանց քրոջ հետ։ Նոյնը տեղի ուներ և եղիպտացիների մէջ, որոնց աստուածը (Օղիրիսը) ամուսնացած էր իր քոյր իզիսի հետ և կլէօպատրան եղբօր ու քրոջ զաւակ էր։ Արաբները առաջներում միաւորուում էին իրանց մօր հետ ևս, բայց Մահամմէդը խիստ արգելք դրեց։ «Մի ամուսնացէք այն կանանց հետ, որոնք ձեր հօր կինն են եղած, այդ յանցանք է», ասում է զուրանը, և յետոյ աւելացնում է. «Արգելում է ձեզ պսակուել ձեր աղջկիների, քոյրերի, հօրառու մօրաքոյրերի, եղբօր ու քրոջ աղջիկների, ձեր ծծմայրերի, ձեր կաթնաքոյրերի, ձեր տատերի (!), ձեր կնոջ աղջկիների, որոնք ձեր հոգատարութեան ներքոյ են գտնւում»։ Մովսէսը նզովում է այն մարդուն, որ «լլ քնէ իր քրոջ, իր հօր կամ մօր աղջրկայ հետ» (խորթութիւն), այսպիսիներին պատուիրում է հրապարակաւ սպանել։ Մովսիսական օրէնքով (որ այսօր էլ ոյժ ունի հրէաների մէջ) թոյլ չէր տրում ամուսնանալ առաջին երեք աստիճաններում միայն, իսկ չորրորդ աստիճանի աղդականների պատկը վաւերական էր համարում (երկու եղբայրների կամ երկու քոյրերի զաւակների մէջ)։

Խստօրէն պատժւում էր մծղնէութիւնը (արնախառնութիւնը) նոյնպէս և Մերսիկայում, աւստրալիական ցեղերի մէջ, Հակոբի կղզում։ Զինաստանում օշրէնսղրութիւնն արգելում է պսակը նոյն իսկ ամենահեռաւոր աղդականների մէջ։

Քաղաքակիրթ աղդերի մէջ չհասութեան գաղափարը համարեա ամեն տեղ նոյնն է եղել։

Հռոմում համակեցութիւնը եղբօր կամ քրոջ աղջրակորացը, 1901.

կայ հետ արնախառնութիւն էր համարւում (incestus). Հռոմէական կայսրերից երկուսը (Կլաւդիոս և Անտոնիուս) փոխեցին այս օրէնքը և ամուսնացան իրանց եղբօր դստեր հետ։ Սակայն օրէնքը վերականգնուեց։ Կոնստանդին կայսրը այդպիսի ամուսնութեան համար մահի էր դատապարտում։ Թէոդոս Մեծը նոյնպէս մահացու յանցանք էր համարում մինչև անգամ երկու քոյրերի ու եղբայրների զաւակների (germani —ձայործնեց) միաւորութիւնը (4-րդ պորտ \*): Յուստիանոսը թոյլատրեց այս պսակները, իսկ 615-ին Պարիզում գումարած կրօնական ժողովը նզովեց այս աստիճաններում սահմանած ամուսնական կապերը. 715-ինը աւելի ևս հեռու գնաց ու արգելեց յիշած ազգականների զաւակների պսակը ևս (6-րդ պորտ), յետոյ Դուզիի ժողովը (874 թ.) արգելքը տարածեց աւելի հեռու (7-րդ աստիճան)։ Հռոմէական կանոնները գնալով խստանում են և չհասութիւնը տարածում է 14-րդ պորտի վրայ։

Այս խստագոյն կանոնները (որոնք կրօնական ժողովներից դուրս դարձով մտել էին աշխարհական օրէնսդրութիւնների մէջ համարեա ամբողջ Եւրոպայում) ամեն կողմից բողոքներ յարուցեցին, և լուտերական ժողովը 1215-ին ստիպուած եղաւ մեղմացնել նրանց ու հասցնել 8-րդ պորտի, իսկ ստիպողական դէպերում թոյլուեց և ժխտումներ (dispensatio):

Արևելեան եկեղեցու կանոնները շատ չեն տարբերում հռոմէականից։

Լուտերականների և բողոքակականների եկեղեցական կանոնների մէջ չհասութեան աստիճանները աւելի սահմանափակ են։ Ամուսնութիւնը չէ արգելում քրոջ ու եղբօր զաւակների մէջ (4-րդ աստիճան), և նոյն իսկ դժուար չէ լինում թոյլատութիւն ստանալ եղբօր կամ քրոջ զաւակի հետ պսակուելու համար (3-րդ պորտ)։

\* ) Պորտ համարում է ծնունդը։ Պորտը հաշուելու համար պէտք է բարձրանալ վեր մինչև նախահարը (որ հաշուի մէջ չէ մտնում) և իջնել միա գծով (կողմանդիծ ազգակցութիւն)։ Օր հօրեղբօր թուները կազմում են 6 պորտ։

Ուուսաց եկեղեցին, որ ընդունել էր արևմտեան կանոնները, գնալով նոյնպէս մեղմացրեց արենակիցների ամուսնութեան դէմ յարուցած արգելքները ու այսօր նա թոյլ է տրւում հ~դ պորտում:

Մեղ համար աւելի հետաքրքրական է լուսաւորշական եկեղեցու սահմանած կանոնները։ Դժբախտաբար նրանք չափազանց խառնաշփոթ են մինչև նոր դարերը։ Մինչև հինգերորդ դարը ոչ մի որոշ կանոն չը կար չհասութեան մասին։ Մեծն ներսէս 365 թուականին գումարում է յայտնի Աշտիշատի ժողովը, որի որոշումների մասին ենթադրութիւններ միայն կան։ Սակայն Արիստակէս եպ. Մեղրակեանի ասելով, «այդ ժողովում արգելուած պիտի լինի նախ արենակցական չորրորդ աստիճանի ամուսնութիւնը. այլապէս բացատրել չի կարելի ժողովի կանոնադրութեան շարժառիթը. երկրորդ—ամուսնութիւնը եղբօր կնոջ, որդու կնոջ, եղբօր որդու կնոջ և հօրեղբօր կնոջ հետ» \*)։

Այս արգելումն ցոյց է տալիս, որ այս ձևի պսակներ կատարուելիս են եղել հայերի մէջ, երևի շահասիրական նպատակով (օր. իրանց տոհմական ժառանգութիւնները չը կորցնելու համար), իսկ Խորենացու խօսքերը, թէ «վասն ագահելոյ սեպհական ազատութիւնը», ենթադրել է տալիս, թէ այդ կանոնը ուղղուած է եղել ազատներին (իշխաններին) սանձելու նպատակով։

Սակայն, չը նայելով Աշտիշատի ժողովի այս որոշմանը, որ վերաբերում էր անխտիր «ազատաց և ոչ-ազատաց», մերձաւորների պսակները իշխանական տների մէջ չեն վերանում, այնպէս որ գեռ 8-րդ դարում Պարտաւի ժողովը հարկ է համարում յատկապէս մատնացոյց անել ազատներին, «զի անխտիր խառնին ընդիւրեանց մերձաւորսն անկարգ ամուսնութեամբ \*\*»։ Եւ

\*) Արիստ. Մեղրակեան, «Ամուսնական Խնդիրներ»։

\*\*) Տե՛ս գ. Բաստամեան, «Ամուսնութիւն», «Փորձ» 1880 և 1881.

ժողովը դիմում է աւելի խիստ միջոցի այդ արնախառնութեանը վերջ տալու համար, այն է—նզովքի:

Խչպէս երևում է, հայերի մէջ ևս հեթանօսական, գուցէ և առաջին քրիստոնէական, գարերում տեղի էին ունենում արենախառնական ամուսնութիւններ։ Այսպէս նշրդ Նահապիվանի ժողովը աւելորդ չէ համարում արգելուած աստիճանների կողքին դնել նոյնպէս քրոջը, քեռորդուն, եղբօրորդուն, հօրաքրոջը—մի հանգամանք, որ ապացոյց է, թէ այդպիսի կապերը տեղի էին ունենում։ Այս ժողովը որոշ սահմաններ դրեց չհասութեանը և ընդունեց հռոմէական օրէնսդրութիւնը, այսինքն արգելեց ամուսնութիւնը մինչև 8-րդ աստիճանը։ Ուրիշ ժողովներից ընդունուեց այդ կանոնը։

Այսպէս ուրեմն մեր եկեղեցական կանոններով չհաս համարում էր 7—8-րդ պորտը։ Ուրիշ խօսքերով, լուսաւորչական եկեղեցականները և օրէնսդիրները չեն շեղւում հռոմէական ու յունական եկեղեցիների սահմանած կանոններից, երեք նոյն իսկ զեկավարուել են նրանցով։

Խորթերի վերաբերմամբ քրիստոնէական եկեղեցին, չհասութեան տեսակէտից, նոյն օրէնքներն է սահմանել, ինչ որ են Մովսիսական կանոնները, իսկ այս կանոնները խորթերին չէին զանազանում հարազամներից։

Հայ եկեղեցին ևս խորթերի համար մի և նոյն չհասական աստիճաններն է սահմանել, ինչ որ արենակիցների։ Միիթար Գօշը թոյլատրելի է համարում ամուսնութիւնը նրանց մէջ միմիայն հինգերորդ աստիճանում։ Նոյն խստութիւնը գործ էր դրւում, երեք, և երկու կողմի չհամեսերի վերաբերմամբ, այսինքն հօր զաւակների (առաջին պսակից) և մօր զաւակների (նոյնպէս առաջին պսակից) մէջ, թէև հռոմէական եկեղեցին արգելք չէր լինում սրանց ամուսնութեան, իրաւացի նկատելով, որ ոչ մի արենակցութիւն չը կայ նրանց մէջ։ Մովսիսական օրէնքը, հարցին լոկ բարոյական տեսակէտից նայելով, ընդունում է հօրով և մօրով խորթ

զաւակներին եղբայրներ, և նրանց հաւասարեցնում է հարազատներին:

Խնամիական կապը նոյնպէս սուրբ է համարուել միշտ և չհասական աստիճանները այստեղ համարեա նոյնն են եղել, ինչ որ արենակիցների մէջ: Այս չհասութիւնը սահմանուած էր նոյնպէս և Մովսէսի օրէնսդրութեամբ:

Կան և ուրիշ տեսակ չհասութիւններ—կնքահայրական և որդեգրական, որոնք կազմում են հոգեւոր ազգակցութիւններ: Այս ազգակցութիւնները չհասութեան տեսակէտից նոյնպէս հաւասարեցրել էին արենակցականին:

Սանիկը համարում է քաւորի հոգեորդին և նրանց սերունդների մէջ նոյն չհասութիւնն է գրուած, ինչ որ արենակիցների, այսպէս, քաւոր ու սանիկի միայն ծոռները (թոռների որդիքը) կարող են իրար առնել:

Հոգեզգաւակը համարում է եղբայր որդեզրողի մարմնաւոր զաւակին, ու սրանք (իսկական որդին ու հոգեորդին) կարող են ամուսնանալ իրար հետ չորրորդ աստիճանում միայն (ըստ Ղրիմեցու):

Ահա այն կանոնները, որոնք գոյութիւն ունեն թղթի վրայ: Սակայն կեանքի մէջ գործնականապէս անդադար շեղումներ ու զեղծումներ են կատարում հոգեոր իշխանութեան կողմից, որ երբեմն անելանելի գրութեան մէջ է գտնուում և ստիպուած է լինում բարոյապէս զիշանել ամուսնացողների պահմանջին, իսկ յաճախ շահսիրական նպատակով դրդուած, — երբեմն էլ օտար եկեղեցում պատկուելու սպառնալիքի տակ, թոյլտութիւն է արձակում:

---

Հակառակ մեր սովորութեան, երկար կանգ առանք չհասութեան պատմութեան վրայ, որ, պէտք է ասած, չափազանց խառնաշփոթ է: Խնդիքը այն աստիճան կարեւոր է, որ մենք պարտք համարեցիք նրան լուսաբանե-

լու համար մի քիչ պարզել գոյութիւն ունեցած և ունեցող օրէնսդրութիւններն ու կանոնները:

Մենք տեսանք, որ ազգակցութիւն համարուել են և են այժմն էլ ոչ միայն արենակցութիւնը, այլ և խընամիութիւնը և քաւորութիւնը:

Ի՞նչ սկզբունքներով են արդեօք զեկավարուել եկեղեցական ժողովները, սուրբ հայրերը և նոյն իսկ քաղաքական օրէնսդիրները այսպիսի կանոններ հիմնելով, և այսպէս կաշկանդելով ամուսնացողների անհատակտն իրաւունքները:

Ունեն արդեօք այս որոշումները մի գիտնական յենակէտ, թէ մի ուրիշ հիմունքների վրայ են դրուած:

Մենք չը կարողացանք մի որ և է գիտնական լուրջ շարժառիթ գտնել այսպիսի սահմանափակում մեկնելու համար, եթէ չը յիշենք մի քանի տղայական դիտումներ, որոնք գիտնական լինելու յաւակնութիւն ունեն:

Այսպէս, լուտերանեան ժողովը և Ներսէս Շնորհալին իրանց որոշումները հիմնում են ինքն ըստ ինքեան այն սխալ դիտումների վրայ, թէ մարդու մարմինը չորս բաղադրեալ նիւթերից է բաղկացած: Ներսէս Շնորհալին, սահմանելով չհասութիւն երկու կողմից մինչեւ չորս աստիճանը (ընդամենը 8 պորտ), բացատրում է իր որոշումն այն տարօրինակ դիտումնվ, թէ «քանդի բնութիւն մարմնոյ ՚ի չորից տարերաց գոլով, յիրաւի եւ մարմնական ազգակցութիւն մինչեւ ի չորրորդ թիւն ժամանէ, որ է այսպէս. ի միոյ հօրէ երկուց եղբարց բաժանեալ, հաւասար ունին յինքեանս գհօրն գոյացութիւնս. իսկ առ ի նոցանէ ծնունդքն զկէս արեան եղբարութեան, և երրորդ ծնունդն, որ յեղբարցն որդոց, զկիսոյն կէս արեան միայն. իսկ չորրորդ ծնունդն, որ ի սոցանէ, զչորեալ մասն մնացելոց: Եւ այս է սահման և կէտ արեան մերձաւորութեան»: (Ընդհանրական):

Յակոբ Կրիմեցին (երեւի օտար ազգիւրներից վերցրած), նոյնպէս ձգտում է բնադիտական բացատրու-

թիւն տալ, թէ ինչի ազգականները չհաս են մինչեւ չորրորդ պորտը: «Որդիք, որ ի սոցանէ (ծնողներից) առաջ գան, ունին զբոլոր արիւնն ազգականութեան, և թոռունքն զերրորդ մասն, և որդիք թոռանցն զերկրորդ մասն և թոռունք թոռանցն, որ է թոռինք, զմի մասն, և աստ վճարի արիւն ազգականութեան, սոքա խնամինան և սոցա որդիքն, որ են ձագթոռինքն, առնուն զիրար»:

Տարակոյս չը կայ, որ այս մեկնութիւնը շինծու է, որ հին օրէնսդիրները և եկեղեցական ժողովները այդ դիտումներով չէր, որ ղեկավարում էին իրանց կանոնները դնելով:

Վերջապէս, թէ այդ դիտումները կարող էին տեղի ունենալ, երբ խնդիրը արենակիցներին էր վերաբերում, ինչ հիմք կայ արգելելու խնամիների կամքաւոր ու սամնիկի պատկները:

Կար մի ուրիշ շարժառիթ, աւելի յարդելի քան այս տղայական մօտիվները, — այդ բարոյական հիմունքն էր:

Ամեն ժամանակ բոլոր բանիմայ մարդիկ աշխատել են պահպանել ընտանիքի սրբութիւնը, ներշնչելով գուեհիկ ամբոխին այն համոզմունքը, թէ ազգականի, խնամու հետ (և առհասարակ այն անձանց, որոնք մեր հաւատարմութիւնն են վայելում), սեռական կապեր հաստատելը մեծ մեղք է, և այսպիսիներին նզովում է եկեղեցին:

Թէ մովսիսական օրէնքը, թէ քրիստոնէական դարերում սահմանած չհապական կանոնները միշտ էլ լոկ այդ բարոյակտն կէտն են աչքի առաջ ունեցել: Մովսէսը արգելում է կին առնել այն աղջկան, որ մեր խնամատարութեան ներքոյ է գտնուում:

Այսպէս ուրեմն, օրէնսդիրներն աւելի բարոյական քան առողջապահական դիտումներ աչքի առաջ ունէին: Նրանց նպատակն է եղել սուրբ և անարատ պահել արենակայական և բարեկամական յարաբերութիւն-

Ները ու, հեռացնելով ամուսնանալու հնարաւորութիւնը, հեռացնել ազգականներից նաև սեռական յակումն: Մի խօսքով, նրանք միտք են ունեցել սահմանել յիշած անհատների մէջ այնպիսի մաքուր վերաբերումն ու սէր, որ գոյութիւն ունի եղբօր ու քրոջ, հօր ու դաւակի մէջ:

«Ընտանիքի և հասարակութեան փրկութեան համար անհրաժեշտ է, որ մի քանի սերունդների միջից դուրս մղուի սիրոյ կիրքը: Պէտք է արգելել ամուսնութիւնը այն աստիճանի ազգականների մէջ, որոնցից մեծերը փոքրերի համար կարող են փոխարինել ծնողներին, ինչպէս են՝ հոգարարձուները, խնամատարները: Խոկայս հնարաւոր է միմիայն այն դէպքում, երբ օրէնքը, աւելի ևս ծէսերն ու սովորութիւնները այնպիսի յարաբերութիւններ են ստեղծում ազգականների մէջ, որ կրքի ու սիրոյ ծագումն անհնար է գառնում:»

Հեղինակաւոր Թիբբինդի այդ խօսքերը լոկ փիլիսոփայական նշանակութիւն չունեն: Դրանք լուրջ հոգեբանի, լուրջ խորհողի խօսքեր են: Դիտութիւնը, եթէ կամենաք, մինչև հիմա էլ ոչ մի լուրջ արգելառիթ չէ դնում հօր ու աղջկայ ամուսնութեանն անգամ, սակայն շատ դարեր առաջ մարդու բնազդումը անհնար է դարձրել այդ արիւնիառնութիւնը: Մեր կիրքը չի յարում մեր մերձաւոր ազգականների վրայ և այս մի խոր հոգեբանական դրութիւն է, որի մասին խօսելն աւելորդ կը լինէր:

Այս բարոյական սկզբունքն աւելի ևս կարեսոր է պահպանել հայկական օջախում, որտեղ մի քանի սերունդներ ու խնամիներ մի յարկի տակ են՝ ապրում, որտեղ այդպիսի սուրբ հաւատարմութեամբ է վերաբերում քենին փեսային, սանիկը իր քաւորին: Ինչ կը դառնայ մեր ընաանիքի վարք ու բարքը, եթէ խլենք նրանից յարաբերութիւնների սրբութիւնը:

Տեսնենք հիմի, թէ ինչպէս է նայում չհասութեան խնդրին բժշկական գիտութիւնը:

Նատ քիչ ինդիր կայ բժշկականութեան մէջ,  
որ այն աստիճան գործնական կարևորութիւն ու-  
նենար և որի մասին այնչափ հակասական կարծիքներ  
յայտնուած լինէր, որքան այս Հարցը հետազօտողնե-  
րըն ու գիտնականները երկու բանակի են բաժանուած  
անցեալ դարի սկզբից: Մի մասը ազգականների ամուս-  
նութիւնը իրար հետ մի բնական երեսյթ է համարում  
և ոչ մի վեաս չէ տեսնում դրա մէջ. եղել են նոյն իսկ  
այնպիսիներ, որոնք շատ ցանկալի և մարդկութեան համար  
շատ օգտակար են համարել արենակցական միութիւն-  
ները: Դրանց գէմ կանգնած են մի շարք ուրիշ հետա-  
զօտողներ, նոյնպէս ֆակտերով, փորձերով ու ստատիս-  
տիկայով զինուած, որոնք բոլորովին հակառակն են  
պնդում և ձգտում են ապացուցել, թէ այդ տեսակ  
ամուսնութիւնը ամեն տեսակ անբախտութեան աղբիւր  
է դառնում սերնդի համար: Այսպիսով կազմուել է մի  
ամբողջ գրականութիւն այս հարցի վերաբերեալ:

Եթէ մենք ցանկանայինք առաջ բերել այն բոլոր  
հետազօտութիւններն ու ստատիստիկական տեղեկու-  
թիւնները, որոնք գոյութիւն ունեն բժշկական գրակա-  
նութեան մէջ, ստիպուած պիտի լինէինք հատորներ  
գրել: Միւս կողմից ինդիրն այնչափ նշանաւոր է,  
որ չենք կարող մի համառօտ ակնարկ չը դցել կարևո-  
րագոյն աշխատութիւնների վրայ:

Ես չեմ խօսում այն հեղինակների մասին, որոնք  
միայն լոկ կարծիքներ են յայտնել ազգակցական ա-  
մուսնութեան վնասակարութեան կամ օգտաւէտութեան  
մասին:

Մեզ համար նշանակութիւն ունին միմիայն ֆակ-  
տերը, գիտողութիւններն ու փորձերը:

Արենակցական ամուսնութեան հակառակորդների  
ասելով, սրանից առաջացած սերունդը լինում է թու-  
լակազմ; արատաւոր ու հիւանդուս նրա մէջ իբր թէ  
տարածուած են լինում խուզհամրութիւն, ընկնաւո-  
րութիւն, ապուշութիւն, խալագարութիւն, աչքի և ու-

րիշ հիւանդութիւններ։ Ամենից շատ աչքի է ընկ-  
նում խուլ-համրերի մեծ տոկոսը ազգակցական պսակի  
զաւակների մէջ։

Եիպոյի ստատիստիկայով, 290 խուլ ու համր ծը-  
նուածներից 86-ը ազգականների զաւակներ են եղել  
այսինքն մօտ  $30^{\circ}/_0$ . ուրիշ հետազօտողներ գտել են  
 $25^{\circ}/_0$ ,  $21^{\circ}/_0$ ։ Եւ նկատուած է, որ քանի մօտ է ծնող-  
ների արենակցութիւնը, այնքան մեծ է խուլերի թիւր։  
Այսպէս, ըստ Բուդէնի ստատիստիկայի, հօրեղբօր, մօ-  
րաքրոջ, քեռու զաւակների ամուսնութիւնը տուել է  
18 խուլ. հօրեղբօր ու քեռու պսակը եղբօր ու քրոջ  
աղջկայ հետ—37. իսկ քրոջ որդու ու մօրաքրոջ—70։  
Այս տեղեկութիւններից հեղինակները եղբակացնում  
են, թէ արենակցական ամուսնութիւնները մեծ քանա-  
կութեան խուլ-համրեր են տալիս. (Բուդէնի կարծիքով  
12—15 անդամ աւելի քան միւս ամուսնութիւնները)։  
Հրէանները, որոնց մէջ սաստիկ տարածուած է ազգակ-  
ցական միաւորութիւնը, տալիս են ամենամեծ տոկո-  
համրերի ու խուլերի։ Ֆրանսիայում հրէանների մէջ ա-  
ւելի յաճախ են պատահում այս արատ ունեցողները, քան  
ֆրանսիական հասարակութեան Բերլինի խուլ-համրերի  
ինստիտուտի մէջ բժ. Լիբրայխը գտել է, որ 341  
հիւանդից 42-ը հրէաններ էին։ Հաշուելով ազգաբնակու-  
թեան վրայ, տեսնում ենք, որ 10,000 կաթոլիկներին  
ընկնում է միայն 3-ից քիչ աւել խուլ-համր, այն ինչ  
նոյն թուով հրէանները տալիս են 27 հիւանդ։

Ապուռութիւն ու խելագարութիւն։ Մի շարք հեղի-  
նակաւոր անձինք, որոնց շարքում և հոչակաւոր էսքի-  
րոլը, որոշ կապ են գտնում այս դրութիւնների ու չհաս  
պսակների մէջ։ Այսպէս, հրէանների մէջ աւելի շատ են  
ապուշներն ու խելագարները, քան միւս եւրոպացինների։  
Բժ. Նովը 17 ազգակցական ամուսնութեան մէջ գտել է  
97 երեխայ, որոնցից 44 ապուշ էին, 12 խուլախտաւոր  
(զօլուց), 1 թղուկ և 1 խուլ Բժ. Բեմիսաը ասում է,  
որ 787 այդ ձեի ամուսնութիւնից 256-ի մէջ եղել են

կոյրեր, խուլհամրեր ու ապուշներ։ Ճանապարհորդները նկատել են իրլանդական գաղութների մէջ Ամերիկայում, հօլլանդական կօլօնիայի մէջ Աֆրիկայում մեծ քանակութեամբ ապուշներ և խուլհամրեր։ Նոյն բանը նկատուած է Քրանսիական մի կօլօնիայում։ Անգլիայում 1847 թ. 17 միլիոն ժողովրդին ընկնում էր 15,000 խելագար, այն ինչ իրլանդիայում (որտեղ արինակիցները աւելի քիչ են ամուսնանում միմեանց հետ) նրանց թիւը համեմատաբար երկու անգամ աւելի պակաս էր։

Ընկնաւորութիւնը ևս աւելի յաճախ է նկատուում իբրև այդպիսի ամուսնութեան պտուղ։

Մի քանի հեղինակներ պնդում են նոյնպէս, թէ արենակիցներից ծագած սերունդը, բացի յիշած հիւանդական դրութիւններից, յաճախ ունենում է զանազան արատներ և կուրութիւն։ Ֆրանսիայում մի դիւզ կայ, իզո անունով, որ առաջ անջատուած ու կղզիացած էր ապրում հաղորդակցութիւնների դժուարութեան պատճառով, որտեղ ամենամօտ աղդականները ամուսնանում էին միմեանց հետ։ Արդ, ժամանակի ընթացքում նորանոր սերունդների մէջ զարդացել ու տարածուել էր մի հրէշութիւն (յրօծեա), որ կոչում է վեցամատութիւն, (Ճեռքին բուսնում էր վեցերորդ մատ).—բնակիչները վեց-մատնանի էին դառել։ Խոկ երբ որ հաղորդակցութիւնները լաւացան և նրանք ամուսնական կապերով խառնուեցան ուրիշ երկրացիների հետ, կամաց-կամաց վեցերորդ մատը անհետացաւ, կարծես, հալուեց։ Խելագարութիւնը Եւրոպայում աւելի յաճախ է պատահում հրէաների, քան միւս աղդերի մէջ։ Այդ բանը մասսամբ (ըստ Լը Գուլվէի) պէտք է վերագրել աղդակցական ամուսնութեան։

Եւ չեմ կամենում աւելի երկար կանդ առնել այդ կարծիքների ու թուերի վրայ։ Արենակցական ամուսնութեան սերունդը, շատ հեղինակների կարծիքով, լինում է արատաւոր, հիւանդոտ, թուլակազմ և տրամադրուած սպառման։

Մի քանի ճանապարհորդներ զանազան կղղիներում ու կօլօնիաներում տեսել են, որ բնակիչները փոքրահասակ են գառել, կանայք մանր, նիհար, թուլամնրթ, անտաշ ու տգեղ, իսկ տղամարդիկ վաղ են ծերանում, երբեմն ուղղակի զզուելի դէմք ունեն, կորցրած են տղամարդուն յատուկ ֆիղիքական ոյժը, տոկունութիւնն ու ճարպիկութիւնը. մի խօսքով, այդ կղղիներում տիրում է մի ընդհանուր այլասեռումն և դրա պատճառը հետազօտողները դտնում են աղդակցական ամուսնութեան մէջ, որ առօրեայ երևոյթ է այնտեղ:

Դըվէն սինդում է, թէ Եւրոպայում արիստոկրատիան ֆիղիկապէս ու բարոյապէս ընկնում է, ստորանում և թէ Դօֆինէի աղնուական ցեղերը համարեա արդէն սպառուել են հէնց աղդակցական ամուսնութիւնների պատճառով։ Պերիէն նոյնն է ասում հրէական շատ համայքների մասին։ Դօկտոր Էլիոտսըն այդ բանը նկատել է նոյնպէս և անդլիաքնակ հրէաների մէջ «Ոչ մի աղդի մէջ այնքան շիլ, կակաղ, ապուշ ու ամեն աստիճանի խելագարներ չը կայ, ինչքան, հրէաների մէջ», ասում է նաև Ուրիշ գրողներ մատնանիշ են անում լեռնաբնակ համայքների վրայ, որոնք, կղղիացած ապրելով (օր. Սավոյայում), ստիպուած են խնամիանալ իրար հետ և այդ պատճառով սաստիկ վատասեռուած են այժմ։

Ահա մի շարք քակտեր, որոնք, կարծես, այլ ևս ոչ մի կասկած չեն թողնում արենակցական ամուսնութեան մխասակարութեան մասին։

Սակայն այդ միայն առերես է։ Մի ուրիշ շարք դիտնականներ ու հետազօտողներ եկել են հակառակ եղակացութեան, հաւաքած լինելով համողիչ ապացոյցների մի կոյտ։

Ամենից առաջ նրանք մատնացոյց են անում մինչեւ այժմ ժողոված ստասիստիկայի քչութեան ու անբաւարարութեան վրայ։ Այսպիսի մի ահագին խնդիր որոշելու համար հարկ կայ աւելի ընդարձակ տեղեկութիւնների ու աւելի մեծ թուերի։ Ի՞նչ նշանակութիւն

ունի մի քանի արենակցական ընտանիքների պատմութիւնը, երբ որ միմիայն ֆրանսիայում կատարում են 3—4000 այդպիսի պատկներ։ Յետոյ հրէաներին վերաբերեալ ստատիստիկան ոչինչ չէ ապացուցում, որովհետեւ, եթէ նրանց մէջ աւելի յաճախ են պատահում արատաւոր մարդիկ, ապուշներ, թուլամիտներ, նոյն իսկ խելագարներ, նոյն չափով (եթէ ոչ աւելի) կան և զօրեղ տաղանդներ։ Վերջապէս այս ազգի բացառիկ գրութիւնը եւրոպական անկախ տէրութիւնների մէջ (համարեա ամենուրեք հալածուած ու ճնշուած), մի գրութիւն, որ աւելի դժուար է դարձրել նրանց համար կեանքի կոփուր, բաւական կը լինէր բացատրելու այն ներգային երևոյթները, որոնց մի քանիսը վերագրում են արենակցական ամուսնութեան։

Սակայն, մի կողմ թողնելով փելիսոփայական դատողութիւնները, գառնանք ֆակտերին նրանք նոյնպէս հերքում են վերոյիշեալ կարծիքը։

Եւ, ճշմարիտ որ, վերև յիշած թուերի հանդէս կարելի է գնել մի շարք ուրիշ թուեր, որոնք ապացոյց են, որ արենակցութիւնը ոչ մի վատ աղբեցութիւն չէ ունենում սերնդի վրայ։

Բժ. Վուազէնը 1560 թուլախելքներից ոչ մէկի ծագման մէջ չի գտել արենակցական ամուսնութիւնն Բուրժուան առաջ է բերում արենակցական ամուսնութիւնից ծագած սերնդի մի պատմութիւն։ 130 տարուայ ընթացքում այս ազգակցական զոյգը աճել է ու տուել 416 անհատ, և սրանցից մի քանիսը միայն հիւանդու են եղած և 8 հոդի միայն մեռած են մատաղ հասակում։ Ուրիշ հեղինակներ բերում են համանման դէպքեր։

Համայնքների սերհատման դէմ մի շարք գրողներ նոյնպէս հակասական կարծիքներ են յայտնում։

Բիւխնէրը, Վերկինը, Վունդէնը և շատ ուրիշները նկարագրել են փոքր ու կղզիացած համայնքներ, որոնց մէջ դարերի ընթացքում տիրում էր չհաս ամուսնու-

թիւնը և որոնք այնու ամենայնիւ յաղթանդամ, առոյդ անհատներից էին բաղկացած։ Պետրիի ասելով, ազգակացական պսակները օրէնք են դառել Սումատրայում և, չը նայելով արնախառնութեանը, բնակիչները իդէալական կազմուածք ունեն։ Կան հեղինակներ, որոնք գտել են, որ ընդհակառակը արենակիցները ամուսնանալով, իրար հետ տալիս են աւելի լաւ, աւելի առողջ սերունդ, քան օտարները։

Այսպիսով խնդիրը մնում էր անորոշ, առարկութիւններն ու ֆակտերը հակասական էին ու ոչինչ չէին կարող վճռել։

Գիտնականները դիմեցին մի ուրիշ մեթօդի. նըրանք փորձեր արին կենդանիների ու բոյսերի վրայ։

Այստեղ ևս խառնաշփոթ ու հակասական են ֆակտերը. Շիպոյի, Բուրժըլէի, Բօդուանի, Արկանուիլի փորձերը, Ալֆօրի, Լօնդօնի անասնաբուծական ուսումնարաններում արած դիտումները բերում են մեզ այն եղակացութեան, թէ արենակից կենդանիների զուգաւորումն նսեմացնում է ցեղը, դադարեցնում է աճումը։ Միւս կողմից հակառակն են ցոյց տալիս անդիական փիրմաններում, սպանդանոցներում արած դիտումներն ու փորձերը։

---

Խնդիրը մնում էր այն դրութեան մէջ, ինչ որ էր մի քանի դար առաջ, և հազարաւոր փորձեր ու դիտումներ լոյս չը գցեցին նրա վրայ։

Նորադոյն գրողները, կարծես, աւելի յակւում են ընդունելու հների կարծիքը այսպիսի ամուսնութիւնների վնասակարութեան վերաբերմամբ։ Վիլկէնը մասամբ այդ կարծիքին է։ Մանտեգացան ևս ասում է, թէ չհամերի սերունդը աւելի քիչ է աճում ու բազմանում, քան հեռաւորներինը։

Այժմ բժիշկներն ու մարդաբանները մեծ դեր են խաղալ տալիս ժառանգականութեանը։ Դեռ Պերիէն ծիշտ նկատել էր, որ «արենակիցութիւնից ծագած դըժ-

բախտութիւնները ոչ թէ արնախառնութեան հետևանք պէտք է համարել, այլ հիւանդական ժառանգականութեան»։ Նոյնը պնդում էր Բուրժուան դեռ վաթսունական թուականներին։

**Ըսդհանուր կարծիքը հետևեալն է.**

Ծնողների փիզիկական յատկութիւնները (լաւ թէ վատ) անցնում են սերնդին. հետևաբար, մի և նոյն ընտանիքի անդամները ժառանգում են իրանց նախահօրից ու նախամօրից նրանց փիզիկական թուալութիւնները, ինչպէս և բարեմասնութիւնները (գոնէ մասամբ)։

Օրինակ, եթէ ծնողները թոքախտաւոր են եղած, սերունդը նոյնպէս տրամադրուած կը լինի դէպի այդ հիւանդութիւնը և կարող է վարակուել նոյն ցաւով։ Դէ եթէ այս արատաւոր ծնողներից սերուածները ամուսնանան իրար հետ, պարզ է որ նրանցից ամեն մէկը կը տայ ժառանգին մի մասն իր հիւանդական տրամադրութիւնից։ Այսպիսով նոր զաւակի մէջ կը գումարուեն երկու ծնողների հիւանդական տրամադրութիւնները և նա, հետևապէս, աւելի տկար կը լինի, քան ծնողներից ամեն մէկը։ Յետոյ եթէ այս նոր զաւակը ամուսնանայ իր մի ուրիշ արենակից ազգականի հետ (օր. իր հօրեղբօր աղջկայ հետ), նրանից ծագած սերունդը աւելի ևս թոյլ կը լինի կազմուածքով, աւելի ևս տրամադրուած թոքախտի։ Եւ այսպէս հիւանդական յատկանիշներն ու տրամադրութիւնները գնալով կը սաստկանան սերնդից սերունդ, կը փշացնեն, կը սերհատեն հետագայ սերունդները և կը հասցնեն ցեղը սպառման։

Ցաւալին հէնց այն է, որ (ինչպէս նկատել են շատ հետազոտողներ) ժառանգականութիւնը ընտրում է ծընողների հէնց թոյլ հիւանդական կողմերը ու տալիս նոր սերնդին։

Այս ձեռով ցեղը գնալով տկարանում է, նրա աճումը պակասում է ու դատարում։ Անհրաժեշտ է դառնում նոր հօսանք, նոր արիւն, որ կենդանացնէր նրանց

մէջ հանգած կամ թուլացած կենսական ոյժերը և բարդաւաճման ընդունակութիւնը:

Արդի մարդաբանները նոր տարրերի ներհոսումն անհրաժեշտ են համարում հնացած հասարակութիւնները նորոգելու համար: (Տարար, Սիդելէն, Լըքոնը):

Յաճախ ամբողջ դասակարգեր, քաղաքներ, որոնք ապրում են առանձնացած կեանքով, կարծես, ծերանում են, թառամում, ժողովուրդը նուազում է, կորցնում է իր տոկունութիւնը կեանքի կռուի մէջ: Եւ նըկատուած է, որ դրսեցիները խառնուելով բնիկներին, աղնուացնում ու նոր կենսական ոյժ են ներշնչում նըրանց:

Երեակայեցէք ձեզ մի առողջ օտարական, որ կին է ուղում մի ժառանգական արատաւորի, օր. մի ներփային աղջկայ: Ի՞նչ կը լինի սրանց սերունդը: Սա պիտի ստանայ իր մօրից նրա ներփային խանգարումները ու հիւանդական տրամադրութիւնները, բայց հօրից ժառանգած առողջ ներփերը, այսպէս ասած, կ'ոչնչացնեն, կ'անզօրացնեն հիւանդական սազմերը:

Այս երկար հետազոտութիւնները բերում են մեզ հետևեալ եղբակացութեան:

1. Արենակցական ամուսնութեան վնասակարութիւնը գեռ չէ ապացուցուած գիտնականապէս, առկայն դարեւոր դիտումները և մարդաբանական ցուցմունքները իրաւունք են տալիս մեզ մասամբ ընդուելու այդ ենթադրութիւնը:

2. Ազգակցական ամուսնութիւններից առաջ եկած սերունդների սերհատումն բացատրում է ժառանգականութեան օրէնքով, որով սերունդների մէջ դումարում են ծնողների արատները:

3. Վատասեռումն (վարոյենի) տեղի ունի այն դէմքում, երբ ամուսնացող աղդականների ընդհանուր նախնիները հիւանդու ու արատաւոր են եղած, և վատասեռումն այնքան աւելի մեծ է, որքան մօտ է աղդակալցութիւնը: Հակառակ դէպքում (երբ ծնողները առ

ոողջ են) ժառանդները կարող են երկար սերունդների ընթացքում պահպանուել և աճել, չը նայելով արենակշական միաւորումներին:

4. Սրատաւոր ընտանիքին պատկանող անհատը, ամուսնալով առողջ օտարի հետ, կարող է արտադրել բոլորովին առողջ սերունդ:

## VI

**ԱՄՈՒՄՆՈՒԹԻՒՆ ՕՏԱՐ ԱԶԳՈՒԹԵԱՆ ՊԱՏԿԱՆՈՂ  
ԱՆՀԱՏՆԵՐԻ ՄԵՋ**

Ազգերի միակերպումն ու ձուլումն ամասնութեան միջոցով.— Մասնեացցապի կարծիքը այսպիսի միաւորութիւնների մասին.— Մրանց վասնառութիւնը սերնդի ռեսակէտից:

Ժամանակի ընթացքում, անդադար շիման չնորհիւ, եւրոպական ազգերն արդէն այն աստիճան միակերպուել են, որ ամսւանութիւնը կատարւում է անխոտիր բոլոր ազգերի մէջ։ Առօրեայ երևոյթ է եւրոպայում տեսնել սևահեր ու թուխաչք ոպանուհուն մի շէկ շվեդացու կին դառաձ։

Այսպէս գնալով, կը հասնի, անտարակոյս, մի ժամանակ, երբ եւրոպական ազգերը ձուլուած կը լինեն միմեանց հետ ու կորցրած իրանց ազդային այն մի քանի առանձնայատկութիւնները, որոնք դեռ ևս քիչ թէ շատ բնորոշում են նրանց։

Կը գայ անշուշտ մի ժամանակ, երբ այլ ևս ոչ ոռւս կը լինի, ոչ ֆրանսիացի, ոչ անդլիացի, այլ կը լինի մի մարդկութիւն, և բոլոր ազգերը համակերպուած ու հաւասարուած թէ ֆիզիկապէս, թէ դաւանութեամբ, թէ քաղաքակրթութեամբ և թէ աշխարհայեցողութեամբ։

Այսպէս է կատարւում ձուլումն հաւասար քաղաքակրթութեան տէր ազգերի մէջ։ Այստեղ իւրաքանչեարութեամբ, 1901.

չիւր ազգութիւն իր առանձնայատկութիւններից մի բան մտցնում է ձուլարանի մէջ, այնպէս որ այնտեղից դուրս եկած նոր մարդկութիւնը կրում է իր մէջ կազմող աղգութիւնների բնորոշ կողմերը:

Ստոր զարգացման տէր ազգութիւնները ոչ թէ ձուլում են, այլ ուղղակի կանումը, հալում են մեծ աղգերի մէջ, առանց որ և է հետքի:

Մարդկութեան ֆիզիկական բարուոքման տեսակէտից պէտք է ասել, որ ազգերի խառնուումը տալիս է առողջ ու ազնուացնող սերունդ, միայն անհրաժեշտ է, որ խառնուող ազգերը մի ցեղի պատկանեն. օրինակ, բոլորը սպիտակամորթ լինեն: Հակառակ գէպքում աւելի լաւ ֆիզիկական յատկութիւններ ունեցող աղղը կը նսեմանայ: Այսպէս օրինակ, եթէ մի սպիտակամորթ ամուսնանայ մի նեղութէու հետ, նրա սերունդը մուլատներ (կիսասեեր) կը լինեն և ուրեմն ցեղը կը վատանայ:

Մրանք են մարդաբանական կանոնները:

Մեղ աւելի հետաքրքրում են ամսւսինների անհատական կեամնքը և նրանց սերնդի առողջական դրութիւննը:

**Խօսենք Մանտեգացցայի բերանով.**

— «Ամենայն ազգ արդիւնք է անհամար ֆիզիկական բարոյական և մտադրու տարրերի. ահա թէ ինչի անդ լիացին այնչափ տարբերում է սպանացուց, իսկ իտալացին նորվեգացոց:

«Երբ կինն ու մարդը տարբեր երկրների զաւակներ են, նրանք տարբեր լեզուներով են խօսում: Բայց այդ դեռ ոչինչ. — Նրանք տարբեր զգացմունքներ ունեն, ուրիշ կերպ են ատում ու սիրում: Նրանց բազծանքներն էլ, ձգտումներն էլ տարբեր են: Մենք ամենքս բազմաթիւ դարերի պատմութեան կենդանի հատուածներ ենք:

«Համաձայնեցնել ու ի մի ձուլել երկու անձնաւուրութիւններ, որոնք ծնուել են տարբեր երկնքի տակ,

ստացել են ոչ հաւասար կրթութիւն, որոնց կրօնական, բարոյական, քաղաքական ու աւանդական իդէալները տարբերում են միմեանցից—այդ մի հնարաւոր, բայց չափազանց գժուարին գործ է և հազիւ է յաջողւում։

«Նայեցէք ձեր շուրջը և կը տեսնէք, որ այս տեսակի խնամիութիւնները հիմնուած են մեծ մասսամբ շահասիրական ու լաւ կապակցութիւններ ձեռք բերելու դիտումների վրայ, եթէ միայն անսանձ սէրը չէ լինում շառժառիթը, սէր, որի կատաղի ու աղմկալից ալիքները կլանում են այն ամեն դիտողութիւններն ու հաշիւները, որոնք խելացի ու խոհեմ պսակների հիմքն են կազմում։ Ազգայնուրեան տարբերութիւնը նուազեցնում է երջանելուրեան հնարաւորութիւնը ընտանիքի համար. բայց հարիւր անգամ աւելի պակաս են երջանիկ ընտանիքների թիւը, երբ ազգայնուրեան տարբերութեան վրայ աւելանում է եւ կրօնի զանազանութիւնը։

«Բուռն սէրը անհնար է առանց մեծ հաւատից Ռ'վ սաստիկ է սիրում, նա չնչին է համարում այն արգելքը, որ ներկայացնում է լեզուի, սովորութիւնների, վարք ու բարքի տարբերութիւնը. մի և նոյն է նրա համար, թէ եր կինը որտեղ է աղօթում—եկեղեցներ թէ մէշիդում։

«Սակայն այդ բուռն սէրը, որքանն էլ երկար լինի նրա տեսողութիւնը, դարձեալ կը նուազի մի օր, կը հանգստանայ և կը փոխուի քաղցր ու թանկագին սովորութեան։ Եւ երբ կրքի ծովը կը հանդարտուի, երբ ջուրը կը պարզուի ու թափանցիկ կը դառնայ, այն ժամանակ կ'երեան յատակին սփռած վտանգալից քարերը, որոնք մարմնացումն են կրօնի, յակումների, և սովորութիւնների տարբերութիւնից առաջացած սպառնալիքները։ Եւ այդ ապառաժները կը բարձրացնեն իւրանց գլուխները ջրեց դուրս ու կը խանդարեն, կը վտանգաւորեն նաւումն։ Երբ մեղքամնի լուսինը կը ծածկուի թանձր ամբերի քամակին, մեր արտարբերութեան տիղմի մէջ, կամ կը փշուի, դիազելով ընտաննեկան ան-

համաձայնութիւնների ու կռիւնների ալիքներին, այն ժամանակ այլւս ոսկին ու տիտղոսները անկարող կը լինեն կոծկելու նաւակի պատուածքները, և նրանցից շնած կարկատանները չեն փրկի զոյգին, քանի որ հոգիների ու մարմինների սրբազան միութիւնը ընդմիշտ կործանուած է արգելու:

Միայն բարոյական դիտումներով չէ որ դեկապարուել է Մանտեղացցան այս տողերը գրելիս նա խօսում է իբրև ֆիզիօլոգ և հոգեգետ:

Բեղմնաւորութիւնը, յղութիւնը, ծնունդը պյնպիսի մեծ ու բարդ ակտեր են, որ ամեն մի հոգեկան տրամադրութիւն, ամեն մի յուղմունք աղդում է նրանց կանոնաւորութեան վրայ: Իսկ յիշած ձեւի ամուսնութիւնները տարբեր տարբերի մէջ չէ կարող վրդովմունք չգցել կնոջ հոգեկան աշխարհում:

Եւ այդ հասկանալի է.

Այն լուսէից, երբ կինը ստիպուած է օտար խաչ ու աւետարոնի տակ, օտար լեզուով իր վճռողական «այն»-ն արտասանել, երբ նրան չնորհաւորական համբոյր են տալիս օտար աղցութեան և օտար դաւանութեան պատկանող մարդիկ—այդ ժամանակից նրան վիճակում է մի յաւիտենական հոգեկան ճնշումն, որքան էլ նա օտարացած լինէր արգելն իր աղդութիւնից ու կրօնից: Կիզիչ յուղմունքներն անդադար սեղմում են նրա սիրալը:

Հէնց միայն այն պերսոլիկախիվան—տեսնել իրանից ծնած զաւակին նոյն չափ օտարացած իրանից, որչափ է ամուսինը, զգալ, որ իր արգանդում աճող սաղմէ, որ մնւում է իր արիւնով, աշխարհ դալով, պիտի ընդմիշտ անջատուի նրանից, այդ միայն բաւական է, որ նա կորցնի իր հոգեկան հանգստութիւնը: Եւ նրա անդադար յուղուած գրութիւնը, նրա խղճի յարատե տանջումն, հիւանդու ու ներվային կը դարձնէ արգանդի զաւակին: Արգարացի է, ուրեմն, ժողովրդի մէջ դարերով ընդունուած այն կարծիքը, թէ յղի կնոջ հոգեկան շարժումները

(վախու, ուրախութիւնը, բարկութիւնը, վիշտը և այլն)  
սաստիկ վնասում են երեխային:

Դիտական գիտումները միանդամայն հաստատում  
են ժողովրդի այս, ի հարկէ չափազանցրած, համոզ-  
մունքը:

ԲԺՊ. Վ. ԱՐԾՐՈՒՆԻ

## ՎՐԱՍՏԱՆԻ ՄԻԱՅՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ

(ՀԱՐԻԿՐԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ)

### I

1801 թուականի փետրուարի 16-ին, Թիֆլիսում գտնուող ռուս զօրքի հրամանատար գեներալ Լազարեվը հրայիրել էր վրացիներին Սիօնի մայր եկեղեցին: Պատարագը վերջանալուց յետոյ Լազարեվը յայտնեց հաւաքուածներին թէ ինչու է կանչել նրանց: Կարդացուեց ռուսերէն լեզուով մի թուղթ, ապա և վրացերէն թարգմանութիւնը: Դա Պատել Լ կայսրի հրովարտակն էր, ստորագրուած դեռ 1800 թ. գեկտեմբերի 18-ին: Հրովարտակը յայտարարում էր թէ Վրաստանը ընդ միշտ և անդառնաւի կերպով միացւում է Ռուսաստանի կալուածքներին:

Վրաց կաթողիկոս Սնանը, որ Հերակլ թագաւորի որդին էր, ծնկաչոք դոհացողական մաղթանք կատարեց: Ամբողջ օրը եկեղեցիների զանգակաները զօղանջում էին, վողոցներում խռոնուած ժողովուրդը ուրախութիւն էր յայտնում, որ իր ցանկութիւնները հասան լաւ վախճանին:

Բայց հանդէսի մեծ և փառաւոր մասը մնաց միւս օրուան: Վեց օր այդ անցքից առաջ, փետրուարի 10-ին, Թիֆլիս էր մտել Յովսէփի կաթողիկոս Արզութեանը: Յայտնի է թէ որքան բարձր դիրք և հեղինակութիւն էր ստացել այս հազուագիւտ նշանաւոր հայ հոգևորականը Ռուսաստանում, ուր երկար տարիներ վարում էր ռուսահայերի առաջնորդի պաշտօնը, միացնելով դրա հետ քաղաքական և զրական մի գործունէութիւն, որ XVIII դարի մեր սպատմութեան մէջ փառաւոր տեղ է գրաւում: Այդ գործունէութիւնը վերջացաւ նրանով, որ Յովսէփը ուռաց կայսրի կողմից նշանակուեց ամենայն հայոց կաթողիկոս և այժմ Ռուսաստանից գնում էր կամիածին: Թիֆլիսում Արզութեանն ընդունուեց մեծ պատիւներով: Կուկիս գիւղի մօտ նրան դիմաւորեց վրաց արքայորդի Յովհան, որի հետ էին նշանաւոր

իշխանները: Կուկիայից մինչև քաղաք հասնելը՝ բերդից թնդանօթներ էին արձակուում ի պատիւ կաթողիկոսի \*):

Յովսէփի կաթողիկոսի եռանդուն ջանքերի զլսաւոր նպատակն էր՝ ոռւաների աջակցութեամբ ազատել Անդրկովկասը մահմեդական բանակալութիւնից: Նրա ծրագիրները աջողութիւն չունեցան: Գտնուելով Թիֆլիսում մի այնպիսի օր, երբ Վրաստանը յայտարարում էր ոռւական սեփականութիւն և հիւսիսային արծիւը վերջնականապէս հաստատուում էր Կովկասեան սարերի հարային ստորոտում, կաթողիկոսը մի շքեղ տօն սարքեց՝ այդ պատմական խոշոր գէպքը ողջունելու համար:

Փետրուարի 17-ի օրը կիրակի էր: Առաւօտեան ժողովուրդը հաւաքուեց բերդի եկեղեցում: պատարագից յետոյ կազմուեց եկեղեցական թափօր, որ անցաւ ամբողջ քաղաքի միջով և ուղևորուեց գէպի քաղաքից դուրս գտնուող հայոց Վանքի եկեղին:

Միմեանց ետեից, երկու շաբուվ, գնուամ էին 74 քահանաներ: Դրանց հետեւում էին 8 վարդապետներ, իսկ սրբնց ետեից երեք սարկաւագներ, որոնցից մէկը տանում էր մեծ արծաթեայ խաչը, իսկ մենացածները—վառած մոմնք: Սարգաւակների ետեւփոյ գնում էին Թիֆլիսի նշանաւոր հայերից երկուաը, որոնք տանում էին Պաւել կայսրի պատկերը. պատկերից յետոյ զգեստաւորուած գնում էր վրայ միորօպօլիսոր, բայց առանց թագի, զլիփ վրայ բռնած մի արծաթէ մատուցարան, որի վրայ գրուած էր կարմիր քօղով ծածկուած կայսերական հրովարտակը: Մի սարկաւագ տանում էր միորօպօլիտի թագը, միւսը—գաւաղմանը: Հրովարտակի ետեից երկու վարդապետներ տանում էին Աստուածածնի պատկերը, որին հետեւում էր Թիֆլիսի հայոց առաջնորդ Սարգիս արքեպիսկոպոսը՝ խաչը բռնած:

Թափօրին հետեւում էր ժողովրդի ահագին բաղմութիւնը: Երբ նա զուրս եկաւ բերդի գռներից, հանգէսին միացան արքայորդի Թաւիթը իր եղբայրների և բաղմաթիւ իշխանների հետ, ոուս զեներաներ եղագարել և Գուլեակօվ, նոյնպէս և թիֆլիսում եղած ոուս զօրքի օֆիցիեները: Յովսէփի կաթողիկոսը զգեստաւորուած, չորս եպիսկոպոսների և չորս վարդապետների հետ զիմաւորեց թափօրը Վանքի եկեղեցու բակում: Նա տուեց իր խաչն ու գաւաղանը շրջապատազներին, մօտեցաւ Պաւել կայսրի պատկերին, ինսկարկեց նրան, ծունը զրեց նրա առջն, ապա համբուրելով պատկերը, բարձրացրեց և արտասանեց.

\* ) Акты Кавказ. Археогр. Комм., т. I, № 659.

—Կեցցէ մեծ օգոստափառ թագաւորը իր ամբողջ ընտառնիքի հետ:

—Ամէն, ամէն, պատասխանեց ժողովուրդը:

Տալով պատկերը բերողներին, կաթողիկոսը վերցրեց հրովարտակը, և դնելով իր զլսի վրայ, ասաց.

—Երկնային Արարիչը թող բարձրացնէ և ամրացնէ մեծ Պաւլի թագաւորութիւնը, ինչպէս արեգակ և լուսին, յաւիտեանս յաւիտեանից...

—Ամէն, ամէն, լուսում էին ձայներ ժողովրդի միջից:

Թափօրը մտաւ եկեղեցի: Սեղանի առաջ, զիսլակով ծածկուած մի սեղանի վրայ, զրուեցին հրովարտակը և կայսրի պատկերը: Պատարագիչը ինքը, կաթողիկոսն էր: Եկեղեցին չէր կարողանում տեղաւորել իր մէջ ահագին բազմութիւնը: Սյատեղ ներկայ էին վրաց արքայորդիները, արքայադատորերը, Հերակլի ամուսին Դարեջան թագուհին, կաթողիկոս Անտոնը, իշխանները և վրաց ամբողջ բարձր հոգեորականութիւնը: Պատարագից յետոց Յովսէփ կաթողիկոսը դիմեց բազմութեանը հետեւալ խօսքերով.

«Ո՞րպիսի ուրախութիւն է գծագրուած ձեր գէմքերի վըրայ, բարեպաշտ քրիստոնեայ ժողովուրդ: Տեռնելով նրան, ևս հարկագրուում եմ մի պատկառանկով, որ այժմ լցնում է իմ ամբողջ սիրուը, բացականչել. ով մեր փրկութեան օր, ով բարորութեան օր, մի օր, որ տանում է մեղ գէպի իսկական երջանկութիւն և հանգստութիւն, ով օր, երբ ամրանում է մեր բարեբախտ վիճակը, օր, որին չը հասան մեր նախնիքները: Եւ ինչ կը մատուցանենք Ամենաբարձրեալ Արարչին: Շնորհակալութիւն թէ աղաչանքներ, թէ մեր հոգիների խոնարհացում այն ամենի համար, ինչ գալիս է նրանից... Զենք դադարի արտասուլներ թափելուց, անդադար կը փառաբանենք Նրա ամենամաքուր անունը, քանի որ արժանացել ենք մարդասէր կայսր Պաւլի առատութիւններին. կայսրը, զիջանելով մեր խոնարհ աղերսանքին՝ մեղ իր հպատակների թւում ընդունելու մասին, ոչ միայն չէ հետացնում մեզ, այլ խոստանում է բարօրութիւն և անդորրութիւն, չը սպասելով մեղանից մի ուրիշ բանի, բացի հաւատարմութիւնից գէպի իր աստուածապահ գահը:

«Ես—այսպէս վերջացրեց նա իր խօսքը—ձեր ամենախոնարհ հովիւը, անդադար աղաչում եմ ամենաբարի Աստուծուն, որ երկարացնէ մեր թագաւորի և նրա ամբողջ ծիրանակիր ընտանիքի օրերը» \*):

\* ) Дубровинъ. Георгий XII и Присоединение Грузии къ Россіи, СПБ., 1897, եր. 199—201. Այս գրքից մենք վերցնում ենք մեր տեղեկութիւնների մեծ մասը:

Ժողովուրդը բարեմաղթութիւններ արաւ։ Ապա կարգացուեց Պալի հրովարտակը նախ ոռւսերէն, յետոյ հայերէն և վրացերէն լեզուներով։

Մի և նոյն ժամանակ մի ոռւս օֆիցէր 24 կօղակների հետ Թիֆլիսի փողոցներում կարդում էր միացման հրովարտակը։

Յովսէփ կաթողիկոսը պատարազից յետոյ հիւրասիրեց բոլոր բարձրաստիճան անձնանց ճաշով։ Վանքի բակում զարկուած էին վրաններ, որոնց մէջ էլ բացուեց ճաշի սեղանը։ Ամրադլօրը և կեղեցիների զանգահարութիւնն էր լուռում, իսկ երեսյեան լուսավառութիւն կար, որով և վերջացաւ հանդէսը։

Մարտի 6-ին կառավարիչ Սենատը հրաման արձակեց որ նախկին վրաց թագաւորութիւնը անուսանուի Վրացական նահանգ, Այդ հրամանը գեռ չէր ստացուել Թիֆլիսում, երբ այդտեղ վախճանուեց Յովսէփ կաթողիկոսը (մարտի 9-ին)։ Իսկ երեք օր յետոյ, 12-ին, Պետերբուրգում վախճանուեց Պատել կայսրը։ Բայց Վրաստանի միացումը գեռ վերջնական չէր։ Ի՞նչպէս կը տեսնենք յետոյ, այդ գործը մի քանի ամիս էլ ձգձգուեց։

## II

Ռուսաց կառավարութեան այդ ձեռնարկութիւնը, որ նըկարագրեցինք նախընթաց գլխում, մեր երկրի համար անհուն մեծ նշանակութիւն ունէր. Կովկասի համար նոր դարագլուխ սկսուեց։ Ասիայի այս անկիւնը, որ դարերից ի վեր ամենասոսկալի բռնութիւնների տակ էր հեծում և ներկայացնում էր արեան ու արտասուքների մի դժբախտ հայրենիք, մտնում էր հանգստութեան և խաղաղութեան շրջանը։ Դա բաւական չէ։ Ռուսաց զէնքը ոչ միայն մտցրեց մեր մէջ օրինականութիւն, պատուի, գոյքի և իրաւունքի պաշտպանութիւն, այլ և բաց արեց այն ճանապարհը, որով մեր երկիրը պիտի մօտենար քաղաքակիրթ աշխարհին, մասնակից լինէր այն բարիքներին, որոնց հասել էր առաջադէմ մարդկութիւնը Եւրոպայում։

Մենք ուրիշ անգամ կը ներկայացնենք մեր ընթերցողներին Կովկասի նորագոյն պատմութեան այդ հարիւրամեակը, որի պաշտօնական սկիզբն է 1801 թուականի փետրուարի 16-ը։ Առայժմ մենք դորձ պիտի ունենանք միայն այն խոչոր պատմական անցքի հետ, որ Վրաստանի միացումն է։

Առաջին անգամից տարօրինակ է թւում վաստը։ Վրաց թագաւորութիւնը վերջ էր դնում իր գոյութեան ոչ այնպէս, ինչպէս առհասարակ մեռնում են ազգերի անկախութիւնները։

Ռումները նուաճողի իրաւունքով չէին մտել Վրաստան, այլ զիջանելով Հերակլ Ա-ի և Գիօրգի Ա-ի թալսանձանքներին: Այդ երկու թագաւորները թողել էին բազմաթիւ սերունդ, հետևաբար թագաւորով տան սպառման մասին էլ խօսք չէր կարող լինել: Բացի դրանից, Հերակլ Ա իր 54-ամեայ թագաւորութեան ընթացքում վաստակել էր ժողովրդական հերոսի անուն, շատ աշողակ էր պատերազմական գործողութիւնների մէջ, կարողացել էր ոչ միայն պաշտպաննել իր երկիրը, այլ և հարկատու դարձնել երնանի խանութիւնը: Ի՞նչպէս էր որ ԽՎԱ դարում շատ լաւ օրեր տեսած և սնցեալի համեմատութեամբ աւելի ուժեղացած վրաց թագաւորութիւնը յանկարծ, հազար տարիներ գոյսութիւն պահպանելուց յետոյ, քայլացուեց, ցրիւ եկաւ՝ խաղաթզթերից շնչած տան նման:

Այս հարցը մեր առջի բաց է անում պատմութեան անողոք օրէնքներից մէկը: Վրաստանի անցեալի մի թուոցիկ տեսութիւնը հեշտ կը բացատրէ մեզ այդ գաղտնիքը:

Երբեք մի փոքրիկ պետութիւն Առաջաւոր Ասիայում, Կըրաստանը քաղաքական ճակատագրի կողմից բաւական նման է Հայաստանին, ինչպէս վերջինս էլ նման է զանազան ուրիշ փոքրութիւններին: Առաջաւոր Ասիայի բոլոր մանր ազգութիւններին վիճակուած էր, պահպաններով տեղական սահմանափակ անկախութիւն, հպատակութել համաշխարհային այն անեղ բռնակալութիւններին, որոնք յաջորդում էին իրար աշխարհի այդ մասում: Ասիան աշխարհակալ բռնապետութիւնների հայրենիքն է: Հրով և սրով տիրապետելու ընդունակութիւն ունեցող ազգերը գասնում էին աշխարհի տէրերը: Դրանց ամբողջ հարստութիւնը՝ նուաճած փոքր ազգութիւնների այն բազմութիւնն էր, որ ամեն կերպ կեղեքուած էր յաղթողների փառքը մեծացնելու համար: Այդ տեսակ մեծ բռնակալութիւնների նախատիպ Ասորեստանը կթէ իր անդադար արշաւանքների ժամանակ չը կարողացաւ զօրքնը իջեցնել կուր գետի հովիտը, դրա պատճառը Ռւբարտեան աշխարհն էր, որին աջողուած էր համարձակ դիմադրութիւններով մի ամուր պատ քանիլ այդ արիւնարբու զինուորական պետութեան և հիւսիսային երկիրների մէջ: Ասորեստանի ժառանգ հանդիսացած Պարսկաստանը այդախի դիմադրութեան չը հանդիպեց և իր սահմանները հասցըւց կովկասեան սարերին: Աքեմենեանների ժամանակ, ինչպէս վկայուած է Հերօնոս, Կողքիսը, Վրաստանի մի մասը, տալիս էր պարսից արքունիքին մի կամաւոր, բայց վերին աստիճանի ամօթալի հարկ.—հինգ տարին մի անդամ նա Պարսկաստան էր ուղարկուած հարիւր աղջիկ և հարիւր տղայ:

Քրիստոնէութիւնը Խ դարում համարեա միաժամանակ մտաւ Հայաստան և Վրաստան: Բայց նոր կրօնը չը փոփոխեց քաղաքական գրութիւնը. Վրաստանը դարձեալ Պարսկաստանի հսկատակն էր և գտնւում էր նրա կուլտուրայի ազդեցութեան տակ: Պարսկաստանի տեղը բանեց մահմեդական Արարիան, որ նոյնպէս նուածեց բոլոր երկիրները մինչև Կովկասի լեռնաշղթան: Արաբական հարստութիւնը անցնում է Միջին-Ասիայի վայրենի ցեղերին, որոնք պատմութեան աստարէզ և իջնում իրրե Աստուծու պատիժները. Զինգիզ-խանի, Լէնկթիմուրի ձիաւոր օրդուները աւերեցին ամբողջ Անդրկասկիասը, բերելով իրանց հետ միմեանց յաջորդող, միմեանց ձեռքից արիւնահեղ ընդհարումներով իշխանութիւն խլող ցեղերի և դինաստիաների մի ամերդ քառա: Այդ քառակից վերջ ի վերջոյ մնում են երկու թաթարական մեծ բանապետութիւններ. Թիւրքիան արևմուտաքում և Պարսկաստանը՝ արևելքում: Դրանց մէջ կուռածաղիկ են դառնում քրիստոնեայ երկու երկիրները—Վրաստան և Հայաստան. երկուն էլ դժբաղդ, արնաքամ:

Ահա երկու դրայի աղդերի սպատմական ճակատագրի մէջ նմանութեան ինչ ընդհանուր գծեր կան: Բայց շատ դէպքերում էլ տարբերում է հայերի և վրացիների ճակատագիրը:

Ամենից առաջ աշխարհագրական դիրքը: Հայաստանը կանգնած է այն ճանապարհների վրայ, որոնցով անյիշելի ժամանակներից ի վեր սախական աղդերը դիմում էին արևելքից դէպի Միջնարկրական ծովի ափերը. մինչդեռ Վրաստանը ոչ միայն այդ ճանապարհների վրայ չէ, այլ և իր ետևում ունի Կովկասնան ձիւնապատ և անանցանելի լեռնաշղթան: Հայաստանը միշտ կսինկուում է անցնող-դարձողների ոսների տակ. դա մի միջնաշխարհ է, ուր կանգ են առնում նուածող ցեղերը, ուրոնց հարկաւոր էր ոչ միայն պատերազմական աւար, այլ և ընակութեան տեղ, հայրենիք: Եկողները կոտորում, դուրս էին մղում ընթիներին և այն պատճառով, որ հաստատուեն նրանց հողերի վրայ: Հետեւնքը այն եղաւ, որ Հայաստանում չը մնաց միապաղպաղ աղգաբնակութիւն, մինչդեռ Վրաստանը, թէև նոյնպէս աւերուում և արիւնլուայ էր գտնում, բայց պահպանեց իր աղքաբնակութեան կենարունացումը և մեծ գաղթականութիւններ չը հանեց իր միջից: Բացի գրանից Վրաստանը հարկադրուած չէր Հայաստանի նման ընդհարումներ ունենալ արևմըւտեան քաղաքակիրթ աշխարհի հետ: Դեռ քրիստոնէութիւն ընդունելուց առաջ Հայաստանը ընտ դարձաւ. հռոմէական-պարսկական պատերազմների համար, իսկ Տիգրանի ժամանակ ատիալ ուաւած էր լարել իր ոյժերը և ահազին դոներ տալ Հռոմի դէմ

սկսուած պատերազմների մէջ։ Հռոմին յաջորդեց Բիւզանդիան, որ շարունակեց նրա արևելեան քաղաքականութիւնը։ Քրիստոնեայ վրաստանը շուտով միացաւ յունական եկեղեցուն. մինչդեռ Հայաստանը, պահպանելով իր եկեղեցական անկախութիւնը, հնիտարկուեց Բիւզանդիայի հալածանքներին և երկար ստիպուած էր դիմագրել մի կողմից յալամի արշաւանքներին, իսկ միւս կողմից յունական օրթօգօքսութեան անողորմ հարուածներին։

Այդ նպաստաւոր համսդամանքներն էլ իրանց մեծ նշանակութիւնն ունէին այն պատմական իրողութեան մէջ, որ վրաց թաղաւորութիւնը անընդհատ շարունակուեց մինչև XIX դարի սկիզբը։ Եւ սա մի գարմանալի երևոյթ էր։ Սակաւակեաց էին, շուտ ոչնչացան հայոց թագաւորութիւնները Շիրակում, Լոռում, Սիւնիքում, Վասպուրականում. ոչնչացան Ռուբինեանները, որոնք անկախութիւն պահպանելու համար հեռացել էին մայրհայրենիքից և ապաւինել Կիլիկիայի լեռներին. վերջապէս Բիւզանդիայի հաղարամեայ գահն էլ կործանուեց, Սերբիան և Բոլգարիան կորցրին իրանց անկախութիւնը։ Ամեն ինչ տեղի տուեց յաղթական խալամին. նա տիրում էր Դուռնայ դեսից մինչև Նեղոսի միջին ընթացքը, Աղրիական ծովից մինչև Հընդկաստան։ Եւ այդ համատարած ովկիանոսի մէջ միայն Վրաստանն էր մի քրիստոնեայ երկիր, որ գէթ անուանական թագաւորութիւն էր պահպանում։ Աւելի գարմանալին այն է, որ համարեա ամբողջ հաղար տարի միայն մի թագաւորող տոհմ կար Վրաստանում—Բագրատունիների տոհմը։

Վրաց թագաւորութիւնը ունեցել է և իր փայլուն շրջանները։ Այսպէս են Դաւիթ Վերանորոգողի, բայց մանաւանդ հըռչակաւոր թամար թագուհու ժամանակները (XII—XIII դար), երբ Վրաստանը միացած էր, ուժեղ, ոչ միայն աջողութեամբ գիմազրում էր գրսից եկած արշաւանքներին, այլ և ինքը յարձակողական գիրք էր ընդունում և նուաճումներ էր տարածում գէպի հարաւ, արևելք և արևմուտք։ Թամարի ժամանակ էլ ծաղկեց Վրաց գրականութիւնը։ Բայց փոքր ի շատէ փայլուն և մեծագործ մօմենտներ մենք կարող ենք գտնել իւրաքանչիւր ազգի պատմութեան մէջ. մինչդեռ մի ազգի ընդհանուր ճակատադիրը որոշելու համար չը պէտք է վերջնել առանձին-առանձին շրջաններ, այլ պէտք է դումարել պատմական անցեալի տուած միջին թուերը։ Այսպէս նայելով Վրաստանին, մենք տեսնում ենք, որ դա էլ, ընդհանրապէս, մի խեղճ ու դժբաղդ երկիր էր, ինչպէս Հայաստանը։ Դրսից ահեղ հարուածներ և ներսից՝ քայլայում, որ գնալով աւելի և աւելի սաստկանում

է—ահա վրաց ազգի ճակատագիրը։ Մի և նոյն դժբաղդութիւնը չըր, որ ծանրացած էր և ձայսաստանի վրայ, երբ նա ունէր անկախութիւն։

Ամենամեծ դժբախտութիւնը Վրաստանում, ինչպէս և մեղ մօտ, երկրի ֆէօգալական կերպարանքն էր։ Կենտրոնական իշխանութիւնը միշտ թոյլ էր, իսկ բազմաթիւ կիսանկախ մեծ ու փոքր իշխանութիւնները կազմալուծութիւն էին մոտցնում պիտական մարմնի մէջ իրանց անդադար դիմադրութիւններով կափէներով և եղբայրասպան խռովութիւններով։ ԽՎ դարում ֆէօգալական սիստեմը կատարեալ յաղթանակ է տանում պետական միութեան գաղափարի դէմ։ Կազմուում են չորս անկախ թագաւորութիւններ—իմերէթիա, Կախէթ, Քարթալինիա և Աշխալցխայի աթաբէկութիւնը։ Բայց դրանից երեան են զալիս չորս անկախ իշխանութիւններ—Մինպրելիայի, Գուրիայի, Արևիանի և Սվամնէթիայի։ Այդ ժամանակից Վրաստանը ստորագրում է իր մահուան գատավճիռը և սկսում է քարշ տալ մի ողորմնի գոյութիւն, խաղալիք դարձած թիւքների և պարսիկների ձեռքին։

Բայց կար Վրաստանում մի սարսափնի դրութիւն էլ, որ յատուկ չէր արևելեան երկիրներին։ այդտեղ գոյութիւն ունէր նօրսութիւնը։ Ժողովուրդը երկու գասակարդ էր կազմում—զիւղացի և ազնուական։ չը կար երրորդ գասակարդ։ Վրացին ստորութիւն էր համարում վաճառականութեամբ պարապնիլ և այդ «ստոր» պարապունքը թողնուած էր հայերին և հրէաներին, որոնք Վրաստանի սակաւաթիւ քաղաքների ազգաբնակութեան գիխուոր մասն էին կազմում։ Միշնագարեան ասպետականութիւնը միակ իդէալն էր վրացիների համար, ֆէօգալական ամբոցում ապրում էր ճօրտատէր աղնուականը, իսկ ամրոցի շուրջը բնակութիւն էր հաստատում նրա ստրուկ ժողովուրդը, որ պարտաւոր էր զօրք կազմնել նրա համար, իր աշխատանքով ապրեցնել այդ փոքրիկ թագաւորին։ Երկիրը կտրատուած էր այդպէս, ներկայացնում էր մանր անկախութիւնների մի շանց, որ թոյլ հապատակութիւն էր ցոյց տալիս թագաւորին, համարեա ոչինչ ներքին կապով չէր միացած։ ընդհակառակը, իւրաքանչիւր ֆէօգալական ամրոց տնէր իր առանձին շահերը, իր աեղական ձգառումները։ կուրք, որսը ամեն մի ազնուականի գտղափարն էր։ Ժողովուրդը կեղկըւում էր, աղէտ էր, աղքատութեան ծայրին հասած։ նա ոչ միայն իր գոյքի տէրը չէր, այլ և ստրուկ էր, այսինքն կազմում էր կալուածատիրոջ սեփականութիւն, նրա շարժական կայքը։

Այսպիսի ներքին կազմակերպութիւն ունեցող մի երկիր

բնակրանաբար պլոտի երերուէր և տակն ու վրայ դառնար շարունակ, Շրջապատուած լինելով թշնամի աղգութիւններով (պարսիկներ, թիւրքեր, լէզգիներ), Վրաստանը ծուատում էր անդադար, արիւնաքամ էր լինում: Վրաց ազգը մի նահատակ էր դարերի ընթացքում: Ազնուակրան գառը, թագաւորող տոհմերը խրուած էին անբարոյականութեան մէջ: Հայրենիքի շահերը մոռացուած էին, ամեն տեղ փառասիրութիւնը, տիրելու տենչչանքը սոսկալի օճիւներ էին գործում, անասելի տանջանքներ պատճառելով թշուառ ժողովրդին: Այդ անբարոյականութեան ամենախայտառակ կերպարանքը այն խոչոր փաստն է, որ չունի իր նմանը պատճութեան մէջ—մահմեղակրան թագաւորների մի երկար չարք Քարթալինիայում և Կախէթիում:

XVI գարի վերջից վրաց թագաւորները, Պարսկաստանի չորրհները վայելնու համար, սկսում են մահմեղականութիւն ընդունել: Միայն այս պայմանով Շահ-Աքաս մեծը համաձայն էր տալ Վրաստանին ինքնավարութիւն: Հաստատուեց մի այսպիսի կարգ: Թագաւորը անպատճառ մահմեղական պիտի լինի և նշանակուում է պարսից արքունիքի կողմից, նրա ժառանգը կրթուում է մահմեղական հոգով Սպահանում: Ժողովրդին թոյլ էր տրւում պաշտել իր կրօնը և կառավարուել իր հին օրէնքներով: Այս խզճուկի ինքնավարութեան կարգը պահպանուեց մինչև XVIII դարի առաջին քառորդի վերջը և մի կատարեալ դժբախտութիւն էր Վրաստանի համար:

Մահմեղականացած վրացի թագաւորների \*) մէջ կային այնպիսիները, որոնք հաշտ էին ասլրում քրիստոնէութեան հետ և առերևս էին գաւանում իսլամը: Բայց այդպիսիները շատ անհնան թիւ էին կաղմում. մնացածները իսկական, ֆանատիկոս մուսիլմաններ էին և տանջում ու կեղեցում էին իրանց հապատակներին. եղան այնպիսիները, որոնք քանդեցին եկեղեցիները, աշխատում էին իսլամը հաստատել իրանց հայրենիքում: Բայց այդ փորձերը դեռ մեծ ցաւ չէին: Խսկական դժբախտութիւնը այն անվերջ, արիւնահեղ կոիւներն էին, որ այդ հաւատուրացները մասնաւմ էին թշուառ երկրի մէջ: Երկու խղճուկ, գաւառական գահերի շուրջը միշտ խմբաւած էին վառամոլ, հայրենիքի շահերի մասին ոչ մի հասկացողութիւն չունեցող թեկնածուներ: Խւրաքանչիւրն աշխատում էր տապալել իր հակառակորդին, նսոնել նրա տեղը. խւրաքանչիւրը, չունենալով սեփական ոյժ, դիմում էր պարսիկների օդնութեան, խոստումներ էր

\*) Նրանք թագաւոր անուն կրում էին Վրաստանում, իսկ պարսիկները նրանց «խան» անունն էին տալիս:

անում, իրան ձեւացնում էր ամենամոլի մուսիլման և ողարսկական զօրք էր ստանում՝ իր աղջականների, իր հայրենակիցների գէմ կռուելու համար։ Որդին պարսիկների հետ մտնում էր թագաւորող հօր տունը, կտրում էր նրա զլուխը, սպանում էր իր եղբօրը՝ գահի վրայ գէթ մի քանի ամիս նստելու համար, մինչև որ մի ուրիշը կը դար նրան տապալելու։ Անիրաւութիւնները ուահման չունէին, եղբայրը խլում էր եղբօր այրիին, մահմեղական օրէնքով նրա հետ ամուսնանալու նսպատակով։ Պարսից արքունիքի սիրութ շահելու համար այդ թագաւորները հաւաքում էին երկրի մէջ եղած զեղեցիկ աղջիկներին ու տըղաներին և ընծայ էին ուղարկում պարսկական հարեմները։ Դեռ Հերօդոտի ժամանակ գոյութիւն ունեցող անպատիւ, ամօթալի հարկը կամաւորապէս շարունակում էին այս մուսիլման թղուկ թագաւորները։

Ճիշդ է որ ձուկը զլիսիցն է հոտում։ Թագաւորողների անբարոյականութիւնը բարձր, աղնուական դասակարգի համար վարակիչ օրինակ էր, իրանց անձական շահերին նուիրուած այդ աղնուականները նոյնպէս ջանք էին թափում պարսիկներին հաճոյանալու և մահմեղականութիւն ընդունելը նրանց համար էլ սովորական էր. այդ միջոցով նրանք տիրանում էին աւելի մեծ իրաւունքների։ Թագաւորին հպատակուելու մասին, ի հարկէ, խօսք լինել էլ չէր կարող եւ երկիրը կառավարողը թագաւորը չէր, այլ պարսից այն զօրաբաժննը, որ մշտապէս ապրում էր Թիֆլիսում նա էր հրամայում, առնում, տալիս երբ մոռնում էր մահմեղական թագաւորը, նրա մարմինը չէին թողնում Վրաստանում, այլ ուղարկում էին Պարսկաստան։ Պարսկական լեզուն և գրականութիւնը տիրում էին վրացիների մէջ, մոռացնել տալով սեփական, մայրենի խօսքն ու գիրը։

XVIII դարի առաջին քառորդի վերջերում օսմանցիները նուածեցին Վրաստանը։ Երբ Նազիր-Շահը յազթեց օսմանցիներին և յաւ խլեց նրանցից պարսկական բոլոր կալուածքները, վրաց թագաւորութիւնը նորից վերականգնուեց։ Բայց Նազիրը թոյլ տուեց վրաց թագաւորներին դաւանել քրիստոնէական կրօնը։ Կախէթի և Քարթալինիայի թագաւորութիւնները նա տուեց Թէյմուրազին և նրա որդի Հերակլին։ Թէյմուրազը չը կարողացաւ իր որդու հետ խաղաղ մնալ և հեռացաւ Ռուսաստան, իսկ Հերակլը միացրեց Կախէթը և Քարթալինիան ու սկսեց թագաւորել երկուսի վրայ։ Դա մի ընդունակ, քաջ մարդ էր և իր անձնական ձիրքերի չնորհիւ կարողացաւ պատուաւոր դիրք ստեղծել Վրաստանի համար։ յազթեց պարսիկներին և օսմանցիներին, ընդպարձակեց պետութեան սահմանները։ Բայց

այդ հերոսը միանգամայն անկարող էր բժշկել Վրաստանի ներքին վէրքերը։ Անդադար փառդ ներքին կազմակերպութիւնը, որ տանում էր Վրաստանը դէպի կատարեալ քայլայում, անկարելի եղաւ բարեկարգել։ այդ բանը վեր էր Հերակլի ոյժերից։ Հերակլը տեսնում էր, որ չը պիտի կարողանայ մի այդպիսի թոյլ, աղքատ, քայլայուղ երկրի ոյժերով դիմադրել արտաքին թշնամիների հարուածներին, ուստի մտաւ Ծուսաստանի հովանաւորութեան տակ, ստացաւ ուստաց արքունիքից թագ և ծիրանի։ 1783 թուականի գանադրութեամբ Ծուսաստանը յանձն էր առնում օգնել վրացիներին իր զօրքերով, իսկ Վրաստանը դառնում է Ծուսաստանի վասալ, այսինքն նրա զերիշխանութեան ենթակայ։

Բայց քաջ թագաւորը և ուժեղ պետութեան հովանաւորութիւնը չէին կարող ուշացնել այն խորտակումը, որ սկսուել էր վրաց թագաւորութեան մէջ շատ վաղուց։ Բաւական էր մի ուժեղ հարուած, և Վրաստանը տակն ու վրայ դարձաւ ու այլ ևս չը կարողացաւ ոտքի կանգնել։ Այդ հարուածը Աղմա-Մամադիանի արշաւանքն էր 1795-ին։ Հերակլը չը վախեց իրանի սարսափելի Շահից, իբրև քաջ զինուոր, նա գնաց թշնամու ահաւգին բանակի դէմ։ Բայց ինչ ոյժ ունէր երկիրը նրան մի բուռուը զօրք էր միայն տուել։ Թէ ինչքան սոսկալի էր այն ներքին վիշապը, որ քարոքանդ էր անում վրաց երկիրը, ցոյց է տալիս հետեւեալ փաստը։ Իմերէթիայի թագաւորը օգնական զօրք էր ուղարկել Հերակլին՝ պարսիկների դէմ կոտուելու համար։ Բայց այդ զօրքը, գետ թշնամու երեսը չը տեսած, յետ վերադարձաւ, նախապէս լաւ կողովտելով թէ թիվլիսը և թէ այն բոլոր տեղերը, որոնք նրա ճանապարհին էին գտնուում։ հազարաւոր անպատճան ընտանիքներ այդ զօրքի ձեռքով գերի գնացին։ Եւ պատմագիրը \*) իրաւունք ունի ասելու թէ իմերէների այդ օգնութիւնը աւելի օրհասական էր Վրաստանի համար, քան նոյն իսկ պարսից ներքինի Շահի արշաւանքը։

Հերակլի անձնական հերոսութիւնը այլ ևս ոչինչ չէր կարող վրկել։ Անպաշտպան մնացած Թիֆլիսը մատնուեց պարսկական գաղանութիւններին։ թագաւորը փախաւ, հազիւ ազատելով իր գլուխը, նրա թաղը, ծիրանին, բոլոր զոյքը ընկաւ պարսիկների ձեռքը։ Ներքինի Շահը անոթարար քանդեց, աւերեց թիվլիսը և նրա բնակիչներին հազարներով զերի ուղարկեց Պարսկաստան, ուր նրանք վաճառւում էին անսունների նման։ Վրաստանը չնշանպա էր դարձել իր աւերակների տակ։

\*) Դյուրովին, «Գեօրգի ԽII», եր. 28.

Եւ զարհութելի աղէտը ոչ ոքին խելքի չը բերեց, չը կարողացաւ միախմբել վրայիներին՝ գոնէ այդ հոգեվարք հայրենիքին սրբութեամբ ծառայելու համար։ Աւերանքին հետեւցին, ինչպէս միշտ, սովոր ու ժամանակար:

Դժբախտ ժողովրդի մասցորդները դեռ ողբում էին աւերակների մէջ իրանց սև բախտը, երբ վախճանուեց ծերունի, վշտահար թագաւորը (1798 թ. յունուարի 11-ին): Դրութիւնը աւելի ևս վատացաւ: Ներքին ցաւերի վրայ աւելացան վրաց ջախջախուած գահին աչք դրածների խռովութիւնները. դրանք վերջնականապէս սպանեցին Վրաստանը:

Հերակլը ամուսնացած էր երեք անգամ: Օրէնքով նրան պիտի յաջորդէր Գիօրգին, որ ծնուած էր նրա առաջին ամուսնութիւնից: Բայց Հերակլի երրորդ ամուսինը, Դարեջան թագուհին, մի եռանդու և գործունեայ կին, աշխատում էր որ գահը իր հարազատ որդիներին մնայ: Այդ պատճառով նա Հերակլին ստորագրել էր տուել մի թուղթ, որով սահմանում էր գահաժառանգութեան նոր կարգ: Գիօրգիի մահից յետոյ ժառանգ էր հանդիսանում ոչ թէ Գիօրգիի մեծ որդին, այլ Դարեջան թագուհու մեծ որդին: Զը նայած այս թղթին, Գիօրգին հետութեամբ չը թագաւորեց: Դարեջանը փորձեց իշխանութիւնը իր ձեռքներին առնել կամ գոնէ Գիօրգիի հետ հաւասար իրաւունքով թագաւորել: Այդ փորձը չաջողուեց և Գիօրգին ժառանգեց գահը:

Բայց սա մի շատ գժբախտ թագաւոր էր: Կառավարելու ոյժ և ընդունակութիւն չունէր, հիւանդու էր, կրօնամոլ, շրջապատուած խնտրիգներով: Եթէ Հերակլի պէս զինուոր-թագաւորը իր երկարամեայ թագաւորութեան միջոցին չը կարողացաւ բժշկել իր երկրի ներքին խոցերից և ոչ մէկը, թոյլ Գիօրգին աւելի ևս անկարող պիտի լինէր մի բան ազատել ընդհանուր կործանումից: Ոչինչ չը կերպարանափոխուեց, նոյն անապատ երկիրը, նոյն հարստահարող ազնուականութիւնը, նոյն անկարգութիւնը: Այդ պատճառով Գիօրգին մի բան միայն կարողացաւ անել. բանակշութիւններ սկսեց ոռւսաց արքունիքի հետ, առաջարկում էր Վրաստանը միացնել Ռուսաստանին, այն պայմանով որ ինքը և իրանից յետոյ իր մեծ որդի Դաւիթը թագաւոր մնան, բայց կառավարեն երկիրը ոռւսաց պաշտօնեաների աջակցութեամբ և զեկավարութեամբ: Պաւել կայսրը ընդունեց այդ առաջարկութիւնը, թագաւուանդ հաստատեց Դաւիթին, ոռւսաց մի զօրագունդ, գեներալ Լազարեվի հրամանատարութեամբ, մտաւ: Թիֆլիս: Արտաքին թշնամիներից Վրաստանը այնուհետև կարող էր չը վախենալ. բայց Դարեջանը իր որդիներով շարունա-

կում էր դիմադրել Գիօրգիին, զանազան ինտիմներ էր սարգում, պահանջում էր որ կատարուի Հերակլի կտակը: Խռովութիւնները սաստկանում էին. երկու հակառակ կուսակցութիւնները գործում էին միմևանց դէմ ամենայն եռանդով:

Իսկ Գիօրգիի հիւանդութիւնը գնալով սաստկանում էր: 1800 թուի նոյեմբերին արդէն յայտնի էր որ թագաւորը չի ապրի մինչեւ գարուն: Դեռ կենդանի էր նա, գետ քանակցութիւնները Պետերբուրգի արգունիքի հետ վերջնական ձեւ էլ չէին ստացել, բայց զահի թևենածուները արդէն ոտքի էին կանգնել: Մի կողմից Դարեջանի կուսակցութիւնը հարկադրում էր ժողովրդին հպատակութեան երդում տալ իւլօն արքայորդուն, միւս կողմից Դաւիթին էր իր թագաւորութեան համար հող պատրաստում: Ո՞վ պէտք է յաղթէր: Ռուսաց կառավարութիւնը, ստանալով տեղեկութիւններ Վրաստանում կատարուող անցքերի մասին, հասկանում էր որ այնտեղ պատրաստում են արիւնահեղ ներքին խոռվութիւններ: Այս պատճառով էլ, չը սպասելով վրաց պատղամաւորների վերադարձին, որոնք գնացել էին Թիֆլիս ուուաց պայմանները Գիօրգիին յայտնելու համար, Պաւել կայսրը գեկտեմբերի 18-ին ստորագրեց այն հրովարտակը, որով Վրաստանը դառնում էր Ռուսաստանի մշտինաւոր սեփականութիւն: Այդ հրովարտակը ուղարկուեց հիւսիսային Կովկասում եղած ոուս զօրքերի հրամանատար Կնօրիքնգին. նրան հրամայուած էր յայտարարել հրովարտակը ժողովրդին՝ Գիօրգիի մահից յետոյ:

Կայսերական հրովարտակը ստորագրելուց տասն օր յետոյ, գեկտեմբերի 28-ին, վախճանուեց վրաց բազմաչարչար զահի վերջին ներկայացուցիչ Գիօրգի ՀԱ: Գեներալ Լազարեվը սկսեց իր կարգադրութիւններն անել: Գահը թափուր մնաց. —այդպէս էր կամեցել Պաւել կայսրը, թէն Դաւիթը նրա կողմից ճանաչուած էր թագաժառանգ: Հաստատուեց ժամանակաւոր կառավարութիւն, որի անդամն էր Դաւիթը: Եւ ուրիշ բան չէր էլ կարելի անել այն ժամանակուայ հանդամանքների մէջ: Դաւիթի հօրեղբայրները, Դարեջան թագուհու հետ, սպառնում էին երկրք ներքին արիւնհեղութիւնների դաշտ զարձնել, եթէ Դաւիթը թագաւոր հրամարակուի: Ու սկսուեց մի յուսահատ պայքար Գիօրգիի թողած ժառանգութեան վրայ: Երկու հակառակ կուսակցութիւնները բռնութիւնների դիմեցին. ժողովրդին հարկադրում էին հպատակութեան երդում տալ այս կամ այն թեկնածուին և զրա համար քանդում, կրակում էին դիւղերը, ծեծում էին մարդկանց: Գեներալ Լազարեվը հազիւ. էր կարողանում կարգ պահպանել Թիֆլիսում: Մի և նոյն ժամանակ երկու

հակառակ կողմերը միմնաց դէմ գանգատներ էին ուղարկում Պետերբուրգի կառավարութեան. ամեն մէկը աշխատում էր ապացուցանել որ իրան է պատկանում Վրաստանի թագը:

Ահա այդ սպասողական զրութեան մէջ էին ամենքը, երբ, ինչպէս պատմեցինք, փետրուարի 16-ին և 17-ին Թիֆլիսում յայտարարուեց Պաւել կայսրի հրովարտակը. Վրաստանը մրցող կողմերից ոչ մէկին էլ չէր պատկանում. նա անցնում էր Ռուսաստանին: Հրամայուած էր բոլոր արքայորդիներին ճանապարհուել Ռուսաստան, ուր նրանք պիտի ստանային կալուածքներ և թօշակ:

Փետրուարի 28-ին Գիօրգիի մարմինը հանուեց եկեղեցուց և ուղարկուեց Մցկէթ, ուր գերեզմանը սպասում էր Վրաստանի վերջին թագաւորին...

### III

Պաւել կայսրի մահից յետոյ Վրաստանում սկսեցին խլըռտումներ: Գիօրգին մահուան անկողնի մէջ շատ ճիշտ կերպով հասկանում էր որ Վրաստանի վերջն է, որ նա չէ կարող այլ ևս սեփական, անկախ կեանք ունենալ: Դա իրողութիւն էր, որ հասունացրել էր պատմական երկար անցեալը. թագաւորը, այն, չէր սխալում: Այդ կործանումից Գիօրգին աշխատում էր փըրկել գոնէ իր գահը և իր որդիների սեփականութիւն դարձնել նրան, իսկ մնացած բոլոր բաների մէջ հպատակուել Ռուսաստանին:

Գահի այդ հարցն էր, որ չաջողուեց իրագործել: Եւ վրացիները, Պաւլի մահից յետոյ, աշխատում էին նորից վերականգնել իրանց թագաւորութիւնը: Նրանց պատգամաւորները Պետերբուրգում խնդրում էին, որ արքայորդի Պաւելիթը նշանակուի Վրաստանի կառավարիչ՝ թագաւորի տիաղոսով: Ալէքսանդրը անձամք դէմ էր Վրաստանի միացման. նա և նրա խորհրդականներից շատերը համարում էին այդ բանը բռնութիւն: Յուղմունքները, մժգոնութիւնները Վրաստանում չէին դադարում. մի կողմից Պաւելան թագուհին էր գանգատուում կայսրին թէ Գիօրգին կողոպատել է իր եղբայրների իրաւուքները, միւս կողմից Պաւելին էր խնդրում որ ճանաչուեն իր թագաւորական իրաւուքները: Ալէքսանդրը չէր կարող բաւարարութիւն տալ երկու կողմերին էլ, ուստի գործը յանձնեց պետական խորհրդին և հարց դրեց. արդեօք Վրաստանի հպատակութիւն ընդունելը չէր լինի մի տեսակ բռնութիւն: Իր անձնական տրամադրութիւնը նա յայտնեց խորհրդին այն մտքով թէ

իր համար շատ զգուելի մի գործ է այդպէս հպատակութիւն ընդունելը, քանի որ անարդար բան է համարում ուրիշ երկիր իւրացնելը:

Պետական խորհուրդը, սակայն, որոշեց որ պէտք է միացնել Վրաստանը: Չորս օրից յեռոյ նա, նորից քննելով հարցը, նոյն միաբը յայսնեց: Ցոյց տալով թէ ինչ դժբախտութիւնների կարող է մասնուել Վրաստանը, եթէ թողնուի ճակատագրի կամքին, թէ ինչ օգուտներ կարող է քաղել Ռուսաստանը Վըրաստանի միացումից, պետական խորհուրդը անհրաժեշտ էր համարում Վրաստան ուղարկել գեներալ Կնօրրինգին, որպէս զի սա տեղն ու տեղը ուսումնամիջ իրերի դրութիւնը և իմանայ թէ կարող է Վրաստանը ապրել իրեւ անկախ երկիր: Այս պայմանով էլ Ալէքսանդրը տուեց իր համաձայնութիւնը: Հրամայելով Կնօրրինգին գնալ Վրաստան, կայսրը գրեց մի թուղթ, որ շատ լաւ պատկերացնում է այն գաղափարները, որոնցով դեկավարում էր Ռուսաստանի միապետը:

Այդ թղթի մէջ Ալէքսանդրը ասում է որ գան բարձրանալիս ինքը տեսաւ որ վրաց թագաւորութիւնը արդէն միացուած է Ռուսաստանին և արդէն ամենքը հպատակութեան երդում են տուել: Գործերի այդ դրութեան մէջ, մանաւանդ նկատի ունենալով որ Վրաստանում բաւականաչափ ոռւս զօրքեր կան, կարելի է համարել Ռուսաստանի իշխանութիւնը ապահովապէս հաստատուած այն երկրում: Զէ կարելի թագյնել և այն, որ Ռուսաստանի շահերի տեսակէտից այդ միացումը մեծ օգուտներ ունի և այդ պատճառով ոռւսաց կառավարութիւնը վաղուց էր մտածում և ցանկանում որ տեղի ունենայ միացումը: «Զափելով այդ գէպքի էութիւնը միայն մեր օգուտների տեսակէտից, մենք չենք կարող չը խոսուվանել դրանց ամբողջ ոյժը, բայց Երկրաւոր բազաւորութիւնների օգուտներին՝ յահիսենական կանոնների մէջ՝ հակադրուած է ուրիշ չափ, որ միակ հետարիսն է, միակ անխալլը—արդարութիւն եւ ընդհանուր ժողովրդական իրաւունքի անձեռնմիշնելիութիւն: Մեր բոլոր ներքին գործերի մէջ անհախտ հիմք ընդունելով այս ճշմարտութիւնը, այժմ էլ, Վրաստանի մասին կարգադրութիւններ անելուց առաջ, մենք ուղում ենք հաստատապէս իմանալ. Առաջինը—ճիշտ որ այս երկրի ներքին դրութիւնը այնպէս է, որ միայն իր ոյժերով չէ կարող զիմադրել Պարսկաստանի ուսնձգութիւններին, ոչ յետ մղել շրջապատող լեռնային ցեղերի արշաւանքները, ոչ էլ հանգնել ներքին թշնամութիւնները, որոնք սպառնում են պատերազմի փոխուել. ճիշտ է որ թողնել նրան առանձին և անկախ, ճակատագրի կամքին, կը լինէր մի բան, որ

չէ համապատասխանում ոչ այն կայսրութեան մեծութեան, որ հսուց հովանաւորում է նրան, ոչ էլ մեր մեծահոգութեան: Երկրորդ՝ արդեօք ոռւսաց պետութեան հպատակութիլը հիմնուած էր այն համոզմունքի վրայ թէ դա անհրաժեշտ է հայրենիքի օգուտների համար. և արդեօք բոլոր բարձր դասակարգերը և ժողովուրդը միաձայն են համարել այս վարմունքը փրկութիւն իրանց համար, թէ մի յայտնի տեսակի մարդկանց աղդեցութեան ենթարկուելով, նրանք աւելի երկիրդին և կողմնակի ներչնչումներին զիջնցին, քան այն ճշմարիտ գիտակցութեան՝ թէ այդ է իրանց օգուտը: Այսպիսի ուղիղ, արդարութեան և ճշմարտութեան տեսակէտից միանգամայն անսխալ ընթացք տալով Վրաստանի հարցին, Ալէքսանդրը յանձնարարում էր Կնօրրինդին մանրամասն և ճիշտ տեղեկութիւններ հաւաքել, զիմելով անմիջական աղքիւրներին և ի նկատի ունենալով որ՝ ՇԽՆԱԴՐ Պատերազմի համար չէ որ այդ ժողովուրդը միացւում է կայսրութեան, այլ յատկապես նրա, այդ ժողովրդի համար, որ այս բանի մեջ մենք մեր օգուտները չենք որոնում, այլ միմիայն նրա հանգստուրիւնն ու ապահովուրիւնը:

Հաւաքելով այդ տեղեկութիւնները, Կնօրրինդ պիտի գընար Պետերբուրգ՝ անձամբ կայսրին գեկուցում ներկայացնելու համար: Մինչև այդ՝ Պետերբուրգում գտնուող վրայ պատգամաւորների բանակցութիւնները պիտի դադարէին:

Հէնց որ Կնօրրինդ Թիֆլիս հասաւ, արքայորդի Դաւիթը, որ Վրաստանի կառավարիչն էր, զիմել նրան և ապացուցեց իր ժառանգական իրաւունքները: Իր նամակի մէջ նա գրում էր, թէ իր հայրը «զո՞ր բերեց իր թագաւորութիւնը» հանգուցեալ Պատել կայսրին միայն այն նպատակով, որ իր որդին գահի օրինաւոր ժառանգ մնար: Դաւիթը խնդրում էր թոյլ տալ իրան, որ գեսպանութիւն ուղարկէ Պետերբուրգ՝ իր խնդիրքները կայսրին ներկայացնելու համար: Բայց Կնօրրինդ ոչ միայն մերժեց այդ խնդիրքը, այլ և հեռացրեց Դաւիթին Վրաստանի կառավարչի պաշտօնից, հիմնուելով այն հանգամանքի վրայ, թէ նա ապօրինութիւններ և բանութիւններ է գործել, իսկել է իր հակառակորդ աղնուականների հողերը և տուել իր կուսակիցներին: Սա աւելի պատրուակ էր քան պատճառ: Բուն պատճառն այն էր, որ Կնօրրինդը Դարեջան թագուհու աղդեցութեան տակ ընկաւ: Ոչ մի հանգամանք, ոչ մի բարձր շահ չը կարողացաւ և չէր կարող միաբանութիւն և հաշտութիւն հաստատել թագաւորական տան մէջ. փառամոլութիւնը միանգամայն կուրացրել էր երկու հակառակ կուսակցութիւնները և զիջում ոչ ոք չէր անում: Իւրաքանչիւր կողմը սրտանց ուրախ էր

տեսնել Վրաստանը առանց թագաւորի, քան թոյլ տար, որ հակառակորդը նստէ գահի վրայ:

Այսպէս թէ այնպէս, Դաւիթը, վիրաւորուած Կնօրրինսպի կոպիտ վարմունքից, հեռացաւ գործերից և ընկաւ մի ծայրայեղութիւնից միւսի մէջ։ Առաջ նա իրան ցոյց էր տալիս Ծուսատանին հոգով և մարմնով նուիրուած, իսկ այժմ դարձաւ ոռւսների անհաշտ թշնամի։ Աշխատում էր խոռվութիւններ և յուզմունքներ բարձրացնել ժողովրդի մէջ, նոյն իսկ համոզում էր լէզգիններին և հարևան խաններին յարձակուել Վրաստանի վրայ։ Հիմա էլ ի հարկէ, Դարեցանն էր աշխատում ցոյց տալ իրան Ծուսատանի ամենահաւատարիմ բարեկամ։ Բայց գոյութիւն չունեցող գահի վրայ կուռող փառասէրները իրանց փոփոխամտութեամբ, շինծու շողափորթութիւններով և մի կողմից միւսը ընկնելով, աւելի ևս վատացնում էին իրանց գործը։

Գեներալ Կնօրրինսպ, դասաւորելով ոռւսաց զօրքերը Վրաստանում այնպէս, որ բոլոր սահմանները ապահովուած լինեն, դնաց Պետերբուրգ։ Իր զեկուցման մէջ նա յայնում էր, որ Վրաստանը, եթէ հաչուի չառնուի արքայորդինների և նրանց հաւատարիմ աղջուականների մի մասը, ցանկանում է մտնել Ծուսատանի անմիջական իշխանութեան տակ։ Նա չէ կարող ինքն իրան պաշտպաննել, իսկ մշտական խոռվութիւնները վերացնում են ամեն կարդ և օրինաւորութիւն։

Պետական խորհուրդը օգոստոսի 8-ին աղմկալից նիստ ունեցաւ։ Անդամների մեծ մասը հարկաւոր էր համարում Վրաստանի միացումը, իսկ փոքրամասնութիւնը մերժում էր այդ միտքը։ Ալէքսանդրը վերջապէս, թերուեց մեծմասնութեան կողմը և նշանակելով գեներալ Կնօրրինզին գլխաւոր հրամանատար Վրաստանում, հրամայեց նրան ոռւսաց կառավարութիւն մացնել այստեղ։ Արքայորդի, Դաւիթը մի անգամ էլ փորձեց իր բախտը ժողովրդի մէջ սկսեց ստորագրութիւններ հաւաքել տալ՝ իրան թագաւորենցնելու համար։ Բայց ապարդիւն։

Վրաստանի միացումը տեղի ունեցաւ պետական խորհրդի ջանքերով։ Կնօրրինսպ սաստիկ օֆից նրան իր զեկուցումներով։ Թէ ինչպէս էր Ալէքսանդրը վերաբերում այդ դործին, երևում է և նրանից, որ նա թոյլ տուեց Պետերբուրգում ասլրող արքայորդներին վերադառնալ Վրաստան, բայց պետական խորհուրդը, որին յանձնուած էր նրանց ճանապարհածախսի հարցը, վճռեց թէ նրանք պիտի մնան Ծուսատանում։ Վրաց պատգամաւորներից մէկը, իշխան Անդրօնիկով, գրում էր Պետերբուրգից, թէ իրանք, պատգամաւորները, շատ գեղեցիկ կերպով էին կարգադրել հայրենիքի վիճակը, բայց յանկարծ եկաւ Կնօրրինսպ

և ակսեց հաւատացնել կայսրին, թէ ժողովուրդը չէ ուզում իր թագաւորն ունենալ: Այսուամենայնիւ, իշխան Անդրօնիկով յոյս էր տալիս իր հայրենակիցներին: Նա յայտնում էր, թէ պատգամաւորները յայտնել են իրանց անհամաձայնութիւնը պետական խորհրդի կայացրած որոշման դէմ և ինդրագիր են մատուցել կայսրին: Եթէ նոր հարց ծաղէ, ասում էր Անդրօնիկովը, վրացիները պիտի պատասխանեն, թէ իրանք ունեն Պետերբուրգում իրանց գեսազններին և արքայորդներին, որոնց հետ ամենքը համաձայն են:

Բայց աւելորդ էր այդ խորհուրդը: «Երկրի գրութիւնը— ասում է Դուքրօվին—այնքան յայանի և պարզ էր համարւում, որ մեր կառավարութիւնը հարկաւոր չը համարեց որ և է հարց տալ: Կառավարութիւնը Վրաստանի միակ բարիքը և օգուտը համարեց միացնել նրան Ռուսաստանին և ոչչացնել թագաւորական տան իշխանութիւնը և ինքնակամութիւնը»:

1801 թուականի սեպտեմբերի 12-ին Ալեքսանդր I դիմեց իր նոր հապատակներին մի երկար հրովարտակով, որի մէջ, ի միջի այլոց, ասում էր. «Ոյժեր մեացնելու, շահի կամ թէ առանց այդ էլ աշխարհի ամենամեծ կայսրութեան սահմանները տարածելու համար չէ, որ մենք մեզ վրայ ենք վերցնում Վրաստանի թագաւորութիւնը կառավարելու լուծը: Միայն արժանապատութիւնը, միայն պատիւը և մարդկութիւնը դնում են մեզ վրայ սրբազն պարագ, լսելով տանջուողների աղաւանքներին, հիմնել, նրանց վշտերը փարատելու համար, Վրաստանում մի կառավարութիւն, որ կարողութիւն հաստատել արդարութիւն, անձնական և կալուածական ապահովութիւն և տալ ամեն մէկին օրէնքի պաշտպանութիւնը»:

Բայց դրանով էլ ամեն ինչ չէր վերջանում: Վրաստանը խաղացացնելու և ռուսական մի նահանգ դարձնելու համար դեռ հարկաւոր էր որ զլիաւոր հրամանատարի պաշտօնով Վրաստան գար իշխան Ցիցիանով, վաղուց Ռուսաստանում ապրող մի վրացի իշխան: Առաջին պայմանն էր, որ թագաւորական ընտանիքի բոլոր անդամները, առանց որ և է բացառութեան, հեռացուեն Ռուսաստան, երկիրը խոռվութիւնների և ինտրիգների պատճառներից ազատելու համար: Այդ գործը գըլուի բերեց Ցիցիանովը, յօժարակամ հեռանալ չը ցանկացողների վերաբերմամբ նոյն իսկ ոյժ գործ դնելով:

Վրաստանը այն սահմաններով, որ ունէր Ռուսաստանի իշխանութեան տակ մտնելիս, ներկայացնում էր մի տարածութիւն, որ արևելքից դէպի արևմուագ 280 վերստ էր, իսկ հիւ-

սիսից գէպի հարաւ 300 վերստ: Այդ տարածութեան վրայ ապրող աղջաբնակութեան թիւը մօտ 160,000-ի էր հասնում:

Այդ թուի մի նշանաւոր մասը կազմում էին հայերը: Վրաստանի միացումը միայն վրացիների համար չունէր նշանակութիւն: Հայերն էլ ունէին իրանց շահերը, նրանք էլ մասնակցել էին այն ջանքերին, որոնք Անդրկովկասում ոռւս իշխանութիւն հաստատեցին: Բայց հայերի և Վրաստանում նրանց կատարած դերի մասին մենք կը խօսենք մի առանձին յօդուածում:

Լ է Օ

## ՄԱՍԵՆԱԽՈՍՈՒԹԻՒՆ

Շ. Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆԸ. Պատկերներ (վերջին տաճկահայոց կեանքից).  
Խաւարակեց Վառվառէ Քանանեան. Մոսկու. 1900 թ., 338 երես,  
գինը 1 ռ.:

Պ. Ա. Ահարոնեանը մեր այն երիտասարդ՝ գրողներից է,  
որ հէնց իր առաջին պատմուածքներով իր վրայ դարձրեց մեր,  
դժբախտաբար, սակաւաթիւ ընթերցող հասարակութեան ու-  
չաղրութիւնը:

Ապրելով թիւրքաց և ոռւսաց Հայաստանի սահմանի վրայ  
(իգղիք), հեղինակը ականատես էր այն քստմնելի իրականու-  
թիւն, որ այնքան ճշգրիտ ու ցայտուն դուրս է բերում նրա  
տաղանդաւոր գրիչը: Մենք տեսնում ենք այդ սահմանի միւս  
կողմում մի երկիր, ուր ապրում են տարբեր աշխարհայեցողու-  
թիւն, տարբեր կուտուրա ու տարբեր հակումներ ունեցող ցե-  
ղեր: Այդ ցեղերը կարող էին խաղաղ ապրել իրար կողքի և  
իւրաքանչիւրը իր բնական ընդունակութիւններին համապա-  
տախսան ապրուստ ճարկը, ինչպէս այդ կատարւում է սահմանի  
այս կողմում, ուր նոյն հայ, քիւրդ և թիւրք տարբերը, օրէնքի  
և արդարադատութեան հովանու տակ, նուիրուած են իրանց  
զբաղմունքներին, առանց որ մէկը գառան դեր ստանձնի, իսկ  
միւսը՝ գայլի: Մինչդեռ սահմանի միւս կողմում այդ նոյն տար-  
բերը, վատթար կառավարութիւն և արդարադատութեան կա-  
տարեալ բացակայութեան չնորհիւ, ստիպուած են յարմարուել  
գոյութեան կոռւի այն ձևին, երբ մէկը ստանձնում է կրաւորա-  
կան, իրաւագուրկ մի մասսայի դեր, իսկ միւսը գառնում է ա-  
րիւնարբու մի գազան: Զը կան այդ երկրում ոչ միայն վայ-  
րագութիւնը ամոքող հասարակական կարգեր, քաղաքացիական  
անհրաժեշտ հաստատութիւններ, այլ նոյն իսկ մի չար կամք  
զիւմամբ աւելի ևս դժոխսային է կացուցանում տիրող իրակա-  
նութիւնը, ներմուծելով ատելութիւն և ֆանատիկոսութիւն:  
Քաղաքական անմիտ նպատակներով աւազակաբարոյ և գազան

մի տարր յարուցանւում է մի թշուառ, անդէն և անպաշտպան հօտի վրայ: Եւ ահա այդ չար կամքի չնորհիւ մի ամբողջ շնչ երկիր մատնւում է նախածրագրուած ասպատակութեան, աւերումների և սրածութեան: Ամբողջ գիւղեր, իրանց խաղաղ, հեղ և աշխատասէր բնակիչներով ենթարկուում են քիւրդ վայրագ ցեղերի անլուր խժդժութիւններին: Թշնամու սրից կամ վաւաշոտ գրից ճողովրածը, ահից խելազուրկ եղած, թողնում է իր պապերի արիւն քրտինքով ողողած դաշտերն ու փախչում, փախչում առնմանի միւս կողմը, իր կեանքը ազատելու: Եւ այս տեղ տանջուած փախստականը տեսնում է իր եղբայրներին, որոնք օրէնքի հովանու տակ, խաղաղ ապրում են իր գժբախտ «վաթանի» ցեղակից քրդերի և տաճիկների հետ կողք կողքի: Որովհետեւ գայլաբարոյ քրդերն ու ֆանատիկոս թիւրքերն այգուեղ սանձահարուած են և ստիպուած են թողնել իրանց հականասարակական բնազդները: Այդ երկրում մեր տկրոր ու քաղցած փախստականները տեսնում են իրանց աւելի բախտաւոր եղբայրներին: Բայց գրանք արդէն մոռացել են իրանց մօտիկ անցեալը և կոպիտ անտարբերութեամբ հրում են այդ գժբախտացած ու ակամայ մուրայկաններին...

Պ. Անարոնեանի տասը պատմուածքները, որոնցից առաջին անգամ է լոյս տեսնում միայն «Նորածինը», առանձին գրքոյիր մէջ ամիսիելով հրատարակիչը միջոց է տալիս ընթերցողին ծանօթանալ հեղինակի տաղանդի հետ: Անկասկած Անարոնեան ունի ստեղծագործական ոյժ, նա բանաստեղծ է, և հայրենի ընութիւնը իր զաւակներով պատկերանում են նրա ընթերցողի առաջ կենդանի, ինչպէս իրականութիւնը: Հեղինակի զգացմունքները և տրամադրութիւնները վարակում են ընթերցողին, և նա անտարբեր չէ կարող թերթել արիւն արցունքով գրուած էջերը: Վաս չէր լինի, և թէ մեր անամանացած բուրժուազիան (չը բաժանենք և ինտելիգենցիներին), որ կեանքի նպատակ է գրել ուկի դիզել, ապա այդ ուկով փառաւոր պալատներ կանդնեցնել և շռայլ կօմֆօրոտի մէջ ապրել ի փառ իր ստամոքսի և յագուրդ իր կեղտուու կըրքերի—վատ չէր լինի, ասում ենք, և թէ իր պարապ ժամերին փորձէր կարդալ այդ «պատկերները», և մի քիչ էլ մոռանար իր աստուածացրած մարմինը: Բայց... մենք հաւատացած ենք, որ պ. Անարոնեանի պատմուածքներն անգամ չեն շարժիլ այդ գասակարդի հետաքրքրութիւնը, որովհետեւ մեր բուրժուան անզգայ է դէսկի ամենը, ինչ որ անմիջապէս շահ կամ վայելք չէ նրա համար: Պէտք է նրա դուռը բաղխել, աղերսել, համոզել նրան, որ հասարակական որ և է ձևուարկութեան նա բարեհանձի օդնել: Ինքնաբերաբար նա չի էլ հետաքրքրւում գրականու-

թեամբ, որ իմանայ թէ ինչ պահանջներ կան: Նոյնը կը լինի  
և այս գէտքում, ուստի հրատարկչունու համակրելի որոշումը  
—այս գրքի վաճառումից գոյացած արդիւնքը յատկացնել որ-  
բերին—պէտք է գրդի գարձեալ մեր սակաւաթիւ ընթերցող գա-  
սին՝ հնարաւորութիւն տալ որ այդ որոշումը արագ իրագործուի:  
Գիրքը այնքան մաքուր և գեղեցիկ է հրատարակուած, որ ոչ  
միայն իր բովանդակութեամբ, այլ և արտաքինով կարող է ա-  
մեն մի տան զրադարանի զարդ լինել:

Լ. Ս.

**Յ)** Յուցակ հայերէն ձեռագրաց Սունասարեան վարժարանի ի  
նարին: Կազմեց Հր. Աձաւեան. Վիեննա, 1900: Մհծաղիր IX+37 էր.,  
գինն է 1,50 ֆր.:

Հայերէն ձեռագիրները ցրուած են զանազան աշխարհներ-  
ում, գիտական հաստատութիւնների, վանքերի գրադարաննե-  
րում և մասնաւոր անձանց մօտ: Երանց թիւը չէ կարելի նոյն-  
իսկ մօտաւորապէս հաշուել բայց ինչ որ յայտնի է՝ 7000-ից ա-  
ւելի է: Բայց այս թիւը, եթէ նաև վրան աւելացնենք 2—3000  
անյայտ ձեռագիր, մասնաւոր անձանց մօտ՝ այնու ամենայնիւ  
ճիշտ հասկացողութիւն չէ տապիս հայոց գրական հարստութեան  
մասին այն հազարամետայ շրջանում, երբ տպագրութիւնը գեռ  
հնարուած կամ տարածուած չէր և գրական աշխատանքները  
ձեռքով արտագրուում և իբրև ձեռագիր տարածում էին ընթեր-  
ցող շրջաններում: Գիրք ասելով մենք ներկայումս հասկանում  
ենք մի ամբողջացած աշխատութիւն: մի գիրքը մի նիւթ է պա-  
րունակում: Ուրիշ բան է ձեռագիրը: Շատ յաճախ մի ձեռագիրը  
—մի ամբողջ մատենադարան է: տասը քանան և աւելի առան-  
ձին աշխատութիւններ ամփոփուած են մի կազմի մէջ և կազ-  
մում են մի ձեռագիր: Մի որևէ նաւընտիր պարունակում է  
հարիւրաւոր ճառեր, զանազան հեղինակների և ժամանակների  
դորձ՝ զանազան նիւթերի մասին: Մի պատմական ձեռագիր՝ մի  
ամբողջ շարք հայ պատմագիրների, մեծ մասամբ ժամանակա-  
գրական կարգով դասաւորուած: Մի «ոսկեփորիկ» ինչ տեսակ  
նիւթեր ասես չէ պարունակում—առակներ, պատմուածքներ,  
բժշկական խորհուրդներ, հմայութիւններ, ոտանաւորներ, սրա-  
մուութիւններ և այլն: Այսպէս որ, եթէ յայտնի և անյայտ հայե-  
րէն ձեռագիրների թիւը ընդունենք նոյն-իսկ հաւասար տասն  
հաղարի՝ այնու ամենայնիւ իսկական գրքերի, առանձին աշխա-

տութիւնների քանակութիւնը այս թուից մի քանի անգամ աւելի կը լինի:

Միւս կողմից՝ ձեռագիրների այս մեծ քանակութիւնը պէտք է շատ և շատ անգամ կրճատել՝ երբ կամենանք որոշել հեղինակութիւնների թիւը, նիւթերի անունները, որովհետեւ կան այնպիսի երկեր, որոնցից միայն մի կամ երկու օրինակ է հասել մեզ, բայց աւելի շատ են այնպիսի երկերը, որոնցից տասնաւոր և հարիւրաւոր օրինակներ կան: Վերջին տեսակին են պատկանում եկեղեցական արարողութիւնների գրքերը, մանաւանդ շարականներն ու աւետարանները, որոնց ձեռագիր օրինակները շատ շատ են:

Հասկանալի է ուրեմն, որ շատ հետաքրքրական կը լինէր կազմել ցուցակ գոյութիւն ունեցող հայերէն ձեռագիրների, որպէսզի գոնէ յայտնի դառնայ, թէ նրանց թիւը և ինչ նիւթեր են պարունակում նրանք: Բայց բացի այս տարրական պահանջին բաւականութիւն տալուց՝ ցուցակը մեծ կարենութիւն կ'ունենար մեր հին մատենագրութեան ուսումնասիրութեան համար: Բանասէրը այդպիսի ցուցակի չնորհիւ կիմանար, թէ իւր ուսումնասիրած խնդրին վերաբերեալ ինչ նիւթեր կան և ինչ ձեռագիրներում և որպիսի արժեք ունին, և նրանց ձեռք կը բերէր՝ արտագրել տալով կամ անձամբ ծանօթանալով, և այսպիսով իւր ուսումնասիրութիւնը լիակատար կը լինէր: Որեէ հին հեղինակի աշխատութիւն հրատարակելիս՝ բանասէրը չէր բաւականանայ միայն իւր ձեռքի տակ եղած մի կամ երկու ձեռագրով, ինչպէս լինում էր մինչև վերջի ժամանակներս, այլ պարտք կը համարէր քննել այդ հեղինակի աշխատութիւնը պարունակող բոլոր ձեռագիրները, նրանց բաղդատելով՝ կ'ուղղէր ձեռագիրների մէջ պատահող անխուսափելի սխալներն ու աղաւաղութիւնները, այնպէս որ լոյս ընծայուած աշխատութիւնը հնարաւորութեան չափով կը լինէր անսխալ և լիակատար: Մեր պատմական հեղինակների գրեթէ բոլոր աշխատութիւնները արգէն տպագրուած են. բայց նրանցից հազիւ երկու-երեքը գոհացուցիչ լինին գիտութեան այժմեան պահանջների տեսակէտից: մնացածները շատ անկատար են: Այնպիսի առաջնակարգ հեղինակներ, ինչպէս են Ագաթանգեղոս, Փաւստոս, Խորենացի, Եղիշէ, Սերէսոս և այն, լիքն են սխալներով և ուրիշ թերութիւններով, որոնք տեղիք են տուել ու տալիս են բազմաթիւ թիւրիմացութիւնների. պատճառն այն է, որ հրատարակիչները չեն օգտուել գոյութիւն ունեցող բոլոր ձեռագիրներից, նրանց չեն համեմատել միմեանց հետ, մեկով միւսի պակասութիւնը չեն ուղղել:

Զեռագիրները, բացի բուն նիւթից, պարունակում են և ուրիշ թանկագին տեղեկութիւններ՝ լիւատակարանների մէջ, որոնց մէջ գրուած է լինում, թէ ում համար, որի ձեռքով, երբ, նրանդ և ինչ օրինակից է արտազրուած ձեռագիրը. բերում է ձեռազրի տիրոջ (ստացողի) և արտազրողի (զրչի) ամբողջ տոհմը, յիշում է, թէ ինչ նշանաւոր անցքեր տեղի ունեցան այս ինչ թուականին \*), ով ումից զնեց ձեռագիրը և քանիսնվ, որ եկեղեցուն կամ անձին ընծայեց և այն: Այս յիշատակարանները, որոնք գրուած են լինում ժամանակակից մարդկանց ձեռքով՝ պարունակում են անկասկածելի ստոյգ տեղեկութիւններ, որոնք շատ օգտակար նիւթ են մատակարարում պատմութեան, ժամանակագրութեան, տոմարազիտութեան, տոհմագրութեան և ուրիշ գիտութիւնների համար: Անա այս յիշատակարաններն ել ամբողջապէս կը տպագրուէին ձեռագիրների ցուցակի մէջ և մատչելի կը դառնային ընդհանրութեան:

Այս և ուրիշ նպատակներով՝ վաղուց կարիք էր զգացւում հայերէն ձեռագիրների մի լիւակատար ցուցակ կազմելու: Բայց ով պէտք է ձեռնարկէր այսպիսի մի ծանր գործի, որի պատրաստելը մէկ անհատի ոյժից շատ բարձր էր, իսկ տպագրութիւնը հարիւր հազարների կարօտ: Գործի դժուարութեան առաջ շուարել էին եռանդուն փափազողներն անգամ: Վերջապէս գործի վլուխ կանդնեց այն հաստատութիւնը, որ ամենից շատ հետևում էր գիտական մեթոդ մատցնելու հայոց հին գրականութեան ուսումնասիրութեան մէջ, ուրեմն և ամենից աւելի զգում էր լիւակատար ու կանոնաւոր ցուցակի անհրաժեշտութիւնը բանասիրութեան համար: Այս հաստատութիւնը՝ Վիեննայի Միսիթարեան միաբանութիւնն էր, որ իւրացրել էր գերմանական ճիշտ հետազոտութեան սկզբունքները և պատուաստել էր հայկական բանասիրութեան վրայ: Այս միաբանութեան զինաւոր աշխատող ոյժերը մշակեցին ընդհանուր ծրագիր՝ հայերէն ձեռագիրների ապագայ «Մայր ցուցակը» կազմելու: աշխատանքի բաժանման սկզբունքին հետեւելով՝ հրաւիրեցին զանազան տեղերում ապրող բանաէրներին՝ կազմել ցուցակ իրանց մատչելի գրադարանների հայ ձեռագիրների և «Հանդէս Ամսօրեայ»-ի էջերում իրբեն նմուշ տպագրեցին Վիեննայի և Միտինի արքունի գրադարանների հայ ձեռագիրների ցու-

\*) Օրինակ, այս ցուցակում նկարագրուած մի ձեռագրի յիշատակարանում ի միջի ալոց գրուած է թէ «1743 թոփն ալնքան սղութիւն եղեւ, որ քիլա ցորենն 25 լրուշ եղեւ. գրեթէ հայոց ազգն իսպառ ոսկալուկ եղեալ ոչնչացան: Եւ լաւամ ամի դեկտեմբերի յելն գիտաւոր և տտնուր աստղ մի երևեցաւ»: (Եր. 21):

ցակները, որոնք յետոյ հրատարակուեցին առանձին տեսրակներով։ Սրանից ուղիղ տասը տարի առաջ (1891-ին) սկզբը դըրուեց այս գործին, Հ. Յ. Տաշեանի և Հ. Գ. Գալէմքարեանի նախաձեռնութեամբ, և այս 10 տարուայ ընթացքում կատարուածը յոյս է տալիս, որ «Մայր ցուցակի» գաղափարը ոչ այնքան հեռաւոր ապագայում Կ'իրագործուի բաւարար կերպով։

Մինչև այժմ լոյս են տեսել հետեւեալ ցուցակները, «Ցուցակ հայերէն ձեռագրաց» ընդհանուր վերնագրով, բաժմանուած հատորների և տեսարերի։ 1) Վիեննայի կայսերական մատենադարանինը, 1891 թուին, կազմեց Հ. Յ. Տաշեան (30 ձեռագիր). 2) Միւնիսի արքունի մատենադարանինը, 1892-ին կազմեց Հ. Գր. Գալէմքարեան (22 ձեռագիր). 3) Սևանի վանքինը, 1892-ին, կազմեց Ն. Մատ (110 ձեռագիր). 4) Կեսարիայի Ս. Սարգսի վանքինը, 1892-ին, կազմեց Տրդ. Վ. Պալեան (12 ձեռագիր). 5) Կեսարիայի Ս. Աստուածածնի և Գրքէհիրի Ս. Գէորգ Եկեղիցիներինը, 1893-ին, կազմեց Տրդ. Վ. Պալեան (27 ձեռ.). 6) Ներսիսան հողմոր դպրոցինը, 1893-ին, կազմեց Ստ. Կառ. Նայեան (31 ձեռ.). 7) Ֆոնուգի Ս. Կարապետ վանքինը, 1894-ին, («Հանդէս ամս.»), կազմեց Հ. Յ. Տաշեան, Արշ. Միհրդատեանցի մատակարարած նիւթով (16 ձեռ.). 8) Վիեննայի Մըխիթարեանների մատենադարանինը, 1895-ին. կազմեց Յ. Վ. Գ. Տաշեան (572 ձեռ.), և վերջապէս կարնոյ Սանասարեան վարժարանինը, որ լոյս տեսաւ անցեալ 1900 թուին Հր. Աճառեանի աշխատութեամբ և պարունակում է 42 ձեռագրի նկարագիր։

Այս բոլոր ցուցակներին, որոնք պարունակում են 853 ձեռագրի նկարագրութիւն, իրեւ նախատիպ օրինակ ծառայել է առաջինը, որ կազմուած է ամենայն խնամքով ու մանրամասնութեամբ, միանդամայն համապատասխան այժմեան գիտական պահանջներին։ Միւս կազմողները, լոելեայն ընդունուած համաձայնութեամբ, հետեւել են նորան, այնպէս որ չը նայելով որ նրանք տպագրուած են այլեայլ քաղաքներում (Վիեննա, Պօլիս, Թիֆլիս, Մոսկուա), բայց թէ արտաքին դիրքով և թէ սիստեմով ներկայացնուած են միենոն ընդարձակ գործի զանազան հասորները—մի երեսյթ՝ որին չէ կարելի չուրախանալ։ Փոքր ինչ տարբեր սիստեմով, բայց դարձեալ գիտական հիմքի վրայ և մանրամասն, կազմուած են Ն. Մատի նկարագրութիւնը էջմիածնի 10 ձեռագրի (որ զետեղուած է նրա Վարդան Այգեկցու աշխատասիրութեան երրորդ հատորում իրեւ յաւելուած) և Բերլինի արքունական մատենադարանի հայերէն ձեռագիրների ցուցակը, որ կազմել է Ն. Քարամեան 1888 թուին (93 ձեռագիր), ուրեմն Մայր ցուցակի ծրագիրը պատրաստուելուց առաջ։

Այս տպագրուած ցուցակների մէջ ընդարձակութեամբ ու մշակութեամբ առաջին տեղը գրաւում է Վիեննայի Մխիթարեանների հայ ձեռագիրների ցուցակը, որ, ընդունուած Փօրմատով, մեծադիր հրատարակութիւն է, և պարունակում է 1511 երկսիւն երես և 7 տախտակ՝ զանազան ձեռագիրների զրերի նմանատիպ պատկերներով։ Այս չենց հատորը պատրաստուած էր միաբանութեան կողմից իրեն գրական ընծայ՝ միաբանութեան աբբայի, գեր. Արսէն արքեպիսկոպոս Սյանեանի գրական յիսնամեայ յօքելեանի առիթով և պատիւ է բերում թէ կազմողի, Հ. Յ. Տաշեանի աշխատափրութեան ու հմտութեան և թէ Վիեննայի Մխիթարեան տպարանին։

Բայց հայերէն ձեռագիրների երկու գլխաւոր շտեմարանները, էջմիածնի և Վիեննետիի գրադարանները, դեռ չունին այժմեան պահանջներին համապատասխան ցուցակներ։ Էջմիածնի ձեռագիրների ցուցակը, ինչպէս զիտենք՝ արդէն կազմել է Հ. Մեսր. գ. Տէր-Մովսիսեան, և միայն նիւթական միջոցների պակասութիւնից է յետագլւում նրա հրատարակութիւնը։ Իսկ թէ Վիեննետիի, ինչպէս և երուսաղէմի հայոց վանքի ձեռագիրները երբ կ'արժանանան օրինաւոր տպագրուած ցուցակի՝ դեռ յայտնի չէ։

Պ. Հը. Աճառեանի ցուցակին գալով, որ մեզ առիթ տուեց այս ընդհանուր տեղեկութիւնները հազորգելու հայ ձեռագիրների ցուցակների մասին—առանձին նոր բան առելիք չը կայ։ Նա կաղմուած է Մայր ցուցակի համար մի անգամ ընդ միշտ մշակուած ծրադրով ու ոճով. և այս հանգամանքը արդէն բաւական է երաշխաւորելու նրա լիսակատարութիւնն ու առաւելութիւնները նկատելու է միայն, որ նա առելի համառօտ է քան միւս համանման ցուցակները. ձեռագիրների յիշատակարանները բաւական ծշտութեամբ չեն արտագրուած (օրինակ, եր. 12, ա սիւն, տող 3—4 «զիր տարու զյունուարի ամսոյ մէկին»). պէտք է լինէր—«զիր տարու զ (,) յունուարի ամսոյ մէկին»։ 15 եր. բ. սիւն, 9 տող ներքեից. «առիւծն արիատիպ մարկոսին»։ պէտք է լինէր—«առիւծն արի (,) տիպ մարկոսին»։ եր. 10 բ սիւն. 11 տող ներքեից. ծածկագրութեան մէջ չ զրի փոխարէն պէտք է լինէր ջ. և այլն \*): նոյնպէս ցանկալի էր, որ

\*.) Այս վերջին ծածկագրութիւնը ց. գ. ե. կ. չ. (=ջ), բ. կ. ե. մ. ի. — նշանակում է ազգող սորին և հիմուած է զրերի թուական նշանակութեան վրայ, միաւորներն ու հաղարաւորները միմեանց տեղ դորձածելով, իսկ տամսաւորներն ու հարիւրաւորները՝ միմեանց տեղ նոկ ծածկագրութեան առաջին ճ զիրը—բ. լ. ց. ֆ. վ.—զարձեալ երաւագիր է, ինչպէս և շարունակութիւնը, և նշանակում է զիրքա, միայն թէ առաջին գիրը սխալմամբ բ է զրած փոխանակ դիւ։

ընդունուած սովորութեամբ՝ նօտր գրով գրուէին այն տառասիսաներն ու կասկածելի ընթերցուածքները, որոնք բուն ձեռագրին են պատկանում, որպէսզի պարապողը նրանց չը համարէր տպարանական կամ արտագրութեան սիսալ:

## ՍՏ. ՄԱԼԻԱՍԵԱՆՑ

**Թ) ՍՈՒՐԷՆ ՊԱՐԹԵԽԵՍԾՈՆ. Խարազան, Ա. պրակ, Յունուար, 1901,  
Փարիզ 1901թ.:**

Այդ գրքոյիլ գրուած է մեծամիտ և խճնահաւասն տօնով. «Քապէս և ամբողջապէս, պայքարի օվկան մէ», ուստի... «Թնդ գիտցած ըլլան»... «Խարազանը բամֆլէներու շարք մըն է, զոր պիտի հրատարակեմ, պոօշիւոփ ձեռվ, ... երբ այս պրակին արդիւնքը ու իմ անձնական միջոցներս բաւեն տպագրութեան ծալվերուն», յայտնում է հեղինակը:

Այդ «սլոշիւոը» ցոյց է տալիս աւելորդ անգամ թէ նրբան «պղտիկ» և ողորմելի է հայ ինտելիգենցիայի մի մասը, որ նոյն իսկ քաղաքակիրթ աշխարհում մնում է՝ իր ճակատին վատ րեժիմի հետեանքներ կրող մի խումբ, որի համար անձնական կիրքը, մանր ինտրիգները ամենից թանգ են: Նա պատրաստ է իր «ես»-ի համար և՝ իր գրամը, և՝ եռանդը, և ժամանակը վատնել, փոխարէն, որ այդ միջոցներն չահեցնէ իր թշուառ ժողովրդին մի իրական օգուտ հասցնելու համար: Արդարեւ, խարազանի հարուածներին արժանի են հէնց այդպիսի «բամֆլէներ»-ով իրանց ժողովուրդը զբաղեցնող ողորմելի ինտելիգենտները...

Լ. Ս.

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

ԲԱԳՈՒԻԻ ՆԱԽԹԱՐԴԻԻՆԱԳՈՒՇՆԵՐԻ XV ԱՐՏԱԿԱՐԳ ԺՈՂՈՎԸ

Անցեալ 1900 թ. գարնան տեղի ունեցած XIV ժողովը թէպէտ և վճռեց ապագայում հերթական ժողովները ամեն տարի աւենանը գումարել, բայց, որովհետև այդ հարցը պատշաճաւոր իշխանութեան կողմից դեռ ևս դրական վճիռ չէ ստացել, ուստի այս անգամ ժողովը «արտակարգ» անունն էր կրում:

Նաւթարդիւնագործների ժողովը գումարւում է տարին մէկ անգամ միայն: Գումարման նպատակն է քննել իւր ընտրած «Խորհրդի» տարեկան գործունէութիւնը, հաստատել գալիք տարուայ ելումուտքի նախահաշիւը, գործելու որոշ հրահանգներ տալ իր ընտրած «Խորհրդին» և, վերջապէս, ընտրել «Խորհուրդը»: Այս վերջնը երեք տարի առանց վերընտրուելու պիտի վարէ նաւթարդիւնթագործների բոլոր ընդհանուր, այսպէս ասած, «դասակարգային» գործերը, հոգայ նրանց պիտոքները, իրագործի ժողովի հաստատած նախահաշիւը:

Այդ ժողովը նաւթային աշխարհի համար մի որոշ ինքնավարութիւն է ներկայացնում, և նրա ընտրովի «Խորհուրդը» կարելի է քաղաքային ինքնավարութեան՝ Դումային նմանեցնել, իսկ վարչական մարմինը (կառավարիչը և նրա օգնականը)՝ Ուպրավային, սակայն մի կարենոր զանազանութեամբ. այստեղ ընտրողների մէջ կան մեծ ընտրողներ և փոքր ընտրողներ, կան 193 ձայնաւոր ընտրող և մի ձայն ունեցող ընտրող: Այս տարուայ ձայնաւորների ցուցակից երեսում է, որ լիածայն ընտրողները 110 հոգի են, դրանցից առաջինը (Նորէլ) 193 ձայն ունի, երկրորդը (Մանթաշել)՝ 80 ձայն և վերջումը գալիս են 18 ֆիրմայի ներկայացուցիչներ—երեքական ձայնով, 14-ը—երկուական և քսանը—մի-մի ձայնով: Ընդհամենը՝ 110 ֆիրմա—1193 ձայնով: Առաջին տասը ֆիրմաները ունեն 615 ձայն, ուրեմն մնացած 100 ֆիրմի ձայների գումարից աւելի: Նոյն իսկ առաջին

չորսը միասին 395 ձայն ունեն, որ ասել է ձայների համարեա  
/<sup>1</sup>, մասը:

Իսկ 58 ֆիրմ, ամեն մէկը առանձին-առանձին «ամբողջ»  
ձայն չունենալով հանդերձ, ձայնի որոշ մաս ունեն և եթէ միա-  
նան իրար հետ՝ ձայն ստանալու նպատակով ու կազմակերպուեն  
—նրանց վճարած նաւթահարկը իրաւունք է տալիս նրանց 23  
ձայն ունենալ ժողովում: Սակայն, ի հարկէ, գրանցից և ոչ  
մէկը չէ օգտուում իր իրաւունքով, քանի որ, մէկ, երկու, կամ  
երեք ձայն ունեցողն էլ, անդօր է 193 ձայն ունեցողի կողքին:

Ահա թէ ինչու 110 ֆիրմաներից ժողովին մասնակցում  
են իրավէս միայն 20 կամ 30 ֆիրմայի ներկայացուցիչները:  
Մնացածները, իրանց մասնակցութեան ապարդին լինելը տես-  
նելով, բնականաբար խուսափում են այդ ձեականութիւնից:  
Երեակայեցէք, որ մի հարցում առաջին տասը խոշորները մի  
կողմ են, իսկ մնացած հարիւրը՝ հակառակ կողմը, և նոյն իսկ  
բոլորն էլ ներկայ, ինչ կարող են անել հարիւրը տասի դէմ,  
քանի որ հարցը քուէարկուելիս առաջին 10 հոգին 615 քուէ կը  
դցեն, իսկ վերջին հարիւրը—միմիայն 578: Պարզ բան է, որ  
այսպիսի հանգամանքներում միշտ հարցերը վճռուում են ըստ  
բարեհայեցողութեան խոչոր ֆիրմաների: Նոյն խոչորներն են  
և Խորհրդի ընտրողները և, ուրեմն, Խորհրդի անդամները:

Ժողովին նախագահում է միշտ Կովկասի լեռնային վար-  
չութեան գլխաւորը, իսկ նաւթարդիւնագործութեան հետ կապ  
ունեցող մինիստրութիւնները, Կովկասի կառավարչապետը և Բա-  
գուի նահանգապետը նշանակում են ներկայացուցիչներ:

Ժողովի հէնց առաջին նիստում մի՛ ըստ երեսյթին նշին՝  
դէպք տեղի ունեցաւ, որ սակայն շատ բնորոշ է ընտրովի Խոր-  
հրդի համար: Նախորդ XIV ժողովը ձայների մեծամասնութեամբ  
վճռել էր որ կերոսինանցցով տեղափոխուող կերոսինի գոյնը 2<sup>1/2</sup>,  
մարկից աւել քը լինի: «Խոչորները» աւելի խիստ պահանջ էին  
դնում, այսինքն՝ 2<sup>3/8</sup> մարկ. սակայն ժողովը ընդունեց «ման-  
րերի» առաջարկը: Բայց բանից գորս եկաւ, որ «Խորհուրդը»  
ժողովի այս վճիռը համարել է ոչ վերջնական և իր ցանկացածն  
է հաստատել տուել, դրանով ապօրինի կերպով նեղը զցելով  
«մանրերին», որոնց փոքրիկ և անկատար գործարաններում հետ  
չէ պատրաստել նոյնքան պարզ կերոսին, ինչպէս «խոչորների»  
կատարելագործած գործարաններում:

Ժողովի երկրորդ նիստում քննուեցան և բարեյաջող վճիռ  
ստացան աշխատող դասակարգի համար բաւականին նշանա-  
կութիւն ունեցող երկու հարց. նախ՝ միաձայն հաստատուեց  
«Հիւանդանոցի գանձարանի կանոնադրութիւնը» և պատուի-

րուեց «Խորհրդին» պատշաճաւոր իշխանութեան հաստատութիւնը ստանալ և բանալ այդ «Գանձարանը», որին վիճակուած է շատ ու շատ հաշմանդամների, որքերի ու այրիների օգնութեան ձեռք կառկառել նրանց կեանքի դժբախտութեան օրերին:

Այդ Գանձարանը հիմնուում է բանուորների և ստորին ծառայողների հիւանդութեան դէպքում օգնութեան ձեռք մեկնելու, իսկ մահուան դէպքում նրանց անբախտացած ընտանիքների դրութիւնը թեթեացնելու նպատակով: Բագուայ շրջակապքի նաւթաշրջանի բոլոր բանուորները, ինչպէս և մինչև 1200 ո. ոռծիկ ստացող ծառայողները—պարտաւոր են Գանձարանին անդամակցել, իսկ այդ գումարից աւելի ստացողները—կարող են և չանդամակցել:

Այդ Գանձարանն են մանում նաև, կառավարիչների կարգադրութեամբ, զանազան զանցառութիւնների համար բանուորներից համուող տուգանքները. բացի այդ, որքան որ գործարանի բանուորները անդամակիցար մտցնեն Գանձարանը, այդ գումարի կէսի չափ էլ պարտաւոր են մտցնել և բանուորների տէրերը: Անդամակիցարի քանակութիւնը ամեն տարի որոշուում է ընդհանուր ժողովում, որին մասնակցում են բանուորների և տէրերի ընտրածները: Բանուորները իրանց տէրերից երկու անգամ աւելի ձայն ունեն ընդհանուր ժողովում, որից և կախուած է Գանձարանի բոլոր գործերի կառավարութիւնն ու հսկողութիւնը:

Երկրորդ հարցը, որ նոյնպէս վերաբերում է բանուորների դրութեան բարուզման և հեշտութեամբ անցաւ ժողովի հէնց մի և նոյն նիստում—դա բանուորների մի նշանաւոր մասի բըժկութեան հարցն էր:

Բանը նրանումն է, որ նաւթարդիւնագործների ժողովի խորհուրդը որոշ տուրք հաւաքելով բոլոր նաւթարդիւնագործներից, այս վերջների բանուորների համար հիւանդանոցներ է պահում, ուր և ձրի բժշկում են թէ բանուորները և թէ նրանց ընտանիքները: Սակայն 30 հազարից աւելի բանուորների մի նշանաւոր մասը (մի երրորդականը)—աշխատում են ոչ թէ նաւթարդիւնագործների մօտ, այլ մի շարք ուրիշ գործարաններում, որոնք նաւթի հետ գործ չունենալով, բնականաբար ոչ մի տուրք չեն տալիս ժողովի Խորհրդին և այդպիսով իրաւունք էլ չունեն իրանց բանուորներին ձրի բժշկել տալ Խորհրդի հիւանդանոցներում: Եթէ Խորհրդի հիւանդանոցում տեղ և յարմարութիւն է լինում —ընդունում են այս վերջին կարգի բանուորին որոշ վարձով հակառակ դէպքում—Խորհրդի հիւանդանոցը պարտաւոր էլ չէ հոգալ այդպիսի հիւանդի մասին: Այդ հանգամանկըներում, պարզ

բան է, որ յաճախ բանուորը մնում է առանց բժշկական օգնութեան, մանաւանդ փոքրիկ գործարանատիրոջ բանուորը, որովհետև այդպիսի գործարանատիրոջ համար նշանակութիւն ունի այն մի քանի ոռուբլին, որ նա պիտի վճարէ իր բանուորի բժշկութեան համար, ուստի նա աշխատում է խուսափել իր այդ պարագը կատարելուց, հիւանդ բանուորին թողնելով բախտի բերմոնքին, թէպէտ օրէնքի որոշ յօդուածը ուղղակի պարտաւորեցնում է ամեն մի գործարանատիրոջ՝ կամ սեփական հիւանդանոց ունենալ, կամ գործարանական տեսչութեան (ֆաբրիտայ սահուեկոյ) ներկայացնել մի որ և է հիւանդանոցի գրաւոր համաձայնութիւնը,—ընդունել և բժշկել այդ գործարանի բոլոր հիւանդ բանուորներին։ Ահա օրէնքի այդ յօդուածը միջոց է տալիս գործարանական տեսչութեան ստիպել բոլոր գործարանատէրերին հոգալ բանուորների բժշկութեան մասին։

Դեռ անցեալ XIV ժողովը մի մասնաժողով ընտրեց այդ հարցը մշակելու համար, թէ արդեօք ինչպէս և ինչ պայմաններով հնարաւոր է բոլոր գործարանատէրերին մասնակից անել Խորհրդի հիւանդանոցներին, որպէս զի Խորհուրդը, նաւթահարկ չը վճարող Փիրմերիցն էլ մի որոշ հարկ ստանալով, պարտաւոր լինի վերջիններիս հիւանդներին էլ բժշկել իւր բուժարաններում։

Մասնաժողովը վերջին ժողովին մի հետաքրքրական զեկուցում ներկայացրեց, որ լուրջ աշխատութեան հետևանք էր Բամից գուրս է գալիս, որ մինչդեռ նաւթարդիւնաբերողի 100 բանուորներից տարուայ մէջ հիւանդանոցում պատկում են 12,5-ը և իրեն երթեւեկ օգտաւում են 159 անգամ—նաւթահարկ չը վճարողի 100 բանուորից միայն 7,8-ը են պատկում հիւանդանոցում, իսկ իրեն երթեւեկ—օգտաւում են 74 անգամ։ Հասկանալի է, որ թուերի այս աչքի ընկնող զանազանութեան պատճառը—նաւթահարկ չը վճարող գործարանատիրոջ անբարեխղճութիւնն է, որ չէ կամենում բուժարան ուղարկել իր հիւանդին. խուսափելով դրա հետ կապուած ծախսերից։ Ի հարկէ, այս ծանր մեղադրանքը չէ կարելի շպրտել բոլոր նաւթահարկ չը վճարող գործարանատէրերի երեսին. կան և բարեխիղճները, բայց կան և այնպիսինները, որոնք ոչ մի կոպէկ չեն ծախսում, և իրանց բանուորներին հիւանդանոց են ուղարկում իրեն մուրացկանների...

Մասնաժողովը խորհրդակցութեան էր հրաւիրել նաւթահարկ չը վճարող գործարանատէրերից շատերին, սակայն քչերը միայն ներկայ էին գտնուել այդ խորհրդակցութեան. դրանք միամայն ընդունել էին մասնաժողովի առաջարկը—մասնակցել Խորհրդի բուժարանների վրայ անելիք ծախսերին և այդպիսով իւ-

բաւունք ստանալ իրանց հիւանդներին բուժարաններն ուղարկել, առանց ամեն անդամուայ համար առանձին վճար տալու։ Մասնակցութիւնը լինելու է բանուորների թուի համեմատ։ Առանց ձանձրացնելու մանրամասնութիւններով, բաւականանակը յիշելով, որ օր. 100 բանուոր ունեցողը—տարեկան մօտ 600 ո. պիտի տայ և այնուհետև բոլորովին ազատ իրաւունք ունենայ, թէ իր բանուորների և թէ նրանց ընտանիքների անդամներին անարգել Խորհրդի բուժարաններն ուղարկելու։

Ժողովը՝ մասնաժողովի այս զեկուցումը հաստատեց և վճռեց խնդրամատոյց լինել ուր հարկն է և թոյլտութիւն ստանալ նաւթահարկ չը վճարող դործարանատէրերին մասնակից անելու Խորհրդի բուժարանների ծախսերին և մի և նոյն ժամանակ այս նոր հարկը վճարողներին անդամակից անել ժողովին, սակայն միմիայն բուժարաններին վերաբերեալ հարցերում, իսկ մինչև այդ թոյլտութեան ստացուելը, թոյլ տալ Խորհրդին, որ առանձին համաձայնութիւն կայացնի այն դործարանատէրերի հետ, որոնք բարեյօժար կամքով կը ցանկանան մասնակցել վերոյիշեալ ծախսերին։

Սակայն մեր վերը յիշած օրէնքի կէտը դործարանական տեսչութեան ձեռքը մի այնպիսի ազգու գէնք է տալիս, որ եթէ տեսչութիւնը խստիւ հետեւ,—կարելի է ասել, որ այսուհետեւ, նոյն իսկ այդ ժամանակաւոր բարեյօժարութիւնը—միջոց չի կարող տալ գործարանատիրոջ զրկել իր հիւանդ բանուորին բըշչկական օգնութիւնից։ Իսկ եթէ բոլորն էլ, ստիպուած տեսչութեան խստութիւնից, մասնակցեն Խորհրդի ծախսերին, դրանով մի այնպիսի առատ աղբիւր կը բացուի Խորհրդի բուժարանների համար, որ նրանց պակասութիւնների մի նշանաւոր մասը կարելի կը լինի վերացնել՝ աւելացնելով ընդունարանների և բժիշկների թիւը, հմուտ վերաբոյժներ հրաւիրելով, որոնց հետ այլև յաջողութեամբ չը մրցէն տեղական հայութուք «սնդչիները» և այն և այն։

Մի հարց, որ ահապին նշանակութիւն ունի թէ նաւթատէրերի և թէ աշխատող դասակարգի համար—դա հրէշաւոր հրդեհների հարցն է, որոնցով քանի գնում, աւելի և աւելի է հոչակւում թագուի շրջանը, և սակայն մի զարմանալի անփութութիւն է տիրում մի այդպիսի հարցի նկատմամբ թէ նաւթատէրերի, թէ սրանց ժողովի, թէ Խորհրդի և թէ նոյն իսկ յատուկ մասնաժողովի կողմից, որ ընտրուած էր այդ հարցին ընթացք տալու համար։ Ամեն տարի շատ ու շատ միլիօններ են ոչնչանում, բազմաթիւ մարդկային զոհեր է տանում հրդեհը և սակայն մի տարի Խորհուրդը զեկուցանում է, որ տասնումէկ (!!) ոռորի

է միայն ծախսել այդ հարցի վրայ, մի ուրիշ տարի հենց ասենք դրա հարիւրապատիկը, իսկ այս ժողովին՝ յատուկ մասնաժողովը եկաւ զեկուցանելու, թէ անկարելի էր մի բան անել, որովհետեւ միայն մէկ մասնաժողով էր ընտրուած, մինչդեռ պէտք կար երկուսն ընտրել. մէկը հանգերի (Բալախանի, Սաբունչի, և այլն) համար և միւսը Սևքաղաքի գործարանական շրջանի համար Բացի այդ մասնաժողովը պահանջում է փորձեր անելու համար Յ—Յ հազար ոսուբլու մի ողորմելի գումար բաց թողնել. ողորմելի ենք ասում՝ չարիքի չափերը, վասաների մեծութիւնը և տարէց տարի զա՞ն գնացողների թիւը համեմատութեան առնելով:

Ի՞նչ է նշանակում մի այսպիսի կարեոր գործում տասնեակ, նոյն իսկ հարիւր հազարներ ծախսել մի ամբողջ դասակարգի համար, որի կարողութեան մի շատ նշանաւոր մասը ամեն տարի անխուսափելի կերպով գոհւում է այդ չարիքին: Եւ ինչ կարելի է անել Յ—Յ հազարով: Չարիքը մեծ է, պահանջը անյետաձելի և հարցը լուրջ: Այդ մասնաժողովները չեն, որ պիտի բարեյածող կերպով լուծեն այդ ծանրակշիռ հարցը: Ընտրում են իրանց գործերով մինչև շինքը ծանրաբեռնուած մարդիք և յետոյ զարմանում—թէ ինչու ոչինչ չէ արուած: Այդ ընտրուած մարդիկը, եթէ նոյն իսկ ձեռնահաս էլ լինէին, կրկին ոչինչ չէին կարող անել, որովհետև գրանցից շատերը ժամանակ չունեն նոյն իսկ իրանց պարտաւորութիւնները կատարելու: Օրինակ, ժողովում պարզուեց, որ Սևքաղաքացիք միայն մի անգամ են ժողովուել, որովհետև նախագահը, որ գործարանների աւագ տեսուչն է (старш. ֆաбр. անսպեկտ.) ժամանակ չունի և չէ կարող ունենալ իսկ, որովհետև մարդը ծանրաբեռնուած է իր անմիջական պարտաւորութիւններով: Ոչ միայն ժողովը, այլ նոյն իսկ առանձին նաւթատէրերից շատերը այնքան հարուստ են և այնպիսի մեծ վասաներ են կրում հրդեհից, որ ոչինչ չէին կորցնիլ, եթէ շարունակ մի քանի լուրջ մասնագէտներ պահէին իրանց ծառայութեան մէջ, որոնց միակ պարտքը լինէր զարդուել այդ հարցով: Իսկ ժողովը հօ, էլ ինչ ասել կ'ուզի, որ անպայման պիտի այդպէս վարուէր. այդ լուրջ հարցի ուսումնասիրութիւնը հէ պատահական և զբաղուած մարդկանց պիտի յանձնէր, այլ գիտութեամբ զինուած 2—3 լուրջ մասնագէտների յանձնէր հարցի ուսումնասիրութիւնը, տալով նրանց ամեն յամարութիւններ՝ փորձեր անելու, պայմաններն ուսումնասիրելու և այլն: Թէ ինչպէս են վարուում լուրջ զիտութեան հարկը ճանաչող և բանիմաց գործարանատէրերը այս կամ այն հարցը ուսումնասիրելիս, կարելի է օրինակ վերցնել զերմանացիներից:

Բադէնի մի գործարան (Badische Anilin und Soda-fabrik), որ 6200 բանուուր է բանեցնում, բացի բազմաթիւ մասնագէտ—տեխնիկներից ու ինժենէրներից, մի ահապին խումբ գիտնական քիմիկումներ է պահում, որոնց թիւը 148-ի (!) է հասնում և հաստատապէս կարելի է պնդել, որ այդ գործարանը ոչինչ չէ կորցնում մի այդպիսի գիտնական խմբի ռոճիկ տալով, ընդհակառակը. նա իր ծախսածի տամնապատիկն է ստանում, օդտուելով նրանց գիտական աշխատութիւններով։ Հէնց այդ գիտնական խմբի չնորհիւն է որ արդէն մի քանի տարի է այդ գործարանը ծծմբաթթու ստանալու մի հեշտ, արժան, նոյն իսկ առողջապահական տեսակէտից շատ աւելի աջող՝ միջոց է գըտել, որով և օդտուում է ի փառս գերմանական գիտութեան և շատ լաւ արդիւնք է տալիս իր լուսամիտ բաժնետէրերին։ Այժմ համեմատեցէք դրա հետ մեր 168 նաւթատէրներին, որոնք բոլորը միասին 3—5 հազար ո. են նշանակում հրդեհների հարցն ուսումնասիրելու և դրանց առաջն առնելու միջոցները նախագծելու համար...

Տարէց տարի հասարակութեան աւելի լայն խաւերն են սկսում հետաքրքրութիւն ցոյց տալ գէպի գանձարաննապատկան հողերի ածուրդները և դժուար չէ նկատել, որ այդ հետաքրքրութիւնը աւելի հօտային, ոչխարային, անհաշիւ հետաքրքրութիւն է։ Ածուրդին մասնակցողները, ցանկանալով անպատճառ մի կտոր նայթային հող էլ իրանք բաժին ստանան—գանձարանին այնպիսի գներ են խոստանում ստանալիք նաւթից, որ ուղղակի բոպէական ողևորութեան, ազառտի, թղթախաղի տարր են մտցնում գործի մէջ։ Այդ ազառտին պակաս չէ նպաստում մի հանգամանք, որի մասին խօսք եղաւ Ժողովում և ես աւելորդ չեմ համարում մէջ բերել «Մուրճի» ընթերցողների համար հարցի էական մասը, «Ցանկալի է արդենք, որ ապագայ ածուրդներին ստացուող նաւթի քանակութեան աւելանալովը, պակասէր նրա պուլագինը, թէ ոչ։ Ահա ինչպէս էր զրուած հարցը։ Ածուրդին ամեն ցանկացող փակ ծրարով մի որոշ պուղագին է նշանակում (այսինքն, խոստանում է ստանալիք նաւթի ամեն մի պուղի համար այս կամ այն գինը վճարել գանձարանին)։ Առաջուց գանձարանը յայտնում է նաւթի այն ամենապակաս քանակութիւնները, որ պէտք է ածուրդի գնացողը աշքի առաջ ունենայ ստանալ այս կամ այն կտոր հողից։ Արդէ եթէ նա այդ քանակութեան երկուտակը ստանայ—երկրորդ պարտիայի (մասի) համար, ըստ պայմանի պիտի  $100\%$  պակաս վընարի։ Օրինակ, եթէ մի որ և է կտոր հողից ստանալիք նաւթի ամենապակաս քանակութիւնը նշանակուած է 500 հազար

պուդ, իսկ այդ հողը վերցնողը մի միլիօն պուդ է ստանում տարեկան—նա առաջին կէս միլիօնի համար պարտաւոր է զանձարանին վճարել իր նշանակած գինը (դիցուք 10 կոպ.), իսկ երկրորդ կէս միլիօնի համար արդէն 100/0 պակաս պիտի վճարի (այսինքն մեր վերցրած դէպում—9 կոպ.): Եթէ 11/2 միլիօն ստանայ—նոյն կարգով վճարում է՝ առաջին կէս միլիօնի համար—10-ական կոպ., երկրորդ կէս միլիօնի համար—9-ական, իսկ երրորդ կէսի համար—8,1 կոպ., և այսպէս մինչև որ նախկին գնի կիսին հասնի (5 կոպ.), որից գէնը այլ ևս չէ անցնելու պուդագինը: Ահա այս կարգն է, որ քննութեան առարկայ դարձաւ ժողովում: Առաջուայ աճուրդների պայմանը զանազանում էր վերև բերածից նրանով, որ ոչ թէ 100/0 էր պակասում ամեն պարտիայի համար, այլ 1/4 կոպ.: Անցեալ տարուայ գարնանը կայացած ժողովում նոյնպէս քննուեց այս հարցը և արդէն այն ժամանակ էլ ձայներ լուսեցին, թէ պուդագինի աստիճանական նուազումը—աժխոտաժի տարր է մտցնում աճուրդի գործի մէջ, բայց ժողովը, ձայների մեծամասնութեամբ օգտակար համարեց այդ աստիճանական նուազումը և Խորհուրդը դրաւոր գիմեց մինխստրին, ինչպես մայն հէնց այն իսկ կարգը, որ մենք վերը նկարագրեցինք: Նոյն իսկ, ինչպէս յայտնեց նախագահը (ինժ. Շոստակ), մինխստրը վճռած է եղել ոչնչացնել այդ աստիճանական նուազման սխստեմը, բայց, զիջելով Խորհրդի խնդրին, թողել էր այդ սխստեմը վերջին աճուրդին, որ և, նոյն իսկ սխստեմի ամենաջերմ կողմնակիցներին, համոզեց, թէ նրբան վտանգաւոր է մի այդպիսի ազատի, աժխոտաժի տարր մտցելը գործի մէջ:

Ինձենէր Խատիսեանը, լուսաբանելով հարցը, ապացուցեց, որ այդ չարաբաստիկ «նուազումը» վեստիկար է և ցանկալի չէ, թէ արդիւնաբերողների և թէ տէրութեան զանձարանի համար:

«Արդիւնաբերողին երկու բան է հարկաւոր,—ասաց նա,— նուազ պուդավճար—յօդուտ գանձարանի և նաւթի բարձր գին—շուկայում: Բայց արդիւնաբերողը, աճուրդի գնալով, ինքն իրան խարում է «ալուդագինի նուազման» վրայ յայս գնելով և բարձր գին է նշանակում, յոյսը գնելով իր բախտի վրայ և անհիմն հաշիւներ անելով, թէ՝ ահա, զանձարանը՝ 1/2 միլիօն է նշանակել բայց ևս մէկի տեղ տասը հոր կը փորեմ, 20-ը կը փորեմ և 3—4 միլիօն կը ստանամ տարեկան և զանձարանին պակաս գին կը տամ ուրեմն: Բայց մոռանում է նա, որ շատ նաւթ ստանակով և այդպիսով նաւթի շուկան ողողելով անչափ ապրանքով—հէնց դրանով իսկ նա իր տունն է քանդելու, նաւթի գինն է գցելու, զրկելով իրան աջողութեան երկրորդ անհրաժեշտ պայ-

մանից—նաւթի բարձր գնից։ Ահա այս է արդիւնաբերողի տեսակէտը։ Այժմ նայենք դործին դանձարանի տեսակէտից, որ հողի տէրն է և ամենից առաջ պիտի աշխատէ, որ իր նաւթալին հողերը, որոնց ազատ մնացած քանակութիւնը, ի գէպ ասել, այնքան էլ չատ չէ այժմ, կանոնաւոր մշակութեան ենթարկուեն, բոլոր շերտերից նաւթը ծծուի, գուրս քաշուի մինչև այդ շերտի չորանալը և ապա աւելի խորը փորուի։ Մինչդեռ «աստիճանական նուազման» սիստեմը ստիպում է արդիւնաբերողին անմշակ թողնել վերեի շերտերը, որոնք դիցուք, օրական հազար—երկու հազար պուդ են տալիս և անցնել գնալ ֆօնտանի, շատրուանի, որովհետեւ, այլապէս նրա կազմած նախահաշիւը չէ կարող իրագործուել, նա չէ կարող գանձարանի նշանակած քառակութեան ձ-պատիկը, ծ-պատիկը ստանալ, ինչպէս երազում էր։ Եւ պարզ է, որ նրա այս անմիտ, գիշատիչ գործունէութիւնը—ոչ մի հաշիւ չէ հողատիրոջ համար, ուրեմն և զանձարանը միմիայն մնաս ունի այդ «պուդագնի աստիճանական նուազումից»։ Եւ վերջապէս, նաւթի այն քանակութիւնը, որ հանգստութեամբ, առանց շտապելու, պիտի ստացուէր հողից 10—20 տարում, այժմ, այդ նոյն քանակութիւնը աւելի կարծ միջոցում հանելու նպատակով, մէկի տեղ տասը հոր պիտի փորուի և այդպիսով ահագին միլիօններ պիտի կորչեն իզնուր, ապարդիւն, որին, ի հարկէ, անտարբեր աչքով չը պիտի նայէ գանձարանը, որ, ոչ միայն հողատէր է, այլ և աւելի բարձր, ընդհանուր շահերի ներկայացուցիչ»։

Ժողովի մեծամասնութիւնը ծափահարութեամբ իր հաւանութիւնը և համաձայնութիւնը յայտնեց Խատիսեանի ասածներին, որին իր համակարծիք լինելը յայտնեց նոյնպէս իշխան-կառավարչապետի ներկայացուցիչը։ Այդպիսով կարելի է հաւաստի լինել, որ այլ ևս չի կրկնուիլ այն աժիօտաժը, որ այս վերջին աճուրդին այնքան սիալների պատճառ դառաւ և այնքան մանր ու խոշոր զրամատէրեր իրանց ունեցածը վտանգի ենթարկեցին...

Մի և նոյն նիստում Ժողովը հաստատեց Բժշկական Խորհրդի կանոնադրութեան նախագիծը։ Վերջապէս Խորհրդի ծառայութեան մէջ գտնուած 18 բժիշկ մի կօլլեգիալ կազմակերպութիւն են ստանում, որի նպատակը պիտի լինի քննել բժշկական-առողջապահական հարցերը, բժիշկների և բժշկական ստորին ծառայողների ընտրութիւնը, բժշկական էթիկային վերաբերեալ հարցերը։ սակայն այդ բժշկական Խորհրդի որոշումները դժբախտաբար միայն խորհրդակցական նշանակութիւն պիտի ունենան և վերջնական որոշում կայացնելը կախուած է լինելու Ժողովի Խորհրդից։ Այնուամենայնիւ Խորհրդի բուժարանների գործը սրա-

նով մի քայլ է անում դէպի առաջ և սրտանց պիտի ողջունել այդ առաջադիմութիւնը, քանի որ մի այդպիսի կազմակերպութիւն հաւանականօրէն կը սանձահարէր այն ճարպիկ ինտրիգաններին, որոնց չնորհիւ վերջին տարիներս բազմաթիւ գործունեայ և սիրուած բժիշկներ ստիպուած էին թողնել և այժմ էլ գեռ թողնում են՝ Խորհրդի ամենամեծ հիւանդանոցում գործելու ասպարէզը այդ նոյն ճարպիկներին...»

Երկու նիստում ժողովն զբաղուեց «նաւթային ապրանքները Բագուցից արտահանելու կանոնների» քննութեամբ, որ առանձին հետաքրքրութիւն չունի ընթերցողի համար: Բնորոշ է միայն մի բան, որ ուրիշ երկրներում (օր. Ամերիկայում) երկաթուղիներն են իրար զլուխ ծակում ապրանք վերցնելու համար, իսկ մեր Բագւում մի դաշտարկ վագօն ստանալու իրաւունքը (կերուսինի համար, դիցուք) — ժամանակին նայած — 100 ռ.—20 ռ. առժէ: Եւ, ահա, հանգամանքից ստիպուած, գործարանատէրերը մի ամբողջ հիմնարկութիւն են պահում, տարեկան 15 հազար ուռերի են ծախսում այդ հիմնարկութեան վրայ, որի միակ նպատակն է, եղած վագօնները արդարացի բաժանել գործարանատէրերին. այդ հիմնարկութիւնը կոչում է վագօններ բաժանող կոմիտէտ (Կոմитетը ու բազում առաջնային գործառնությունները պահպանության մեջ են մտնել առաջնային գործառնությունների մեջ):

Խորհրդի կազմած ելումուտքի նախահաշուից երևում է, որ սոյն 1901 թ. Խորհուրդը մուտք սպասում է մօտ 1,900,000 ռ. իսկ ծախս — մօտ 1,350,000 ռ., ուրեմն նախահաշուին նայելով Խորհուրդը մօտ 550 հազար ռ. դեփիցիտ է սպասում: Բժշկական-առողջապահական օգնութեան վրայ — Խորհուրդը ենթադրում է ծախսել մօտ 260 հազար և ժողովը հաստատեց այդ գումարը, որի առիթով աւելորդ չէ մէջ ըերել պ. Հ. Պարոնեանի արած առարկութիւնը: «Եթէ այդ գումարի տասնապատիկն էլ ծախսենք, ասաց նա, այնու ամենայնիւ ցանկալի արդիւնք չենք ունենայ, մինչև որ բանուորների առողջապահական դրութիւնը չը բարելաւենք: Հէսց այդ նպատակով բանուորների համար կառուցանելիք բնակարանների հարց է եղել անցեալ ժողովներում, որ մինչև այժմ սպասում է իր վճռին»...

Նախագահի բացատրութիւնից պարզուեց, թէ սպասում է պետական Խորհրդի (Գույնական սույն գործառնությունների համար ինսդրամների համար կառուցանելու առողջապահական դրութիւնը չը բարելաւենք: Հէսց այդ նպատակով բանուորների համար կառուցանելիք բնակարանների հարց է եղել անցեալ ժողովներում, որ մինչև այժմ սպասում է իր վճռին»...

Ստիկանութեան համար յատկացրած մօտ 22 հազարի մասին ժողովի անդամներից շատերը յատկացնելու, որ, երկի, տեղի կ'ունենայ այս տարի:

պ. նահանգապետի ներկայացուցիչը պատասխանեց, թէ նահանգապետը առանձին մասնաժողով է կազմել՝ ոստիկանութեան համար նոր, բարեփոխուած կազմակերպութիւն մշակելու։ Ժողովը վճռեց խնդրել, որ այդ մասնաժողովին թոյլ տրուի մասնակցել և իր Խորհրդի անդամներից մէկին։

Ուսումնարանների համար խորհուրդը մօտ 31 հազար ծախք էր նախագծել, ժողովը դեռ մի բան էլ աւելացրեց (կիրակնօրեայ ուսումն. վրայ էլի 1000 ո.), բացի 7500 ոռութուց, որ նշանակուած է միանուազ ծախք լուսաւորութեան գործի վրայ։

Եկեղեցիների կառուցման իբր օժանդակութիւն—նախահաշւումը միայն 1000 ո. է նշանակուած, հայ-լուսաւորչական եկեղեցու յատակաղիծը պատուիրելու համար։ Ռուսաց եկեղեցու համար նախորդ ժողովներում վճռուած էր հանգանակութիւն բանալ և հանգանակած գումարի վրայ Խորհրդի կողմից աւելացնել այնքան, որ 30 հազարի մի գումարը լրանայ։ Հանգանակութիւնը քիչ բան էր տուել և այդ 30 հազար գումարով եկեղեցին դեռ շատ հեռու է շինուել-վերշանալուց, և առա եկեղեցու շինութեան համար նշանակուած մասնաժողովի նախագահը դիմել էր ժողովին, խնդրելով օգնել օրթօգօքս եկեղեցու վերջացնելուն, կրկին 30 հազարի մի նպաստով։ Մի այդպիսի մեծ գումար, որ չէր մտել նախահաշուի մէջ, վիճաբանութեան առարկայ դարձաւ, մանաւանդ որ նախահաշխւը առանց այն էլ մեծ դեֆիցիտով էր կազմուած։ Սակայն Խորհրդի նախագահը (պ. Պ. Ղուկասեանը) դիմեց ժողովին, նկարագրելով Բալախանում ապրող բանուոր դասակարգի աննախանձելի գրութիւնը։ «Այդ ողորմելիները, ասաց նա, զուրկ ամեն նիւթական յարմարութիւններից, ոտից մինչև գլուխը ցեխի մէջ թաղուած, չնչելով Բալախանու կազմամանների գարշահոտութիւնները, մի և նոյն ժամանակ զուրկ են և հոգենոր միսիթարութիւնից—Աստուծուտ տաճարից, որի մէջ գոնէ ամիսը մէկ անգամ իրանց «մարդ» զդային։ Մուսուլման բանուորները—դեռ միջոց ունեն գոհացնելու իրանց հոգենոր պէտքերը շրջակայ թրքաբնակ գիւղերի մզկիթներում։ Ռուսադաւանները ահա երկու տարի է, որ մի ժամանակաւոր եկեղեցի ունեն և այժմ հարցը մշտական եկեղեցու կամարները ծածկելու և վերջացնելու մէջն է և ես գալիս եմ խնդրելու ժողովին մի այդպիսի սուրբ գործի համար, առանց վախենալու դեֆիցիտից, առատօրէն բանալ իր գանձարանը և տալ հարկաւոր գումարը։ Սակայն, պիտի աւելացնեմ, ասաց նա, որ այս գործում մոռացուած է մի կրօնական համայնք, հայ-լուսաւորչականները, որ մեր բանուորների մէջ մի ստուար բազմութիւն է կազմում։ Հայ եկեղեցու համար նոյն

իսկ փող էլ չէ պահանջւում, միայն կառավարութեան թոյլ-տւութիւնն է պակաս այդ անցետաձգելի գործը իրագործելու համար։ Առաջարկում եմ ժողովին միաբերան խնդրել իշխան-կառավարչապետի ներկայացուցչից, որ Թիֆլիս վերադառնալով զեկուցանի իշխան-կառավարչապետին, թէ ցանկանալի է, որ հայ-լուսաւորչական եկեղեցու կառուցման հարցը չուտով ստանայ իր դրահան լուծումը։ Ժողովը բուռն ծափահարութիւններով միաձայն ընդունեց ճառախօսի առաջարկը, բայց իշխան-կառավարչապետի ներկայացուցիչ պ. Ռուսեակովը դրժուարացաւ յանձն առնել ժողովի յանձնարարութիւնը, առանց նախապէս դրա մասին հեռագրով հրահանգ ստանալու։

Ճանապարհների շինութեան և վերաշինութեան ծափք է նշանակուած—340 հազար, իսկ եղած ճանապարհները պահպանելու (րեմոնտի) ծախք—77 հազար։ Այս հարցը, իբրև Խորհրդի գործունէութեան ամենաթոյլ կողմը այնքան գրգռել էր ժողովականների կրքերը, որ օպպօզիցիայի առաջնորդը, նոյն իսկ չը կարողանալով համբերել՝ հէնց առաջին նիստումը խստիւ հարձակուեց Խորհրդի վրայ։ Այժմ, երբ արդէն հասել էր նրա հերթը, նա (ինժ. Դուլեան) առաջարկեց ժողովին նոյն իսկ նկատողութիւն առնել Խորհրդին, որովհետև այս վերջինը 800 հազար ոռուբի վասնել էր ի գուրք։ «Ճանապարհների փոխարէն մենք ունենք փոսեր, ճահիճներ, ինչ ուղում էք, բայց նչ ճանապարհներ։ Բալախանում գործ ունեցողները այնքան գըրգուուած են Խորհրդի գէմ, որ երկաթուղու վագօններում Խորհրդի անդամները ստիպուած են թագնուել հասարակութիւնից, վիրաւորանքների չենթարկուելու համար։ Խորհուրդը չէ զգում իր պարտաւորութիւնների ծանրութիւնը, անուշաղիք է և ուրեմն պարսաւանգիք արժանի»։

Եւ իսկապէս վատ են ճանապարհները և իսկապէս շատ քիչ է արուած անցեալ տարի։ Բայց արդարութիւնը պահանջում է խոստավանել, որ անցեալ տարուայ երկրորդ կիսում թէ Խորհուրդը և թէ նրա ծառայողները ուղղակի միջից կիսում էին բատ կարելոյն շատ բան անելու, բայց արդէն առաջին կիսամեակը անցել էր անգործութեան մէջ, անփութութեան չնորհիւ, իսկ մինչև քար բերեն ու պատրաստելը—աշնանային անձրեններն սկսուեցին։ Եւ դեռ պէտք է զարմանալ, որ այդքան կարճ միջոցում, 12 վերստ նոր ճանապարհ էր չի-նուել... թէ ինչ էր պատճառը, որ այդքան ուշ սկսեց Խորհուրդը մտածել ճանապարհների մասին—անյայտ մնաց, բայց անաշառ ունկնդրի համար պարզուեց, որ կարճ ժամանակամիջուցում դրանից աւելին անկարալի էր առնել։ Խորհուրդը ստիպուած

է եղել 9 միլիոն (!) պուդ քար բերել տալ ծովով—Անդրկաս-  
պեան երկրից, երկաթուղով—ուրիշ հեռաւոր տեղերից և դա  
հանագը բան չէ: Ուրիշ տեղերում մի խորանարդ սաժէն խիճը  
14—16 ո. է նստում, իսկ Խորհուրդը երբէք չէ կարող այդպիսի  
հեռաւոր տեղերից բերել տալով 80—90 ո. պակաս նստեցնել:  
Նոյն իսկ հէնց այդ գնով չէ կարելի ուզածի չափ քար բերել տալ:

Այս աղմնալից նիստի մէջ սակայն և ոչ մի կասկած  
չը յայտնուեց Խորհրդի ծառայողների «ձեռների մաքրու-  
թեան» մասին. այդ մասին կասկածող չը կար: Բայց տե-  
ղական «Քառուկ» լրագիրը ֆակտը յեղաշրջելով իր կլօւնական  
բարբաջանքներում կամեցաւ ստուեր գցել մի խումբ մարդկանց  
վրայ, ուղղակի հասարակաց փողերի գող հոչակելով նրանց: Ի  
պատիւ օպազողիցիայի պէտք է ասել որ հետագայ նիստին ինժ.  
Ղուեանը, որ այնքան մտրակել ու վատաբանել էր Խորհրդի ճա-  
նապարհաշինութեան գործը, պարտք համարեց յայտնել իր զը-  
զուանքը յօդուածագրի կեղառոտ ակնարկի դէմ և բացատրել, որ  
իր և իր համախոհների մոքովն էլ չէ անցել մեղադրել Խորհրդի  
ծառայողներին գողութեան կամ անմաքրութեան մէջ: Եւ իսկա-  
պէս, ընթերցողը ինքը կարող է դատել վերել բերածից, որ  
այդպիսի բան չէ ասուել ժողովում, և այդ մասին իր պարտքը  
համարեց պաշտօնապէս վկայել նոյն լրագրում Ժողովի նախա-  
դահ ինժ. Շուտակը, Ժողովի միաձայն իննդրանօք:

Ի.

## ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻ ԱՇԽԱՐՀԻՑ

Զ Ո Ւ Զ Ե Պ Պ Ե Վ Ե Ր Դ Ի

Յունուարի 14-ին Միլանից հեռագիրը բերեց կօմպօղիսոր վերդիի մահուան լուրը: Այդ գոյժը սաստիկ յուղեց բոլորին, որովհետեւ այդ անունը գիտէր զրեթէ ամբողջ աշխարհը:

Աւելորդ չենք համարում ծանօթացնել մեր ընթերցողներին այդ հոչակաւոր մաէստրոյի կենսագրութեան հետ \*):

Իտալիայի հարաւային կողմը, Բուսսետո քաղաքից հինգ վերստ հեռաւորութեան վրայ, գտնւում է մօտ երկուհարիւր բնակիչ ունեցող փոքրիկ Թօնկօլա գիւղը, որի միակ փողոցի վրայ իր սեփական պանդոկում աղնիւ կեանքով ապրում էր մի երիտասարդ ընտանիք:

1814 թուին ոռւս-աւստրիական դաշնակցութեան զօրքերը, հետամտելով պրինց Եւգինէի ֆրանսիական գնդին, եկան հասան իտալիայի հարաւային խաղաղ անկիւնը ևս, բերելով իրանց հետ մահ և կործանումն ամեն մի քայլափոխում, չը խնայելով ոչ քաղաքներն ու գիւղերը, ոչ տներն ու կալուածքները, ոչ ծերերին, ոչ կանանց և ոչ երեխաներին: Այս վիճակին ենթարկում է և Թօնկօլա գիւղը: Նրան հրկիզում են չորս կողմից, բնակիչները իրանց միակ ապաստանը գտնում են եկեղեցու մէջ, բայց նրա սրբազն սեղանը և սիւները նոյնպէս ներկւում են անմեղ զոհերի արիւնով: Մոռացուած մնում է միմիայն բարձր զանգակատունը, ուր պատսպարւում է, կրծքի երեխան ձեռին, պանդոկի ջահէլ և գեղեցիկ տիրուհին—Լուիզա Վերդին: Դժբախտ մայրը անց է կացնում այստեղ մի ամբողջ օր, մինչև Թօնկօլայից թշնամու հեռանալը: Այսպէս ազաւում է Զուղեպ-պէն՝ երկու անդամ պարտական մնալով կեանքով իր մօրը:

Վերդին առաջին անգամ երաժշտութիւն լսում է գիւղի եկեղեցում, ուր ամեն տօն օրերին նուագում են օրգան գոր-

\* ) „Վերդի, Բիոգրաֆ. очеркъ“ В. Д. Корганова, Москва 1897.

ծիրի վրայ և երգում ներդաշնակ։ Գրաւուած օրգանի ձայնից՝  
տուն գալով փոքրիկ վերդին հօրը խնդրում է, որ նրա համար  
մի օրգան գնի։ Հայրը բերում է նրան մի հին դաշնամուռ, որի  
վրայ և տարեկան երեխան խաղալով յարմարեցնում է զանա-  
զան եղանակներ։ Մի անգամ էլ պատահմամբ գտնում է եռա-  
ձայնի ներդաշնակութիւն—գո, մի, սօլ։ Անչափ ուրախանալով՝  
այդ օրը նրան շատ է կրկնում և հրճում։

Միւս օրը գարձեալ սկսում է փնտոել այդ ձայները դաշ-  
նամուրի վրայ, բայց ինչքան աշխատում է չէ լինում, բարկա-  
ցած վերցնում է մուրճը և սկսում կոտրատել դաշնամուրի մատ-  
ները։ Նրան պատժում են և կանչում վարպետին շինելու, որ  
գործը վերջացնելուց յետոյ, գրում է գործիքի մի անկիւնում։  
«Ծինեցի ծրի, որովհետեւ փոքրիկը մուղիկայի շատ սէր ունի»։

Թիւղի ծերունի օրգանիստի մօտ փոքրիկ Վերդին կանո-  
նաւոր պարապելով՝ այնքան առաջադիմութիւն է անում, որ 12  
տարեկան հասակում փոխարինում է վարժապետին և մի քանի  
տարի օրգանիստի պաշտօն է կատարում։ Զը բաւականալով դը-  
րանով՝ Վերդին խնդրում է հօրը ուղարկել իրան մի տեղ սովո-  
րելու։ Հայրը ուղարկում է նրան Բուսսետօ, ուր Վերդին յաճա-  
խում է ուսումնարան և ազատ ժամերը նուիրում երաժշտու-  
թեան, ապրելով հօրը ծանօթ Անտօնի Բարեցցիի տանը։ Այդ  
տունը մինչեւ օրս այնպէս է պահուած, ինչպէս սրանից 70 տա-  
րի առաջ և Բարեցցիի խնդրանազ Վերդին իր ծեռքով տան ճա-  
կատին գրել է՝ «Stanza di D. Verdi» (Վերդիի բնակարանը)։

Փոքրիկ երաժիշտի երկրորդ ուսուցիչ, քաղաքի օրգանիստ  
Պրօվեղի յայտնում է նրա խնամատար Բարեցցիին, որ աշա-  
կերտը իրան գերազանցում է, և խորհրդակցելով, ուղարկում  
են Վերդիին Միլան՝ կօնսերվատորիա մտնելու համար, օժան-  
դակութիւն տալով Բարեցցիի և «Մօնտէ դի Պիետա ընկ.» կող-  
մից 1200 ֆր. տարին։

Կօնսերվատորիան գտնում է, որ նա անընդունակ է և ու-  
ղարկում է նրան Սկալա թատրոնի երաժշտապետ Լավինիայի  
մօտ։ Վերդին՝ դեռ Բուսսետոյի հին թատրոնում զմայլած լինե-  
լով Բելլինիի, Ռոսսինիի և Դոնիցետտիի գրուածքներով՝ մեծ  
յափշտակութեամբ յաճախում է Սկալա թատրոնը, նրանց մու-  
զիկան լսելու և աննշմարելի կերպով ինքն էլ է սկսում է գրել  
արիաներ ու երգեր, որոնք յետոյ մտնում են նրա օպերաները։

Նրա առաջին հոչակը եղել է Հայդընի «Աշխարհի ստեղծումը»  
օրատօրիան կամ աստուածաբանական պիէսը՝ խմբով և օրկես-  
տրով կառավարելը, որ մեծ աջողութիւն է գտնում Միլանում։

Օրգանիստ Պրօվեղիի մահուանից յետոյ Վերդին հրաւիր-

ւում է Բուսսետօ, այնտեղի «Եռագասէր Ընկ» դիրեկտորի պաշտօնով՝ որ, ըստ հին սովորութեան, մի և նոյն ժամանակ պէտք է լինի և Մայր եկեղեցու օրգանիստը։ Հոգևորականութիւնը մերժում է եղեղեցական երաժշտութիւնը նրան յանձնելու խնդիրը, գտնելով նրան նորաձեւ և գեռ ջահէլ երաժիշտ, և հրաւիրում ուրիշին։ Սրանով հասարակութիւնը բաժանւում է երկու կուսակցութեան։ Վերդիի կողմն են անյնում ինտելիգենցիան ու երիտասարդութիւնը։ Վերջինների վճռով «Եռագասէր Ընկ» յետ է վերցնում եկեղեցուց իրանց պատկանեալ բոլոր նուաններն ու գործիքները։ Հոգևորականների երկար տարիների հալածանքը շատ է օգնում Վերդիի հոչակի տարածման։

Ապրելով Բարեցցիի տանը, երիտասարդ երաժիշտը՝ բայց իր օպերային պարապմունքներից նաև դասեր է տալիս տան տիրոջ դստեր, 17 տարեկան գեղեցկուհի Մարգարիտային և յաճախ նուագում նրա հետ պիանոյի վրայ չորս ձեռքի։ Զայների ներդաշնակ միութիւնը գտնում է արձագանք և նրանց սըրտերի մէջ և նրանք ամուսնանում են։

Ունենալով արդէն պատրաստի բաւականաշատի նիւթեր՝ 1838-ին Վերդին տեղափոխում է Միլան։ Այս ժամանակից է սկսում նրա օպերային գործունէութիւնը։

Վերդին Միլանում նախ որոնում է իր գործի համար լիբրետո (գրքոյկ) պատրաստող մի բանաստեղծ և շուտով զբանում երիտասարդ Սոլերային, որ նոյնակէս այդ տեսակ գործ էր վնասում։

Յետոյ նրա օգնութեամբ բառերը կազմելով և իր գրած եղանակները քաղուածօրէն կարգի բերելով, Վերդին գրում է իր առաջին օպերան—«Օ Երտօ ծ Տան Յու ի օ ա ն ո ւ ն ո ւ մ ։

Շատ խոչընդուների և արգելքների պատահելուց յետոյ, վերջապէս 1838 թ. նոյեմբերի 17-ին ներկայացնում են այդ օպերան Միլանի Սկանա թատրոնում։ Աջողութեան ապացուցն այն է, որ օպերան իր պարտիտուրայով գնւում է հրատարակիչ Ռիկօրտիի կողմից 2000 ֆր.։ Կօմպօլիտօրի հետ պայման են կապում, որով նա պարտաւորում է գրել տարէնը երեք օպերա Միլանի և Վիեննայի կայսերական բեմների համար, իւրաքանչիւրը 3500 ֆրանկով։

Դեռ գործը չը սկսած՝ Վերդին հիւանդանում է և երկար ժամանակ պառկած մնալով գրեթէ մնանկութեամ աստիճանին է հասնում ու ընկնում պարագերի տակ, որին ազատում է նըրա կինը, ծախսելով իր բոլոր իրեղէնները։ Վեր կենալուց յետոյ՝ մկանում է նա գրել և մեծ ոգենորութեամք առաջ է տանում գործը, երբ յանկարծ հասնում է նրան մի՝ աւելի մեծ

դժբախտութիւն։—հիւանդանում է նրա մեծ երեխան և մի քանի օրուայ մէջ վախճանուում մօր գրկում։ Քիչ յետոյ հիւանդանում է զստրիկը, որի վերջն էլ նոյնն է լինում։ Այդ էլ բաւական չէ, նրա դեռ դեռահաս կինը ուղեղի բորբոքումից նոյնպէս մեռնում է։—«Ես մենակ էի... մենակ։ Երկու ամսուայ ընթացքում ես կորցրի իմ սրտին սիրելի երեք էակներ։ Եւ այսպիսի պայմաններում ես պէտք է կատարէի իմ տուած խօսքը և գրէի կօմիկական (կատակերգական) օպերա», ասում է Վերդին։

Բայց հեղինակը կատարում է իր խօսքը և վերջացնում է օպերա բուֆ (կատակ) «Un giorno di regno» («Մի օր թագաւոր») պիեսը, որ ներկայացնում են 1840 թ. սեպտ. 9-ին, յետոյ կարգով և Նէապոլում, և Վենետիկում, բայց ոչ մի տեղ աջողութիւն չէ ունենում, որովհետեւ հեղինակը աւելի ողբ գրող էր, քան թէ ծիծաղ։

Այս անաջողութիւնը և ընտանեկան դժբախտութիւնները Վերդիին հասցնում են յուսահատութեան աստիճանին և նա փոխելով բնակարանը, անձնատուր է լինում ունայն կեանքի։ Բայց Սկալա թատրոնի դիրեկտօր Մերկլին հանգիստ չէ թողնում նրան և Վերդին շատ տատանուելուց և ընդդիմանալուց յետոյ նորից ձեռք է առնում գրիչը և չորս ամսուայ ընթացքում վերջացնում «Նաբուգոնոսոր» մեծ օպերան, որ 1842 թ. մարտի 9-ին ներկայացնում են առաջին անգամ։ Աջողութիւնը լինում է Սկալա թատրոնի պատմութեան զարդը։ Յայտնի գերակատարների մէջ ամենաառաջին տեղն է բռնում արտիստուհի Ժօղեփիսա Ստրեպպովին, որ ստեղծել է Ավրիգանիի դերը։ Նա տիրապետում էր նշանաւոր ձայնով, շկօլայով և խաղավ, որ բաց են ամսում նրա առաջ Եւրոպայում տրիտոնիներ։ Բայց այդ երկար ժամանակ չէ տեսում, որովհետեւ հոչակաւոր արտիստուհի օր։ Ստրիպպովին դառնում է ոչ նուազ հոչակաւոր տիկին Վերդի։

Բոլոր օպերաների նիւթերը Վերդին ինքն էր ընտրում և դասաւորում, բանաստեղծին մնում էր միայն ոտան աւորով խօսքեր գրել։ Այսպէս էլ ընտրում է հեղինակը Վեկտօր Հիւգովից «Թագաւորը զուարճանում է» դրաման, Վենետիկից պատուէր ստացած օպերայի համար։ Բայց նրան յայտնում են, որ գրաքննիչը թոյլ չի տայ այդ օպերան ներկայացնել, մինչև անգամ կթէ անունը փոխուած լինի «La Malédiction», ինչպէս մտադիր է եղել անելու Վերդին։ Այն ժամանակ կօմպօղիտօրը թագաւորի դերը փոխում է հերցողի, իսկ հերոսին տալիս է նրա պա-

լատական խեղկատակի դերը, անուանելով օպերան «Միգոլեսո», որ անմահացնում է Վերդիի կօմպօղիտօրական անունը: Մեծ վարպետը գրում է «Միգոլէտօն» իր հայրենիքում՝ Բուսսետոյում, առանձնանալով մեղ ծանօթ տան մէջ, իր նախկին աներոջ մօտ: Երբ սկսում են կրկնողութիւնները Վենետիկում, յայտնի է լինում, որ չորրորդ գործողութեան մէջ հերցօդի արիան բաց է թողուած. կօմպօղիտօրը դիտմամբ, փուրօր գործելու մտքով, մինչև վերջին օրը չէ բերում արիան: Երբ արդէն փորձին կատարում են նոր արիան, բոլոր ներկայ եղող նուադող և երգողները հիանում են: Դա է «La donna è mobile» (Կինը փոփոխամիտ է) արիան, որ հոչակուած է ամեն տեղ: Առաջին ներկայացումը 1851 թ. մարտի 11-ին ուղղակի յափշտակել էր լսողներին:

Երկու տարի յետոյ լոյս է տեմնում «Տրովադո» օպերան, որ գրուած է Հռոմի բեմի համար և ներկայացուած 1853 թ. յունուարի 19-ին: Զը նայած վատ եղանակին, ցեխին, անձրենին և այդ ժամանակի ծիրուս գետի սովորական վարարման, հասարակութիւնը առաւտուանից, մինչև ծունկը ջրի մէջ կանդնած կասսայի մօտ, տոմսակ է ուղում հերթով: Ներկայացումը անցնում է աղմղակից օվացիաներով հեղինակի համար:

Վենետիկի ազգային թատրոնի դիրեկցիայի առաջարկութեամբ Վերդին գրում է իր տասնեխններորդ օպերան, որի նիւթը վերցրած է Ա. Դիւմայի «La dame aux Camélias» (Կամելիազարդ տիկին) դրամայից: Օպերայի անունն է «Տրավիատա», որ նշանակում է անբարոյական կին: Առաջին անգամ ներկայացրել են Պարիզի բեմի վրայ 1855 թ. մարտի 6-ին: Վերդին այդ առիթով գրում է իր աշակերտ և մաերիմ էմինանուէլ Մուշկոյին: «Երէկ տրուեց «Տրավիատան» անաջող: Ի՞մն է մեղքը, թէ երգողներինը, ապագան ցոյց կը տայ»:

Այն օրից «Տրավիատան» մի առանձին աջողութեամբ է անցնում ամեն տեղ:

«Յիսուն տարի յետոյ, ասում է Ալեքսանդր Դիւման, ոչ ոք պիտի յիշէր իմ «կամելիազարդ տիկին» դրամայի մասին, բայց Վերդին անմահացրեց նրան»: Մեր ժամանակակից հոչակաւոր Քրիստինա Նիլսօն և «Տրավիատա» փոխադարձարար իրար պարտական են իրանց աջողութիւններով:

Ապա մի շաբք անաջողութիւններից յետոյ Վերդին լոյս է ընծայում այնպիսի մի օպերա, որ մոռայցնել է տալիս անցեալը, հիացնում է բոլորին և անչափ վարձատրում նրան բարոյապէս և նիւթապէս: Դա «Դիմակահանդէս» օպերան է,—«Un Ballo di Maschera»: Ակդրում այդ օպերայի անունը «Գուստավ Ա» է ե-

դեր, բայց երբ Նէտապոլում կրկնողութեան ժամանակ հեռագիր է ստացւում, որ յունուարի 13-ին 1858 թուին Նապալէօն III-ին փորձել են սպանել, հանգամանգները փոխուում են: Գրաքննիչը թոյլ չէ տալիս բեմի վրայ ներկայացնել Շվեդիայի թագաւոր Գուստավ III-ին սպանելու տեսարանը և արգելում է օպերան: Շատ նեղութիւններից յետոյ՝ Վերդին հարկադրուած Գուստավ III-ին փոխարինուում է կոմս Վարվիկ անունով և անցքն էլ փոխանակ Շվեդիայի, փոխուում է Ամերիկա և այդպիսով առաջին անգամ «Դիմակահանդէս» օպերան ներկայացւուում է Հռոմի «Apollo» թատրոնում 1859 թուին, գրուած օրից մի տարի յետոյ: «Բալ-Մասկարադ» անունը մոլորեցուցիչ է: շատերը կարծում են, որ դա մի թեթևոլիկ պիես է, մինչդեռ ընդհակառակը, շատ ողբերգական է:

Աւելի նուազ աշողութիւն է ունեցել Պետերբուրգի մեծ թատրոնի համար գրուած և 1862 թուին նոյեմբերի 10-ին ներկայացրած «Ճակատագրի ոյժը» օպերան, որի նիւթն առուած է մի ժամանակ մօգա գառած սպանացի Դօն-Անջելօ հեղինակի դրամայից, որի մէջ երեք ներուներից մէկը ինքնասավանութիւնն է գործում, երկրորդը մենամարտութեան մէջ է մեռնում, իսկ երրորդին սպանուում են վրէժից: Ի հարկէ այսքան մահ բեմի վրայ ջղային Վերդին չէ կարողացել լաւ մուզիկայով նկարագրել և գուրս է եկել մի ստիպուած գրուածք: Ճակատագրի կամքն է եղել, որ Վերդին իր քսանամեայ անընդհատ գործունէութիւնը դադարեցնէ և կնքէ «Ճակատագրի ոյժով»...

Արդէն մենք տեսնուում ենք Վերդիի մուզիկան կերպարանափոխուած: Երիտասարդ ժամանակուայ կատաղի յարձակումները, չուտ չուտ գործածուած չանթահար ակօրդները, յուզման տեսարանների ծայրայեղ սաստկութիւնը և մեղմութիւնը և այլ զգացմունքների արտայայտութիւնը այժմ փոխարինուում են աւելի մտածուած և անդին համեմատ գործադրութեամբ: Դա բացատրւում է ժամանակի երաժշտութեան լաւ ձևերի մշակմամբ և Վագնէրի, Լիստի, Բերլիոզի և Մէյերբէրի երաժշտական նորամոյժ հեղինակութիւններից առաջացած յեղափոխութեան աղդեցութեամբ: Վերդին ուշի ուշով հետևելով առհասարակ կենաքի և գիտութեան նոր երեոյթներին, մանրամասնօրէն քննուում է ամեն մի նոր հեղինակութիւն և ժամանակով նուագուում ուրիշի գրուածքները, որոնցից մեծ տպաւորութիւն են թողնուում նրա վրայ Վագնէրի հեղինակութիւնները: Այդ ազգեցութեան տակ գրում է նա «Դօն Կարլոս» Պարիզի ցուցահանդէսի համար, ուր և արւում է այդ նոր ձեի գրուած օպերան 1867-ին, մարտի 11-ին, բայց բոլորովին անաջող: Նոյն

վիճակին ենթարկում է նաև Լօնգօնում: Այդ ժամանակամիջոցում ընտրում են Վերդիին պատուաւոր անդամ Ֆրանսիայի գեղարուեստական Ակադեմիայում՝ մեռած Մէյերբէրի տեղ, դնում են նրա կիսարձանը թատրոնում, ձօնում նրան ոտանաւորներ և երգում, իսկ նա առանձնացած Գենուա իր նոր գնած ձմերային պալատում, անցնում է անգործ կեանք:

1869 թուի վերջերում Կայիրէի թատրոնի դիրեկցիայից ստացուած մի առաջարկութիւնը շատ զարմացնում և հետաքրքրութում է Վերդիին. դա խըգիվ հզմայիլ-փաշայի առաջարկութիւնն էր՝ եգիպտական կեանքից աղդային ժողովրդական ոգով մի օվերա գրելու: Իր աշակերտ Մուցիովի խորհրդով մեծ վարպետը պահանջում է 40 հազար ռուբլի այդ տեսակ աշխատութիւն զլուխ բերելու համար: Համաձայնում են և շուտով ուղարկում նրան նիւթի լիբրետոսն, որ Վերդին փոփոխելով իր ուղածի պէս, մեծացնում է մի տեսարանով ևս, այն է «Աիդա» օպերայում Բագամէսին դատապարտելու տեսարանը: «Աիդա» գերազանցում է Վերդիի բոլոր միւս օվերաններին թէ բովանդակութեամբ, թէ եղանակներով և թէ գրելու ձեռվ: Ամրոջ Եւրոպան յախշտակուած հետևում է պիեսին. հետաքրքրում է նրան ասիական կեանքից առնուած նիւթը, արևելեան եղանակներով գունաւորուած մուզիկան և մանաւանդ վայններական յեղափոխած երաժշտական ձեր, որ շատ չափաւոր և յարմար կերպով գործադրել է այս օպերայում Վերդին: «Աիդայի» կրկնողութիւնները սկսւում են միաժամանակ Կայիրէյում, Միլանում և Պարիզում: Առաջին կրկնողութիւնը Կայիրէյում տեսում է երեկոյեան 7 ժամից մինչև առաւոտեան 4 ժամը և բոլորն էլ ոգևորուած, առանց որ և է յոզնածութիւն զգալու, ուրախ տրամադրութեամբ ցրւում են:

«Աիդան» Կայիրէյում ներկայացւում է առաջին անդամ 1872 թուի մարտի 7-ին անհուն աջողութեամբ, որ առաջի է հեղինակին թատրոնական պատմութեան մէջ չը տեսնուած օվացիաներ: Բ. գործողութեան ժամանակ կօմպօղիտօրին մատուցանում են փղոսկրեայ դաւազան թանկագին քարերով գրուած՝ մի կողմը Աիդա, իսկ միւս կողմը Verdi:

«Աիդան» ամեն տեղ ամենասիրելի օվերան է, և այն օրից մինչև այսօր չկայ մի բնմ, որ իր սեղօններում մի քանի անդամ չը ներկայացնէ նրան:

Միլանում 1873 թուին վախճանւում է հոչակաւոր բարանաստեղծ և ժողովրդից պաշտուած Ալկսանդր Մանցոնի: Նրա մահը սաստիկ տիրեցնում է մեր կօմպօղիտօրին, որ ապրում է եղել այն ժամանակ իր «Սանտ-Ագաթա» դղեակում:

Վերդին թողնում է ամեն բան և թոշում Միլան, ուր իսկոյն յայտնում է քաղաքագլխին և ուրիշներին, որ նա մտադիր է այդ առիթով գրել մի մեծ դամբանական Requium. 1874-ի մարտի 22-ին, համաձայն հանգուցեալի ցանկութեան, տարեդարձ է կատարում ո. Մարկոսի եղեղեցում և այդտեղ նուագուում է Requium-դամբանականը, հեղինակի ղեկավարութեամբ և 100 հոգի օրկեստրի, 120 հոգի խմբի և օպերային բոլոր արտիստների մասնակցութեամբ: Այս զրուածքի մէջ երեսում է Մոցարտի սուրբ աղաջանքի, Բախի անհուն վսեմութեան և Բէտհովենի ոգու անսահման մեծութեան միութիւն: Բայց Վերդին այստեղ էլ մնում է յատուկ դրամատիկական զրող: Աստուածայնութիւնը այստեղ խառն է մարդկայնութեան հետ, խելացի բողոքները—երկնային երգերի հետ, բնութեան գեղեցկութիւնը—անյայտութեան հետ: Մի խօսքով՝ այս հեղինակութիւնը պարունակում է իր մէջ մուղիկայի իդէալը, նորանում չկան թոյլ և պակասաւոր տեղեր կամ կտորներ, նրա համար էլ «Requium»-ը Վերդիի ամենալաւ, ամենաբարձր հեղինակութիւնն է: Վերդին արդէն այնքան աշխարհառչակ էր դարձել, որ երբ 1887 թ. յունուարի 22-ին իր նոր Օքելլօ օպերան էր ներկայացուում, ամեն մի գործողութիւնից յետոյ մամուլի ներկայացուցիչները հեռազրում էին իրանց երկիրը, յայտնելով, որ Վերդին փոխել է իր ուղղութիւնը և փոխանակ իտալական մելոդիայի՝ գրել է վագներական հարմօնիա:

Եւ իրաւ, իտալայիներին բոլորովին դիւր չէին եկել այդ օպերայի երգերը:

1890 թուին մուզիկան հարստանում է Վերդիի նոր և վերշին գեղարուեստական ստեղծագործութեամբ, այն է՝ նրա «Ֆալսրաֆ» կօմիկական օպերայով:

Առաջին ներկայացումը Միլանում 1893 թ. յունուարի 28-ին կրում է մի մեծ ժողովրդական տօնախմբութեան բնաւորութիւն:

Վերդին, իբրև արտիստ, լիովին ստացել է կեանքից իր բաւականութիւնը. նա հասել է փառքի, հարստութեան և խորին ծերութեան: Դրեթէ ամբողջ մի դար է անցնում Վերդիի աչքի առաջ (1813—1901 թ.): և այդ XIX-րդ դարը չէ տալիս նրան հաւասար, չասենք բարձր, մի այլ գործիշ-կօմպօղիտօր, որ մրցէր կամ ձեռքի տուած գործէր նրա հետ: Վերդին մենակ մատուցանում է ահազին ծառայութիւն ամբողջ մարդկութեան ընդհանրապէս և իտալիային առանձնապէս: Նա մտցնում է գեղարուեստական երաժշտութեան մէջ զգացմունքներ արտայայտելու այն ձեր, որի մասին իտալիայում գաղափար ան-

գամ չունէիս։ Նրա ժամանակակից կօմպօզիտօր Բօսսինիի (վախ-  
ճանուած՝ Վերդիի երիտասարդ ժամանակ) գրածը ուրիշ ոչինչ  
չէր, բայց եթէ իր նախորդների գրածի շարունակութիւնը, —  
միշտ մեղմ, քաղցրահնչիւն մուղիկա, իսկ Վերդին մոցրեց ամե-  
նազօրեղ պատկերներ՝ կատաղութեան, բարկութեան, յուղ-  
մունքի, տրտմութեան, վշտի և կսկիծի։ Ճիշտ է, սկզբում նրա  
երիտասարդ ժամանակը ոգեկան երևյթների արտայայտութիւ-  
նը չափազանցրած է, բայց երեսուն տարին անցնելուց յետոյ  
աւելի համդարտ և լուրջ է դառնում նրա արտայայտելու ձևը։

Վերդին ուղղակի դաստիարակել է իտալացոն։ Ամենահար-  
կաւոր ժամանակը նա իրեն պրոպագանդիստ—քարոզիչ, թա-  
փառելով զանազան քաղաքներն ու գիւղերը, խմբեր էր կազ-  
մում և տարածում գեղարուեստական, ազգային և ժողովրդա-  
կան երգեր իտալացիների բոլոր խաւերի մէջ։

Նա գես պատանի հասակում յօրինել, սովորեցրել և տա-  
րածել է մի շարք հայրենասիրական ոգևորող երգեր, որոնցից  
աւատրիացիների դէմ գրած «Mia patria» («Մեր Հայրենիք»)  
երգը մեծ դեր է կատարել և յիշւում է մինչև այսօր արտա-  
սուքով...»

Վերդիի թաղմանը ներկայ էր Միլանի պէս մեծ քաղաքը  
իր շրջակայքով։ Ամեն ինչ սենատ, պարլամենտ, դիւնատներ,  
համալսարաններ, եկեղեցիներ, գործարաններ, ուսումնարան-  
ներ, արհեստանոցներ, մագաղիններ, սրճարաններ, ճաշարան-  
ներ և պանդոկներ փակուել էին։ Դիակառաքը ծանրաքայլ շարժ-  
ւում էր բաց գլուխների ծովի միջով։ Թաղումը կատարւում էր  
հանգուցեալի ինոչ, ժողովինա Ստրեպպովիի, գերեզմանի կող-  
քին առանց ճառերի, և յուղուած ու տրտմած լուռ ամբոխի աշ-  
քի առաջ։

Բուսսետօի ինքնավարութեան առաջարկութեանը կառա-  
վարութիւնն ընդունեց շատ տեղերում արձաններ կանգնեցնել,  
և Միլանի մեծ փողոցին Վերդիի անունը տալ։ Տունը, ուր ծը-  
նուել է Վերդին, քաղաքը կը պահպանի և կօմպօզիտօրի արձանի  
համար կը տայ 20,000 ֆր.։

Բայց ամենից մեծ արձանը Վերդին կանգնեցրել է իր հա-  
մար ինքը։ Դա այն ապաստարանն է, որ նա կառուցեց Միլանում  
ծեր արտիստների համար, բոլոր յարմարութիւններով, բեմով,  
գործիքներով, գրադարանով, հիւրանոցով և բնակարաններով,  
թողնելով նրանց ապահովութեան համար նախկին տուածների  
հետ նորից հինգ միլիոն լիրա։

## ՆԵՐՓԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Նիւթապաշտութեան ոգին.—Ներողամիտ վերաբերմունք դէպի ճարպիկ գերիումները.—Հասարակական գումարներից օգտուելու ախորժակներ.—Իրական միջոցներ հասարակական գումարներ լավշտակող պարագիտների դէմ.—Հաշուետութեան և կօնտրօլի սկզբունքը.—Հին և նոր հայեցք պետութեան նպատակի մասին.—Նախ ծախքը, ազա եկամուտը.—Հին և նոր հայեցք պետական տնտեսութեան վրայ.—Հարկատու և հարկերից ազատ գառակարգեր.—Հարկերի արդար բաժանում.—Պետական արդիւնագործութիւն և առևտուր.—Պետական նախահաշիւր.—Ֆինանսների մինիստրի նախահաշիւր 1901 տարուայ համար.—Ռոկո քանակութեան նուազումը.—Հոնձերի նշանակութիւնը արդիւնագործութեան և առևտուրի ծաղկման համար.—Միլիոնարիդի բեռը.—Ստիլոդական և կուլտուրական ծախքեր:

Գոյութեան կոռուփ ներկայ հիմքը մասնաւոր սեփականութիւնն է, և քաղաքակրթական բարիքներից օգտւում է նա, ով ապահով է նիւթապէս: Այդ այդպէս լինելով, ոչ միայն ունեոր բուրժուան, այլ և գիւղացի ժողովուրդը շատ ներողամիտ են վերաբերում դէպի հարսաւանալու միջոցները: Թէ կրեսոսի պալատում և թէ գիւղացու խրճիթում դուք կը լսէք անվերջ պատմութիւններ այս կամ այն ճարպիկ գողի, խարեթայի, կեղեքիչի, կեղծ մնանկացածի մասին և միշտ կը նկատէք մի առանձին յափշտակութիւն թէ լսողների և թէ պատմողների մէջ: Բաւական է, որ մէկին աջողուել է զանազան ճարպիկ խարեթայութիւններով և մութ ճանապարհներով «փող դատել». արդէն շուտով մոռայւում է նրա անցեալը և նա դառնում է իր շրջապատզների հրճուանկը ու պատուի առարկան: միայն անաջողութեան դէպքում են ամեն կողմից յարձակում, պահարակում դողին, վաշխառուին, խարեթային: Հասարակական կարծիքը, այդ դէպքերում, թւում է, թէ աւելի զայրանում է յանցաւորի անհնորքութիւնից, քան բարոյական շարժառիթներից դրդուած... Նա, ով կարողանում է ճարպիկութեամբ խարել, աննկատելի գողանալ—երբէք չէ դրգուում հասարակութեան ատելութիւնը: Կարելի է տեսնել վաշխառուներ, սպե-

կուլիանտ բանկիրներ, կեղծ մնանկացածներ, դրամանենգ վաճառականներ, հազար ու մի զեղծումներով հարստացած պաշտօնաթող անձեր, խարդախ կապարառուներ, որոնք ամենամեծ պատիւների են արժանանում, «քարերաբաների» անուն են վաստակում միայն այն պատճառով, որ կարողացել են մութ ճանապարհներով փող դիզել, սակայն... առանց գատաստանի ենթարկուելու: Նոյն իսկ «ինտելիգենտը» պախարակելի մի քայլ չէ համարում այդպիսի քաջագործ «մեծատունների» հետ ամենամօտ կապեր հաստատելը... Սովորական բարոյական չափերը շատ թոյլ են մաքառելու համար այդ ընդհանուր նիւթապաշտական հոսանքի դէմ: Կօմֆօրտ ունենալու և կեանքի վայելքները ճաշակելու տենչը այնքան զօրեղ է, որ նոյն իսկ հասարակական շահերի գաղափարը ինքն ըստ ինքեան անզօր է կանգնեցնելու հետ ճանապարհով փող դիզոններին:

Մամուլը համարեա թէ անզօր է մազառել մասնաւոր յարաբերութիւնների մէջ կատարուող հազար ու մի մութ շահաղիտական գործերի դէմ: Երա զերը աւելի հեշտանում է, երբ հասարակական բնաւորութիւն է կրում սրա կամ նրա փորձը՝ յափշտակելու հասարակական կազքը: Այդպիսի պարագիտներից հասարակական սնվախանութիւնը պաշտպանելու համար կան երկու իսկական միջոցներ. խիստ հաշուեսւորիւն եւ կօնցօլ ամեն մի հասարակական տնտեսութեան վերաբերմամբ: Ազատ մամուլը միշտ կարող է այդպիսով երևան հանել չարագործներին: Անկասկած ամեն մէկը իր մասնաւոր տնտեսութեան վրայ անգամ կարող է համոզուել, թէ որքան անհրաժեշտ է մի տընտեսական գործի աջողութեան համար ճիշտ հաշուետութիւնը և վերաստուգումը: Բայց տեսէք, որ այդ նոյն ճշմարտութիւնը կարօտ է շատ անգամ բացարութեան, մանաւանդ անկարգ և կամայական բէժիմների սիրահար անձանց համար, որոնց ձեռնոտու է պղտոր ջուրը...

Թէ ինչ գազանային ախորժակներ կարող էին ունենալ մարդիկ դէպի հասարակական և պետական չաղ պատառները մի ժամանակ և Ռուսաստանում, այդ երեսում է Գօգօլի անմահ նկարագիրներից, օրինակ նրա «Մելիգօրից» և «Մոռած հոգիններից»:

Գօգօլի ժամանակ ևս «հաշուետութիւն ու կօնտրօլ» կար, բայց—լոկ իբրև ձեսկան, թղթի վրայ գոյութիւն ունեցող մի անզօր միջոց՝ սանձահարելու գանձարանի ցեցերին ու ժողովրդի կեղեքիչներին եւ միայն Ալեքսանդր Ռ-րդի մեծ վերանորոգութիւններից յետոյ հաշուետութիւնն ու կօնտրօլ դառնան իրական մի գործօն՝ հասարակական և պետական կանոնաւոր տնտեսութեան մէջ: Կայսրը ուղարկեց իր մերձաւոր

անձերից մէկին (Տատարինով) Եւրոպա, տեղն ու տեղը ուշ սումնասիրելու քաղաքակիրթ երկիրների պետական հաշուետութեան ու կօնտրով կարգերը, կազմակերպութիւնը և գործունէութեան ձեզ: Այդ նոր տիպի հաշուետութիւնն ու կօնտրովը իրապէս վերջացրին հին զեղծումներն ու գերփումները, և միութիւն մտցրին պետական ելեմուագի մէջ: Առաջ պետական ելեմուագը դիւնական մի գաղտնիք էր, մինչդեռ Ալեքսանդր Արդի հրամանով, 1862 թուից սկսած, միշտ յունուարի 1-ին հրատարակւում է ի գիտութիւն հասարակութեան պետական նախահաշիւր: Այդպէս ահա, հաշուետութեան և կօնտրովի մեխանիզմը կանոնաւորելով և հասարակական կարծիքին աւելի մատչելի գարձնելով երկրի ֆինանսական քաղաքականութիւնը, նոր կառավարութիւնը, բայցի այդ, նոր հայեացք մըտցրեց պետութեան նպատակի մէջ:

Առաջ պետութիւնը իր նպատակն էր դնում միայն պաշտպանել երկրը արտաքին թշնամիներից, պաշտօնեաների մի ահագին բանակի ձեռքով կառավարել հպատակներին, պատժել յանցաւորներին և, երկրի վարչութիւնն ու զօրքը պահպանելու համար, հարկ ժողովել միայն հասարակ ժողովուրդից: Մինչդեռ նոր հայեացքով պետութիւնը պէտք էր ոչ միայն արտաքին պաշտպանութեան մասին մտածէ, այլ և հոգ տանէ ժողովրդի կուլտուրական պահանջների մասին: Նա պէտք է կրասորական գիրք չը բռնէ աղջաբնակութեան զանազան դասակարգերի տնտեսական յարաբերութիւնների մէջ, այլ ներդործական գիրք կատարէ—օգնելով ժողովրդի այն խաւերին, որոնք տնտեսապէս տկար են և չեն կարողանում իրանց սեփական ուժերով բարձրանալ դէմքի լոյն ու քաղաքակրթութեան բարիքննը: Հարկի ծանրութիւնը այլ ես չը պէտք է անէծքի նման ճնշէր միայն «հարկատու» դասակարգերը, այլ նա պէտք է դառնարընդհանուրը, և, բայց այդ իւրաքանչիւր հպատակի հարկատութեան կարողութեան կարողանութեան համեմատ: Այլ ես ամեն բան պաշտօնեաների հոգատարութեան չէր մատնուած: Այլ հասարակութիւնն ստանում էր որոշ ինքնավարութիւն՝ իր տեղական պէտքերի մասին հոգալու համար: Եւ որովհետեւ ժողովրդի կուլտուրական պահանջների մասին ես հոգալը դառնում էր պետութեան առաջնակարգ նպատակներից մէկը, ուստի անհրաժեշտ էր ոչ թէ եղած եկամուտների համեմատ որոշել ծախքերը, այլ ընդհակառակը—նախ ծախքերն ի նկատի ունենալ և ապա հոգ տանել, որ զրանց ծածկելու համար միջոցներ հայթնայթուեն:

Այդ տարբերութիւնը պարզ է: Հին հայեացքն ասում էր.

ահա քեզ այսքան մի գումար և տուր ինձ այս ինչ հիմնարկութիւնները, թէկուղ կիսատպուտ. մինչդեռ նոր հայեացը յալտնում էր թէ—այս ինչ հիմնարկութիւնը կանոնաւոր վիճակի մէջ դնելու համար անհրաժեշտ է այսքան. ուրեմն—հոգացէք այդ անհրաժեշտ գումարը գտնելու մասին:

Այդ վերջին տեսակէտով օրէցօր բարգացող պետական կեանքը, օրէցօր աճող ժողովրդական ինքնազիտակցութիւնը պահանջում են առածդական ու անընդհատ աւելացող միջոցներ: Անշուշտ չէր կարելի յոյս դնել ուժասպառ եղած հարկատու դասակարգերի վրայ, քանի որ պետութեան տուած կուլտուրական բարիքներից օգտուողները հէնց ունեոր, բայց հարկերից ազատ դասակարգերն էին: Սրդարութիւնը և ինքը կեանքը պահանջում էին թեթևացնել հասարակ ժողովրդի ուսերից նրա ծանր բեռը և հարկատութեան մասնակից անել աւելի ունեւոր կամ արտօնեալ դասակարգերը: Բայց այդ դեռ բաւական չէր. պետութիւնը պէտք է հարկերից դուրս էլ եկամուտների աղբիւրներ ունենար. պօստը, հեռագիրը, փող կտրելը և պետական կալուածները արդէն տալիս էին որոշ եկամուտներ, բայց այդ միջոցներով անկարելի էր ծածկել ահազին ծախսերը և իրագործել մի շարք ծրագիրներ: Ե ահա պետութիւնը դառնում է նաև արդիւնագործ, առևտրական. երկաթուղիներն անցնում են պետութեան ձեռքը, ոգելից խմիչքների առևտուրը դառնում է պետական մենաշնորհում:

Պետական տնտեսութեան մէջ այդ նոր ուղղութիւնը պահանջում էր տնտեսական գիտութիւնների մէջ հմտութիւն ունեցող անձանց զեկավարութիւն: Եւ արդարեն, 1881 թւրից ֆինանսների մինիստր է նշանակում կիեվի համալսարանի պրօֆեսօր Բունդէն, որ սկսում է Ռուսաստանի կեանքի մէջ կամաց-կամաց իրականացնել Ալեքսանդր Ռ-ի ծրագրած տնտեսական վերանորոգումները: 1883 թուին վերացւում է Եւրոպական Ռուսաստանում գլխահարկը \*): Այդ կարգադրութեան չնորհիւ թեթևացաւ ժողովրդի ուսերի վրայ ծանրացած բեռը: Ճօրտութեան վերացումից յետոյ, որ հիմնովին փոփոխեց երկրի տնտեսական կեանքը, ուսւ գիւղացիները իրաւունք ստացան իրանց հողաբաժինների սեփականատէր դառնալ, սակայն որոշ տուրք վճարելով. պակասացրուեց և այդ տուրքը 12 միլիոնով: Միւս կողմից առանց անձնական աշխատութեան՝ ժառանգաբար կամ նուէրով ստացած կայքերի, ինչպէս և դրա-

\*) Մի կարգադրութիւն, որ աարածուեց և Սիրիրիացում 1898 թ., իսկ Կովկասում պէտք է գործադրուի ալս տարուանից:

մական կապիտուլի, կալուածքի, արդիւնագործութեան և առարի վրայ որոշ հարկի սահմանումով՝ հարկատութեան մասնակից դառնան ազգաբնակութեան ունեոր խաւերը։ Հիմուեց շինական բանկ, որպէս զի երկրագործի ձեռքը հեշտութեամբ անցնի հողը, որ նրա աշխատանքը գործադրելու գլխաւոր վայրն է։ Ձեռնարկուեց երկաթուղիների մի ահագին ցանց, որով սերտ կապ ստեղծուեց լայնածաւալ պետութեան զանազան մասերի մէջ և յարութիւն առան երկրի քնած ոյժերը երկաթուղիները մասնաւոր անձերի ձեռքից անցան արքունի գանձարանը. դրա չորհիւ հարստանում էր ոչ անհատը, կապիտալիստը, այլ պետութիւնը, որից շահ ունի բոլոր ազգաբնակութիւնը։ Այդ մի քանի տեղեկութիւններից պարզ է այն ուղղութիւնը, որ մտաւ երկրի ֆինանսական տնտեսութեան մէջ։ Ալեքսանդր Ռուդի կարգադրութեամբ 1862 թուից ի գիտութիւն հասարակութեան հրատարակում է Փինանսների մինիստրի պատճառաբանած տարեկան նախահաշիւը, որ հնարաւորութիւն է տալիս ընդհանուր գաղափար կազմել պետութեան ծրագրների մասին, երկրի տնտեսական կեանքի նկատմամբ։ Իւրաքանչիւր տարուայ սկզբում, յունուարի 1-ին, հրատարակում է թագաւոր կայսրին ներկայացրած նախահաշիւը։

Ցինանաների մինիստրի վերջին նախահաշուով 1901 տարուայ ընթացքում, ինչպէս այդ աջողուել է ներկայ մինիստր Վիտուեին 1888 թուից շարունակ, սովորական եկամուտներ աւելի են սպասւում, քան սովորական ծափեր։

Սովորական եկամուտ հաշուած է 1,730,096,000 ռ. իսկ սովորական ծափ 1,656,652,556 ռ., այսինքն սովորական մուտքը աւելի է ծախսից 73,4 միլ. ուռութիւնով։ Այդ յաւելումը զիսաւորապէս առաջ է գալիս խմիչքների արքունական մենաշնորհ վաճառումից և երկաթուղիների տարեցտարի ընդարձակուող ցանցից։ Այսինքն արդիւնաբերական և առևտրական երկու ձեռնարկութիւններից, որոնց մասին մենք յիշեցինք մի քիչ առաջ։ Սովորական ծախք ենթադրուում է նախորդ տարուանից 92,2 միլիօն աւելի։ Դարձեալ զիսաւորապէս վերև յիշած երկու ձեռնարկութիւնների ընդարձակումն և կազմակերպութիւնն է, որ սպասելու են այդ գումարը։ Այս տարուանից արդէն ամբողջ եւրոպական Ռուսաստանում մտցնւում է խմիչքների արքունական վաճառումը։

Արտակարգ ծախսերի համար նշանակուած է 131,8 միլիօն սուբլի, որ համարեա ամբողջապէս գնում է երկաթու-

ղային գործն ընդարձակելու վրայ։

Ընդհանրապէս թէ սովորական և թէ արտակարգ ծախսե-

րի գումարը 1901 տարուայ համար որոշում է 1,788,482 ռ. այսինքն 31 միլիոն աւելի քան անցեալ տարի: Եւ այդ չը նայած որ, ինչպէս յայտնում է Գինանամների մինիստրը, նախահաշմուը կազմելիս և քննելիս ի նկատի են առուած բոլոր միջոյները՝ սահմանափակելու համար ծախսերի յաւելումը բոլոր այն գէպերում, երբ այդ կարելի էր առանց վասելու պետական շահերը:

Բնականաբար մի երկիր, որ աճում է և զարգանում, չէ կարող պակասեցնել իր ծախսերը, այլ անընդհատ պէտք է այդ ծախսերը աւելանան նորանոր կուլտուրական պահանջների վրայ: Մի քանի տարի առաջ Ռուսաստանի ընդհանուր ծախսը 867,5 միլիոն էր, իսկ այժմ, ինչպէս տեսնում ենք վերև բերածներից, կրկնապատկուել է: Առասարակ յիշած թուականից մինչև օրս ծախսը միջին թուով իւրաքանչիւր տարի աւելացել է 54,2 միլ. ռ.:

Սակայն պետական տնտեսութիւնը, ինչպէս և մասնաւորը, եթէ նպատակ դնէ միայն ծազրը ծայրին հասցնել, ել ու մուտքը ծածկել, արտակարգ մի գէպի ժամանակ կարող է յանկարծ շատ անել գրութեան մէջ գտնուել: «Ռուսաց կայսրութեան տարածութիւնը, բացատրում է մինիստրը, այնքան մեծ է, նրա մէջ մտնող գաւառները այնքան տարբեր են իրանց կլիմայական և այլ բնական պայմաններով, ազգաբնակութեան նիստ ու կացով և ասզրուստ հայթայթելու աղբիւրներով, որ կառավարութիւնը պէտք է միշտ պատրաստ լինի այս կամ այն պատահարի գէմ: Ո՞րտեղից գանել միջոցներ ազգաբնակութեանը օդնութիւն հասցնելու, եթէ մտնեսութիւնը վարուի այնպէս, որ ծայրը ծայրին հասցնուի և էլ ոչինչ չը ինայուի սև օրուայ համար: Այդ գեռ ներքին կետնկում: Բայց Ռուսաստանի քաղաքական վիճակը, իրրև տիեզերական մի պետութեան, սերտ կապուած է միւս երկիրների կունքի հետ: Քաղաքական անակնկալ գէպերը կարող են պահանջել միջոցներ, որոնք միշտ պէտք է պատրաստ ունենալ ձեռի տակ, որովհետեւ փոխառութեան դիմելու պայմանները միշտ նպաստառոր չեն լինում: Անկասկած ինայողութիւն անելու, կամ մի գումար յետ զցելու համար, հարկաւառներից պէտք է մի քիչ աւելի վերցնել, բայց դրա փոխարէն տարէցարի աննկատելի կերպով անւում է ինայողութիւն, որ ասկահովում է անակնկալ պատուհասներից ժողովրդի և պետութեան կեանքը Այդ ինայած գումարներով կարելի եղաւ, օրինակ, վերջացնել Սիրիրի մեծ երկաթուղին, ուժեղացնել նաւատորմը, նորոգել զօրքի գէնքերը, օգնել ժողովրդին սովի ժամանակ, ծածկել այն ծախքերը, որ պահանջեց չինական բարգութիւնը և այլն»:

Ֆինանսների մինիստրը իր նախահաշութիւնը մէջ աշխատում է պարզել և այն թէ ինչն վերջին տարուայ ընթացքում երկրի ուկու քանակութիւնը զգալի կերպով, 74,1 միլ. ռ., պակասել է:

Բանն այն է, որ վերջին տարիներս համաշխարհային շուշայում դրամական կապիտալները թանդաշել են, որովհետև դրամի պահանջը աւելի էր, քան առաջարկը: Կապիտալների թանգանալով աւելի դժուարացաւ դրամ գտնել նոյն իսկ զեղջումով և փոխառութեամբ: 1898 թուր աշնանը ազատ կապիտալների սակաւութիւնը Եւրոպայում դառաւ շատ զգալի, որ և արտայայտուեց արժէթղթերի գների անկման և զեղջման ու փոխառութեամ տոկոսների բարձրացման վրայ: Յաջորդ երկու տարիների ընթացքում դրամային շուկայի այդ նեղուած վիճակը աւելի և ծանրացաւ չնորհիւ նոր աննպաստ քաղաքական համագումարին:

Զին-Եապօնական պատերազմից յետոյ իրերի դրութիւնը Եւրոպայում բաւական մեծ փոփոխութիւններ կրեց. Եապօնիայի սուսած պատերազմական բոլոր տուփանքը (կօնտրիբուցիա) վճարուած էր Եւրոպայի դրամային շուկաների միջնորդութեամբ: Այդ շուկաները փոխարինաբար տուին Զինաստանին աւելի քան 450 միլ. ռուբլի: Բացի այդ, խռովութիւնը թիւրքական Հայաստանուում, Կրետէյուամ, յոյնտաձկական և սպանամերիկական պատերազմները ձնշող աղդեցութիւն ունեցան դրամական գործերի ընթացքի վրայ: Հարաւ-Աֆրիկայի պատերազմի չնորհիւ ահազին գումարներ գուրս գնացին Եւրոպայից և, ոսկու հանգերի մշակութիւնը դադարելով Տրանսվալում, 30% զգական համաշխարհային շուկային ոսկու մատակարարումը: Վերջապէս Զինաստանի բարդութիւնները պահանջեցին ահազին դրամական միջոցներ գուրս հանել Եւրոպայից: Վերև յիշած քաղաքական հանգամանքներին պէտք է կցել և այն, որ Եւրոպական արդիւնագործութեան արագ աճումը կուլ տուեց ահազին կապիտալներ, Եւրոպացի կապիտալիստներ հեռու երկիրներում անգամ սկսեցին բազմաթիւ առևտրական, արդիւնագործական և երկաթուղային ձեւնարկութիւններ: Այդ բոլոր պատճառների չնորհիւ Եւրոպայում այժըմ ոչ միայն չէ զգացուում ազատ կապիտալների առատութիւն, այլ և նկատելի է ձգտում—կենարունացնել իր մէջ և դրաւել ազատ միջոցներ: Դեռ մի քիչ առաջ օտար կապիտալները առատութեամբ թափւում էին մեր երկիրը, այժմ այդ հոսանքը զգալի կերպով թուլացել է և նոյն իսկ յետ նահանջեց կապիտալը մեր երկրից: Մասնաւորապէս էլ Ռուսաստանը Մանջուրիայի երկրից, Կվանտունեան թերակղզու (Պորտ-

Արտուր) ամրացման և պարսկական փոխառութեան վրայ մնած միջոցներ արտահանեց երկրից: Սյդ բոլորին աւելացրէք և վերջին տարիների վատ հունձը, որի չնորհիւ պակասեց Ռուսաստանի արտահանութիւնը և հասկանալի կը դառնան ոսկու քանակութեան նուազման պատճառները:

Հունձի նշանակութիւնը մանաւանդ արժանի է ուշագրութեան. յիշած քաղաքական հանգամանքները ահազին միջոցներ խլեցին և Հիւսիս. Ամեր. Միացեալ-Նահանգներից, բայց մի շարք լաւ հունձերի չնորհիւ գօրեղացան այդ երկրի տնտեսական ոյժերը: Արդիւնագործի ամենամեծ յոյաը պէտք է մնի իր բնիկ ժողովրդի գնելու կարողութիւնը. երբ հունձը առատ է, այն ժամանակ բնականաբար աւելանում են ժողովրդի միջոցները. ուրեմն, աւելանում են և ապրանքներ սպառողների թիւը. արդիւնագործութիւնը և առևտուրը ծաղկում են, աճում է և կապիտալը: Սյօր, երբ ամբողջ Եւրոպան դրամի սով է զգում—եանկիները այնքան սուսատ ոսկի ունեն, որ կարող են փոխառութիւն տալ Եւրոպացիներին: Մինչդեռ մեր երկրում, վատ հունձերի չնորհիւ, ժողավարդը անզօր է՝ գնել մեր՝ արուեստական միջոցներով հիւսնդոտ գերածման հասած արդիւնագործների ապրանքները, ուստի շատ գործարաններ ստիպուած են պակասեցներ, նոյն իսկ դադարեցնել իրանց արդիւնահանութիւնը: Առողջ արդիւնագործութիւնը պէտք է իր հիմքը դնի հասարակ ժողովրդի բարօրաւթեան վրայ:

Յինանաների մինիստրի հրատարակած նախահաշութից կարելի է տեսնել թէ ամենուրեկ տիրող սպառնազինութիւնը ինչ ահազին բեռ է ազդերի համար: Անկասկած, երբ բոլոր մեծ պետութիւնները զինուած են, չէ կարող յետ մնալ նրանցից և աշխարհիս ամենալայնածաւալ տէրութիւնը, մանաւանդ երբ նրա Գահակալի խաղամիքական կոչը գեռ մնում է իրագործումից շատ հեռու մի սրբազն իդա: Այս է պատճառը որ կառավարութիւնը ժողովրդից ստացած միջոցների ահազին մասը ստիպուած է գործադրել երկրի արտաքին պաշտպանութեան վրայ: Սոլորական ծախքերի 1,656 միլիոնից 417 միլիոնը յատկացրած է զինուորական և ծովային մինիստրութիւններին, իսկ կուլտուրական կարևոր ծախքերը, այդ ստիպողական միլիութիւմի չնորհիւ, շատ համեստ թուերով պէտք է բաւականանան: Այդպէս, երկրագործութեան մինիստրութեանն ընկնում է 40 միլիոն, արդարագատութեան՝ 46 միլիոն և ազգային լուսաւորութեան միայն 33 միլիոն:

## ԳԱԻԱՌԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Անօրինակ հրդեհ Բագուի Սպիտակ քաղաքում, աղէտի զոհերը. ձեռք առաջ միջոցներ.—Քաղաքային ընտրութիւնները մեր գաւառներում. ի՞նչ տուեց մեզ քաղաքային ինքնավարութիւնը. թիւրիմացութիւն Շոշու ընտրութիւնների ժամանակ. —Երկաթուղին և Երևանը. քաղաքային հողի, ջրի հարցը. ընկերակցութիւններ:

Այս անգամ գաւառական կեանքի ամսական տեսութիւնը բաց ենք անում մի վերին աստիճանի ցաւալի աղէտի նկարագրութեամբ: Յունուարի 22-ի երեկոյեան Բագուի մօտ գտնուող զործարանական քաղաքի այն մասը, որ կոչում է Սպիտակ քաղաք, ենթարկուեց մի մեծ դժբախտութեան: Մինչև այդ երեկոյ այրուում էր մի ահազին ամբար, որ պարունակում էր իր մէջ մօտ 5 միլիօն պուդ մազութ և որի տարածութիւնը հաւասար էր համարեա մի դեսեատինի: Յունուարի 22-ի երեկոյեան այրուող մազութը սկսեց դուրս թափուել ամբարից: Ամբարը շնուած է բարձր տեղ, որպէս զի նրա մէջ եղած մազութը, խողովակների միջով, առանց մեքենաների ճնշողութեան, գնայ ծովի ափը, որը նրանց թափում են նաւերի մէջ: Այրուող մազութն էլ, դուրս թափուելով ամբարից, գնաց գէպի ցած: Դա մի բոցեղէն վոսակ էր, համարեա մարդու հասակի բարձրութեամբ: Հոսում էր Սպիտակ քաղաքի մի հատիկ փողոցով, թափուում էր տները, ի հարկէ, բոցալառելով ամեն ինչ, որ հանդիպում էր ճանապարհին: Մի կարծ միջոցում հրդեհը ընդունեց ժողովրդական աղէտի կերպարանք: Այրուում էին մարդիկ, այրուում էին նրանց անային իրերը, այրուում էին իրանք, աները: Լայն ու աղաղակները սրաաճմլիկ, աննկարապրելի տեսարանի տպաւորութիւնն էին սաստկացնում:

Անյաւ սարսափելի զիշերը: Յունուարի 23-ին բացուեց նոր տեսարան: Հարիւրաւոր մարդիկ մնացել էին բաց երկնքի տակ, զրկուած իրանց բոլոր գոյքից, մերկ ու քաղցած: Դըժբախտներից շատերը փորփորում էին մոխրակոյտերը, որոնելով ոչ թէ իրանց ունեցածների մնացորդները, այլ իրանց սիրելի-

ների դիակները: Իսկ հրդեհը դեռ շարունակւում էր, աւելի և երկիւղ ազգելով ամենքին: Բայց այդ երկիւղը, բարեբախտաբար, շուտ անցաւ: Հրդեհը չը տարածուեց, իսկ անտուն-անտէր մնացածներին իսկոյն օգնութիւն հասցրին:

Նահանգական իշխանութեան կարգադրութեամբ կազմուեց մի յատուկ մասնաժողով, որ պիտի ցուցակագրէր բոլոր վնասները, ինչպէս նաև յայտնի դարձնէր թէ որքան մարդիկ են զոհ գնացել կրակի բոցերին: Մինչև այժմ հրատարակուած պաշտօնական տեղեկութիւնները հետեւեալ թուանշաններն են տալիս. բոցերի մէջ այրուել են 11 հասակաւոր մարդիկ և 7 երեխաներ. այրուածներ ստացածներից 7 հոգի մեռել են, 109 հոգի բժշկում են: Այրուել են 11 տներ. 500 աւելի բանուորներ և արհեստաւորներ իրանց կրած վնասները հաշւում են 105,000 ռուբլի, իսկ անտէրերը և խանութիպանները ներկայացրել են 154,000 ռուբլու պահանջ:

Հասարակական օգնութիւնը շատ առատաձեռն էր: Կարճ միջոցում զմնազմն մասնաւոր նուիրատւութիւններից կազմուել է մօտ 10,000 ռուբլի: Օգնութիւնը այս անգամ լոկ տեղական էր. միայն Բագուն էր, որ փող էր նուիրում յօգուած դժբախտացածների: Եւ դա հասկանալի է: Բագուն, իբրև մի հարուստ քաղաք, հեշտութեամբ կարող էր առաջին օգնութիւնը հասցնել արկածեալներին: Եւ բացի դրանից, կայ այն հանգամանքը, որ ներկայ աղէտը բնական պատահարներից չէ առաջացել, այլ հետեւանք է նաւթային արդիւնաբերութեամ պակասութիւնների, և մէջ տեղ կայ մի ամբողջ դասակարգ, որ պատամխանառու է այդ հանրային դժբախտութեան համար: Մազութի ամբարը, որ հրային հոսանքներ տարածեց Սպիտակ քաղաքում, պատկանուժ է նաւթարդիւնաբերական ամենախոշոր փիրմաններից մէկին, «Կասպից-Սև ծովի» ընկերութեան, որի զիլսաւոր բաժնէտերը Բոտշելին է: Այդ ընկերութիւնը և առհասարակ Բագուի նաւթարդիւնագործները պարտաւոր էին տալ այն բոլոր վնասները, որ պատճառել է սարսափելի հրդեհը: Իսկ զրանք այնքան հարուստ պարտականներ են, որ հեշտութեամբ կարող են իրանցից պահանջած գումարը տալ, ապա ուրեմն և հասարակական բարեգործութիւնը իր կոպէկներով միայն պիտի թեթևացնէր նրանց վրայ դրած բեռլ, մի բան, որ երբէք ցանկալի չէ: Բուշիթի ընկերութիւնը արդէն անսահման կրեղիս է բաց արել վնասուածների պահանջներին բառականութիւն տալու համար: Այնպէս որ պէտք է յոյս ոնենալ, որ վնասուածները, համարեա բացառապէս բանուոր և արհեստաւոր մարդիկ, նիւթական զրկանքներ չեն կրի հրդեհի պատճառով:

Մինչև որ չը գայ սարսափելի աղէտը, մարդիկ չեն խելօքանայ: Այսպէս է ասիսկան հասարակութիւնների զրութիւնը: Մարդկային այդքան զոհեր կլամսած հրգեհը նոր միայն հասկացրեց շատերին, որ կրակը մի աճնպիսի տեղ, ինչպէս է նաւթարդիւնաբերական շրջանը, կարող է մեծամեծ աղէտների պատճառ դառնալ: Մինչև այժմ հրդեհներ եղել են անթիւ ու անհամար անգամ: Կարելի էր ենթադրել, որ նրանք պիտի հարկադրէին ահագին միջոցների տէր նաւթագործներին հականըրդգին միջոցների մասին մտածել: Բայց ինչ են արել մինչև այժմ: Ծիծաղելի է ասել անգամ: Ընթերցողը «Մուրճի» ներկայ համարում տպուած «Նաւթագործների XV արտակարգ ժողով յօդուածից կարող է իմանալ, թէ ինչ ողորմելի, կօմիկական միջոցներ են ձեռք առնուում կրակի դէմ կոռելու գործը աւելի լաւ հիմքերի վրայ գնելու համար: Այդ անտարբերութիւնը, որ անբարոյականութեան է համում, մի աւելորդ անգամ ևս ցոյց է տալիս, որ նաւթային արդիւնաբերութիւնը մերգանում գեռ ևս անկուշտ կեղեկողի գաղափարն է դառնում—ստանալ շատ և չը տալ ոչինչ: Նաւթագործները Ռօաշիլդի հըրդինից 1,300,000 ոռուբիլ վնաս են ստացել: Այդ իրանց իմանալու բանն է: Բայց 500-ից աւել վնասուած աշխատաւոր մարդիկ—սա մի բազմութիւն է, որի կողմն են հասարակական կարծիքը, օրէնքի ոյժը: Հաղարաւոր այդպիսի մարդիկ են աշխատում նաւթային շրջանում: Պրանց չը վնասելու համար Բագուի կրեսուները պարտաւոր են իրանց յանշաւոր անտարբերութիւնը դէն դնել, պարտաւոր են ոչինչ չը խնայել:

\* \*

Մեր գաւառական քաղաքներում ձայնաւորների ընտրութիւններ են տեղի ունենում: Քաղաքային ինքնավարութիւնը ամենուրեք մտցնելու օրից սա առաջին անգամն է, որ գաւառական գումանները վերանորոգւում են: Այժմ ընտրուող ձայնաւորները, եթէ այսպէս կարելի է ասել, երկրորդ սերունդն են կազմում ինքնավարական կեսնքի մէջ:

Ամեն պատմութիւն ունի իր աստիճանաբար զարգացման շրջանները, իր էվոլյուցիան: Դատել թէ առհասարակ որքան է մեր գաւառական քաղաքների ինքնավարութիւնը համապատասխանում ժողովրդի իսկական շահերին և դատել, հիմունքով անցած չորս տարիների փորձի վրայ, ի հարկէ, անկարելի, նոյն իսկ անարդար կը լինէր: Ինքնավարութիւնը յայտնի կրթութիւն է պահանջում ժողովրդից, յայտնի գիտակցութիւն: Արևմտեան Եւրոպան ունի սահմանադրական ինքնավարութիւն,

բայց եւրոպական բոլոր ազգերը այնպէս չեն կարողանում օդտուել այդ ինքնավարութիւնից, ինչպէս, օրինակ, Անգլիան։ Գլխաւոր պատճանն այն է, որ անգլիական ազգի արեան մէջ է մտել ինքնավարութիւնը. այդ աղջը չէ կարող ուրիշ կերպ կառավարուել, որովհետև զարերի ընթացքում այդպէս է կրթուել։

Մեզ պէս զանդաղ առաջացող մի ժողովուրդ, որ գեու ևս չէ ազատուել ասիական կամայականութիւնների և ստրկական հասկացողութիւնների լուծից, դեռ շատ շուտ չէ կարող տուգորուել հասարակական այնպիսի գաղափարներով, որոնցից մէկի ներկայացուցիչը քաղաքային ինքնավարութիւնն է։ Եւ շատ բնական է, որ գաւառական ժողովրդի ինքնավարական առաջին քայլերը լինէին երկշոտ, երերուն, մի քանի տեղերում նոյն իսկ յետագիմական։ Գանգամներ շատ էին լսւում քաղաքային ինքնավարութիւնների դէմ, գանգամներ, որոնք նոյն իսկ իրաւացի են առանձին-առանձին դէպքերի, առանձին տեղերի վերաբերմամբ։ Բայց ինչ են ցոյց տալիս այդ գանգամները։ Միայն այն, թէ գործողներ, եռանդոտ ու աղնիւ մարդիկ էին պակասում, բայց ոչ երբէք այն՝ թէ ինքնավարութիւնը գաղաժամանակ է մեր երկրի համար, թէ նա կարող է չարիքի աղբիւր դառնալ մեր ժողովրդի համար։

Ո՛չ, քաղաքային ինքնավարութիւնը նոյն իսկ իր առաջին քառամեակի շրջանում, երբ այնքան քիչ պատրաստուած հող կայ, ցոյց տուեց, որ ինքը մի անհներքելի բարիք է մեզ համար։ Մենք խօսում ենք ընդհանրապէս, հիմնուելով գործնական հետևանքների վրայ, աչքի առաջ ունենալով համանմատական շափը։ Մենք, օրինակ, չենք կարող ուրանալ, որ քաղաքային ինքնավարութիւնները, որքան այդ հնարաւոր էր, նըւպաստեցին ժողովրդի կրթութեան գործին։ Ալեքսանդրոսօլք բաց արեց քաղաքային գրադարան-ընթերցարան և այժմ աշխատում է առևտրական միջնակարգ գպրոց էլ բաց անել։ Գանձակը իր գործունէութեան մի նշանաւոր մասը նուիրել է քաղաքային գպրոցին, որին կարողացել է այնպիսի գիրք տալ, որ աղքատ ազգաբնակութիւնը այժմ աւելի շատ յարմարութիւն ունի իր երեխաներին այնտեղ կրթութիւն տալու համար։ Նոյն իսկ Շուշին, գաւառական մեր ամենայետաղէմ քաղաքներից մէկը, չը նայած, որ մի ժամանակ իննդրում էր ջնջել քաղաքային ինքնավարութիւնը, կարողացաւ այնքան անել, որ իր վրայ վերցրեց նախկին Հայոց Բարեգործական ընկերութեան գրադարանի պահպանութիւնը, որի համար իր տարեկան բիւշէից մի քանի հարիւր ուուբի ծախսելու յօժարութիւնն

էլ ունեցաւ: Իսկ սա, ինչ ուզում էք ասայէք, գործ է դարձեալ, առաջադիմութիւն է:

Այսպէս են ինքնավարութեան առաջին թոյլ քայլերը, թէն մենք անպատճառ, շատ գէպքերում նոյն խոկ անբարեխիզօ ժողովուրդ ենք: Որ ապագան աւելի և արդիւնաւոր կը լինի, որ մեր ժողովուրդը հետզնետէ կը սովորէ իր բարեկեցութեան, իր կրթութեան համար անտանելի լուծ և կողոպուտ չը համարել քաղաքային տուրքերը—այդ աւելի քան անկասկածելի է: Մնում է միայն ցանկալ, որ ինքնավարութիւնը մեր գաւառներում գործէ անընդհատ, առանց արգելքների, հաստատէ մեր ժողովրդի մէջ համերաշխութեան, հասարակական պարտաճաշութեան ողի և մանաւանդ սովորեցնէ մեր երկրի տարբեր ցեղերին գործել մի յարկի տակ, մոռանալով—գէթ քաղաքայրն բարորութեան համար—ազգայնական թթու նախապաշարմունքները:

Այս ցանկութիւններով էլ մենք ողջունում ենք զաւառական ինքնավարութեան երկրորդ սերնդի գործանութեան սիլվը: Հաւատացած ենք, որ հետագայ սերունդները իրանց նախորդներից աւելի փորձուած, աւելի հաստատակամ կը լինեն և ցոյց կը տան աւելի մնան եռամսդ:

Տարաբախտաբար, նոր ընտրութիւնների ժամանակ անպատճան են լինում և թիւրիմացութիւնները, որոնք զուր տեղից կրքեր են գրգռում: Շուշում փետրվարի 1-ին կայացաւ ձայնաւորների ընտրութիւն. ձայների բացարձակ առաւելութեամբ ընտրուեցին 26 հայեր և 14 թուրքեր: Այդ ընտրութիւնը թէն միանգամայն կանոնաւոր կերպով է կատարուել, բայց տեղի է տուել անհամաձայնութիւնների, և քաղաքազլուխը Ռւարպայի հետ, ինչպէս հաղորդում են, ուզում է հաւասարեցնել հայ և թուրք ձայնաւորների թիւը, հեռացնելով ձայների մեծամասնութիւն ստացած 6 հայերին և նրանց տեղ հըրաւիրելով աւելի նուազ թուով ձայն ստացած և թուրքերին: Հարցը, ի հարկէ, քաղաքազլիսի իրաւունքին չէ թողնուած, եթէ դա լինի նոյն խոկ Շուշու քաղաքազլուի: Կայ նահանգական իշխանութիւն, կայ օրէնք, որին պիտի հպատակուեն ոչ միայն Շուշում, այլ աւելի յետ ընկած, մոռացուած անկիւններում: Որովհետեւ այստեղ արծարծւում է սկզբունքի հարց, ուստի չենք կարող մի քանի խօսք չասել այդ առիթով:

Քրիստոնեայ և ոչքրիստոնեայ ձայնաւորների թուի մասին մենք ունենք որոշ և պարզ օրէնք: Դեռ նորերս «Կավեազ» պաշտօնական լրագրում (№ 24, յունուարի 26-ից) տպուած էր մի յօդուած, որի մէջ ասուած է, թէ Բարձրագոյն հածութեամբ

Քաղաքային կանոնադրութեան 44 յօդուածը խմբագրուած է այսպէս. «Ոչքրիստոնեայ ձայնաւորների թիւը չը պիտի ձայնաւորների թուի մի հինգերորդական մասից աւել լինի, իսկ կովկասեան երկրի քաղաքներում կէսից ոչ աւել։ Իսկ այն քաղաքներում, ուր այս կանոնի կատարումը, տեղական պայմանների չնորհիւ, անյարմար կամ դժուար կը լինի, շեղումները տեղական զեմատվոի կամ քաղաքային գործերի վարչութեան որոշմամբ թոյլատրում է ներքին գործերի մինիստրը»։ Իրանից մեր երկրի պաշտօնական լրագիրը աւելացնում է. «Այսպիսով, կովկասեան երկրի սահմաններում եղած քաղաքային գումաների մէջ այսուհետեւ ոչքրիստոնեայ ձայնաւորների թիւը կարող է, օրէնքով, հասնել ձայնաւորների ընդհանուր թուի կէսին, և ոչ թէ միան մի հինգերորդական մասին, ինչպէս այդ որոշում էր Քաղաքային կանոնադրութեան 44 յօդուածի նախկին խմբագրութիւնը»։

Շուշու վերաբերմամբ, ինչպէս մեզ թուում է, գործում է այն թիւրիմացութիւնը, որ այնտեղ կարող է բառի տեղ հասկանում են պէս։ Իսկ այս բառերի մէջ եղած տարբերութիւնը բաւական մէծ է։ «ՀավեաՅ» պաշտօնական լրագիրը առում է կարող է, իսկ Բագուի «Հաստի» լրագիրը, որի մէջ բոյն զրած է մահմերգական տենդենցիան, ասում է պէս։ Մենք, ի հարկէ, պէտք է լսենք պաշտօնական լրագրի բացատրութեան։ Կ քանի որ գրած հաստատ և պարզ օրէնքի տեղական անջատ բացատրութիւնների մասին ոչ մի խօսք չը կայ «ՀավեաՅ» լրագրում, մենք գտնում ենք, որ Շուշու թուրքերի աւելորդ պահանջները ապօրինի են։ Եթէ նրանք կարողանային անց կացնել իրանցից 20 ձայնաւոր, դա կատարելապէս օրինաւոր բան կը լինէր, որովհետեւ Քաղաքային կանոնադրութիւնը ասում է, որ այդպէս կարող է եւ սակայն, չը կայ օրէնք, որ ասէ թէ Շուշու թուրքերը պէս է որ 20 ձայնաւորներ ունենան։

Ա.

### ԵՐԿԱԹՈՒՂԻՆ ԵԿ ԵՐԵԿԱՆԸ

(Նամակ երևանից)

Երեանը մտել է մի շարք կարևոր իմադիրների շրջանը։ Ալեքսանդրովից երկաթուղու գիծը շինուելով առաջանում է. ձգուում են կամուրջներ, երեանի կայարանը մինչև անգամ պատրաստուել հասել է ծածկին։ Մի քանի ամիս ևս, և շողեմեքենան սուլելով կը մօտենայ երեանին։ Երեանը երկաթուղու չնորհիւ անմիջապէս կը կապուի Ռուսաստանի հետ։

Ոտ գնելով քաղաքակրթական այդ շաւզի վրայ, քաղաքը ստի-  
պուած պիտի լինի փոփոխուել, առաջ գնալ, բարեկարգուել:

Այսպէս, քաղաքային վարչութիւնն զբաղուած է քաղաքը  
արտաքուստ կարգի բերելու խնդրով: Հրապարակ է հանել քա-  
ղաքապատկան հողերի գործը: Հերթական գործերի շարքում է  
դրուած ջրի հարցը: Ժողովրդի մէջ զանազան ընկերութիւններ  
են կազմուում՝ ձեռք բերելու ձիաքարչի կօնցէսիան, կազմակեր-  
պելու եղեկարական լուսաւորութիւնն մատակարարող բիւրօ,  
հիմնելու փոխադարձ վարկի ընկերութիւնն: Նոյն իսկ մասնաւոր  
անհամաներ զանազան հողեր են ձեռք բերում զանազան նպա-  
տակներով: Որքան նորութիւններ մի քաղաքի համար, որ մին-  
չև այժմ քնած էր ասիական անշարժութեան մէջ: Աշխարհը  
ակօսող, ծովերն ու ցամաքները միացնող չոփին է այսպէս շար-  
ժել տալիս երեանցիներին: Եղած փողոցները լայնացնեում, կա-  
նոնաւորւում են, չեղած տեղերը բայցում են նորերը: Մինչև  
այժմ քաղաքը չունի սպանդանոց, կենդանիները մորթւում են  
պատահած տեղը, առանց բժշկական հսկողութեան, այժմ դը-  
րուած է բարեկարգ սպանդանոց ունենալու հարցը: Դրուած են  
նաև կանալիքացիայի, տարրական դպրոցներ բանալու, քաղա-  
քային սեփական տուն կառուցելու հարցերը:

Առայժմ առաջնակարգ են հաւարւում քաղաքային հողերի  
և ջրանցքի հարցերը:

Քաղաքապատկան աւելի քան 80 դեսետին ընտիր հողեր  
մասնաւոր մարդիկ յափշտակելով սեփականացրել են: Այս գոր-  
ծողութիւնը կատարուել է երկար տարիների ընթացքում: Եւ  
չը նայած, որ երեանը քան տարի է ինչ ունի ինքնավարու-  
թիւն, բայց քաղաքի շահերին ծառայելու կոչուածներից ոչ մէկը  
հարց չը բարձրացրեց այդ յափշտակութիւնների մասին: Իրո-  
ղութիւնը հսկանալի է: Նախորդ քաղաքային վարչութեան ան-  
դամները և ճայնաւորները տխուր պատկեր էին ներկայացնում:  
աղա ու հաջի ճայնաւորները ոչ միայն իրանց, այլ և ազգական  
ու բարեկամի շահերը չէին մոռանում, իսկ քաղաքավլուխները  
շատ էլ բարձր չէին կանգնած և այդպիսով քաղաքային հողերը  
անհետանում էին: 1899 թուի գարնանը տեղի ունեցան քաղա-  
քային նոր ընտրութիւններ մի չը տեսնուած եռանդով: դուրս  
քշուեցին աղաներն ու հաջիները, նոր կաղմը բաղկացած էր  
փաստաբաններից, բժիշկներից, նոյն իսկ ուսուցիչներից: Քա-  
ղաքագլուխ ընտրուեց պ. Ի. Մելիք-Աղամալեանը: Եւ նոր օրեր  
որոշուեցին մեր ինքնավարութեան համար:

Նորերի գործավարութեան սկզբում առաջ եկաւ երկաթու-  
ղու կայարանի գետնի հարցը: Երկաթուղու վարչութիւնը առա-

ջարկեց քաղաքային վարչութեան որոշել մի յայսմի տարածութեամբ հող, որ անհրաժեշտ է կայարանի կառուցանելու համար և յայտնել գինն ու վճարման պայմանները։ Այդ ժամանակ միայն, մէջ տեղ բերուեց քաղաքի յատակագիծը, աչքի ընկան կուլ գնացած քաղաքապատկան հողարաժինները։ Դրանց յետ խլելու համար արդէն գատաստանական գործեր են սկսուել։ Թէպէտ այժմ այդ գործերը մի փոքր գժուարութիւնների են հանդիպել, չորհիւ այս հանգամանքի, որ հողերը մէկից միւսի ձեռքն են անցել վաւերագրերով, բայց ամենքն էլ համոզուած են որ, վերջ ի վերջոյ, տամնեակ հազարներ արժեցող այդ հողաբաժինները, կը վերադարձնուեն քաղաքին։

Ամենից շատ հոգս է պատճառում ջրանցքի հարցը, որի լուծումը կազմուած է դրամական ահազին միջոցների և քաղաքային փոխառութիւնների հետ։

Երեւանը իր կլիմայական աննպաստ պայմանների չնորհիւ վաղուց անուն ունի հանած կովլասում, ձմեռը իր սառնամանիքներով, ամառը իր անտանելի տաքերով։ Գործածականը բոլոր բակերի ու փողոցների մէջով անցնող ապականուած, բաց առուների կեղտոտ ջուրն է. նա այնքան զարդարցրել է զանազան հիւանդութիւններ, որ Երեւանը՝ կարծէք նման լինի մի մնի հիւանդանոցի։ Ահա այս հանգամանքը գեռ մի երկու տասնակ տարի առաջ երեւանցիների ուշադրութիւնն է դարձնել յայտնի «Ղըմի-Բուլաղի» աղբիւրների վրայ, որոնք իրանց ընտիր ջրով և ընդամենը մի 15 վերստ հեռաւորութեամբ վաղուց Երեւանի արժեքը բարձրացրած կը լինէին, եթէ Երեւանի, ինչպէս ասուած են, փոսում ապրելիս լինէին բարեխիղ մարդիկ։ Եւ տեսէք ամենն եռանդ ու ընդունակութիւն կարցրած Երեւանցին որպիսի առիթներ է թողել ձեռքից։

Դեռ 1885 թուին Աւսոնդ-աղա Դազարեանը մեռնելիս կտակում է Ղըմի-Բուլաղի ջուրը բերելու համար 10,000 ռուբլի, այն պայմանով, որ աշխատանքները սկսուեն չորս տարուայ ընթացքում։ Պէտք է կտակի այդ պայմանը վերագրել գործը շուտով գլուխ բերելու գովելի ձգտման, թէ երեւանցիների չնորքը լաւ ճանաչող աղայի՝ առանց բարեգործութեան բարերարի անուն հանելու ցանկութեան—այդ չը գիտենք, բայց իրողութիւնը այն է, որ կտակի առիթով եղած քաղաքային Դումայի արտակարգ նիստերից, 25,000 ռ. գումարի չափ ստորագրութիւններ բանալուց, ճարտարապետ Կիրակոսովի ձեռքով յատակագիծ և 180,000 ռուբլու նախահաշիւ կազմելուց յետ անցել են 15 երկար տարիներ։ 10,000 ռ. կտակի ժամանակը վաղուց անել է,

25,000 ռ. ստորագրութիւնները մոռացուել են, իսկ երեսնը դեռ տառապում է խմբու ջուր չունենալուց:

Ներկայ Դումայի օրով ջրի հարցը դրուեց դրական կերպով: Քաղաքի նիրթական դրութիւնը և այլ հանգամանքներ ի նկատի ունենալով ուշադրութեան առնուեցին բացի Ղըոխ-Բուլաղի աղբիւրներից նաև քաղաքին մօտ ընկած Քանաքեռի Ծարաւ կոչուած աղբիւրը և Նորք քաղաքամասի ձորի աղբիւրը: Զայնաւորների մի քանիսի ներկայացրած հաշուի և յամառ պահանջների պատճառով վերջին աղբիւրը ենթարկուեց հետազօտութեան, բաւական գումար ծախսուեց աղբիւրի աշքերը բանալու և ջրի քանակութիւնը չափելու համար, բայց իզուր: Զուրը մի առանձին բան չը ներկայացնելով հանդերձ, օրական 46,000 վերոյից աւելի չէր կարող տալ, մի քանակութիւն, որ ոչ մի կերպ քաղաքի կարիքներին բաւականութիւն տալ չէր կարող: Նոյնպէս թողնուեց Ծարաւ աղբիւրը և այսպէս կրկին կանգ առան Ղըոխ-Բուլաղի աղբիւրների վրայ, որի ջրանցքը յամնայն դէպս կը նստի 200,000 ոռոբլի, մի գումար, որի տակ մտնելը մեծ բիսկ էր մեր քաղաքի համար:

Երկաթուղու կայարանին նոյնպէս հարկաւոր է ջուր: Երեսնի զծի զլխաւոր զեկավար ինժենէր Վուրցէլ հետազօտում է Ղըոխ-Բուլաղի ջուրն ու հեռաւորութիւնը և Հրազդան գետի ջուրը, կազմում է նախահաշիւ: Ղըոխ-Բուլաղի ջուրը մինչեւ քաղաք բերելը կը նստի 228,000 ոռոբլի. Հրազդանից կայարանին հարկաւոր 50,000 վեդրո ջուրը բարձրացնելը և զտելը կ'արժենայ 88,000 ոռոբլի: Եւ ահա այսպիսի հաշիւներով անցեալ տարի հոկտեմբեր ամսին պ. Վուրցէլ դիմում է քաղաքին գումային առաջարկելով քաղաքի հետ միասին բերել Ղըոխ-Բուլաղի ջուրը, այն պայմանով, որ երկաթուղու վարչութիւնը կը տայ քաղաքին 88,000 ռ., այսինքն այն գումարը, որ կը ծախսուի Հրազդանի ջուրը բարձրացնելու և մաքրելու համար, իսկ քաղաքը կը պարտաւորուի, ընթացիկ ծախսերը իր վրայ վերցնելով, 50,000 վեդրո ջուրը մատակարարել կայարանին: Պէտք է ասել որ Ղըոխ-Բուլաղը կարող է տալ 210,000 վեդրո ջուր: Այս առաջարկութիւնը, որի մասին գեռ ևս ամիսներ առաջ եղել էր կարծիքների փոխանակութիւն, բաւական զբաղեցրեց մեր Դուման: Հարցը—լուրջ էր և իրաւաբանական տեսակէտից բարդ. մի կողմից ծախսերի խնդիր, միւս կողմից պարտաւորութիւնների: Դումայի մի մասը ջուրը ամբողջովին սեփական միջոցներով բերելու կողմն էր, բայց մեծամասնութիւնը, քարչութեան զեկուցումը բերելով, կայացրեց հետևեալ որոշումը. քննելով պ. Վուրցէլի նախահաշիւները, քաղաքը կը

գիջի երկաթուղու վարչութեան այն 48,000 ոռոբլի գումարը, որ պիտի ստանայ կայարանին յատկացրած 75 դեսեատին քաղաքապատկան գետնի համար, իր վրայ կը վերցնի ջրանցքի ճանապարհի վրայ ընկած մասնաւոր հողերի գնումը, որ 10,000 ոռոբլու չափ ծախս է պահանջում, ինչպէս նաև ապագայ ջրանցքի ընթացիկ ծախսերը. միայն այն պայմանով, որ երկաթուղու վարչութիւնը իր միջոցներով անկացնի ջրանցքը և 60 տարի շարունակ ստանայ Երևանի կայարանին հարկաւոր 50,000 վեդրո ջուրը: Այս վճիռը յայտնելով պ. Վուրցէլին, մի և նոյն ժամանակ որոշուեց զիմել հաղորդակցութիւնն ճանապարհների պ. մինհատրին, ինսդրելով ընդունել այդ պայմանները: Առ այժմ այս դրութեան մէջ էլ մուռմ է հարցը:

Այսքանը մեր քաղաքային ինքնավարութեան գործերից մի քանի խօսք էլ այն մասին, թէ ինչ են անում մասնաւոր շրջանները և անհատները:

Երկաթուղին եկաւ թէ չէ, անհրաժեշտ կը լինի ձիաքարչ անցկացնել, ելեկտրական լոյս ունենալ, առևտորի շրջանառութեան արագացման համար պէտք կը լինեն բանկային հաստատութիւններ: Եւ ահա ներկայ բոպէում երեանում կազմում են ընկերութիւններ: Զիաքարչի կօնցէսիան ձեռք բերելու համար դեռ ևս անցեալ երկու տարիներից մի քանի առաջարկութիւններ եղան քաղաքային գումարին, ելեկտրական լուսաւորութեան համար առաջարկութիւն եղաւ մի խումբ մարդկանց կողմից, որոնք եռանդով կզած առաջ են առնում ելեկտրական լոյս մատակարարող մի բիւրօ հաստատելու գործը: Նրանք այժմ հողեր գնելով են զբաղուած. ոյժ մատակարարողը պիտի լինի Հրազդանը, ուստի և լոյսը կարելի է մատակարարել քաղաքին շատ մատչելի պայմաններով: Մի մեծ ընկերութիւն արդէն կազմուել է և մշակում է ծրագիր՝ հիմնելու փոխադարձ վարկի ընկերութիւն. եղած բանկերը բաւականութիւն չեն տալիս տեղական կարիքներին: Բոլոր ձեռնարկողները տեղացիներ են և հէնց այդ տեսակէսից երևոյթը միանգամայն ուրախալի է, եթէ միայն այդ ընկերութիւնները չեն հիմնում քանդուելու համար:

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Լևոն ԱԽԱ-ի տեխնական քնները.—Կրօնական միաբանութիւնների հարցը ֆը-  
րանսիական պատգամատրների ժողովում.—Սպանիա. հակակղերական ան-  
կարգութիւններ.—Մինխուրական ճգնաժամ Խոտախայում.—Ծնզլիա. Վիկո-  
րիա թագուհու մահը. Կղուարդ VII և նրա վերաբերմունքը դէպի ծրանավա-  
սի պատերազմը.—Աւտորիական բէքսուսատի նիստը.—Գերմանիա. մերձե-  
ցում Ծնզլիային. հացի մաքսը.—Դպրոցական խնդիր. Դ.—Միլան թագաւոր:

Մի լատիներէն ոտանաւորի մէջ, որ զրուած է ՏIX դա-  
րի վերջին օրում, Լևոն ԱԽԱ պապը ասում է. «Յաւով և սար-  
սափով եմ նայում ևս այն ամենին, ինչ բերեց մեզ լրացած  
դարը: Յետ նայելով, իմ հայեացքը տեսնում է իր առջև, աւաղ,  
ամօթալի գործերի մի ամբողջ շարք: Ողբամ արգեօք արիւնաւ-  
հեղ սպանութիւնները, խորտակուած գահերը, աղատութեան  
սոսկաի փոթորկումը: Թէ ողբամ խորամանկութեամբ լի կոխով  
Վատիկանի դէմ: Քաղաքների թագուհին, պապականութեան  
մայրաքաղաքը, որին ակնածութեամբ յարգում են դարերն ու  
ազգերը, զրկուած է այժմ իր թագից, որին չէ կարող պղծել  
ոչ մի ստրկութիւն: Յաւ ու կակիծ յայտնելով, որ ՏIX դա-  
րում ծաղկեց Դարվինի թէօրիան, յորդորելով մարդկանց ուշքի  
գալ, ճանաչել Աստուծու ձանապարհները, պապը դիմում է  
Քրիստոսին և իր աղաչանկներն է ուղղում նրան. «Թնդ լինի մի  
հովիւ և մի հօտ և թող հաստատուի երկրի վրայ մի հաւատ»:

Աւաղ. Ժամանակները սաստիկ փոխուել են: Վատիկանը  
այլ ևս չէ գլորեցնում աշխարհը իր հրամաններով, անէծքներով:  
Լևոն ԱԽԱ, իննառւ ամեայ մի ծերունի, կարող է ամեն օր,  
ամեն ժամ այդպիսի մրմունջներ արձակել, բայց նա «Վատի-  
կանեան կալանաւորից» աւելի մի բան չէ և ոչ միայն եկեղեւ-  
ցիների միութիւնը, որ նրա ամենամեծ տենչանքն է, շատ և  
շատ հեռու է իրագործումից, այլ և կաթոլիկութիւնը սաստիկ  
հարուածներ է ստանում այն երկրներում, որոնք մի ժամանակ  
Հոռմի հարազատ որդիներն էին: Այսպէս, յունուարի 2-ին ֆը-  
րանսիական պատգամաւորների ժողովը սկսեց քննել կառավա-

րութեան կողմից ներկայացրած օրինագիծը, որի նպատակն է կոիւ կրօնաւորական միաբանութիւնների դէմ:

Ինչպէս յայտնի է, մրանսիայում վերջին տարիները ըսկուեցին մի ահեղ մրցութիւն առաջադէմ և յետադէմ տարրերի մէջ: Դրէյֆուսի գործը մի պայծառ լոյս էր, որ ցոյց տուեց թէ մրանսիան կղերական խարդաւանքների զոհ է և դիմում է դէպի կործանում. Վալդէկ-Ռուսօփ մինիստրութիւնը նպատակ ընտրեց փրկել հանրապետութիւնը: Կուսակցական կրքերը ծայրայեղութեան էին հասել և ամենքը զարմանում էին թէ ինչպէս է որ երեան չէ գալիս մի ուժեղ մարդ, որ հանրապետութեան թշնամիների գլուխն անցած՝ տանէր մրանսիան դէպի մի նոր յետադիմական յեղափոխութիւն: Վալդէկ-Ռուսօն սկսեց խաղաղացնել կրկիրը: Համախմբելով իր շուրջը բոլոր ձշմարիտ հանրապետականներին, նա քաջութեամբ գնաց կղերականների, միապետականների և նացիօնալիստների դէմ: Մինիստրութեան ձեռք առած միջոցները միշտ խիստ ու կարուկ չէին, նրա առջև դրուած ինտիրները յանախ վճռում էին միջին ճանապարհով: Բայց նրանք անկանած հետևանք ունեցան, ամրացրին հանրապետութիւնը, կարելի եղածին չափ խաղաղացրին մտքերը: Այդ միջոցներից մէկն էլ կղերականութեան դէմ յայտարարած պատերազմն է:

Վաղուց, գեռ Գամբետայի ժամանակ, յայտնի էր որ երրորդ հանրապետութեան ամենախիստ թշնամին կղերականութիւնն է: 1881 թուականին Վալդէկ-Ռուսօն Գամբետայի մինիստրութեան անդամն էր և այդ ժամանակ էլ պատրաստեց մի օրինագիծ, որ սահմանափակում էր կղերական միաբանութիւնների աղատութիւնը և նրանց զարգացման առաջն էր առնում: Բայց այն ժամանակ կարելի չեղաւ անցկացնել այդ օրինագիծը: Այժմ Վալդէկ-Ռուսօն վերանորոգեց իր արշաւանքը կղերականութեան դէմ, մոյնելով պատգամաւորների ժողովը 17 յօտուածից բաղկացած մի օրինագիծ «ընկերակցութիւնների (ասսոցիացիների) և միաբանութիւնների (կօնքրեղացիաների) մասին»: Դա մի օրէնք է, որ կառավարութեան ձեռքը տալիս է ընկերակցութիւնների վրայ հսկելու իրաւունք: «Իւրաքանչիւր ընկերակցութիւն, որ հիմնուած է օրէնքներին, հասարակական բարոյականութեան, ազգային միութեան և հանրապետական կարգերին հակառակ նպատակներով, ապօրէն է և անվաեր»: Այսպէս է ասում օրինագծի առաջին յօդուածը: Խսկ 11-րդ յօդուածը, որ աշկարայ ուղղուած է կրօնական միաբանութիւնների դէմ, ասում է. «Փրանսիայիների և օտարերկրացիների մէջ ոչ մի ընկերակցութիւն չէ կարող կազմուել առանց նախ-

նական թոյլտւութեան, որ տրւում է պետական խորհրդից հրովարտակի ձևով։ Օրէնքը թոյլ է տալիս փակել գոյութիւն ունեցող այն ընկերութիւնները, որոնք վնասակար են համարւում։

Հասկանալի է թէ որպիսի կարեորութիւն ունի Վալդէկ-Բուսսօի մինիստրութեան այդ օրէնսդրական քայլը։ Կղերական միաբանութիւնները մի վիթխարի ոյժ են կազմում ֆրանսիայում։ Նրանք առնուադն ունեն 200,000 անդամ երկու սեռից,  $1\frac{1}{2}$  միլիարդ ֆրանկի արժողութեամբ անշարժ կապուածքներ և 6 կամ 7 միլիարդ ֆրանկի արժէթղթեր։ Այդ հարսաութեան համեմատ էլ նրանք գործունէութիւն են ցոյց տալիս։ Այդ միաբանութիւններին պատկանող տարրական գպրոցներում սովորում են մօտ  $2\frac{1}{2}$  միլիօն տղայ և աղջիկ, իսկ միջնակարդ դպրոցների թիւը այժմ համում է 148-ի։ Բացի գրանից, կրօնական միաբանութիւնները ազգում են ժողովրդի վրայ քարոզների միջոցով, ինչպէս նաև մի շարք սեփական լրազիրների միջոցով։

Օրինագիծ, ի հարկէ, պիտի սաստիկ յուզմունք տարածէր կաթոլիկ աշխարհում։ Ամենից առաջ ձայն համեց Հոռմը։ Լևոն ԽIII բայարձակ կերպով իր դժոնութիւնը յայտնեց և խորհուրդ տուեց ֆրանսիական կառավարութեան չը գնալ եկեղեցու դէմ։ պապը սպառնում էր որ ֆրանսիան կը կորցնէ իր հովանաուրութիւնը արևելեան քրիստոնեանների վրայ, եթէ ընդունէ Վալդէկ-Բուսսօի օրինագիծը։ Այս սպառնալիքը անմիջապէս ֆրանսիական կառավարութեան չէր ուզուած։ Բայց պատգամաւորների ժողովում հարց եղաւ այդ մասին և Վալդէկ-Բուսսօն յայտարարեց որ ֆրանսիան չի թոյլ տայ պապին խառնուել իր ներքին գործերի մէջ։ Կղերական կուսակցութիւնը, կորցնելով օրինագիծի դէմ կոռուկու այս գէնքը, լարեց իր բոլոր ոյժերը։ Ներկայ կառավարութեան հակառակորդ տարրերը միացած եռանդով էին գործում։ բայց մինիստրութիւնը, իր կողմն ունենալով բոլոր ձևարիտ հանրապետականներին և սօցիալիստական կուսակցութիւնը, յաղթական կերպով առաջ տարաւ իր գործը։

Իզուր կղերական պատգամաւորները ճգնում էին հաւատացնել պատգամաւորներին, թէ եղերական միաբանութիւնները ոչինչ վտանդ չեն սպառնում ֆրանսիային, որ նրանք չեն անբարոյականացնում մարդկանց մտքերը։ Պատգամաւոր Տրույո ամբիօնից կարգաց մի քանի կտորներ մի զասագրքից, որ ընդունուած է 67 հոգեսոր սեմինարիաններում։ Բանից դուրս է գալիս, որ այժմ էլ դպրոցներում աւանդում են իզուիանների

անբարոյական սկզբունքները, այն վարդապետութիւնը, որ խրատներ է տալիս թէ ինչպէս պէտք է սուտ ասել, հոգին ծոել, չենթարկուելով երկնային պատժի։ Մի վարդապետութիւն է դա, որ սպանում է մարդու մէջ աղնիւ ձգտումները, սովորեցնում է ինտրիգներին Նոյն դասագիրքը քարոզում է որ դաւանութեան աղատութիւն պիտի լինի այն երկրներում, ուր կաթոլիկները փոքրամանութիւն են կազմում. իսկ այն՝ տեղերում, ուր կաթոլիկութիւնը ունի նիւթական ոյժ, ամեն տեսակ «հերձուած» պէտք է համարել պետական դաւաճանութիւն և պիտի պատժել բանտերի, ծեծի, նոյն իսկ մահուան միջոցով։

Այս մերկացումները ահազին տպաւորութիւն գործեցին պատղամաւորների վրայ։ Եւ օրինագծի յօդուածները, երկար վիճարանութիւններից յետոյ, ընդունուում էին մեծամանութեամբ։ Դեռ բոլոր 17 յօդուածները չէ քննուած։ Վիճաբանութիւնները, ինչպէս հաղորդում են ֆրանսիական լրագիրները, կը շարունակուեն մինչև մարտ ամիսը. շատերը կարծում են որ մինչև ամառնային արձակուրդները հազիւ թէ այդ 17 յօդուածների քննութիւնը վերջանայ պատղամաւորների ժողովում և Սենատում։

Բայց կարելի է վստահ լինել որ Վալդէկ-Ռուսսօնի օրինագծի ապագան ապահովուած է և նաև ընդհանուր գծերով կ'անցնէ ու հաստատութիւն կը գտնէ։ Այդպիսի վստահութիւն ներնշում է այն հանգամանքը, որ պատղամաւորների ժողովի առաջաւոր տարրերը, հետղնետէ զգում են կառավարութեան աջակցելու անհրաժեշտութիւնը։ Պէտք է ասել, որ նոր օրինագիծը, ընդհանուր առմամբ, չափաւոր է և դարձեալ «միջին ճանապարհ»։ Կերպարանքն ունի։ Սօցիալիստների և արմատականների համար բաւարար չեն այդ կիսատ միջոցները։ Նրանք կը կամենային որ կղերական միաբանութիւնները միանգամայն ջնշուէին։ Այդ պատճառով էլ նրանք աշխատում են փոփոխութիւններ մտցնել օրինագծի մէջ։ Մի այցպիսի փոփոխութիւն առաջարկուած բանաձև անցաւ ձայների մեծամանութեամբ։ Մինիստրութիւնը հրաժարական պիտի տար, եթէ վստահութեան հարց դրած լինէր։ Արմատականները և սօցիալիստները հասկացան որ կարող են գործիք դառնալ յետադէմ կուսակցութիւնների ձեռքին և այսուհետեւ աւելի զգոյշ կը լինեն։ Եւ իրաւ կղերական կուսակցութիւնը վճռել է ոչինչ միջոց չը խնայել ատելի օրինագիծը տապակելու համար։ Նա նոյն իսկ պատրաստ է միանալ ծայրայեղ կուսակցութիւնների հետ և մտցնել օրինագծի մէջ այնպիսի արմատական փոփոխութիւններ, ինչպէս է, օրինակ, բոլոր կղերական միաբանութիւնները

յնջելը: Այդ գէպքում Վալդէկ-Ռուսասօ հրաժարական կը տայ. իսկ ընդդիմադիր կուսակցութիւնը հէնց այդ է ուզում:

Պէտք է, սակայն, յուսալ, որ յետադիմականների բաղ-ձանկը չի իրագործուի:

Թրանսիայում գործող կղերական միաբանութիւններից շատերը, տեսնելով որ Վալդէկ-Ռուսասօ օրինագիծը պիտի ըն-դունուի, պատրաստուում են հեռանալ ուրիշ երկիրներ և արդէն սկսել են ծախել իրանց կալուածները: Բայց ուր կարող են ապաստարան գտնել և անպատիժ գործել չուռմի այդ գործա-կանները, եթէ ոչ Սպանիայում, այն թշուառ երկրում, որ դա-րերից ի վեր ստրկայած է կաթոլիկ հոգևորականութեան և հէնց այդ պատճառով էլ այժմ ներկայացնում է մի կիսակեն-դան դիակ: Սպանիայի միաբանութիւնները սկսեցին պատրաս-տութիւններ տեսնել Թրանսիայից հեռացողներին ընդունելու համար: Ծատերը արդէն ընդարձակում էին իրանց վանքերը, նոր հիւրերին տեղ տալու համար: Բայց յանկարծ բոնկուեցին ժողովրդական ցոյցերը հոգևորականութեան գէմ:

Երբ կուրան անցաւ ամերիկացիների ձեռքը, այն- տեղից հեռացան բոլոր կաթոլիկ միաբանութիւնները և բնակութիւն հաստատեցին Սպանիայում: Առանց այդ էլ խեղճ երկրը հազիւ էր տանում կղերականների ահագին բազմութիւնը: Վերջին աեղեցութիւններին նայելով, Սպանիայ- ում կան 21,500 ծխական եկեղեցի և 154,000 եկեղեցական պաշտօննեաններ, այդ թւում և մօտ 70,000 վարդապետներ: Ու- նենալով իրանց ձեռքում ահագին դրամագլուխներ, վանքերը և կղերական միաբանութիւնները դրամական մնամեծ ձեռնար- կութիւններ ունեն. այսպէս, նրանք մաս ունեն ծխախոտի մե- նավաճառի ընկերութեան, Անտրատլանտեան չողենաւային ըն- կերութեան սպանիական բանկի մէջ: Միւս կողմից հոգևոր հայրերը հիմնել են գործարաններ և գրանով սաստիկ մրցում են բանուորական գասակարգի և մասնաւոր ձեռնարկողների դէմ, որովհետև վանական գործարանները ազատուած են հար- կերից:

Այսպիսի ահագին ոյժի տիրանալով, կղերական կուսակ- ցութիւնն աշխատում է քաղաքականապէս էլ տիրել երկրի վը- րայ և խլել իշխանութեան վերջին մնացորդները իր հակառա- կորդների ձեռքից: Արքունիքն էլ վախենալով, որ հակակողերական ուղղութիւնը կարող է խլել իշխանութիւնը այժմեան թագաւո- րող տանից, ամեն կերպ հովանաւորում և աջակցում է կրօնա- ւորներին: Եւ իրաւ, աւելի ինչ կարելի է անել. Սպանիայում

ժողովրդական կրթութեան վրայ ծախւում է  $1\frac{1}{2}$  միլիօն, մինչդեռ կղերականութիւնը իւրաքանչիւր տարի կլանում է 44—միլիօն։ Արգունիքը այնքան վախսենում է հոգեսր հայրերից, որ պատանի թագաւոր Ալֆօնսի համար դաստիարակ հրաւիրեց եզրուխտ Մօնտանին։ Սրա աղդեցութիւնը այնքան ուժեղացաւ, որ պատգամաւորների ժողովը պահանջեց հեռացնել։ Բացի դրանից կառավարութիւնն աշխատում է օգուտ քաղել և կարլիստներից \*), ուստի մի ամուսնութեամբ կամենում է բարեկամութեան կապեր հաստատել իր և իրան հակառակորդ կարլիստների հետ։ Եթէ տեղի ունենայ այդ ամուսնութիւնը, այն ժամանակ ծայրայեղ կղերականները ահազին իշխանութիւն ձեռք կը բերեն և երկիրը բոլորովին կը ճնշուի։ Ահա այս բոլոր հանգամանքները պատճառ դարձան, որ կղերականութեան դէմ վաղուց կազմուած ատելութիւնը լոյս աշխարհ դայ։

Կրակի վրայ իւղ ածողը հետեւեալ դէպքն էր.

Ուրած անունով մի հարուստ և կրօնասէր ընտանիքի աղջիկը, ենթարկուելով իր եղուխտ դաստիարակի խորհուրդներին, ծնողների կամքի հակառակ, փախաւ և զուխտական մի վանք և ընդունուեց այդտեղ իրբ քոյր, թէն վանական կանոնագրութիւնը չէր թոյլ տալիս այդ բանը։ Վանքը այսպիսով յոյս ունէր տիրանալ հարուստ աղջկայ ամբողջ ժառանգութեանը։ Բայց ծնողները պահանջեցին որ իրանց աղջիկը վերադանայ իրանց տուն։ Սկսուեց դաստաստանական դորձ։ Դատարանը, հիմնուելով այն փաստի վրայ, թէ աղջիկը 24 տարեկան է, մերժեց ծնողների պահանջը։ Ահա այդ դէպքը զիտմամբ թէ պատահաբար նիւթ դարձաւ «Էլէկտրա» անունով մի պիեսի, որ ներկայացուեց Մադրիդում և դաւաններում ու մեծ աջողութիւն ունեցաւ։ Սկսուեցին մի շարք ցոյցեր կղերականութեան դէմ, որոնք աւելի ևս սաստկացան, երբ յայտնի դարձաւ որ ֆրանսիայից արտաքսուող կղերականները պատրաստում են սպանիտական հռովի վրայ հիմնուել։

Փախած աղջկայ ծնողները գործն անցկացրին բարձր դատարան։ Երանց փաստաբանի ճառերը այնպիսի ատելութիւն գրգռեցին ժողովրդի մէջ, որ սկսուեցին փողոյացին անկարգութիւններ։ Ամբոխը ծեծում էր հանդիպած վարդապետներին և «մահ ետուխտներին, կեցյէ աղատութիւն» էր կանչում։

Խոռվութիւնները գնալով սաստկացան, անդան և զաւառները Վալենսիայում ամբոխը յարձակուեց նահանգապետի վրայ

\*.) Կարլիստներ անուանում են սպանիտական գահի թեկնածու Գօնդարլոսի կողմանակիցները։

և մի եզուխտական եկեղեցու վրայ սպիտակ նաւթ ածեց։ Գրանադայում եղուխտները իրանց գպրոցի պատերի ետեից սկսեցին հրացան արձակել, ամբոխը փորձեց յափշտակել զէնքերի պահեառ՝ եզուխտների վրայ յարձակուելու համար, բայց ոստիկանութիւնը թոյլ չը տուեց։ Շատ տեղերում արգէն յայտարարուած է պաշարման դրութիւն և ժամանակաւորապէս դատարեցրած է սահմանադրութիւնը։ Շարժումը դեռ շարունակւում է, բայց կարծում են որ կառավարութեանը կ'աջողուի զէնքի ոյժով ճնշել ապստամբութիւնը, մանաւանդ որ ազատամիտ և սօյիթալիստական կուսակցութիւնները, որոնք այս հակաղերական շարժման հեղինակներն են, չն միանում միմեանց հետ։

Հարց է սակայն. կարող է գժբախտ Սպանիան միշտ մնալ կղերական բռնապետութեան տակ ձնչուած ու մահացած։ Սպանիական ազգը ազնիւ է, քաջ. պէտք է յուսալ որ նրա համար էլ կը բացուի լոյս, որ կ'ազատէ այդ հինաւուրց երկիրը եղուխտների խայտառակ ինամակալութիւնից։

Հանգիստ ամիս չանցկացրեց և երրորդ բօմանական մեծ երկիրը Եւրոպայում, Խտալիան։ Այսուեղ էլ սօյիթալական հարցերը սաստիկ հակառակութիւն են մտցրել աշխատաւոր ժողովրդի և ապահովուած դասակարգերի մէջ, բաց անելով կատաղի մրցութիւնների ասպարէզ։ Ահա այդ ընդհարումներից մէկը տապալեց Սարակիօի մինիստրութիւնը։

Գենուա քաղաքում հիմնուած է աշխատանքի բօրսա. դա մի բանուորական հիմնարկութիւն է, որ միջնորդ է հանդիսանուում մի կողմից բանուորների և միւս կողմից գործարանատէրների մէջ. դրանով բանուոր գասակարդը աղատուում էր այն միջնորդներից, որոնք իրանց սեփական շահի մասին են մտածում։ Անցեալ տարուայ դեկտեմբերի 18-ին Գենուայի պրեֆէկտուար հրամայեց ծածկել աշխատանքի բօրսան։ Երկու օրից յետոյ նաւահանգստում գործող մօտ 16,000 բանուորներ գործատուլ աւրեցին, իսկ շրջակայ բաղմաթիւ գործարանների բանուորները սպառնացին թէ իրանք էլ կը դատարեն աշխատելուց, եթէ նորից չը բացուի աշխատանքի բօրսան։ Բանուորական կուսակցութիւնների կողմից պատգամաւորներ զնացին առաջին մինչխտրի մօտ։ Սարակիօ, տեղեկանալով գործի էութեան, հրամանագրից նորից բաց անել բանուորական բօրսան, բայց և ոչինչ յանդիմանութիւն չը յայտնեց Գենուայի պրեֆէկտին։

Ահա այս քայլը, որ միջնադէպը խաղաղութեամբ վերջացնելու համար էր անւում, պատճառ դարձաւ որ մինիստրութիւ-

նը երկու կրակի մէջ ընկնի: Պատգամաւորների ժողովում ոչ մի կողմը հաւանութիւն չը տուեց մինիստրի կարգադրութեան. պահպանողական կուսակցութիւնը անբաւական էր, որովհետև Սարակիօ զէնքի ոյժով չէր ծնշել բանուորական շարժումը, ինչպէս արել էին նրա նախորդները և ինչպէս պահանջում են կապիտալիստների շահերը: Իսկ ազատամիտ և սօցիալիստ կուսակցութիւնները անբաւական էին այն պատճառով, որ Սարակիօ չէր պատժել Գենուայի պրեֆէկտին և այդպիսով տեղիք էր տուել, որ նա ապագայում էլ այդպիսի գործեր կատարէ: Հարցապնդումների կարկուտ տեղաց մինիստրութեան վրայ, որ և հարկադրուած եղաւ հրաժարական տալ:

Իտալիան վերջին տարիներում այնքան սուր անբաւականութիւնների ասպարէզ է դարձել, որ հեշտ չէր մինիստրութիւն կազմել, որ բաւարարութիւն տար երկրին: Վերջին օրերը միայն կարելի եղաւ կազմել մինիստրութիւն, որ աւելի ազատամիտ է, քան տապալուածը:

Յունուարի 9-ին Անգլիան զրկուեց իր սիրած թագուհուց: Վիկտորիայի պէս մի երկարատև թագաւորող անձ դեռ չէ ճանաչում Անգլիայի պատմութիւնը: «Մուրձի» հետագայ համարներից մէկում մենք կը ծանօթացնենք մեր ընթերցողներին Վիկտորիայի թագաւորութեան հետ, որ տեսց 63 տարի: Առ այժմ յիշատակենք, որ թագուհու մահը մեծ վիշտ պատճառեց անգլիական աղջին, որ սովորել էր մի շարք տաճնեակ տարիների իր առաջադիմութիւնը և երջանկութիւնը կապել թագուհու անուան հետ: Թաղումը տեղի ունեցաւ մեծ հանդիսաւորութեամբ, ներկայ էր Գերմանիայի կայսր Վիլհելմ II, որ Վիկտորիայի թոռն է:

Վիկտորիային յաջորդեց նրա աւագ որդին, Էդուարդ VII, որ արդէն 60 տարեկան մարդ է: Թէև Անգլիայի պէս մի սահմանադրական երկրում թագաւորող անձը չէ կարող մեծ աղջկցութիւն ունենալ քաղաքականութեան վրայ, բայց և այդպէս, կարծիք էր կազմուել, թէ նոր թագաւորութեան հետ Անգլիայի քաղաքականութեան մէջ փոփոխութիւն կը մտնի: Մի բոլէ յոյս ծագեց թէ Հարաւ-Աֆրիկան պատերազմը, որ ահա մօտ տարի ու կէս շարունակում է կատաղութեամբ, կը վերջանայ: Էուր տարածուեց թէ Վիլհելմ կայսրը, որ Անգլիայումն էր գտնւում, յանձն կ'առնէ միջնորդի գեր, մանաւանդ որ, ասում էին, բօէրական պատերազմը վերջին ժամանակներում դարձեալ ընդունել է անգլիացիների համար անաջող կերպարանք:

Եւ իրաւ. մինչդեռ Տրանսվաալի ծերունի նախագահը Հօլ-  
լանդիայում դադար առած՝ տեսնում է միջնորդութեան և ար-  
դարութեան բոլոր գոները փակուած էր առջև, քոէրների հե-  
րոս գեներալ Դեվէտ յանկարծակի յարձակումներով նեղում էր  
անգլիացիներին, յետ էր խլում նրանց գրաւած տեղերը: Գե-  
ներալ կիտչենէր մի շարք անդուժ, քաղաքակիրթ մի ազգին  
երբէք պատիւ չը բերող միջոցներ էր գործ դնում բօէրների  
երկիրը իսպառ անապատ՝ դարձնելու համար: Բայց և այդպէս,  
նա հարկադրուած էր յայտնել անգլիական կառավարութեան  
որ եղած դորքերը բաւական չեն: Ենթադրում էր թէ էղուարդ  
VII զիջող կը լինի և վերջ կը դնէ այն սոսկալի արիւնահեղու-  
թեան, որի սարսափիները նրա մօր, Կիկտօրիայի մահուան  
պատճառներից մէկն էին Բայց բացուեց անգլիական պատգա-  
մաւորների ժողովը, թաղաւորը կարդաց իր առաջին գահական  
ձառը, որ ցրուեց բոլոր յոյսերը Անգլիան վճռել է շարունակել  
պատերազմը, մինչև որ բոլորովին կը նուածէ բօէրների երկի-  
րը: Անգլիան նորից մեծ քանակութեամբ զօրք է ուղարկում  
գեներալ կիտչենէրին՝ արիւնահեղութիւնները շարունակելու  
համար: Ի՞նչ կը լինի վերջը: Ասում են թէ բօէրները ունին ընդ  
ամենը 20,000 կոտորդներ: Հարաւաֆրիկեան արիւնահեղ դրա-  
ման աւելի և աւելի մոռայլ կերպարանք է ստանում:

Աւստրիայում երկար ընդհատումից յետոյ յունուար ամ-  
սում բացուեց, թէյսարատը պատգամաւորների նոր կազմու-  
թեամբ: Թէյսարատի ձախ կողմը բոնել էին գերմանացիք. դը-  
րանց մէջ աւելի կշիռ ունեցող խումբը պահանջում էր, որ գեր-  
մանական լեզուն յայտարարուի Աւստրիայում իբրև պետական  
և պաշտօնական լեզու: Կենտրոնի բոնել էին չէղոքները, որոնք  
բաղկացած են գերմանացի կաթոլիկներից, իսկ աջակողմեան-  
ները սլաւօնական պատգամաւորներն էին—չէիներ, լեհեր, խօր-  
վատներ և այլն, որոնք պահանջում են սլաւօնական լեզուների  
հաւասար նշանակութիւն պետութեան մէջ: Թէյսարատի հէնց  
առաջին նիստում պարզուեց, որ նոր պատգամաւորները ևս  
մտադիր չեն վերջ դնել այն սուր հակառակութեան, որ մի քա-  
նի տարի շարունակ ալէկոծում է աւստրիական թէյսարատի  
նիստերը, խանդարելով նրա կանոնաւոր օրէնսդրական գրադ-  
մունքները: Ոչ չէին և ոչ էլ գերմանացի ծայրայեղ նացիօնա-  
լիսաները յետ չէին կացել իրանց ծրագիրներից:

Երբ մինիստը նախագահ Կերբէրը յայտնեց, որ կայսրի  
առաջարկութեամբ բաց է անում նստաշրջանը (սեսսիա) և ժա-  
մանակտուոր նախագահ է յայտարարում տարիքով ամենածեր

պատգամաւոր Վէյգելին (լեհ), չիխերի կողմից մի ձայն ընդհատում է մինհստրին. «Սպասէք, ինչ իրաւունքով գուք բաց էք անում պարլամենտը, արտասանելով ձեր ճառը գերմաներէն լեզուով, պէտք է կրկնէք և չիխերէն»: Եւ երբ թէյխարատի ժամանակաւոր նորընտիր նախադահը սկսում է խօսել գերմաներէն, նոյն չիխը բղաւում է. «Դուք սլաւօնացի էք. խօսէք սլաւօնական լեզուով: Խայտառակութիւն: Ամօթ»: Այսպիսի չարագուշակ նախերգանքով բացուեց թէյխարատի առաջին նիստը: Աւստրիական կառավարութեան գրութիւնը շատ ծանր է այդպիսի սուր կերպարանք սոսացած ազգայնութեան պայքարի ստեղծած պայմաններում: Կառավարութիւնը ձգտում է հաշտեցնել երկու կողմերը ևս, տնտեսական ընդարձակ ծրագրով նա աշխատում է լունցնել ազգայնական կրքերը, սակայն հազիւթէ այդ նրան աջողութ, մինչեւ որ վերջնականապէս չը վճռուի այդ խնդիրը և Աւստրիան չը դառնայ դաշնակցական կամ ֆերատիւ մի պետութիւն:

Գերմանիայի կայսրը իր գահակալութեան առաջին օրից ցոյց տուեց, որ ուղում է անձամբ զեկավարել իր պետութիւնը: «Առանց Գերմանիայի և գերմանական կայսրի այլ ևս ոչինչ չը պէտք է կատարուի աշխարհում», առա Վիլհելմ II-րդի խօսքերը: Այդ ցանկութիւնը հակառակ է Բիսմարկի սկզբունքին—չը խառնել Գերմանիային Եւրոպայից գուրս գործերում: Համաշխարհային քաղաքականութեան ձգտումը յաճախ Վիլհելմին հակասութիւնների մէջ է զցում: Յիշեցնենք հէնց նրա վերաբերմունքը դէպի Կրիստինը: Այդ անձնական ազգեցութեան սկզբունքի չնորհիւ Գերմանիան մի տարուայ ընթացքում հիմնապէս փոխեց իր յարաբերութիւնը Անգլիայի հետ: Անգլօրութական պատերազմի սկզբում Գերմանիան թշնամական դիրք էր բռնել դէպի Անգլիան, որ բռնն արտայայտուեց, երբ անդլիացիք բռնեցին մի քանի գերմանական նաւեր, կասկածելով, որ դրանք դէնք են տեղափոխում բօէրների համար: Բայց եւրկա ամիս մնց Գերմանիան նոյն Անգլիայի օգնութեամբ տիրում է Սամօս կղզիներին, իսկ հոկտեմբեր ամսում արդէն երկուսով պայման են կապում փոխադարձաբար օգնել չինական հարցում: Այնուհետև Վիլհելմ II ամեն դէպքից օգտում է ցոյց տալու համար իր ազգականական սերտ կապերը Մեծ-Բրիտանիայի կայսերական տան հետ, գնում է Լօնդոն և այն: Նա շեշտում է և այն, որ գերմանացիները արիւնակից են անգլօ-ակսերին... Բնականաբար, ինչպէս խոշոր արդինագործները, չէղոքացնելու համար փոխադարձ մրցումը, միանում են, սենդիկատներ

են հիմնում, այնպէս էլ երկու խոշոր կապիտալիստական արդիւնաբերող-առևտրական պետութիւնները—Սնուզիան և Գերմանիան—աւելի շահաւելտ են գտնում միանալու, քան մրցելու:

Դերմանիայի ներքին կեանքում նկատելի է կառավարութեան կողմից ձգտում խոշոր կալուածատէրերի շահերին զոհել ազգաբնակութեան միւս մասի շահերը: Պարզ է որ հայահատիկ-ները որքան արժան լինեն, այնքան այդ ձեռնտու պէտք է լինի չքաւոր դասակարգերին, բանու որներին և արդիւնագործներին: Սակայն խոշոր կալուածատէրերի համար ձեռնտու է որ հացի գինը միշտ բարձր լինի, իսկ դրա համար պէտք է որ ներմուծուղ հացի վրայ մաքսը բարձրացնուի: Կալուածատէրը իր գիւղատնտեսական արդիւնքների վրայ նայում է իբրև ապրանի վրայ, հասկանալի է որ, եթէ չը լինեն դրսից ներմուծուղ նիւթերը, իր ապրանքների գները կը բարձրանան: Գիւղացին չի օգտուելու գների այդ բարձրացումից, որովհետև նա ինքը իր ընտանիքով սպառում է իր քրտինքով վաստակած հացը: Հեռագրերից յայտնի է որ Գերմանիայի զանազան տեղերում ազդուցոյցեր են եղել հացի մաքսի բարձրացման դէմ: Այդ բարձրացումը վնաս կը հասցնի և Ռուսաստանի հացի արտահանութեան: Գերմանական կառավարութիւնը ուզում է այդ քայլով իր կողմը գցել խոշոր կալուածատէրերի կուսակցութիւնը և դրա աշակեցութեամբ զլուխ բերել կայսեր սիրած ծրագրներից մէկը—միացնել ջրանցքով Շայն գետը Ելբայի հետ:

Ուշազրութեան արժանի է մի ներքին խնդիր ևս, որի նախաձեռնութիւնը պատկանում է նոյնպէս Վիլհելմ Ա-ին. դա բէալական և կլասիկական միջնակարգ ուսումնարանների իրաւունքների հաւասարացման կարգադրութիւնն է. այդպիսով վերջ է դնում կլասիկների մենաշնորհնումներին, մի բան, որ չի կարելի չը ցանկալ և Ռուսաստանի համար:

---

Յունուարի վերջին Վիեննայում թոփերի բորբոքումից վախճանուեց Սերբիայի նախկին թագաւոր Միլան Օբրենովիչ: Այդ մահը մի մեծ դէմք է սերբիական ազգի պատմութեան մէջ:

Միլանը 46 տարեկան էր: Դեռ Պարիզում ուսում առնող պատանի էր նա, երբ հարկաւոր եղաւ Սերբիայի իշխանական գահը բարձրանալ: Նրա անունը կապուած է Սերբիայի նորագոյն պատմութեան մի քանի խոշոր փաստերի հետ: 1876 թուականին, երբ ալաւոնական շարժումը ստացաւ լայն չափեր և Բալկանեան թերակղում պատրաստում էին նշանաւոր դէպքեր, Միլանը ահապին ժողովրդականութիւն էր վայելում: Մի

ջերմ հայրենասիրական հրաւէրով նա դիմեց ժողովրդին և պատերազմ՝ հրատարակեց Թիւրքիայի դէմ: Հետևեալ տարին նա միացաւ ռուսներին պատերազմի մէջ: Նորհիւ այդ գործած դերի, Սերբիան Բերլինի կօնդրէսում Թիւրքիայից անկախ հրատարակուեց և 1882-ին դարձաւ Սերբիայի թագաւոր. առաջին թագաւորը՝ չորս հարիւր տարի Թիւրքական լուծի տակ մնացած մի երկրում:

Բայց Միլանը, ստացած լինելով բնութիւնից ընդունակութիւններ, դուրկ էր լուրջ բնաւորութիւնից: Որքան հասակ էր քաշում, այնքան բարոյապէս ընկնում էր: 1885-ին նա պատերազմ սկսեց այն իսկ Բոլգարիայի դէմ, որի ազատութեան համար 1876-ին սկսուել էր սերբ-թիւրքական պատերազմը: Այդ ժամանակից նա արդէն այնքան ընկնում է ժողովրդի աչքում, որ հարկաւոր են համարում խլել նրա ձեռքից նրա անչափահաս որդի Ալեքսանդրին և հեռացնել նրան Սերբիայից: Միլանը հրաժարուեց գահից յօդուած իր որդու, ապրում էր արտասահմանում, վարելով անսպատիւ կեանք:

Բայց նա հանգիստ չը թողեց Սերբիան: Թէ անձամբ և թէ իր կողմանակիցների միջոցով նա անդադար խանդարում էր փոքրիկ երկրի հանգստութիւնը: Ալեքսանդր թագաւորը վերջ ի վերջոյ հաշտուեց իր հօր հետ և նշանակեց նրան սերբիական զօրքերի գլխաւոր հրամանատար: Բայց նրա անվերջ ինտրիգ-ները և խռովութիւնները շարունակում էին տակն ու վրայ անել սերբիական ժողովուրդը: 1890 թուականին, Միլանի բացակայութեան միջոցին, Ալեքսանդր թագաւորը ամուսնացաւ Դրագա Մաշնայի հետ: Միլանը, համարելով այդ քայլը իր համար կատարեալ պարտութիւն, նորից հեռացաւ Սերբիայից և ինտրիգ-ներ էր լարում իր որդու դէմ: Պարփակից տեղափոխուեց Վիեննա, որտէս զի այդտեղից աւելի լաւ հետևէ սերբիական գործերին: Բայց մահը վերջ գրեց նրա կեանքին:

Այդ մահը Սերբիայի համար նշանակում է խաղաղութիւն: Այժմ նա կարող է հանգիստ կերպով առաջ գնալ...

## ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

«Քաղմավիւպ», փետրուար: «Ո՞ւր գաղթել» խմբագրական յօդուածի մէջ մի քանի ցաւալի և յուահատական էջեր են բացուած այն հին, ճակատարական դժբախտութիւնից, որ հայի դաղթականութիւնն է ներկայացնում: Դա մի թուոցիկ տեսութիւն է, բայց շատ ցանկալի և խրատական կը լիներ հայ գաղթականների մի ամբողջացրած պատմութիւնը: Մինչև այժմ հրատարակուած են մի քանի գրուածքներ, որոնք վերաբերում են այս կամ այն գաղթականութեան անցեալին և ներկային: բայց հաստիք այդ բոլորը, ամբողջացնել, մանաւանդ լուսաբանել թէ ինչ ընդհանուր պատմական օրէնքներից էր կաղմում հայ գաղթականութիւնների ճակատագիրը—ահա ինչն է պակասում: Մեր պատմութեան մեծ մասը, ալսպիտվ, զեռ չէ լուս հանուած և մենք չը գիտենք թէ ինչ էր գաղթականութիւնը հայ ազգի համար: Յօդուածագիրը կամենում է գուշակել թէ որպիսի երկիրներում հայերը կակարող են գաղթականութիւններ հիմնել, երկիւղ չը կրելով թէ շուտ կը ձուլուեն տեղացիների հետո Այս հարցը ևս լուծում է շատ անբատար կերպով, որովհետեւ մի արդպիսի հարց չէ էլ կարելի լուծել Յօդուածից մենք իմանում ենք որ Նդիստոսի և Ամերիկայի հայ գաղթականութիւնները հալուելու վրայ են: արդէն ամերիկացի և եգիպտացի հայեր կամ, ո-

րոնց համար հայերէնը խորթ լեզու է: Եւ եթէ այդ ազատ երկիրներում էլ հայը չէ կարողանում պահպանել իր լեզուն, առանց որի չէ կարող լինել աղգութիւն, համականալի է, ուրեմն թէ ինչ կը լինի նա այնպիսի տեղերում, ուր ամեն տեսակ արհեստական միջոցներ են ստեղծում, աղգութիւնները ոչնչացնելու համար: ոչայ բը ժշկարանիւ յօդուածը կարող էր հետաքրքրական լինել մեր կուլտուրայի պատմութեան համար, եթէ մեր հին բժշկաբաններ քննողները վինէին մասնագէտներ և պարզէին թէ ինչ հանգամանգներ է ունեցել մեղանում զիտական բժշկականութիւնը, որ չափով է ենթարկուած եղել արաբական և ազլ աղգերի զիտութեան: Բայց ալստեղ այդ բժշկաբանները քննուում են լոկ բանասիրական տեսակէտից, այսինքն իրարև ձեռագիր, իրքեւ հնութիւնից մնացած գրաւոր աշխատութիւն, առանց քննադատելու և վերլուծելու դրբի բովանդակութիւնը, զիտական արժանիքը: Նոյն այդ տեսակէտից էլ նայել է Հ. Դ. Վ. Յովինանները իր չէնտագուստութիւնք նախնեաց սամկորէնին վրայ աշխատութեան մէջ: Բժշկական գրուածքները անցեալ տարիների մեր զրականութեան պատմութեան մէջ շատ նշանաւոր գեր ունեն, քանի որ զրանք էին համարեա միակ գրուածքները, որոնք նշանակուած էին ժողովրդի ընդհանրութեան համար նաև ցանկալի էր, որ մեր բժիշկները կամ

առհասարակ ձեռնհաս անձինք ըսկուին ուսումնասիրել մեր հին բըժկական գրականութիւնը և որոշէին նրա դիտական արժանաւորութիւնը:—Ֆամանակակից հարցերի վրայ ուշաղրութիւն դարձնելով, «Բարձմավէպը զետեղել է այս զըրքում նախազա՞ն Կրիտէրի մասին մի համառօտ յօդուած, որը բնորոշուած է հերոս թօէրների ծերունի նահապեար—» այ և մի թէթէ կենսագրութիւն, որի մէջ զուրս է բերուած մեր հայ գրականութեան նահապետներից մէկը—Արասպետնւթիւնեան, որ բարձմաթիւ (45-ից աւել հասոր) թարգմանութիւններ է տուել, բայց աւելի լայտնի է նըրանով, որ 1852 թուականից մինչև 1884 թ. Խմբագրում և հրատարակում էր Կ. Պոլի ամենանշանառ հայ լրագիրներից մէկը—«Մասիսը՝ Կենսագրութիւնը համառօտ է, ընդհանուր բառերով գրուած. աւելի հետաքրքրական կը լինէր, եթէ նւթիւնեանի կեանքի, հետ պատմուած լինէր և «Մասիսից կեանքը, որ այնքան երկարատե է եղել և արդիւնաւոր (նա այժմ էլ հրատարակում է իրուկ շարաթաթերթ, բայց ուրիշների խմբագրութեամբ): Նւթիւնանն այժմ 74 տարեկան է:

«Թաւարոն», գրական և թատերական հանդէս. № 1, 1900 թ. գեկտեմբերի Հանդէսի 1/3 աւելին (62 էր.) բոնում է Մուրացանի Շմուրականի կամ Հայրենասէր Օրիորդց պատմական դրաման, որի մասին առանձին կը խօսենք: Մ. Թէրքերենանի Շմի էջ Վերածնութեան շըրջանից կօմպիլացիան կարդացում է ոչ առանց հետաքրքրութեան. այդուղի խօսում է Տօկլաչիօր և և նրա «Դեկամերօն» աշխատութեան մասին և այդ առիթով մի կարճ, թեթևակի տեսութեան մէջ ակնարկ է զցում վերածնութեան դարի վրայ: Թեման շատ հետաքրը

գրական է, նիւթի առարկան շատ խրատական և ոգեորիչ: Դանտէի, Գէտրարկալի, Տօկլաչիօր և ուրիշ հումանիստների ժամանակները այժմը շատ լաւ ուսումնասիրուած են, կարելի էր, օգտուելով այդ դիտնական աշխատութիւններից, նկարել Վերածնութեան դարը աւելի կենդանի, աշխոյժ գոյներով, պարզել նոր աշխարհայեցողութիւնների հիմքերը: Յօդուածագիրը ասկայն, բաւականանում է ընդհանուր ֆրազներով և նրա տուած պատկերը շատ դզոյն է, մակերեսով թափին: Պատճառը, ինչպէս մեզ թւում է, այն պիտի լինի, որ ինքը, յօդուածագիրը չէ հաւատում այն խուալներին, որոնց զանանում էին Պետրարկաները և Տօկլաչիօնները: Այս մի նմուշ նրա հասկացողութիւններից ննչպէս յատուկ է չափատրութեան ասպետներին, պ. Եւրըերեանն ասում է որ խաւարամութիւն է ասել թէ սինչ որ համին է—այն երկնքից է», բայց մի և նոյն մամանակ անհեռութեամբ ինչ ասելը թէ ինչ որ եւրոպական է—լաւ էս Օրինակներով ցոյց է տալիս թէ հայր ինչ կարող էր վերցնել անդիլացիներից: Եւ ասում է. անդիլացիների եւսափրութիւնից օրինակներ վերցնել պէտք չէ, բայց նրանց առևորական ընդունակութիւնները մեզ շատ բան կարող են սովորեցնելու Ուրեմն ամբողջ Անդիլացում հայը միայն վաճառականական խմասութիւններ պիտի որոնէ... և անդիլացին ազըը չունի աւելի լաւ բաներ, որոնց արժէր հետևել, աշակերտել: Եւ երբ մի մարդ Անդիլացից միայն վաճառականական արշինի պաշտամունք է փոխ առնելի համարում, կարող է նա Վերածնութեան դարի մասին գրել այնպէս, ինչպէս պէտք է: Ինչպէս գրում են:—Եւ հարկէ, ոչ: Եւ ասկայն այս յօդուածը միակ է ամբողջ «Թաւարոն» մէջ իրում փո-

քըր ի շատէ արժանաւոր դրական ինքնուրուն յօդուած։ Մնացածները թարգմանական, հրատարակախօսական, քննադատական վարդութիւններ են միայն, որոնք չը պիտի լոյս տեսնէին տարին երկու անդամ հրատարակուող մի հանդէսում, կամ պիտի լոյս տեսնէին օրինաւոր սըրբազրութեամբ։ Թակ դրա համար հանդէսին հարկաւոր է մի հմուտ, վարդացած խմբագիր Ահա ակ, Մոնուեանը դրում է թէ հալոց պատմութեան նախահայր Խերենացին է բերում առ տարի ինձ զծուիս ծխանին երզը, մինչ ոես արարացիսարհին յայտնի է, որ Գրիգոր Մագիստրոսն է զրի աւել այդ կոտրը նոյն պարոնը առանափառք կասկած անգամ չէ զրում, որ մի քանի շարականների եղանակները յօրինել է Սահակ Պարթեը և դրանք համարեա անփոփոխ մնացել են մինչև մեր օլերը։ Սկավարի հեղինակաւոր, ամսնասալց վճիռներ արձակելը այնպիսի հարցերի մասին, որոնք նոյն իսկ պատմական երկար ու բարակ քննութիւնների միջոցով էլ չեն կարող պարզաբանուել, —առնուազն թեթեամութիւնն է։ Եւ այլ այսպիսի գոհարներ շատ կան հանդէսի մէջ, որոնք ապացուցանում են թէ դա մի պարկ է, ուր ամեն մէկը զցում է, ինչ ուզում է և ինչ կարողանում է, Բաւական է նոյն իսկ ժամանական քրոնիկոն անունով յօդուածը, օրպէս զի այդ հանդիսի վերաբերմամբ եղած ամեն մի վաս կարծիք հաստատէ. աւելի ողորմելի բան հազիւ թէ կարելի լինի երևակացել։ Գոնէ կանոնաւոր հայերէնով զրէին, գոնէ մի փոքր ծաշակի, խելքի տէր լինէին։ Գեղարտեստին նուիրուած մի հանդէս չը պիտի արդքան թեթևաօլիկ լինի. վեց ամիս ժամանակ կալ մի զիրք հրատարակելու համար, ցանկալի կը լինէր արդքան երկար ժամանակամիջոցը զործադրել լաւ մշակուած

յօդուածներ պատրաստելու վրայ։ Թէ չէ ձախ ձեռքով գրած բէցէն-զիաներն ու քրոնիկոները այնքան տգեղ տսպաւորութիւն են թողնում, որ մարդ ախտուում է հրատարակութեան արտաքին վայելչութիւնը. Գրքի մէջ դրուած են մաքուր ֆուուիպիաներ. դրանցից աւելի լաւ գործ Թիֆլիսում չէր էլ կարելի պահանջել, Բայց մենակ ֆուուիպիաները չեն կարող վրկել հանդէսը, հարկաւոր է բովանդակութիւն. Իսկ բովանդակութիւնը պատկերների վայելչութեան հասցնելու համար հարկաւոր է ընդունակութիւն, դրական շնորհք։ Եւ շատ ցաւալի է որ արդպիսի շընորհք չէ երկում «Թատրոնի» մէջ։

„Կավեզաչի Յետհուու,“ վետարուար։ Գ. Խերի Վեսելօվսկին զետեղել է մի յօդուած, որ վերաբերում է հալոց հին դրականութեան և կրում է «Ճերոսական շրջանի դրական գործիչը» վերնազիրը։ Այդ գործիչը Եղիշէն է, հինգերորդ դարի առաջին կրօնական պատերազմի ողերուած երդիչը։ Որ Եղիշէն խալապէս Շևարացի սոխակնա է—այդ, ի հարկէ, ճիշտ է. մեր հին գրավանութեան մէջ շատ քիչ կան այդպիսի ողերուած բանաստեղծներ. Եղիշէն գեղեցիկ ոճի, նկարագրական սաքանչելի ընդունակութեան կողմից մի բոլորովին առանձին տեղ է գրաւում հին մատենագրութեան պատմութեան մէջ։ Նրա մասին խօսողը պիտի նախ և առաջ որոշէ իր զիրքը, թէ ի՞նչպէս է ուզում նայել Եղիշէին։ Երկու տեսակ պահանջ կարելի է անել Եղիշի գրեթեց—կամ զատ պատմական կամ բանաստեղծական։ Եթէ ուզում ենք քննել Եղիշէի զիրքը Երրիկ պատմագրութիւն, այն ժամանակ պիտի մանրամասն ուսումնասիրենք և հինգերորդ զարը ու դնենք Եղիշէի կողքին Դազար Փար-

պեցուն, որ նոյնապէս նկարագրել է Վարդանանց պատերազմը: Այդ նը- կարագրութեան մէջ էլ մենք զսո- նում ենք Եղիշէի շատ պահասու- թիմները, Նրա տենտենցիան, Նրա չափազանցութիւնները: Գ. Վեսե- լօվսկին այդ չէ արել, Նրա համար գոյութիւն չունի Փարավեցին, Նա պատմում է հինգերորդ դարի շար- ժումը այնպէս, ինչպէս պատմել է Եղիշէն, և ոչ մի պահասութիւն չէ գոյնում այդ պատմութեան մէջ, եթէ չը հաշունք այն, որ նա չէ հասա- տում այն ճառերին, որոնց Եղիշէն դրել է Վարդանի, Նեռնդի և միւս- ների բերանը: Իրմէ գրական- պատմական մի հետազոտութիւն, որի մէջ ամբողջապէս դուրս հա- նուած պիտի լինել Եղիշէի դէմքը, պ. Վեսելօվսկու գրուածքը չունի մեծ արժանաւորութիւն հէնց այն իսկ պատճառով, որ նա չափազանց միակողմանի է իր գատողութիւն- ների մէջ, նոր հորիզոններ չէ բաց անում ընթերցողի առաջ. մի խօս- քով վերաբերում է Եղիշէն և Նրա ժամանակին այնպէս, ինչպէս վե- րաբերում էին հայերը այն բարի ժամանակները, երբ չը կար պատ- մական կրտսերկա, երբ ամեն ինչ հալած իսլի տեղ էր ընդունում: Անքան թոյլ են պ. Վեսելօվսկու պատմական տեղեկութիւնները մեր անցեալի մասին որ նա հինգերորդ դարի մատնապիներին թուելիս առաջ զնում է Մովսէս Խորենացուն, ապա Եղիշէկ Կողբացուն, ապա մի- այն Կորինին, մինչդեռ վերջինս է ըստ աւագութեան առաջին տեղը բռնում, իսկ Խորենացու մասին ե- ղած վէճերը յայտնի են ամենքին: Նա ասում է թէ Ղազար Փարավեցին նկարագրել է այն գրութիւնը, որի մէջ գոյնում էր Հայաստանը հին- գերորդ դարի երկրորդ կէսում և վեցերորդի սկզբում. մինչդեռ Ղա- զարը երկար և մանրամասն խօսում է, սկսած չորրորդ դարից և հինգե-

րորդ դարի առաջին կէսի պատ- մութիւնն էլ աւանդում է մանրա- մասն կերպով: Բայց ինչպէս է նայում պ. Վեսելօվսկին Եղիշէին: Նրա համար Եղիշէն թէ՛ պատմա- գիր է, թէ՛ բանաստեղծ, թէ՛ հո- գեսրական ջառագով: Բայց այդ դէպօւմ պէտք էր զանազաննել Եղիշէի յատկութիւնները և ցոյց տալ թէ՛ ո՛ր յատկութիւնն է ո- րին գոյնուած, ինչպէս է նա կա- րողացել իւրաքանչիւր իր յատկու- թիւնը երեան հանելու Եց կողմից բաւական հետաքրքրական կը լինէր ուսումնասիրութիւնը: Տարաբախուա- րար, յօդուածագիրը հազիւ հազ շօ- շափում է այդ հարցերը, շատապե- լով պատմել Եղիշէի գրքի բովանդա- կութիւնն իրմէ այցպիսի մի պատ- մուածք էլ, որ գրուած է թէթե աշ- խոյժ լեզուով, պ. Վեսելօվսկու դոր- ծը ունի իր արժանաւորութիւնը, դրանով ուս ընթերցողը կը ծա- նօթանայ Եղիշէի հետո հէնց այդ ընթերցողի տեսակիտոփի էլ մենք պիտի ասենք որ յօդուածը կարեոր է և լաւ—Հետաքրքրական է Հա- շմաքէկ Վեղիրօվի Շոմ յիշողութիւն- ները մէքթէպի մասին յօդուածը: «Մէքթէք»—զա այն նահապետական գպացն է, որ մահմեղական երե- խանները, մօլլայի զեկավարու- թեամբ, սովորում են զրագիտու- թիւն: Այդ տեսակ դպրոցները շատ և շատ կան մեր երկրի մահմեղա- կանների մէջ, ամեն մէկը տեսած կը լինի դրանցից, ուստի և Վեղի- րօվի լիշողութիւնները թում են նոյն իսկ շատ թոյլ նկարուածու- թիւն Դիլաւորը այսուեղ այն է, որ թուրքերը սկսել են հասկանալ իրանց պակասութիւնները և այսպի- սի յօդուած չէր կարող հրատարա- կուել մի քսան տարի առաջ, երբ թուրքի պակասութեան մասին խօ- սելը նշանակում էր թուրքի արիւ- նաբու թշնամին լինել:—Հետաքրք- քրութեամբ է կարգացում և Ա. Ա.-ի

„Վզգալը և հեռու“ մեծ յօդուածի շարունակութիւնը, որ այս անգամ խօսում է նոտայիալի մասին, գլխաւորապէս նրա գեղարուեստավան և երաժշտական հարստութիւնների մասին։ Տուրիստի թեթև նկարագրութիւններ, որոնք ընթերցանութեան համելի նիւթ են տալիս։ — Ուշադրութեան արժանի է և ն. բ.-ի յօդուածը խիզանների մասին։ Խիզան անուանում են այն զիւղացիները, որոնք սեփական հողեր չունեն և կալուածատէրելից վարձով հող են վերցնում ու փոխարէնը յայտնի պարտաւորութիւններ են յանձն առնում հողասիրոջ վերաբերմամբ։ Այդ դրութիւնը գոյութիւն ունի դեռ XVIII դարից և պահուել է մինչև այժմ միայն Թիֆլիսի և Գութայիսի նահանգներում։ Խիզանների հարցը կենսական մեծ նշանակութիւն ունի Վրաստանի համար, ուստի նրա բարեխիզմ ուսումնակրութիւնը ներկայացնում է յայտնի հետաքրքրութիւն։ Այդպիսի մի ուսումնակրութիւն է և այդ յօդուածը՝ «Վրաց մամուլի տեսութիւնը» յօդուածը նպաստակ ունի ծանօթացնելու վրաց ներկալ պարմերական մամուլի մէջ աշխատողների հետ։ Կարդացում է հետաքրքրութեամբ։ Այդտեղից մինք իմանում ենք որ վրաց մամուլն էլ, ինչպէս նաև ռուսահայերի մամուլը, ծնուել է իշխան Վորօնցովի հոգառարութեան և լուսամիտ ջանքերի շնորհիւ։ — Ի վերջոյ էիշատակենք Ս. բ.-ի յօդուածը Կոմիսար տնտեսական զարգացման մասին։ Յօդուածը դեռ չէ վերջացել, և մենք մի ուրիշ անգամ ամփոփ տեղեկութիւններ կը տանք նրա մասին։

„Եվրոպէ Եվրոպէ“, լունուար Պրօֆէսօր Գերիէ բաց է անում մի հետաքրքրական անկին պատմամական անցեալից։ Դա հիւսիսային

Աֆրիկայի այն ծովավին է, ուր հաստատուեց Հռոմի կուլուուրան, ուր քրիստոնէական եկեղեցին զտաւ իր առաջին հետևողները։ Այստեղ էին ծնում այն քրիստոնէական վարդապէտութիւնները, որոնք ուղղափառ անուանուած եկեղեցու համար շհերձուածներ էին։ Կրօնի միութիւն ստեղծելու համար քրիստոնեայ աշխարհը սկսեց մրցութիւնների և կոփաների ամբողջ դարաշրջան, որի սկիզբը IV դարն էր։ Ահա այդ սկիզբն է նկարագրուած յարգելի գիտնականը։ Նրա դործի դեռ առաջի մասն է տողազրուած ալս համարի մէջ։ — Յայտնի գրող և իրաւաբան Վ. Սպասօվիչ խօսում է անցեալ տարի վախճանուած ուսու յայտնի փիլիսոփայ Վաղիմիր Սոլօվիեվի մասին, վերցնելով նրան որպիս հրապարակախօս։ Սոլօվիեվը ձշմարիտ ուսու հայրենասէր էր, քարոզում էր կրօնական աղասութիւն, դասուապատում էր աղցանական խորութիւնները և սաստիկ յարձակում էր ուսու նացիօնալիսաների վրայ նրանց բըռնած ուղղութեան պատճառով։ Սպասօվիչ դուրս է բերում հանգուցեալ մոռածողի ազնիւ, համակրելի կերպարանքը և զարմանք է յայտնում որ Սոլօվիեվին իրանց դաշնակից են համարում այնպիսի մարդիկ, որոնց հակառակորդն էր նաև։ Խախանօվ զետեղել է ռվաստանի միացման հարիւրամեայ տարեղարձը վերնազրով մի աշխատութիւն։ Այդտեղ նկարուած է Վրաստանի անցեալ մինչև XIX դարի սկիզբը։ Բայց թէ պատմարանների որ տեսակին է պատկանում այ։ Խախանօվը, այդ կարելի է իմանալ հետևեալ փոքրիկ փաստից։ Վրաց վերջին թագաժառանգ Դաւիթը սաստիկ փուլ, տերական էր, այսինքն սիրում էր XVIII դարի աղաս զարգափարները և մինչև անգամ թարգմանել է Սօնտեսքիէի գրուածքը։ Այդ կող-

մից բոլորովին քնական պիտի լինէր որ թաղաժառանդը իր համար ամուսին գտնելու դործում նախալուշարմունքներից ազատ և անկախ հանդիսացաւ Բայց պ. Խախանօվն տուում է թէ Դաւիթը պիտի խայտառակեց Ժողովովի աշքում ամուսնանալով մի հայունու հետո (այդ հայունին իշխանուհի Սրբամելիքն էր): Կան մարդիկ, որոնց ջզինիստ, նեղազանական հոգին չէ կարողանում տանել այնպիսի պարմանական փաստեր, որոնք ազատ մոտածող, լայնասիրո մարդուն միայն հանութիւն և ողբուութիւն կարող է աղդել Անա թէ ինչ տեսակ պատմաբան է պ. Խախանօվը: Աւելացնենք և ան որ մի և նոյն առարկայի մասին պարոն զրել է բազմաթիւ ուսերեն ամսագիրերի, լրագիրների մէջ՝ „Ռусская Мысль“, „Եւտինէ Վասիլի Իստորիա“, „Քյուուկիա Վեճոմութ“ և այլն), աշխատելով այնպէս անել, որ մի տեղ զրածը միւս տեղերում զրուածներին չը նմանուի: Սա մի այնպիսի գրեղմնաւորութիւնն է, որ հազիւ թէ զիտնական լրջութեան նըշան համարուի: Ինչպէս միշտ, ամսագրի խակական զարգելն են կազմում «Ներքին տեսութիւն» և «Հասարակական քրօնիկացից» բաժինները, որոնք լավշտակութեամբ են կարգացւում: Այդուղի ամսագիրը պատկերացրել է Թուսաստանի պետական և հասարակական կեանքի գլխաւոր և բնորոշ հանգամանքները անցած ՏԻՀ դաշտում:

— „Էյրոնալ ձլա ՅԵԽԵ“, յունքար: Մի հասարակութիւն է սա, որ մի անդամայն արժանի է իր անուան— Շեմսագիր ամենքի համար: Ամենքի համար է սա նախ և առաջ իր զնով, դուք տալիս էք մի հատ ոտքի և ստանում էք մի տարուաց ընթացքում տասներկու զեկեցիկ զիւք: զեղեցիկ թէ արտաքինով,

թէ մանաւանդ բռվանդակութեամբ: Երտաքինը մաքուր է, կան շատ պատկեներ, տպում է մանր տառերով, եթէ վերածենք սովորական խաչոր տառերի, կը ստանանք բաւական հասու զիրք, յունուարի համար բաղկացած է 124 սինակներից: Եւ այսպէս հրատարակում է այդ ամսագիրը արդեն վեցերորդ տարին: Նա ունի երկու քականգեղարտեստական հարուստ բաժին, տպիս է զիտական ժողովրականացրած յօդուածներ, արտաքին տեսութիւն, ներքին տեսութիւն և այլն: Ազգութիւնը վերին աստիճանի համարկելի—առաջադիմական: Ամսագրին աշխատակցում են լայտնի պրոֆէսուններ, իսկ զեղարտեստական բաժնում զանում ենք Մաքում Գորկին, որ վերջերս այնքան մեծ անուն համեց Խոսաստանում: Այս համարում տպուած է Գօրկիի մի զեղեցիկ պատկերը նկարագրում է մի զինետուն, որ հաւաքուած հասարակ մարդիկ լսում են մի կնոջ, որ երգում է կոլորերի երգը: Պատկերը վերին աստիճանի բնական է, աղդում է ընթերցողի վրայ, բայց անելով ժողովրական ցաւերից մէկը: Բանաստեղծ Բալմօնտը պատում է անզլիական հոչակատը բանաստեղծ էլլիի մասին: Ենթուու ընտանիքներ, պատմուանքի մէջ զուրս են բերուած երկու ընկերներ, մէկը աւարտէ է համալսարանը, իրատան է, ունի լսու եկամուտներ, ամուսնացել է հարուստ աղջկակ հետ, ապրում է փառաւոր կերպով, բայց շարունակ էլլի մտածում է իր եկամուտների մասին, ունի մի գեղզոնի կին և նրա կեանքը հարուստ ու զեղեցիկ բնակարանի մէջ ձանձրալի է, պաշտօնական—ցուրտ: Միւս ընկերը գեռ ուսանող է, աղքատ, բայց ունի ընտանիք: Նա իր կնոջ և երեխաների հետ ապրում է մի կեխտու հիւրանոցում, բայց և արդպէս, ուրախ ու անհոգ է, լի ու

լի վայելում է առողջ ու սիրող ընտանիքի երջանկութիւնը։ Պրօֆէսօր Կլիչնսկին զետեղել է օթետրոս Մեծը ու նրա աշխատակիցները անունով յօդուածը, որի մէջ խօսում է Թուսաստանի մնծ վերանորոգութի մասին աշխոյժ և թեթև ոճով։ — Պրօֆէսօր Կարլոսկօվի ռԵշխատանքի բաժանումը, իրքն միութեան հիմքայոդուածը կարդացում է յափշտակութեամբ։ Խյատեղ հրաշալի պարզ լեզուով ու օրինակներով ցայց է տուած թէ ինչպէս մարդիկ իրանց աշխատանքով ծառայում են միմեանց բարօրութեան։ Եշխատանքը միացնում է ոչ միայն անհատները, այլ և ազգերը։ Եւ չընալած այս հազարմանքին, մարդիկ թշնամութիւն են անում իրար գէմ։ Պէտք էր որ աշխատանքը եղարացներ բոլոր մարդկանց։ բայց գուրս է գալիս որ ամենք միմեանց ուսում ենք ու զրանով էլ կշտացած ենք լինում։ Ինչո՞ւ է այսպէս Պրօֆէսօրը խոսանում է պատասխանել այդ հարցին ուրիշ անբամ։ — «Ենցած Դար» փոքրիկ յօդուածի մէջ պատկերացրած է XIX դարը իր դրական ու բացասական կողմերով։ Մինչդեռ սովորութիւն է զարձել զատապարտել այդ դարը այն պատճառով, որ նա չը

կարողացաւ լեղաշընել բարոյական հասկացողոթիւնները, երկրի վրայ արդարութիւն և ազատութիւն հաստատել — այստեղ բերուած են շատ օրինակներ, որոնք վկայում են որ զիտութեան առաջադիմութեան հետ բարոյական հակացողութիւններն էլ առաջ են զընացել։ Ուստի ամսագիրը երախտագիտութեամբ է լիշտառակում այդ դարը և ցանկութիւն է յատնում, որ այդ դարի մնծ գործիչների իդէալները հասարակական բարոյականութեան մասին իրազործուէին ապահարում։ — Պրօֆէսօր Շիմկեվիչը սկսել է մի շարք հանրամատչելի պատմուածքներ, սիխօթզիայի շրջանից։ — Արտաքին և ներքին տեսութիւնները կազմուած են շատ գեղեցիկ ողով և կարդացում են մեծ հաճութեամբ։ — Ահա թէ որքան գեղեցիկ նիմիթ է տալիս ամսագիրը մի ուրեմնի Կատարեալ ժողովրդական ամսագիր։ Խմբագրութիւննը իր ծանօթութիւնների մէջ բացատրում է այն բոլոր զիտական բառերը, որոնք պատահում են յօդուածների մէջ։ Պարզ և հասկանալի դառնալու համար ամսագիրը ոչինչ չէ իւնացում։

## Խ Մ Բ Ա Գ Բ Ո Ւ Թ Ե Ա Ն Կ Ո Ղ Մ Ի Ց

Նիւթի չափազանց առատութեան չնորհիւ այս համարը ևս դուրս եկաւ աւելի ստուար, քան խոստացել էինք: Տեղի պակասութեան պատճառով այս համարում չը կարողացանք գետեղել Մ. Մամուրեանի և Ս. Տիւսաբի կենսագրութիւնները: Բացի այդ, ստիպուած եղանք հանել մի քանի յօդուածներ («Գրականութիւնը Ռուսահայերի մէջ» և մի քանի գրքերի մատենախօսութիւն) և չը տպագրել «Նամակներ Արտասահմանից» բաժինը:

Խմբագրութիւնս ուրախութեամբ նկատում է, որ «Մուրն»-ի հենց առաջին համարի լոյս տեսնելուց յետոյ շատ զգալի կերպով սկսուեց աւելանալ բաժանորդների թիւը: Թէև դեռ հեռու ենք բաժանորդների այն թուից, որ անհրաժեշտ է ամսագրի գործը մեր մէջ կանոնաւոր տանելու համար, սակայն առաջին համարին հասարակութեան ցոյց տուած համակրութիւնը յայս է տալիս մեզ, որ անիրագործելի չէ անցեալ համարում մեր բերած համեստ պահանջը:

Պ Ա Տ Ա Ս Ի Ա Ն Ե Ր

**Պարիզ.** Մ. Յ.—Զեր յօդուածը անկարող եղանք տպել:

**Մօնակելիէ.** Մ. Մ. Զի սպուի:  
Լօզան. Յ. Ա.—Իր ժամանակին ձեզ ուղարկուած է «Մուրն» № 1:  
**Մոնկուա.** Խ. Յ.—Առաջ գրուածքը կարդալու, ոչինչ չենք կարող ասել:  
Կիեվ. Մ. Ղ.—Ամեն մի գրուածքի համար խմբագրութիւնը անկարող է նամակագրութիւն սկսել հեղինակների հետ: Ոտանասորները չեն սպուի:

**Քագու.** Ա. Վ. ա չ ե ա ն.—Զեր 20 ոուրլով ուղարկում է «Մուրն» ֆընելի ուսանողական գրադարանին և Մեղրի զիւղի հասարակութեան:

” Սէ բ-ն դ բ է ա ս ե ա ն.—Զեր 10 ոուրլով ուղարկում է «Մուրն» Ներքին-Ֆեուլիսի հասարակութեան:

” Գ. Տ է բ-մ ա ր գ ա բ ա ն.—Զեր 20 ոուրլով ուղարկում է «Մուրն» Երիցվանքի զպրոցին և Երևանի Գայեանեան զպրոցին:

**Մոնկուա.** Մ. Ա պ բ է ս ե ա ն.—Զեր 10 ոուրլով ուղարկում է «Մուրն» Բանանց գիւղի հասարակութեան:

Հրատարակիչ Եւ Ժամանակաւոր խմբագիր՝

Կ. ԿՐՈՍԻԼՆԻԿԵԼՈՆ

Վ Բ Ի Պ Ա Կ Ն Ե Ր

«Մուրճի» յունուարի համարում մտել են ի միջի այլոց  
հետևեալ վրիպակները.

1) «Հայագիտութիւնը» յօդուածում.

Երես	Տող	Տպուած է	Պէսֆ է լինի
158.	11	Եօթանասնական	լիսնական
167.	10	Կը լինի նա, Մովսէս	լինի նա Մովսէս
”	14	Գառարանող	գաստարանող

2) Մատենախօսութան մէջ.

204.	Ճան, մէջ	Տաղաւարեանի	Տէմիրճիպաշեանի
206.	19	Բառարանի	Բառարանների
”	32	Երայուր	Եռայուր
209.	17	Դադարան	Դադարան
210.	6	Formidable	Formidable
”	7—8	Գութաշաբք	Գութաջան
”	33—34	Կուտակութիւնը, Եթէ	Կուտակութիւնը մի բառարանի մէջ, եթէ
”	36	Դատապարտելի՝ մի բա- ռարանի մէջ:	Դատապարտելի
212.	3	(Քօրինաւոր)	(Քօրինաւոր)

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅԻՆ

ՆԵՐԿԱՅ 1901 ԹՈՒԱԿԱՆԻ

# ՄՇԱԿ

(20-րդ ամիվ)

## ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՐԱԳՐԻ

«Մշակ» հրատարակում է նոյն պրօգրամով և նոյն ուղղութեամբ

Ամեն օր բացի տօներին յաջորդող օրերից:

Բաժանորդագինը. «Մշակ» տարեկան գինը 10 ռուբլի է, տասնեւմեկ և տասն ամսուանը՝ 9 ռ., ինն և ութ ամսուանը՝ 8 ռ., եօթն ամսուանը՝ 7 ռ., վեց ամսուանը՝ 6 ռ., հինգ ամսուանը՝ 5 ռ., չորս ամսուանը՝ 4 ռ., երեք ամսուանը՝ 3 ռ., երկու ամսուանը՝ 2 ռ. և մի ամսուանը՝ 1 ռուբլի։

Արտասահմանեան բաժանորդագրութիւն. Ա. Տերիկ կայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 7 դոլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի։

«Մշակին» գրուել կարելի է Խմբագրատանը (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն):

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «Մշակին» գլուխուելու համար, և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետեւեալ հասցէով. ՏԻՓԼԻՍ, Ռեդակցիա «ՄՇԱԿ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւններն ընդունւում են բոլոր լեզուներով։

Ապառիկ բաժանորդագրութիւն չէ ընդունւում։

ԲԱՅՑՈՒԱԾ է 1901 թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

## XIX ԱՂԲԻՒՄ XIX և XII ՏԱՐՍԱԶ XII

Միամսնաց պատկերազարդ հանդէս Պատկերազարդ շաբաթաթերթ ըն-  
մանուկների և գաստիարակների տանեկան ընթերցանութեան  
համար:

Կը երտարակուեն նոյն ուղղութեամբ եւ աշխատակիցների  
մասնակցութեամբ

### Ն Պ Ս Ա Կ

Սղբիւրի նպատակն է զարթեցնել և զարգացնել հայ երեխայի մէջ բար-  
րի նախանձ գէպի վեճն ու աղնիսք և ատելութիւն դէպի չարն ու վնասակարը:

Սղբիւրը կը մասազ ընթերցողների սրաւերում ցանում է գթութեան,  
ինքնանանաչութեամն, անվեներութեան սերմեր:

Տարագր Սղբիւրի հասունացած սաների ինդակցութեան և վշտի ար-  
տապատղն է, նրանց մտքերի զգացումների թարգմանը:

Տարագր ձրուում է առաջինութեան ուղիղ ձանապարհով ընթացող,  
առաքինութեամբ օժտուած, գիտութեան անշէջ լուսով զարգացած, եղ-  
բայրութեամբ բորբռուած հայ անդամներ սնուցանել:

### Ֆ Ռ Ս Գ Ի Ր

Աղբիւրը լոյս կը տեսնի իւրաքանչիւր ամիս 2—3 թերթ,  
տարեկան 12 հազ:

Ա. ՄԱՅԱԿԱՎԱՆ ԲԱԺԻՆ. — Մանրավիպ, ջրուց, ձեքեաթ, ձանապարհութու-  
թիւն, կենապրութիւն, բանաստեղծութիւն: Գիտութիւն և արուեստ: Նոր  
լուրիր. Այլ և այլք: Զուարձալիք. — մանկական, ֆրեօրէյեան, շախմատի և  
այլ խաղեր. մերաներ, թուաբանական խնդիրներ. Անեկզոտ. Հանելուկ,  
նրգեր նոտաներ:

Բ. ԲԱԺԻՆ. — Կրթութեան և գաստիարակութեան վերաբերեալ յօդուածներ  
և տեղեկութիւններ: Առաջարկութիւններ: Խորհուրդներ: Մատենախօսու-  
թիւն և նոր գրքեր: Խառն լուրեր: Պատապիաններ:

Տարագր լոյս կը տեսնի ամիսն կիրտկի, իւրաքանչիւր  
№ 1—2 թերթ. տարեկան 40—50 հազ:

Գիւրաբուեստ և գիտութիւն: Պատմական, ժամանակակից վէպեր, պատ-  
կերներ, թատրոնական գրասածքներ բանաստեղծութիւն: Քննազատու-  
թիւն, կենապրութիւն: Կար, ձեւ, ձեռադոր և ամեն նորութիւն արհեատ-  
ների վերաբերեալ Տնային արդինապրօքտիւն, տնառեսութիւն: Ձանա-  
պարհորդութիւն և արկածք երաժշտութիւն և թատրոն Լուրեր, տեղեկու-  
թիւններ: Յօդուածներ և այլն: Ձելիքուն: Ճապա, առած և կատակ: Շախ-  
մատի և այլ խաղեր: Տերոս: Հարցեր, խորհարդներ: Այլ և այլք: Սուր-  
հանդակ: Յայտաբարութիւններ:

Աղբիւր-Տարագր բաժանորդագրու 10 ոռութիւն է, ար-  
թիւնը յաւելուածով և պրէմիայով

18 համ 50 դր.

Պարիզի մօդա, իլլիւսրասիօն, առողջապահական,  
սեղանի փառակազմ ՕՐԱՅՈՅՅՅ սահնում են Աղբիւր-  
Տարագր միեւնոյն հասցեով սացող բաժանորդները:

Աղբիւրի տարեկան գինը 3 հ. Տարագինը 6 հ.:

Հասցէն՝ Տիֆլիս, Պետական առողջապահութեան գործադրութեան  
Tiflis (Caucase) Réed. des jour. „Agbar et Taraz“

# ՆՈՐ-ԴԱՐ

(ՏԱՄՍՆԵՒՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

Քաղաքական-գրական ամենօրեայ թերթը 1901-ին  
կը հրատարակուի Թիֆլիսում նոյն դիրքով եւ ծրագրով  
ամեն օր, բացի տօներին հետևող օրերից:

«Նոր-Դար»-ի տարեկան գինն է 10 ռուբլի, զեց  
ամսուանը՝ 6 ռուբլի, երեք ամսուանը՝ 3 ռուբ. 50 կ.,  
թիֆլիսից դուրս՝ ամիսը 1 ռ. 50 կ., հատով դուրս՝  
7 կ., թիֆլիսում 5 կ.։

Բաժանորդ են գրւում միմիայն խմբագրատանը:  
ԱՐՏԱՎԱՀՄԱՆԻ բաժանորդները վճարում են 40  
դրամկ:

Յայտարարութիւնները ընդունում են եւ օտար լե-  
զուներով, բառը՝ 2 կ., առաջին երեսումը՝ 4 կոպէկ:  
Խմբագրատունը գտնում է Դաշիդովսկայա փողոց,  
թ. № 5.

Պատով «Նոր-Դար»-ի հասցեն՝ Տիֆլիս, վ. Ռեдак-  
ցիոն „НОРЪ-ДАРЪ“, կամ Tiflis (Caucase) Rédaction du  
journal „Nor-Dar“. 3—2

ОТКРЫТА ПОДПИСКА НА НАУЧНО-ЛИТЕРАТУРНЫЙ ЖУРНАЛ  
ГОДЪ II. КАВКАЗСКІЙ ВѢСТИНИКЪ 1901 Г.

Издаваемый въ г. ТИФЛИСЕ В. Д. Коргановымъ подъ редакцію  
Б. Н. Бѣгичева.

Редакція помѣщается на углу Тургеневской и Авчальской ул.  
№№ 11—28.

ПОДПИСКА принимается въ конторѣ журнала (Головинскій пр. № 10)  
и во всѣхъ книжныхъ магазинахъ.

## УСЛОВІЯ ПОДПИСКИ:

	Для городскихъ подписчиковъ	Для иногород- ныхъ	За границу
На годъ . . . . .	9 р. . . . .	10 р. . . . .	12 р.
” $\frac{1}{4}$ года . . . . .	5 ” . . . . .	6 ” . . . . .	7 ”
” 3 мѣсяца . . . . .	3 ” . . . . .	3 ” . . . . .	4 ”

За перемѣну адреса взимается 50 коп.

ОТДЕЛЬНЫЕ ЭКЗЕМПЛЯРЫ ПРОДАЮТСЯ ПО 1 РУБ.  
Въ 1900 году „КАВКАЗСКІЙ ВѢСТИНИКЪ“ далъ свыше трехъ тысячъ  
печатныхъ страницъ.

Полный экземпляр журнала „Кавказский Вестник“  
за 1900 годъ стоить 11 рублей.

3—2 Книжные магазины пользуются 5% уступкой.

*Открыта подписка на 1901 годъ.*

## ТИФЛИССКИЙ ЛИСТОКЪ

(26-й годъ изданія).

„Тифлисский Листокъ“ и въ 1901 году будетъ выходить ежедневно по прежней программѣ газеты литературной, общественной и политической.

Будетъ обращено особое вниманіе на развитіе отдѣла корреспонденціи изъ разныхъ мѣстъ Закавказья.

Въ теченіе года подписчики получаютъ не менѣе 12-ти литературныхъ приложений, въ которыхъ будутъ помещаться статьи по кавказовѣдѣнію, повѣсти, разсказы, стихотворенія и пр.

Время отъ времени приложения будутъ иллюстрироваться портретами и рисунками.

По понедѣльникамъ подписчикамъ будутъ разсыпаться телеграммы.

### ПОДПИСНАЯ ЦѢНА:

Въ Тифлисѣ: на годъ—5 руб., на 6 мѣс.—3 р., на 3 мѣс.—1 р. 75 к. и на 1 мѣс.—75 к.

Для иного городныхъ: на годъ—7 руб., на полгода—4 руб., на 3 мѣсяца 2 р. 50 к. и на 1 мѣс.—1 руб.

На всѣ указанные сроки подписка принимается съ первого числа каждого мѣсяца.

Разсрочка и подписка на другіе сроки не допускается.

Подписка принимается исключительно въ конторѣ изданія: Тифлисъ, Головинскій, № 3.

3—2

## ОТКРЫТА ПОДПИСКА

на 1901 годъ

на издающуюся въ Тифлисѣ политическую и литературную ежедневную газету

## „НОВОЕ ОБОЗРѢНІЕ“.

Газета будетъ выходить въ 1901 году подъ прежней редакціей и по прежней программѣ.

Съ цѣлью удовлетворить все болѣе развивающуюся потребность въ теченіи, ФОРМАТЪ газеты съ конца нынѣшняго года будетъ УВЕЛИЧЕНЪ.

### УСЛОВІЯ ПОДПИСКИ

съ доставкой и пересылкѣ:

На 12 мѣсяцевъ. . . . . 10 р. | На 6 мѣсяцевъ. . . . . 6 р.

За границу: на годъ—17 р., на полгода—9 р., на 3 мѣсяца—5 р.

Для годовыхъ подписчиковъ, какъ городскихъ, такъ и иного-  
родныхъ, обращающихся непосредственно въ контору редакціи, ДО-  
ПУСКАЕТСЯ РАЗСРОЧКА на слѣдующихъ условіяхъ: при подпискѣ  
вносятся—3 р., къ 1 му марта—2 р., къ 1-му мая—3 р. и къ 1-му сен-  
тября—2 р. Для сельскихъ учителей льгота: подписная цѣна на годъ—  
7 р., на полгода—4 р.

Лица, подписывающіяся на будущій годъ, получаютъ газету въ  
нынѣшнемъ году безплатно.

Подписка принимается не иначе, какъ считая съ 1-го числа  
каждаго мѣсяца. Подписка принимается въ Тифлисѣ, въ конторѣ га-  
зеты, Барятинская ул. д. № 8.

Книги, издаваемыя редакціею, будутъ продаваться по подписчикамъ  
„Нов. Об.“ съ уступкою 50%.

3—2

**ГОДЪ**      **ОТКРЫТА ПОДПИСКА**      **XI.**  
**на 1901 годъ**

НА ИЗДАЮЩУЮСЯ ВЪ РОСТОВѢ НА ДОНУ  
 большую ежедневную политическую, литературную и экономическую  
 газету

**ПРИАЗОВСКІЙ КРАЙ**

съ еженедѣльными иллюстрированными приложеніями.

**XI годъ изданія.**

Давая ежедневно обширную хронику явлений и событий общей русской и заграничной жизни, „Приазовскій Край“ преслѣдує разъ намѣченную цѣль—самую широкую разработку мѣстныхъ краевыхъ въпросовъ и нуждъ по всѣмъ отраслямъ общественной, экономической и торгово-промышленной жизни. Всѣ факты, отмѣченные общественными интересами, находять мѣсто и надлежашее освѣщеніе на страницахъ газеты.

Собственные корреспонденты въ крупнѣйшихъ европейскихъ центрахъ, во внутренней Россіи и во всѣхъ мѣстностяхъ Донской области, Приводья и Сѣверного Кавказа.

Собственные и агентскія телеграммы—политическая, общественная и биржевая.

Въ еженедѣльныхъ „приложеніяхъ“—иллюстраціи, беллетристика, новости науки, литературы и промышленности, смѣсь.

**УСЛОВІЯ ПОСПИСКИ ВЪ РОССІИ:**

Съ доставкой и пересылкой			Безъ доставки		
для городскихъ и иног. подписчиковъ:			для городскихъ подписчиковъ:		
на годъ.	.	9 руб. — к.	на годъ	.	8 руб. — к.
6 мѣсяцъ	.	5 "	6 мѣсяцевъ	.	4 " 50 "
5 "	.	4 "	5 "	.	3 " 75 "
4 "	.	3 "	50 "	.	— "
3 "	.	2 "	75 "	.	2 " 25 "
2 "	.	2 "	— "	.	1 " 50 "
1 "	.	1 "	1 "	.	— " 80 "

За пересылку газеты за границу взимается сверхъ подписной цѣны добавоч. 60 к. ежемѣсячно.

За перемѣну адреса взимается: съ иногородн. или съ городскихъ на иногородніе 25 к.

*Подписка принимается въ Ростовѣ на Дону въ главной конторѣ газеты „Приазовскій Край“.*

Разсрочка подписной платы допускается только для лицъ, подписывающихся съ 1-го января на годъ (о чёмъ должно быть заявлено при уплатѣ первого взноса), и только на слѣдующихъ условіяхъ: I) полугодичная—при подпискѣ—5 р. и къ 1-му июля—4 р. и II) въ три срока: при подпискѣ—4 руб., къ 1 мая—3 руб. и къ 1 сентября—2 р.

Редакторъ и отвѣтственный издаатель С. Х. Арутюновъ.

ОТКРЫТА ПОДПИСКА на 1901 годъ  
НА ГАЗЕТУ

# „КАВКАЗЪ“

съ бесплатнымъ приложениемъ

„Вѣстника горного дѣла и орошенія на Кавказѣ“

Издаётся канцеляріею главноначальствующаго гражданской частию на Кавказѣ.

„Вѣстникъ горного дѣла и орошенія на Кавказѣ“, въ виду свое-го специального характера, редактируется горнымъ инженеромъ, при содѣйствіи особаго редакціоннаго комитета.

Приложение это выходитъ 2 раза въ мѣсяцъ, въ форматѣ  $\frac{1}{4}$  листа, въ количествѣ 1—2 листовъ.

ПОДПИСНАЯ ЦѢНА на газету „Кавказъ“ съ приложениемъ „Вѣстника горного дѣла и орошенія на Кавказѣ“: съ доставкою въ Тифлисъ на годъ—11 руб. 50 коп., на  $\frac{1}{2}$  года—6 руб., на 1 мѣсяцъ—1 р., съ пересылкою иногороднимъ: на годъ—13 р., на  $\frac{1}{2}$  года—7 р., на 1 мѣсяцъ—1 р. 50 коп.; за границу: на годъ—18 р. 40 к.. на  $\frac{1}{2}$  года—10 р., на 1 мѣсяцъ—2 руб.

Отдельные №№ „Кавказа“ въ розничной продажѣ безъ приложений по 5 к.

ПЛАТА ЗА ОБЪЯВЛЕНИЯ: въ самой газетѣ—для объявителей Кавказскаго края впереди текста 16 к. позади текста—8 к. со строки пепти или занимаемаго ею мѣста; для остальныхъ—20 коп. впереди текста и 10 коп. позади текста; въ „Вѣстникѣ“—15 к. съ такой же строкой или 20 руб. со страницы. Многократныя объявленія,—по соглашению со скидкою.

Иногородные подписчики и объявители благоволять присыпать плату по подпискѣ и за объявленія въ канцеляріе Главноначальствующаго гражданской частию на Кавказѣ полностью, безъ вычета за пересылку, и съ точнѣмъ указаніемъ, на какой предметъ (за подписку или за объявленія) высланы деньги, а при закѣзѣ объявлений—гдѣ таковое должно быть помѣщено: въ газете или въ „Вѣстникѣ“.

АДРЕСЪ РЕДАКЦІИ „Кавказа“: Тифлисъ. Эриванская площадь, домъ Харазовой. Телефонъ редакціи № 184, а конторы № 182. Адресъ редактора „Вѣстника“: „Кавказское горное управление“.

3—2

**ՄՈՒՐՃԱՄԱԳՐԻ ԽՄԲԱԳՐԱԾԱՆՔ ԵՒ ԹԻՖԼԻԶԻ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌՈՎՆՅՈՅՆԻՄ**

**ԹԱԿԱՆՈՒՄ ԵՆ**

- |                 |   |
|-----------------|---|
| ԼԵՂՈՆ ԱՄՐԴՄԵԱՆԻ | Այց Թիֆլաց Հայաստանին                                       |
| »               | Թիֆլիզ, 1890 թ. գինն է. 60 կ.                               |
| »               | Ժողովրդի կրուրեան զոր-                                      |
| »               | ծը մեզանում, 1892 թ. գ. 20 »                                |
| »               | Հին ցաւ (հրապարակախո-<br>սական լուսեր), 1900 թ. գ. 30 »     |
| »               | և ԿՈՒՍԻԿԵԱՆԻ Մայրենի իուֆ<br>(լոթերց. ձեռնարկ) 1900 թ. 70 » |



կերի արգար բաժանում, — Պետական արդիւնադործութիւն և տակտոր. — Պետական նախահաշիւ, — Ֆինանսների մինիստրի նախահաշիւը 1901 տարուայ համար. — Առկու քանակութեան նուղագումը, — Հունձերի նշանակութիւնը արդիւնադործութեան և տակտորի ծաղկման համար. — Միլիոնարիզմի բեռը. — Ստիպո- գական և կուլտուրական ծախքեր, Ա. . . . .	283
21. ԳՈՒԽՈՎԱԿԱՆ ԿԵՍՆՔ. Սնօրինակ հրդեհ Բագավի Ազիտուկ- քաղաքում. աղէտի զոհերը. ձեռք առած միջացնելու — Քաղա- քալին ընտրութիւնները մեր գուառներում. ի՞նչ տուեց միզ քաղաքուին ինքնավարութիւնը. թիրիմացութիւննոշու ընտ- րութիւնների ժամանակ, Ա. . . Երկաթողին և Երևանը. քաղա- քալին հողեր, ջրի հարցը, ընկերակցութիւններ. Ա. — ԳՕ.	291
22. ՈՐՑԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կեսն XIII-ի տենչունքները. — Կրօնական միաբանութիւնների հարցը քրանսիուկան պատ- զամատրների ժողովում. — Սպանիա. հակակղերական անկար- գութիւններ. — Մինիստրական ճղնաժամ. Խտայիուղում. — Սնդ- լիա. Ակկորիա թաղունու մահը. Եզուարդ VΙI և նրա վերա- բերմունքը դէպի Տրանսվալի պատերազմը. — Աւտրիական րէժիսորատի նիստը. աղդայնական կայս. — Գերմանիա. մերձե- ցում Անդիտին. հացի մաքս. զորոցական խնդիր. — Միլան թաղաւոր. . . . .	301
23. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՍՏՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ . . . . .	313
24. ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ . . . . .	320
25. ՊԱՏՍՍԽԱՆՆԵՐ . . . . .	322
26. ՅԱՅՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ . . . . .	322
27. ՅԱԼԻՍԼՈՒԾ. «ՅԱՐՈՒԹԻՒՆ», զէպ Ա. Տօլսովի, թարգմ. Տ. Յովհաննիսեանի:	33—48

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Խմբագրութիւնը խնդրում է յօդուածագիրներից՝ զրել պարզ և  
թերթի միայն մի երկար վրաբ:
2. Զընդունած մեծ յօդուածները պահում են խմբագրատանը  
և ամիս, իսկ փոքր յօդուածներն ու բանաստեղծութիւնները չեն վերա-  
դարձնում: Ձեռագիրը յետ առանալու համար պէտք է ուղարկել ճանա-  
պարհածախան:
3. Գրուածքների գարձատութեան չափը որոշում է Խմբագրութիւնը:
4. Խմբագրութիւնը իրան է վերապահում ուղարկուած յօդուածները  
փոփոխելու կամ կրծատելու իրաւունքը:

ՇԱՀՈՒՆՍԿԻԱԽՄ Է 1901 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

# ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՏԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

## ԱՄՍԱԳՐԻ

Խմբագրութեան անդամներն են՝ պ.ա. Լեհին ԱԱՐԳՍԵԱՆ և լիօ:

«ՄՈՒՐՃ» ամսագիրն ունենալու է հետեւեալ բաժինները.

1. Վէպեր, պատմուածքներ, զրամա. 2. Բանաստեղծութիւններ. 3. Գրական-պատմական և հրապարակախօսական թօգուածներ. 4. Քննադատութիւններ. 5. Մատենախօսութիւններ. 6. Նորութիւններ ուսուաց և արտատահմաննեան գրականութիւննից. 7. Գիտութեան, գեղարվեստի և տեխնիկակի աշխարհնից. 8. Ցընտեսական հարցեր. 9. Ներքին տեսութիւնն. 10. Գուառական կետնք. 11. Պրագին տեսութիւններ. 12. Արբերական հրատակութիւններ. 13. Թայտարարութիւններ ամեն լեզուով.

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՒՅ

Օռուսասանում տարեկան 10 ռուբ. Առտասահման՝ 30 ֆրանկ.

” կէս տարին 6 ” ” 18 ”

” 1 ամսուան 1 ” ” 3 ”

«Մուրճ» ամսագրին կարելի է գրուել Թիֆլիսում—իմրադրասանը (Երևաննեան հրապարակ, ա. Թարաղեանի):

Կայսութեան այլ տեղերից պէտք է դիմէլ՝ Տպություն, և բարեկարգություն, այլ աշխատանք, ապահովություն և այլն առաջարկությունները:

Առտասահմանից՝ Tiflis, Rédaction de la revue „Mourtch“.

Վաճառքարկութիւն. 1900 թուի այն բաժանորդները, որոնք լիս չեն ստանոյ պարագաները, բայց և չեն ուղարկի 1901 թ. Երկրորդ կիսամենակի 5 ռուբին, «Մուրճ» կը ստանան միայն մինչև յունիս ամիսը—նոյն դժուարանում է տարեկան բաժանորդագինը (10 ռ.) վճարել միանուագ, կարող է տալ մաս-մաս (ակզրում 5 ռ., մարտի 1-ին 3 ռ. և մայիսի 1-ին 2 ռ.):

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել 40 կ.

«Մուրճում» ՅԱՅՏԱՐԱԲՈՒԹԻՒՆՆԵՐ զետեղելու համար պէտք է վճարել.

Մի երես բռնող լարտարարութեան համար . 15 ռ.

1/2 ” ” ” ” ” . 8 ”

1/4 ” ” ” ” ” . 4 ”

ԱՊԱՌԵԱՆ կամ ԶՐԻ ոչ ոքի չէ ուղարկում «Մուրճ»: